ԳՈՐԾՔ
ԱՌԱՔԵԼՈՑ

ԹՈՒՂԹՔ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ
ԹՈՒՂԹՔ
ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ
ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑ

Ա I
9630



ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ
Կ. ՊՕԼԻՍ, ՖԻՆՃԱՆՃԸԼԱՐ
— 1865 —

ՏՊԱԳՐԵԱԼ
Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ
ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ԵՍԱՅԵԱՅ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՐԺԱՆԸՆՏԻՐ ՊԱՏՐԻԱՐՔԻ
ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. Տ. ՊՕՂՈՍԻ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՀԻԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԵՒ ՎԵՀԱՓԱՌ ՊԱՏՐԻԱՐՔԻ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՅ

ԳՈՐԾՔ
ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼ․ Ա․

1 ԶԲԱՆՆ առաջին՝ զոր արարի վ̃ ա-
մենայնի ո՛ Թէոփիլէ․ զոր սկսաւ
2 յ̃ս առնել և ուսուցանել, * մինչև յօրն պատ-
ուիրեալ առաքելոցն 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ
3 զորս ընտրեաց, և վերացաւ։ * Որոց յան-
դիման կացոյց զինքն կենդանի յետ չարչա-
րանացն իւրոց 'ի բազում ճրուեստ՝ յաւուրս
քառասուն երեւել նոցա՝ և ասել վ̃ արքա-
4 յութեն ա̃յ․ * Եւ 'ի հաղորդել ընդ ն̃ս հա-
ցի, պատուէր տայր նոցա՝ յերուսաղէմէ մի

մեկնել, այլ սպասել աւետեացն հօր՝ զոր
լուարուքն յինէն ։ *Զի յովհաննէս մկրտեաց 5
՚ի ջուր . այլ դուք մկրտիջիք ՚ի հոգին ս̃ր ,
ոչ յետ բազում ինչ աւուրցս այսոցիկ ։ *Եւ 6
նոքա մատուցեալ հարցանէին զնա՝ և ասէին .
տէր՝ եթէ ՚ի ժամանակի աստ յայսմիկ հաստատելո՞ց
իցես զարքայութիւն իսրայելի ։
*Ասէ ցնս̃ . ոչ է ձեր գիտել զժամս և զժամանակս , 7
զոր հայր եդ յիւրում իշխանութեն .
*այլ առջիք զօրութիւն ՚ի հասանել հոգւոյն 8
սրբոյ ՚ի վր̃ ձեր . և եղիջիք ինձ վկայք եէմ
և յա̃մ հրէաստանի և ՚ի սամարիա , մինչև ՚ի
ծագս երկրի ։ *Եւ զայս իբրև ասաց , մինչդեռ 9
հայէին նք̃՝ վերացաւ . և ամպն կալաւ
զնա յաչաց նց̃ ։ *Եւ մինչդեռ պշուցեալ էին 10
ընդ երկինս երթալոյ նր̃ , և ահաւասիկ արք
երկու երեւեցան նց̃ ՚ի հանդերձս սպիտակս ,
*որք և ասացին . արք գալիլեացիք՝ զի՞ կայք 11
հայեցեալ ընդ երկինս ։ Այս յս̃՝ որ վերացաւ
՚ի ձէնջ յերկինս , սոյնպէս եկեսցէ՝ զոր
օրինակ տեսիք զնա երթալ յերկինս ։ *Ապա 12
դարձան յեէմ յանուանեալ լեռնէն ձիթենեաց
. որ է մերձ յեէմ ըստ շաբաթու ճանապարհի
։ *Եւ իբրև մտին , ելին ՚ի վերնատունն՝ 13
ուր վանքն իսկ էին . պետրոս և յակոբոս՝
յովհաննէս և անդրէաս՝ փիլիպպոս և
թովմաս՝ բարթողոմէոս և մատթէոս՝ յակովբոս
ալփեան և շմաւոն նախանձայոյզ՝ և յու-

14 դա յակովբեան․ * Սք՟ ամ՟քեան էին համա-
պաղորդեալ միաբան յաղօթս հանդերձ կա-
նամբք, և մարեմաւ մարբն յ՟ի՝ և եղբարբք նր՟․
15 * Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ ԱԱ
պետրոս ՚ի մէջ եղբարցն՝ ասէ․ և էր անդ
բազմութիւն անուանց իբրև հարիւր և քսա-
16 նից․ * Արք եղբարք՝ պարտ էր կատարել
գրոյն, զոր յառաջագոյն ասաց հոգին սուրբ
՚ի բերանոյ դաւթի, վ՟ յուդայի՝ որ եղև ա-
17 ռաջնորդ ունելեացն յ՟ի․ * զի ՚ի թիւս մեր
էր ընդ մեզ․ և հասեալ էր նմա վիճակ պաշ-
18 տամանս այսորիկ․ * Սա ստացաւ գեօղ ՚ի
վարձուց անիրաւութ՟ե․ և ուռուցեալ հեր-
19 ձաւ ընդ մէջ՝ և հեղաւ ա՟մ փոր նր՟․ * Եւ
յայտնի եղև ամենեցուն որ բնակեալ են յե-
րուսաղէմ․ մինչև կոչել գեղջն այնմիկ բար-
բառովն իւրեանց ակեղդամայ․ այսինքն է՝
20 գեօղ արեան․ * Զի գրեալ է ՚ի գիրս սաղ-
մոսաց․ եղիցի բնակութիւն նր՟ աւերակ, և
մի ոք իցէ՝ որ բնակիցէ ՚ի նմա․ և զկարգ նր՟
21 առցէ այլ․ * Արդ՝ պարտ է յարանցս յայս-
ցանէ՝ եկելոցս ընդ մեզ յա՟մ ժամանակի, յո-
22 րում մուտ և ել առ մեզ տէր յ՟ի․ * սկսեալ ՚ի
մկրտութենէն յովհաննու մինչև յօրն՝ յորում
վերացաւ ՚ի մէնջ․ վկայ յարութ՟ե նր՟ ընդ մեզ
23 լինել միում ՚ի սոցանէ․ * Եւ կացուցին եր-
կուս․ զյովսէփ՝ որում բարսաբայն կոչէին, որ
24 անուանեցաւ յուստոս, և զմատաթիա․ * Եւ

կացեալ յաղօթս՝ ասեն. դու տէր սրտագէտ
ա՟մի՝ յայտնեա զմի ոք՝ զոր ընտրեցեր 'ի սոցանէ
յերկուցունց. * առնուլ զվիճակ պաշտամանս 25
այսորիկ՝ և զառաքելու՟ն, յորմէ անկաւ
յուդաս գնալ 'ի տեղի իւր. * Եւ ետուն վիճակս 26
նց՟, և ելանէր վիճակն մատաթեայ. և
Վ.Ձ. համարեցաւ ընդ մետասան առաքեալսն.

ԳԼ. Բ.

Եւ 'ի կատարել աւուրցն պենտէկոստէից՝ 1
էին ամենեքեան միաբան 'ի միասին. * Եւ 2
եղեւ յանկարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ
իբրեւ սաստիկ հողմոյ. և ելից զա՟մ տունն յորում
նստէին. * Եւ երեւեցան նոցա բաժանեալ 3
լեզուք իբրև 'ի հրոյ. և նստաւ իւրաքանչիւր
'ի վ՟ր նց՟. * Եւ լցան ամենեքեան 4
հոգւով սրբով, և սկսան խօսել յայլ և այլ
լեզուս՝ ո՟ր և հոգին տայր բարբառել նոցա.
* Եւ էին յերուսաղէմ բնակեալ հրէայք արք 5
երկիւղածք՝ յա՟մ ազգաց որ 'ի ներքոյ երկնից
* Եւ իբրև եղեւ բարբառս այս՝ եկն 6
միաբան բազմութիւնն և խռնեցաւ. զի լսէին
յիւրաքանչիւր լեզուս խօսել նց՟. * Ապշանային 7
ամենեքեան, և զարմանային՝ և ասէին
ընդ միմեանս. ոչ աւասիկ ամենեքին սոքա
որք խօսին՝ գալիլեացիք են. * և զիարդ 8
լսեմք մեք յիւրաքանչիւր բարբառս մեր յո֊

9 րում ծնեալ եմք ․ * Պարթեւք , եւ Մարք , եւ
Իլամացիք , եւ որ բնակեալ են 'ի Միջագետս ,
'ի Հրէաստանի եւ 'ի Գամիրս , 'ի Պոնտոս եւ յԱ-
10 սիա ․ * 'ի Փռիւգիա եւ 'ի Պամփիլիա՝ յԵգիպ-
տոս եւ 'ի կողմանս Լիբիացւոց , որ ընդ Կիւրե-
11 նացիս , եւ որ եկք Հռովմայեցիք ․ * Հրէայք
եւ եկք նորոյն , Կրետացիք եւ Արաբացիք՝ լը-
սեմք խօսել նց̃ 'ի մեր լեզուս զմեծամեծս
12 այ̃ ․ * Ապշանային ամենեքեան զարմաց-
եալք , եւ ասէին ցմիմեանս ․ զի՞նչ կամիցի
13 այս լինել ․ * Եւ կէսքն ընդ խաղ արկեալ
14 ասէին , թէ քաղցուալից իցեն ․ * Յարու-
ցեալ պետրոս հանդերձ մետասանիւքն՝ ամ-
բարձ զձայն իւր՝ եւ խօսեցաւ ընդ նս̃ ․ Արք
հրէաստանեայք՝ եւ որ բնակեալ էք յեէ̃մ ա-
մենեքին , այս ձեզ յայտնի լիցի՝ եւ ունկըն-
15 դիք բանից իմոց ․ * Ոչ որպ̃ դուքդ կարծէք՝
թէ սք̃ արբեալ իցեն ․ զի դեռ երեք ժամք
16 են աւուրս ․ * Այլ այս է՝ որ ասացաւ 'ի ձե-
17 ռըն մարգարէին յովելեայ ․ * Եւ եղիցի յետ
այսորիկ յաւուրս յետինս՝ ասէ ած̃ , հեղից
հոգւոյ իմմէ 'ի վերայ ամ̃ մարմնոյ ․ եւ մար-
գարէասցին ուստերք ձեր , եւ դստերք ձեր ․
եւ երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն , եւ ծերք
18 ձեր երազովք երազեսցին ․ * Եւ 'ի վր̃ ծա-
ռայից իմոց՝ եւ 'ի վր̃ աղախնայց իմոց՝ յաւու-
րսն յայնոսիկ հեղից հոգւոյ իմմէ , եւ մարգա-
19 րէասցին ․ * Եւ տաց նշանս յերկինս 'ի վեր՝

և նշանս յերկիր 'ի խոնարհ, արիւն և հուր և
մրրիկ ծխոյ. *Արեգակն դարձցի 'ի խաւար, 20
և լուսին յարիւն՝ մինչչև եկեալ իցէ օր տ՟ն
մեծ և երեւելի. *Եւ եղիցի ամենայն որ 21
կարդասցէ զանուն տեառն, կեցցէ.

ԱԲ *Արք իսրայէլացիք, լուարուք զբանս 22
զայսոսիկ. զյ՟ս նազովրեցի, զայր ցուցեալ յա՟յ
'ի ձեզ զօրութ՟բ՝ և նշանօք և արուեստիւք.
զոր արար նովաւ ա՟ծ 'ի միջի ձերում. որպ՟ և
դուք իսկ գիտէք. *Զնա նկատեալ խորհրդով 23
և կանխագիտութ՟բն ա՟յ՝ մատնեալ 'ի ձեռս
անօրինաց՝ բեւեռեալ 'ի փայտի սպանիք.
*զոր ա՟ծ յարոյց՝ լուծեալ զերկունս մահու. 24
քանզի ոչ էր հնար ըմբռնել նմա 'ի նմանէ.
*Դաւիթ իսկ ասէ զնմանէ. յառաջագոյն տեսանէի 25
զտէր առաջի իմ յա՟մ ժամ, զի ընդաջմէ
իմմէ է, զի մի՛ սասանեցայց. *վ՟ա այսորիկ 26
ուրախ եղև սիրտ իմ, և ցնծացաւ լեզու
իմ. ևս և մարմին իմ բնակեսցէ յուսով. *Զի 27
ոչ թողցես զանձն իմ 'ի դժոխս, և ոչ տացես
սբ՟յ քում տեսանել զապականութիւն. *Ծանուցեր 28
ինձ զճանապարհս կենաց. լցուցեր զիս
ուրախութ՟բ յերեսաց քոց 'ի քաղցրութենէ.
*Արք եղբարք՝ պարտ է համարձակութ՟բ 29
ասել վ՟ա նահապետին դաւթի. զի մեռաւ՝ և
թաղեցաւ. և գերեզման ն՟ր կայ 'ի միջի ձերում
մինչև ցայսօր. *Զի մարգարէ էր, և 30
գիտէր՝ եթէ երդմամբ երդուաւ նմա ա՟ծ 'ի

պտղոյ յորովայնէ նր֟ նստուցանել յաթոռ նր֟ ։
31 * յառաջագոյն ծանուցեալ խօսեցաւ վն֟ յարութնն֟
քսի֟՝ զի ոչ թողաւ ոգի նր֟ ’ի դժոխս ,
և ոչ մարմին նորա ետես զապականութիւն ։
32 * Զայս յս֟ յարոյց ած֟՝ յորում ամենեքին մեք
33 վկայեմք · * Աջովն այ֟ բարձրացեալ , զաւետիս
հոգւոյն սրբոյ ընկալեալ ’ի հօրէ՝ սփռեաց
34 զայս , զոր դուք իսկ տեսանէք՝ և լսէք · * Զի
ոչ եթէ դաւիթ ել յերկինս · ասէ իսկ ինքն՝
ասաց տէր ցտէր իմ՝ նիստ ընդ աջմէ իմմէ՝
35 * մինչև եդից զթշնամիս քո պատուանդան
36 ոտից քոց ։ * Արդ՝ ճշմարտիւ գիտասցէ ամ֟
տունն իէլի֟ , զի և տէր զնա և օծեալ ած֟ արար
37 · զայս յս֟՝ զոր դուքն խաչեցէք ։ * Եւ
լուեալ զայս զղջացան ’ի սիրտս իւրեանց · և
ասեն ցպետրոս՝ և ցայլ առաքեալսն · զի՞նչ
38 գործեսցուք արք եղբարք ։ * Ասէ ցնս֟ պետրոս
· ապաշխարեցէք՝ և մկրտեսցի իւրաքանչիւր
ոք ’ի ձէնջ յանուն տն֟ յսի֟ քսի֟ ’ի թողութիւն
մեղաց , և ընկալջիք զաւետիս հոգւոյն սրբոյ ։
39 * Զի ձեզ են աւետիքս՝ և որդւոց ձերոց , և
ամ֟ հեռաւորաց՝ զորս կոչեսցէ տէր ած֟ մեր ։
40 * Եւ այլովք բանիւք բազմօք վկայութիւն
դնէր , և մխիթարէր զնոսա՝ և ասէր · ապրեցարուք
յազգէ աստի խոտորելոյ յայսմանէ ։
41 * Որոց յօժարութբ֟ ընկալեալ զբան նորա
մկրտեցան · և յաւելան յաւուր յայնմիկ ոգիք
իբրև երեք հազարք ։

*Եւ էին հանապազորդեալք վարդապետու- 42
թեան առաքելոցն, եւ հաղորդութեան՝ եւ բեկանելոյ
հացին, եւ աղօթից. *Եւ լինէր ամ անձին՝ 43
ահ եւ երկիւղ. բազում նշանք եւ արուեստք
՚ի ձեռն առաքելոցն գործէին. *Ամենայն 44
հաւատացեալքն էին ՚ի միասին, եւ ունէին
զամ ինչ հասարակաց. *Եւ զստացուածս եւ 45
զինչս վաճառէին, եւ բաշխէին զայն ամենե-
ցուն՝ ում զիարդ պիտոյ ինչ լինէր. *Հանա- 46
պազօր կանխեալ միաբանութբ ՚ի տաճարին, եւ
առտնին՝ բեկանէին զհացն, եւ առնուին կե-
րակուր ուրախութբ եւ միամտութբ սրտիւ.
*օրհնէին զաստուած՝ եւ ունէին շնորհս առ 47
ամենայն ժողովուրդն. եւ տէր յաւելոյր ՚ի
փրկեալսն հանապազօր ՚ի նոյն.

ԳԼ. Գ.

Պետրոս եւ յովհաննէս ելանէին ՚ի տաճար 1
անդր յիններորդ ժամու աղօթիցն. *Եւ էր 2
այր մի կաղ յորովայնէ մօր իւրոյ՝ զոր բար-
ձեալ դնէին հանապազ առ դրան տաճարին,
որ կոչէր գեղեցիկ. խնդրել ողորմութիւն
յայնցանէ՝ որ մտանէին ՚ի տաճարն. *Որոյ 3
տեսեալ զպետրոս եւ զյովհաննէս՝ զի մտա-
նէին ՚ի տաճարն, աղաչէր ողորմութիւն առ-
նուլ. *Հայեցաւ ՚ի նա պետրոս յովհաննու 4
հանդերձ, եւ ասէ. հայեաց ՚ի մեզ. *Նա 5

դարձաւ 'ի նս՟, և ակն ունէր առնուլ ինչ 'ի
6 նց՟նէ. *Եւ ասէ պետրոս. արծաթ և ոսկի
ոչ ունիմ. բայց զոր ունիմս՝ զայս տամ քեզ.
յանուն յս՟ի քս՟ի Նազովրեցւոյ արի՝ և գնա.
7 *Եւ կալեալ զաջոյ ձեռանէ նր՟՝ յարոյց զնա.
և անդէն հաստատեցան բարձք նր՟՝ և սրունք.
8 *Ի վեր վազեալ և սկսաւ գնալ, և եմուտ
ընդ նս՟ 'ի տաճարն. գնայր և վազվազէր՝ և
9 օրհնէր զած՟. *Եւ ետես ա՟մ ժողովուրդն
10 զնա՝ զի գնայր և օրհնէր զած՟. *և գիտէին
զնա՝ զի սա էր, որ նստէր վասն ողորմութեան
առ գեղեցիկ դրան տաճարին, և լըցան
զարմանալեօք 'ի վր՟ նշանին՝ որ եղեւ.
11 *Եւ մինչ նա ունէր զպետրոս և զյովհաննէս,
ընթացաւ ա՟մ ժողովուրդն առ նս՟ 'ի սրահն՝
12 որ կոչէր սողոմոնի՝ զարմացեալք. *Իբրեւ
ետես պետրոս, պատասխանի ետ ժողովրդեանն.
արք իէլացիք՝ զի՞ զարմացեալ էք 'ի
վերայ այդորիկ՝ կամ ընդ մեզ՝ զի՞ էք պշուցեալ,
իբրու թէ անձին զօրութեամբ ինչ՝
կամ քաջութեամբ արարեալ իցէ գնալդ դըմա.
13 *Աստուած աբրահամու՝ և աստուած
սահակայ՝ և աստուած յակոբայ, աստուած
հարցն մերոց փառաւորեաց զորդի իւր ըզյս՟.
զոր դուքն մատնեցիք՝ և ուրացայք առաջի
պիղատոսի, 'ի դատել նր՟ արձակել.
14 *Եւ դուք զսր՟ն և զարդարն ուրացայք, և
խնդրեցիք այր մի մարդասպան շնորհել ձեզ.

*Եւ զառաջնորդ կենացն սպանէք , զոր ա̃ծ 15
յարոյց 'ի մեռելոց · որում մեք իսկ վկայ եմք։
*Եւ հաւատովք անուան նր̃ զսա՝ զոր տեսա- 16
նէք եւ գիտէք , հաստատեաց անուն նր̃ · եւ
հաւատքն որ ի նմա , ետուն դմա զառող-
ջութիւնս զայս՝ յանդիման ձեր ամենեցուն։
*Եւ արդ եղբարք՝ գիտեմ զի անգիտութ̃բ 17
արարիք՝ ո̃պ եւ իշխանքն ձեր։ *Այլ ա̃ծ՝ 18
ո̃պ յառաջագոյն պատմեաց 'ի բերանոյ ա̃մ
մարգարէից զչարչարելն քի̃ իւրոյ՝ նոյնպէս
եւ կատարեաց։ *Արդ՝ ապաշխարեցէք եւ դար- 19
ձարուք 'ի ջնջել զմեղս ձեր · *որ̃պ զի ե- 20
կեսցեն ժամանակք հանգստեան յերեսաց
տն̃ · եւ առաքեսցէ զյառաջագոյն նկատեալն
ձեզ՝ զյի̃ս քի̃։ *Զոր պարտ է երկնից ընդու- 21
նել մինչեւ 'ի ժամանակս ամենեցուն հաստա-
տելոյ · զորոց խօսեցաւ ա̃ծ 'ի բերանոյ սրբոց
իւրոց մարգարէից։

ԱԴ *Մովսէս ասաց ցհարսն մեր · թէ մար- 22
գարէ յարուսցէ ձեզ տէր ա̃ծ ձեր յեղբարց
ձերոց իբրեւ զիս , նմա լուիջիք՝ ըստ ա̃մի՝ որ
զինչ եւ խօսեսցի առ ձեզ։ *Եւ եղիցի ա̃մ 23
անձն՝ որ ոչ լուիցէ մարգարէին այնմիկ , սա-
տակեսցի 'ի ժողովրդենէն։ *Եւ ա̃մ մարգա- 42
րէք՝ որ 'ի սամուէլէ եւ այսր՝ խօսեցան , եւ
պատմեցին զաւուրս զայսոսիկ։ *Դուք էք 25
որդիք մարգարէիցն՝ եւ ուխտին , զոր ուխտ-
եաց ա̃ծ ընդ հարս ձեր , եւ ասէ ցաբրահամ։

՚ի զաւակի քում օրհնեսցին ամ՟ ազգք երկրի ·
26 * Ձեզ ՚նախ յարոյց ած՟ զորդի իւր , և
առաքեաց զնա օրհնել զձեզ՝ ՚ի դառնալ
ձեզ իւրաքանչիւր ՚ի չարեաց ձերոց ·

ԳԼ· Դ·

1 Եւ մինչդեռ խօսէին ՚նք՟ ընդ ժողովրդեանն ,
հասին ՚ի վր՟ ՚նց՟ քահանայապետքն և
2 իշխանք տաճարին՝ և սադուկեցիքն , * զայրացեալք՝
վ՟ ուսուցանելոյ ՚նց՟ զժողովուրդն՝
և պատմելոյ յիսուսիւ զյարութիւն մեռելոց ·
3 * Արկեցին ՚ի ՚նս՟ զձեռս իւրեանց · և եդին զնս՟
՚ի բանտի՝ մինչև ՚ի վաղիւն , զի էր ընդ երեկս ·
4 * Իսկ բազումք ՚ի լսողաց բանին՝ հաւատացին ·
և եղեւ թիւ մարդկան իբրեւ հազարաց
5 հնգից · * Եւ եղեւ ՚ի վաղիւ անդր՝
ժողովել ՚նց՟ զիշխանսն և զերիցունս և զդըպիրսն
6 յեէմ՟ , * և զաննա քահանայապետ՝ և
զկայիափա , և զյովհաննէս և զաղեքսանդրոս
, և որք միանգամ էին յազգէ քահանայութ՟ն
7 · * Եւ կացուցեալ զնս՟ ՚ի մէջ՝ հարցանէին
· որո՞վ զօրութ՟բ կամ որո՞վ անուամբ
8 արարէք դուք զայս · * Յայնժամ պետրոս
լցեալ հոգւով սրբով՝ ասէ ցնս՟ · իշխանք ժողովրդեան՝
9 և երիցունք իէլի · * եթէ արժա՞ն
ինչ իցէ դատել զմեզ այսօր վ՟ երախտեաց
առն միոյ տկարի , որով սա բժշկե-

ցաւ ։ *Յայտնի լիցի ամենեցուն ձեզ՝ և 10
ա̃մ ժողովրդեանդ իէլի . զի յանուն յ̃սի ք̃սի
Նազովրեցւոյ՝ զոր դուքն խաչեցէք՝ զոր ա̃ծ
յարոյց 'ի մեռելոց , նովաւ սա կայ աւասիկ
առաջի ձեր ողջացեալ ։ *Նա է վէմն ա֊ 11
նարգեալ 'ի ձէնջ շինողաց , որ եղեւ գլուխ
անկեան . *և չիք այլով իւիք փրկութիւն . զի 12
և ոչ անուն այլ գոյ 'ի ներքոյ երկնից տուեալ
'ի մարդիկ՝ որով արժան իցէ կեալ մեզ ։
ԱԵ *Հայեցեալ 'ի համարձակութիւնն պետ֊ 13
րոսի և յովհաննու , և 'ի վ̃ր հասեալ՝ թէ այրք
աղէտք՝ և առանց դպրութեան են , զարմա֊
նային . զի ճանաչէին զնոսա՝ թէ ընդ յ̃սի էին .
*և զայրն ևս տեսանէին զբժշկեալն՝ զի կայր 14
ընդ նս̃ . և ոչինչ կարէին տալ պատասխանի .
*Եւ հրամայեալ նոցա արտաքս քան զատեանն 15
երթալ , խորհեցան ընդ միմեանս , *և ասեն . 16
զի՞նչ արասցուք առանցս այսոցիկ՝ զի երևելի
նշան եղև 'ի ձեռն ոց̃ . ա̃մ բնակչաց եէ̃մի
յայտ է , և ոչ կարեմք ուրանալ ։ *Այլ զի մի 17
առաւել ճարակեսցի 'ի ժողովուրդն , սպառ֊
նասցուք նց̃՝ մի ևս խօսել յանունն յայն՝ մի
ումեք 'ի մարդկանէ ։ *Եւ կոչեցեալ զնոսա 18
պատուիրեցին ամենեւին մի խօսել՝ և մի ու֊
սուցանել յանուն յ̃սի ։ *Իսկ պետրոս և յով֊ 19
հաննէս պատասխանի ետուն՝ և ասեն ցնոսա ,
եթէ արժա՞ն իցէ առաջի ա̃յ՝ ձեզ լսել առա֊
ւել քան ա̃յ , ընտրեցէք ։ *Այլ մեք ոչ կա֊ 20

A I/9630

21 ըմք՝ զոր տեսաքն և լուաք՝ չխօսել. *Նոքա
սպառնացեալ արձակեցին զն՟ս՝ և ոչինչ
գտեալ թէ ո՟պ պատուհասեսցեն զն՟ս վ՟ն ժողովրդեանն.
զի ամենեքեան փառաւոր առնէին
22 զա՟ծ՝ վ՟ն իրացն եղելոց. *Զի ամաց էր
այրն՝ աւելի քան զքառասուն՝ յորոյ վերայ
23 եղև նշանս այս բժշկութեան. *Եւ անտի արձակեալ՝
եկին առ իւրեանսն, և պատմեցին՝
որչափ ինչ ասացին ցն՟ս քահանայապետքն և
24 երիցունքն. *Եւ նոքա լուեալ ամբարձին ըզձայնս
իւրեանց առ ա՟ծ՝ և ասեն. Դու տէր
ա՟ծ՝ որ արարեր զերկինս և զերկիր՝ զծով և
25 զա՟մ որ 'ի նոսա. *որ 'ի բերանոյ հօր մերոյ
դաւթի ծառայի քո՝ 'ի ձեռն հոգւոյն սրբոյ
ասացեր. զմէ՞ խռովեցան հեթանոսք՝ և ժողովուրդք
26 խորհեցան 'ի սնոտիս. *յանդիման
եղեն թագաւորք երկրի, և իշխանք ժողովեցան
'ի միասին վ՟ն տ՟ն և վ՟ն օծելոյ նորա.
27 *Ժողովեցան արդարև 'ի քաղաքիս յայսմիկ
'ի վ՟ր սրբոյ որդւոյ քո յ՟սի՝ զոր օծերն, հերովդէս
և պոնտոս պիղատոս՝ ազգօք և ժողովրդովք
28 ի՟էլի, *առնել՝ որչափ ձեռն քո և
29 կամք յառաջագոյն սահմանեցին լինել. *Եւ
արդ տէր՝ հայեաց 'ի սպառնալիս ն՟ց, և տուր
ծառայից քոց ա՟մ համարձակութ՟բ խօսել ըզբանն
30 քո. *'ի ձգել զձեռն քո 'ի բժշկութիւն,
և նշանս և արուեստս լինել անուամբն սրբոյ
31 որդւոյ քո յ՟սի. *Եւ մինչդեռ ն՟ք յաղօթ-

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

շարժեցաւ տեղին՝ յորում էին ժողովեալ, և
լցան ամենեքին հոգւով սրբով. և խօսէին
զբանն աստուծոյ համարձակութեամբ.
ԱԶ * Եւ բազմութ՟ն հաւատացելոցն էր սիրտ 32
և անձն մի. և ոչ ոք 'ի նոցանէ ասէր զընչից
իւրոց թէ իւր իցէ. այլ էր նց՟ ա՟մ ինչ հասարակաց.
* Եւ զօրութ՟ բազմաւ տային վկայութիւն 33
առաքեալքն զյարութե՟ն տ՟ն յս՟ի ք՟սի.
և շնորհք մեծամեծք էին 'ի վ՟ր ամենեցուն նց՟.
* Եւ ոչ ոք կարօտէր 'ի նս՟. զի որ միանգամ 34
տեարքն էին գեղից կամ ագարանից՝ վաճառէին
և բերէին զգինս վաճառելոցն, * դնէին 35
առ ոտս առաքելոցն. և բաշխէին իւրաքանչիւր՝
ոպ՟ ումեք պիտոյ ինչ լինէր. * Յովսէփ՝ 36
որ կոչեցաւն բառնաբաս յառաքելոց անտի,
որ թարգմանի՝ որդի մխիթարութե՟, ղեւտացի
յազգէ՝ կիպրացի. * էր նր՟ գիւղ, վաճառեաց՝ 37
և եբեր զգինն՝ եդ առ ոտս առաքելոցն.

ԳԼ. Ե.

Իսկ այր ոմն անանիա անուն, հանդերձ 1
կնաւ իւրով սափիրաւ՝ վաճառեաց ագարակ.
* և խորեաց 'ի գնոց անտի՝ գիտելով և կնոջն. 2
և եբեր մասն ինչ՝ եդ առ ոտս առաքելոցն.
* Ասէ պետրոս. անանիա՝ ընդէ՞ր ելից սատանայ 3
զսիրտ քո՝ ստել քեզ հոգւոյն սրբոյ,
և խորել 'ի գնոց գեղջն. * ո՞չ ապաքէն մինչ 4

կայրն՝ քո էր, և 'ի վաճառելն՝ ընդ քո իշխանութ̃բ
էր․ զի՞ է՝ զի եդիր 'ի սրտի քում զիրս
5 զայս․ ոչ ստեցեր մարդկան, այլ ա̃յ․ *Եւ
լուեալ Անանիա զբանս զայսոսիկ՝ անկաւ՝ և
եհան զոգի․ և եղև ահ մեծ 'ի վ̃ր ամենեցուն՝
6 որ լուանն զայն․ *Յոտն կացին երիտասարդքն՝
7 և ամփոփեցին զնա, և տարան թաղեցին․ *Եւ
եղև իբրև ժամք երեք անցին, և կին ն̃ր ոչ
գիտէր զինչ եղեալն էր, եմուտ 'ի ներքս․
8 *Պատասխանի ետ նմա Պետրոս՝ և ասէ․ ասա
դու ինձ՝ թէ այնչափի գնոյ զգեօղն վաճառեցիք․
9 և նա ասէ․ այո այնչափի․ *Եւ ասէ ցնա
Պետրոս․ զի՞ է՝ զի միաբանեցայք դուք փորձել
զՀոգին ա̃ն․ ահա ոտքն՝ որ թաղեցին
10 զայրն քո 'ի դրան, հանցեն և զքեզ․ *Եւ
անկաւ անդէն առ ոտս նորա՝ և եհան զոգի․
մտին երիտասարդքն՝ գտին զնա մեռեալ, և
11 հանին թաղեցին առ առն իւրում․ *Եւ եղև
երկիւղ մեծ 'ի վերայ ա̃մ եկեղեցւոյն, և 'ի
վերայ ամենեցուն՝ որ լուան զայն․

12 *Եւ 'ի ձեռս առաքելոցն լինէին նշանք ԱԷ
և արուեստք բազումք 'ի ժողովրդեանն․ և
էին միաբան ամենեքեան 'ի սրահին Սողոմոնի․
13 *Եւ յայլոց անտի ոչ ոք իշխէր մերձենալ առ
14 ն̃ս․ այլ յարգէր զն̃ս ժողովուրդն․ *Եւ առաւել
ևս յաւելուին հաւատացեալքն 'ի Տէր,
15 բազմութիւն արանց և կանանց․ *մինչև 'ի
հրապարակն հանել զհիւանդս, և դնել

պատգարակօք և մահճօք իւրեանց․ զի ընդ
անցանելն պետրոսի՝ գոնէ հովանի նր՟ հասցէ
ումեք 'ի նոցանէ․ * Եւ ժողովէր բազմութիւն 16
շուրջ 'ի քաղաքաց անտի յէ՟մ, բերէին զհիւանդս
և զխռովեալս յայսոց պղծոց․ որք և
բժշկէին ամենեքեան․ * Յարուցեալ քահանայապետն, 17
և ամենեքին որ ընդ նմա՝ և աղանդ
սադուկեցւոց՝ լցան նախանձու․ * Եւ 18
արկին զձեռս յառաքեալսն, և եդին զնոսա
հրապարակաւ 'ի բանտի․ * Այլ հրեշտակ տ՟ն 19
գիշերի եբաց զդուրս բանտին, և հանեալ
զն՟ս՝ ասէ․ * գնացէք՝ կացէք 'ի տաճարին, և 20
խօսեցարուք ընդ ժողովրդեանն զա՟մ պատգամս
կենացս այսոցիկ․ * Եւ իբրև լուան, 21
մտին ընդ առաւօտն 'ի տաճարն՝ և ուսուցանէին․
Եկն քահանայապետն՝ և որ ընդ նմա,
կոչեցին միաբան զատեանն՝ և զա՟մ ծերակոյտ
որդւոցն իէլի, և առաքեցին 'ի բանտն ածել
զն՟ս․ * Եւ իբրև եկին սպասաւորքն՝ ոչ գտին 22
զն՟ս 'ի բանտին․ դարձեալ անդրէն պատմեցին,
* և ասեն․ Թէ զբանտն գտաք փակեալ ա՟մ 23
զգուշութբ՟, և զպահապանսն՝ զի կային առդրանն,
բացաք՝ և 'ի ներքս զոք ոչ ևս գտաք․
* Իբրև լուան զբանս զայս իշխանք տաճարին 24
և քահանայապետաքն՝ հիանային վ՟ն ն՟ց, թէ
զի՞նչ արդեօք լինիցի այն․ * Եւ եկն ոմն 25
պատմեաց ն՟ց՝ թէ ահա արքն զորս եդիք 'ի
բանտի՝ կան 'ի տաճարին, և ուսուցանեն զժո-

26 ղովուրդն . * Յանժամ երթեալ իշխանն սպասաւորօքն
հանդերձ՝ ած զն՟ս ոչ բռնութբ՟ .
քանզի երկնչէին 'ի ժողովրդենէն՝ զի մի՛ քարկոծեսցին .
27 * Եւ ածեալ զն՟ս՝ կացուցին յատենի .
28 եհարց ցն՟ս քահանայապետն , * և ասէ . ո՞չ
պատուիրելով պատուիրեցաք ձեզ՝ մի՛ ուսուցանել
յանունն յայն , և արդ՝ ահաւասիկ լցիք
զերուսաղէմ ուսմամբ ձերով , և կամիք ածել
29 'ի վերայ մեր զարիւն զառն զայնորիկ . * Պատասխանի
ետ պետրոս և այլ առաքեալքն և
ասեն . հնազանդել պարտ է այ՟ առաւել՝ քան
30 մարդկան . * Աստուած հարցն մերոց յարոյց
զյս՟՝ զոր դուք սպանիք կախեալ զփայտէ .
31 * Զնա ա՟ծ առաջնորդ և փրկիչ բարձրացոյց
աջովն իւրով տալ ապաշխարութիւն իսրայելի՝
32 և թողութիւն մեղաց . * Եւ մեք եմք
վկայք բանիցս այսոցիկ , և հոգին ս՟բ՝ զոր ետ
33 ա՟ծ հնազանդելոց իւրոց . * Եւ նոքա իբրև
լուան , առատանային և խորհէին սպանանել
զնոսա .

34 * Յարուցեալ ոմն 'ի մէջ ատենին փարիսեցի՝ ԲԿ
որում անուն էր գամաղիէլ , օրէնսուսոյց՝
պատուական ա՟մ ժողովրդեանն . հրամայեաց
սակաւիկ մի զարսն արտաքս տանել .
35 * Եւ ասէ ցն՟ս . արք իսրայէլացիք՝ հայեցարուք
'ի ձեզ վ՟ս արանցս այսոցիկ՝ զինչ արժան
36 իցէ գործել . * Յառաջ քան զաւուրս
զայսոսիկ յարեաւ թեւդաս՝ ասել զանձնէ ,

թէ իցէ ոմն . յոր անկան արք թուով իբրեւ
չորեքհարիւր . որ սպանաւ՝ և ամենեքեան
որ միաբանեալ էին ընդ նմա , քակեցան՝ և
եղեն յոչինչ . * Յետ նր̃ յարեաւ յուդա գալիլեացի՝ 37
յաւուրս աշխարհագրին . և ապըստամբեցոյց
ժողովուրդ բազում զկնի իւր . և
նա կորեաւ՝ և ամենեքեան որ նմայն հաւանեալ
էին , ցրուեցան . * Եւ զարդս ասեմ 38
ձեզ . 'ի բաց կացէք յարանցդ յայդցանէ՝ և
թոյլ տուք դոցա . զի թէ 'ի մարդկանէ իցէ
խորհուրդդ այդ կամ գործդ , քակեսցի .
* ապա եթէ յա̃յ է՝ ոչ կարէք քակել զդ̃ . 39
դուցէ և ա̃ծամարտք գտանիցիք . * Հաւանեցան 40
նմա . և կոչեցեալ զառաքեալսն՝ գան
հարին , և պատուիրեցին՝ մի՛ ես խօսել յանուն
յս̃ի . և արձակեցին զնս̃ . * Եւ նք̃ գնացին 41
խնդալով յերեսաց ատենին , զի վն̃ անուան
տն̃ արժանի եղեն անարգելոյ . * Եւ 42
զա̃մ օր 'ի տաճարին և առտնին ոչ դադարէին
ուսուցանել՝ և աւետարանել զյս̃ քս̃ .

ԳԼ. Զ.

Եւ յաւուրսն յայնոսիկ 'ի բազմանալ աշակերտացն, 1
եղեւ տրտունջ յունաց առ հեբրայեցիսն .
զի արհամարհեալ լինէին 'ի պաշտամանն
հանապազորդ այրիք նց̃ . * Կոչեցին 2
երկոտասանքն զբազմութիւն աշակեր-

տացն՝ և ասեն. ոչ է հաճոյ մեզ թողուլ ըզ
3 բանն այ՟՝ և պաշտել զսեղանս։ * Ընտրեցէք
եղբարք՝ վկայեալս 'ի ձէնջ արս եօթն, (լի
հոգւով սրբով և իմաստութեամբ). զորս կացուսցուք
4 'ի վր՟ պիտոյիցս այսոցիկ. * և մեք
աղօթից և պաշտաման և բանին հպատակ լիցուք։
5 * Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի ամ՟
բազմութե՟ն. և ընտրեցին զստեփաննոս՝ այր լի
հաւատովք և հոգւով սրբով, և զփիլիպպոս
և զպրոքորոն և զնիկանովրա և զտիմոնա և ըզ
պարմենա՝ և զնիկողայոս զեկն անտիոքացի։
6 * Զորս կացուցին առաջի առաքելոցն. և աղօթս
7 արարեալ՝ եդին 'ի վր՟ նց՟ զձեռս։ * Եւ
բանն այ՟ աճէր. և բազմանայր թիւ աշակերտացն
յոյժ յեէմ. և բազում ժողովք 'ի քահանայիցն
անսային հաւատոյն։

8 * Ստեփաննոս՝ այր լի շնորհօք և զօրութե՟, ԲԲ
առնէր արուեստս և նշանս մեծամեծս 'ի ժողովրդեանն։
9 * Յարեան ոմանք 'ի ժողովրդենէ,
որ կոչէր լիբէրտացւոց՝ և կիւրենացւոց՝
և աղէքսանդրացւոց՝ և որ 'ի կիւլիկեցւոց՝
10 և յասիա, վիճել ընդ ստեփաննոսի. * և ոչ կարէին
զդէմ ունել իմաստութե՟ն և զհոգւոյն,
11 որով խօսէր։ * Յայնժամ հրապուրեցին արս
ոմանս ասել. թէ լուաք զդորա խօսել բանս
12 հայհոյութե 'ի մովսէս և յած՟. * Եւ խռովեցին
զժողովուրդն և զերիցունս և զդպիրսն. և հասեալ
'ի վր՟ յափշտակեցին զնա՝ և ածին յատ֊

եան. *Եւ կացուցին վկայս սուտս՝ որ ասէին, 13
այրս այս ոչ դադարէ խօսել բանս հայհոյութ̅
զտեղւոյն սրբոյ՝ և զօրինացն. *Լուաք 'ի 14
դմանէ զի ասէր՝ թէ յ̃ս նազովրեցի նա քակեսցէ
զտեղիս զայս, և փոխեսցէ զօրէնս՝ զոր
ետ մեզ մովսէս. *Եւ հայեցեալ 'ի նա ամենեցուն՝ 15
որ նստէին յատենին, տեսին զերեսս
նորա իբրև զերեսս հրեշտակի.

Գլ. Է.

Ասէ քահանայապետն՝ թէ արդարև այդպէս 1
իցէ. *Եւ նա ասէ. արք եղբարք 2
և հարք՝ լուարուք ինձ. Աստուած փառաց
երևեցաւ հօր մերում աբրահամու մինչդեռ
'ի միջագետս էր, մինչչև բնակեցուցեալ էր
զնա 'ի խառան. և ասէ ցնա. *Ել յերկրէ 3
քումմէ և յազգէ քումմէ, և եկ յերկիր՝ զոր
ցուցից քեզ. *Յայնժամ ելեալ յերկրէն քաղդէացւոց 4
բնակեցաւ 'ի խառան. և անտի յետ
մեռանելոյ հօր նր̃՝ փոխեաց, և պանդխտեցոյց
զնա յերկրիս յայսմիկ, յորում դուք այժմ
բնակեալ էք. *Եւ ոչ ետ նմա ժառանգութիւն 5
'ի սմա, և ոչ քայլ մի ոտին. և խոստացաւ
տալ նմա զսա 'ի բնակութիւն, և զաւակի
նր̃ յետ նր̃, մինչ ոչ գոյր նր̃ որդի. *Խօսեցաւ 6
ա̃ծ այսպէս, թէ եղիցի զաւակ նր̃
պանդուխտ յօտար երկրի. և ծառայեցուսցեն

7 զնա՝ և չարչարեսցեն ամս չորեքհարիւր. * Եւ
զազգն՝ որում ծառայեսցեն՝ դատեցայց ես,
ասէ ա̃ծ. և յետ այսորիկ ելցեն՝ և պաշտեսցեն
8 զիս 'ի տեղւոջս յայսմիկ. * Եւ ետ նմա
ուխտ թլփատութե̃ն. և ապա ծնաւ զիսահակ,
և թլփատեաց զնա յաւուր ութերորդի. և
իսահակ զյակովբ. և յակովբ զերկոտասան
9 նահապետսն. * Եւ նահապետքն նախանձել
ընդ յովսեփայ՝ վաճառեցին յեգիպտոս. և էր
10 ա̃ծ ընդ նմա. * Եւ փրկեաց զնա յա̃մ նեղութեանց
նր̃. և ետ նմա շնորհս և իմաստութիւն
առաջի փարաւոնի արքային եգիպտացւոց.
և կացոյց զնա իշխան եգիպտացւոցն՝
11 և ա̃մ տան նր̃. * Եւ եկն սով յա̃մ երկիրն
եգիպտոսի, և 'ի քանան նեղութիւն մեծ. և
12 ոչ գտանէին կերակուր հարքն մեր. * Եւ
լուեալ յակովբայ թէ գտանի կերակուր յեգիպտոս,
առաքեաց զհարսն մեր յառաջագոյն.
13 * Եւ յերկրորդումն ետ ծանօթս յովսէփ
եղբարց իւրոց. և յայտնի եղև ազգն նր̃
14 փարաւոնի. * Առաքեաց յովսէփ՝ և կոչեաց
զյակովբ զհայր իւր, և զա̃մ ազգատոհմն՝ ոգիս
15 եօթանասուն և հինգ. * Եւ էջ յակովբ
յեգիպտոս՝ և վախճանեցաւ ինքն և հարքն
16 մեր. * Եւ փոխեցան 'ի սիւքէմ, և եդան
յայրին, զոր ստացաւ աբրահամ գնոց արծաթոյ
17 յորդւոցն եմովրայ՝ 'ի սիւքէմ. * Իբրև
մերձեցաւ ժամանակ աւետեացն՝ զոր խոս-

տացաւ ա͠ծ աբրահամու, աճեաց ժողովուրդն՝
և բազմացաւ յեգիպտոս. * մինչև յարեաւ այլ 18
թագաւոր յեգիպտոս՝ որ ոչ ճանաչէր զյով-
սէփ. * Նա հնարեցաւ ազգին մերում, և 19
չարչարեաց զհարսն մեր՝ առնել ընկեցիկ ըզ-
մանկունս ն͠ց՝ զի մի՛ ապրեսցին. * Յորում 20
ժամանակի ծնաւ և մովսէս, և էր կայտառ
առաջի ա͠յ. որ և սնաւ 'ի տան հօր իւրոյ ա-
միս երիս. * Եւ յընկեցիկն առնել զնա՝ եբարձ 21
զնա դուստր փարաւոնի, և սնոյց զնա իւր
յորդեգիր. * Եւ վարժեցաւ մովսէս ա͠մ ի- 22
մաստութ͠բ եգիպտացւոցն. և էր զօրաւոր
բանիւք և գործովք իւրովք. * Իբրև լցաւ 23
ն͠ր քառասնամեայ ժամանակ, անկաւ 'ի սիրտ
նորա շրջել զեղբարբքն իւրովք՝ զորդւովքն
ի͠էլի. * Եւ տեսեալ զոմն զրկեալ՝ զչարեցաւ, 24
և խնդրեաց զվրէժ զրկելոյն սպանեալ զե-
գիպտացին. * Զմտաւ ածէր թէ իմասցին եղ- 25
բարք ն͠ր, զի ա͠ծ 'ի ձեռն ն͠ր տալոց էր ըզ-
փրկութիւն ն͠ց. և ն͠ք ոչ իմացան. * Եւ 'ի 26
վաղիւ անդր երեւեցաւ ն͠ց մինչդեռ մար-
տնչէին՝ և վարեաց զն͠ս 'ի խաղաղութիւն,
ասէ. արք՝ եղբարք էք, ընդէ՞ր զրկէք զմի-
եանս. * Իսկ որ զրկէր զընկերն, մերժեաց 27
զնա՝ և ասէ. ո՞ կացոյց զքեզ իշխան և դա-
տաւոր 'ի վ͠ր մեր. * Մի թէ սպանանե՞լ կամի- 28
ցիս զիս՝ զոր օրինակ սպաներ երէկ զեգիպ-
տացին. * Եւ փախեաւ մովսէս 'ի բանիցս 29

յայսմանէ, և եղև պանդուխտ յերկրին Մադիամու.
ուր ծնաւ երկուս որդիս.
30 *Եւ ի կատարել ամացն քառասնից, երևեցաւ ԲԳ
նմա յանապատի լերինն Սինայ հրեշտակ
31 տն̃ ի բոց հրոյ մորենւոյն. *Եւ
Մովսէս տեսեալ՝ զարմացաւ ընդ տեսիլն. և
32 ի մատչելն նր̃ նշմարել՝ եղև ձայն տն̃. *Ես
եմ ած̃ հարց քոց, ած̃ աբրահամու՝ և սահակայ՝
և յակոբայ. և դողի հարեալ Մովսէս՝
33 ոչ իշխէր հայել. *Եւ ասէ ցնա տէր. Լոյծ
զկօշիկս ոտից քոց, զի տեղիդ՝ յորում դուդ
34 կայցես՝ երկիր սր̃ է. *Տեսանելով տեսի ըզչարչարանս
ժողովրդեան իմոյ՝ որ յեգիպտոս,
և լուայ հեծութեան նց̃, և իջի փրկել ըզնոսա.
և արդ՝ եկ առաքեցից զքեզ յեգիպտոս.
35 *Զայն Մովսէս՝ զոր ուրացանն և ասեն.
ո՞ կացոյց զքեզ իշխան և դատաւոր ի վերայ
մեր, զնա ած̃ իշխան և փրկիչ առաքեաց ի
ձեռն հրեշտակին, որ երևեցաւ նմա ի մորենւոջն.
36 *Նա եհան զնս̃ արարեալ նշանս
և արուեստս յերկրին եգիպտացւոց՝ և ի
Կարմիր ծովուն, և յանապատին՝ ամս քառասուն.
37 *Այս Մովսէս է, որ ասաց ցորդիսն
իէլի. մարգարէ յարուսցէ ձեզ տէր ած̃ ձեր
յեղբարց ձերոց իբրև զիս, նմա լուիջիք.
38 *Սա է՝ որ եղև յեկեղեցւոջն յանապատին
ընդ հրեշտակին, որ խօսեցաւ ընդ նմա ի լերինն
Սինայ՝ և ընդ հարսն մեր. որ ընկալաւ

զպատգամս կենդանիս՝ տալ մեզ. * Որում ոչ 39
կամեցան հնազանդ լինել հարքն մեր. այլ
մերժեցին՝ և դարձան սրտիւք իւրեանց յեգիպտոս.
* Եւ ասեն ցահարոն. արա մեզ 40
ա̃ծս, որ երթիցեն առաջի մեր. զի մովսէսն
այն՝ որ եհան զմեզ յերկրէն եգիպտացւոց,
ոչ գիտեմք զի՞ եղեւ նմա. * Եւ արարին յաւուրսն 41
յայնոսիկ որթ, և մատուցին զոհս կռոց.
և ուրախ լինէին 'ի գործս ձեռաց իւրեանց.
* Դարձոյց ա̃ծ՝ և մատնեաց զնոսա 'ի 42
պաշտօն զօրուն երկնից. որպէս և գրեալ է
'ի գիրս մարգարէից. միթէ զոհս և պատարագս
մատուցէք ինձ զամս քառասուն յանապատին՝
տունդ ի̃էլի. * և առիք զվրանն մողոքայ, 43
և զաստղն ա̃յն հռեմփայ, զպատկերսն՝
զոր արարիք երկիրպագանել նց̃. և փոխեցից
զձեզ յայն կողմն բաբելոնացւոց. * Խորանն վկայութեան 44
էր ընդ հարսն մեր յանապատին. ո̃պ
հրամայեաց որ խօսէրն ընդ մովսէսի, առնել
զայն ըստ օրինակին զոր ետես. * Զոր եւ ընկալեալ 45
բերին հարքն մեր հանդերձ յեսուաւ
'ի վիճակ ազգայն, զորս մերժեաց ա̃ծ յերեսաց
հարցն մերոց. մինչեւ յաւուրս դաւթի,
* որ եգիտ շնորհս առաջի ա̃յ, և խնդրեաց 46
գտանել գյարկս ա̃յ յակովբայ. * Նաեւ սողոմոն 47
շինեաց նմա տուն. * Այլ ոչ եթէ բարձրեալն 48
'ի ձեռագործ տաճարս բնակէ. այլ ո̃պ
մարգարէն ասէ. * Երկինք աթոռ իմ են, և 49

երկիր պատուանդան ոտից իմոց . ո՞րպիսի
տուն շինեսջիք ինձ , ասէ տէր . կամ՛ զի՞նչ տեղի
50 հանգստեան իմոյ . * ո՞չ ձեռն իմ արար զայս
51 ամենայն . * Խստապարանոցք և անթլփատք
սրտիւք և ականջօք . դուք հանապազ հոգ-
ւոյն սրբոյ հակառակ կայք . ո͞պ հարքն ձեր և
52 դուք . * Զո՞ 'ի մարգարէիցն ոչ հալածեցին
հարքն ձեր . և սպանին զայնոսիկ որ յառա-
ջագոյն պատմեցին վ͞ս գալստեան արդարոյն ,
որոյ դուք այժմ մատնիչք և սպանողք եղէք .
53 * որք առիք զօրէնս 'ի հրամանս հրեշտակաց ,
54 և ոչ պահեցիք . * Եւ լուեալ զայս զայրանա-
յին 'ի սիրտս իւրեանց , և կրճտէին զատա-
55 մունս 'ի վ͞ր ն͞ր . * Եւ նա էր լի հոգւով սրբով .
հայեցաւ յերկինս՝ և ետես զփառս ա͞յ , և զյ͞ս
զի կայր ընդ աջմէ ա͞յ . և ասէ՝ ահա տեսանեմ
զերկինս բացեալ՝ և զորդի մարդոյ զի կայ ընդ
56 աջմէ ա͞յ . * Աղաղակեալ 'ի ձայն մեծ՝ խցին
զականջս իւրեանց , և դիմեցին առ հասարակ
57 'ի վ͞ր ն͞ր . * Եւ հանեալ արտաքոյ քաղաքին՝
քարկոծէին . և վկայքն դնէին զձորձս իւր-
եանց առ ոտս երիտասարդի միոջ՝ որ կոչէր
58 սաւուղ . * Եւ քարկոծ առնէին զստեփաննոս
որ կարդայր և ասէր . տէր յիսուս՝ ընկալ զհո-
59 գի իմ . * Եդ ծունր՝ և աղաղակեաց 'ի ձայն
բարձր . տէր՝ մի՛ համարիր դոցա զայս մեղս .
և զայս իբրեւ ասաց՝ ննջեաց . և սօղոս էր
կամակից սպանման նորա .

ԳԼ. Ը.

Եւ եղեւ յաւուր յայնմիկ հալածումն մեծ 1
'ի վ̃ր եկեղեցւոյն յե̃էմ. և ա̃մքեան ցրուեցան
'ի գեօղս հրէաստանի՝ և 'ի սամարիա՝ բաց յառաքելոցն:
*Եւ բարձին զստեփանոս արք 2
երկիւղածք՝ և արարին կոծ մեծ 'ի վերայ նր̃.
ԲԳ *Բայց սօղոս վնասակար էր եկեղեցւոյն. 3
'ի տունս տունս մտանէր, քարշէր զարս և ըզ
կանայս՝ մատնէր 'ի բանտ. *Եւ սփռեալքն՝ 4
շրջէին և աւետարանէին զբանն. *Իսկ փիլիպպոս 5
իջեալ 'ի քաղաքն սամարացւոց՝ քարոզէր
նց̃ զքս̃. *Ունկն դնէին ժողովուրդքն 6
բանից փիլիպպոսի միաբան՝ 'ի լսել նց̃ և 'ի
տեսանել զնշանսն, զոր առնէր. *Քանզի բազումք 7
որ ունէին զայս պիղծս՝ աղաղակէին 'ի
ձայն մեծ և ելանէին. *և բազում անդամալոյծք 8
և կաղք բժշկէին. *Եւ եղեւ ուրախութիւն 9
մեծ 'ի քաղաքին յայնմիկ: Այր ոմն անուն
սիմովն՝ յառաջագոյն էր 'ի քաղաքին.
մոգ էր, և ապշեցուցանէր զազգն սամարացւոց.
ասել զանձնէ՝ թէ իցէ մեծ ոմն. *Յոր 10
հայէին ամենեքին 'ի փոքուէ մինչեւ 'ի մեծամեծս.
և ասէին, սա է զօրութիւն այ̃, որ
կոչի մեծ. *Հայէին 'ի նա վս̃ բազում ժամանակաց 11
մոգութ̃քն ապշեցուցանելոյ զնոսա.
*Բայց յորժամ հաւատացին փիլիպպոսի, որ 12

աւետարանէր վ՟ն արքայութեանն ա՟յ, և անուանն
յ՟սի ք՟սի, մկրտէին ամ՟քն արք և կանայք.
13 * Այլ և ինքն սիմոն հաւատաց, և
մկրտեալ կանխէր առ փիլիպպոս. տեսեալ
զնշանսն և զմեծամեծ զօրութիւնսն որք լինէին,
14 զարմանայր. * Իբրև լուան՝ որ յեէմ՝
առաքեալքն էին, թէ և 'ի սամարիա ընկալան
զբանն ա՟յ, առաքեցին առ ն՟ս զպետրոս
15 և զյովհաննէս. * Որք իջեալ կացին յաղօթս
16 'ի վ՟ր ն՟ց, ո՟պ զի առցեն զհոգին ս՟ր. * զի
ցայնժամ՝ չև ևս էր և ոչ 'ի վ՟ր միոյ ն՟ց հասեալ.
բայց միայն մկրտեալք էին յանուն տ՟ն յ՟սի.
17 * Յայնժամ՝ եդին զձեռս 'ի վ՟ր ն՟ց՝ և առնուին
18 հոգի ս՟ր. * Տեսեալ սիմոնի՝ թէ ձեռն 'ի վ՟ր
դնելով առաքելոյն՝ տուեալ լինի հոգին ս՟ր,
19 մատոյց ն՟ց ինչս՝ և ասէ. * տուք և ինձ զիշխանութիւնս
զայս, զի յոր վ՟ր դնիցեմ զձեռս՝
20 առցէ հոգի ս՟ր. Եւ պետրոս ասէ ցնա. * արծաթ
քո ընդ քեզ լիցի 'ի կորուստ, զի զպարգևսն
ա՟յ համարեցար ընչիւք ստանալ.
21 * Ոչ գ՟ոյ քեզ մասն և վիճակ 'ի բանիդ յայդմիկ.
քանզի սիրտ քո ոչ է ուղիղ առաջի ա՟յ.
22 * Ապաշխարեա դու 'ի չարեացդ քոց յայդցանէ,
և աղաչեա զտ՟ր. թերևս թողութիւն լիցի
23 քեզ 'ի մեղմեխ խորհրդոց սրտի քո. * Քանզի
'ի դառնութիւն մաղձի, և 'ի կնճիռն անիրաւութե՟
24 տեսանեմ զքեզ. * Պատասխանի ետ
սիմոն և ասէ. աղաչեցէք դուք վ՟ն իմ զտէր.

զի մի՛ ինչ եկեսցէ ՚ի վ՟ր իմ՝ յորոց դուքդ
ասացիք. * Եւ նոքա եդեալ զվկայութիւն՝ 25
խօսեցան զբանն ա՟յ, և դարձան յեէ՟մ. և ՚ի
բազում գեօղս սամարացւոցն աւետարանէին.
ԲԵ * Հրեշտակ տ՟ն խօսեցաւ առ փիլիպպոս՝ 26
և ասէ. արի և գնա դու ՚ի կողմն հարաւոյ՝
ընդ ճանապարհ որ իջանէ յեէ՟մէ ՚ի գազայ.
զի այս է անապատ. * Եւ յարեաւ գնաց. 27
Եւ ահաւասիկ այր մի եթէովպացի ներքինի
հզօր՝ կանդակայ տիկնոջ եթէովպացւոց. որ
էր ՚ի վ՟ր ամ՟ գանձուց ն՟ր. որ եկեալ էր
երկիրպագանել յեէ՟մ. * և էր անդրէն դարձ- 28
եալ, և նստեալ ՚ի կառս իւրում, ընթեռնոյր
զմարգարէն զեսայի. * Ասէ հոգին ցփիլիպ- 29
պոս. մատիր՝ և յարեաց ՚ի կառսդ յայդոսիկ.
* Եւ ընթացեալ փիլիպպոս՝ լուէր զի ընթեռ- 30
նոյր զեսայի մարգարէ, և ասէ. գիտիցե՞ս
արդեօք՝ զոր ընթեռնուցուդ. * Եւ նա ասէ՝ 31
զիա՞րդ կարիցեմ, թէ ոք ոչ առաջնորդես-
ցէ ինձ. և աղաչեաց զփիլիպպոս ելանել նըս-
տել ընդ նմա. * Եւ գլուխ գրոյն զոր ընթեռ- 32
նոյր՝ էր այս. իբրև զոչխար ՚ի սպանդ վա-
րեցաւ, և իբրև զորոջ առաջի կտրչի իւրոյ
անմռունչ, այնպէս ոչ բանայ զբերան իւր.
* Ի խոնարհու՟ե ն՟ր դատաստան ն՟ր բարձաւ, 33
և զազգատոհմն ն՟ր ո՛ պատմեսցէ. զի բառ-
նի յերկրէ կեանք ն՟ր. * Պատասխանի ետ 34
ներքինին փիլիպպոսի, և ասէ. աղաչեմ ըզ

քեզ՝ վ՟ն ո՞յր ասէ մարգարէն զայս . վ՟ն իւր ,
35 եթէ վ՟ն այլոյ ուրուք . *Եբաց փիլիպպոս ըզբերան
իւր , և սկսեալ 'ի գրոցս յայսցանէ՝ աւետարանեաց
36 նմա զյ՟ս . *Իբրև երթային
զճանապարհայն՝ եկին 'ի ջուր ինչ . և ասէ
ներքինին , ահաւասիկ ջուր՝ զի՞նչ արգելու
37 զիս 'ի մկրտելոյ . *Եւ ասէ ցնա . եթէ հաւատաս
բոլորով սրտիւ քով՝ մարթ է . Պատասխանի
ետ և ասէ . հաւատամ՝ եթէ յ՟ս ք՟ս
38 է որդի ա՟յ . *Եւ հրամայեաց կացուցանել
զկառսն . և իջին երկոքեան 'ի ջուրն՝ փիլիպպոս
39 և ներքինին , և մկրտեաց զնա . *Եւ
իբրև ելին 'ի ջրոյ անտի՝ հոգին ս՟բ եկն 'ի վ՟ր
ներքինւոյն . և հրեշտակ տ՟ն յափշտակեաց
զփիլիպպոս , և ոչ ևս ետես զնա ներքինին .
և գնայր զճանապարհ իւր ուրախութեամբ .
40 *Բայց փիլիպպոս գտաւ յազովտոս . Եւ շըրջեալ
աւետարանէր ամենայն քաղաքացն
մինչև 'ի գալ նորա 'ի կեսարիա .

Գ.Լ. Թ.

1 Իսկ սօղոս տակաւին լցեալ սպառնալեօք ԲՁ
և սպանմամբ աշակերտացն տ՟ն , մատուցեալ
2 առ քահանայապետն . *խնդրեաց 'ի նմանէ
թուղթս 'ի դամասկոս առ ժողովուրդսն . ո՟պ
թէ զոք գտցէ զայնր ճանապարհի՝ արս կամ
3 կանայս , կապեալս ածցէ յե՟մ . *Եւ ընդ

երթալ նորա՝ եղեւ մերձենալ 'ի դամասկոս .
յանկարծակի շուրջ զնովաւ փայլատակեաց
լոյս յերկնից ։ * Եւ անկեալ յերկիր , լուաւ 4
բարբառ՝ որ ասէր ցնա . սաւուղ սաւուղ՝ զի՞
հալածես զիս ։ * Եւ ասէ՝ ո՞վ ես տէր ։ * Եւ 5
նա ասէ . ես եմ յս՟՝ զոր դուն հալածես . խիստ
է քեզ ընդ դէմ խթանի աքացել ։ (* Եւ զար- 6
հուրեալ՝ և անշշունչ լեալ ասաց . տէր՝ զիս
զի՞նչ կամիս առնել ։ * և ասէ ցնա տէր)։ Այլ 7
յառն կաց՝ և մուտ 'ի քաղաքդ , և պատմեսցի
քեզ՝ զի՞նչ պարտ իցէ առնել ։ Իսկ արքն՝ որ
ընդ նմայն երթային , կային անշշունչ . զձայնն
միայն լսէին՝ բայց տեսանէին և ոչինչ ։ * Յա- 8
րեաւ սօղոս յերկրէ անտի , և աչօք բացօք
ոչ զոք տեսանէր . զձեռանէ առեալ նր՟ մու-
ծին 'ի դամասկոս ։ * Եւ էր անդ աւուրս ե- 9
րիս՝ և ոչ տեսանէր , և ոչ եկեր և ոչ արբ ։
* Եւ էր ոմն աշակերտ 'ի դամասկոս՝ անանիա 10
անուն . ասէ ցնա տէր 'ի տեսլեան , անանիա ։
և նա ասէ , աւասիկ եմ տէր ։ * Եւ ասէ ցնա 11
տէր . յառն կաց՝ և գնա՛ ընդ փողոցն՝ որ կոչի
ուղիղ , և խնդրեսցես յապարանսն յուդայ՝
սօղոս անուն զտարսոնացի՝ զի կայ դեռ յա-
ղօթս ։ * Եւ ետես 'ի տեսլեան այր մի անա- 12
նիա անուն՝ մտեալ և եդեալ 'ի վր՟ նր՟ ձեռն ,
ո՟ր զի տեսցէ ։ * Պատասխանի ետ անանիա . 13
տէր՝ լուայ 'ի բազմաց վ՟ն առն այնորիկ՝ որ-
չափ արար չարիս սրբոց քոց յե՟մ . * և աստ 14

ունի իշխանութիւն 'ի քահանայապետիցն կապել
զամենեսեան, որ կարդան զանուն քո ։
15 *Ասէ ցնա տէր․ ե՛րթ դու՝ զի անօթ ընտրութեն
է ինձ նա, կրել զանուն իմ առաջի
հեթանոսաց՝ և թագաւորաց՝ և որդւոցն իէլի ։
16 *Քանզի ես իսկ ցուցից նմա՝ ո՛րչափ պարտ
17 իցէ նմա չարչարիլ վ̃ա անուան իմոյ ։ *Եւ գնաց
անանիա՝ և եմուտ յապարանսն․ և եդեալ 'ի
վ̃ր ն̃ր ձեռս, ասէ․ սաւուղ եղբայր՝ 'ի վեր
հայեաց, տէր առաքեաց զիս, յ̃ս՝ որ երեւեցաւն
քեզ 'ի ճանապարհին՝ յորում գայիրն,
18 ո̃պ զի տեսցես և լցցիս հոգւով սրբով ։ *Եւ
վաղվաղակի անկան յաչաց ն̃ր իբրև կեղեւանք
19 ․ ետես՝ և յարեաւ մկրտեցաւ ․ *և առեալ
կերակուր՝ զօրացաւ ․ և եղև 'ի դամասկոս
20 ընդ աշակերտսն աւուրս ինչ ։ *Եւ վաղվաղակի
'ի ժողովուրդսն քարոզեաց զյ̃ս, թէ
21 սա է որդին ա̃յ ։ *Զարմացեալ էին ամենեքեան
, որ լսէինն, և ասէին ․ ո՞չ սա էր՝ որ
աւար հարկանէր յե̃մ զայնոսիկ, որ կարդային
զանուն յ̃սի ․ և այսր նմին իրի եկեալ է,
զի կապեալս զնոսա տարցի առ քահանայապետսն
22 ։ *Այլ սօղոս առաւել ևս զօրանայր՝
և յաղթահարէր զհրէայսն, որ բնակեալ էին
'ի դամասկոս ․ և խելամտեցուցանէր թէ սա է
23 ք̃ս ։ *Իբրև կատարէին աւուրք բազումք ․
24 խորհեցան հրէայքն սպանանել զնա ։ *Յայտնեցաւ
սօղոսի նենգութիւն ն̃ց ․ քանզի պա֊

հէին զդրունսն 'ի տուէ և 'ի գիշերի՝ ոպ̃ զի
սպանցեն զնա ։ * Եւ առեալ զնա աշակեր֊ 25
տացն 'ի գիշերի՝ ընդ պարիսպն կախեալ ի֊
ջուցին փանդակաւ ։ * Իբրև եկն սօղոս յեէ̃մ, 26
ընդելանէր յարել յաշակերտսն ․ և ամ̃քեան
երկնչէին 'ի նմանէ, չհաւատային թէ իցէ ա֊
շակերտ ։ * Բայց բառնաբայ առեալ զնա՝ ած 27
առ առաքեալսն ․ և պատմեաց նց̃՝ ոպ̃ 'ի ճա֊
նապարհին ետես զտէր, և զի խօսեցաւ ընդ
նմա ․ և զի 'ի դամասկոս համարձակեցաւ յա֊
նուն յս̃ի ։ * Եւ էր ընդ նս̃ 'ի մտանել և ելա֊ 28
նել յեէ̃մ, համարձակեալ յանուն տն̃ ։ * Խօ֊ 29
սէր՝ և վիճէր ընդ յոյնսն ․ և նոքա խոկային
սպանանել զնա ։ * Եւ իմացեալ եղբարցն՝ ի֊ 30
ջուցին զնա 'ի կեսարիա, և առաքեցին զնա
'ի տարսոն ։ * Բայց եկեղեցին ընդ ամ̃ հրէա֊ 31
տան՝ և 'ի սամարիա և 'ի գալիլեա ունէր խա֊
ղաղութիւն, շինեալ և երթեալ զհետ երկիւ֊
ղի տեառն ։ և մխիթարութեամբ հոգւոյն
սրբոյ բազմանայր ։

ԲԷ * Եւ եղև 'ի շրջելն պետրոսի առ ամենե֊ 32
քումբք, իջանել նմա և առ սրբսն՝ որ բնակեալ
էին 'ի լիւդիա ։ * Եւ եգիտ անդ այր մի, ո֊ 33
րում անուն էր ենեա, ութամեան դնէր 'ի
մահիճս անդամալոյծ ։ * Եւ ասէ ցնա պետ֊ 34
րոս ․ ենեա՝ բժշկէ զքեզ տէր յս̃ քս̃, արի՝
և քեզէն թօթափեա զանկողինս քո ։ և վաղ֊
վաղակի յարեաւ ։ * Եւ տեսին զնա ամ̃քեան, 35

որ բնակեալ էին 'ի լիւդիա և 'ի սարոնա ,
36 որք և դարձան իսկ 'ի տէր ։ * Եւ 'ի յոպպէ
էր կին ոմն աշակերտեալ՝ անուն տաբիթա ,
որ թարգմանեալ կոչի այծեմնիկ ։ սա էր լի
գործովք բարեօք և ողորմութեամբք զոր
37 առնէր ։ * Եւ եղև յաւուրսն յայնոսիկ հիւանդանալ
նմա և մեռանել ։ լուացին զնա՝
38 և եդին 'ի դստիկոնի անդ ։ * Եւ մերձ էր
լիւդիա 'ի յոպպէ ։ աշակերտացն լուեալ եթէ
պետրոս անդ է , առաքեցին երկուս արս
առ նա՝ աղաչել , զի մի՛ դանդաղեսցի գալ
39 առ նոսա ։ * Եւ յարուցեալ պետրոս՝ եկն ընդ
նոսա ։ զոր՝ իբրև եկն՝ հանին 'ի վերնատունն ,
և կային շուրջ զնովաւ այրիքն ամենայն ։
լային և ցուցանէին զձորձս և զհանդերձս ,
40 որչափ առնէր նոցա այծեմնիկն ։ * Եւ հանեալ
արտաքս զամենեսեան պետրոսի , եդ
ծունր՝ եկաց յաղօթս ։ և դարձաւ 'ի մարմինն
և ասէ ։ տաբիթա՝ արի՛ կա՛ց յանուն տեառն
յիսուսի քրիստոսի ։ և նա եբաց զաչս իւր ։
41 և տեսեալ զպետրոս՝ նստաւ կանգուն ։ * Ձեռն
ետ նմա՝ և յարոյց զնա ։ կոչեաց զսուրբսն և
42 զայրիս , առաջի կացոյց զնա կենդանի ։ * Եւ
յայտնի եղև ընդ ամենայն յոպպէ , և հաւատացին
43 բազումք 'ի տէր ։ * Եւ եղև աւուրս
բազումս լինել նմա 'ի յոպպէ՝ առ ումեմն
սիմոնի խաղախորդի ։

ԳԼ· Ժ·

գ·կ Այր մի էր 'ի կեսարիա՝ անուն կոռնէլիոս՝ 1
հարիւրապետ, 'ի գնդէ որ կոչէր իտալացի·
*բարեպաշտօն՝ և երկիւղած յա՟յ ա՟մ 2
տամբ իւրով· առնէր ողորմութիւնս բազումս
'ի ժողովրդեանն, և յաղօթս կայր առ ա՟ծ
յա՟մ ժամ· *Ետես 'ի տեսլեան յայտնապէս 3
զիններորդ ժամու աւուրն՝ զհրեշտակ ա՟յ, զի
մտանէր առ նա՝ և ասէ ցնա· կո՛ռնէլիէ·
*Եւ նա հայեցեալ ընդ նա՝ զարհուրեցաւ, 4
և ասէ· զի՞ է տէր· և ասէ ցնա· աղօթք քո՝
և ողորմութիւնք քո ելին յիշատակաւ առաջի
ա՟յ· *Եւ արդ՝ յղեա՛ արս 'ի յոպպէ՝ և կոչեա՛ 5
զսիմոն զոմն՝ որ կոչի պետրոս· *նա մտեալ 6
է առ սիմովնի ումեմն խաղախորդի, որոյ է
տունն մերձ 'ի ծով· *Եւ իբրև գնաց հրեշտակն՝ 7
որ խօսէր ընդ նմա, կոչեաց երկուս 'ի
ծառայից իւրոց՝ և զինուոր մի բարեպաշտօն
'ի սպասաւորացն իւրոց, *և պատմեալ նոցա 8
զա՟մ՝ առաքեաց զն՟ս 'ի յոպպէ· *Եւ 'ի վաղիւ 9
անդր 'ի ճանապարհ անկանել նց՟՝ և մօտ
'ի քաղաքն լինել, ել պետրոս 'ի տանիսն կալ
յաղօթս զվեցերորդ ժամուն· *Քաղցեաւ՝ և 10
կամէր ճաշակել· և 'ի պատրաստելն նց՟՝ եղև
'ի վր՟ նր՟ զարմացումն· *Եւ տեսանէր զերկինս 11
բացեալ· և զչորեցունց տանոց կախեալ

անօթ ինչ իբրև զկտաւոյ մեծի, իջեալ նըստեալ
12 ՚ի վ՟ր երկրի • *յորում էին ա՟մ չորքոտանիք
և սողունք երկրի՝ և թռչունք երկնից •
13 *Եւ եղև ձայն առ նա • արի՛ պետրոս,
14 զե՛ն՝ և կե՛ր • *Եւ պետրոս ասէ • քա՛ւ լիցի
տէր, զի ոչ երբէք կերայ խառնակ ինչ և
15 անսուրբ • *Զայն եղև կրկին անդամ առ նա •
16 զոր ա՟ծ սրբեաց՝ դու մի՛ պղծեր • *Այս եղև
17 երիցս և վերացաւ անօթն յերկինս • *Եւ
մինչդեռ զարմացեալ էր ընդ միտս պետրոս՝
թէ զի՞նչ իցէ տեսիլն՝ զոր ետես • ահա արքն
առաքեալք ՚ի կոռնելեայ՝ հարցին զպարանիցն
18 սիմովնի, կացին առ դրանն • *կոչեցին՝
և հարցանէին, եթէ սիմոն՝ որ կոչին
19 պետրոս՝ աստ մանեա՞լ իցէ • *Եւ մինչդեռ
պետրոս զմտաւ ածէր վ՟ տեսլեանն, ասէ հոգին
ցնա • ահաւասիկ արք ոմանք խնդրեն
20 զքեզ • Այլ արի՛ էջ՝ և երթ ընդ նո՟ առանց
21 իրիք խղճելոյ, զի ես առաքեցի զնո՟ • *Եւ
իջեալ պետրոս առ նո՟, ասէ • ահաւասիկ ես
եմ՝ զոր խնդրէքն • զի՞նչ իրք են՝ վ՟ որոյ եկիք •
22 *Եւ նք՟ ասեն, կոռնէլիոս հարիւրապետ՝
այր արդար և երկիւղած յա՟յ, վկայեալ
յա՟մ ազգէն հրէից • հրաման առ ՚ի հրեշտակէ
սրբոյ՝ կոչել զքեզ ՚ի տուն իւր՝ և լսել
23 բանս ՚ի քէն • *Կոչեաց զնո՟ ՚ի ներքս՝ և առ
իւր ագոյց • և ՚ի վաղիւ անդր յարուցեալ
պետրոս՝ գնաց ընդ նո՟ • և ոմանք յեղբարց

անտի որ 'ի յոպպէ էին՝ եկին ընդ նմա ։ *Եւ 24
'ի վաղիւ անդր մտին 'ի կեսարիա ․ և կոռնէլիոս
մնայր նոցա , կոչեցեալ զազգատոհմն
իւր՝ և զկարեւոր բարեկամսն ․

ԳԲ *Եւ եղև 'ի մտանելն պետրոսի՝ ընդ առաջ 25
եղև նմա կոռնէլիոս , անկեալ առ ոտսն՝
երկիր պագանէր ․ *Եւ պետրոս կանգնեաց 26
զնա՝ և ասէ ․ յոտն կաց՝ և ես ինքն մարդ եմ ։
*Եւ խօսելով ընդ նմա եմուտ 'ի ներքս ․ և 27
գտանէր անդ ժողովեալ բազումս ։ *Եւ ասէ 28
ցն͞ս ․ դուք ինքնին գիտէք՝ ո͞պ անմարթ է առն
հրէի հպել կամ մերձենալ առ այլազգի ․ և
ինձ ա͞ծ եցոյց մի՛ զոք խառնակ կամ անսուրբ
ասել 'ի մարդկանէ ։ *Վ͞ն այսորիկ և առանց 29
ընդ բանս ինչ ածելոյ եկի կոչեցեալ ․ բայց
արդ հարցանեմ, յի՞նչ պէտս կոչեցիք զիս ։
*Եւ կոռնէլիոս ասէ ․ յառաջ քան զչորս 30
աւուրս մինչ ցայս ժամ կայի յաղօթս յինն
ժամն 'ի տան իմում, և ահա այր մի եկն եկաց
առաջի իմ 'ի հանդերձս սպիտակս , և ասէ ։
*Կոռնէլիէ՝ լուեալ եղեն աղօթք քո ․ և ողորմութիւնք 31
քո յիշեցան առաջի ա͞յ ։ *Եւ 32
արդ՝ յղեա՛ 'ի յոպպէ՝ և կոչեա զսիմովն ․ որ
կոչեցեալն է պետրոս ․ սա մտեալ է 'ի տուն
սիմովնի ուրումն խաղախորդի մերձ 'ի ծովն ․
որ եկեսցէ , և խօսեսցի բանս ընդ քեզ ։ *Եւ 33
ես իսկ և իսկ յղեցի առ քեզ ․ դու բարւոք
արարեր զի եկիր ․ արդ՝ ա͞մքին մեք առաջի

ա̃յ կամք լսել զա̃մ. զոր հրամայեալ է քեզ 'ի
34 տ̃նէ. *Եբաց պետրոս զբերան իւր՝ և ասէ.
ճշմարտութե̃ հասեալ եմ, զի ոչ գ̃յ ակնառութիւն
35 առ 'ի յա̃յ. *այլ յա̃մ ազգս՝ որ
երկնչիցի 'ի նմանէ՝ և գործէ զարդարութիւն,
36 ընդունելի է նմա. *Զբանն առաքեաց որդւոցն
իէ̃լի՝ աւետարանել զխաղաղութիւն 'ի
37 ձեռն յ̃ի ք̃ի. սա է ա̃մի տէր. *Դուք ինքնին
գիտէք զբանն, որ եղև ընդ ա̃մ հրէաստան
սկսեալ 'ի գալիլեէ յետ մկրտութե̃ն՝ զոր
38 քարոզեաց յովհաննէս. *Զյ̃ս որ 'ի նազարեթէ՝
զոր օծ ա̃ծ հոգւով սրբով և զօրութե̃.
որ շրջեցաւ բարի առնել՝ և բժշկել զա̃մ բռնաւորեալս
'ի սատանայէ. զի ա̃ծ էր ընդ նմա.
39 *Եւ մեք վկայ եմք ա̃մի՝ զոր արար յերկրին
հրէաստանի՝ և յեր̃էմ. զոր և սպանին կախեալ
40 զփայտէ. *Զնա ա̃ծ յարոյց յերրորդ աւուր. և
41 ետ նմա յայտնի լինել. *ոչ ա̃մ ժողովրդեանն,
այլ մեզ վկայից յառաջագոյն ընտրելոցն յա̃յ.
որ և կերաք՝ և արբաք ընդ նմա՝ յետ յարուն̃
42 նր̃ 'ի մեռելոց. *Եւ պատուիրեաց մեզ քարոզել
ժողովրդեանն՝ և վկայութիւն դնել, թէ
նա է սահմանեալն յա̃յ՝ դատաւոր կենդանեաց
43 և մեռելոց. *Նմա ա̃մ մարգարէք վկայեն,
թողութիւն մեղաց առնուլ անուամբ նր̃՝ ա̃մ
44 հաւատացելոց 'ի նա. *Եւ մինչդեռ խօսէր
պետրոս զբանս զայս, հանգեաւ հոգին ս̃բ 'ի
45 վ̃ր ամենեցուն՝ որ լսէին զբանն. *Զարմացան՝

որք ՚ի թլփատութենէ անտի հաւատացեալք եկեալ
էին ընդ պետրոսի · զի և ՚ի հեթանոսս
պարգևք հոգւոյն սրբոյ զեղուին ։ * Քանզի 46
լսէին ՚ի նոցանէ խօսել լեզուս՝ և մեծացուցանել
զաստուած ։ * Յայնժամ պատասխանի 47
ետ պետրոս · միթէ զջուր ոք արգելուլ կարէ՞
առ ՚ի չմկրտելոյ զսոսա , որք և զհոգին սուրբ
ընկալան՝ որպէս և մեք ։ * Եւ հրամայեաց նց̃ 48
մկրտիլ յանուն յիսուսի քրիստոսի · յայնժամ
աղաչեցին զնա լինել անդ աւուրս ինչ ։

ԳԼ. ԺԱ.

ԳԳ Լուան առաքեալքն և եղբարքն՝ որ էին 1
՚ի կողմանս հրէաստանի , զի և ՚ի հեթանոսս
ընկալան զբանն այ̃ ։ * Բայց յորժամ ել պետրոս 2
յեմ̃. խղճէին ՚ի նմանէ որ ՚ի թլփատութենէ
անտի հաւատացեալքն , * և ասէին , թէ եմուտ 3
առ արս անթլփատս՝ և եկեր ընդ նս̃ ։ * Եւ 4
սկսաւ պետրոս պատմել նց̃ կարգաւ՝ և ասէ ·
* Ես էի ՚ի քաղաքին ՚ի յոպպէ յաղօթս՝ և 5
տեսանէի ՚ի զարմացման տեսիլ · իջանել անօթ
ինչ իբրև կտաւոյ մեծի զչորեքցունց ամանց
կախեալ յերկնից՝ և եհաս մինչև առ իս ։ * Յոր 6
պշուցեալ հայէի · և տեսի զչորքոտանիս երկրի ,
և զգազանս՝ և զսողունս , և զթռչունս
երկնից · * և լուայ բարբառ՝ որ ասէր ցիս · 7
արի պետրոս՝ զե՛ն և կե՛ր · * Եւ ասեմ · քա՛ւ 8

լիցի տէր, զի խառնակ ինչ և անսուրբ ոչ
9 երբէք եմուտ ’ի բերան իմ. * Պատասխանի
ետ ինձ երկիցս անգամ բարբառն յերկնից.
զոր ա͞ծ սրբեաց՝ դու մի՛ խառնակ համարիր.
10 * Այս եղև երիցս, և վերացաւ ա͞մ դարձեալ
11 յերկինս. * Եւ ահա անդէն երեք արք
եկին կացին առ ապարանիցն՝ ուր եմն էի,
12 առաքեալքն ’ի կեսարիայ առ իս. * Եւ ասէ
ցիս հոգին՝ երթալ ընդ նո͞ա՝ և մի՛ ինչ խղճել.
եկին ընդ իս և սոքա վեցեքին եղբարքս, և
13 մտաք ’ի տուն առնն այնորիկ. * Եւ պատմեաց
մեզ՝ որպէս ետես զհրեշտակն ’ի տան
իւրում, զի կայր և ասէր ցնա. առաքեա ’ի
յոպպէ, և կոչեա զսիմոն զկոչեցեալն պետրոս.
14 * որ խօսեսցի բանս ընդ քեզ. որովք
15 կեցցես դու՝ և ա͞մ տուն քո. * Եւ իբրև
սկսայ խօսել՝ եկն հոգին սուրբ ’ի վ͞ր նոցա.
16 ո͞պ և ’ի վ͞ր մեր ’ի սկզբանն. * Յիշեցի զբանն
, տ͞ն զոր ասէրն. յովհաննէս մկրտեաց ’ի ջուր.
17 բայց դուք մկրտիցիք ’ի հոգին սուրբ. * Իսկ
արդ՝ եթէ զհաւասարակաց պարգևն ետ ա͞ծ
և նոցա՝ որպէս և մեզ՝ ’ի հաւատալն ’ի տէր
յ͞ս ք͞ս. ես զի՞նչ կարող էի արգելուլ զա͞ծ.
18 * Եւ լուեալ զայս՝ լռեցին և փառաւոր առնէին
զա͞ծ՝ և ասէին. ուրեմն և ’ի հեթանոսս
ետ ա͞ծ զապաշխարութիւն կենաց.

19 * Եւ ցրուեալքն ’ի նեղութենէն որ եղև ’ի վ͞ր Դ͞Դ
ստեփանոսի՝ հասին մինչև ’ի փիւնիկէ և ’ի

կիպրոս և յանտիոքիա . ոչ ումեք խօսէին ըզ
բանն , բայց միայն հրէից . *Եւ էին ոմանք 20
'ի նոցանէ արք կիպրացիք և կիւրենացիք՝ որք
մտեալ յանտիոք՝ խօսէին ընդ յոյնսն աւետա-
րանեալ զտէր յս̃ . *Եւ էր ձեռն տն̃ ընդ նս̃ . 21
և բազմութիւն հաւատացելոց դարձաւ 'ի
տէր . *Լու եղև բանս այս յականջս եկեղեց- 22
ւոյն՝ որ էր յեէ̃մ, վս̃ նց̃ . և առաքեցին ըզ
բառնաբաս մինչև յանտիոք . *որ իբրև եկն՝ 23
և ետես զշնորհսն այ̃՝ ուրախ եղև , և մխի-
թարէր զամենեսին՝ յօժարութե̃ սրտի կալ նց̃
'ի տէր . *Զի էր այր զուարթամիտ՝ և լի հոգ- 24
ւով սրբով և հաւատովք . և յաւելաւ ժողո-
վուրդ բազում տեառն . *Եւ ել 'ի տարսոն 25
խնդրել զսօղոս , և գտեալ զնա՝ ած յանտիոք .
*Եւ եղև նոցա զամն ողջոյն ժողովել յեկե- 26
ղեցին՝ և ուսուցանել ժողովուրդ բազում , և
անուանել նախ յանտիոք զաշակերտսն քրիս-
տոնեայս . *Ընդ աւուրսն ընդ այնոսիկ իջին 27
յեէ̃մէ մարգարէք՝ յանտիոք . *Յարուցեալ 28
մի ոմն 'ի նոցանէ անուն ագաբոս՝ նշանա-
կեաց հոգւովն սով մեծ լինել ընդ ամ̃ աշ-
խարհ՝ որ եղև առ կղօդեաւ . *Բայց յաշա- 29
կերտաց անտի ոմ̃ զիարդ կարող ոք էր՝ իւ-
րաքանչիւր ոք 'ի նոցանէ որոշեցին առաքել
'ի պէտս եղբարցն որ բնակեալ էին 'ի հրէաս-
տանի . *զոր և արարին իսկ՝ առաքեալ առ 30
երիցունսն 'ի ձեռն բառնաբայ և սօղոսի .

Գ·Լ· ԺԲ·

1 Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ արկ հերովդէս Գե
արքայ ձեռն՝ չարչարել զոմանս յեկեղեցւոյն.
2 *և սպան զյակովբոս զեղբայրն յովհաննու
3 սրով. * Տեսեալ եթէ հաճոյ է հրէիցն,
յաւել և ունել զպետրոս. և էին աւուրքն բաղարջակերաց.
4 * Զոր իբրև կալաւ՝ եդ 'ի բանտի, և մատնեաց չորից չորրորդաց զինուորաց
պահել զնա. և կամէր յետ զատկին ածել զնա
5 ժողովրդեանն. * Եւ պետրոս 'ի պահեստի էր
'ի բանտին. և աղօթք ստէպ լինէին յեկեղեցւոյն
6 վ՟ն ն՟ր առ ա՟ծ. * Իբրև կամեցաւ զնա ածել
հերովդէս. 'ի գիշերին յայնմիկ էր պետրոս 'ի
քուն 'ի մէջ երկուց զինուորաց՝ կապեալ կրկին
շղթայիւք. և պահապանքն առաջի դրանն
7 պահէին զբանտն. * Եւ ահա հրեշտակ տ՟ն եկն
եկաց 'ի վ՟ր՝ և լոյս ծագեաց 'ի տանն, և խոթեաց
զկողն՝պետրոսի՝ յարոյց զնա՝ և ասէ. արի՛
վաղվաղակի. և անկան շղթայքն 'ի ձեռաց ն՟ր.
8 * Եւ ասէ հրեշտակն ցնա. ա՛ծ զգօտի քո, և
ա՛րկ զհողաթափս յոտս քո. և արար այնպէս.
և ասէ ցնա, ա՛րկ զձորձս քո՝ և եկ զկնի իմ.
9 * Եւ ելեալ երթայր զհետ, և ոչ գիտէր՝ թէ
ճշմարիտ իցէ որ ինչ եղեւն 'ի հրեշտակէն. զի
10 համարէր երազ տեսանել. * Եւ իբրև անցին
ն՟ք ընդ մի պահ և ընդ երկուս, եկին մինչև

'ի դուռն երկաթի՝ որ հանէր 'ի քաղաքն. որ
ինքնին բացաւ նց՟. և ելեալ անցին ընդ փո-
ղոց մի. և վաղվաղակի 'ի բաց եկաց 'ի նմանէ
հրեշտակն. * Եւ պետրոս իբրև 'ի միտս ե- 11
ղև, ասէ. արդ գիտեմ ճշմարիտ եթէ ա-
ռաքեաց տէր զհրեշտակ իւր, և փրկեաց զիս
'ի ձեռաց հերովդի, և յա՟մ ակնկալութ՟է ժո-
ղովրդեանն հրէից. Եւ լեալ 'ի միտս՝ եկն 'ի 12
տուն մարեմու մօր յովհաննու, որ կոչեցաւն
մարկոս. ուր էին բազումք ժողովեալ՝ և ա-
ղօթս առնէին. * Եւ 'ի բաղխել զդուրս տանն, 13
մատեաւ աղախին մի՝ ունկն դնէր. որում ա-
նուն էր հռովդէ. * Եւ ծանուցեալ զձայնն 14
պետրոսի՝ 'ի խնդալոյն ոչ եբաց զդուռն. 'ի
ներքս ընթացեալ պատմեաց, թէ պետրոս
առ դրանն կայ. * Նք՟ ասեն ցնա՝ մոլիս. և 15
նա ևս պնդէր՝ թէ այսպէս է. և նք՟ ասէին՝
հրեշտակ նր՟ իցէ. * Եւ պետրոս տևէր բաղ- 16
խէր. իբրև բացին. տեսին զնա և զարմացան.
* Եւ նա ձեռամբ ցուցանէր նց՟ լռել. և պատ- 17
մեաց՝ ոպ՟ տր՟ եհան զնա 'ի բանտէն. և ասէ՝
պատմեցէք յակովբայ և եղբարց զայս. և ել
գնաց յայլ տեղի. * Եւ իբրև այգ եղև՝ էր 18
խռովութիւն մեծ 'ի մէջ զինուորացն, զի՞ ար-
դեօք պետրոսն եղև. * Իսկ հերովդէս իբրև 19
խնդրեաց զնա՝ և ոչ եգիտ, հարցեալ զպահա-
պանսն՝ հրամայեաց տանել. և իջեալ 'ի
հրէաստանէ 'ի կեսարիա՝ և անդ լինէր. * Եւ 20

էր Հերովդէս ցասմամբ ընդ տիւրացիս և ընդ
սիդոնացիս . և նք̃ առ հասարակ եկին առ
նա . և ՚ի բանի արարեալ զբղաստոս սենե-
կապետն արքայի , խնդրէին զխաղաղութիւն
21 վս̃ կերակրելոյ երկրին նց̃ յարքունուստ .* Յա-
ւուր միում յերևելւոջ՝ Հերովդէս զգեցեալ
էր զհանդերձ թագաւորութեան՝ և նստէր յա-
22 տենի , և խօսէր ընդ նս̃ հրապարակաւ .* Եւ
ամբոխն աղաղակէր՝ թէ այ̃ բարբառ է և ոչ
23 մարդոյ . * Եւ անդէն եհար զնա հրեշտակ
տն̃ , փոխանակ զի ոչ ետ փառս այ̃ . և եղեալ
24 որդնալից սատակեցաւ . * Եւ բանն այ̃ ա-
ճէր և բազմանայր .
25 *Բառնաբաս և սօղոս դարձան յե̃մէ՝ իբ- ԳՋ
րև կատարեցին զպաշտօնն . առեալ էր ընդ իւր-
եանս և զյովհաննէս՝ որ կոչեցեալն էր մարկոս .

ԳԼ. ԺԳ.

1 Էին ումանք յանտիոք ըստ եկեղեցւոյն ,
մարգարէք և վարդապետք , բառնաբաս՝ և
շմաւոն կոչեցեալն նիգէր , և ղուկիոս կիւ-
րենացի , և մանայեն դայեկորդի հերովդի
2 չորրորդապետի , և սօղոս . * Մինչդեռ ՚ի
պաշտաման տն̃ կային՝ և պահէին , ասէ հո-
գին սր̃ . որոշեցէք ինձ զբառնաբաս և զսօ-
3 ղոս ՚ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ զդոսա .* Յայն-
ժամ պահեալ՝ և աղօթս արարեալ եդին

ձեռն 'ի վր̃ նց̃՝ և արձակեցին։ * Եւ նք̃ առաքեալք 4
'ի հոգւոյն սրբոյ՝ իջին 'ի սելեւկիա, և անտի նաւեցին 'ի կիպրոս։ * Եւ 5
հասեալ 'ի սաղամինա՝ պատմէին զբանն այ̃
'ի ժողովուրդս հրէից. ունէին և զյովհաննէս
պաշտօնեայ։ * Շրջեալ ընդ ա̃մ կղզին մինչև 6
'ի պափոս, գտին այր ոմն մոգ սուտ
մարգարէ՝ հրեայ, որում անուն էր բարեյեսու։ * Որ էր ընդ փոխանակի բդեշխին սեր- 7
գեայ պօղոսի՝ առն իմաստնոյ։ նր̃ աղաչեալ
զբառնաբաս և զսօղոս՝ խնդրէր լսել զբանն
այ̃։ * Ընդդէմ եկաց նց̃ եղիմաս մոգ, քանզի 8
այսպէս թարգմանի անուն նր̃. խնդրէր շրջել
զփոխանակ բդեշխին 'ի հաւատոյ։ * Իսկ սօ- 9
ղոս, որ և պօղոսն՝ լցեալ հոգւով սրբով հա-
յեցաւ 'ի նա, * և ասէ. ո՛վ լի ա̃մ նենգութ̃ 10
և խորամանկութ̃ որդի սատանայի՝ թշնամի
ա̃մ արդարութե̃ն, ո՛չ լռես 'ի թիւրելոյ զճանա-
պարհս տ̃ն զուղիղս։ * Եւ արդ՝ ահա ձեռն 11
տ̃ն 'ի վր̃ քո, և եղիցիս կոյր՝ չտեսանել զարև
մինչև 'ի ժամանակ մի. և անդէն անկաւ 'ի
վր̃ նր̃ մէգ և խաւար, և շրջեալ խնդրէր ա-
ռաջնորդս։ * Յայնժամ տեսեալ փոխանակի 12
բդեշխին զիրսն որ եղեն՝ հաւատաց, զար-
մացեալ ընդ վարդապետութիւնն տեառն։

Գէ * Եւ ամբարձեալ 'ի պափեայ պօղոսեանց՝ 13
եկին 'ի պերգէ պամփիւլեայ. յովհաննէս մեկ-
նեալ 'ի նց̃նէ՝ դարձաւ յե̃մ։ * Եւ նք̃ գնա- 14

ցեալ 'ի պերգեայ՝ եկին յանտիոք պիսիդեայ ,
և մտեալ 'ի ժողովուրդն յաւուր շաբաթուց՝
15 նստան . * Եւ յետ ընթեռնլոյ զօրէնսն և ըզմարգարէս ,
առաքեցին առ 'նս՟ ժողովրդապետքն՝
և ասեն . ա՛րք եղբարք՝ եթէ իցէ
'ի ձեզ բանք մխիթարութե՟ առ ժողովուրդդ՝
16 խօսեցարուք . * Յարեաւ պօղոս՝ շարժեաց
զձեռն և ասէ . ա՛րք իէ՟լացիք՝ և որք երկնչիք
17 յայ՟՝ լուարուք . * Աստուած ժողովրդեանս
այսորիկ իէ՟լի ընտրեաց զհարսն մեր . և զժողովուրդն
բարձրացոյց 'ի պանդխտուե՟ յերկրին
եգիպտացւոց . և 'ի բազուկ բարձր եհան
18 զնս՟ անտի . * Եւ իբրև քառասնամեայ ժամանակ
19 կերակրեաց զնս՟ յանապատի . * Եւ քակեալ
ազգս եօթն յերկրին քանանու՝ ժառանգեցոյց
20 'նց՟ զերկիր 'նց՟՝ * իբրև ամս չորեքհարիւր
և յիսուն . և յետ այսորիկ ետ 'նց՟ դատաւորս
21 մինչև 'ի սամուէլ մարգարէ . * Եւ
անտի յառաջ խնդրեցին թագաւոր . և ետ 'նց՟
ա՟ծ զսաւուղ որդի կիսեայ՝ այր յազգէ բենիամենի
22 , ամս քառասուն . * Եւ իբրև փոխեաց
զնա , յարոյց 'նց՟ զդաւիթ թագաւոր , որում և
ասաց վկայութի՟ . գտի զդաւիթ որդի յեսսեայ
այր ըստ սրտի իմում . որ արասցէ զա՟մ զկամս
23 իմ . * Ի սր՟ զաւակէ ա՟ծ ըստ աւետեացն յարոյց
24 իէ՟լի զփրկիչն յս՟ . * ըստ յառաջագոյն
քարոզութեանն յովհաննու . առաջի երեսաց
մտին նր՟ մկրտութիւն ապաշխարութեան՝ ա՟մ

ժողովրդեանն Ի՟էլի. * Եւ իբրեւ լնոյր Յովհաննէս 25
զընթացսն, ասէր. զո՞ ոք կարծէք զինէն՝
թէ իցեմ. չեմ ես այն. այլ ահա գայ
զկնի իմ, որում չեմ արժանի զկօշիկս ոտիցն
լուծանել. * Արք եղբարք՝ որդիք աբրահամեան 26
տոհմին, եւ որ ՚ի ձեզ երկիւղածք իցեն
յա՟յ. ձեզ բանս այս փրկութե՟ առաքեցաւ.
* Բայց որ բնակեալ են յեէ՟մ, եւ իշխանք նց՟ 27
անծանօթ եղեն ՚ի նմանէ. եւ ըստ բարբառոյ
մարգարէիցն, որ զա՟մ շաբաթս ընթեռնուին՝
դատեալ կատարեցին. * Եւ ոչ մի ինչ պատճառս 28
մահու գտեալ՝ խնդրեցին ՚ի պիղատոսէ
սպանանել զնա. * Եւ իբրեւ կատարեցին զա՟մ՝ 29
որ վ՟ն ն՟ր գրեալ էր, իջուցեալ ՚ի փայտէն՝ եդին
՚ի գերեզմանի. * Այլ ա՟ծ յարոյց զնա ՚ի 30
մեռելոց. որ երեւեցաւ աւուրբք բազմօք այնոցիկ,
* որ ելեալ էին ընդ նմա ՚ի գալիլեէ 31
յեէ՟մ. որք եւ արդ իսկ վկայք են ն՟ր առ ժողովուրդն.
* Եւ մեք ձեզ աւետարանեմք 32
զխոստումն՝ որ առ հարսն եղեալ էր. * Զի 33
զնոյն ա՟ծ կատարեաց առ մեզ որդիս նց՟ յարուցեալ
զյ՟ս. որպէս եւ ՚ի սաղմոսին գրեալ է
յերկրորդում. որդի իմ ես դու. եւ ես այսօր
ծնայ զքեզ. * Եւ զի յարոյց զնա ՚ի մեռելոց, 34
եւ ոչ եւս դառնալոց է յապականութիւն. այսպէս
ասէ, եթէ տաց ձեզ զսրբութիւնն դաւթի
զհաւատարիմս. * Քանզի եւ ՚ի միւսումն 35
ասէ. ոչ տացես սրբոյ քում տեսանել զապա-

36 կանութիւն . *Այլ դաւիթ յազգի անդ իւրում
պաշտեաց . և ՚ի կամս ա՟յ ննջեաց , և
յաւելաւ առ հարս իւր՝ և ետես զապականութիւն .
37 *Բայց՝ զոր ա՟ծ յարոյց՝ ոչ ետես
38 զապականութիւն . *Յայտնի լիցի ձեզ արք
եղբարք , զի սովաւ ձեզ թողութիւն մեղաց
աւետարանի . և յա՟մէ՝ յորմէ ոչ կարացիք օրինօքն
39 մովսէսի արդարանալ . *սովաւ ա՟մ որ
40 հաւատայ՝ արդարանայ . *Զգոյշ կացէք՝ գուցէ
եկեսցէ ՚ի վ՟ր ձեր ասացեալն ՚ի մարգարէս .
41 *Տեսէք արհամարհոտք՝ և զարմացարուք
և եղծարուք . զի գործ մի գործեմ ես
յաւուրս ձեր , գործ՝ որում ոչ հաւատայցէք՝
42 եթէ ոք պատմեսցէ ձեզ . *Եւ իբրև ելին անտի ,
աղաչէին ՚ի միւսում շաբաթու խօսել ն՟ց
43 զնոյն բանս . *Իբրև արձակեցաւ ժողովուրդն ,
զհետ երթային բազումք ՚ի հրէից անտի և ՚ի
պաշտօնէից եկամտից՝ զպօղոսի և զբառնաբայ .
որք խօսէին ընդ նոսա , և հաւանեցուցանէին
զնոսա կալ մնալ ՚ի շնորհսն աստուծոյ .
44 *Եւ ՚ի գալ միւսոյ շաբաթուն , գրեթէ ա՟մ ԳԿ
45 քաղաքն ժողովեցաւ լսել զբանն ա՟յ . *Իբրև
տեսին հրէայքն զամբոխն՝ լցան նախանձու .
և ընդդէմ դարձեալ ասացելոցն ՚ի պօղոսէ՝
46 հայհոյէին . *Համարձակեալ պօղոսի և բառնաբայ՝
ասէին . առ ձեզ նախ պարտ էր խօսել
զբանն ա՟յ . և քանզի դուք մերժեցէք զնա ,
և ոչ արժանի համարիք զձեզ կենացն յաւի-

տենականաց , ահաւասիկ դառնամք 'ի հե-
թանոսս․ *Զի այսպէս պատուիրեաց մեզ 47
տէր․ եդի զքեզ 'ի լոյս հեթանոսաց՝ լինել քեզ
'ի փրկութիւն մինչև 'ի ծագս երկրի․ *Զայս 48
լուեալ հեթանոսացն՝ ուրախ լինէին , և փա-
ռաւոր առնէին զբանն տ՟ն․ և հաւատացին՝
որք էին կարգեալ 'ի կեանսն յաւիտենականս․
*Եւ շրջէր բանն ա՟յ ընդ ամենայն գաւառն․ 49
*Բայց հրէայքն գրգռեցին զպաշտօնեայ կա- 50
նայս զգաստս՝ և զգլխաւորս քաղաքին , և
յարուցեալ հալածանս 'ի վ՟ր պօղոսի և բառ-
նաբայ՝ հանին զնոսա 'ի սահմանացն իւրեանց․
*Եւ նոքա թօթափեալ զփոշին յոտից 'ի վե- 51
րայ նոցա , եկին յիկոնիոն․ *Եւ աշակերտքն 52
լնուին խնդութեամբ՝ և հոգւով սրբով․

ԳԼ․ ԺԴ․

Եւ եղև յիկոնիոն 'ի միասին մտանել ն՟ց 1
'ի ժողովուրդ հրէից , և խօսել նոյնպէս․ մին-
չև հաւատալ հրէից՝ և յունաց բազմաց յոյժ․
*Բայց անհաւան հրէայքն յարուցին և չարա- 2
ցուցին զանձինս հեթանոսացն 'ի վ՟ր եղբարց․
*Բազում ժամանակս շրջէին համարձակեալք 3
տ՟ն վկայութ՟բ , բանիւ շնորհաց իւրոց․ և տալ
նշանս և արուեստս լինել 'ի ձեռս ն՟ց․ *Եւ 4
եղեն հերձուածք 'ի բազմութ՟ե քաղաքին․ ո-
մանք էին 'ի հրէայսն , և ոմանք յառաքեալսն․

5 *Իբրև եղև դիմել հեթանոսացն և հրէից
իշխանօքն իւրեանց՝ 'ի թշնամանել և 'ի քարկոծել
6 զնս՟, *ազդ եղեալ նց՟՝ փախեան 'ի քաղաքս լիկայոնացւոց 'ի լիւստրա և 'ի դերբէ՝ և
շուրջ զգաւառաւն, և անդ աւետարանէին։
7 *Եւ այր մի լիւստրացի տկար յոտից նստէր՝ կաղ յորովայնէ մօր իւրոյ, որոյ երբէք ԴԲ
8 չէր գնացեալ. *Սա լուաւ զխօսսն պօղոսի.
որոյ հայեցեալ 'ի նա, և տեսեալ՝ թէ ունի
9 հաւատս փրկութե՟, *ասէ մեծաձայն. քեզ
ասեմ յանուն տն՟ յի՟ քի՟՝ յոտն կաց 'ի
վր՟ ոտից քոց ուղիղ. և վաղվաղէր՝ և գնայր։
10 *Եւ ժողովրդոցն տեսեալ՝ զոր արարն պօղոս,
բարձին զձայնս իւրեանց լիկայոնարէն, և ասէին. ածք՟ նմանեալք մարդկան իջին առ մեզ։
11 *Եւ կոչէին զբառնաբաս դիոս, և զպօղոս
հերմէս, քանզի նա էր առաջնորդ բանին։
12 *Իսկ քուրմն դիոյ՝ որ կայր առաջի քաղաքին, ցուլս և պսակս հասուցեալ 'ի դուռնն՝
13 հանդերձ բազմութ՟քն՝ կամէր զոհել. *Եւ
լուեալ առաքելոյն բառնաբայ և պօղոսի,
պատառեալ զհանդերձս իւրեանց՝ արտաքս
14 վաղեցին յամբոխն. աղաղակէին, *և ասէին.
արք զի՞նչ գործէք զայդ. մեք ձեզ նմանօղք
կարեօք մարդիկ եմք, աւետարանել ձեզ
յայդպիսի ունայնութեց՟ դառնալ յած՟ կենդանի. որ արար զերկինս և զերկիր և զծով՝
15 և զամ՟ որ 'ի նս՟. *Որ յանցեալ ազգսն՝ թոյլ

ետ ա̃մ հեթանոսաց գնալ 'ի ճանապարհս իւ-
րեանց ։ *Եւ սակայն ոչ եթէ առանց վկա- 16
յութեան զինքն եթող՝ բարերարութեամբն
տալ յերկնից ձեզ անձրեւս՝ և ժամանակս
պտղաբերս, լնուլ կերակրովք և ուրախութ̃
զսիրտս ձեր ։ *Եւ զայս ասացեալ՝ հազիւ 17
լռեցուցանէին զժողովուրդսն 'ի չզոհելոյ նո-
ցա ։ այլ գնալ յիւրաքանչիւր տեղիս ։

ԴԴ *Եւ 'ի շրջել նոցա և յուսուցանել՝ եկին 18
հասին յանտիոքէ և յիկոնիէ հրէայք ։ և 'ի
վիճել նց̃ համարձակութ̃՝ պատրեցին զժողո-
վուրդսն 'ի բաց կալ 'ի նոցանէ, և ասէին՝ թէ
ոչինչ ճշմարտութիւն ասեն, այլ զա̃մ սուտ ։
և քարկոծեալ զպօղոս՝ քարշեցին արտաքս
քան զքաղաքն, և համարէին զնա մեռեալ ։
*Եւ 'ի պատել զնովաւ աշակերտացն՝ յարեաւ 19
եմուտ 'ի քաղաքն ։ և 'ի վաղիւ անդր ել բառ-
նաբաւ հանդերձ 'ի դերբէ ։ *Աւետարանել 20
'ի քաղաքին յայնմիկ՝ և աշակերտեալ զբա-
զումս, դարձան 'ի լիւստրայ՝ և յիկոնիոն՝ և
յանտիոքիայ, *հաստատել զանձինս աշակեր- 21
տելոցն՝ և մխիթարել կալ հաստատուն 'ի հա-
ւատսն ։ և թէ բազում նեղութ̃ք պարտ է
մեզ մտանել յարքայութիւնն ա̃յ ։ *Ձեռնադ- 22
րեցին նց̃ ըստ եկեղեցւոյ՝ երիցունս ։ աղօթս
արարեալ հանդերձ պահօք, յանձն արարին
զնս̃ տն̃՝ յոր հաւատացեալն էին ։ *Եւ շրջեալ 23
ընդ՝պիսիդիայ՝ եկին 'ի պամփիւլիայ ։ *և խօսե- 24

ցեալ 'ի պերգէ զբանն տ̃ն, իջին յատալիա.
25 *Եւ անտի նաւարկեալ՝ գնացին յանտիոք, ուստի
էին յանձն արարեալ շնորհացն ա̃յ՝ 'ի գործն
26 զոր կատարեցին. *Եկեալ և ժողովեալ զեկեղեցին՝
պատմեցին որչափ արար ա̃ծ ընդ ն̃ս. և
27 զի եբաց հեթանոսաց դուռն հաւատոյ. *Շրջէին
ժամանակս ոչ սակաւ ընդ աշակերտսն.

ԳԼ. ԺԵ.

1 Եւ ոմանք իջեալ 'ի հրէաստանէ՝ ուսուցանէին ԴԴ
զեղբարս. եթէ ոչ թլփատիք ըստ օրինացն
2 մովսեսի՝ ոչ կարէք ապրել. *Եւ 'ի
լինել ոչ սակաւ հակառակութե̃ և խնդրոյ՝
պօղոսի և բառնաբայ ընդ ն̃ս, եդին ելանել
պօղոսի և բառնաբայ և ոմանց 'ի նոցանէ՝ առ
առաքեալսն և երիցունս յե̃մ վ̃ս խնդրոյն այնորիկ.
3 *Նոքա յուղարկեալք յեկեղեցւոյն,
շրջեցան ընդ փիւնիկէ. և ընդ սամարիա պատմէին
զդարձն հեթանոսաց, և առնէին ուրախութիւն
4 մեծ ա̃մ եղբարց. *Եւ հասեալք յե̃մ,
ընկալեալք յեկեղեցւոյն և յառաքելոցն և յերիցանց՝ պատմեցին որչափ ինչ արար ընդ ն̃ս
5 ա̃ծ. *Յարեան ոմանք 'ի հերձուածոյն փարիսեցւոց հաւատացեալք, և ասեն՝ թէ պարտ
է թլփատել զն̃ս, և պատուիրել պահել զօրէնսն
6 մովսեսի. *Եւ ժողովեցան առաքեալքն
7 և երիցունք տեսանել վ̃ս բանիս այսորիկ. *Եւ

յետ բազում խնդիր լինելոյ՝ յոտն եկաց պետրոս՝
և ասէ ցն̃ս . արք եղբարք՝ դուք ինքնին
գիտէք, զի յաւուրցն առաջնոց 'ի միջի ձերում
ընտրեաց ա̃ծ բերանով իմով լսել հեթանոսաց
բանին աւետարանի , և հաւատալ. *Եւ սրտագէտն 8
ա̃ծ վկայեաց ն̃ց , տալով ն̃ց զհոգին ս̃բ ոպ̃
և մեզ . * և ոչինչ ընտրութիւն արար 'ի մէջ ն̃ց 9
և մեր , հաւատովք սրբեալ զսիրտս ն̃ց. *Արդ՝ 10
ընդէ՞ր փորձէք զա̃ծ , դնել լուծ 'ի վզ̃ պարանոցի
աշակերտացն, զոր ոչ հարքն մեր՝ և ոչ
մեք կարացաք բառնալ. * Այլ շնորհօքն տ̃ն 11
յ̃ի ք̃ի հաւատամք ապրել, զոր օրինակ և ն̃ք.
*Լռեաց ա̃մ ժողովուրդն , և լսէին բառնաբայ 12
և պօղոսի պատմելոյն . որչափ արար ա̃ծ
նշանս և արուեստս 'ի հեթանոսս 'ի ձեռն ն̃ց.
ԳԵ *Եւ յետ լռելոյն ն̃ց՝ պատասխանի ետ 13
յակովբոս և ասէ . արք եղբարք՝ լուարուք
ինձ . * Շմաւօն պատմեաց՝ ոպ̃ յառաջագոյն 14
ա̃ծ այց արար առնուլ ժողովուրդ 'ի հեթանոսաց
անուան իւրոյ . *Եւ այնմ միաբանին 15
բանք մարգարէիցն . ոպ̃ և գրեալ է . *Յետ 16
այսորիկ դարձայց և շինեցից զյարկն դաւթի
զանկեալն , և զկործանեալսն ն̃ր վերստին շինեցից՝
և կանգնեցից զնա . * ոպ̃ զի խնդրեսցեն 17
մնացորդք մարդկան զտէր . և ա̃մ հեթանոսք
յորոց վերայ կոչեցեալ է անուն իմ,
ասէ տ̃ր . որ առնէ զայս ա̃մ *յայտնի է 'ի 18
յաւիտենից , (տ̃ն գործ իւր). *Վ̃ որոյ և 19

ես իրաւունս համարիմ, մի՛ նեղել զայնոսիկ՝
20 որք 'ի հեթանոսացն դառնան առ ած. * Այլ
տալ թուղթ առ նոսա, խորշել 'ի կերակրոց
կռոց՝ և 'ի պոռնկութենէ և 'ի մեռելոտւոյ՝
21 և յարենէ. * Զի մովսէս յազգացն առաջնոց
ըստ քաղաքաց զքարոզիչսն իւր ունի 'ի ժողովս
22 ըստ ամ շաբաթու ընթերցեալ: * Յայնժամ
հաճոյ թուեցաւ առաքելոցն և երիցանցն
ամ եկեղեցեաւն, արս ընտրեալս 'ի
նոցանէ առաքել յանտիոք ընդ պօղոսի և
ընդ բառնաբայ, զյուդա՝ զկոչեցեալն բարսաբայ,
23 և զշիղա՝ արս զլխաւորս. * գրեալ
առ եղբարս 'ի ձեռն նց զայս ինչ. Առաքեալք
և երիցունք և եղբարք, յանտիոք և
'ի սիւրիա և 'ի կիւլիկիա եղբարցդ՝ որ 'ի
24 հեթանոսացդ էք, ողջոյն. * Քանզի լուաք՝
թէ ոմանք իբրև 'ի մէնջ խռովեցուցին զձեզ
բանիւք, խախտել զանձինս ձեր. ասեն թլփատել
և պահել զօրէնսն՝ որոց ոչ հրամայեցաք.
25 * Հաճոյ թուեցաւ մեզ միաբան ժողովելոցս,
արս ընտրեալս յղել առ ձեզ ընդ
սիրելիս մեր՝ ընդ բառնաբայ և ընդ պօղոսի.
26 * արք՝ որք մատնեցին զանձինս իւրեանց վն
27 անուան տն մերոյ յի քի. * Արդ՝ առաքեցաք
զյուդա և զշիղա. և նց 'ի բանից
28 զնոյն պատմել. * Զի հաճոյ թուեցաւ հոգւոյն
սրբոյ և մեզ, մի ինչ աւելի բեռն դնել ձեզ.
29 բայց միայն 'ի կարեւորացս յայսցանէ * 'ի բաց

կալ 'ի զոհելոյ կռոց՝ և յարենէ՝ և 'ի հեղձուցելոյ՝
և 'ի պոռնկութենէ. յորոց պահեալ զանձինս
բարւոք գործէք. ողջ լերուք. *Եւ նոքա 30
արձակեալք՝ իջին յանտիոք, և ժողովեալ ըզ
ժողովուրդն՝ ետուն զթուղթն. *Եւ ընթերցեալ՝ 31
ուրախ եղեն 'ի վր̃ մխիթարութեն. *Յուդա 32
և շիղա, զի և նք̃ մարգարէք էին՝ բանիւք
բազմօք մխիթարեցին զեղբարսն՝ և հաստատեցին.
*Եւ եղեալ անդ ժամանակս՝ արձակեցան 33
խաղաղութբ̃ յեղբարց առ առաքեալսն.
*Եւ հաճոյ թուեցաւ շիղայի մնալ 34
անդէն. *Բայց պօղոս և բառնաբաս շրջէին 35
յանտիոք, ուսուցանել և աւետարանել՝ և
այլովք բազմօք՝ զբանն տեառն.

ԴԶ *Իսկ յետ աւուրց ինչ ասէ պօղոս ցբառնաբաս. 36
դարձցուք և շրջեսցուք զեղբարբք՝
ըստ ամ̃ քաղաքաց յորս քարոզեցաք զբանն
տն̃՝ թէ ոպ̃ ունիցին. *Բառնաբաս կամէր 37
առնուլ և զյովհաննէս զկոչեցեալն մարկոս.
*բայց պօղոս աղաչէր՝ թէ զմեկնեալն 'ի նոցանէ 38
'ի պամփիւլեայ, և զչեկեալն ընդ նմ̃ 'ի
գործն, մի՛ առնուլ ընդ ինքեանս. *Եւ եղև 39
գժտութիւն՝ մինչև մեկնել նց̃ 'ի միմեանց,
բառնաբայ առնուլ զմարկոս՝ նաւել 'ի կիպրոս.
*Եւ պօղոսի ընտրեալ զշիղա՝ ել, 40
յանձն արարեալ շնորհացն տյ̃՝ յեղբարց անտի.
*Եւ շրջէր 'ի կողմանս ասորւոց և կիւլիկեցւոց, 41
և հաստատէր զեկեղեցիսն.

ԳԼ. ԺԶ.

1 Եկն եհաս 'ի դերբէ և 'ի լիւստրա. և
ահա աշակերտ ոմն էր անդ՝ անուն տիմոթէոս,
որդի կնոջ հրէի հաւատացելոյ՝ և հօր հեթանոսի.
2 * Որ վկայեալ էր 'ի լիւստրացւոց
3 և յիկոնացւոց եղբարց. *Զսա կամեցաւ պօղոս
ընդ իւր տանել. և առեալ թլփատեաց
զնա վ՟ն հրէիցն, որ էին 'ի տեղիսն յայնոսիկ.
քանզի գիտէին ամենեքին զհայր նր՟ թէ հեթանոս
4 էր. * Իբրև անցանէին ընդ քաղաքսն՝
աւանդէին նց՟ պահել զհրամանսն պատուիրեալս
յառաքելոցն և յերիցանցն՝ որք յեէմ.
5 * Եւ եկեղեցիքն հաստատէին 'ի հաւատս,
և յաւելուին 'ի թիւն հանապազօր.
6 * Եւ շրջեցան ընդ փռիւգիա և ընդ կողմանս Դէ
գաղատացւոց, արգելեալք 'ի հոգւոյն
7 սրբոյ խօսել զբանն յասիա. * Բայց եկեալ առ
միւսեաւ՝ թևակոխէին երթալ 'ի բիւթանիա,
8 և ոչ համարձակեաց նց՟ հոգին յի՟ի. * Եւ անցեալ
9 ըստ միւսիա՝ իջին 'ի տրովադա. * Եւ
տեսիլ երևեցաւ 'ի գիշերին պօղոսի. այր ոմն
մակեդոնացի կայր, աղաչէր զնա՝ և ասէր.
10 անցեալ 'ի մակեդոնիա՝ օգնեսցես մեզ. * Եւ
իբրև զտեսիլն ետես, փութապէս խնդրեցաք
ելանել 'ի մակեդոնիա. տեղեկացեալք՝ թէ
11 հրաւիրեաց զմեզ տէր աւետարանել նց՟. * Եւ

ելեալ ՚ի տրովադա՝ դէպ ուղիղ գնացաք ՚ի
սամոթրակէ, և ՚ի վաղիւ անդր ՚ի նոր
քաղաք · * և անտի ՚ի փիլիպպուս, որ է առաջին 12
վիճակ՝ մակեդոնացւոց քաղաք՝ կողոնիա ·
և անդ ՚ի քաղաքին դադարեալ մեր աւուրս
ինչ · * յաւուրն շաբաթու ելաք արտաքոյ քաղաքին 13
առ գետափն՝ ուր համարէր աղօթս
մատուցանել · և նստեալ խօսէաք ընդ ժողովեալ
կանայս · * Եւ կին ոմն անուն լիդիա 14
ծիրանավաճառ՝ ՚ի թիւատիր քաղաքէ՝ երկիւղած
յայ՟՝ լսէր · զորոյ տէր բաց եբաց ըզ
սիրտն անսալ խօսիցն պօղոսի · * Եւ իբրև 15
մկրտեցաւ ինքն և տուն իւր, աղաչէր և ասէր ·
եթէ համարիջիք զիս հաւատացեալ տեառն,
մտեալ ՚ի տուն իմ՝ ագերուք · և բռնադատեաց
տարաւ զմեզ · * Եւ եղև մինչ երթայաք 16
մեք յաղօթս, պատահեաց մեզ աղախին ոմն՝
զոր ունէր այս հարցուկ · որ շահս բազումս
տայր տերանց իւրոց՝ մղելովն · * Նա զհետ 17
եղեալ պօղոսի և մեր՝ աղաղակէր և ասէր ·
արքս այս՝ ծառայք այ՟ բարձրելոյ են, որ
պատմեն ձեզ զճանապարհս փրկութն՟ · * և զայս 18
առնէր ՚ի բազում աւուրս · Ձանձրացեալ
պօղոս՝ դարձաւ և ասէ ցայսն · պատուիրեմ քեզ
յանուն յի՟ի քի՟ի, ել ՚ի դմանէ, և ել ՚ի նմին
ժամու · * Իբրև տեսին տեարքն նր՟՝ եթէ
հատաւ յոյս շահի նց՟, առեալ զպօղոս և զշիղա՝ 19
ձգեցին ՚ի հրապարակ առ իշխանսն · * Եւ 20

ածեալ զնս̃ առ զօրագլուխսն՝ ասէին. արքս
այս խռովեցուցանեն զքաղաքս մեր. ինքեանք
21 հրէայք են, * և պատմեն մեզ օրէնս՝ զոր չէ
արժան մեզ ընդունել, և ոչ առնել. զի հռոմ-
22 մայեցիք եմք. * Եւ կուտեցաւ ամբոխն ՚ի վր̃
նց̃. և զօրագլուխքն պատառեցին զհանդերձս
23 իւրեանց. հրամայեցին գան հարկանել. * և
բազում վէրս եդեալ ՚ի վր̃ նց̃՝ արկին ՚ի բանտ,
պատուիրեցին բանտապետին զգուշութ̃ պա-
24 հել զնս̃. * Որոյ առեալ զայսպիսի պատուէր՝
արկ զնս̃ ՚ի ներքին բանտն. և զոտս նց̃ պըն-
25 դեաց ՚ի կոճեղս։ * Եւ ՚ի մէջ գիշերոյն պօ-
ղոս և շիղա կային յաղօթս՝ և օրհնէին զա̃ծ.
26 և ունկն դնէին նց̃ կալանաւորքն. * Եւ եղև
յանկարծակի շարժումն մեծ՝ մինչև ՚ի շարժել
հիմանց բանտին. և բացան անդրէն դրունքն
27 ա̃մ, և ամենեցուն կապանք լուծան. * Իբրև
զարթեաւ բանտապետն՝ և ետես բացեալ ըզ
դուրս բանտին, ձգեաց զսուսեր՝ և կամէր
երթալ զիւրովին. կարծէր փախուցեալ ըզ
28 կապեալսն. * Եւ գոչեաց ՚ի ձայն մեծ պօ-
ղոս՝ և ասէ. մի՛ ինչ գործեր ընդ անձն քո
29 չար, քանզի ամենեքին աստ եմք. * Խնդ-
րեաց լոյս՝ և դիմեաց ՚ի ներքս. և զահի հա-
30 րեալ անկաւ առաջի պօղոսի և շիղայի. * և
ածել զնս̃ արտաքս՝ ասէ. տեարք՝ զի՞նչ պարտ
31 է ինձ առնել՝ զի ապրեցայց. * Եւ նք̃ ասեն.
հաւատա՛ ՚ի տ̃ր յ̃ս ք̃ս, և ապրեսցիս դու՝ և ա̃մ

տուն քո ։ * Եւ խօսեցան նմա զբանն տ̃ն՝ և 32
ամենեցուն որ էին 'ի տան նր̃ ։ * Եւ առեալ 33
զնս̃ 'ի նմին ժամու գիշերոյն՝ լուաց 'ի վիրաց
անտի ։ և մկրտեցաւ ինքն և իւրքն ա̃մքեան
անդէն վաղվաղակի ։ * Եւ ածեալ զնս̃ 'ի տուն 34
իւր , եդ առաջի նց̃ սեղան ։ և ուրախ եղև ա̃մ
տամբն հաւատացեալ յա̃ծ ։ * Եւ իբրև այգ 35
եղև՝ առաքեցին զօրագլուխքն զնուիրակսն ,
և ասեն ։ արձակեա զարսդ զայդոսիկ ։ * Եւ 36
պատմեաց բանտապետն զբանսն՝ պօղոսի , եթէ
առաքեցին զօրագլուխքն զի արձակիցիք ։ արդ
ելէք՝ և երթայք խաղաղութ̃ ։ * Իսկ պօղոս ասէ 37
ցնս̃ ։ գան հարեալ զմեզ հրապարակաւ՝ արս
անմեղս հռովմայեցիս արկին 'ի բանտ , և արդ
լռելեայն հանեն զմեզ ։ ոչ այդպէս , այլ եկեսցեն՝
ինքեանք իսկ հանցեն զմեզ ։ * Եւ պատմեցին 38
զօրագլխացն նուիրակքն զբանսն ։ զահի
հարան իբրև լուան՝ թէ հռովմայեցիք են ։
և եկեալ աղաչեցին զնս̃ ։ * Եւ իբրև հանին , 39
աղաչէին գնալ 'ի քաղաքէն ։ * Եւ ելեալ 'ի 40
բանտէն՝ մտին առ լիւդիա ։ և տեսեալ զեղբարս՝
մխիթարեցին զնոսա , և գնացին ։

ԳԼ· ԺԷ·

ԻԿ Եւ շրջեալ ընդ ամփիպօլիս և ընդ ապողոնիա , 1
եկին 'ի թեսաղոնիկէ , ուր էր ժողովուրդ
հրէից ։ * Եւ ըստ սովորութ̃ն պօղոս 2

եմուտ առ նոսա, և 'ի շաբաթս երիս խօսեցաւ
3 ընդ նս՟ 'ի գրոց · *Բանայր՝ և դնէր առաջի,
եթէ պարտ էր ք՟ի չարչարիլ և յառնել
'ի մեռելոց · և թէ նա է ք՟ն յս՟՝ զոր ես
4 պատմեմ ձեզ · *Եւ ոմանք 'ի նոցանէ հաւանեցան,
և վիճակեցան պօղոսի և շիղայի ·
բայց պաշտօնէից հեթանոսաց էր բազմութիւն
յոյժ, և 'ի կանանց գլխաւորաց ոչ սակաւք ·
5 *Եւ նախանձեցան հրէայքն, և առեալ
արս ոմանս գռեհիկս անօրէնս՝ ամբոխ
արարեալ խռովեցին զքաղաքն · և կուտեալ
առ յապարանսն յասոնի, խնդրեցին զնս՟ ածել
6 'ի հրապարակ · *Եւ իբրև ոչ գտին զնս՟
քարշէին զյասոն և զոմանս եղբարս առ քաղաքապետսն ·
բողոք բարձեալ՝ թէ որք զաշխարհս
խռովեցին՝ սոքա և այսր հասին ·
7 *զորս ընկալեալ է յասոն · և սոքա ա՟մ՟քն
հակառակ հրամանացն կայսեր գործեն · թագաւոր
8 զոմն ասեն զյս՟ · *Եւ խռովեցուցին
զժողովուրդն և զքաղաքապետսն, որ լսէին
9 զայս ։ *Եւ առեալ երաշխաւորութիւն առ
10 'ի յասոնայ և յայլոցն՝ արձակեցին զնս՟ ։ *Բայց
եղբարք վաղվաղակի գիշերայն յուղարկեցին
զպօղոս և զշիղա 'ի բերիա · որք իբրև հասին
անդր 'ի ժողովուրդն հրէից գնացին ·
11 *Զի ա՟ք էին ազնուականագոյնք՝ քան որ 'ի
թեսաղոնիկն էին · որք ընկալան զբանն ա՟մ
յօժարութ՟բ · հանապազ քննէին զգիրս, եթէ

իցէ այս այսպէս. * Եւ բազումք 'ի նոցանէ 12
հաւատացին. և 'ի յունաց կանանց զգաստից՝
և յարանց՝ ոչ սակաւք. * Բայց իբրև գիտացին՝ 13
որ 'ի Թեսաղոնիկէ հրէայքն էին, եթէ
և 'ի Բերիա պատմեցաւ 'ի Պօղոսէ բանն այ̃,
եկին և անդր շարժել և խռովեցուցանել ըզ
ժողովուրդն. * Յայնժամ վաղվաղակի զՊօղոս 14
առաքեցին եղբարքն գնալ մինչև 'ի ծովեզր.
և մնացին Շիղա և Տիմոթէոս անդէն.
* Եւ որք տանէին զՊօղոս, ածին զնա մինչև 15
յԱթէնս. և առեալ պատուէր 'ի նմանէ առ
Շիղա և Տիմոթէոս, զի վաղվաղակի եկեսցեն
առ նա. և գնացին.

ԽԲ * Եւ յԱթէնս 'ի մնալ նոցա Պօղոսի, զայրանայր 16
հոգի նր̃ 'ի նմա. զի տեսանէր 'ի կռապաշտութեան
զքաղաքն. * Եւ խօսէր 'ի ժողովրդեանն 17
ընդ հրէայս և ընդ պաշտօնեայսն՝
և 'ի հրապարակին զա̃մ օր՝ որոց և պատահէին.
* Ոմանք յեպիկուրեանցն, և 'ի ստոյիկեանց 18
փիլիսոփայից հակառակէին ընդ նմա.
և ոմանք ասէին, զի՞նչ կամիցի սերմանաքաղս
այս խօսել. իսկ այլք, թէ օտարոտի իմն դից
թուի պատմիչ լինել. քանզի զյս̃ և զյարութիւնն
աւետարանէր. * Եւ առեալ զնա 19
ածին յարիսպագոսն, և ասէին. կարասցուք
իմանալ՝ թէ զի՞նչ է նոր վարդապետութիւնդ՝
որ 'ի քէն պատմի. * Օտարացուցիչս իմն բերես 20
'ի լսելիս մեր, կամիմք գիտել՝ թէ զի՞նչ

21 կամիցի այս լինել. *Զի աթենացիք ամենե-
քին՝ եւ եկքն օտարք ոչ յայլ ինչ պարապէին,
22 բայց ասել ինչ կամ լսել նորագոյնս. *Եկաց
պօղոս ՚ի մէջ արիսպագին՝ եւ ասէ. ա՛րք ա-
թենացիք, ըստ ա՟մի իբրեւ պաշտօնասէրս
23 տեսանեմ զձեզ. *Քանզի շրջեալ եւ տես-
եալ զպաշտամունս ձեր, գտի բագին մի՝
յորում գրեալ էր, անծանօթի ա՟յ. զոր դուքն
յանծանօթս պաշտէք, ես զնոյն պատմեմ
24 ձեզ. *Աստուած՝ որ արար զաշխարհս եւ
զա՟մ որ ՚ի նմա, նա երկնից եւ երկրի է տէր.
25 ոչ ՚ի ձեռագործ տաճարս բնակէ, *եւ ոչ ՚ի
ձեռաց մարդկան պաշտի իբրեւ կարօտ իմիք.
նա տայ ա՟մի կեանս եւ շունչ՝ եւ զա՟մ ինչ.
26 *Արար ՚ի միոջէ արե՟նէ զա՟մ ազգս մարդ-
կան՝ բնակեալ ՚ի վ՟ր ա՟մ երեսաց երկրի.
հաստատեալ կարգեալ ժամանակս եւ սահ-
մանադրութիւնս բնակու՟ն նց՟՝ խնդրել զա՟ծ.
27 *զի թերեւս զննիցեն զնա եւ գտանիցեն. նաեւ
ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ ՚ի մէնջ.
28 *Զի նովաւ կեամք եւ շարժիմք եւ եմք, ո՟պ
եւ ոմանք ՚ի ձերոց ճարտարաց ասացին, թէ
29 նր՟ եւ ազգ իսկ եմք. *Եւ արդ՝ որովհետեւ
ազգք եմք ա՟յ, ոչ պարտիմք համարել ոսկւոյ՝
կամ արծաթոյ՝ կամ քարի, որ ՚ի ճարտարու-
թենէ եւ ՚ի մտաց մարդոյ քանդակեալ իցէ,
30 զա՟ծայինն լինել նմանող. *Բայց զժամա-
նակս անգիտութե՟ն անտես արարեալ ա՟յ, արդ

զայս պատուիրէ մարդկան՝ ա̃մ ուրեք ապաշխարել. * Քանզի հաստատեաց օր յորում 31
պարտ է դատել զաշխարհս արդարութ̃, ՚ի
ձեռն առն՝ որով սահմանեաց տալ հաւատս
ամենեցուն յարուցեալ զնա ՚ի մեռելոց. * Իբ- 32
րեւ լուան զյարութիւն մեռելոց, ոմանք ծաղր
առնէին. կէսքն ասէին՝ լուիցուք ՚ի քէն վս̃
այդորիկ միւսանգամ. * Եւ ապա Պօղոս ել 33
գնաց ՚ի միջոյ նց̃. * Եւ ոմանք արք անկեալք 34
՚ի նա, հաւատացին. ընդ որս էր և Դիոնէ-
սիոս արիսպագացի, և կին մի անուն Դամա-
րիս՝ և այլք ընդ նոսա.

ԳԼ. ԺԸ.

ԵԳ Յետ այսորիկ մեկնեալ Պօղոսի յաթե- 1
նացւոց անտի՝ եկն ՚ի Կորնթոս. * և եգիտ 2
հրէայ զոմ̃ն անուն Ակիւղաս՝ յազգէ պոնտացի,
այն ինչ եկեալ յիտալիա. և զպրիսկիղա կին
նր̃, վս̃ հրամանին կղօդեայ՝ որոշել զա̃մ հր-
էայս ՚ի հռովմայ. և յարեցաւ ՚ի նս̃. * Եւ 3
վս̃ զի համարուեստ էր, եղև առ նս̃՝ և գոր-
ծէր. քանզի էին խորանակարք արուեստիւ.
* Եւ խօսէր ՚ի ժողովրդեանն ըստ ա̃մ շաբա- 4
թուց, և հաւանեցուցանէր զհրէայս և զհե-
թանոս. * Իբրև իջին ՚ի մակեդոնիայ՝ շիղա 5
և տիմոթէոս, ստիպէր հոգւովն Պօղոս դնել
վկայութիւն հրէիցն՝ թէ յս̃ է քս̃ն. * Եւ յընդ- 6

դէմ դառնալ ն՟ց՝ և 'ի հայհոյել, թօթափեաց
զձորձս՝ և ասէ ցն՟ս · արիւն ձեր 'ի գլուխս
ձեր · քաւեալ եմ ես · յայսմ հետէ 'ի հեթանոսս
7 երթամ · * Եւ գնացեալ անտի՝ եմուտ
'ի տուն ուրումն, որում անուն էր տիտոս յուստոս՝
պաշտօնեայ ա՟յ · որոյ ապարանքն էին
8 մերձ 'ի ժողովեաղն · * Կրիսպոս ժողովրդապետ
հաւատաց 'ի տէր ա՟մ տամբ իւրով · և
բազմաց 'ի կորնթացւոցն լուեալ՝ հաւատացին
9 և մկրտեցան · * Եւ ասէ տէր 'ի գիշերին տեսլեամբ
ցպօղոս · մի՛ երկնչիր՝ այլ խօսեաց՝ և մի՛
10 լռեր · * քանզի ես ընդ քեզ եմ, և ոչ ոք ընդդէմ
դարձցի քո՝ 'ի չարչարել զքեզ · քանզի
ժողովուրդ է իմ բազում 'ի քաղաքիս յայսմիկ ·
11 * Եւ նստաւ անդ տարի մի և ամիսս վեց՝ ուսուցանել
նոցա զբանն աստուծոյ ·

12 * Առ գաղղիոնիւ փոխանակաւ բդեշխին ԵԴ
աքայեցւոց, յարեան միաբան հրէայք 'ի վ՟ր
13 պօղոսի, և ածին զնա յատեան · * և ասէին,
եթէ արտաքոյ օրինաց պատրէ սա զմարդիկ՝
14 պաշտել զա՟ծ · * Եւ իբրև մերձ էր պօղոս
բանալ զբերան իւր, ասէ գաղղիոն ցհրէայսն ·
եթէ էր ինչ անիրաւութիւն կամ խարդախութիւն
չարեաց՝ ո՜վ հրէայք, 'ի դէպ էր
15 ինձ անսալ ձեզ · * Ապա եթէ խնդիրք ինչ
են վ՟ս բանի և անուանց և օրինաց ձերոց՝ տեսէք
ձեզէն · քանզի դատաւոր այդպիսի իրաց
16 չկամիմ լինել · * Եւ մերժեաց զն՟ս յա-

տանէ անտի. * Եւ առեալ ամենեցուն յունացն 17
զսոսթենէս ժողովրդապետն՝ հարկանէին
առաջի ատենին. և ոչինչ զայնմանէ
գաղիոնի փոյթ լինէր. * Բայց պօղոս տակաւին 18
մնացեալ աւուրս բազումս, յեղբարց
հրաժարեալ՝ նաւէր յասորիս. և ընդ նմա
պրիսկիղա և ակիւղա փոքրել զգլուխ 'ի կենքրայ,
քանզի ուխտադիր էր. * Եւ հասեալ 19
յեփեսոս՝ զնս̃ եթող անդ, և ինքն մտեալ 'ի
ժողովուրդն խօսէր ընդ հրէայսն. * Եւ աղաչէին 20
զնա՝ բազում ժամանակս լինել անդ.
և ոչ առ յանձն. * այլ հրաժարեաց 'ի նոցանէ. 21
և ասէ. դարձեալ չրջեցայց առ ձեզ ա̃յ կամօք.
ամբարձաւ յեփեսեայ, * և իջեալ 'ի կեսարիա՝ 22
ել և ետ ողջոյն եկեղեցւոյն. էջ յանտիոք.
* Եւ եղեալ անդ ժամանակ ինչ, ել շրջել 23
կարգաւ ընդ գաղատացւոց աշխարհն և ընդ
փռիւգիա, հաստատել զա̃մ աշակերտեալսն.
* Հրէայ ոմն ապողէս անուն՝ աղէքսանդրացի 24
յազգէ այր ճարտարաբան, եկն եհաս յեփեսոս.
զօրաւոր էր գրովք. * Սա էր տեղեկացեալ 25
ճանապարհին տն̃, և եռայր հոգւով.
խօսէր՝ և ուսուցանէր ճշմարտութ̃ վն̃յսի. գիտէր
միայն զմկրտութիւնն յովհաննու. * Սա 26
սկսաւ համարձակել 'ի ժողովրդեանն. և լուեալ
'ի նմանէ ակիւղայ և պրիսկիղայ, առին
զնա առ իւրեանս, և ճշմարտագոյնս պատմեցին
նմա զճանապարհն ա̃յ. * Իբրև կամեցաւ 27

նա գնալ յաքայիա, յօժարեալ եղբարք՝ գրե֊
ցին առ աշակերտսն ընդունել զնա. որ իբ֊
րեւ եհաս անդր՝ բազում նպաստ լինէր հա֊
8 ւատացելոցն՝ ՚ի ձեռն շնորհացն. * Քանզի
պնդագոյն զհրէայսն յանդիմանէր հրապարա֊
կաւ. ցուցանել գրովք՝ եթէ քս̃ է յիսուս.

ԳԼ. ԺԹ.

1 Եւ եղեւ մինչդեռ ապօղոսն ՚ի կորնթոս ՆԵ
էր, պօղոսի շրջել զվերին կողմամբքն՝ և իջել
յեփեսոս, և գտեալ զոմանս զաշակերտս,
2 * ասէ ցն̃ս. եթէ հոգի ս̃բ ընկալարուք ՚ի
՚ի հաւատալն. նք̃ ասեն ցնա. այլ և ոչ թէ հո֊
3 գի ս̃բ գուցէ՝ լուեալ է մեր. * Եւ ասէ, իսկ
յի՞նչ մկրտեցարուք. նք̃ ասեն. ՚ի յովհաննու
4 մկրտութիւնն. * Եւ ասէ պօղոս. յովհաննէս
մկրտեաց մկրտութիւն ապաշխարութեան ա̃մ ժո֊
ղովրդեանն. և ասէր, զի որ գալոցն է յետ
նր̃՝ ՚ի նա հաւատասցեն. այսինքն է՝ ՚ի յս̃ քս̃.
5 * Եւ իբրեւ լուան, մկրտեցան յանուն տն̃ յս̃ի.
6 * Եւ ՚ի դնել ՚ի վր̃ նց̃ պօղոսի զձեռն, եկն
հոգին ս̃բ ՚ի վր̃ նց̃. խօսէին լեզուս՝ և մար֊
7 գարէանային. * Եւ էին ամենեքեան արք
8 իբրեւ երկոտասան. * Եւ մտեալ ՚ի ժողո֊
վուրդն՝ համարձակէր ամիսս երիս. խօսէր՝
9 և հաւանեցուցանէր վս̃ արքայութեն ա̃յ. * Իբ֊
րեւ ոմանք խստանային՝ և ընդդէմ դառ֊

նոյին բամբասել զճանապարհն առաջի բազմութեն .
մեկնեալ 'ի նոցանէ՝ որոշեաց զաշակերտսն .
հանապազօր խօսէր 'ի դիւանին
տիւրաննեայ ուրումն . * Եւ այս եղեւ զերկեամ 10
մի , մինչեւ ա̃մ բնակչացն ասիացւոց լսել զբանն
տ̃ն՝ հրէից եւ հեթանոսաց . * Եւ զօրութիւնս 11
ոչ սակաւս առնէր ա̃ծ 'ի ձեռն պօղոսի .
* մինչ զի եւ 'ի հիւանդս տանել 'ի քըրտանէ 12
նո̃ր թաշկինակս կամ վարշամակս , եւ մերժել
'ի նոցանէ ախտիցն , եւ այսոց չարաց ելանել .
* Յանդգնեցան ոմանք եւ 'ի շրջող հըրէիցն՝ 13
որ երդմնեցուցիչքն էին , անուանել
'ի վերայ այնոցիկ՝ որ ունէին այսս չարս , զանուն
տ̃ն յ̃ի , եւ ասէին . երդմնեցուցանեմ զըձեզ
'ի յ̃ս՝ զոր պօղոսն քարոզէ . * Էին ուրումն 14
սկեւեայ հրէի քահանայապետի եօթն
որդիք , որ զայս առնէին . * Պատասխանի ետ 15
այսն չար՝ եւ ասէ ցնոսա . զյ̃ս գիտեմ եւ զպօղոս
ճանաչեմ , բայց դուք ո՞վ էք . * Եւ վազեաց 16
այրն՝ յորում էր այսն չար , ըմբռնեալ
զերկոսեան յաղթահարեաց զն̃ս , մինչեւ մերկս
եւ վիրաւորս փախչել 'ի տանէ անտի . * Եւ 17
յայտնի եղեւ ա̃մ հրէից եւ հեթանոսաց՝ որ ըննակեալ
էին յեփեսոս . եւ անկաւ երկիւղ յամենեսեան
'ի ն̃ս . եւ մեծանայր անուն տ̃ն յ̃ի .
* Եւ այլ բազումք 'ի հաւատացելոցն գային , 18
եւ խոստովան լինէին՝ եւ պատմէին զգործս
իւրեանց . * Եւ բազումք 'ի կախարդատարացն 19

բերէին զգիրսն, այրէին առաջի ամենեցուն.
և համարեցան զգինս ն̃ց՝ և գտանէին արծաթոյ
20 բիւրս հինգ. * Եւ այսպէս բանն ա̃յ աճէր՝
և զօրանայր.

21 * Եւ իբրև կատարեցաւ այս, եդ պօղոս ԽԶ
'ի միտ շրջել ընդ մակեդոնիա և ընդ աքայիա՝
և գալ յե̃էմ. ասէ, եթէ յետ երթալոյն
իմ՛ անդր, պարտ է ինձ և զհռովմ՛ տեսանել.
22 * Առաքեաց 'ի մակեդոնիա երկուս 'ի պաշտօնէիցն
իւրոց զտիմոթէոս և զերաստոս, և
23 ինքն մնաց ժամանակ ինչ յասիա. * Եւ եղև
'ի ժամանակին յայնմիկ խռովութիւն ոչ սակաւ
24 վ̃ս ճանապարհին. * Իսկ դեմետրիոս ոմն
անուն՝ արծաթագործ, գործէր մեհեանս արծաթիս
արտեմի դից. և տայր ճարտարացն
25 լինել ոչ սակաւ շահ. * որ ժողովեաց իսկ ընդ
ձեռագէտս արուեստին, և ասէ. արք՝ դուք
ձեզէն իսկ գիտէք, զի յայսմ գործոյ է շահ
26 մեզ. * Եւ տեսանէք և լսէք՝ եթէ ոչ միայն
զեփեսացւոց, այլ գրեթէ զա̃մ իսկ ասիացւոց՝
պօղոս այս հաւանեցուցեալ շրջեաց
բազում ժողովս՝ ասել, թէ ոչ են ա̃ծք՝ ձեռագործք.
27 * Եւ ոչ միայն այս ճգնէ զմեր
կողմնս գալ 'ի յանդիմանութիւն, այլ և ընդ
մեծին ա̃յ արտեմեայ զմեհեանն յոչինչ համարել.
նաև քակելոց ևս իցէ մեծութիւն
28 ն̃ր, զոր ա̃մ ասիա՝ և տիեզերք պաշտեն. * Եւ
զայս իբրև լուան, լի եղեն բարկու̃թ. աղա֊

զակէին և ասէին , մեծ է արտեմիս եփեսացւոց .
*Եւ լցաւ քաղաքն խռովութ՟ . դիմեցին 29
առ հասարակ 'ի թէատրոնն , յափշտակէին
զգայիոս և զարիստարքոս մակեդոնացի՝
զուղեկիցսն պօղոսի . *Բայց պօղոս 30
իբրև կամեցաւ մտանել յամբոխն , ոչ թողին
զնա աշակերտքն . *Ոմանք և յասիարքիցն՝ 31
որ էին նր՟ բարեկամք , յղէին առ նա՝ և աղաչէին ,
մի՛ տալ զանձն 'ի թէատրոնն . *Այլք 32
այլ իմն աղաղակէին . զի էր ժողովն նց՟ խռովեալ .
և բազումք 'ի նոցանէ ոչ գիտէին , թէ
վ՟ ո՞յր ժողովեալ իցեն . *Եւ յամբոխէն բաղձուէ 33
յառաջ կալան զաղէքսանդրոս . և իբրև
ածին զնա հրէայքն յառաջ , աղէքսանդրոս
շարժեաց զձեռն՝ և կամէր պատասխանի առնել
ամբոխին . *Իբրև գիտացին՝ եթէ այրն 34
հրէայ է , միաբարբառ եղեալ յամենեցունց՝
իբրև ժամս երկուս աղաղակել , եթէ մեծ է
արտեմիս եփեսացւոց . *Լռեցոյց դպրապետն 35
զամբոխն՝ և ասէ . ա՛րք եփեսացիք՝ իսկ ո՞ է
'ի մարդկանէ՝ որ ոչ գիտէ զեփեսացւոց քաղաքս
մեհենազարդ՝ մեծին արտեմեայ դիցն ,
և դիոպետեայ . *Եւ զի այդ այդպէս է անշուշտ՝ 36
ձեզ պարտ է հանդարտել , և մի՛ ինչ
յանդգնութ՟ գործել . *Ածիք զարսդ զայդոսիկ 37
այսր , ոչ մեհենականապտուտս՝ և ոչ հայհոյիչս
ա՟յ մերոյ . *Զի եթէ դեմետրիոս և որք 38
ընդ նմա ճարտարք՝ ունիցին ինչ ընդ ումեք

բանս, յատեան երթիցեն, և դատաւորք գոն,
39 և ամբաստան լիցին զմիմեանց։ * Ապա եթէ
մ̃ այլ իրիք խնդիր իցէ՝ յօրինաւոր ժողովն
40 վճարեսցին։ * Քանզի և մեզ վիշտ վտանգի
է ընդ կռուոյս այսր առ որ՝ առանց իրիք
յանցանաց լինելոյ։ զորմէ ոչ կարասցուք պատասխանի
տալ վասն ժողովոյս այսորիկ։ Եւ
զայս ասացեալ՝ արձակեաց զժողովն։

Գլ․ Ի․

1 Եւ յետ դադարելոյ ամբոխին՝ կոչեաց ԵԷ
պօղոս զաշակերտսն, և մխիթարեաց։ ողջոյն
2 ետ՝ և ել գնաց 'ի մակեդոնիա։ * Եւ շրջեալ
ընդ կողմանսն ընդ այնոսիկ՝ և մխիթարեալ
3 զն̃ս բանիւք բազմօք, եկն յելլադա։ * Իբրև
արար ընդ ամիսս երիս, եղև նմա դաւ 'ի
հրէիցն, մինչդեռ կամէր ելանել յասորիս։
խորհուրդ կալաւ դառնալ ընդ մակեդոնիա։
4 * Եւ երթայր ընդ նմա մինչև յասիա՝ սոսիպատրոս
պիւռեայ բերիացի, և 'ի թեսաղոնիկեցւոց՝
արիստարքոս և սեկունդոս՝ և գայիոս
դերբեացի, և տիմոթէոս, և ասիացիք՝ տիւքիկոս
5 և տրոփիմոս։ * Սոքա յառաջ երթեալ
6 մնային մեզ 'ի տրովադա։ * Եւ մեք նաւեցաք
յետ աւուրցն բաղարջակերաց 'ի փիլիպպեայ՝
և եկաք առ ն̃ս 'ի տրովադա՝ մինչև յաւուրս
հինգ։ անդ դադարեցաք աւուրս եօթն։

* Եւ յաւուրն շաբաթուց՝ մինչդեռ ժողովեալ 7
էաք բեկանել զհացն , պօղոս խօսէր ընդ նս̃՝
զի գնալոց էր 'ի վաղիւ անդր . և երկայնեաց
զբանն մինչև 'ի մէջ գիշերոյն . * Էին լապ- 6
տերք բազումք 'ի վերնատանն , ուր էաքն
ժողովեալ . * Եւ նստէր ոմն երիտասարդ՝ ա- 9
նուն եւտիքոս 'ի վր̃ պատուհանին , նիրհէր
'ի քուն թանձրուն՝ 'ի խօսելն պօղոսի յաճախ ,
ընկղմեալ 'ի քնոյ անտի՝ անկաւ յերրորդ
դստիկոնէն 'ի վայր , և բարձաւ մեռեալ . * Եւ 10
իջեալ պօղոսի անկանէր զնովաւ . առնոյր ըզնա
ընդ գիրկս՝ և ասէր . մի՛ խռովիք , քանզի
հոգի նր̃ 'ի սմին է . * Եւ ել եբեկ զհացն՝ և 11
ճաշակեաց . և բազում եւս խօսեցաւ մինչեւ
յառաւօտ , և ապա ել գնաց . * Եւ ածին 12
զպատանին կենդանի , և մխիթարեցան ոչ սա-
կաւ . * Եւ մեք մտեալ 'ի նաւն՝ ամբարձաք 13
յասոն . անտի ակն ունէաք մուտանդամառ-
նուլ զպօղոս . զի այնպէս պատուիրեալ էր՝
մինչ ինքն զցամաքաւն երթալոց էր . * Եւ 14
իբրև դիպեցաւ մեզ 'ի յասոն , առեալ զնա
եկաք 'ի մետիլինէ . * Եւ անտի նաւեալ՝ 'ի 15
վաղիւ անդր հասաք հանդէպ քիոյ . և 'ի
միւս օրն հասաք 'ի սամոս . և 'ի վաղիւ անդր
եկաք 'ի մելիտոն . * Զի 'ի մտի եդեալ էր 16
պօղոսի նաւել առ եփեսաւ՝ որպէս զի մի՛
լիցի նմա ժամանակ ինչ յամել յասիա . քան-
զի փութայր եթէ հնար ինչ իցէ նմա՝ զօրն

պենտէկոստէից երթալ յերուսաղէմ.
17 * Եւ 'ի միլիտեայ յղեալ յեփեսոս՝ կո- Զհ
18 չեաց զերիցունս եկեղեցւոյն. * Եւ իբրեւ ե-
կին առ նա, ասէ ցն̃ս. դուք ձեզէն գիտէք
յօրէ յառաջմէ՝ յորմէ եկի յասիա. ո̃պ ընդ ձեզ
19 զա̃մ ժամանակն եղէ. * Ծառայել տ̃ն ա̃մ
խոնարհուբ̃ եւ բազում արտասուօք եւ փորձու-
թեամբք՝ որ դիպեցան ինձ 'ի նենգութենց
20 հրէից. * Ո̃պ ոչինչ զանգիտեցի յօգտակա-
րացն չպատմել ձեզ՝ եւ ուսուցանել զձեզ հր-
21 ապարակաւ եւ առտնին. * տալ վկայութիւն
հրէից եւ հեթանոսաց զապաշխարութի̃ն՝ որ առ
ա̃ծ, եւ զհաւատոյն որ 'ի տէր մեր յս̃ քս̃.
22 * Եւ արդ՝ ահաւասիկ ես կապեալ հոգւով
երթամ յեր̃էմ. եւ որ ինչ անդ ընդ իս անցա-
23 նելոց իցէ՝ չգիտեմ. * Բայց զի հոգին սուրբ
ըստ քաղաքաց վկայէ ինձ՝ եւ ասէ, եթէ կա-
24 պանք եւ նեղութիւնք մնան քեզ. * Այլեւ
ոչ ինչ համարիմ զանձն իմ պատուական՝ ո̃պ
զկատարել զընթացս իմ ուրախուբ̃, եւ զպաշ-
տօնն զոր առի 'ի տ̃նէ յ̃սէ՝ վկայ լինել աւե-
25 տարանի շնորհացն ա̃յ. * Եւ արդ՝ ահաւասիկ
գիտեմ ես, թէ ոչ եւս տեսանելոց էք զե-
րեսս իմ դուք ամենեքեան, յորս շրջեցայ
26 քարոզել զարքայութիւնն ա̃յ. * Վ̃ս որոյ վը-
կայութիւն դնեմ ձեզ յաւուր յայսմիկ՝ զի ս̃ր
27 եմ յարենէ ամենեցուն. * Քանզի ոչ խորշեցայ
28 'ի պատմելոյ ձեզ զա̃մ կամս ա̃յ. * Զգոյշ կացէք

անձանց և ա՟մ հօտին, յորում եդ զձեզ հոգին
ս՟ր տեսուչս՝ հովուել զժողովուրդ տ՟ն
զոր ապրեցոյց արեամբ իւրով. * Քանզի գիտեմ 29
ես՝ եթէ յետ իմոյ մեկնելոյ գայցեն
գայլք յափշտակողք 'ի ձեզ, որ ոչ խնայեսցեն
հօտին. * Եւ 'ի ձէնջ յարիցեն արք՝ որք 30
խօսեսցին թիւրս, ձգել զաշակերտսն զկնի իւրեանց.
* Վ՟ն այսորիկ արթուն կացէք. և 31
յիշեցէք՝ զի զերկեամ մի զցայգ և զցերեկ՝
ոչ դադարեցի արտասուօք խրատել զմի մի
իւրաքանչիւր. * Եւ արդ՝ յանձն առնեմ ըզ 32
ձեզ ա՟յ՝ և բանի շնորհաց ն՟ր, որ կարողն է
շինել՝ և տալ ձեզ ժառանգութիւն ընդ ս՟րսն
ա՟մ. * Արծաթոյ՝ կամ ոսկւոյ՝ կամ հանդերձից՝ 33
ոչ ուրուք 'ի ձէնջ ցանկացայ. * Դուք ինքնին 34
գիտէք՝ զի զպէտսն իմ և որոց ընդ իս էին՝
պաշտեցին ձեռքս այս. * Եւ զա՟մ ինչ ցուցի 35
ձեզ. զի այսպէս պարտ է վաստակել, դարմանել
զհիւանդս. և յիշել զբանն տ՟ն յ՟ի, զոր
ինքն իսկ ասաց. երանելի է մանաւանդ տալ՝
քան առնուլ. * Եւ զայս իբրև ասաց, եդեալ 36
ծունր ամենեքումբք՝ եկաց յաղօթս. * Բազում 37
լալիւն եղեւ ամենեցուն. և անկեալ ըզ
պարանոցաւն պօղոսի՝ համբուրէին զնա.
* Մորմոքէին մանաւանդ 'ի վ՟ր բանին՝ զոր 38
ասէր, թէ ոչ եւս տեսանելոց են զերեսս նորա.
և յուղարկեցին զնա 'ի նաւ անդր.

ԳԼ. ԻԱ.

1 Եւ իբրեւ եղեւ ելանել մեզ եւ մեկնել 'ի ՁԲ
նոցանէ, հանդէպ գնացեալ եկաք 'ի կով. եւ
'ի վաղիւ անդր 'ի հռոդոն, եւ անտի 'ի պատարայ.
2 *Եւ գտեալ նաւ մի՝ զի երթայր 'ի
3 փիւնիկէ, եւ ելեալ 'ի նա գնացաք. *Եւ
յայտ եղեալ կիպրեայ՝ թողաք զնա 'ի ձախակողմն,
նաւեցաք յասորիս, եւ իջաք 'ի
տիւրոս. քանզի անդ էր նաւն թափելոց
4 զբեռինն. *Եւ գտեալ զաշակերտսն՝ կացաք
անդ աւուրս եօթն. որք ասէին ցպօղոս 'ի
5 ձեռն հոգւոյն՝ մի ելանել յե̃մ. *Եւ իբրեւ
եղեւ մեզ կատարել զաւուրսն՝ ելեալ գնացաք,
յուղարկեալ զմեզ ամենեցուն հանդերձ կանամբք
եւ որդւովք մինչեւ արտաքոյ քաղաքին.
եւ եդեալ ծունր առ ծովեզերբն՝ կացաք յաղօթս.
6 *Եւ հրաժարեցաք 'ի միմեանց՝ եւ ելաք
'ի նաւն. եւ նո՛քա դարձան յիւրեանց տեղիս.
7 *Եւ մեր զնաւն աւարտեալ 'ի տիւրոսէ՝ հասաք
'ի պտղոմայիդա. եւ ողջոյն տուեալ եղբարց՝
8 եղաք օր մի առ նոսա. *Եւ 'ի վաղիւ
անդր ելեալ անտի՝ եկաք 'ի կեսարիա. եւ մտեալ
յապարանսն փիլիպպոսի աւետարանչի,
9 որ էր յեօթանց անտի, ագաք առ նմա. *Նր̃
10 էին դստերք չորք՝ կոյսք մարգարէք. *Եւ
'ի լինելն մեր անդ աւուրս բազումս, էջ ոմն

'ի հրէաստանէ մարգարէ՝ անուն ագաբոս .
*Եւ եկեալ առ մեզ, առեալ զգօտին պօղոսի՝ 11
կապեաց զոտս և զձեռս իւր, և ասէ . այսպ՟
ասէ հոգին ս՟ր . զայրն որոյ գօտիս այս է՝ այսպ՟ս
կապեսցեն յե՟մ հրէայք, և մատնեսցեն 'ի
ձեռս հեթանոսաց . *Եւ իբրև լուաք զայն՝ 12
աղաչէաք մեք, և որ 'ի տեղւոջն էին՝ չելանել
նմա յե՟մ. *Յայնժամ պատասխանի ետ պօղոս. 13
զի՞նչ գործէք, զի՛ լայք և ճմլեցուցանէք ըզ
սիրտ իմ. քանզի ես ոչ միայն կապելոյ՝ այլ
և մեռանելոյ յե՟մ պատրաստ եմ վ՟ս անուանն
տ՟ն յ՟սի ք՟սի . *Եւ 'ի չառնալն ն՟ր՝ լռեցաք, 14
ասեմք . տեառն կամք լիցին .

Զ.Գ *Եւ յետ աւուրցն այնոցիկ՝ հանդերձեալ 15
ելանէաք յե՟մ. *Եկին ընդ մեզ և յաշակերտաց 16
անտի կեսարացւոց, և տանէին զմեզ առ
որում վանս ունելոց էաք՝ մնասոնի ումեմն
կիպրացւոյ՝ առաջին աշակերտի . *Եւ 'ի մտանելն 17
մեր յե՟մ, խնդութ՟բ ընկալան զմեզ եղբարք . *Ի վաղիւ անդր եմուտ պօղոս ընդ 18
մեզ առ յակովբոս . և եկին ա՟մ երիցունքն .
*Եւ ողջոյն տուեալ ն՟ց՝ պատմէր մի ըստ միոջէ՝ 19
զոր արար ա՟ծ 'ի հեթանոսս 'ի ձեռն պաշտաման
ն՟ր . *Եւ ն՟ց լուեալ՝ փառաւոր առնէին 20
զա՟ծ . և ասեն ցնա . տեսանե՞ս եղբայր՝ քանի՛
բիւրք են հաւատացելոցն հրէից, և ամենեքեան
նախանձաւոր օրինացն են . *Բայց իրազեկ 21
եղեն վ՟ս քո՝ թէ ապստամբութիւն ու-

սուցանես 'ի Մովսիսէ՝ որոց 'ի հեթանոսս ա̃մ
Հրէայք են . ասես՝ մի՛ թլփատել զորդիս նց̃ ,
22 և մի՛ ըստ կրօնիցն գնալ. *Արդ՝ զի՞նչ լինիցի՝
23 ապաքէն լուեն , եթէ եկեալ ես . *Արդ զայս
արա զոր ասեմք քեզ . են 'ի մեզ արք չորք
24 ուխտադիրք յանձինս իւրեանց . *զնս̃ առեալ՝
սրբեսցիս ընդ նս̃ . և ծախեա ինչ 'ի նս̃ զի
գերծցեն զգլուխս . և գիտասցեն ա̃մքին , թէ
զորոց իրազեկն եղեն զքէն՝ ոչինչ է . այլ միա-
25 բանիս և դու պահել զօրէնս . *Բայց վս̃ հա-
ւատացելոցն հեթանոսաց , մեք առաքեցաք՝
ո̃չ ընտրեցաք , մի՛ ինչ այնպիսի պահել նց̃ .
բայց միայն զգուշանալ 'ի կռոց զոհելոյ , և
յարենէ , և 'ի հեղձուցելոյ , և 'ի պոռնկուէ̃ .
26 *Յայնժամ Պօղոսի առեալ զարսն՝ 'ի վաղի-
անդր ընդ նս̃ սրբեալ եմուտ 'ի տաճարն .
յայտ առնել զկատարումն աւուրցն սրբու-
թեան , մինչև մատեաւ 'ի վերայ իւրաքան-
չիւր ուրուք 'ի նոցանէ պատարագ .
27 *Եւ իբրև մերձ էին եօթն աւուրքն 'ի ԶԴ
կատարել , տեսեալ զնա 'ի տաճարին Ասիա-
ցւոց հրէիցն՝ զեղուին զնովաւ զա̃մ զամբոխն ,
28 և արկեալ 'ի նա ձեռս՝ աղաղակէին . *արք
իէ̃լացիք՝ օգնեցէք . այս այր է՝ որ հակառակ
ժողովրդեանն և օրինաց և տեղւոյս այսորիկ՝
ամենեցուն ա̃մ ուրեք ուսուցանէ . մինչև հե-
թանոս ևս եմոյծ 'ի տաճարն՝ և պղծեաց զս̃բ
29 տեղին . *Քանզի էր յառաջագոյն տեսեալ

զտրոփիմոս զեփեսացի 'ի քաղաքին ընդ նմա.
զոր կարծէին, եթէ 'ի տաճար անդր եմյծ
պօղոս. * Շարժեցաւ քաղաքն ա̃մ, և կու- 30
տեցաւ ժողովուրդն. և առեալ զպօղոս՝ ձգէին
արտաքոյ տաճարին. և վաղվաղակի փակեցան
դրունքն. * և խնդրէին զնա սպանանել. եհաս 31
զրոյց 'ի հազարապետ գնդին, եթէ խռովեալ
է ա̃մ երէ̃մ. * Որոյ անդէն առեալ զօրականս 32
և հարիւրապետս՝ դիմեաց 'ի վ̃ր ն̃ց, և ն̃ց տե-
սեալ զհազարապետն և զզօրականսն, դադա-
րեցին 'ի հարկանելոյ զպօղոս. * Յայնժամ մա- 33
տուցեալ հազարապետն կալաւ զնա, և հրա-
մայեաց կապել կրկին շղթայիւք՝ և հարցանէր՝
թէ ո՞ իցէ, և զի՞նչ իցէ արարեալ. * Այլք 34
այլ ինչ աղաղակէին զնմանէ յամբոխին. իբրև
ոչ կարաց գիտել զստոյգն վ̃ ամբոխին, հրա-
մայեաց ածել զնա 'ի բանակն. * Եւ իբրև ե- 35
հաս յաստիճանսն, դէպ եղև բառնալ բերել
զնա 'ի զօրականացն՝ վ̃ բռնուե̃ ամբոխին.
* Քանզի զհետ երթայր բազմութիւն ժողո- 36
վրդեանն, և ասէին՝ բարձ զդա. * Մինչդեռ 37
մտանելոց էր պօղոս 'ի բանակն, ասէ ցհազա-
րապետն՝ եթէ արժա՞ն իցէ ինձ խօսել ընդ
քեզ. և նա ասէ. յունարէն գիտե՞ս. * Մի՞ ար- 38
դեօք դու իցես եգիպտացին, որ յառաջ քան
զայս աւուրս ապստամբեցուցեր՝ և հաներ յա-
նապատ չորս հազարս արս սիկարեանս. * Եւ 39
ասէ պօղոս, ես եմ այր հրէայ 'ի տարսոնէ կի-

կիլիկեցւոց , ոչ աննշան քաղաքի քաղաքացի . աղաչեմ զքեզ հրամայեա ինձ խօսել առ ժո-
40 ղովուրդդ . * Եւ 'ի հրամայելն նր՟՝ պօղոս կա-
ցեալ 'ի վր՟ աստիճանացն՝ շարժեաց զձեռն ժողովրդեանն . իբրև բազում լռութիւն լինէր , սկսաւ բարբառել հեբրայեցւոց բարբառովն՝ և ասէ .

ԳԼ· ԻԲ·

1 Արք եղբարք և հարք՝ լուարուք ինձ
2 այժմ առ ձեզ պատասխանատուութեանս . * Իբրև լուան՝ թէ հեբրայեցւոց լեզուաւն բարբառեցաւ նց՟՝ առաւել եւս դադարեցին 'ի
3 լռութիւն . * Եւ ասէ . ես եմ այր հրէայ ծնեալ 'ի տարսոնի կիլիկեցւոց՝ սնեալ 'ի քաղաքիս յայսմիկ առ ոտս գամաղիելի , խրատեալ ըստ ճշմարտութեան հայրենի օրինաց . նախանձայոյզ էի այ՟՝ ոպ՟ ամենեքին դուք
4 այսօր . * Որ զայն ճանապարհ հալածեցի մինչև 'ի մահ , կապել և մատնել 'ի բանտս արս
5 և կանայս . * ոպ՟ և քահանայապետդ վկայէ ինձ՝ և ամ՟ ծերակոյտդ . յորոց և թուղթս առեալ առ եղբարս 'ի դամասկոս երթայի , ածել և անտի կապեալս յեղմ՟, զի պատժես-
6 ցին . * Եւ եղև ինձ 'ի գնալն և 'ի մերձենալ 'ի դամասկոս , զմիջաւուրբքն յանկարծակի յերկնից փայլատակեալ լոյս սաստիկ զինեւ .

*և անկայ յերկիր , և լուայ բարբառ՝ որ ասէր 7
ցիս ․ սաւուղ սաւուղ՝ զի՞ հալածես զիս ։ *Եւ 8
ես ետու պատասխանի՝ թէ ո՞վ ես տէր ։ և
ասէ ցիս ․ ես եմ յս̃ Նազովրացի՝ զոր դու
հալածես ։ *Բայց որ ընդ իս էին՝ զլոյսն տեսանէին ․ 9
այլ զձայնն ոչ լսէին՝ որ խօսէր ընդ
իս ։ *Եւ ասեմ, զի՞նչ արարից տէր ։ և ասէ 10
ցիս տէր ․ յարուցեալ երթիցես ՚ի դամասկոս,
և անդ պատմեսցի քեզ վս̃ ա̃մի որ հրաման
է քեզ առնել ։ *Իբրև ոչ տեսանէի ՚ի փառաց 11
լուսոյն այնորիկ , զձեռանէ ձգեալ ՚ի նոցանէ՝
որ ընդ իս էին , մտի ՚ի դամասկոս ։
*Անանիա ոմն այր երկիւղած ըստ օրինաց , 12
վկայեալ յա̃մ բնակչաց՝ որ ՚ի դամասկոս հրէայքն
էին ․ *եկն եկաց առ իս՝ և ասէ ․ սաւուղ 13
եղբայր՝ ՚ի վեր հայեաց ․ *Եւ ես նոյն 14
ժամայն ՚ի վեր հայեցայ ՚ի նա ․ և նա ասէ ցիս ․
ա̃ծ հարցն մերոց յառաջագոյն ընտրեաց ըզ
քեզ ճանաչել զկամս նր̃ , և տեսանել զարդարն
, և լսել բարբառ ՚ի բերանոյ նր̃ ․ *զի եղիցիս 15
վկայ նր̃ առ ա̃մ մարդիկ՝ որոց տեսերն
և լուար ։ *Եւ արդ՝ զի՞ հեղգաս , արի՛ մկրտեաց 16
և լուա զմեղս քո ՚ի կարդալ զանուն նր̃ ։
*Եւ եղև ինձ ՚ի դառնալն յե̃մ՝ և կալ յաղօթս 17
՚ի տաճարին , լինել ՚ի զարմացման ․ *և 18
տեսանել զնա՝ զի ասէր ցիս ․ փութա ել յե̃մէ
վաղվաղակի , քանզի չեն ընդունելոց զքո վկայութիւնդ
վս̃ իմ ։ *Եւ ես ասեմ ․ տէր՝ 19

ինքեանք իսկ գիտեն՝ զի ես էի որ 'ի բանտն
տայի, և գան հարկանէի ըստ ժողովրդոց ըզ-
20 հաւատացեալս 'ի քեզ։ * Եւ յորժամ հեղոյր
արիւնն ստեփանոսի վկայի քո, ես ինքն էի՝
որ 'ի վր̄ կայի, և կամակից լինէի սպանման
նորա, և պահէի զհանդերձս սպանողացն նո-
21 րա։ * Եւ ասէ ցիս. գնա, զի ես 'ի հեթանոսս
22 հեռաւորս առաքեցից զքեզ։ * Եւ ունկն
դնէին նմա մինչև ցայս բան. ապա բարձին
զձայնս իւրեանց՝ և ասեն. բարձ յերկրէ զայդ-
23 պիսիդ՝ զի չէ պարտ այդպիսւոյդ կեալ։ * Եւ
յաղաղակելն նց̃՝ և ընկենուլ զհանդերձս՝ և
24 զփոշին ցանել յօդս, * հրամայեաց հազա-
րապետն մուծանել զնա 'ի բանակն. ասէր՝
գանիւ հարցանել զնա, զի գիտասցէ վասն
որոյ յանցման այնպէս աղաղակէին զնմանէ։
25 * Եւ իբրև պրկեցին զնա փոկովք, ասէ պօ-
ղոս ցհարիւրապետն՝ որ 'ի վերայ կայր. եթէ
զայր հռովմայեցի և անպարտ պա՞րտ իցէ ձեզ
26 գան հարկանել։ * Իբրև լուաւ հարիւրա-
պետն, մատուցեալ առ հազարապետն պատ-
մեաց՝ և ասէ. զի՞նչ կամիս առնել՝ քանզի
27 այրս այս հռովմայեցի է։ * Եւ մատուցեալ
հազարապետն, ասէ ցնա. ասա դու ցիս՝
28 հռովմայեցի՞ ես. և նա ասէ, այո՛։ * Պա-
տասխանի ետ հազարապետն. ես բազում
գնոց զքաղաքացութիւնս զայս ստացայ։ ասէ
29 պօղոս. ես ծնեալ իսկ 'ի դմին եմ։ * Եւ

վաղվաղակի 'ի բաց կացին 'ի նմանէ՝ որ հարկանելոցն էին զնա . և հազարապետն իսկ երկեաւ , իբրև գիտաց եթէ հռովմայեցի է . և զի կապեալն և ս էր զնա .

ՁՁ *Եւ 'ի վաղիւ անդր կամէր գիտել զճշմարիտն , թէ զի՞նչ չարախօսութիւն իցէ հրէիցն . արձակեաց զնա՝ և հրամայեաց կոչել զքահանայապետսն և զա͞մ ատեանն . և իջուցեալ ըզ պօղոս կացոյց 'ի մէջ նոցա . 30

ԳԼ· ԻԳ·

Եւ հայեցեալ պօղոսի յատեանն՝ ասէ . 1
ա՛րք եղբարք՝ ես ա͞մ ուղիղ մտօք գնացեալ
եմ առաջի ա͞յ մինչև ցայսօր . *Եւ քահանա- 2
յապետն անանիա հրամայեաց սպասաւորացն
հարկանել զբերանն նր͞ . *Յայնժամ պօղոս ա- 3
սէ ցնա . հարկանելոց է զքեզ ա͞ծ՝ ո՛րմ բռ-
ուեալ . և դու նստիս դատել զիս ըստ օրի-
նաց , և առանց օրինաց հրամայես զիս հար-
կանել . *Եւ որ շուրջն կային՝ ասեն . զքահա- 4
նայապե͞տ ա͞յ հայհոյես . *Եւ ասէ պօղոս . ոչ 5
գիտէի եղբարք՝ եթէ իցէ քահանայապետ .
գրեալ իսկ է՝ զիշխան ժողովրդեան քո ոչ
հայհոյեսցես . *Իբրև գիտաց պօղոս՝ եթէ մի 6
կողմն սադուկեցւոց է՝ և միւսն փարիսեցւոց ,
աղաղակէր 'ի մէջ ատենին . ա՛րք եղբարք՝ ես
փարիսեցի եմ , որդի փարիսեցւոյ . վ͞ս յուսոյ

և յարութեան մեռելոց՝ ես աւասիկ դատիմ։
7 *Եւ զայս իբրեւ ասաց՝ եղեն հերձուածք փարիսեցւոցն
և սադուկեցւոց . և պատառեցաւ
8 բազմութիւնն ։ *Քանզի սադուկեցիքն ասեն ,
չիք յարութիւն , ոչ հրեշտակ՝ և ոչ հոգի
. բայց փարիսեցիքն խոստովանին զերկոսեան
9 ։ *Եւ եղեւ աղաղակ մեծ . յոտն կացին
ոմանք 'ի դպրաց անտի 'ի կողմանէ փարիսեցւոց
, հակառակէին և ասէին . ոչինչ չարութիւն
գտանեմք յառնս յայսմիկ , բայց թէ
10 հոգի խօսեցաւ 'ի դմա՝ կամ հրեշտակ ։ *Եւ
'ի բազմանալ ամբոխին՝ երկուցեալ հազարապետն
թէ գուցէ ճեղքիցի պօղոս 'ի նոցանէ ,
հրամայեաց զօրականին իջանել յափշտակել
11 զնա 'ի միջոյ նց̃ , և ածել 'ի բանակն ։ *Եւ 'ի
վաղուեան գիշերին եկաց առ նմա տէր , և
ասէ . քաջալերեաց պօղէ , զի ոպ̃ վկայեցեր
վասն իմ յերուսաղէմ , նոյնպէս պարտ է քեզ
և 'ի հռովմ վկայել ։
12 *Եւ իբրեւ այգ եղեւ՝ արարեալ ժողով ՁԷ
հրէիցն՝ նզովեցին զանձինս ոչ ուտել և ոչ ըմպել՝
13 մինչեւ սպանցեն զպօղոս ։ *Եւ էին աւելի
քան զքառասուն՝ որոց զայս ընդ միմեանս
14 երդմունս արարեալ էր ։ *Որք մատեան առ
քահանայապետսն և երիցունս՝ և ասեն . նզովիւք
նզովեցաք զանձինս՝ ոչինչ ճաշակել մինչեւ
15 սպանցուք զպօղոս ։ *Բայց դուք զգացուցէք
հազարապետին հանդերձ ատենիւ ,

զի իջուսցէ զնա առ ձեզ, ոպ̃ թէ կամիցիք
ճշմարտագոյնս ինչ գիտել զնմանէ. և մեք յառաջ
քան զմօտել նր̃՝ պատրաստ եմք ՚ի սպանանել
զնա։ *Եւ լուեալ քեռորդւոյն պօղոսի 16
զդաւաճանութիւնն, եկն եմուտ ՚ի բանակ
անդր՝ պատմեաց պօղոսի։ *Եւ կոչեցեալ 17
պօղոսի առ իւր զմի ՚ի հարիւրապետացն՝
ասէ. զպատանիս զայս տար առ հազարապետն,
զի ունի ինչ պատմել նմա։ *Եւ նր̃ 18
առեալ զնա տարաւ առ հազարապետն՝ և ասէ.
կապեալն պօղոս կոչեաց զիս, և աղաչեաց
զպատանիս զայս ածել առ քեզ, ունի
ինչ խօսել ընդ քեզ. *Առեալ զձեռանէ նր̃ 19
հազարապետին գնաց մեկուսի, հարցանէր՝
թէ զի՞նչ ունիս խօսել ընդ իս։ *Եւ նա ասէ. 20
հրէայք միաբանեցին աղաչել զքեզ, զի
՚ի վաղիւ զպօղոս իջուսցես յատեան, իբրեւ
թէ կամիցին ինչ ճշմարտագոյնս հարցանել
զն̃ նր̃. *արդ՝ դու մի՛ անսայցես նց̃. քանզի 21
դարան գործեալ է նմա ՚ի նոցանէ՝ արանց աւելի
քան զքառասուն, որ նզովեցին զանձինս՝
ոչ ուտել և ոչ ըմպել՝ մինչև սպանցեն
զնա. արդ պատրաստ են՝ և սպասեն քում
հրամանի։ *Ապա հազարապետն արձակեաց 22
զպատանին՝ պատուիրեալ մի՛ ումեք ասել,
թէ զայս զգացուցեր ինձ։ *Եւ կոչեաց երկուս 23
՚ի հարիւրապետացն՝ և ասէ. պատրաստեցէք
զօրականս երկերիւր, ոպ̃ զի երթի-

ցեն մինչեւ 'ի կեսարիա. եւ հեծեալս եօթա-
նասուն՝ եւ տիգաւորս երկերիւր, 'ի յերից
24 ժամու գիշերոյն. * եւ գրաստ պատրաստա-
կան՝ ո՟ր զի իջուցեալ զպօղոս ապրեցուսցեն.
25 եւ առ փելիքս դատաւոր, * գրեալ թուղթ,
26 որ ունէր օրինակ զայս. * Կղօդիոս լիւսիաս
27 առ քաջ դատաւորդ փելիքս՝ ողջոյն. * Զայրս
զայս կալեալ 'ի հրէից՝ եւ մերձ 'ի սպանանել
'ի նոցանէ. հասեալ 'ի վ՟ր զօրականաւ ապրե-
28 ցուցի, իմացեալ թէ հռովմայեցի է. * Կա-
մեցայ գիտել զվնասն՝ վ՟ս որոյ ամբաստանէինն
29 զդմանէ, իջուցի զդա յատեան նոցա. * Զոր
գտի ամբաստանեալ վասն խնդրոյ իրիք ի-
րեանց օրինաց. եւ ոչինչ արժանի մահու կամ
30 կապանաց ունէր վնաս. * Իբրեւ ազդ եղեւ
նենգութեան յայլոց լինելոյ 'ի նոցանէ՝ յղեցի
առ քեզ. հրաման տուեալ եւ չարախօսացն
31 խօսել զդմանէ առաջի քո. ողջ լեր. * Եւ
զօրականացն ըստ հրամանի նորա առեալ զպօ-
32 ղոս՝ ածին գիշերայն յանտիպատրիս. * Եւ 'ի
վաղիւ անդր արձակեալ զհեծեալս ընդ նմա
33 երթեալ՝ դարձան 'ի բանակն. * Ն՟ք մտին 'ի
կեսարիա. եւ տուեալ ցդատաւորն զթուղթն,
34 առաջի կացուցին ն՟մ եւ զպօղոս. * Իբրեւ ըն-
թերցաւ՝ եհարց թէ յորմէ՞ նահանգէ իցէ. եւ
35 ստուգեալ եթէ 'ի կիւլիկիայ է. * լուայց քեզ
ասէ՝ յորժամ եւ չարախօսքն քո եկեսցեն. եւ
հրամայեաց յապարանին հերովդի պահել զնա։

ԳԼ. ԻԴ.

էկ Եւ յետ հինգ աւուր էջ քահանայապետն 1
Անանիա հանդերձ ծերովք ոմամբք, և ճարտարախօսաւ
Տերտուղեաւ ումեմբ. որք և
զգացուցին դատաւորին վ՟ն Պօղոսի։ *Եւ 'ի 2
կոչելն զնա՝ սկսաւ Տերտուղոսն ամբաստան
լինել և ասել։ Բազում խաղաղութիւն գտեալ
է 'ի քէն՝ և իրաց ուղղութիւն ազգիս այսորիկ
քով խնամով. *ամ՟ի և ամ՟ ուրեք շնորհակալ 3
եմք՝ քաջդ Փելիքս՝ ամ՟ գոհութ՟։ *Բայց զի 4
մի՛ աւելի ևս աշխատ արարից զքեզ, աղաչեմ
լսել մեզ կարճ 'ի կարճոյ՝ քոյին հեզութ՟դ։
*Քանզի գտաք զայր զայս ապականիչ և 5
խռովիչ ամ՟ Հրէից՝ որք են ընդ տիեզերս, և
առաջնորդ Նազովրայեցւոց հերձուածոյն։ *Որ 6
և զտաճարն իսկ կամեցաւ պղծել. զոր և կալաք,
և ըստ մերոց օրինաց դատել կամեցաք։
*Եկեալ Լիւսիաս հազարապետ՝ մեծաւ բռնութ՟ 7
'ի ձեռաց մերոց եհան։ *Հրամայեաց 8
և չարախօսացն ն՟ր գալ առ քեզ. յորմէ դու
իսկ բաւական լինիցիս վերստին դատեալ,
ամ՟ի հասու լինել՝ զորոց մեք ամբաստանեմք
զնմանէ. *Միաբանեցին և Հրէայքն՝ ասեն՝ 9
այդ այդպէս է։ *Պատասխանի ետ Պօղոս, 10
յակնարկել նմա դատաւորին խօսել. Ի բազում
ամաց լինել քեզ դատաւոր ազգիս այ-

*սորիկ գիտեմ. յօժարութ̃ վ̃ իմոց իրաց պատասխանի
11 տամ. *Քանզի կարող ես գիտել, զի ոչինչ աւելի է իմ քան զաւուրս երկոտասան՝ յորմէհետէ ելի երկիրպագանել
12 յԵ̃մ. *Եւ ոչ 'ի տաճարի անդ գտին զիս ընդ ումեք խօսեցեալ, եւ կամ ժողով արար-
13 եալ բազմաց, ոչ 'ի ժողովուրդս՝ *եւ ոչ 'ի քաղաքի. եւ ոչ յանդիման առնել կարեն քեզ՝
14 վասն որոյ այժմդ չարախօսեն զինէն. *Բայց զայս խոստովանիմ քեզ, եթէ ըստ ճանապարհին՝ զոր ասեն հերձուած, այնպէս պաշտեմ զՀայրենի ա̃ծն. հաւատացեալ ա̃մի՝ որ ինչ
15 յօրէնս եւ 'ի մարգարէս գրեալ է. *Ունիմ յոյս առ ա̃ծ. որում եւ դոքա իսկ ակն ունին՝ թէ յարութիւն լինելոց է արդարոց եւ մեղա-
16 ւորաց. *Յորում եւ ես իսկ ճգնիմ, անխիղճ միտս ունել առ ա̃ծ եւ առ մարդիկ յա̃մ ժամ.
17 *Ի բազում ամաց ողորմութիւնս եկի առնել
18 յազգդ իմ. եւ եւս պատարագս. *որովք գտին զիս սրբեալ 'ի տաճարին՝ ոչ բազմօք եւ
19 ոչ ամբոխիւ. *Ոմանք յասիացւոց անտի հրէայք որոց պարտ էր գալ առաջի քո՝ եւ ամ-
20 բաստան լինել, եթէ ունիցին ինչ զինէն. *Եւ կամ ինքեանք սոքա ասասցեն, զի՞նչ գտին յիս անիրաւութիւն՝ մինչդեռ կայի յատենին.
21 *Բայց միայն վ̃ միոյ բարբառոյս այսորիկ՝ զոր աղաղակեցի մինչ կայի 'ի մէջ նց̃. եթէ վ̃ յարութե̃ն մեռելոց դատիմ ես այսօր 'ի ձէնջ.*

* Եւ յապաղեաց զն՟ս փելիքս, զի ստուգագոյնս գիտէր վ՟ս ճանապարհին, ասէ. յորժամ լիւսիաս հազարապետ իջցէ այսր՝ տեղեկացայց վ՟ս ձեր. * Հրամայեաց հարիւրապետին պահել զնա. և ունել յընդարձակի, և մի՛ զոք յիւրոց անտի արգելուլ 'ի պաշտելոյ զնա. 22 23

ԻԲ * Եւ յետ աւուրց ինչ եկն փելիքս հանդերձ դրուսեղաւ կնաւ իւրով, որ էր հրէայ. կոչեաց զպօղոս՝ և լուաւ 'ի նմանէ վ՟ս որ 'ի յ՟ս ք՟ս հաւատոյն. * Եւ 'ի խօսելն ն՟ր վ՟ս արդարութեն և ժուժկալութեն և հանդերձելոյ դատաստանին, զահի հարեալ փելիքս, ետ պատասխանի. դու առ այժմ երթ՝ և յորժամ ժամ լինիցի, կոչեցից զքեզ. * Միանգամայն և ակն ունէր՝ թէ տացի ինչ նմա 'ի պօղոսէ. վ՟ս որոյ և աճէպ կոչեցեալ զնա՝ խօսէր ընդ նմա. * Եւ 'ի կատարել երկուց ամաց՝ եկն փոխանակ փելիքսի՝ փեստոս պորկիոս. իբրև կամեցաւ շնորհս առնել հրէիցն փելիքս, եթող զպօղոս կապեալ. 24 25 26 27

ԳԼ. ԻԵ.

Փեստոս իբրև եհաս յիշխանութիւնն, 1
յետ երից աւուրց ել յէմ՟ 'ի կեսարիայ. * Եւ 2
զգացուցին նմա քահանայապետքն և գլխաւորք հրէիցն զպօղոսէ, * և աղաչէին խնդրել 3
շնորհս 'ի նմանէ. զի կոչեսցէ զնա յէմ՟. դա-

րան գործեալ սպանանել զնա 'ի ճանապարհի.
4 *Իսկ փեստոս արար պատասխանի՝ պահել
զնա 'ի կեսարիա. թէ ինքն իսկ ընդ հուպ
5 անդր երթալոց է. *Եւ որ 'ի ձէնջ կարողք
իցեն՝ ասէ, ընդ իս իջցեն, և եթէ իցէ ինչ
6 յառնն վնաս՝ ամբաստան լիցին զնմանէ. *Եւ
լեալ անդ աւուրս՝ ոչ աւելի քան զութ կամ
զտասն, եկն էջ 'ի կեսարիա. և 'ի վաղիւ անդր
նստեալ յատենի, հրամայեաց ածել զպօղոս.
7 *Եւ իբրև եկն՝ կացին շուրջ զնովաւ՝ որ
յեէմէ իջեալ էին հրէայք. բազում և ծանր
վնասս դնէին՝ զոր ոչ կարէին ցուցանել.
8 *Քանզի ասէր պատասխանի պօղոս, եթէ
ոչ յօրէնս հրէից՝ և ոչ 'ի տաճարն՝ և ոչ 'ի
9 կայսր ինչ վնասակար եմ. *Բայց փեստոս
կամեցեալ հրէիցն շնորհս առնել՝ պատասխանի
ետ պօղոսի՝ և ասէ. կամիս յեէմ ելանել՝
10 և անդ վ՟ դոցին իրաց դատել առաջի իմ. *Եւ
ասէ պօղոս. յատենի կայսեր հաստեալ կամ,
ուր պարտ է ինձ դատել. հրէից ինչ չեմ վնասակար,
11 ոպ՟ և դու իսկ քաջ գիտես. *Ապա
թէ վնասակար իցեմ՝ և արժանի մահու ինչ
գործեցի, ոչ զանգիտեմ 'ի մեռանելոյ. իսկ
եթէ ոչինչ իցէ՝ զորոց սոքա ամբաստան լինին
զինէն, ոչ ոք կարէ զիս դոցա շնորհել. 'ի
12 կայսր բողոքեմ. *Յայնժամ փեստոս խօսեցեալ
ընդ խորհրդակցին՝ արար պատասխանի,
'ի կայսր բողոքեցեր՝ առ կայսր երթիջիր.

ԻԵ

*Իբրեւ անցին աւուրք ինչ՝ ագրիպպաս 13
արքայ և բերինիկէ եկին 'ի կեսարիա՝ յողջոյն
փեստոսի ։ *Եւ իբրեւ աւուրս բազումս հա- 14
նէին անդր , փեստոս զեկոյց արքային զպօղոսէ՝
և ասէ ․ այր մի է աստ մնացեալ կապեալ 'ի
փելիքսէ ։ *Վս̃ որոյ իբրեւ չոքայ յէ̆մ, զգա- 15
ցուցին ինձ քահանայապետքն և գլխաւորք
հրէից ․ խնդրէին յինէն առնել նմա պատու-
հաս ։ *Որոց ետու պատասխանի ․ եթէ չէ 16
օրէն հռովմայեցւոց շնորհել ումեք զոք , մինչ-
չեւ ամբաստանեալն յանդիման ունիցի զդա-
տախազսն՝ և տեղի պատասխանւոյ առնուցու
վս̃ ամբաստանութե̃ն ։ *Եւ իբրեւ եկին այսր՝ 17
ոչ ինչ յապաղեցի , այլ 'ի վաղիւն նստեալ յա-
տենի՝ հրամայեցի ածել զայրն ։ *Վասն որոյ 18
մատուցեալ ամբաստանքն և ոչ մի ինչ մեղս
չարութեան 'ի մէջ բերէին՝ զորոց ես կար-
ծէի ․ *բայց խնդիրս ինչ՝ որ վասն իւրեանց 19
պաշտաման ունէին ընդ նմա ․ և վս̃ յ̃ի ու-
րումն մեռելոյ , զորմէ ասէր պօղոս թէ կեն-
դանի է ։ *Իբրեւ յանհնարս մտի վս̃ այնպիսի 20
իրաց քննութ̃ե , ասեմ․ եթէ կամիցի՞ երթալ
յէ̆մ, և անդ դատել վս̃ նոցին իրաց ։ *Բայց 21
'ի պօղոսի բողոքելն՝ զի պահիցի 'ի քաջի ա-
րանցն յանդիմանութիւն , հրամայեցի պահել
զնա՝ մինչեւ տաց տանել առ կայսր ․ *Ագ- 22
րիպպաս ցփեստոս ասէ ․ կամէի և ես լսել
առնն ․ և նա ասէ՝ 'ի վաղիւ լուիցես ։

23 *Եւ 'ի վաղիւ անդր իբրև եկն ագրիպ- ԷԻ
պաս և բերինիկէ՝ բազում և երևելի պա-
տուք, և մտին յատեանն հանդերձ հազարա-
պետօքն և արամբք պատուականօք քաղա-
քին. և հրամայեալ փեստոսի՝ ածին զպօղոս.
24 *Եւ ասէ փեստոս, արքայ ագրիպպա՝ և ա̃մ
արք՝ որք ընդ մեզ էք. տեսանէ՞ք զսա, վ̃
որ̃ ա̃մ ժողովք հրէից ամբաստան եղեն ինձ
յեէ̆մ, և աստ աղաղակէին՝ թէ չէ պարտ դմա
25 կեալ. *Բայց ես 'ի վր̃ հասի թէ ոչինչ է դր̃
արժանի մահու գործեալ. և դր̃ ինքնին բո-
ղոք կալեալ առ քաջ արանցն, խորհեցայ յղել.
26 *Վ̃ որոյ ստուգութ̃ ինչ գրել տ̃ն խնամ
ոչ ունիմ. վ̃ այնորիկ ածի զդա առաջի ձեր՝
և մանաւանդ առաջի քո արքայ ագրիպպա.
ոպ̃ վերստին քննեալ՝ մարթացից ինչ գրել.
27 *Քանզի անպատեհ իմն թուի ինձ՝ տալ տանել
կապեալ մի, և ոչինչ վնաս զնմանէ նշանակել.

ԳԼ. ԻԶ.

1 Եւ ագրիպպաս ասէ ցպօղոս. հրամայ-
եալ է քեզ՝ վասն քո խօսել. յայնժամ պօղոս
2 ձգեալ զձեռն՝ առնէր պատասխանի. *Վան
ամենայն ամբաստանութեան հրէից զինէն՝
արքայ ագրիպպա՝ համարիմ զանձն երանելի.
զի քո առաջի այսօր տալոց եմ պատասխանի.
3 *Մանաւանդ զի գիտակ ես իսկ ամենայն

կրօնից և խնդրոց հրէից . վասն որոյ աղաչեմ
երկայնմտութեամբ լսել ինձ . * Քանզի զկենաց 4
իմոց՝ որ 'ի մանկութէ̆ , 'ի սկզբանէ լեալ
յազգի իմում յեէ̆մ , տեղեակ են ա̃մ հրէայք .
* Յառաջագոյն գիտեն 'ի վաղուց հետէ , եթէ 5
կամիցին վկայել , զի ըստ ճշմարտագոյն կրօնից
օրինացն մերոց կեցեալ եմ փարիսեցի .
* Եւ արդ վասն յուսոյն՝ առ հարսն եղելոյ 6
աւետեացն յա̃յ՝ դատեալ կամ յատեանի . * յոր 7
երկոտասան ազգատոհմս մերոյ անպակաս
զցայգ և զցերեկ պաշտեալ ակն ունին հասանել
. վ̃ որոյ յուսոյ ամբաստանիմ արքա՛յ 'ի
հրէից . * Զի՞նչ անհաւատ թուի ձեզ՝ եթէ 8
ա̃ծ զմեռեալս յարուցանէ . * Ես իսկ ինքնին 9
պատշաճ համարէի՝ զբազում ինչ հակառակ
անուանն յ̃սի նազովրեցւոյ գործել . * Զոր և 10
արարի իսկ յեէ̆մ . և զբազումս 'ի սրբոցն ես
բանտարգել առնէի , 'ի քահանայապետից
առեալ իշխանութիւն . և զսպանելոյն նոցա
բերէի համար . * Եւ ըստ ա̃մ ժողովրդոցն՝ 11
բազում անգամ պատժեալ զնոսա բռնադատէի
հայհոյել . առաւել ես մոլեալ 'ի վերայ
նոցա՝ հալածէի մինչև յարտաքին քաղաքսն .
* Որովք գնացեալ 'ի դամասկոս՝ իշխանութեամբ 12
և հրամանօք քահանայապետիցն ,
* զմիջաւուրբքն 'ի ճանապարհի տեսի՝ արքայ 13
, յերկնից առաւել քան զլուսաւորութիւն
արեգական ծագեալ զինև լոյս , և զնովք՝

14 որ ընդ իս երթային ։ *Եւ ամենեցուն մեր
անկանել յերկիր , լուայ ձայն որ ասէր ցիս՝
հեբրայեցւոց բարբառովն · սաւուղ սաւուղ՝
զի՞ հալածես զիս · խիստ է քեզ ընդ դէմ խթանի
15 աքացել ։ *Եւ ես ասեմ, ո՞ ես տէր ·
և տէր ասէ , ես եմ յս̃ զոր դու հալածես ։
16 *Այլ արի և կաց 'ի վերայ ոտից քոց · զի վս̃
այսորիկ երևեցայ քեզ՝ առնուլ զքեզ 'ի
ձեռն պաշտօնեայ և վկայ՝ որոց տեսերդ զիս ,
17 և որոց երևեցայց քեզ · *փրկել զքեզ 'ի
ժողովրդենէդ՝ և 'ի հեթանոսաց , յորս ես
18 առաքեցից զքեզ · *բանալ զաչս նոցա , դարձուցանել
'ի խաւարէ 'ի լոյս , և յիշխանութէ̃
սատանայի՝ յա̃ծ · առնուլ նոցա զթողութիւն
մեղաց , և վիճակ ընդ սուրբս՝ հաւատովքն
19 որ յիս ։ *Ուստի արքայ ագրիպպա՝ ոչ եղէ
20 անհաւան երկնաւոր տեսլեանն · *այլ նախ
որոց 'ի դամասկոս և յերուսաղէմ էին , և ընդ
ամենայն գաւառս հրէաստանի և 'ի հեթանոսս
, պատմեցի զղջանալ՝ և դառնալ յաստուած
կենդանի · արժանի ապաշխարութեան
21 գործս գործել ։ *Վասն այսորիկ հրէից կալեալ
զիս 'ի տաճարին , կամէին սպանանել ։
22 *Օգնութիւն հասեալ առ յաստուծոյ՝ մինչև
ցայսօր կացի վկայեալ փոքու և մեծի · ոչինչ
արտաքոյ ասել՝ քան զոր մարգարէքն և մովսէս
23 խօսեցան զհանդերձեալսն լինելոյ · *եթէ
չարչարելոց է քրիստոսն , եթէ առաջին 'ի

յարութենէ մեռելոց՝ լոյս պատմելոց է ժողովրդեանն՝
և հեթանոսաց։ *Եւ նորա զայս 24
պատասխանի տուեալ, փեստոս 'ի ձայն մեծ
ասէ. մոլիս պօ՛ղէ, բազում դպրութիւնքդ
զքեզ 'ի մոլութիւն դարձուցանեն։ *Իսկ պօղոս 25
ասէ, ոչ մոլիմ՝ քաջդ փեստոս, այլ ըղ
ցածութեան և ճշմարտութեան բանս բարբառիմ։
*Գիտակ իսկ է այսոցիկ արքայ, 26
ընդ որում և համարձակեալդ խօսիմ. քանզի
ծածկել 'ի քէն իմիք 'ի սոցանէ՝ չառնում
յանձն. զի ոչ եթէ յանկեան ուրեք գործեալ
իցէ այս։ *Հաւատաս արքայ աղրիպպա 27
մարգարէից. գիտեմ զի հաւատաս։ *Եւ ասէ 28
աղրիպպաս ցպօղոս, փոքու իմն հաւանեցուցանես
զիս լինել քրիստոնեայ։ *Եւ պօղոս 29
ասէ. խնդրէի յաստուծոյ՝ և փոքու և
մեծաւ՝ ոչ միայն զքեզ՝ այլ զամենեսեան որ
լսեն ինձ այսօր՝ լինել այսպիսի որպէս և ես
եմ, բաց 'ի կապանաց աստի։ *Յոտն եկաց 30
արքայն և դատաւորն և բերենիկէ, և որ
ընդ նոսայն նստէին։ *Եւ իբրև գնացին, 31
խօսէին ընդ միմեանս և ասէին. թէ ոչինչ
արժանի մահու կամ կապանաց գործէ այր
այս։ *Իսկ աղրիպպաս ցփեստոս ասէ. արձակել 32
մարթ էր զայր զայս՝ եթէ ոչ էր բողոքեալ
'ի կայսր։

ԳԼ. ԻԷ.

1 Իբրև հրամայեցաւ մեզ նաւել յիտալիա, ԷԵ
տային զպօղոս՝ և զայլս ոմանս կապեալս ցհա-
րիւրապետ մի, որում անուն էր յուլիոս սե-
2 բաստեան գնդէն. *Եւ ելեալ 'ի նաւ մի անդ-
րամիտացի, որ երթալոց էր 'ի կողմանս ա-
սիացւոց՝ գնացաք. էր ընդ մեզ և արիստար-
3 քոս՝ մակեդոն թեսաղոնիկեցի. *Եւ 'ի վա-
ղիւ անդր իջաք 'ի սիդոն. և մարդասիրու-
թեան ցուցեալ յուլիոս առ պօղոս, հրամայ-
եաց առ բարեկամսն երթալ՝ և դարման գը-
4 տանել. *Եւ անտի ելեալ խոնարհագոյն նա-
ւեցաք 'ի կիպրոս՝ վ՟ն հողմոյն ընդդէմ լինե-
5 լոյ. *Յայնժամ ընդ մէջ ծովուն կիլիկեայ և
պամփիլեայ նաւեալ՝ իջաք 'ի միւռայ լիկի-
6 ացւոց. *Եւ անդ գտեալ հարիւրապետին
զնաւ մի աղեքսանդրացի՝ որ երթայր յիտա-
7 լիա, եմոյծ զմեզ անդր. *Եւ 'ի բազում ա-
ւուրս ծանրանաւեալք հազիւ հասաք առ
կնիդաւ. և 'ի չթողացուցանել մեզ հողմոյն,
նաւեցաք խոնարհագոյն 'ի կրետէ առ սաղ-
8 մոնեաւ. *Հազիւ անցեալ առ նովաւ՝ եկաք
'ի տեղի ինչ՝ որ կոչէր գեղեցիկ նաւահան-
9 գիստ. յոր հուպ էր քաղաքն ղասեայ. *Եւ
իբրև բազում ժամանակք անցանէին, և ար-
խալ ևս լինէր նաւելոյն. և վ՟ն այն ինչ ևս պա-

հացն անցանելոյ, տայր խրատ պօղոս. *և ասէ 10
ցնս՟. արք՝ տեսանեմ զի թշնամանօք և
բազում վնասու՝ ոչ միայն բեռինդ և նաւիդ,
այլ և անձանց մերոց լինելոց է նաւարկութիւնս.
*Իսկ հարիւրապետն նաւապետին և 11
նաւավարին առաւել անսայր՝ քան բանից
պօղոսի. *Իբրև դժպատեհ իմն թուէր նաւահանգիստն 12
առ 'ի ձմերել, բազումք խորհեցան
գնալ անտի, թերևս կարասցեն հասանել
'ի փիւնիկէ՝ ձմերել 'ի նաւահանգստին
կրետացւոց, որ հայէր ընդ հարաւակողմն և
ընդ աշխարհն. *Եւ 'ի շնչել հարաւոյն, համարեցան 13
ուր դիմեալն էին հասանել. և արկեալ՝
մօտ անցանէին զկրետեաւ. *Եւ ոչ 14
յետ բազում ժամուց՝ անկաւ զնովաւ հողմ
ուռուցիկ, որ կոչի եւրակիկլոն. *Ընդ յափշտակել 15
նաւին՝ և 'ի չհանդուրժել ընդդէմ
հողմոյն, թոյլ տուեալ երթայաք և գայաք.
*Ի կղզի ինչ դիմեալ՝ որ կոչէր կղօդիա, հազիւ 16
կարացաք ըմբռնել զմակոյկն. *Զոր առեալ՝ 17
յօգնականութիւն կապէին ընդ նաւն, երկուցեալ
թէ գուցէ 'ի յորձանուտն անկանիցին,
իջուցեալ զառագաստն՝ այնպէս երթային և
գային. *Եւ 'ի սաստկագոյն վշտանալոյն մերոյ՝ 18
'ի վաղիւ անդր զկարասին ընկեցիկ առնէին.
*Եւ յերիր աւուր ընդ իւրեանց ձեռն՝ 19
զգործին նաւին ընկեցին. *Իբրև ոչ արև՝ և 20
ոչ աստեղք երևէին 'ի բազում աւուրս, և

ձմեռն ոչ սակաւ կայր 'ի վերայ, ապա բառնայր
21 ա̃մ յոյս փրկութեան մերոյ ։ *Եւ զի
բազում աւուրս նօթի էին, յայնժամ պօղոս
կացեալ 'ի մէջ նոցա՝ ասէ, պարտ էր ձեզ ո՜վ
արք՝ անսալ ինձ, և ոչ ելանել 'ի կրետեայ՝
22 և շահել զվիշտս զայս՝ և զվնաս ։ *Եւ արդ՝
խրատեմ զձեզ քաջալերել ․ զի վնաս անձին՝
և ոչ միում 'ի ձէնջ լինիցի, բայց 'ի նաւէդ ։
23 *Քանզի երևեցաւ ինձ յայսմ գիշերի հրեշտակ
24 ա̃յ՝ որոյ եմն եմ, և պաշտեմ զնա, *և
ասէ ․ մի՛ երկնչիր պօղէ, կայսեր ես պարտ
է քեզ յանդիման լինել ․ և ահա շնորհեալ
է քեզ ա̃յ՝ զամենեսեան ․ որ են ընդ քեզ 'ի
25 նաւիդ ։ *Վասն այսորիկ քաջալերացարուք
արք, զի հաւատամ յաստուած՝ թէ այսպէս
26 լինի՝ զոր օրինակ խօսեցաւ ընդ իս ։ *Բայց
'ի կղզի ինչ հասանէ մեզ անկանել ։
27 *Իբրև չորեքտասաներորդ գիշեր լինէր՝ ԷԶ
մինչդեռ ծփէաք 'ի հանդրին անդունդս, 'ի
մէջ գիշերին կարծէին նաւավարքն եթէ հասեալ
28 իցեն յաշխարհ ուրեք ։ *Եւ ընկեցեալ
զգունդն՝ գտին գիրկս քսան ․ և սակաւ
ինչ դադարեալ՝ դարձեալ ընկեցին՝ և գտին
29 գիրկս հնգետասան ։ *Զահի հարեալ թէ
գուցէ 'ի խիստ ինչ տեղիս անկանիցին, յետուստ
կողմանէ ընկեցին խարիսխս չորս ․ ըղձային
30 այգուն լինելոյ ։ *Բայց նաւավարքն
խնդրէին փախչել 'ի նաւէ անտի ․ և իջուցեալ

զկուրն 'ի ծով անդր՝ պատճառանօք՝ որպէս
թէ առաջոյ կողմանէ խարիսխս ձգելոց իցեն.
*Ասէ պօղոս ցհարիւրապետն և ցզօրականսն. 31
եթէ ոչ դոքա մնան 'ի նաւին՝ դուք ապրել
ոչ կարէք. *Յայնժամ զօրականքն հատին 32
զլարս կրին՝ և 'ի բաց ընկեցին. *Եւ մինչդեռ 33
այգն կամէր լինել, աղաչէր պօղոս զամենեսեան
առնուլ կերակուր, ասէ. այս չորեքտասաներորդ
օր է՝ որում ակն ունիք նօթիս
կատարել, և չէ ինչ ճաշակեալ. *Վասն 34
որոյ աղաչեմ զձեզ՝ ճաշակել կերակուր, զի
այն իսկ վասն ձերոյ փրկութեան է. զի ոչ ուրուք
'ի ձէնջ մազ մի 'ի գլխոյ կորիցէ. *Եւ 35
իբրև ասաց զայս, առեալ հաց՝ գոհացաւ
զաստուծոյ առաջի ամենեցուն. եբեկ՝ և
սկսաւ ուտել. *Եւ քաջալերեցան ամենեքին, 36
և նոքա առին կերակուր. *Եւ էաք 37
ամենայն հոգիք 'ի նաւին՝ երկերիւր եօթանասուն
և վեց. *Իբրև յագեցան կերակրովն, 38
թեթևացուցին զնաւն՝ թափեալ զցորեանն
'ի ծովն. *Եւ իբրև այգ եղև՝ զերկիրն ոչ 39
ճանաչէին, բայց զգոգ մի նշմարէին՝ թէ ափն
ծովուն իցէ. յոր խորհէին թէ հնար ինչ իցէ
զերծուցանել զնաւն. *Եւ զխարիսխսն հատեալ՝ 40
ընկեցին 'ի ծովն, թողացուցին զխառնելիս
թեւոցն, և 'ի բաց առին զառագաստն,
և ետուն հողմոյն յափն կոյս ծովուն. *Անկեալ 41
'ի տեղի մի երկծով, թիւրեցին զնաւն.

և առաջին կողմն նաւին խրեալ՝ անշարժ մնայր,
և յետին կողմն քակէր ՚ի բռնութենէն,
42 *Եւ զօրականացն խորհուրդ արարեալ՝ զի
զկապեալսն սպանցեն, և մի՛ ոք լուղիցէ և
43 փախիցէ. *Եւ հարիւրապետն քանզի կամեցաւ
ապրեցուցանել զպօղոս՝ արգել զնոսա
՚ի խորհրդոյն. հրամայեաց զի որ կարողն իցեն
լուղել՝ անկանիցին նախ, և ՚ի ցամաք
44 ելանիցեն. *և զայլսն՝ զոմս ՚ի տախտակս, և
զոմս յայլ ինչ կահ ՚ի նաւէ անտի. և այսպէս
եղեւ ամենեցուն փրծանել յերկիր.

ԳԼ· ԻԸ·

1 Եւ ապրեալք՝ յայնժամ գիտացաք թէ
մելիտինէ էր անուն կղզւոյն. բայց բարբարոսքն
չնորհեցին ոչ սակաւ մարդասիրութիւն
2 մեզ. *Քանզի լուցին խարոյկ և ընկալան
զամենեսին զմեզ վասն անձրեւին որ տեղայր՝
3 և վասն ցրտոյն. *Եւ ՚ի ժողովել պօղոսի
խռիւ ինչ բազում՝ և դնել ՚ի վերայ խարուկին,
իժ մի ՚ի ջերմութենէն ելեալ՝ կալաւ
4 զձեռանէ նորա. *Եւ իբրեւ տեսին բարբարոսքն
կախեալ զգազանն զձեռանէ նորա,
ասէին ցմիմեանս. ուրեմն սպանող է այրս
այս՝ որ թէպէտ և ապրեցաւ ՚ի ծովէն, իրաւունքն
5 չետուն կեալ. *Եւ նորա թօթափեալ
զգազանն ՚ի հուրն, եղեւ նմա չար և

ոչինչ. *Եւ նոքա ակն ունէին նմա այտնլոյ 6
կամ անկանելոյ՝ և յանկարծակի մեռանելոյ.
իբրև շատ ակն կալեալ՝ և տեսանէին թէ ոչինչ վնաս եղև նմա՝ դարձեալ դարձուցեալ
զմտածս՝ ասէին թէ ա͞ծ ո͞մն է. *Եւ շուրջ 7
զտեղեաւն գայնուիկ էին գիւղք գլխաւորի
կղզւոյն՝ որում անուն էր պոպղիոս. որ առ
զմեզ յերաշխի զերիս աւուրս՝ և սիրով ընկալաւ. *Եւ եղեւ հօրն պոպղեայ 'ի ջերմն և 8
յախտ թանչից հիւանդանալ դնել. առ որ
մտեալ պօղոս՝ և կացեալ յաղօթս՝ եդ զձեռն
և բժշկեաց զնա. *Եւ իբրև այս եղև, այլ 9
հիւանդք՝ որ էին 'ի կղզւոջն գային և բժըշկէին. *որք և բազում պատուովք պատուեցին զմեզ. և իբրև գնացաք, ետուն՝ որ ինչ 10
պէտք էին.

ԻԷ *Եւ յետ երից ամսոց ելաք 'ի նաւ մի ա- 11
ղէքսանդրացի՝ որ ձմերեալ էր 'ի կղզւոջն նըշանաւորաւ դիոսկուրացւոց. *Եւ իջեալ 'ի 12
սիրակուսա՝ եղաք աւուրս երիս. *Ուստի 13
գնացեալ հասաք 'ի հռեգիոն. և յետ աւուր միոյ 'ի շնչել հարաւոյն, երկօրեայք եկաք 'ի պատիողոս. *Ուր և գտաք եղբարս՝ 14
աղաչեցեալք 'ի նոցանէ լինել աւուրս եօթն.
և ապա ելաք 'ի հռոմ. *Եւ անտի լուեալ 15
եղբարց զմէնջ՝ ելին ընդ առաջ մեր մինչև
յորդաստայն ապփեայ՝ և երիցն կրպակաց.
զորս տեսեալ պօղոսի՝ գոհացաւ զաստուծոյ՝

16 և քաջալերեցաւ։ *Եւ իբրեւ մտաք 'ի Հռովմ,
հրամայեցաւ պօղոսի լինել առանձին հանդերձ
17 զինուորաւն՝ պահապանաւ իւրով։ *Եւ
եղեւ յետ երից աւուրց՝ կոչել նմա զհրէից
գլխաւորս։ և իբրեւ եկին, ասէ ցնոսա։ ես՝
արք եղբարք՝ ոչ ինչ հակառակ գործեալ ժողովրդեանն՝
կամ կրօնից հայրենեաց, կապեալ
յերուսաղեմէ՝ մատնեցայ 'ի ձեռն հռովմայեցւոց։
18 *Որք իբրեւ դատեցան զիս՝ կամեցան
արձակել, վասն և ոչ մի ինչ վնաս մահու
19 գտանելոյ յիս։ *Ի հակառակել հրէից,
հարկ եղեւ բողոքել 'ի կայսր։ իբր ոչ եթէ
20 զազգէն իմմէ ունէի ինչ չարախօսել։ *Վասն
այսր պատճառանաց աղաչեցի զձեզ՝ տեսանել
և խօսել։ քանզի վասն յուսոյն իսրայէլի
21 կամ 'ի շղթայս յայսոսիկ։ *Եւ նոքա ասեն
ցնա։ մեք ոչ թուղթս ինչ վասն քո ընկալաք
'ի հրէաստանէ, և ոչ եկեալ ոք յեղբարց
պատմեաց՝ կամ խօսեցաւ ինչ վասն քո
22 չարութիւն։ *Բայց աղաչեմք 'ի քէն լսել՝
թէ զինչ խորհիցիս։ զի վասն հերձուածոյդ
այդորիկ յայտ իսկ է մեզ, զի ամենայն ուրեք
23 հակառակութիւն կրէ։ *Ժամ եդեալ
նմա օր մի, եկին 'ի վանսն առ նա բազումք։
որոց պատմէր վկայութեամբ զարքայութիւն
աստուծոյ։ և հաւանեցուցանէր զնոսա վասն
յիսուսի, յօրինացն մովսէսի և 'ի մարգարէից՝
24 յայգուէ մինչև ցերեկոյ։ *Եւ ոմանք հաւա-

նէին բանիցն, և կէսքն չհաւատային։ *Եւ անմիաբանք 25
լեալ միմեանց՝ արձակէին․ յասելն
պօղոսի բան մի, թէ բարւոք խօսեցաւ Հոգին
ս̃բ ՚ի ձեռն եսայեայ մարգարէի առ հարսն
մեր․ *և ասէ․ երթ առ ժողովուրդն, և ասասցես․ 26
լսելով լուիջիք՝ և մի՛ իմասջիք, և
տեսանելով տեսջիք՝ և մի՛ տեսջիք։ *Զի 27
թանձրացաւ սիրտ ժողովրդեանն այնորիկ,
և ականջօք իւրեանց ծանր լուան․ և զաչս իւրեանց
կափուցին, զի մի՛ երբէք տեսցեն աչօք
և ականջօքն լուիցեն և սրտիւք իմասցին՝
և դարձցին, և բժշկեցից զնոսա։ *Եւ արդ՝ 28
յայտնի լիցի ձեզ, զի հեթանոսաց առաքեցաւ
փրկութիւն աստուծոյ՝ նոքին և լուիցեն։ (*Եւ իբրև զայս ասաց՝ արտաքս գնացին 29
՚ի նմանէ հրէայքն․ որք ունէին ՚ի մէջ
ինքեանց զբազում խնդիրս)։ *Եւ եղև զերկեամ 30
մի՝ բովանդակ իւրով վարձու․ *և ընդունէր 31
զամենեսեան որ մտանէին առ նա։
*Քարոզէր զարքայութիւնն աստուծոյ, և 32
ուսուցանէր վասն տեառն յիսուսի քրիստոսի,
անխափան՝ ա̃մ համարձակութեամբ։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՑ
ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍՆ

ԳԼ. Ա.

1 ՊՕՂՈՍ *ծառայ յ՟ի ք՟ի, կոչեցեալ* ԱՌ
առաքեալ, որոշեալ յաւետարանն
2 *ա՟յ. * որ յառաջ խոստացաւ 'ի ձեռն մարգա-*
3 *րէից իւրոց գրովք սրբովք, * վ՟ն որդւոյ իւրոյ*
4 *եղելոյ 'ի զաւակէ դաւթի ըստ մարմնոյ. * սահ-*
մանելոյ որդւոյն ա՟յ զօրութ՟բ ըստ հոգւոյն
սրբութեան. 'ի յարութենէ մեռելոց յ՟ի ք՟ի տ՟ն
5 *մերոյ. * որով ընկալաք շնորհս և առաքելու-*
թիւն՝ 'ի հնազանդութիւն հաւատոց յա՟մ հե-
6 *թանոսս վ՟ն անուան ն՟ր. * յորս և դուք էք*
7 *կոչեցեալ յ՟ի ք՟ի. * Ամենեցուն որոց էք 'ի*
հռոմ, սիրելեաց ա՟յ՝ կոչեցելոց ս՟ց, շնորհք
ընդ ձեզ և խաղաղութիւն յա՟յ հօրէ մերմէ՝ և

՚ի տ̃նէ յ̃սէ ք̃սէ. * Նախ գոհանամ զա̃յ իմոյ 8
՚ի ձեռն յ̃սի ք̃սի վ̃ս ձեր ամենեցուն. զի հաւատք ձեր պատմեալ են ընդ ա̃մ աշխարհ.
* Վկայ է ինձ ա̃ծ, զոր պաշտեմն հոգւով իմով՝ յաւետարանի որդւոյ ն̃ր, * թէ ո̃պ զյիշատակս ձեր առնեմ յա̃մ ժամ յաղօթս իմ, 9 10
աղաչելով՝ զի թերևս երբէք յաջողեսցի ինձ կամօքն ա̃յ գալ առ ձեզ. * Քանզի անձկացեալ եմ տեսանել զձեզ, զի փոխեցից ՚ի ձեզ 11
շնորհս ինչ հոգևորս՝ առ ՚ի հաստատել զձեզ.
* այսինքն է, մխիթարակից լինել ձեզ վ̃ս ընդմիմեանց իմոյ և ձերոյ հաւատոյ. * Ոչ կամիմ եթէ ագէտք իցէք եղբարք. զի բազում 12 13
անգամ յօժարեցի գալ առ ձեզ, և արգելայ մինչև ցայժմ. զի և ՚ի ձեզ գտից պտուղ ինչ ո̃պ և յայլ հեթանոսս. * Քանզի յունաց և բարբարոսաց՝ իմաստնոց և անմտից պարտապան 14
եմ, * այնպէս՝ որչափ իմովսանն յօժարութ̃ի՝ և ձեզ որ ՚ի հռոմն էք՝ աւետարանել. * Զի 15 16
ոչ եթէ ամօթ ինչ համարիմ զաւետարանն. քանզի զօրութիւն ա̃յ է ՚ի փրկութիւն ա̃մ հաւատացելոց. նախ հրէի՝ և ապա հեթանոսի. * Զի արդարութիւնն ա̃յ նովաւ յայտնի 17
՚ի հաւատոց ՚ի հաւատս. որպէս և գրեալ է, թէ արդարն ՚ի հաւատոց կեցցէ.

ԱԳ * Քանզի յայտնեալ է բարկութիւնն ա̃յ 18
յերկնից ՚ի վ̃ր ա̃մ ամբարշտուե̃ և անիրաւուե̃ մարդկան. որք զճշմարտութիւնն անի-

19 բռնութե՟ ունին. * Վասն զի գիտութիւնն այ՟
յայտնի է 'ի նս՟. քանզի ած՟ իսկ յայտնեաց նց՟.
20 * Զի աներեւոյթք նր՟ 'ի սկզբանէ աշխարհի,
արարածովքս իմացեալ տեսանին. այսինքն է՝
մշտնջենաւորութիւն և զօրութիւն և ա՟ծութիւն
նր՟. զի ոչ գտանիցեն ամենեւին տալ
21 պատասխանի. * Զի ծանեան զա՟ծ, և ոչ իբրև
զա՟ծ փառաւորեցին՝ կամ գոհացան. այլ
նանրացան 'ի խորհուրդս իւրեանց, և խաւարեցան
22 անմտութե՟ սիրտք նց՟. * Զանձինս առ
23 իմաստունս ունէին՝ յիմարեցան. * Եւ փոխեցին
զփառս անեղծին այ՟ 'ի նմանութիւն պատկերի
եղծանելի մարդոյ և թռչնոց և չորքոտանեաց
24 և սողնոց. * Վ՟ որոյ մատնեաց զնս՟ ա՟ծ
'ի ցանկութիւն սրտից նց՟ 'ի պղծութիւն, անարգել
զմարմինս իւրեանց յանձինս իւրեանց.
25 * որք փոխանակեցին զճշմարտութիւնն այ՟ ընդ
ստութե՟. հնազանդեցան՝ և պաշտեցին զարարածս,
և ոչ զարարիչն. որ է օրհնեալ յաւիտեանս,
26 ամէն. * Վ՟ այնորիկ մատնեաց զնս՟ ա՟ծ
'ի կիրս անարգութե՟. զի էգք նց՟ փոխանակեցին
զպէտս բնականս 'ի պէտս անբնականս.
27 * Նոյնպէս և արուացն թողեալ զբնական պէտս
իգու՟ն, բորբոքեցան ցանկութե՟ք իւրեանց
'ի միմեանս. արուք ընդ արուս զխայտառակութիւն
գործէին, և զդարձ փոխարինին՝ որ
պարտ էր մոլորութե՟ նոցա՝ յանձինս իւրեանց
28 ընդունէին. * Եւ ոպ՟՝ զի ոչ ընտրեցին զա՟ծ

ունել 'ի գիտութեն, մատնեաց զնոսա ա̃ծ 'ի
միտս անարգութեան՝ գործել զանարժանս.
*լցեալսն ամ̃ անիրաւութբ̃, պոռնկութբ̃ 29
անզգամութբ̃ ագահութբ̃ չարութբ̃, լի նախանձու,
սպանութբ̃ հեռիւ՝ նենգութբ̃ չարաբարութբ̃,
շոգմոգք *չարախօսք ա̃ծատեացք 30
թշնամանողք ամբարտաւանք ամբարհաւաճք,
գտիչք չարեաց, զծնողս անարգուք.
*անմիտք ուխտադրուժք անագորոյնք աննուէրք 31
անողորմք. *Ոյք հաւանեալ էին յա̃յ իրաւանցն 32
վր̃, եթէ ոյք զայսպիսին գործեն՝
արժանի են մահու. և ոչ միայն որ զայն առնեն.
այլ և որ կամակիցն լինին գործելեացն.

Գլ. Բ.

Վա̃ որոյ առանց պատասխանի տալոյ ես 1
ո՛վ մարդ՝ որ դատիդ. զի որով դատիս զընկերն,
զանձն քո դատապարտես, զի դու
զնոյն գործես՝ որով դատիսն.
ԱԴ Քանզի գիտեմք, եթէ ա̃յ դատաստան 2
ճշմարտութբ̃ է 'ի վր̃ այնոցիկ՝ որ զայնպիսին
գործեն. *Իսկ արդ՝ խորհիցիս զայս ո՛վ մարդ, 3
որ դատիս զայնոսիկ՝ որ զայնպիսին գործեն՝
և դու զնոյն գործես. եթէ դու ապրելոց իցես
'ի դատաստանաց անտի ա̃յ. *Եթէ զմեծութբ̃ 4
քաղցրուեն̃, և զներելոյն և զերկայնմտութբ̃ն
արհամարհիցես. չգիտիցե՞ս՝ զի քաղցրութիւնն

5 ա՟յ զքեզ յապաշխարութիւն ածէ. * Այլ ըստ
խստու՟ն քում, և ըստ անզեղջ սրտի գանձես
անձին քում բարկութիւն՝ յաւուր բարկու՟ն և
6 յայտնու՟ն արդար դատաւորութե՟ն ա՟յ. * Որ
հատուսցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւր֊
7 եանց. * որ համբերութ՟ են 'ի գործս բարութ՟ն՝
զփառս և զպատիւ և զանեղծութիւն խնդրեն,
8 զկեանսն յաւիտենից. * Իսկ որ 'ի հակառակու՟է
անսաստեն՝ և ապստամբք 'ի ճշմարտու՟է՝ և զհետ
երթեալ զանիրաւու՟ն, բարկութիւն և սրտմ֊
9 տութիւն, * Նեղութիւն և անձկութիւն 'ի վ՟ր ա՟մ
մարդոյ՝ որ գործէ զչար. Նախ Հրէի՝ և ապա
10 Հեթանոսի. * Փառք պատիւ և խաղաղութիւն
ա՟մ՝ որ գործէ զբարի. Նախ Հրէի՝ և ապա հե֊
11 թանոսի. * Զի ոչ է ակնառութիւն առաջի ա՟յ.
12 Որք միանգամ արտաքոյ օրինացն մեղան, ԱԵ
արտաքոյ օրինացն և կորնչին. և որք ընդ օրի֊
13 նօքն մեղան, օրինօքն և դատեսցին. * Զի ոչ
եթէ որ լսելիք օրինացն են՝ արդարացեալ են
առաջի ա՟յ, այլ առնելիք օրինացն արդարա֊
14 սցին. * Այլ յորժամ հեթանոսք՝ որ զօրէնս ոչ
ունին, բնութ՟ զօրինացն գործիցեն, ն՟ք որ զօ֊
րէնս ոչ ունին՝ անձանց իւրեանց իսկ են օրէնք.
15 * որք ցուցանեն զգործս օրինացն գրեալ 'ի սիրտս
իւրեանց՝ վկայութ՟ միտաց իւրեանց, և յանդի֊
մանել զմիմեանս 'ի խորհրդոց իւրեանց, կամ
16 թէ պատասխանի իսկ տալ, * յաւուրն՝ յորում
դատիցի ա՟ծ զգաղտնիս մարդկան՝ ըստ աւե֊

տարանիս իմոյ, 'ի ձեռն յ͞սի ք͞սի. *Ապա եթէ 17
դու հրէայ անուանեալ ես, և յեցեալ ես յօրէնսն՝ և
պարծիս յա͞ծ, *և գիտես զկամս նր͞, և ընտրես 18
զլաւն, և խրատեալ ես յօրինացն. *վստահ ես 19
յանձն քո առաջնորդ լինել կուրաց՝ լոյս խաւարելոց՝
*խրատիչ անզգամաց՝ վարդապետ 20
տղայոց. ունել զկերպարանս գիտութեան և ճշմարտութեան
օրինացն. *Իսկ արդ՝ որ ուսուցանես զընկերն, 21
զանձն քո ոչ ուսուցանես. որ քարոզես
չգողանալ՝ գողանաս. *որ ասես չշնալ՝ շնաս. 22
որ գարշիս 'ի մեհենից՝ զսեղանս կողոպտես.
*որ օրինօքն պարծիս՝ յանցանել ըստ օրէնսն 23
զա͞ծ անարգես. *Զի անուն ա͞յ վ͞ս ձեր հայհոյի 24
'ի մէջ հեթանոսաց՝ ո͞պ և գրեալ է.

ԱԶ *Թլփատութիւն օգնէ՝ եթէ զօրէնսն պահիցես. 25
ապա եթէ յանցաւոր օրինացն իցես,
թլփատութիւն քո անթլփատութիւն եղեւ.
*Իսկ եթէ անթլփատութիւնն զիրաւունս 26
օրինացն պահիցէ. ո՞չ ապաքէն անթլփատութիւն
նր͞ 'ի թլփատութիւն համարեսցի. *և 27
դատիցի որ 'ի բնէ անթլփատութիւն է՝ զօրէնսն
կատարելով՝ զքեզ, որ գրովն և թլփատութ͞բն
յանցաւոր օրինացն իցես. *Զի ոչ 28
եթէ որ յայտնի հրէայն է, և ոչ որ յայտնի
մարմնով թլփատութիւն. *այլ որ 'ի ծածուկ 29
հրէայն է, և թլփատութիւն սրտի հոգւով
և ոչ գրով. որոյ գովութիւնն ոչ 'ի մարդկանէ
է, այլ յա͞յ.

ԳԼ. Գ.

1 Իսկ արդ՝ զի՞նչ աւելի է հրէին, կամ
2 զի՞նչ օգուտ 'ի թլփատութենէ անտի. *Բազում
ինչ՝ ա̃մ իրօք. նախ այն իսկ՝ զի հաւատարիմ
3 եղեն պատգամքն ա̃յ. *Իսկ արդ՝ եթէ չէր
հաւատացեալ ոմանց՝ միթէ անհաւատութիւն
նոցա զա̃յ հաւատոն խափանէ՞ր. քաւ լիցի.
4 *Արդ՝ եղիցի ա̃ծ ճշմարիտ՝ և ա̃մ մարդ սուտ.
ո̃պ և գրեալ է, ո̃պ արդար եղիցիս 'ի բանս
5 քո, և յաղթեսցես 'ի դատել քեզ. *Իսկ
արդ՝ եթէ անիրաւութիւնն մեր զա̃յ արդա-
րութիւնն յանդիմանն կացուցանէ՝ զի՞նչ ա-
սեմք. միթէ անիրաւ ի՞նչ է ա̃ծ՝ որ ածէ
6 զբարկութիւն, *ըստ մարդկան ասեմ. քաւ
լիցի. ապա թէ ոչ՝ զիա՞րդ դատի ա̃ծ զաշ-
7 խարհ. *Զի եթէ ճշմարտութիւնն ա̃յ յիմում
ստութեանն առաւելաւ 'ի փառս նորա, զի
8 ևս ես իբրև զմեղաւոր դատիմ. *Եւ կամ թէ՝
ո̃պ հայհոյիմքն, և ո̃պ ասեն զմէնջ ոմանք ա-
սել, թէ արասցուք զչար՝ զի եկեսցէ բարի.
9 որոց դատաստանքն յիրաւի են. *Եւ արդ՝
ի՞ւ իւիք առաւել իցեմք. ապաքէն և ոչ ի-
ւիք. քանզի յառաջագոյն իսկ մեղադիր եղ-
եաք հրէից և հեթանոսաց՝ ամենեցուն ընդ
10 մեղօք լինելոյ. *Ո̃պ և գրեալ է. թէ ոչ ո՛ք
11 է արդար՝ և ոչ մի. *Եւ ոչ գոյ՝ որ իմանայ,

և ոչ ո՛ք է՝ որ խնդրէ զա՟ծ . * Ամենեքեան 12
խոտորեցան , 'ի միասին անպիտանացան . ոչ
ոք է որ առնէ զքաղցրութիւն և ոչ ոք է մինչև
'ի մի . * Գերեզման բաց է կոկորդ նոցա , 13
լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն . թոյնք
իժից 'ի ներքոյ շրթանց ն՟ց . * Որոց բերանք 14
անիծիւք և դառնութ՟ք լի են . * Երագ են 15
ոտք ն՟ց հեղուլ զարիւն . * Բեկումն և թշուառութիւն 16
'ի ճանապարհս ն՟ց . * և զճանապարհն 17
խաղաղութ՟ե ոչ ծանեան . * Ոչ է 18
երկիւղ ա՟յ առաջի աչաց նոցա .

Բ·Է * Բայց գիտեմք՝ որ ինչ միանգամ օրէնքն 19
ասեն՝ այնոցիկ որ ընդ օրինօքն ասեն . զի ամենայն
բերան խցցի , և դատապարտ լիցի
ա՟մ աշխարհ ա՟յ . * Զի 'ի գործոց օրինաց ոչ 20
արդարասցի ա՟մ մարմին առաջի նորա . քանզի
օրինօքն է գիտութիւն մեղաց . * Բայց 21
արդ՝ առանց օրինացն իսկ արդարութիւնն ա՟յ
յայտնեալ է՝ վկայեալ յօրինաց անտի՝ և 'ի
մարգարէից . * Քանզի արդարութիւնն ա՟յ 'ի 22
հաւատոց անտի յի՟ի ք՟ի յա՟մ հաւատացեալս .
և ոչինչ է խտիր . * Քանզի ամենեքեան մեղան 23
. և նուազեալ են 'ի փառաց անտի ա՟յ .
* Եւ արդարանան ձրի նորին շնորհօք 'ի 24
ձեռն փրկութ՟ե որ 'ի ք՟ի յ՟ի . * զոր յառաջն եդ- 25
ա՟ծ 'ի քաւութիւն 'ի ձեռն հաւատոց արեանն
ն՟ր , 'ի հանդէս արդարութ՟ե ն՟ր վասն
թողութեան յառաջագոյն մեղացն գործելոց ,

26 *'ի ներելն ա՟յ՝ 'ի հանդէս արդարութե՟ն ն՟ր 'ի ժամանակի
յայսմիկ· զի եղիցի նա արդար, և արդարացուցէ
27 զայն՝ որ 'ի հաւատոյն յ՟ի։ *Իսկ
արդ՝ ո՞ւր են պարծանքն· արդ ելան·յորո՞ց օրինաց,
'ի գործոց անտի՞· ոչ, այլ 'ի հաւատոյն
28 օրինաց։ *Քանզի համարիմք հաւատովք արդարանալ
մարդոյ՝ առանց գործոց օրինաց։
29 *Եթէ հրէի՞ց միայն իցէ ա՟ծ՝ և հեթանոսաց
30 ոչ· այո՛՝ և հեթանոսաց։ *Զի եթէ մի է ա՟ծ՝ որ
արդարացուցանէ զթլփատութիւնն 'ի հաւատոյ,
ապա և զանթլփատութիւնն նովին հաւատովք։
31 *Արդ՝ զօրէնս ինչ խափանե՞մք հաւատովքս,
քաւ լիցի· այլ զօրէնս հաստատեմք։

ԳԼ. Դ.

1 Իսկ արդ՝ զի՞նչ ասիցեմք զգտանելն աբրահամու ԲՁ
նահապետին մերոյ ըստ մարմնոյ։
2 *Զի եթէ աբրահամու գործովք էր արդարացեալ՝ ունել ունէր պարծանս՝ այլ ոչ առ
3 ա՟ծ։ *Իսկ զի՞նչ ասիցէ գիր· հաւատաց աբրահամ յա՟ծ՝ և համարեցաւ նմա յարդարութիւն։
4 *Բայց այնմ որ գործիցէն, ոչ համարին
վարձքն ըստ շնորհաց՝ այլ ըստ պարտեաց։
5 *Իսկ այնմ որ ոչն գործիցէ՝ բայց հաւատայցէ յայն՝ որ արդարացուցանէ զամբարիշտն,
6 համարին հաւատք ն՟ր յարդարութիւն։ *Ո՟պ
և դաւիթ ասէ զերանութիւն մարդոյ՝ որում

ա̃ծ համարի արդարութիւն առանց գործոց.
*Երանի՜ որոց թողան անօրէնութիւնք, և որոց 7
ծածկեցան մեղք իւրեանց. *Երանեալ է այր՝ 8
որում ոչ համարեսցի տէր զմեղս նր̃. *Արդ՝ 9
երանութիւնս այս 'ի վր̃ թլփատութեա՞ն է,
եթէ 'ի վր̃ անթլփատուե̃ն. քանզի ասեմք՝ եթէ
համարեցաւ աբրահամու հաւատքն յարդարութիւն.
*Արդ զիա՞րդ համարեցաւ. մինչդեռ 10
'ի թլփատութեա՞ն էր եթէ յանթլփատուե̃ն. ոչ 'ի թլփատուե̃ն, այլ յանթլփատութեան.
*Եւ նշանակ առ զթլփատութիւնն, 11
կնիք արդարուե̃ն հաւատոյն՝ որ յանթլփատութենէ անտի.
*զի եղիցի նա հայր ամենայն հաւատացելոց, 12
որ յանթլփատուէ̃ անտի իցեն, առ 'ի համարելոյ և նց̃ արդարութիւն. և հայր թլփատուե̃ն՝ որոց ոչ 'ի թլփատուէ̃ անտի և եթ, այլ և որոց երթայցեն ընդ հետս անթլփատութեան հաւատոյ հօր մերոյ աբրահամու.

ԳԴ *Զի ոչ եթէ օրինօքն են աւետիքն աբրահամու՝ 13
և զաւակի նր̃ ժառանգ լինել աշխարհի, այլ 'ի հաւատոյն արդարուէ̃.
*Զի 14
եթէ որք յօրինացն են, ժառանգք իցեն, ապա ընդունայն են հաւատքն՝ և դատարկ աւետիքն.
*Քանզի օրէնքն զբարկութիւն գործեն. 15
բայց ուր ոչ են օրէնք՝ և ոչ յանցանք ինչ.
*Վ̃ 16
այնորիկ 'ի հաւատոց անտի, զի ըստ շնորհացն իցէ. առ 'ի լինելոյ հաստատուն աւետեացն ա̃մ զաւակին. ոչ այնմ միայն՝ որ յօրինաց անտի,

այլ և այնմ որ ՚ի հաւատոյն աբրահամու, որ
17 է հայր մեր ամենեցուն. *որպ՟ և գրեալ է,
թէ հայր ազգաց բազմաց արարից զքեզ առաջի
ա՟յ. որում հաւատաց՝ եթէ կենդանի
առնէ զմեռեալս, և կոչէ զչգոյն իբրև զգոյ.
18 *Որ յանյուսն յուսով հաւատաց լինել նմա հայր
ազգաց բազմաց. որպ՟ և ասացաւն, թէ այնպէս
19 եղիցի զաւակ քո. *Եւ նա ոչ երկմտեաց ՚ի
հաւատոյն. թէպէտ և հայեցաւ ՚ի մարմին իւր
այնուհետև իբրև ՚ի մեռեալ. քանզի զհարիւրամենիւք
ուրեմն էր. և ՚ի մեռելութիւն
20 յարգանդին սառայի. *Բայց յաւետեացն ա՟յ
ոչ երկմտեաց անհաւատութ՟բ. այլ զօրացաւ հաւատովք,
21 ետ փառս ա՟յ. *և հաստատեցաւ ՚ի
միտս իւր, եթէ որ խոստացաւն՝ կարող է առնել.
22 *Վ՟ն որոյ համարեցաւ նմա յարդարութիւն.
23 *Արդ՝ զի գրեցաւն, ոչ եթէ վ՟ն նր՟
24 միայն՝ եթէ համարեցաւ նմա. *այլ և վ՟ն մեր՝
որոց համարելոց է. որք հաւատամք յայն՝ որ
25 յարոյցն զյ՟ի զտէր մեր ՚ի մեռելոց. *որ մատնեցաւ
վ՟ն յանցանաց մերոց. և յարեաւ վասն
զմեզ արդարացուցանելոյ. Վ.Զ

ԳԼ. Ե.

1 Այսուհետև արդարացեալք ՚ի հաւատոց
անտի, խաղաղութիւն կալցուք առ ա՟ծ ՚ի ձեռն
2 տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի. *որով և զընծայութիւն ըն-

կալաք հաւատովք ՚ի շնորհս յայսմիկ՝ յորում կամք, և պարծիմք յուսով փառացն ա՟յ ։ *Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ պարծիմք եւս ՚ի նեղութիւնս մեր ․ քանզի գիտեմք, եթէ նեղութիւնք զհամբերութիւն գործեն, * համբերութիւն զհանդէս, հանդէս զյոյս ․ *յոյս՝ ոչ երբէք ամաչեցուցանէ ․ զի սէրն ա՟յ սփռեալ է ՚ի սիրտս մեր, ՚ի ձեռն հոգւոյն սբ՟յ՝ որ տուաւ մեզ ։ *Զի մինչդեռ տկարն էաք՝ ք՟ս վ՟ն մեր ՚ի ժամանակի ՚ի վ՟ր ամբարշտաց մեռաւ ։ *Զի վ՟ն արդարոյ հազիւ ոք մեռանիցի ․ այլ վ՟ն բարւոյ թերեւս համարձակիցի ոք մեռանել ։ *Յայտնեաց ա՟ծ զսէրն իւր ՚ի մեզ ․ զի մինչդեռ մեղաւորքն էաք, *ք՟ս վ՟ն մեր մեռաւ ․ ո՛րչափ եւս առաւել յարդարանալս մերում՝ այժմիկ արեամբն նր՟՝ ապրեսցուք նովաւ ՚ի բարկութենէ անտի ։ * Զի եթէ մինչ թշնամիքն էաք՝ հաշտեցաք ընդ ա՟յ մահուամբ որդւոյ նր՟ ․ ո՛րչափ եւս առաւել ՚ի հաշտելս մերում՝ ապրեսցուք կենօքն նորա ։ * Եւ ոչ այսչափ միայն ․ այլ եւ պարծիմք եւս յա՟ծ ՚ի ձեռն տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի ․ որով եւս զհաշտութիւնն իսկ ընկալաք ։

ԳԶ * Զի որպէս ՚ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին՝ և ՚ի մեղաց անտի մահ ․ և այնպէս յա՟մ մարդիկ տարածեցաւ մահ՝ որով ամենեքին մեղան ։ * Քանզի մինչև յօրէնսն մեղք էին յաշխարհի ․ բայց մեղք ոչ համարին, ուր օրէնք ոչ իցեն ։ * Այլ թագաւոր․

եաց մահ յադամայ մինչև ցմովսէս՝ և 'ի վերայ
չյանցուցելոցն, ըստ նմանութե̃ն յանցուածոցն
15 ադամայ. որ է օրինակ հանդերձելոյն։ *Այլ
ոչ ոպ̃ յանցանքն՝ նոյնպէս և շնորհքն. զի եթէ
միոյն յանցանօք բազումք մեռան, որչափ ևս
առաւել շնորհքն այ̃ և պարգևքն՝ շնորհօք
միոյն մարդոյ յի̃ի քի̃ի 'ի բազումս առաւելաւ։
16 *Եւ ոչ ոպ̃ 'ի միոջէ յանցուցելոյն պարգևքս.
զի դատաստանն 'ի միոջէ յանցուածոյ անտի
'ի դատապարտութիւն. այլ շնորհքն 'ի բազմաց
17 յանցուածոցն յարդարութիւն։ *Զի եթէ
'ի միումն յանցանաց մահ թագաւորեաց միոյն,
ո՛րչափ ևս առաւել որք զառաւելութիւն շնորհաց
և զպարգևաց արդարութե̃ն առնուցուն,
կենօք թագաւորեսցեն 'ի ձեռն միոյն
18 յի̃ի քի̃ի։ *Ապա ուրեմն՝ որպ̃ միոյն յանցանօք
յա̃մ մարդիկ դատապարտութիւն, նոյնպէս
և միոյն արդարութե̃՝ յա̃մ մարդիկ արդարութիւն
19 կենաց։ *Զի որպ̃ անհնազանդութե̃
միոյն մարդոյ՝ մեղաւորք բազումք
եղեն. նոյնպէս և հնազանդութե̃ միոյն, արդարք
20 բազումք եղիցին։ *Բայց օրէնքն 'ի
ներքս անկան, զի յանցանքն բազմասցին. զի
ուր առաւել եղեն մեղքն, առաւել ևս յաւելան
21 շնորհքն։ *Զի որպէս թագաւորեցին
մեղքն 'ի մահու անդ, նոյնպէս և շնորհքն
թագաւորեսցեն արդարութե̃ 'ի կեանսն յաւիտենից
'ի ձեռն յիսուսի քի̃ի տեառն մերոյ։

Գլ. Զ.

Իսկ արդ՝ զի՞նչ ասիցեմք, յաճախեսցո՞ւք 1
'ի մեղսն՝ զի շնորհքն բազմասցին. *Քաւ լիցի. 2
որք մեռաք մեղացն, զիա՞րդ տակաւին
'ի նմին կեցցեմք. *Եթէ ո՞չ գիտէք՝ զի որ 3
միանգամ մկրտեցաք 'ի ք՟ն յ՟ն՝ 'ի մահ անդր
նր՟ մկրտեցաք. *Թաղեցաք ընդ նմին մկրտուբ՟ն 4
'ի մահ. զի ո՟պ յարեաւ ք՟ն 'ի մեռելոց
փառօք հօր, նոյնպէս և մեք 'ի նորոգութ՟ն կենաց
շրջեսցուք. *Զի եթէ տնկակից եղեաք 5
նմանութ՟ն մահու նր՟. այլ և յարութ՟ն նր՟ լինիցիմք.
*Զայս գիտասջիք՝ զի հին մարդն 6
մեր խաչակից եղև նր՟, զի խափանեսցի մարմին
մեղացն, մի՛ ևս ծառայել մեզ մեղացն.
*Զի որ մեռանին՝ արդարացեալ է 'ի մեղաց 7
անտի. *Իսկ եթէ մեռաք ընդ ք՟ի, հաւատամք՝ 8
թէ և կեցցուք ընդ նմա. *Գիտեմք՝ 9
եթէ ք՟ն յարուցեալ է 'ի մեռելոց. այսուհետև
ոչ մեռանի, և մահ նմա ոչ ևս տիրէ. *Զի 10
որ մեռաւն՝ մեղացն մեռաւ միանգամ, և որ
կենդանին է՝ կենդանի է այ՟. *Նոյնպէս և 11
դուք համարեսջիք զանձինս մեռեալս մեղացն,
և կենդանիս այ՟ 'ի ք՟ն յ՟ն 'ի տէր մեր.
ԴԿ *Մի՛ այսուհետև թագաւորեսցեն մեղք 12
'ի մահկանացու մարմինս ձեր հնազանդել ցանկութ՟ց
նր՟. *Եւ մի՛ պատրաստէք զանդամս 13

ձեր զէն անիրաւութեան մեղացն . այլ պատրաստեցէք զանձինս ձեր այ՟՝ որպ՟ 'ի մեռելոց 'ի կենդանիս . և զանդամս ձեր զէն արդարութեան
14 այ՟ . * Զի մեղք ձեզ ոչ տիրեսցեն . քանզի ոչ
15 էք ընդ օրինօք՝ այլ ընդ շնորհօք . * Իսկ արդ՝ զիա՞րդ , մեղիցո՞ւք՝ զի չեմք ընդ օրինօք այլ
16 այլ ընդ շնորհօք . քա՛ւ լիցի . * Ո՞չ գիտէք՝ թէ որում պատրաստէք զանձինս ձեր ծառայս 'ի հնազանդութիւն , ծառայէք , որում հնազանդիքն , եթէ մեղաց՝ 'ի մահ , և եթէ 'ի
17 հնազանդութիւն արդարութեան՝ 'ի կեանս . * Այլ շնորհք այ՟ . զի էիք ծառայք մեղաց՝ հնազանդեցայք 'ի սրտէ՝ որում աւանդեցայք յառակ
18 վարդապետութեան . * Արդ՝ ազատացեալք 'ի մե-
19 ղաց՝ ծառայեցէք արդարութեան . * Մարդկօրէն ասեմ վս՟ տկարութեան մարմնոյ ձերոյ . զի որպ՟ պատրաստեցիք զանդամս ձեր ծառայս պղծութեան և անօրէնութեան յանօրէնութիւն . նոյնպէս և այժմ պատրաստեցէք զանդամս ձեր ծառայս արդարութեան 'ի սրբութիւն . * Զի մինչ ծա-
20 ռայքն էիք մեղաց՝ ազատացեալ էիք յարդա-
21 րութենէն . * Իսկ արդ՝ զի՞նչ պտուղ ունէիք յայնժամ , որովք այժմդ զամօթի հարեալ էք . զի
22 վախճան նց՟ մահ է . * Բայց արդ ազատացեալք 'ի մեղացն՝ և ծառայեալք այ՟՝ ունիք զպտուղ ձեր 'ի սրբութիւն , և վախճան նր՟ կեանք յաւի-
25 տենից . * Զի թոշակն մեղաց մահ է . այլ շնորհքն այ՟ կեանք յաւիտենից 'ի քս՟ յս՟ 'ի տէր մեր .

ԳԼ· Է·

ԴԴ ԵԹԷ ո՞չ գիտէք եղբարք, զի ընդ գի- 1
տունս օրինաց խօսիմ։ զի օրէնք տիրեն մար-
դոյ՝ որչափ ժամանակս կենդանի իցէ։ *Քան- 2
զի կին առնակին ’ի կենդանի այր իւր կա-
պեալ կայ օրինօք· իսկ եթէ մեռցի այրն,
արձակեալ է յօրինաց առն։ * Ապա ուրեմն 3
մինչ կենդանի է այրն, շուն կոչի՝ եթէ լինիցի
առն այլում։ և եթէ մեռցի այրն՝ ազատ է
յօրինացն, չհամարեալ շուն՝ եթէ լինիցի առն
այլում։ * Այսուհետև և դուք եղբարք՝ մե- 4
ռայք օրինացն մարմնովն քր՟ի· լինել այլում
որ ’ի մեռելոցն յարուցեալ է, զի պտղաբեր
լիցուք ա՟յ։ * Քանզի մինչ էաքն մարմնով, 5
կիրք մեղաց՝ որ օրինօքն էին՝ զօրանային
յանդամս մեր, առ ’ի պտղաբեր առնելոյ զմեղ
մահու։ * Բայց այժմ զատարկացաք յօրինաց 6
անտի· քանզի մեռաք այնմիկ՝ որով ըմբռ-
նեալն էաք, առ ’ի ծառայել մեզ նորոգութ՟
հոգւոյն՝ և ոչ հնութեամբ գրոյն։ * Իսկ արդ 7
զի՞նչ ասեմք· օրէնքն մե՞ղք իցեն, քաւ լիցի։
այլ զմեղս ոչ գիտէի, եթէ ոչ օրինօք· և ըղ-
ցանկութիւն ոչ ճանաչէի, եթէ ոչ օրինացն էր
ասացեալ՝ մի՛ ցանկանայցես։ * Պատճառս ա- 8
ռեալ մեղքն պատուիրանաւն, և գործեցին յիս
զա՟մ ցանկութիւն, զի առանց օրինացն մեղքն

9 մեռեալ էին. * Եւ ես առանց օրինաց երբեմն
էի կենդանի. այլ իբրեւ եհաս յիս պատուիրանն,
10 մեղքն կենդանացան. * Եւ ես մեռայ.
եւ գտաւ ինձ պատուիրանն՝ որ 'ի կեանս
11 էր, նոյն 'ի մահ. * Զի մեղացն պատճառս առեալ
պատուիրանաւն՝ խաբեցին զիս, եւ նովին
սպանին.

12 * Այսուհետեւ օրէնք սուրբ են՝ եւ պատուիրանն ԴԶ
13 սուրբ եւ արդար եւ բարերար. * Իսկ
արդ՝ ինձ բարին մահ եղեւ. քաւ լիցի. այլ
մեղքն. զի երեւեսցին մեղքն բարեաւն գործել
ինձ զմահ. զի եղիցին ըստ առաւելութեան
մեղքն մեղաւոր 'ի ձեռն պատուիրանին.
14 * Գիտեմք՝ զի օրէնքն հոգեւոր են. այլ
ես մարմնաւոր եմ, ընդ մեղօք վաճառեալ.
15 * Զի զոր գործեմն ոչ գիտեմ, ոչ եթէ զոր
կամիմն՝ զայն առնեմ, այլ զոր ատեամն՝ զայն
16 գործեմ. * Ապա թէ զոր ոչն կամիմ՝ զայն
առնեմ, վկայեմ օրինացն՝ եթէ բարւոք են.
17 * Այլ արդ՝ ոչ եթէ ես գործեմ զայն, այլ
18 բնակեալ է յիս մեղքն. * Գիտեմ զի ոչ բնակեալ
է յիս, այսինքն 'ի մարմնի իմում, բարի
ինչ. զի կամքն առաջի կան ինձ. եւ առնել
19 զբարին ոչ. * Զի ոչ եթէ՝ զոր կամիմ զբարին՝
առնեմ, այլ զոր ոչն կամիմ զչարն, զայն
20 գործեմ. * Ապա եթէ զոր ոչն կամիմ՝ զայն
առնեմ, ոչ եւս ես առնեմ զայն՝ այլ բնակեալ
21 յիս մեղքն. * Եւ արդ՝ գտանեմ զօրէնս այ-

նորին՝ որ կամիցին առնել յիս զբարին · և ինձ
չարն առաջի կայ · *Հաճեալ եմ ընդ օրէնսն 22
ա՟յ ըստ ներքին մարդոյն · *բայց տեսանեմ 23
այլ օրէնս յանդամս իմ, զինեալ հակառակ
օրինաց մտաց իմոց · և գերեալ զիս օրինօքն
մեղաց՝ որ են յանդամս իմ · *Այր մի տառապեալ 23
եմ ես ո՞վ ապրեցուսցէ զիս 'ի մարմնոյ
աստի մահու · *Այլ շնորհքն աստուծոյ 24
'ի ձեռն յիսուսի քրիստոսի տեառն մերոյ ·
*Ապա ուրեմն՝ ես ինքնին միտօք իմովք ծառայեմ 26
օրինացն ա՟յ · և մարմնով օրինացն մեղաց ·

ԳԼ. Ը.

ե՟կ Թէ այդպէս իցէ՝ ոչինչ դատապարտութիւն 1
է այնոցիկ՝ որ 'ի ք՟ս յ՟ս · *Զի օրէնք 2
հոգւոյն կենաց 'ի ք՟ս յ՟ս ազատեցին զիս յօրինաց
մեղացն և մահու · *Զի որ անհնարին էր 3
օրինացն՝ որով տկարանայր մարմնով · ա՟ծ զորդին
իւր առաքեաց 'ի նմանութիւն մարմնոյ
մեղաց՝ և վ՟ն մեղաց, և դատապարտեաց ըզ
մեղս 'ի մարմնի անդ · *զի արդարութիւն օրինացն 4
կատարեսցի 'ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ
գնայցեմք՝ այլ ըստ հոգւոյն · *Զի որք 5
ըստ մարմնոյն են՝ զմարմնոյն խորհին, և որք
ըստ հոգւոյն՝ զհոգւոյն · *Զի խորհուրդ 6
մարմնոյ՝ մահ է, և խորհուրդ հոգւոյն կեանք
և խաղաղութիւն · *Քանզի խորհուրդ մարմ- 7

նոյ թշնամութիւն է յաստուած՝ զի օրինացն
աստուծոյ ոչ հնազանդի · նաև կարէ իսկ ոչ ·
8 *Զի որ մարմնովն են, ա̃յ հաճոյ լինել ոչ կարեն·
9 *Բայց դուք ոչ էք մարմնով՝ այլ հոգւով,
եթէ իցէ հոգին ա̃յ 'ի ձեզ բնակեալ· ապա եթէ
10 ոք զհոգի ք̃ի ոչ ունի, նա չէ նր̃· *Իսկ եթէ
ք̃ս 'ի ձեզ է՝ ապա մարմին մեռեալ է վ̃ն մեղաց,
11 և հոգին կենդանի է վ̃ն արդարութեն · *Եթէ
հոգի այնորիկ՝ որ յարոյց զյ̃ս 'ի մեռելոց, բնա-
կեալ է 'ի ձեզ · ապա և որ յարոյց զյ̃ս ք̃ս 'ի
մեռելոց՝ կենդանացուսցէ զմահկանացու
մարմինս ձեր բնակեալ հոգւովն իւրով 'ի ձեզ։
12 *Այսուհետև եղբարք պարտապան եմք
13 ոչ մարմնով՝ ըստ մարմնոյ կեալ· *Զի թէ ըստ
մարմնոյ կեցէք՝ մեռանելոց էք· իսկ եթէ հոգ-
ւով զգործս մարմնոյ սպանանիցէք՝ կեցջիք·
14 *Զի որ հոգւովն ա̃յ վարին, նք̃ են որդիք ա̃յ·
15 *Զի ոչ առիք զհոգին ծառայութեն միւսանգամ
յերկիւղ, այլ առիք զհոգին որդեգրութեն · որով
16 աղաղակեմք աբբայ, հայր· *Նոյն ինքն հոգին
վկայէ հոգւոյս մերում, եթէ եմք որդիք ա̃յ·
17 *Եւ եթէ որդիք, ապա և ժառանգք· ժա-
ռանգք ա̃յ՝ և ժառանգակիցք ք̃ի · եթէ
չարչարանացն կցորդ լինիմք, և փառացն
18 հաղորդ լինելոց եմք · *Ինձ այսպէս թուի՝
եթէ ոչ են արժանի չարչարանք ժամանակիս
հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոց են 'ի
19 մեզ· *Զի ակնկալութիւն արարածոց՝ յայտ-

նութ՟ն որդւոյն ա՟յ սպասէ. *Զի ընդունայնու՟ն 20
արարածք հնազանդեցան, ոչ իւրեանց
կամաւ՝ այլ վ՟ այնորիկ՝ որ հնազանդեցոյցն
յուսով. *զի և ինքեանք իսկ արարածքն ազատեսցին 21
'ի ծառայութ՟է ապականութեան՝
յազատութիւն փառաց որդւոյն ա՟յ. *Քանզի 22
գիտեմք, եթէ ա՟մ արարածք հեծեն և երկնեն
մինչև ցայժմ. *Եւ ոչ այսչափ միայն. 13
այլև մեք իսկ՝ որ զպտուղ հոգւոյն ունիմք
անձամբ յանձինս մեր հեծեմք՝ որդեգրութեան
ակնկալեալ փրկութեան մարմնոյ մերոյ.
*Զի յուսով ապրեցաք. այլ յոյս տեսանելի՝ 24
չէ յոյս. զի զոր տեսանէ ոք՝ զի՞ և
յուսայ. *Ապա թէ զոր ոչն տեսանեմք՝ յուսամք, 25
համբերութ՟բ ակն ունիմք. *Նոյնպէս 24
և հոգին 'ի թիկունս հասանէ տկարութեան
մերում. զի զոր կամքն յաղօթս՝ ո՟պ արժան
իցէ՝ ոչ գիտեմք. այլ ինքնին հոգին բարեխօս
լինի 'ի հեծութիւնս անմռունչս. *Բայց 27
որ քննէն զսիրտս՝ գիտէ զինչ խորհուրդ է
հոգւոյն. զի ըստ ա՟յ բարեխօսէ վասն սրբոց.
*Բայց գիտեմք՝ եթէ որոց սիրեն զա՟ծ՝ յամենայնի 28
գործակից լինի 'ի բարիս՝ որք հրաւիրանաւն
կոչեցան. *Զի զորս յառաջն ճանաչէր՝ 29
յառաջագոյն և հրաւիրեաց կերպարանակից
լինել պատկերի որդւոյն իւրոյ. զի
եղիցի նա անդրանիկ 'ի մէջ եղբարց բազմաց.
*Եւ զորս յառաջագոյնն հրաւիրեաց՝ զնոսին 30

և կոչեաց . և զորս կոչեացն , զնոսին և ար֊
դարացոյց . և զորս արդարացոյցն , զնոսին և
31 փառաւորս արար ։ * Իսկ արդ զի՞նչ ասեմք
առ այս . եթէ աստուած 'ի մեր կոյս է , ո՞վ
32 իցէ մեր հակառակ ։ * Որ յիւր որդին ոչ
խնայեաց , այլ վասն մեր ամենեցուն մատ֊
նեաց զնա . զիա՞րդ ոչ նովաւ հանդերձ զա֊
33 մենայն շնորհիցէ մեզ ։ * Ո՞վ իցէ որ մեղա֊
դիր լինիցի ընտրելոց այ̃ . աստուած է որ
34 արդարացուցանէ , * իսկ արդ՝ ո՛վ է որ դա֊
տապարտ առնիցէ . Քրիստոս յիսուս՝ որ մե֊
ռաւն , մանաւանդ թէ յարուցեալ իսկ է . և
է ընդ աջմէ աստուծոյ , որ և բարեխօս իսկ
35 է վասն մեր ։ * Արդ՝ ո՞վ մեկնեսցէ զմեզ 'ի
սիրոյն քրիստոսի , նեղութի՞ւն՝ թէ անձկու֊
թի՞ւն՝ թէ հալածանք՝ թէ սով՝ թէ մերկու֊
36 թի՞ւն՝ թէ վիշտք՝ թէ սուր . * որպէս և գը֊
րեալ է . վասն քո մեռանիմք զօրհանապազ .
37 համարեցաք իբրև զոչխար 'ի սպանդ ։ * Այլ
յայսմ ամենայնի՝ առաւել յաղթեմք նովաւ՝
38 որ սիրեացն զմեզ ։ * Քանզի հաստատեալ
եմ , եթէ՝ ոչ մահ և ոչ կեանք և ոչ հրեշ֊
տակք և ոչ իշխանութիւնք , և ոչ որ կանն
39 և ոչ հանդերձեալքն , և ոչ զօրութիւնք , * և
ոչ բարձրութիւն և ոչ խորութիւն , և ոչ այլ
ինչ արարած՝ կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյ
անտի աստուծոյ , որ 'ի քրիստոս յիսուս 'ի
տէր մեր ։

ԳԼ. Թ.

ԿՋ Ստուգութ̃ ասեմ 'ի Քս̃՝ և ոչ ստեմ, վկայեն ինձ միտք իմ 'ի հոգի ս̃ր. *զի տրտմութիւն է ինձ յոյժ՝ և անպակաս ցաւք սրտի իմոյ. *Զի ուխտիւք խնդրէի ես իսկ ինքնին նզով լինել 'ի Քս̃է, վ̃ս եղբարց իմոց և ազգականաց ըստ մարմնոյ, *որ են իէ̃լացիք. որոց որդեգրութիւնն և փառքն և կտակարանքն և օրէնսդրութիւնն և պաշտօնն և աւետիքն, *որոց հարքն, յորոց և Քս̃ ըստ մարմնոյն, որ է 'ի վ̃ր ամենեցուն ա̃ծ օրհնեալ յաւիտեանս. ամէն. *Ոչ ինչ է մարթ եթէ անկած լինիցի բանն ա̃յ. զի ոչ ամենեքեան՝ որ յիէ̃լէն են, ն̃ք իէ̃լեանք իցեն. *և ոչ որ զաւակն աբրահամու են՝ ամենեքեան որդիք իցեն. այլ իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ. *Այսինքն՝ ոչ եթէ որ որդիք մարմնոյն են, են որդիք ա̃յ. այլ որդիք աւետեացն համարին 'ի զաւակ. *Քանզի աւետեաց իսկ է բանս այս, եթէ 'ի ժամանակի յայսմիկ եկից՝ և եղիցի որդի սառայի. *Եւ ոչ այնչափ միայն՝ այլ 'ի հռեբեկայ 'ի միոջէ անկողնոյ սահակայ հօր մերոյ. *Զի մինչչև ծնեալ էին, և մինչչև բարի ինչ՝ կամ չար գործեալ էին. զի ըստ ընտրու̃ն առաջադրութիւնն ա̃յ հաստատեսցի. *ոչ 'ի գործոց՝ այլ յայնմանէ որ կոչեացն՝ ա-

13 սացաւ նմա . թէ *երէցն կրտսերոյն ծառայեսցէ .
ոպ̃ և գրեալ է , թէ զյակոբ սիրեցի ,
14 և զեսաւ ատեցի . *Իսկ արդ՝ զի՞նչ ասեմք .
միթէ անիրաւութի՞ւն իցէ այ̃ . քա՛ւ
15 լիցի . *Զի մովսեսի ասէ . ողորմեցայց՝ որում
ողորմեցայցն , և գթացայց՝ յորս գթացայցն .
16 *Ապա ոչ ըստ այնմ ինչ է՝ որ կամիցին , և ոչ ըստ
այնմ՝ որ ընթանայցէ . այլ ըստ այ̃՝ որ ողորմին .
17 Քանզի ասէ գիր ցփարաւոն . թէ վ̃ այնորիկ ԵՁ
գրգռեցի զքեզ , զի 'ի քեզ ցուցից ըզ
զօրութիւն իմ , և պատմեսցի անուն իմ ընդ
18 ա̃մ երկիր . *Ապա ուրեմն՝ ում կամի ողորմի ,
19 և ում կամի՝ խստանայ . *Իսկ արդ՝ ասիցես ,
թէ մեղ ևս զի՞ դնէ՝ զի կամաց նր̃ ոչ
20 ոք կայ հակառակ . *Իսկ արդ՝ դու ո՞վ ես
մարդ՝ որ պատասխանի տաս այ̃ . միթէ ասիցէ՛
ստեղծուածն ցստեղծիչն՝ թէ ընդէ՞ր այդպէս
21 արարեր զիս . *Եթէ ո՞չ ունիցի իշխանութիւն
բրուտն կաւոյն , 'ի նմին զանգուածոյ առնել
անօթ՝ զոմն 'ի պատիւ և զոմն յանարգանս .
22 *Ապա եթէ կամէր ա̃ծ ցուցանել զբարկութիւն ,
և յայտնի առնել զզօրութիւն իւր .
որ համբերին բազում երկայնմտութ̃բ անօթոյն
23 բարկութե̃՝ պատրաստելոյն 'ի կորուստ . *Զի
յայտնի արասցէ զմեծութիւն փառաց իւրոց
'ի վերայ անօթոյն ողորմութե̃ , զոր պատրաստեաց
24 'ի փառս . *Զորս և կոչեաց զմեզ , ոչ
25 միայն 'ի հրէից՝ այլև 'ի հեթանոսաց . *ոպ̃ և

յովսէէ ասէ․ կոչեցից՝ զոր ոչ ժողովուրդն իմ,
ժողովուրդ ինձ, եւ զչսիրեցեալն՝ սիրեցեալ, եւ
զչողորմեալն՝ ողորմեալ․ *Եւ եղիցի 'ի տեղւոջ 26
յորում ասացաւ նց՟՝ թէ ոչ ժողովուրդ իմ դուք,
անդ կոչեսցին նք՟ որդիք այ՟ կենդանւոյ․ *Եսայի 27
աղաղակէ վս՟ իէ՟լի․ եթէ իցէ թիւ որդւոցն
իէ՟լի իբրեւ զաւազ ծովու՝ սակաւ ինչ մնացորդք
մնասցեն․ *Զի բան մի հակիրճ եւ համառօտ 28
արդարութ՟․ զբանն հակիրճ արասցէ տէր 'ի վր՟
երկրի․ *Եւ որպ՟ ասէ եսայի․ թէ ոչ տեառն 29
զօրութեանց թողեալ էր մեզ զաւակ, իբրեւ
զսոդոմ լինէաք՝ եւ զգոմորայ նմանէաք․

ՁԿ *Իսկ արդ զի՞նչ ասիցեմք․ զի հեթանոսք՝ 30
որ ոչ երթային զհետ արդարութ՟՝ հասին արդարութ՟,
այնմ արդարութ՟ որ 'ի հաւատոց անտի․
*Այլ իէ՟լ երթայր զհետ օրինացն արդարութ՟՝ 31
եւ յօրէնս արդարութ՟ ոչ ժամանեաց․
*Ընդէ՞ր․ զի ոչ 'ի հաւատոյ՝ այլ իբրեւ 'ի գործոց 32
օրինաց․ քանզի զթեցին նք՟ առ վիմին գայթակղութ՟․
*որպ՟ եւ գրեալ է․ ահաւասիկ դնեմ 33
'ի սիօն քար գայթակղութ՟ եւ վէմ գլորման․ եւ
ամենայն որ հաւատասցէ 'ի նա՝ մի՛ ամաչեսցէ․

ԳԼ․ Ժ․

Եղբարք՝ իմ կամք սրտի եւ աղօթք առ 1
ա՟ծ, վս՟ նց՟ են 'ի փրկութիւն․ *Քանզի վկայեմ 2
նց՟՝ թէ զնախանձ այ՟ ունին, այլ ոչ գի-

3 տութբ̃. *Զի տգէտ են աստուծոյ արդարութեանն, և զիւրեանցն խնդրեն կացուցանել. զի արդարութե̃ն աստուծոյ ոչ հնազանդեցան.
4 *Քանզի կատարած օրինացն քս̃ է՝ յարդարութիւն ամենայն հաւատացելոց.
5 *Մովսէս գրէ զարդարութիւնն, որ յօրինաց անտի է. թէ արասցէ զայն մարդ՝ կեցցէ
6 նովին. *Իսկ զհաւատոյն արդարութէ այսպէս ասէ. մի ասիցես 'ի սրտի քում, ո՞վ ելանիցէ յերկինս, այսինքն է՝ զքս̃ իջուցանել.
7 *կամ ո՞վ իջանիցէ յանդունդս, այսինքն է՝
8 զքս̃ հանել 'ի մեռելոց. *Այլ զի՞նչ ասէ գիր. մերձ է բանն 'ի բերան քո՝ և 'ի սրտի քում է. այսինքն է՝ բանն հաւատոյ զոր քարոզեմք.
9 *Զի եթէ խոստովանեսցես բերանով քով տէր զյս̃. և հաւատասցես 'ի սրտի քում, թէ ա̃ծ
10 յարոյց զնա 'ի մեռելոց, կեցցես. *Զի սրտիւ հաւատայք յարդարութիւն, և բերանով խոս-
11 տովանիք 'ի փրկութիւն. *Քանզի ասէ գիր.
12 ա̃մ որ հաւատասցէ 'ի նա, մի ամաչեսցէ. *Զի ոչ գոյ խտիր հրէի և հեթանոսի. քանզի նոյն տ̃ր է ամենեցուն, բաւական յամենեսին՝ ոյք
13 կարդան առ նա. *Զի ա̃մ՝ որ կարդասցէ զա-
14 նուն տ̃ն՝ կեցցէ. *Իսկ զիա՞րդ կարդասցեն՝ յոր ոչն հաւատացին. կամ զիա՞րդ հաւատասցեն՝ որում ոչ լուան. կամ զիա՞րդ լուիցեն ա-
15 ռանց ուրուք քարոզելոյ. *կամ զիա՞րդ քարոզեսցեն, եթէ ոչ առաքեսցին. ոպ̃ և գըր-

եալ է․ Իբրև զի գեղեցիկ են ոտք աւետա-
րանչացն խաղաղութե՟ և աւետարանչացն բա-
րութե՟․ * Այլ ոչ ամենեքեան հնազանդ եղեն 16
աւետարանին․ եսայի աղաղակէ․ տէր՝ ո՞ հա-
ւատաց լրոյ մերում։ * Ապա ուրեմն հաւատք 17
Վ.Ջ. 'ի լսելոյ են, և լուր 'ի բանէն քրիստոսի․

* Այլ ասեմ, միթէ ո՞չ լուան․ մանաւանդ՝ 18
զի ընդ ա՟մ երկիր ել բարբառ նց՟, և ընդ ծագս
տիեզերաց խօսք նց՟։ * Այլ ասեմ, միթէ ի՟էլ 19
ո՞չ լուաւ․ նախ մովսէս ասէ, ես նախանձե-
ցուցից զձեզ ոչինչ ժողովրդեամբ, և ազգաւ
անմտաւ զկծեցուցից զձեզ։ * Բայց եսայի հա- 20
մարձակի խօսի՝ և ասէ․ գտայ այնոցիկ՝ որ զիս
ոչ խնդրէին․ յայտնի եղէ այնոցիկ՝ որ զինէն
ոչ հարցանէին․ * Այլ առ իսրայէլ ասէ․ զօր 21
ամենայն ձգեցի զձեռս իմ առ ժողովուրդ
անհաւան՝ և հակառակող։

ԳԼ. ԺԱ.

ՁՁ Իսկ արդ ասեմ, միթէ մերժեաց ա՟ծ զժո- 1
ղովուրդ իւր․ քաւ լիցի․ քանզի և ես ի՟էլացի
եմ, 'ի զաւակէ աբրահամու յազգէ բենիամե-
նի․ * Ոչ մերժեաց ա՟ծ զժողովուրդ իւր, զոր 2
յառաջն ծանեաւ․ թէ ո՞չ գիտէք յեղիա զինչ
ասէ գիր․ ո՞րպէս ամբաստան լինի ա՟յ զի՟էլէ․
* Տէր՝ զմարգարէս քո կոտորեցին, և զսեղանս 3
քո կործանեցին․ ես մնացի միայն, և խնդրեն

4 զանձն իմ. * Այլ զի՞նչ ասէ նմա պատասխանին.
Թողի ինձ ասէ՝ եօթն հազար այր, որ ոչ
5 կրկնեցին ծունր բահաղու. * Նոյնպէս և յայսմ
ժամանակի մնացորդք՝ ըստ ընտրութեան շնորհացն
6 եղեն. * Իսկ եթէ շնորհօք՝ ոչ ևս 'ի գործոց.
ապա թէ ոչ՝ շնորհքն՝ ոչ ևս շնորհք լինին.
7 * Իսկ արդ՝ զոր խնդրէրն Իէլ, այնմ ոչ եհաս.
բայց ընտրութեանն եհաս. և այլքն կուրացան.
8 * որպէս և գրեալ է. ետ նոցա աստուած հոգի
յիմարութեան. աչս՝ որովք ոչ տեսանիցեն, և
ականջս՝ որովք ոչ լսիցեն, մինչև ցայսօր ժամանակի.
9 * Եւ դաւիթ ասէ. եղիցին սեղանք
նց յորոգայթ և 'ի յորս և 'ի գայթակղութիւն՝
10 և 'ի հատուցումն նոցին. * Խաւարեսցին աչք
նց զի մի տեսցեն. և զթիկունս նց հանապազ
11 կորացո. * Իսկ արդ ասեմ, միթէ վն այնորիկ
յանցեան՝ զի կործանեսցին. քաւ լիցի.
այլ նց յանցանօքն փրկութիւն հեթանոսաց.
12 զի նախանձ արկցէ. * Իսկ եթէ յանցանքն նց
մեծութիւն աշխարհի, և պարտութիւնն նց
մեծութիւն հեթանոսաց. ո՛րչափ ևս առաւել
լրութիւն նոցա.

13 * Այլ ձեզ ասեմ հեթանոսաց՝ ցորչափ ԷԿ
ժամանակս լինիմ հեթանոսաց առաքեալ, ըզ
14 պաշտօնն իմ փառաւոր առնեմ. * զի թերևս
նախանձ արկից նց մարմնոյ իմոյ՝ և ապրեցուցից
15 զոմանս 'ի նոցանէ. * Զի եթէ մերժումն
նց հաշտութիւն աշխարհի է. իսկ ըն-

դունելութիւնն զի՞նչ իցէ, եթէ ոչ կենդանութիւն
'ի մեռելոց։ * Իսկ եթէ սկիզբն սբ̃ 16
է՝ և զանգուածն․ և եթէ արմատն՝ ապա և
ոստքն։ * Եթէ յոստոց անտի ոմանք փշրեցան, 17
և դու որ ձիթենիդ վայրենի էիր՝ պատուաստեցար
'ի նա̃, և բաժանորդ եղեր արմատոյն՝
և պարարտութեան ձիթենւոյն, * մի՛ պարծիր առ 18
ոստովքն․ ապա եթէ պարծիցիս՝ ոչ եթէ դու
զարմատն 'ի վեր ունիս, այլ արմատն զքեզ։
* Իսկ արդ՝ ասիցես, ոստքն փշրեցան՝ զի ես 19
պատուաստեցայց։ * Բարւոք է՝ անհաւատութեան 20
փշրեցան, և դու հաւատովք հաստատեցար․
մի՛ հպարտանար՝ այլ երկի՛ր։ * Զի 21
թէ ա̃ծ 'ի բուն ոստոցն ոչ խնայեաց, գուցէ
երբէք և 'ի քեզ ոչ խնայիցէ։ * Արդ՝ տես 22
զքաղցրութիւն՝ և զսաստկութիւնն ա̃յ․ 'ի վ̃ր
կործանելոցն սաստկութիւն, և 'ի վերայ քո
քաղցրութիւնն ա̃յ, եթէ կացցես 'ի նմին
քաղցրութեան․ ապա թէ ոչ՝ և դու կոտորեսցիս։
* Եւ նք̃ եթէ ոչ 'ի նմին անհաւատութեան 23
կայցեն, պատուաստեսցին․ զի կարող է ա̃ծ
միւսանգամ պատուաստել զնա̃։ * Զի եթէ դու 24
'ի բուն 'ի վայրենի ձիթենւոյ անտի հատար՝
և յանբուն 'ի բարի ձիթենւոջն պատուաստեցար,
ո՛րչափ ևս առաւել նք̃՝ որ բունքն իսկ
են՝ պատուաստեսցին յիւրեանց ձիթենւոջն։

ԻԲ * Ոչ կամիմ եղբարք եթէ տգէտք իցէք 25
խորհրդոյս այսմիկ, զի մի՛ յանձինս ձեր իցէք

խստութիւնք · զի կուրութիւն փոքր 'ի շատէ
եղև Իէ՟լի · մինչև լրումն հեթանոսաց մտցէ ,
26 * և ապա ա՟մ Իսրայէլ կեցցէ · ո՟պ և գրեալ է ·
Եկեսցէ 'ի Սիովնէ փրկիչ՝ և դարձուսցէ զամ-
27 բարշտութիւնս 'ի Յակովբայ · * Եւ այս ն՟ց՝ որ
28 յինէն ուխտ , յորժամ բարձից զմեղս ն՟ց · * Ըստ
աւետարանին թշնամիք են վասն ձեր , ըստ
29 ընտրութ՟են սիրելիք վ՟ն հարցն · * Քանզի
30 անզեղջ են շնորհք՝ և կոչումն ա՟յ · * Զի ո՟պ
և դուք երբեմն ապստամբ էիք յա՟յ՝ և արդ
ողորմութիւն գտիք առ ն՟ց ապստամբութ՟բն ,
31 * նոյնպէս և ն՟ք այժմ ապստամբ եղեն առ ձե-
րով ողորմութ՟բդ , զի և ն՟ք ողորմութիւն գտցեն ·
32 * Քանզի արգել ա՟ծ զամենեսին յանհաւա-
33 նութ՟ե , զի ամենեցուն ողորմեսցի · * Ո՜վ խորք
մեծու՟ե և իմաստու՟ե և գիտու՟են ա՟յ · ո՟պ զի
առանց քննելոյ են դատաստանք ն՟ր , և ա-
34 ռանց զննելոյ են ճանապարհք ն՟ր · * Զի ո՞վ
գիտաց զմիտս տ՟ն , կամ ո՞վ խորհրդակից եղև
35 նմա · * կամ ո՞վ ետ նմա փոխ , և առնուցու
36 զփոխարէն 'ի նմանէ · * Զի 'ի նմանէ՝ և նովաւ՝
և 'ի նոյն ա՟մ · նմա փառք յաւիտեանս · ամէն · Վ.Զ

ԳԼ· ԺԲ·

1 Աղաչեմ զձեզ եղբարք գթութ՟բքն ա՟յ՝
պատրաստել զմարմինս ձեր պատարագ կեն-
դանի ս՟բ՝ հաճոյ ա՟յ՝ զխօսուն պաշտօնդ ձեր ·

* և մի՛ կերպարանիք կերպարանօք աշխարհիս 2
այսորիկ· այլ նորոգեցարուք 'ի նորոգութիւն
մտաց ձերոց, առ 'ի քննել ձեզ զայն, և եթէ
զինչ են կամքն ա՟յ՝ բարին և հաճոյն և կատարեալն·
* Զայս ասեմ շնորհօքն ա՟յ՝ որ տուեալ 3
են ինձ, ա՟մի որ է 'ի ձեզ· մի՛ առաւել
ինչ խորհել քան զարժանն խորհելոյ· այլ խորհել
'ի զգաստանալ իւրաքանչիւր՝ ո՟պ և բաժանեաց
ա՟ծ չափ հաւատոյ· * Ո՟պ 'ի միում մարմնի 4
անդամս բազումս ունիմք, և անդամքն ա՟մ
ոչ զնոյն գործ ունին· * Նոյնպէս և բազումքս 5
մի մարմին եմք 'ի ք՟ս· այլ իւրաքանչիւր միմեանց
անդամք եմք· * Բայց ունիմք մեք 6
շնորհս ըստ շնորհացն, որ տուեալ են մեզ
ազգս ազգս· եթէ մարգարէութիւն՝ ըստ
չափուն հաւատոյ, * եթէ պաշտօն՝ ըստ պաշտամանս, 7
եթէ որ ուսուցանէն՝ ըստ վարդապետութ՟են·
* եթէ որ մխիթարէն՝ ըստ մխիթարութ՟են· 8
որ առատն է՝ զուարթութ՟բ, որ վերակացուն
է՝ փութով· որ ողորմին՝ լրջմտութեամբ·
* Սէր առանց կեղծաւորութ՟, ատել 9
զչար, զհետ երթալ բարեաց· * յեղբայրսիրութ՟ 10
առ միմեանս գթածք· 'ի պատիւ ըզ
միմեամբք եղանել· * 'ի փոյթ՝ մի՛ վեհերոտք· 11
հոգւով եռացէք, ա՟ն ծառայեցէք, * յուսով 12
խնդացէք, նեղութ՟ համբերեցէք, աղօթից
տեւ կացէք· * 'ի պէտս ս՟րց հաղորդեցարուք· 13
զհիւրասիրութ՟ զհետ երթայք· * Օրհնեցէք 14

զհալածիչս ձեր , օրհնեցէք և մի՛ անիծանէք ·
15 * Խնդալ ընդ խնդացողս , լալ ընդ լացողս ·
16 * զնոյն միմեանց խորհիջիք · մի՛ ամբարտաւանէք՝ այլ ընդ խոնարհս զիջանիցիք · մի՛ լինիք իմաստունք յանձինս ձեր · 17 * մի՛ ումեք չարի չար հատուցանէք · խորհեցարուք զբարիս առաջի ա̃մ մարդկան · 18 * Եթէ հնար ինչ իցէ ձեզ՝ ընդ ա̃մ մարդկան զխաղաղութիւն կալջիք · 19 * Մի՛ զանձանց վրէժխնդրէք սիրելիք , այլ տուք տեղի բարկութեան · քանզի գրեալ է · իմ է վրէժխնդրութիւն , և ես հատուցից ասէ տէր · 20 * Այլ եթէ քաղցեալ իցէ թշնամի քո՝ հա՛ց տուր նմա , և եթէ ծարաւի՝ ջո՛ւր տուր նմա · զայս արարեալ՝ կայծակունս հրոյ կուտեսցես ՚ի գլուխ նր̃ · 21 * Մի՛ յաղթիր ՚ի չարէն · այլ յաղթեա բարեաւն չարին ·

ԳԼ· ԺԳ·

1 Ամենայն անձն որ ընդ իշխանութ̃բ իցէ՝ ՚ի հնազանդութեան կացցէ · քանզի ոչ ուստեք է իշխանութիւն , եթէ ոչ յա̃յ · և որ ենն , յա̃յ 2 կարգեալ են · * Այսուհետև որ հակառակ կայ իշխանութեան , ա̃յ հրամանին հակառակ կայ · և որք հակառակն կան , անձանց դատաստանս 3 ընդունին · * զի իշխանքն ոչ են յերկիւղ բարեաց գործոց՝ այլ չարաց · Կամիս չերկնչել յիշխանութենէ անտի , զբարիս գործեա , և ըն-

կայցես զգովութիւն ՚ի նմանէ · * զի ա̄յ պաշտօնեայ 4
է քեզ ՚ի բարիս · Ապա եթէ զչար գործիցես,
երկիր · զի ոչ եթէ վայրապար ածեալ
է սուսեր ընդ մէջ · ա̄յ պաշտօնեայ է՝ վրէժխնդիր
՚ի բարկութիւն, այնմ՝ որ զչարն գործիցէ ·
* Վ̄ս որոյ հարկ է հնազանդ լինել՝ ոչ 5
միայն վ̄ս բարկութեանն, այլ և վ̄ս մտացն խղճի ·
* Վ̄ս այնորիկ և հարկս հարկանէք, զի ա̄յ պաշտօնեայք 6
են ՚ի նոյն կանխեալք · * Արդ՝ հատուցէք 7
իւրաքանչիւր զպարտս · որում զհարկ՝
զհարկն, որում զմաքս՝ զմաքսն, որում զերկիւղ՝
զերկիւղն, որում զպատիւ՝ զպատիւն ·
* Եւ մի ումեք պարտապան գտանիցիք, բայց 8
զսիրելս միմեանց · զի որ սիրէ զընկերն, զօրէնսն
կատարէ · * զի մի շնայցես, և մի գողանայցես, 9
և մի սուտ վկայիցես, և մի ցանկանայցես
· և եթէ այլ ինչ պատուիրան է՝ յայն
բան բովանդակի, եթէ սիրեսցես զընկեր քո
իբրև զանձն քո · * Սէր ընկերի իւրում չար ոչ 10
առնէ · լրումն օրինաց սէր է · * Եւ զայս գիտասջիք 11
վ̄ս ժամանակիս · զի արդ ժամ իսկ է
մեզ ՚ի քնոյ զարթնուլ · զի այժմ մերձ է մեզ
փրկութիւն քան զի յորժամ հաւատացաքն ·
* Գիշերն մերժեցաւ՝ և տիւն մերձեցաւ · ՚ի 12
բաց արասցուք այսուհետև զգործս խաւարի,
և զգեցցուք զզէնս լուսոյ · * Իբրև ՚ի տուընջեան 13
զգաստացեալք շրջեսցուք · մի անառակութ̄ք՝
և արբեցութ̄ք, և մի խառն անկողնովք՝ և

պղծութբ̃ք, և մի՛ նախանձու՝ և հակառակու–
14 թեամբք․ * այլ զգեցարուք զտէր յ̃ ք̃,
և մարմնոյ խնամ՛ մի՛ տանիք 'ի ցանկութիւնս ։

ԳԼ․ ԺԴ․

1 Այլ զտկարացեալն 'ի հաւատս ընկալա–
2 րուք՝ մի՛ խղճիւ երկմտութեց ։ * Ոմն հաւա–
տայ ուտել զա̃մ․ և որ հիւանդն է, բանջար
3 կերիցէ ։ * Որ ուտէն, զայն՝ որ ոչն ուտէ՝
մի՛ անգոսնեսցէ ․ և որ ոչն ուտէ, զայն՝ որ
ուտէն, մի՛ դատեսցի ․ քանզի ա̃ծ զնա ըն–
4 կալաւ ։ * Դու ո՞վ ես՝ որ դատիս զայլոյ ծա–
ռայ ․ իւրում տ̃ն կայ՝ կամ անկանի ․ բայց
5 կացցէ՝ զի կարող է տ̃ր հաստատել զնա ։ * Ոմն
պաշէ օր ըստ օրէ՝ և ոմն պաշէ զօրհանապազ․
6 իւրաքանչիւրոք զիւր միտս հաճեսցէ ։ * Որ
խորհի զօրն՝ տ̃ն խորհի ․ և որ ոչն խորհի զօրն,
տ̃ն չխորհի․ և որ ուտէ, տ̃ն ուտէ և գոհա–
նայ զա̃յ, և որ ոչն ուտէ, տ̃ն չուտէ և գոհա–
7 նայ զա̃յ ։ * Զի ոչ ոք 'ի մէնջ անձամբ կեայ,
8 և ոչ անձամբ մեռանի ։ * Եթէ կեամք՝ տ̃ն
կեամք, և եթէ մեռանիմք՝ տ̃ն մեռանիմք ․
և արդ՝ եթէ կեամք և եթէ մեռանիմք՝ տ̃ն եմք ։
9 * Քանզի 'ի նոյն իսկ և ք̃ս մեռաւ և եկեաց,
զի մեռելոց և կենդանեաց առ հասարակ տի–
10 րեսցէ ։ * Դու զի՞ դատիս զեղբայր քո ․ կամ
ընդէ՞ր անգոսնես զեղբայր քո ։ Քանզի ամե–

նեքին կալց եմք առաջի ատենին ք՟նի․ * Զի 11
գրեալ է․ կենդանի եմ ես ասէ տէր․ զի ինձ
կրկնեսցի ա՟մ ծունր՝ և ա՟մ լեզու խոստովան
լիցի ա՟յ․ * Ապա ուրեմն՝ իւրաքանչիւրոք 12
՚ի մէնջ ընդ անձին համարս տացէ ա՟յ․ * Այսուհետև՝ 13
մի՛ զմիմեանս դատեսցուք․ այլ առաւել
զայս դիք ՚ի միտ՝ չդնել գայթակղութիւն
եղբօրն․ * Զայս գիտեմ, և հաստատեալ 14
եմ ՚ի ք՟ն յ՟ս, զի ոչինչ է պիղծ նովաւ,
բայց այնմ, որ համարիցի ուք ինչ պիղծ՝ նմա
է պիղծ․ * Զի եթէ վ՟ն կերակրոյ եղբայրն քո 15
տրտմի, ոչ ևս սիրով գնայցես․ մի՛ կերակրովն
քով զնա կորուսաներ, վ՟ն որոյ ք՟ն մեռաւ․ * Մի՛ 16
հայհոյեսցի բարին ձեր․ * Զի ոչ է արքայութիւնն 17
ա՟յ կերակուր և ըմպելի, այլ արդարութիւն
և խնդութիւն և խաղաղութիւն ՚ի
հոգին ս՟ր․ * Զի որ յայսմ ծառայէ ք՟սի, հաճոյ 18
է ա՟յ՝ և ընտիր մարդկան․ * Ապա այսուհետև 19
զհետ երթիցուք զխաղաղութեն, և զշինութեն՝
որ առ միմեանս․ * Մի՛ վ՟ն կերակրոյ 20
քակեր զգործ ա՟յ․ ա՟մ ինչ ս՟ր է․ այլ չար այնմ
մարդոյ է՝ որ խղճիւն ուտիցէ․ * Լաւ է ոչ 21
ուտել միս, և ոչ ըմպել գինի․ և ոչ՝ որով եղբայրն
քո գայթագղի կամ զթէ կամ տկարանայ․
* Դու՝ ապաքէն հաւատս ունիս, կա՛լ առանձինն 22
առաջի ա՟յ․ երանի՛ որ ոչ դատիցի
զանձն, որով զընկերն փորձիցէ․ * Բայց որ 23
խղճէն, թէպէտ և ուտիցէ՝ դատապարտեալ

է՝ զի ոչ ըստ հաւատոյ, զի ամե՛նայն ինչ՝ որ
24 ոչ ՚ի հաւատոյ է՝ մեղք են․ * Այլ այնմ, որ
կարողն է հաստատել զձեզ ըստ աւետարանիս իմում և ըստ քարոզութեան յիսուսի
քրիստոսի, ըստ յայտնութե̄ն խորհրդոյն՝ ժա-
25 մանակօքն յաւիտենից լռեցելոյ, * և յայտնելոյ այժմիկ ՚ի ձեռն գրոց մարգարէականաց՝ ըստ հրամանի մշտնջենաւորին ա̃յ, ՚ի
հնազանդութիւն հաւատոյ, յա̃մ հեթանոսս
ծանուցելոյ՝ միայնոյ իմաստնոյն ա̃յ, ՚ի ձեռն
յ̃սի ք̃սի, որում փառք յաւիտեանս․ ամէն․

ԳԼ․ ԺԵ․

1 Պարտ է մեզ՝ որ կարողս եմք զտկարու- ԷԳ
թիւն տկարացն բառնալ․ և մի՛ անձանց և եթ
2 հաճոյ լինել․ * Այլ իւրաքանչիւր ոք ՚ի մէնջ
ընկերին հաճոյ լիցի ՚ի բարիս՝ վ̃ս շինութե̄ն․
3 * Քանզի և ք̃ս ոչ եթէ անձին հաճոյ եղև,
այլ ո̃պ և գրեալ է․ նախատինք նախատչաց
4 քոց անկան ՚ի վ̃ր իմ․ * Զի որ ինչ գրեցաւ՝
՚ի մեր վարդապետութիւն գրեցաւ․ զի համբերութ̃բ և մխիթարութ̃բ գրոց, զյոյսն ընկալ-
5 ցուք․ * Այլ ա̃ծ համբերութե̄ն և ա̃մ մխիթարութե̄ն, տացէ ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս
6 յ̃սի ք̃սի․ * զի միաբանութ̃բ ՚ի մի բերան փառաւոր առնիցէք զա̃ծ, և զհայր տեառն մերոյ
7 յիսուսի ք̃սի․ * Վասն որոյ ընկալարուք զմի-

մեանս․ ո՟պ և ք՟ս ընկալաւ զձեզ ՚ի փառս ա՟յ․
**Այլ ասեմ, թէ ք՟սի սպասաւոր թլփատութե՟ն* 8
լինել՝ վ՟ն ճշմարտութե՟ն ա՟յ էր, առ ՚ի հաստա-
*տու՟ն առնելոյ զաւետիս հարցն․ *Այլ հե-* 9
թանոսք վ՟ն ողորմու՟ն փառաւոր առնեն զա՟ծ,
ո՟պ և գրեալ է․ վ՟ն այսորիկ գոհացայց զքէն
՚ի հեթանոսս, և անուան քում սաղմոս աս-
*ցից․ *Եւ դարձեալ ասէ․ ուրախ լերուք հե-* 10
*թանոսք ընդ ժողովրդեան ն՟ր․ *Եւ դար-* 11
ձեալ թէ, օրհնեցէք ա՟մ հեթանոսք զտէր,
*և գովեցէք զնա ա՟մ ժողովուրդք․ *Եւ դար-* 12
ձեալ եսայի ասէ․ եղիցի արմատն յեսսեայ․
և որ կանգնելոցն է իշխան հեթանոսաց, ՚ի
*նա հեթանոսք յուսասցին․ *Այլ աստուած* 13
յուսոյ՝ լի՛ արասցէ զձեզ ամենայն խնդու-
թեամբ և խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ
յուսով զօրութեամբ հոգւոյն սրբոյ․

ԽԹ **Հաստատեալ եմ և ես ինքնին եղբարք* 14
իմ՝ վ՟ն ձեր, զի դուք լի էք բարու՟թ․ լի էք
ա՟մ գիտու՟թ, կարող էք զմիմեանս խրատել․
**Այլ համարձակագոյնս գրեցի առ ձեզ եղ-* 15
բարք իմ՝ փոքր ՚ի շատէ, իբրև յիշեցուցա-
նելով ձեզ վ՟ն շնորհացն՝ որ տուեալ են ինձ
*յա՟յ․ *լինել ինձ սպասաւոր յ՟սի ք՟սի ՚ի հեթա-* 16
նոսս, ըղձակերտս առնել զաւետարանն ա՟յ,
զի եղիցի պատարագն հեթանոսաց ընդունելի՝
*սրբեալ հոգւովն սրբով․ *Ունիմ այսուհետև* 17
*պարծանս ՚ի ք՟ս յ՟ս առ ա՟ծ․ *Քանզի ոչ իշ-* 18

խեմ խօսել ինչ՝ զոր ոչ գործեաց քս՟ ինեւ ՚ի
հնազանդութիւն հեթանոսաց՝ բանիւք և արդեամբք ,
19 *զօրուբ՟ նշանաց և արուեստից ,
զօրուբ՟ հոգւոյն սրբոյ . ոպ՟ ինձ յեէ՟մէ և շուրջ՝
մինչև ՚ի կողմանս իլիւրիկացւոց լնուլ զաւետարանն
20 քս՟ի . *Այնպէս առատացեալ յաւետարանել ,
ոչ ուր անուանեցաւ քս՟ , զի մի՛ իբրև
յայլոց հիման վր՟ շինիցեմ , այլ ոպ՟ և գրեալ է ,
21 *թէ որոց ոչ պատմեցաւ վն՟ նր՟՝ տեսցեն . և
22 որոց ոչ իցէ լուեալ՝ ՚ի միտ առցեն . *Վասն
23 որոյ շատ խափանեցայ գալ առ ձեզ . *Բայց
արդ՝ ոչ ևս գոյ ինձ տեղի ՚ի կողմանս յայսոսիկ .
և անձուկ յոյժ ունիմ ՚ի բազում ամաց գալ առ
24 ձեզ . *Յորժամ անցանիցեմ ՚ի սպանիա , ակն
ունիմ յանցանելն առ նս՟՝ տեսանել զձեզ . և
՚ի ձէնջ յուղարկիլ անդր , եթէ նախ իսկ փոքր
25 ՚ի շատէ ձեօք լցայց . *Բայց այժմ երթամ
26 յեէմ՟ պաշտել զս՟րսն . *Քանզի հաճոյ թուեցաւ
մակեդոնացւոցն և աքայեցւոցն հաղորդութիւն
ինչ առնել ընդ աղքատս սրբոցն՝ որ
27 են յեէմ՟ . *Հաճոյ թուեցաւ , քանզի և պարտապան
իսկ են նց՟ . զի եթէ հոգևորացն նց՟
հաղորդ եղեն հեթանոսք , պարտին և մարմնաւորացն
28 կցորդ լինել նց՟ . *Արդ՝ զայս կատարեալ՝
և կնքեալ զպտուղ նոցա , անցից առ
29 ձեօք ՚ի սպանիա . *Զայս գիտեմ , զի ՚ի գալն
առ ձեզ , լրութեամբ օրհնութեան աւետարանին
քրիստոսի եկից .

ԻԵ *Աղաչեմ զձեզ եղբարք ՚ի ձեռն տ՟ն մերոյ 30
յ՟ի ք՟ի եւ սիրովն հոգւոյն, պատերազմակից
լինել ինձ յաղօթս վ՟ս իմ առ ա՟ծ. *զի ապրեցայց 31
յապստամբացն, որ ՚ի հրէաստանի են. եւ
պաշտօնն իմ որ յե՟էմ, ընդունելի լիցի ս՟րցն.
*զի խնդութ՟բ եկեալ առ ձեզ ՚ի կամս ա՟յ, հանգեայց 32
ընդ ձեզ. *Եւ ա՟ծ խաղաղութեան 33
եղիցի ընդ ձեզ ամենեսին. ամէն.

ԳԼ. ԺԶ.

Յանձն առնեմ ձեզ զփիբէ զքոյր մեր, որ 1
է սպասաւոր եկեղեցւոյն կենքրայւոց. *զի 2
զնա ընկալջիք ՚ի տէր՝ արժանի ս՟րց, եւ մերձակայ
լինիջիք նմա՝ յոր պէտս իրաց եւ կոչեսցէ
զձեզ. քանզի եւ նա մերձակայ եղեւ բազմաց,
եւ ինձ իսկ զլխովին. *Ողջոյն տաջիք 3
պրիսկեայ եւ ակիւղեայ՝ գործակցաց իմոց ՚ի ք՟ս
յ՟ս. *որք ընդ անձին իմոյ զիւրեանց պարանոցս 4
մատուցին. զորոց ոչ ես միայն գոհանամ,
այլ եւ ա՟մ եկեղեցիք հեթանոսաց. *եւ առանձին 5
եկեղեցւոյն ն՟ց. ողջոյն տաջիք եպենետեայ սիրելւոյ
իմոյ՝ որ է պտուղ ասիացւոց ՚ի ք՟ս. *Ողջոյն 6
տաջիք մարեմայ՝ որ բազում վաստակս վաստակեաց
՚ի ձեզ. *Ողջոյն տաջիք անդրոնիկեայ 7
եւ յունեայ ազգականաց իմոց՝ եւ գերեկցաց,
որք երեւելիքն իսկ են յառաքեալս.
որք եւ յառաջ իսկ քան զիս եղեն ՚ի ք՟ս. *Ող- 8

ջոյն տաջիք ամպղեայ սիրելւոյ իմոյ 'ի տէր ·
9 *Ողջոյն տաջիք ուրբանեայ գործակցի իմոյ 'ի
10 տէր , և ստաքեայ սիրելւոյ իմոյ · *Ողջոյն տա-
11 ջիք ապեղեայ՝ որ ընտիրն է 'ի տէր · *Ողջոյն
տաջիք նց̃ , որ յարիստաբուղեայ տանէ անտի
են · ողջոյն տաջիք հերովդիոնեայ ազգականի
իմոյ · ողջոյն տաջիք այնոցիկ՝ որք 'ի նարկի-
12 սեայ տանէն իցեն 'ի տէր · *Ողջոյն տաջիք
տրիփոնեայ և տրիփոսեայ վաստակաւորաց 'ի
տէր · ողջոյն տաջիք պերսիդեայ սիրելւոյ , որ
13 բազում վաստակս վաստակեաց 'ի տէր · *Ող-
ջոյն տաջիք ռուփեայ ընտրելոյ 'ի տէր , և մօր
14 նր̃ և իմոյ · *Ողջոյն տաջիք ասինկրիտեայ՝
փղեգոնտեայ՝ երմեայ՝ պատրոբայ՝ երմեայ ,
15 և որ ընդ նս̃ եղբարք իցեն · *Ողջոյն տաջիք
փիղողոգեայ՝ յուղեայ՝ ներեայ՝ և քեռ նր̃ ·
և ողիմպեայ , և որ ընդ նս̃ ս̃րք ամենեքին
16 իցեն · *Ողջոյն տաջիք միմեանց 'ի համբոյր
սրբութե̃ · ողջոյն տան ձեզ ա̃մ եկեղեցիք քր̃ի ·
17 *Աղաչեմ զձեզ եղբարք՝ դիտել զայն- ԿԹ
ոսիկն , որ հերձուածս և գայթակղութիւնս
առնիցեն արտաքոյ վարդապետութե̃ն՝ զոր
դուքն ուսայք · և խորշեցարուք 'ի նոցանէ ·
18 *Զի այնպիսիքն տեառն մերում քր̃ի ոչ ծա-
ռայեն , այլ իւրեանց որովայնի · և քաղցրա-
բանութ̃բ և օրհնութ̃բ պատրեն զսիրտս ան-
19 մեղաց · *Զի ձեր հնազանդութիւնն առ ա-
մենեսեան հասեալ է · և արդ՝ 'ի ձեզ ուրախ

եմ. բայց կամիմ զձեզ իմաստունս լինել 'ի
բարիս՝ և անմեղս 'ի չարիս. * Եւ ա՟ծ խաղաղութեան 20
խորտակեսցէ զսատանայ ընդ ոտիւք
ձերովք մերձ ընդ մերձ. Շնորհք տ՟ն մերոյ յ՟սի
ք՟սի ընդ ձեզ. * Ողջոյն տայ ձեզ տիմոթէոս 21
եղբայր և գործակից իմ, և ղուկիոս, և յասոն,
և սոսիպատրոս՝ ազգականք իմ. * Ողջոյն 22
տամ ձեզ՝ և ես տերտիոս, որ զթուղթս
գրեցի 'ի տէր. * Ողջոյն տայ ձեզ գայիոս ասպնջական 23
իմ, և ա՟մ եկեղեցւոյն. Ողջոյն
տայ ձեզ երաստոս շահապ քաղաքիս, և
կուարտոս եղբայր. * Շնորհք տեառն մերոյ 24
յիսուսի ք՟սի ընդ ձեզ ընդ ամենեսին. ամէն.
* Այլ այնմ, որ կարողն է հաստատել զձեզ 25
ըստ աւետարանին իմում, և ըստ քարոզութեանն
յ՟սի ք՟սի, ըստ յայտնութե՟ն խորհրդոյս
այսորիկ՝ ժամանակօք յաւիտենից լռեցելոյ.
* և յայտնելոյ այժմիկ 'ի ձեռն գրոց մարգարէականաց՝ 26
ըստ հրամանի մշտնջենաւորին ա՟յ,
'ի հնազանդութիւն հաւատոյ, յա՟մ հեթանոսս
ծանուցանելոյ, * միայնոյ իմաստնոյն 27
աստուծոյ 'ի ձեռն յ՟սի ք՟սի. Նմա պատիւ
և փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն.

Առ հռովմայեցիս գրեցաւ 'ի կորնթոսէ
'ի ձեռն փեբեայ սպասաւորի:

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԼ. Ա.

1 ՊՕՂՈՍ կոչեցեալ առաքեալ յ՟ի ք՟ի Ա.Դ.
կամօքն ա՟յ, և սոսթենէս եղբայր.
2 * եկեղեցւոյդ ա՟յ որ է 'ի կորնթոս նուիրելոց
'ի ք՟ս յ՟ս, կոչեցելոց սրբոց՝ ամենեքումբք
հանդերձ, որք կարդան զանուն տ՟ն մերոյ
3 յ՟ի ք՟ի յա՟մ տեղիս ն՟ց՝ և մեր. * Շնորհք
ընդ ձեզ և խաղաղութիւն յա՟յ հօրէ մերմէ՝ և
4 'ի տ՟նէ յ՟սէ ք՟սէ. * Գոհանամ զա՟յ իմոյ յա՟մ
ժամ վ՟ն ձեր՝ 'ի վ՟ր շնորհացն ա՟յ՝ որ տուեալ
5 են ձեզ 'ի ք՟ս յ՟ս. * զի յա՟մի մեծացայք դուք
6 նովաւ՝ ա՟մ բանիւ և ա՟մ գիտութ՟բ. * որպէս
վկայութիւնն ք՟ի ա՟յ հաստատեցաւ 'ի ձեզ.
7 * զի դուք մի՛ նուաղիցիք՝ և մի՛ ինչ շնորհօք,
ակնկալեալ յայտնութ՟ն տ՟ն մերոյ յ՟ի

քսի. * որ և հաստատեսցէ զձեզ մինչև 'ի կատարած՝ 1
անարատս՝ յօրն տն մերոյ յսի քսի.
* Հաւատարիմ է ած, որով կոչեցարուք 'ի 9
հաղորդութիւն որդւոյ նր յսի քսի տն մերոյ.
ԱԶ * Աղաչեմ զձեզ եղբարք անուամբն տն 10
մերոյ յսի քսի. զի զնոյն բան ունիցիք ամենեքեան,
և մի՛ լիցին 'ի ձեզ հերձուածք.
քանզի էիք հաստատեալք 'ի նոյն միտս և 'ի
նոյն հանճար. * Ազդ եղև ինձ վն ձեր եղբարք՝ 11
'ի քղուայեցւոյ անտի, թէ հակառակութիւնք
են 'ի ձեզ. * Եւ արդ ասեմ իսկ, 12
եթէ իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ ասէ. ես պօղոսեան
եմ, և միւսն՝ եթէ ես ապօղոսեան,
և միւսն՝ եթէ ես կեփայեան. և միւսն՝ եթէ
ես քրիստոսեան. * Իսկ արդ՝ բաժանեա՞լ 13
ինչ իցէ քս. միթէ պօղո՞ս 'ի խաչ ելեալ իցէ
վն ձեր, կամ յանուն պօղոսի՞ մկրտեցարուք.
* Գոհանամ զայ իմոյ՝ զի ոչ զոք 'ի ձէնջ մկրտեցի, 14
բայց միայն զկրիսպոս՝ և զգայիոս.
զի մի՛ ոք ասիցէ, * թէ յիմ անուն մկրտեցարուք. 15
* Տալ եւս կնիք և տանն ստեփանեայ. 16
և զայլ ոք ոչ գիտեմ ամենևին՝ թէ մկրտեցի.
* Զի ոչ առաքեաց զիս քս մկրտել՝ այլ աւետարանել. 17
ոչ ճարտարութբ բանից, զի մի՛
ընդունայն լիցի խաչն քսի. * Զի ճառն խաչին, 18
կորուսելոցն յիմարութիւն է. այլ փրկելոցս
մեզ՝ զօրութիւն այ. * Զի գրեալ է. 19
կորուսից զիմաստութիւն իմաստնոց, և ըղ

խորհուրդս խորհրդականաց արհամարհեցից.
20 Ո՛ւր իմաստուն, ո՛ւր դպիր, ո՛ւր քննիչ աշխարհիս
այսորիկ. ո՞չ ապաքէն յիմարեցոյց ա՟ծ
21 զիմաստութիւն աշխարհիս այսորիկ. *Քանզի
իմաստութ՟բն ա՟յ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութ՟բն
զա՟ծ. հաճեցաւ ա՟ծ յիմարութ՟բ քարոզութե՟նն՝
ապրեցուցանել զհաւատացեալս.
22 *Իսկ որովհետև հրէայք նշան հայցեն, և հեթանոսք Բկ
23 զիմաստութիւն խնդրեն, *մեք
քարոզեսցուք զխաչելեալն ք՟ս, հրէից գայթակղութիւն,
և հեթանոսաց յիմարութիւն.
24 *բայց նոցին իսկ կոչեցելոցն հրէից և հեթանոսաց,
զք՟ս՝ ա՟յ զօրութիւն՝ և ա՟յ իմաստութիւն։
25 *Զի յիմարն ա՟յ իմաստնագոյն է քան
զմարդիկ. և տկարն ա՟յ զօրագոյն է քան զմարդիկ.
26 *Թէպէտ և զձեր իսկ կոչումն տեսիք
եղբարք, զի ոչ բազում իմաստունք ըստ մարմնոյ,
և ոչ բազում հզօրք, և ոչ բազում ազնուականք,
27 *այլ զյիմարս աշխարհիս ընտրեաց ա՟ծ՝ զի յամօթ արասցէ զիմաստունս. և
զտկարս աշխարհիս ընտրեաց ա՟ծ՝ զի յամօթ
28 արասցէ զհզօրս. *և զանտոհմս աշխարհի և
զարհամարհեալս ընտրեաց ա՟ծ՝ և զոչինչսն, զի
29 զէսն իմն խափանեսցէ. *ո՟պ զի մի պարծեսցի
30 ա՟մ մարմին առաջի ա՟յ։ *Զի ՚ի նմանէ դուք էք
՚ի ք՟ս յ՟ս, որ եղև մեզ իմաստութիւն յա՟յ, արդարութիւն
31 և սրբութիւն և փրկութիւն. *զի
ո՟պ և գրեալ է. որ պարծին՝ ՚ի տէր պարծեսցի.

ԳԼ. Բ.

Եւ ես թէպէտ և եկի առ ձեզ եղբարք՝ 1
ոչ ըստ առաւելութ՟ն ինչ բանից իմաստութ՟ն
պատմել ձեզ զվկայութիւն ա՟յ· * Զի ոչ եթէ 2
'ի մտի եդի գիտել ինչ 'ի ձեզ բայց միայն զյ՟ս
ք՟ս, և զնոյն 'ի խաչ ելեալ· * Եւ ես տկա- 3
րութ՟բ՝ և երկիւղիւ և դողութ՟բ բազմաւ եղէ
առ ձեզ· * և բանն իմ և քարոզութիւն, ոչ 4
պատիր բանիւք իմաստութ՟ն՝ այլ արդեամբք
հոգւոյն և զօրութ՟բ· * զի հաւատք ձեր մի՛ 5
Վ.Զ. իցեն իմաստութ՟բ մարդկան, այլ զօրութ՟բ ա՟յ·
*Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս· 6
զիմաստութիւն՝ ոչ զաշխարհիս այսորիկ, և ոչ
զիշխանաց աշխարհիս այսորիկ զխափանելե-
եացս· * այլ խօսիմք զա՟յ իմաստութիւնն ծա- 7
ծուկ խորհրդով, զոր յառաջ քան զյաւիտեանս
սահմանեաց ա՟ծ 'ի փառս մեր· * զոր ոչ ոք 8
յիշխանաց աշխարհիս այսորիկ ծանեաւ· զի
եթէ էր ծանուցեալ՝ ոչ արդեօք զտէրն փա-
ռաց 'ի խաչ հանէին· * Այլ ո՟պ և գրեալ է· 9
զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և 'ի
սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց ա՟ծ
սիրելեաց իւրոց·

Բ.Գ. *Այլ մեզ յայտնեաց ա՟ծ հոգւովն իւրով· 10
զի հոգին զա՟մ քննէ՝ և զխորս ա՟յ· * Զի ո՛ ոք 11
'ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն, եթէ ոչ հո-

գի մարդոյն՝ որ 'ի նմա. Նոյնպէս եւ ոչ զաստուծոյսն
12 ոք գիտէ՝ եթէ ոչ Հոգին ա̃յ. *Այլ
մեք ոչ եթէ զհոգի աշխարհիս առաք՝ այլ
զհոգին որ յա̃յ. զի ծանիցուք զայն՝ որ յա̃յն
13 շնորհեցաւ մեզ. *Եւ զոր խօսիմքս՝ ոչ եթէ
մարդկեղէն ուսմամբ ճարտարութե̃ բանից,
այլ վարդապետութե̃ հոգւոյն ընդ հոգեւորս
14 զհոգեւորսն համեմատեմք. *Քանզի շնչաւոր
մարդ ոչ ընդունի զհոգւոյն ա̃յ՝ զի յիմարութիւն
է նմա. եւ ոչ կարէ գիտել՝ եթէ հոգեպէս
15 քննիցի. *Իսկ հոգեւորն քննէ զա̃մ, եւ
16 ինքն յումեքէ ոչ քննի. *Իսկ արդ՝ ո՞վ գիտաց
զմիտս տ̃ն, որ եւ խրատատու լինիցի նմա,
այլ մեք զմիտս քրիստոսի ունիմք.

ԳԼ. Գ.

1 Եւ ես եղբարք՝ ոչ կարացի խօսել ընդ ձեզ
իբրեւ ընդ հոգեւորս՝ այլ իբրեւ ընդ մարմնաւորս.
2 *Իբրեւ տղայոց 'ի քս̃ կաթն ջամբեցի
ձեզ՝ եւ ոչ կերակուր, զի ոչ եւս կարէիք. Նաեւ
արդ իսկ ոչ կարէք. քանզի դեռ մարմնաւոր
3 էք. *Ուր եւ արդ են իսկ 'ի ձեզ հեռ
եւ նախանձ. ո՞չ ապաքէն մարմնաւոր էք՝ եւ
4 ըստ մարդկան գնայք. *Յորժամ ասէ ոք 'ի
ձէնջ՝ ես պօղոսեան եմ, եւ միւսն՝ թէ ես ապօղոսեան,
ո՞չ մարդիկ էք. իսկ արդ՝ ո՞վ է
5 պօղոս, կամ ո՞վ է ապօղոս. *Պաշտօնեայք՝

որովք հաւատացէքն, և իւրաքանչիւր ո̅պ և
տէր ետ։ * Ես տնկեցի, ապօղոս ջուր ետ, 6
այլ ա̅ծ աճեցոյց։ * Այսուհետև՝ ոչ այն ոք 7
ինչ է՝ որ տնկեացն. և ոչ այն՝ որ ջուրն ետ.
այլ որ աճեցոյցն ա̅ծ։ * Որ տնկեացն և որ ըղ 8
ջուրն ետ՝ մի են. բայց իւրաքանչիւր ոք զիւր
վարձս առնուցու ըստ իւրում վաստակոց։ * Զի 9
ա̅յ գործակից եմք, ա̅յ արդիւն էք, ա̅յ շի֊
նած էք։ * Ըստ շնորհացն ա̅յ՝ որ տուեալ են 10
ինձ, իբրև իմաստուն ճարտարապետ հիմն եդի.
բայց այլ է՝ որ շինէն. այլ իւրաքանչիւր ոք
զգոյշ լիցի՝ թէ ո̅պ շինիցէ։ * Զի հիմն այլ ոք 11
Վ.Զ ոչ կարէ դնել քան զեդեալն՝ որ է յ̅ս ք̅ս։
*Եթէ ոք շինէ ՚ի վ̅ր հիմանս այսորիկ՝ ոսկի 12
արծաթ՝ ականս պատուականս՝ փայտ խոտ ե֊
ղէգն, * իւրաքանչիւր գործն յայտնելոց է. 13
զի օրն ընտրեսցէ, զի հրով յայտնելոց է. * և 14
զիւրաքանչիւր գործն զիա՛րդ և իցէ հուրն
փորձեսցէ։ *Եթէ ուրուք գործն զոր շինեաց՝ 15
կացցէ, վարձս առցէ. և եթէ ուրուք գործն
այրեսցի՝ տուժեսցի, բայց ինքն կեցցէ. այլ
այնպէս՝ ո̅պ թէ ՚ի հուր։ * Ո՞չ գիտէք՝ եթէ 16
տաճար էք ա̅յ՝ և հոգի ա̅յ բնակեալ է ՚ի ձեզ։
*Եթէ ոք զտաճար ա̅յ ապականէ, ապակա֊ 17
նեսցէ զնա ա̅ծ. զի տաճար ա̅յ ս̅բ է, որ էք
դուք։ * Մի՛ ոք զանձն խաբեսցէ. եթէ ոք 18
կամեսցի ՚ի ձէնջ իմաստուն լինել յաշխարհիս
յայսմիկ, յիմար լիցի՝ զի եղիցի իմաստուն։

19 * Զի իմաստութիւն աշխարհիս այսորիկ՝ յիմա-
րութիւն է առաջի ա̃յ . քանզի գրեալ է՝ թէ
որ ըմբռնէ զիմաստունս 'ի խորագիտութեան
20 իւրեանց : * Եւ դարձեալ՝ թէ տէր ճանաչէ
զխորհուրդս իմաստնոց՝ զի են ընդունայն :
21 * Այսուհետեւ մի՛ ոք պարծեսցի 'ի մարդկա-
22 նէ . * Զի ա̃մ ինչ ձեր է . եթէ պօղոս , եթէ
ապօղոս , եթէ կեփաս , եթէ աշխարհ , եթէ
կեանք , եթէ մահ , եթէ որ կան , եթէ
23 հանդերձեալքն . ա̃մ ինչ ձեր է . * դուք ք̃ի ,
քրիստոս աստուծոյ .

ԳԼ. Դ.

1 Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ ,
իբրեւ զպաշտօնեայս ք̃ի՝ և հազարապետս
2 խորհրդոցն ա̃յ : * Արդ՝ խնդիր է 'ի մէջ հա-
զարապետաց՝ եթէ ոք հաւատարիմ գտցի :
3 * Այլ ինձ և այս անարգանք են , եթէ 'ի ձէնջ
դատեցայց՝ կամ բնաւ իսկ 'ի մարդկանէ . նաև
4 զանձն իմ ոչ քննեմ : * Զի ոչինչ գիտեմ զան-
ձին իմոյ . այլ ոչ եթէ այսու արդարանամ ,
5 զի որ քննէն զիս՝ տէր է . * Այսուհետեւ մի՛
յառաջ քան զժամանակն դատիք . մինչեւ ե-
կեսցէ տէր , որ լուսաւոր առնիցէ զգաղտնիս
խաւարի , և յայտնիցէ զխորհուրդս սրտից . և
ապա իւրաքանչիւր գովութիւն եղիցի յա̃յ .
6 * Զայս եղբարք՝ առակեցի յանձն իմ՝ և յա-

պօղոս վ՟ն ձեր. զի 'ի մէնջ ուսջիք՝ մի՛ ինչ ա-
ռաւել քան զգրեալսն իմանալ. զի մի՛ այր քան
զընկեր հպարտանայցէ 'ի վ՟ր ընկերին. *Իսկ 7
արդ ո՞վ է՝ որ քննիցէ զքեզ. զի՞նչ ունիս՝ զոր
ոչ իցէ առեալ. և եթէ առեր՝ զի՞ պարծիս իբրև
զչառեալ. *Արդէն իսկ յագեալ իցէք՝ և ար- 8
դէն մեծացարուք, առանց մեր թագաւորե-
ցիք. և երանի՛ թէ թագաւորէիք՝ զի և մեք
ընդ ձեզ թագաւորէաք. *Ինձ այսպէս թուի՝ 9
եթէ զմեզ զառաքեալս յետնորդս արար ա՟ծ՝
իբրև զմահապարտ. զի տեսիլ եղեաք աշ-
խարհի, և հրեշտակաց և մարդկան. *Մեք 10
յիմարք վ՟ն ք՟ի, և դուք իմաստունք 'ի ք՟ս.
մեք տկարք՝ և դուք հզօրք. դուք փառա-
ւորեալք՝ և մեք անարգք. *Մինչև ցայսօր 11
ժամանակի՝ և քաղցեաք և ծարաւեցաք և
մերկ գնացաք և կռփահարեցաք և անհան-
գիստ եղեաք. *և աշխատեցաք ձեռօք մե- 12
րովք. բամբասէին զմեզ օրհնէաք. հալածէին՝
յանձն առնուաք. *Հայհոյէին՝ աղաչէաք. իբ- 13
րև առականչաւակի եղեաք ա՟մ աշխարհի. ա-
մենեցուն փարելի լինել մինչև ցայժմ. *Ոչ 14
եթէ յամօթ ինչ առնելով զձեզ՝ գրեմ զայս,
այլ իբրև զորդիս սիրելիս խրատեմ. *Թէպէտ 15
և բիւր դաստիարակս ունիցիք 'ի ք՟ս՝ այլ ոչ ե-
թէ բազում հարս. զի 'ի ք՟ս յ՟ս աւետարանաւն
ես ծնայ զձեզ. *Արդ՝ աղաչեմ զձեզ նմա- 16
նողք ինձ եղիջիք՝ (ո՟ր և ես ք՟ի). *Վ՟ն այ- 17

Նորին առաքեցի առ ձեզ զՏիմոթէոս, որ է
իմ որդի սիրելի՝ և հաւատարիմ 'ի Տէր. որ
յիշեցուսցէ ձեզ զճանապարհս իմ, որ 'ի քս̃
յս̃. ո̃պ և ամ̃ուրեք՝ յամ̃ եկեղեցիս ուսու-
18 ցանեմ. * Ո̃պ թէ ես չիցեմ գալոց առ ձեզ՝
19 ոմանք հպարտացան. * Այլ եկից հուպ ընդ-
հուպ՝ եթէ Տէր կամեսցի. և 'ի միտ առից ոչ
20 զբանս հպարտացելոցն, այլ զզօրութիւն. * Զի
ոչ եթէ բանիւք է արքայութիւնն այ̃, այլ զօ-
21 րութբ̃. * Արդ՝ ո̃պ կամիք՝ գաւազանաւ եկից
առ ձեզ, եթէ սիրով հոգւոյն՝ հեզութեան
և արդարութեան և խոնարհութեան.

ԳԼ. Ե.

1 Բնաւ և անուանի իսկ 'ի ձեզ ընդ էր պոռ-
նկութիւն, և այնպիսի պոռնկութիւն՝ որ ոչ
և 'ի հեթանոսս, ո̃պ թէ զկին հօր իւրոյ ու-
2 նել. * Եւ դուք հպարտացեալ էք. և ոչ ա-
ռաւել սգացարուք, զի բարձցի 'ի միջոյ ձեր-
3 մէ՝ որ զգործն զայն գործեաց. * Զի ես թէ-
պէտ մարմնով մեկուսի եմ, սակայն հոգւով
մերձ եմ. բայց արդէն իսկ իբրև 'ի մօտոյ ընտ-
4 րեցի. զայն՝ որ այնպէսն գործեաց. * յանուն
տն̃ մերոյ յս̃ի քս̃ի ժողովել ձեզ 'ի միասին և
իմով հոգւովս զօրութբ̃ն հանդերձ տն̃ մերոյ
5 յս̃ի քս̃ի, * մատնել զայնպիսին սատանայի 'ի
սատակումն մարմնոյ. զի ոգին ապրեսցի յա-

ւուրն տ̃ն մերոյ յ̃ի ք̃ի . * Ոչ բարւոք են 6
պարծանքդ ձեր . ո՞չ գիտէք՝ եթէ փոքր մի
խմոր զա̃մ զանգուածն խմորէ . * Արբեցէք ’ի 7
բաց զհին զխմորն՝ զի եղիջիք նոր զանգուած.
ո̃պ էքդ անխմորք . քանզի զատիկ մեր զե-
նաւ ք̃ս . * Այսուհետեւ արասցուք տօնս. մի ’ի 8
խմորն հին , եւ մի ’ի խմորն չարութեան եւ անզգա-
մութեան . այլ յանխմորս սրբութեան եւ ճշմարտութեան .

ԻԶ * Գրեցի ձեզ ’ի թղթի այդր չխառնակել 9
ընդ պոռնիկս . * Եւ ոչ եթէ ընդ պոռնիկս 10
աշխարհիս այսորիկ՝ կամ ընդ ագահս եւ ընդ
յափշտակողս՝ կամ ընդ կռապաշտս . ապա
թէ ոչ՝ պարտ էիք եւ յաշխարհէ իսկ ելանել
* Բայց արդ՝ գրեցի ձեզ չխառնակել . եթէ 11
ոք եղբայր անուանեալ , կամ պոռնիկ իցէ
կամ կռապաշտ՝ կամ ագահ՝ կամ բամբա-
սող՝ կամ արբեցող՝ կամ յափշտակող , ընդ այն-
պիսումն եւ հաց մի՛ ուտել . * Զի՞ կայ իմ եւ 12
զարտաքինսն դատել . ո՞չ ապաքէն դուք
զներքինսդ դատիցիք . * եւ զարտաքինսն ա̃ծ 13
դատեսցի . բարձէք զչարն ’ի միջոյ ձերմէ .

ԳԼ. Զ.

Իշխէ՞ ոք ’ի ձէնջ՝ եթէ իրք ինչ իցեն ընդ 1
ընկերի իւրում , դատել առաջի անիրաւաց ,
եւ ոչ առաջի ս̃րց . * Եթէ ո՞չ գիտէք՝ զի ս̃րք 2
զաշխարհ դատին . եւ եթէ ձեօք դատի աշ-

խարհ՝ ապա ոչ էք արժանի անարգ ատենից ։
3 * Ո՞չ գիտէք եթէ զհրեշտակս դատիմք, թող
4 թէ զերկրաւորս ։ * Զերկրաւոր ատեանս եթէ
յանձն առնուցուք, զանարգսն եկեղեցւոյ
5 դատաւորս նստուցէք ։ * Առ ամօթոյ ձերոյ
ասեմ․ այնչափ ոչ գոյ ոք իմաստուն 'ի
ձեզ, որ կարիցէ իրաւունս ընտրել 'ի մէջ եղբօր
6 իւրոյ ։ * Այլ եղբայր ընդ եղբօր դատի,
7 և զայն 'ի մէջ անհաւատից ։ * Եւ արդ՝ ամենևին
իսկ պարտութիւն է 'ի ձեզ, զի
դատաստանս իսկ գոն 'ի միջի ձերում․ ընդէ՞ր
ոչ դուք զրկիք, և ոչ դուք առաւել
8 նեղիք ։ * Այլ դուք զրկէք և նեղէք, և այդ՝
9 զեղբարս ևս ։ * Եթէ ո՞չ գիտէք՝ զի անիրաւք
զարքայութիւնն այ̃ ոչ ժառանգեն ։ մի՛
խաբիք՝ ոչ պոռնիկք, ոչ կռապաշտք, ոչ
10 շունք, * ոչ իգացեալք, ոչ արուագէտք, ոչ
գողք, ոչ ագահք, ոչ արբեցողք, ոչ բամբասողք
և ոչ յափշտակողք՝ զարքայութիւնն այ̃
11 ոչ ժառանգեն ։ * Եւ դուք այնպիսիք ոմանք
էիք․ այլ լուացարուք՝ այլ սրբեցարուք՝ այլ
արդարացարուք յանուն տեառն մերոյ յի̃ի ք̃ի,
և 'ի հոգին աստուծոյ մերոյ ։
12 * Ամենայն ինչ ինձ մարթ է՝ այլ ոչ ա̃մ Գ Կ
ինչ օգուտ է․ ա̃մ ինչ ինձ մարթ է, այլ ոչ
եթէ ես ընդ իշխանութ̃բ ուրուք լինիցիմ․
13 * Կերակուր որովայնի, և որովայն կերակրոյ․
այլ ա̃ծ զսա և զն̃ա խափանեսցէ․ բայց մար-

մին ոչ պոռնկութե՟ն՝ այլ տ՟ն, և տէր մարմնոյ.
* Այլ ա՟ծ՝ որ և զտէրն յարոյց, և զմեզ յա- 14
րուսցէ զօրութ՟բ իւրով. * Ո՞չ գիտէք՝ եթէ 15
մարմինք ձեր անդամք են ք՟սի. արդ՝ առ-
եալ զանդամս ք՟սի, առնիցեմք անդամս պոռ-
նկի՞. քաւ լիցի. * Եթէ ո՞չ գիտէք՝ զի որ 16
մերձենայ ՚ի պոռնիկ՝ մի մարմին է. եղիցին,
ասէ, երկոքին ՚ի մարմին մի. * Եւ որ մեր- 17
ձենայ ՚ի տէր՝ մի հոգի է. * փախերուք ՚ի 18
պոռնկութե՟ն. Զա՟մ մեղս՝ զոր և գործէ մարդ՝
արտաքոյ մարմնոյ իւրոյ է. իսկ որ պոռնկին՝
յիւր մարմինն մեղանչէ. * Եւ ո՞չ գիտէք՝ զի 19
մարմինք ձեր տաճար են հոգւոյն սր՟յ՝ որ է
՚ի ձեզ՝ զոր ունիք յա՟յ. և չէք անձանց տէր.
*քանզի գնոց գնեցայք. փառաւոր արարէք 20
զա՟ծ ՚ի մարմինս ձեր և հոգիս որ է յա՟յ.

ԳԼ. Է.

Այլ վ՟ն որոց գրեցիքն առ իս, բարւոք 1
է մարդոյ՝ ՚ի կին մարդ չմերձենալ. * Բայց վ՟ն 2
պոռնկութե՟ն իւրաքանչիւր ոք զիւր կին կալցի.
և իւրաքանչիւր ոք կին զիւր այր կալցի. *Կնոջ՝ 3
այր իւր զպարտսն հատուսցէ. նոյնպէս և կինն՝
առն իւրում. *Զի կին մարմնոյ իւրում ոչ իշ- 4
խէ՝ այլ այրն. նոյնպէս և այրն իւրում մարմնոյ
ոչ իշխէ՝ այլ կինն. * Մի՛ զրկէք զմիմեանս. 5
բայց եթէ ինչ ՚ի միաբանութ՟է առ ժամանակ

մի, զի ուխտիցն պարապիցէք, և դարձեալ 'ի
նոյն դարձջիք, զի մի՛ փորձեսցէ զձեզ սա-
6 տանայ վն՟ անխառնութեն ձերոյ. *Զայս ասեմ
7 ներելով՝ և ոչ հրաման տալով. *քանզի կա-
միմ եթէ ամ՟ մարդ լինէր իբրև զիս. այլ իւ-
րաքանչիւր ոք զիւր շնորհս ունի յայ՟՝ ոմն
8 այսպէս և ոմն այնպէս. *Բայց ամուրեացն և
այրեացն ասեմ, լաւ է նց՟՝ եթէ կայցեն իբրև
9 զիս. *ապա թէ ոչ ունիցին ժուժ՝ ամուսնաս-
ցին. զի լաւ է ամուսնանալ՝ քան զջեռնուլ.
10 *Այլ կանամբեացն պատուիրեմ, ոչ ես՝ այլ
11 Տէր. կնոջ յառնէ մի՛ մեկնել. *Ապա եթէ
մեկնեսցի, անայր մնասցէ՝ կամ անդրէն ընդ-
առն իւրում հաշտեսցի. և առն՝ զկին իւր մի՛
թողուլ. Վ.Զ

12 *Բայց այլոց ես պատուիրեմ, ոչ եթէ Տր՟.
եթէ ոք եղբայր՝ կին ունիցի անհաւատ, և
նմա հաճոյ իցէ բնակել ընդ նմա՝ մի՛ թողցէ
13 զնա. *Եւ կին, որ ունիցի զայր անհաւատ՝ և
նմա կամ իցէ բնակել ընդ նմա՝ մի՛ թողցէ
14 զայրն. *զի սր՟ է այրն անհաւատ կնաւն, և
սր՟ է կինն անհաւատ արամբն. ապա թէ ոչ՝
15 որդիքն ձեր պիղծ են. բայց այժմ սր՟ են. *Ապա
եթէ անհաւատն մեկնեսցի, մեկնեսցի. զի
ոչինչ հարկ 'ի վր՟ կայ եղբօրն կամ քեռն՝ յայն-
պիսի իրս. քանզի 'ի խաղաղութիւն կոչեաց
16 զմեզ ած՟. *Զի՞ գիտես կին դու՝ եթէ զայրն
քո ապրեցուցես. կամ զի՞ գիտես այր դու՝

եթէ զկին քո ապրեցուցանես. *Եթէ ոչ՝ իւ- 17
րաքանչիւր ումեք ո՟պ և բաժանեաց տ՟ր, զիւ-
րաքանչիւր ոք որպէս և կոչեաց ա՟ծ՝ այնպէս
գնասցէ. և այսպէս ընդ ա՟մ եկեղեցիս պա-
տուէր տամ. *Թլփատեալ ոք կոչեցաւ՝ մի՛ 18
ցանկասցի անթլփատուն. յանթլփատութ՟ե ոք
կոչեցաւ՝ մի՛ թլփատեսցի. *զի թլփատու-
թիւն ոչինչ է՝ և անթլփատութիւն ոչինչ. 19
այլ պահպանութիւն ա՟յ պատուիրանացն.
*Բայց իւրաքանչիւր ոք յոր կոչումն կոչեցաւ՝ 20
՚ի նմին կացցէ. *Ծառայ կոչեցար՝ մի՛ փոյթ 21
լիցի քեզ. այլ թէ և կարիցես ազատ լինել՝
քեզ այնպէս լաւ լիցէ. *Զի որ ՚ի տէր կոչե- 22
ցեալ է ծառայն՝ ազատ տ՟ն է. նոյնպէս և որ
ազատն կոչեցեալ է՝ ծառայ ք՟ի է. *Գնոց 23
գնեցայք՝ մի՛ լինիք ծառայք մարդկան. *Իւ-
րաքանչիւր ոք՝ յոր կոչումն կոչեցաւ՝ եղ- 24
բարք. ՚ի նմին կացցէ առաջի աստուծոյ.
ԳԴ *Այլ վ՟ն կուսանաց՝ հրաման ինչ ՚ի տ՟նէ 25
ոչ ունիմ. բայց խրատ տամ՝ ո՟պ ողորմելոյ
ուրուք ՚ի տ՟նէ, հաւատարիմ լինել. *Համա- 26
րիմ՝ թէ այնպէս լաւ իցէ. բայց վ՟ն վե-
տանգին որ ՚ի վ՟ր կայ՝ բարւոք է մարդոյ՝ թէ
այնպէս իցէ. *Կապեալ ես ՚ի կին, մի՛ խնդ- 27
րեր արձակել. արձակեալ ես ՚ի կնոջէ, մի՛
խնդրեր կին. *Զի եթէ ամուսնանայցես՝ ոչ 28
մեղար. և եթէ ամուսնանայցէ կոյսն՝ ոչ մե-
ղաւ, բայց նեղութիւն մարմնոյ ունիցին այն-

29 պիսիքն . այլ ես խնայեցի 'ի ձեզ . *Բայց զայս
ասեմ եղբարք՝ եթէ ժամանակս կարճեալ է
. այսուհետև . զի որ ունիցին կանայս՝ ոպ̃ թէ
30 չունիցին . * և որ լայցեն՝ ոպ̃ թէ ոչ լայցեն .
և որ խնդանն՝ որպէս թէ չխնդայցեն . և որ
31 գնենն՝ ոպ̃ թէ չունիցին . *և որ վարենն զաշ-
խարհս՝ ոպ̃ թէ չվայելիցեն . զի անցեալ է վա-
32 յելչութիւն աշխարհիս այսորիկ . *Այլ կամիմ
զձեզ անհոգս լինել . զի որ անկինն է՝ հոգայ
33 զտ̃ն, թէ ո՛պ̃ հաճոյ լիցի տն̃ . *և որ կանամբին
է , հոգայ զաշխարհիս՝ թէ ո՛պ̃ հաճոյ լիցի կնոջ
34 իւրում . *Եւ ահա մեկնեցան 'ի միմեանց առ-
նակինն և կոյսն . զի կոյսն հոգայ զտ̃ն՝ զի իցէ
ս̃ր հոգւով և մարմնով , և առնակինն հոգայ
զաշխարհիս՝ թէ ո՛պ̃ հաճոյ լիցի առն իւրում:
35 *Այլ զայս վասն ձերոյ օգտի ասեմ . ոչ եթէ
խեղդ ինչ արկանեմ ձեզ , այլ վս̃ պարկեշտութեան՝
և հպատակութեան տն̃ առանց զբաղանաց .
36 *Ապա թէ ոք ամօթ համարեսցի վս̃ կու- Գ.Ջ.
սին իւրոյ՝ եթէ իցէ ելեալ ըստ չափ , և այն-
պէս ինչ պարտ իցէ լինել . զոր կամեսցի ա-
37 րասցէ , ոչ մեղանչէ՝ ամուսնասցի . *Իսկ որ
հաստատեալ է 'ի սրտի իւրում , և վտանգ ինչ
ոչ իցէ նմա , իշխանութիւն ունի 'ի վր̃ կա-
մաց իւրոց . և զայն ընտրեաց 'ի սրտի իւրում
38 պահել զկոյսն իւր , բարւոք առնէ . *Եւ որ ա-
մուսնացուցանէ զկոյսն իւր՝ բարւոք առնէ . և
39 որ ոչ ամուսնացուցանէ՝ լաւ ևս առնէ . *Կին

կապեալ է՝ ցորքան ժամանակս կենդանի է 39
այր նր̃ · ապա եթէ ննջեսցէ այր նր̃ , ազատ է՝
ում կամիցի ամուսնանալ · այլ միայն տերամբ ·
*Բայց երանելի ևս է թէ այնպէս կացցէ ըստ 40
իմում խրատու · ես այսպէս համարիմ, եթէ
և յիս իցէ հոգի աստուծոյ ·

ԳԼ. Ը.

Այլ վ̃ զոհից կռոցն գիտեմք՝ եթէ ամենեքին 1
գիտութիւն ունիմք · գիտութիւն հպարտացուցանէ , այլ սէր շինէ · *Եթէ ոք 2
կամիցի գիտել ինչ , չև ևս գիտաց՝ ո̃պ արժանն էր գիտել · *Բայց որ սիրէ զա̃ծ , նա է 3
տեղեկացեալ ՚ի նմանէ · *Այլ վ̃ կերակրոյն 4
զոհերոյ՝ գիտեմք եթէ ոչինչ իսկ կուռք են յաշխարհի · զի չիք ոք ա̃ծ բաց ՚ի միոյն ·
*Զի թէպէտ և իցեն անուանեալ ա̃ծք՝ եթէ 5
յերկինս և եթէ յերկրի · ո̃պ և են ա̃ծք բազումք՝ և տեարք բազումք · *այլ մեզ մի է 6
ա̃ծ հայր՝ յորմէ ա̃մ, և մեք ՚ի նա , և մի տէր
Կ.Զ յիսուս քրիստոս՝ որով ա̃մ, և մեք նովաւ ·
*Այլ ոչ յամենեսին գիտութիւն է , ո- 7
մանք առ խղճի մտաց մինչև ցայժմ զկռոցն
իբրև զզոհեալ ուտեն · և խիղճ մտացն նոցա՝
քանզի տկար է , պղծի · *Այլ կերակուր զմեզ 8
առաջի ա̃յ ոչ կացուցանէ · ոչ եթէ ուտեմք՝
պակասիմք ինչ , և ոչ եթէ ուտեմք՝ առաւե-

9 *լումք ինչ. *Բայց զգոյշ լերուք՝ գուցէ իշխանութիւնդ ձեր այդ՝ գայթագղութիւն լի-*
10 *նիցի տկարացն. *Եթէ ոք տեսանիցէ զքեզ՝ որ զգիտութիւնդ ունիս՝ բազմեալ 'ի մեհենի՝ ո՞չ ապա խիղճ միաց նր̃, որ տկարուք̃ զգա-*
11 *ծեալ է՝ անդրէն շինիցի ուտել զզոհեալն. *և կորնչիցի տկար եղբայրն 'ի քում գիտութե̃ն,*
12 *վս̃ որոյ քս̃ն մեռաւ. *Եւ այնպէս յանցուցեալ յեղբարս, և զխիղճ միաց տկարացն զայ-*
13 *րացուցեալ, 'ի քս̃ մեղանչէք. *Վ̃ որոյ՝ եթէ կերակուր գայթագղեցուցանէ զեղբայրն իմ, ոչ կերայց միս յաւիտեան, զի մի՛ զեղբայրն իմ գայթագղեցուցից.*

ԳԼ. Թ.

1 *Ո՞չ ապաքէն ազատ եմ, ո՞չ ապաքէն առաքեալ եմ, ո՞չ ապաքէն զտէր մեր յս̃ քս̃ աչօք իմովք տեսի, ո՞չ ապաքէն գործ իմ դուք*
2 *էք 'ի տէր. *Թէպէտ և այլոց չիցեմ առաքեալ՝ այլ դէպ ձեզ եմ. զի կնիք իսկ առա-*
3 *քելու̃ն իմոյ դուք էք 'ի տէր. *Իմ պատաս-*
4 *խանի առ զիս հարցանիցեն՝ այս է. *Միթէ ո՞չ ունիցիմք իշխանութիւն ուտել և ըմպել.*
5 **Միթէ ո՞չ ունիցիմք իշխանութիւն զքոյր կանայս շրջեցուցանել ընդ մեզ. ոպ̃ և այլ ա-*
6 *ռաքեալքն, և եղբարքն տն̃, և կեփաս. *Եթէ միայն ես և բառնաբաս ո՞չ ունիցիմք իշխա-*

նութիւն չգործել ինչ. *Ո՞ք երբէք զին֊ 7
ուորեսցի իւրովք թոշակօք. ո՞ք տնկեսցէ այ֊
գի՝ և ՚ի պտղոյ ն̃ր ոչ ուտիցէ. ո՞ք արածի֊
ցէ խաշն՝ և ՚ի կաթանէ խաշինն ոչ ուտիցէ.
*Միթէ ըստ մարդկութեա՞ն խօսիցիմ զայս. 8
կամ թէ և օրէնքն զայն ո՞չ ասիցեն. *Ի Մով֊ 9
սեսի իսկ յօրէնսն գրեալ է. ոչ կապեսցես ըղ
ցռուկ եզին կալոտւոյ. միթէ զեզա՞նց ինչ
փոյթ էր ա̃յ. *Ո՞չ ապաքէն վասն մեր ասէ. 10
քանզի վ̃ն մեր գրեցաւ. զի յուսով պարտի որ
սերմանէն՝ սերմանել. և որ կասուն՝ յուսով
վայելել. *Եթէ մեք ՚ի ձեզ զհոգեւորն սեր֊ 11
մանեցաք՝ մեծ ի՞նչ է, եթէ ՚ի ձէնջ զմարմ֊
նաւորդ հնձիցեմք. *Եթէ այլք ձեռով իշ֊ 12
խանութ̃դ վայելեն, ո՞չ առաւել ես մեք. այլ
ոչ ՚ի գործ ինչ արկաք զիշխանութիւնս զայս.
բայց ա̃մի համբերեմք. զի մի՛ խափան ինչ լի֊
նիցիմք աւետարանին ք̃ի. *Ո՞չ գիտէք եթէ 13
որ ՚ի տաճարին գործեն, ՚ի տաճարէ անտի
ուտեն. և որ սեղանոյն պաշտօնեայք են, ՚ի
սեղանոյ անտի վայելեն. *Նոյնպէս և տէր 14
հրաման ետ. որոց զաւետարանն աւետարա֊
նեն, յաւետարանէ անտի կեալ. *Բայց ես 15
և ոչ զմի ինչ յայսցանէ արկի ՚ի գործ, և ոչ
գրեցի զայդ՝ զի ինձ այնպ̃ ինչ լինիցի. լաւ
է ինձ մանաւանդ մեռանել, և ոչ զի զպար֊
ծանս իմ ո՞ք ընդունայն համարիցի. *Զի եթէ 16
աւետարանեմ, ոչ ինչ են ինձ պարծանք, քան֊

զի հարկ 'ի վե՛ր կայ. բայց վայ է ինձ, եթէ ոչ
17 աւետարանեմ: *Եթէ կամաւ զայն առնեմ,
վարձք են ինձ. և եթէ ակամայ՝ տնտեսու-
18 թիւն յանձն է ինձ: *Եւ արդ՝ զի՞նչ վարձք
իցեն, եթէ յաւետարանելն ձրի տաց զաւե-
տարանն՝ զի մի՛ զեղծիցիմ ինչ իշխանութե̃ն
19 իմոյ յաւետարանի անդ: *Քանզի ազատ էի
յամէ՝ և ամենեցուն զանձն 'ի ծառայութե
20 կացուցի. զի զբազումս շահեցայց: *Եղէ ընդ-
հրէայսն իբրև զհրէայ, զի զհրէայսն շահե-
21 ցայց: *Եղէ ընդ օրինօք իբրև զայնոսիկ՝ որ
ընդ օրինօքն էին. իբր ոչ եթէ ընդ օրինօքն
էի, այլ զի որ ընդ օրինօքն իցեն՝ և զնո՛ շա-
հեցայց. ընդ անօրէնս եղէ իբրև զանօրէն.
իբր ոչ եթէ անօրէն ինչ էի ա̃յ, այլ ընդ օ-
22 րինօք ք̃ի. զի շահեցայց զանօրէնսն: *Եղէ
ընդ տկարս իբրև զտկար՝ զի զտկարսն շա-
հեցայց. ընդ ա̃մի ա̃մ եղէ. զի թերևս ապ-
23 րեցուցից զոմանս: *Զայս ամենայն առնեմ
վասն աւետարանին, զի կցորդ եղէց նմա:
24 *Ո՞չ գիտէք՝ եթէ որ յասպարիսին ըն- ԴԿ
թանան, ընթանալ ամենեքին ընթանան.
բայց մի՛ ոք առնու զյաղթութիւնն. այնպէս
25 ընթացարուք՝ զի հասանիցէք: *Ամենայն
որ պատերազմի՝ ա̃մի ժուժկալ լինի. ն̃ք զի
զեղծանելի պսակն առնուցուն՝՝ և մեք զա-
26 նեղծութե̃ն: *Արդ՝ ես իսկ այն̃պ ընթանամ,
ոչ ո̃րպ յաներևոյթս այնպէս մրցիմ, ո̃րպ ոչ թէ

զհողմս ինչ կոծելով. *այլ ճնշեմ զմարմինս իմ 27
և հնազանդեցուցանեմ. զի գուցէ որ այլոցն
քարոզեցի՝ ես ինքնն անպիտան գտանիցիմ։

ԳԼ. Ժ.

Ոչ կամիմ, եթէ տգէտ իցէք՝ եղբարք, 1
զի հարքն մեր ամենեքին ընդ ամպովն էին.
և ամենեքին ընդ ծովն անցին. *և ամենեքին 2
՚ի մովսէս մկրտեցան յամպն և ՚ի ծովն. *և ա- 3
մենեքին զնոյն հոգեւոր կերակուրն կերան.
*և ամենեքին զնոյն հոգեւոր ըմպելին արբին, 4
զի ըմպէին ՚ի հոգեւոր վիմէն՝ որ երթայր զհետ
նց̃. և վէմն էր ինքն քս̃. *Այլ ոչ եթէ ընդ 5
բազումս ՚ի նոցանէ հաճեցաւ ա̃ծ. քանզի տա-
պաստ անկան յանապատի անդ. *Եւ այն օ- 6
րինակ լինէր վս̃ մեր. զի մի՛ լիցուք ցան-
կացողք չարեաց, ո̃պ և նոքայն ցանկացան.
*Եւ մի՛ կռապաշտք լինել՝ ո̃պ ոմանք ՚ի 7
նց̃է, ո̃պ և գրեալ է. նստաւ ժողովուրդն ու-
տել և ըմպել՝ և յարեան ՚ի խաղալ. *Եւ մի՛ 8
պոռնկեսցուք. ո̃պ ոմանք ՚ի նց̃է պոռնկեցան,
և անկան ՚ի միում աւուր քսան և չորք հա-
զարք. *Եւ մի՛ փորձեսցուք զք̃ս. ո̃պ ոմանք 9
՚ի նց̃է փորձեցին. և յօձից անտի սատակեցան.
*Եւ մի՛ տրտնջեսցուք. ո̃պ ոմանք ՚ի նոցանէ 10
տրտնջեցին, և կորեան ՚ի սատակչէ անտի.
*Այլ այն ա̃մ օրինակաւ անցանէր ը̃նդ նս̃. 11

բայց գրեցաւ վ̃ մերոյ խրատու, յորս վախճան յաւիտենից եհաս.

12 *Այսուհետեւ որ համարիցի հաստատուն ԴԴ
13 կալ՝ զգուշ լիցի, գուցէ անկանիցի. *Փոր-
ձութիւն 'ի ձեր վ̃ր ոչ է եկեալ բայց 'ի մարդ-
կանէ. այլ հաւատարիմ է ա̃ծ՝ որ ոչ արկցէ
զձեզ 'ի փորձութիւն առաւել քան զկար ձեր.
այլ արասցէ ընդ փորձութե̃ն և զելս՝ զի համ-
14 բերել կարասջիք. *Վ̃ որոյ սիրելիք իմ,
15 փախերուք 'ի կռապաշտութ̃է. *Իբրև ընդ-
իմաստունս խօսիմ. ընտրեցէք ձեզէն զոր ա-
16 սեմս. *Բաժակն օրհնութեան զոր օրհնեմք՝
ո՞չ ապաքէն հաղորդութիւն է արեանն ք̃ի.
հացն զոր բեկանեմք՝ ո՞չ ապաքէն հաղորդու-
17 թիւն է մարմնոյն ք̃ի. *Զի մի հաց՝ մի մար-
մին եմք բազումքս. զի ամենեքին 'ի միոջէ
18 հացէ անտի վայելեմք. *Տեսէք զիէ̃լն ըստ
մարմնոյ. ո՞չ ապաքէն՝ որ ուտեն 'ի զոհիցն՝
19 հաղորդ են սեղանոյն. *Իսկ արդ զի՞նչ. ա-
սեմ, թէ զոհեալն իցէ՞ ինչ. և կամ թէ կուռքն
20 իսկ իցե՞ն ինչ. *Այլ զոր զոհենն հեթանոսք,
դիւաց՝ և ոչ ա̃յ զոհեն. ոչ կամիմ զձեզ հա-
ղորդս դիւաց լինել. քանզի ոչ կարէք զբա-
21 ժակն տ̃ն ըմպել՝ և զբաժակն դիւաց. *և ոչ
կարէք 'ի սեղանոյ տ̃ն վայելել՝ և 'ի սեղանոյ
22 դիւաց. *Եթէ նախանձ ինչ արկանիցեմք տ̃ն.
23 միթէ զօրագո՞յնք իցեմք քան զնա. *Ամե-
նայն ինչ ինձ մարթ է՝ այլ ոչ ա̃մ ինչ օգուտ

է. ա՟մ ինչ ինձ մարթ է, այլ ոչ ա՟մ ինչ շինէ.
*Մի՛ ոք զանձին և եթ խնդրիցէ՝ այլ և զըն- 24
կերին. *Ամենայն ինչ որ 'ի սպանդանոցի 25
վաճառի, կերայք՝ և մի՛ խտրէք վասն խղճի
մտաց. *զի տեառն է երկիր լրիւ իւրով. 26
*Եթէ ոք կոչէ զձեզ յանհաւատից՝ և կամի- 27
ցիք երթալ. զա՟մ ինչ՝ որ առաջի դնիցի, կե-
րայք և մի՛ խտրէք վ՟ն խղճի մտաց. *Ապա 28
եթէ ոք ասասցէ ձեզ՝ թէ այդ զոհեալ է, մի՛
ուտիցէք վ՟ն Ն՟ր՝ որ դուշակն եղև, և վ՟ն խղճի
մտացն. *Այլ զխիղճ մտացն ասեմ ոչ զիւրն, 29
այլ զընկերին. իսկ ընդէ՞ր բնաւ ազատու-
թիւնս իմ դատիցի յայլոյ խղճէն մտաց. *Եթէ 30
ես շնորհօք վայելեմ, ընդէ՞ր հայհոյիցիմ, վ՟ն
որոյ ես գոհանամ. *Արդ՝ եթէ ուտիցէք՝ 31
եթէ ըմպիցէք՝ եթէ զինչ և առնիցէք, զա՟մ
ինչ 'ի փառս ա՟յ արասջիք. *Առանց գայ- 32
թագղութիւն դնելոյ հրէից և հեթանոսաց
լինիջիք՝ և եկեղեցւոյն ա՟յ. *Ո՟պ և ես ամե- 33
նեւին ամենեցուն հաճոյ լինիմ. ոչ խնդրեմ
զանձին օգուտ, այլ զբազմաց՝ զի ապրեսցին.

ԳԼ. ԺԱ.

ԴՋ Նմանողք ինձ եղերուք, ո՟պ և ես ք՟սի. 1
*Գովեմ զձեզ՝ զի զա՟մ ինչ զիմ յիշէք. և ո՟պ 2
աւանդեցի ձեզ՝ զաւանդութիւնսն ունիցիք.
*Կամիմ զի գիտիցէք դուք. եթէ առն ա՟մի 3

գլուխ քս̃ է , և գլուխ կնոջ այր , և գլուխ քս̃ի
4 ա̃ծ . *Ամենայն այր՝ յորժամ յաղօթս կայցէ՝
կամ մարգարէանայցէ՝ և զգլուխն ծածկեալ
5 ունիցի , յամօթ առնէ զգլուխն իւր . *Եւ
ամենայն կին՝ յորժամ յաղօթս կայցէ՝ կամ
մարգարէանայցէ բացաւ գլխով յամօթ առ-
նէ զգլուխն իւր , զի այնպէս համարէ՝ թէ
6 գործեալ իցէ . *Զի եթէ ոչ սքողեսցի կին ,
փոքրեսցէ զհերս իւր . ապա եթէ անպատեհ
է կնոջ փոքրել կամ գերծուլ , սքողեսցի .
7 *Առն մարդոյ չէ պարտ ծածկել զգլուխ իւր ,
զի պատկեր և փառք այ̃ է . իսկ կին փառք
8 առն իւրոյ է . *Զի ոչ եթէ այր ՚ի կնոջէ է ,
9 այլ կին յառնէ . *Քանզի ոչ իսկ հաստա-
10 տեցաւ այր վս̃ կնոջ , այլ կին վս̃ առն . *Վս̃
այնորիկ պարտի կինն շուք դնել գլխոյն վս̃
11 հրեշտակաց . *Բայց ոչ կին առանց առն , և
12 ոչ այր առանց կնոջ ՚ի տէր . *Զի ոպ̃ կին յառնէ՝
13 նոյնպ̃ և այր ՚ի կնոջէ , բայց ամ̃ յայ̃ . *Այլ
դուք ձեզէն տուք զիրաւդ . արժա՞ն է կնոջ
14 մարդոյ հոլանի յաղօթս կալ առաջի այ̃ . *Եւ
ո՞չ բնութիւնն իսկ ուսուցանէ զձեզ , զի այր
15 եթէ գիսաւոր է՝ անարգանք են նմա . *բայց
կին եթէ գիսաւոր է՝ փառք են նմա . զի գէսք
16 փոխանակ զգեստու տուեալ են նմա . *Ապա
թէ ոք կամի հակառակող լինել , մեք չունիմք
այնպիսի սովորութիւն , և ոչ եկեղեցիքն այ̃ . Կ.Զ
17 *Այլ զայս պատուիրեմ , ոչ ոպ̃ թէ գո-

վիցեմ, զի ոչ ՚ի լաւ անդր՝ այլ ՚ի վատթարն
նկրտիք ։ *Նախ՝ յորժամ ՚ի մի վայր ժողովիցիք 18
յեկեղեցին, լսեմ եթէ հերձուածք գոն
՚ի ձեզ · և սակաւ ինչ հաւատացի ։ *Բայց և 19
հերձուածք լինելոց են ՚ի ձեզ · զի որ ընտիրքն
իցեն ՚ի ձեզ՝ երևեսցին ։ *Եւ արդ՝ ՚ի ժողովելն 20
ձեր ՚ի միասին՝ ոչ է տաւնն տ̃ն ձեզ տեղի
հաց ուտելոյ ։ *Զի իւրաքանչիւր ոք զիւր 21
ընթրիս յառաջանայ ուտել , և ոմն քաղցեալ՝
և ոմն արբեալ ։ *Միթէ տունս ո՞չ ունիցիք 22
ուտելոյ կամ ըմպելոյ · եթէ զեկեղեցեա՞ն ա̃յ
արհամարհիցէք , և յամօթ առնէք զչքաւորսն ·
զի՞նչ ասացից · գովեցի՞ց զձեզ · յայդմ ոչ գովեմ ։
*Զի ես ընկալայ ՚ի տ̃նէ՝ զոր և ձեզն աւանդեցի , 23
եթէ տէր յ̃ս ՚ի գիշերին յորում մատնէր , առ հաց ·
*գոհացաւ՝ եբեկ և ասէ · առէք՝ 24
և կերայք · այս է մարմին իմ , որ վ̃ն ձեր
բաշխի · զայս արարէք առ իմոյ յիշատակի ։
*Նոյնպէս և զբաժակն յետ ընթրեայն առ և 25
ասէ · այս բաժակ նոր ուխտ է իմով արեամբ ·
զայս արարէք քանիցս անգամ եթէ ըմպիցէք՝
առ իմոյ յիշատակի ։ *Քանիցս անգամ թէ 26
ուտիցէք զհացս զայս , և զբաժակս ըմպիցէք ,
զմահն տ̃ն պատմեցէք , մինչև եկեսցէ նա ։
*Այսուհետև՝ որ ուտիցէ զհացս , կամ ըմպիցէ 27
զբաժակս տ̃ն անարժանութ̃ , պարտական
եղիցի մարմնոյ և արեան տ̃ն ։ *Փորձեսցէ 28
մարդ զանձն իւր , և ապա ՚ի հացէ անտի կե֊

29 րիցէ, և 'ի բաժակէն արբցէ . * Զի որ ուտէ
և ըմպէ անարժանութ̃՝ դատաստանս անձին
իւրում ուտէ և ըմպէ . զի ոչ խտրէ զմարմինն
30 տ̃ն . * Վ̃ այնորիկ իսկ են 'ի ձեզ բազում հիւանդք և ախտաժէտք . և շատ ևս այն են, որ
31 և ննջեցեալք իսկ իցեն . * Զի եթէ զանձինս
32 քննէաք՝ ապա ոչ դատապարտէաք . * Եւ
եթէ դատիմք՝ 'ի տ̃նէ խրատիմք . զի մի՛ ընդ
33 աշխարհի դատապարտեսցուք . * Այսուհետև
եղբարք՝ յորժամ 'ի մի վայր ժողովիցիք ուտել՝ միմեանց մնասջիք . * Ապա թէ ոք քաղցեալ իցէ՝ 'ի տան իւրում կերիցէ . զի մի՛ 'ի
35 դատապարտութիւն ժողովիցիք . * Բայց զայլ
ինչ յորժամ եկից՝ յայնժամ պատուիրեցից .

ԳԼ. ԺԲ.

1 Այլ վ̃ հոգևորացն եղբարք՝ ոչ կամիմ Եկ
2 եթէ տգէտք իցէք . * Գիտէք իսկ՝ զի մինչ
հեթանոսքն էիք, առ կուռսն անմռունչս ո՛ր̃
3 երթայիք և գայիք . * Վ̃ որոյ ցուցանեմ ձեզ .
զի ոչ ոք հոգւով ա̃յ խօսի՝ և ասիցէ թէ նզովեալ յ̃ս . և ոչ ոք կարէ ասել՝ տ̃ր յ̃ս, եթէ
4 ոչ հոգւովն սրբով . * Թէպէտ և բաժինք շնորհաց են՝ այլ հոգի նոյն է . * եթէ բաժինք
6 պաշտամանց են, այլ տ̃ր նոյն է . * Եթէ բաժինք յաջողութեանց են, այլ ա̃ծ նոյն է . որ
7 յաջողէ զա̃մ յա̃մի . * Բայց իւրաքանչիւր ու-

մեք տուեալ է յայտնութիւն հոգւոյն՝ առ
իւրաքանչիւր օգուտ. * Ումեմն ՚ի հոգւոյն 8
տուեալ է բան իմաստութե՟ն. այլում բան գիտուե՟ն
ըստ նմին հոգւոյ. * միւսումն հաւատք 9
նովին հոգւով. այլում շնորհք բժշկուե՟ց նովին
հոգւով. * այլում յաջողութիւնք զօրուե՟ց. 10
այլում մարգարէութիւն. այլում ընտրութիւն
հոգւոց. այլում ազգք լեզուաց. այլում թարգմանութիւն
լեզուաց. * Այլ զայս ա՟մ յաջողէ 11
մի եւ նոյն հոգի, և բաժանէ իւրաքանչիւր
որպէս և կամի.

ԺԲ * Ո՟պ մարմին մի է, և անդամս բազումս 12
ունի. և ա՟մ բազում անդամք մարմնոյն՝ մի
մարմին է. նոյն՟պ և ք՟ս. * Քանզի միով հոգւով 13
մեք ա՟մքին ՚ի մի մարմին մկրտեցաք.
եթէ հրեայք, եթէ հեթանոսք, եթէ ծառայք,
եթէ ազատք, ա՟մքին զմի հոգի արբաք. * Քանզի մարմին ոչ մի անդամ է, այլ 14
բազում. * Եթէ ասիցէ ոտն, զի չեմ ձեռն՝ 15
չեմ ՚ի մարմնոյ անտի, ո՞չ այնու չիցէ ՚ի մարմնոյ
անտի. * Եւ եթէ ասիցէ ունկն, վ՟ն զի չեմ 16
ակն՝ չեմ ՚ի մարմնոյ անտի, ո՞չ այնու չիցէ ՚ի
մարմնոյ անտի. * Եթէ ա՟մ մարմին ակն էր՝ 17
ո՞ւր էր ունկն. և եթէ ա՟մ լսելիք էր՝ ո՞ւր էին
հոտոտելիք. * Բայց արդ՝ ա՟ծ եդ զանդամսն՝ 18
զմի մի իւրաքանչիւր ՚ի ն՟ցնէ ՚ի մարմնին՝ ո՟պ
և կամեցաւ. * Ապա թէ էր ա՟մ մի անդամ, 19
ո՞ւր էր մարմին. * Բայց արդ՝ անդամք բա- 20

զումք են , և մարմին մի . 21 * Ոչ կարէ ակն ասել ցձեռն , թէ չես ինձ պիտոյ , և կամ դարձեալ գլուխ ցոտս՝ թէ չէք ինձ պիտոյ . 22 * Այլ առաւել որ թուին անդամք մարմնոյն թէ տկարագոյնք իցեն, կարևորք են . 23 * և որ թուինն թէ անարգագոյնք իցեն մարմնոյն , այնց առաւելագոյն պատիւ առնեմք . և ամօթոյքն մեր առաւել ևս պարկեշտութիւն ունին . 24 * Եւ պարկեշտիցն մերոց չէ ինչ պիտոյ . քանզի ա̃ծ խառնեաց զմարմինն , և նուաղին առաւել ևս պատիւ ետ . 25 * զի մի՛ իցեն հերձուածք 'ի մարմնի անդ , այլ զի նոյնք միմեանց հոգասցեն անդամքն . 26 * Եթէ վշտանայ ինչ մի անդամն , վշտանան ա̃մ անդամքն ընդ նմա . և եթէ փառաւորի մի անդամն , խնդան ա̃մ անդամքն ընդ նմա . 27 * Այլ դուք մարմին քրիստոսի էք՝ և անդամք յանդամոյ նորա . ԿԶ

28 * Եւ զորս եդ ա̃ծ յեկեղեցւոջ՝ այս են . նախ՝ զառաքեալս , երկրորդ՝ զմարգարէս , երրորդ՝ զվարդապետս , ապա զօրութիւնս , ապա շնորհս բժշկուե̃ց , օգնութիւնս՝ վարիչս , ազգս լեզուաց , թարգմանութիւնս լեզուաց . 29 * Միթէ ամենեքին առաքեա՞լք իցեն . միթէ ամենեքին մարգարէ՞ք իցեն . միթէ ամենեքին վարդապե՞տք իցեն . միթէ ամենեքին զօրութի՞ւնք իցեն . 30 * միթէ ամենեքին շնորհս բժշկուե̃ ունիցին . միթէ ամենեքին 'ի լեզո՞ւս խօսիցին . միթէ ամենեքին թարգ-

մանիցե՞ն . *Բայց նախանձաւոր լերուք շնորհացն , 31
որ լաւն են . Այլ ես առաւել ևս
ճանապարհ ցուցանեմ ձեզ .

Գլ. ԺԳ.

ԿԶ Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և ըզ 1
հրեշտակաց՝ և սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրև
զպղինձ , որ հնչէ . կամ իբրև զծնծղայս՝ որ
ղօղանջեն . *Եւ եթէ ունիցիմ մարգարէութիւն , 2
և գիտիցեմ զխորհուրդս ա̃մ՝ և զա̃մ
գիտութիւն . և եթէ ունիցիմ զա̃մ հաւատս՝
մինչև զլերինս փոփոխելոյ , և սէր ոչ ունիցիմ,
ոչինչ եմ . *Եւ եթէ ջամբիցեմ զա̃մ ինչս իմ 3
աղքատաց , և մատնիցեմ զմարմինս իմ յայրումն ,
և սէր ոչ ունիցիմ, ոչինչ օգտիմ . *Սէր 4
երկայնամիտ է՝ քաղցրանայ . սէր ոչ նախանձի ,
ոչ ամբարհաւաճէ , ոչ հպարտանայ . *ոչ 5
յանդգնի , ոչ խնդրէ զիւր , ոչ գրգռի , ոչ
խորհի զչար . *ոչ խնդայ ընդ անիրաւութիւն՝ 6
այլ խնդայ ընդ ստուգութիւն . *ա̃մի տանէ . 7
ա̃մի հաւատայ . ամենեւին յուսայ . ա̃մի համբերէ .
*Սէր ոչ երբէք անկանի . եթէ մարգարէութիւնք 8
են՝ խափանեսցին . եթէ լեզուք՝
լռեսցեն . եթէ գիտութիւն խափանեսցին .
*Քանզի փոքր 'ի շատէ գիտեմք , և փոքր 'ի 9
շատէ մարգարէանամք . *Այլ յորժամ եկեսցէ 10
կատարումն , փոքր 'ի շատէս խափանեսցի .

11 *Մինչ տղայ էի՝ իբրև զտղայ խօսէի, իբ- ԶԿ
րև զտղայ խորհէի, իբրև զտղայ համարէի.
այլ յորժամ եղէ այր՝ զտղայութեանն 'ի բաց
12 խափանեցի. *Այժմ տեսանեմք իբրև ընդ-
հայելի օրինակաւ, այլ յայնժամ դէմ յան-
դիման. այժմ խելամուտ եմ փոքր 'ի շատէ,
այլ յայնժամ գիտացից՝ որպէս և նոյն ծանեաւ
13 զիս. *Բայց արդ՝ մնան հաւատք՝ յոյս՝ սէր,
սոքա երեքեան. և մեծ քան զսոսա սէր է.

ԳԼ. ԺԴ.

1 Զհետ երթայք սիրոյ, և նախանձաւոր
լերուք հոգևորայն՝ առաւել զի և դուք
2 մարգարէանայցէք. *Զի որ խօսի 'ի լեզուս՝ ոչ
ընդ մարդկան խօսի, այլ ընդ ա̃յ. զի ոչ ոք է
3 որ լսէ, բայց հոգւով խօսի խորհուրդս. *Իսկ
որ մարգարէանայն, մարդկան խօսի շինութիւն
4 և մխիթարութիւն և սփոփութիւն. *Որ խօսի
'ի լեզուս՝ զանձն իւր շինէ. և որ մարգարէա-
5 նայն՝ զեկեղեցին շինէ. *Կամիմ զի ամենեքին
դուք 'ի լեզուս խօսիցիք՝ առաւել զի մարգա-
րէանայցէք. զի լաւ է որ մարգարէանայն՝ քան
զայն՝ որ 'ի լեզուս խօսիցի. բայց եթէ թարգ-
մանիցէ՝ զի եկեղեցին շինութիւն առնուցու. Վ.Զ
6 *Բայց այժմ եղբարք՝ եթէ եկից առ ձեզ
'ի լեզուս խօսելով. զինչ օգուտ լինիցիմ ձեզ՝
եթէ ոչ խօսիցիմ, կամ յայտնութե̃բ, կամ գի-

տութ̃, կամ մարգարէութ̃, կամ վարդապետութ̃. *Այնպ̃՝ որ̃ անշունչքն ձայն տայցեն, 7
եթէ փող և եթէ քնար. զի եթէ ընտրութիւն
ինչ բարբառոյն չտանիցեն, զիա՞րդ
ճանաչիցի փողոյն հարկանել՝ կամ քնարին
հնչել. *Քանզի եթէ խառնաձայն արձակիցի 8
փողն, ո՞վ պատրաստեսցի 'ի պատերազմ.
*Նոյնպ̃ և դուք՝ եթէ լեզուօք ոչ նշանակեսցէք 9
զբանն՝ զիա՞րդ ճանաչիցի խօսքն. զի
լինիցիք այնուհետև իբրև ընդ օդս խօսեցեալք. *Զի այնչափ ազգք ձայնից են յաշխարհի, 10
և ոչինչ անձայն է. *Իսկ արդ՝ եթէ 11
ոչ գիտիցեմ զզօրութիւն ձայնին, լինիցիմ
այնմ, որ խօսիցին ընդ իս՝ խուժ, և նա որ
խօսիցին ընդ իս՝ դուժ. *Նոյնպէս և դուք՝ 12
քանզի նախանձորդք էք հոգեւորացն, վասն
շինուածոյ եկեղեցւոյն խնդրեցէք՝ զի առաւել
ևս իցէք. *Վ̃ որոյ որ խօսին 'ի լեզուս, աղօթս 13
արասցէ՝ զի և թարգմանիցէ. *Եթէ 14
կամ յաղօթս լեզուաւ՝ հոգին իմ կայ յաղօթս.
այլ միտք իմ անպտուղ են. *Իսկ արդ՝ զի՞նչ 15
իցէ. կացից յաղօթս հոգւով, կացից յաղօթս
և մտօք. սաղմոս ասացից հոգւով, սաղմոս ասացից
և մտօք. *Ապա թէ ոչ՝ եթէ օրհնիցես 16
հոգւով, որ կայցէ 'ի տեղւոջ տգիտին,
զիա՞րդ ասիցէ 'ի քում գոհութեան՝ զամէնն. քանզի
զոր ասեսն՝ նա ոչ գիտէ. *Զի դու բարւոք 17
գոհանաս, այլ ընկերն ոչ շինի.

18 *Գոհանամ զա̃յ՝ վ̃ի ամենեցուն ձեր՝ առաւել ՁԲ
19 լեզուաւ խօսիմ· *Այլ 'ի մէջ եկեղեցւոյ
կամիմ բանս հինգ մտօք խօսել՝ զի և
զայլս խրատիցեմ, քան բազում բանս լեզուաւ·
20 *Եղբարք, մի՛ լինիք տղայք մտօք,
այլ 'ի չարեաց տղայացարուք, և մտօք կատարեալ
21 լինիջիք։ *Քանզի և յօրէնսն գրեալ
է, եթէ յօտար լեզուս՝ և 'ի շրթունս
օտարոտիս խօսեցայց ընդ ժողովրդեանդ ընդ
այդմիկ, սակայն և ոչ այնպէս լուիցեն ինձ՝
22 ասէ տէր· *Ապա ուրեմն լեզուք նշանակի
վ̃ն են՝ ոչ հաւատացելոց՝ այլ անհաւատից·
իսկ մարգարէութիւն՝ ոչ անհաւատից՝ այլ
23 հաւատացելոց· *Ապա եթէ գայցէ եկեղեցին
ա̃մ 'ի մի վայր, և ամենեքին 'ի լեզուս
խօսիցին, և մտանիցեն անդր ագէտք և անհաւատք·
24 ո՞չ ասիցեն՝ եթէ զի՛ մոլիքդ· *Իսկ
եթէ ամենեքին մարգարէանայցեն, և մտանիցէ
ոք անդր անհաւատ՝ կամ ագէտ, յանդիմանի
յամենեցունց, և քննի յամենեցունց·
25 *և գաղտնիք սրտի նր̃ յայտնի լինին· և ապա
անկեալ 'ի վ̃ր երեսաց երկիրպագանիցէ ա̃յ,
և խոստովան լինիցի՝ թէ արդարև ա̃ծ է 'ի ձեզ։
26 *Եւ արդ՝ զի՞նչ իցէ եղբարք· յորժամ ՁԳ
'ի մի վայր ժողովիցիք, իւրաքանչիւր ոք 'ի
ձէնջ եթէ սաղմոս ունիցի, եթէ վարդապետութիւն
ունիցի, եթէ յայտնութիւն ունիցի,
եթէ լեզուս ունիցի, եթէ թարգմանութիւն

ունիցի, ա՟մ ՚ի շինուած լինիցի․ *Եթէ ՚ի լեզուս 27
ոք խօսեսցի՝ երկուք, և եթէ ևս աւելի՝ ե-
րեք, և ապա մի ըստ միոջէ․ և մինն թարգ-
մանիցէ․ *Ապա եթէ չիցէ ոք՝ որ թարգմա- 28
նիցէ, լո՛ւռ լիցի յեկեղեցւոջն․ ընդ միտս իւր՝
և ընդ ա՟յ խօսեսցի․ *Բայց մարգարէք երկու 29
կամ երեք խօսեսցին, և այլքն քննեսցեն․ *Ա- 30
պա եթէ այլ ումեք՝ որ նստիցին՝ յայտնեսցի,
առաջինն լռեսցէ․ *Քանզի կարող էք ամե- 31
նեքին մի ըստ միոջէ մարգարէանալ․ զի ամե-
նեքեան ուսանիցին․ և ամենեքեան մխիթա-
րեսցին․ *Քանզի և հոգիք իսկ մարգարէից՝ 32
մարգարէից հնազանդ են․ *Զի ոչ եթէ խռո- 33
վու՟ն է ա՟ծ՝ այլ խաղաղու՟ն, ո՟ր յա՟մ եկեղեցիս
ս՟րց․ *Կանայք՝ յա՟մ եկեղեցիս լուռ լիցին․ զի 34
ոչ հրամայի ն՟ց խօսել՝ այլ հնազանդ լինել․
ո՟ր և օրէնքն իսկ ասեն․ *Ապա եթէ ուսա- 35
նել ինչ կամիցին, ՚ի տան զայրս իւրեանց հար-
ցանիցեն․ քանզի անպատեհ է կնոջ մարդոյ
յեկեղեցւոջ խօսել․ *Եթէ ՚ի ձէ՛նջ բանն ա՟յ 36
ել․ և կամ առ ձե՛զ միայն եհաս․ *Իսկ եթէ 37
ոք համարիցի մարգարէ լինել՝ կամ հոգևոր,
գիտասցէ՝ զոր գրեցից առ ձեզ, թէ տ՟ն պատո-
ւիրանք են․ *Ապա թէ ոք տգիտանայցէ, 38
տգիտասցի․ *Այսուհետև եղբարք, նա- 39
խանձեցարուք մարգարէանալ՝ և զխօսելն լե-
զուօք մի՛ արգելուք․ *Եւ ամենայն ինչ ձեր 40
Կ.Ջ. պարկեշտութեամբ և ըստ կարգի լինիցի․

ԳԼ. ԺԵ.

1 Ցուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն
իմ, զոր աւետարանեցի ձեզ. զոր և ընկալա-
2 րուք, ՚յոր և հաստատեալ էք. * որով և ապ-
րեցայքն. որով բանիւ աւետարանեցի ձեզ՝
թէ ունիցիք. բայց եթէ ՚ի զուր ինչ հաւա-
3 տայցէք. * Զի ես ձեզ զայն նախ աւանդեցի՝
զոր և եսն ընկալայ. թէ և քս̃ մեռաւ վս̃ մե-
4 ղաց մերոց՝ ըստ գրոց՝ * և զի թաղեցաւ, թէ
5 և յարեաւ յաւուր երրորդի՝ ըստ գրոց. * և
թէ երեւեցաւ կեփայի, և ապա երկոտասա-
6 նիցն. * ապա երեւեցաւ աւելի ես քան զհինգ-
հարիւր եղբարց միանգամայն. յորոց բազումք
7 կան մինչև ցայժմ, և ոմանք ննջեցին. * Եւ
ապա երեւեցաւ յակոբայ, ապա առաքելոցն
8 ամենեցուն. * Հուսկ յետոյ քան զամենեսին
9 իբրև անարգի միոջ երեւեցաւ և ինձ. * Զի
ես իսկ եմ տրուպն առաքելոց. որ չեմ իսկ
արժանի թէ կոչեցայց առաքեալ. զի հալա-
10 ծեցի զեկեղեցին այ̃. * Այլ շնորհօքն այ̃ եմ՝
զինչ և իցեմ. և շնորհք նորա որ յիս՝ ընդու-
նայն ինչ ոչ եղեն. այլ առաւել քան զնոսա
ամենեսին վաստակեցի. և ոչ եթէ ես՝ այլ
11 շնորհքն այ̃՝ որ ընդ իս. * Արդ՝ եթէ ես և
եթէ նոքա՝ այսպէս քարոզեցաք, և դուք
12 այսպէս հաւատացիք. * Արդ եթէ քս̃ քա-

րոզի՝ թէ 'ի մեռելոց յարուցեալ է. զիա՞րդ
ասեն ոմանք 'ի ձէնջ եթէ յարութիւն մեռե-
լոց չիք։ *Եթէ յարութիւն մեռելոց չիք, 13
ապա և քս՟ չէ յարուցեալ։ *Եւ եթէ քս՟ չիցէ 14
յարուցեալ, ընդունայն է քարոզութիւնն մեր.
ընդունայն են և հաւատքն ձեր։ *և գտանի- 15
ցիմք սուտ վկայք այ՟, զի վկայեցաք զայ՟՝ թէ
յարոյց զքս՟. զոր ոչն արդեօք յարոյց՝ եթէ
մեռեալք ոչ յառնիցեն։ *Իսկ եթէ մեռեալք 16
ոչ յառնեն՝ ապա և քս՟ չէ յարուցեալ։ *Եւ 17
եթէ քս՟ չիցէ յարուցեալ, ընդունայն են հա-
ւատքն ձեր. և տակաւին 'ի նմին մեղս կայ-
ցէք։ *Իսկ արդ՝ որ ննջեցինն 'ի քս՟, կորեա՞ն 18
արդեօք։ *Եթէ այսու կենօքս միայն յու- 19
սացեալ եմք 'ի քրիստոս, ողորմելի եմք քան
ԶԴ զամենայն մարդիկ։

*Այլ արդ՝ քս՟ յարուցեալ է 'ի մեռելոց՝ 20
առաջին պտուղ ննջեցելոց. *քանզի մարդով 21
եղև մահ, և մարդով յարութիւն մեռելոց։
*Որպ՟ ադամաւն ամենեքին մեռանին, նոյնպ՟ 22
և քս՟իւ ամենեքեան կենդանասցին։ *Իւրա- 23
քանչիւր յիւրում կարգի. նախ քս՟, և ապա
քրիստոսեանք 'ի գալստեանն նր՟։ *Եւ ապա 24
կատարած, յորժամ տացէ 'ի ձեռս զթագա-
ւորութիւնն այ՟ և հօր. յորժամ խափանեսցէ
զամ՟ իշխանութիւնս և զամ՟ պետութիւն և ըզ
զօրութիւն։ *Զի պարտ է նմա թագաւորել՝ 25
մինչև դիցէ զամ՟ թշնամիս 'ի ներքոյ ոտից

26 իւրոց ․ *Յետին թշնամին խափանի՝ մահ ․ և
զա̃մ ինչ հնազանդ արար ՚ի ներքոյ ոտից ն̃ր ։
27 *Այլ յորժամ ասիցէ ․ թէ հնազանդեալ է
նմա ա̃մ, յայտ է՝ թէ բաց յայնմանէ՝ որ հնազանդեցոյց
28 նմա զա̃մ ։ *Այլ յորժամ հնազանդեսցի
նմա ա̃մ՝ յայնժամ և ինքն որդի
հնազանդեսցի այնմ, որ հնազանդեցոյց նմա
29 զա̃մ ։ զի եղիցի ա̃ծ ա̃մ յա̃մ ․ *Ապա թէ
ոչ՝ զի՞նչ գործիցեն որ մկրտիցինն վ̃ մեռելոց
, եթէ արդարև մեռեալք ոչ յառնիցեն ․
30 ընդէ՞ր իսկ բնաւ մկրտին վ̃ ն̃ց ․ *ընդէ՞ր և
31 մեք ճգնիմք յա̃մ ժամ, *և հանապազ մեռանիմք
․ ՚ի պարծանս ձեր երդնում եղբարք՝
զոր ունիմ ՚ի քրիստոս յիսուս ՚ի տէր մեր ։
32 *Եթէ վասն մարդոյ ՚ի գազանամարտի լեալ
էի յեփեսոս , զի՞նչ օգուտ էր ինձ , եթէ
մեռեալք ոչ յառնեն ․ կերիցուք արբցուք՝
33 քանզի վաղիւ մեռանիմք ։ *Մի՛ խաբիք ․ ապականեն
զբարս քաղցունս բանք չարք ։
34 *Սթափեցարուք արդարուք̃՝ և մի՛ մեղանչէք ․ զի զգիտութիւն ա̃յ ոչ ունին ոմանք ․ ԶԵ
35 առ ամօթոյ ձերոյ ասեմ ։ *Այլ ասիցէ ոք ․
զիա՞րդ յառնեն մեռեալք՝ կամ որո՞վ մարմնով
36 գայցեն ։ *Ա՛նմիտ՝ դու զոր սերմանես,
37 ոչ կենդանանայ՝ եթէ ոչ մեռանիցի ։ *Եւ
զոր սերմանես , ոչ զնոյն մարմին զոր ծնանելոցն
իցէ՝ սերմանես , այլ հատ մերկ ․ եթէ
38 ցորենոյ իցէ՝ և եթէ այլոց սերմանեաց ․ *Եւ

ա՟ծ տայ նմա մարմին՝ ո՟պ և կամի . և իւրա֊
քանչիւր սերմանեացն զիւր մարմին ։ * Ոչ ա֊ 39
մենայն մարմին նոյն մարմին է , այլ՝ այլ մար֊
մին է մարդկան , և այլ մարմին անասնոց , այլ
մարմին թռչնոց՝ և այլ մարմին ձկանց ։ * Եւ 40
մարմինք երկնաւորք՝ և մարմինք երկրա֊
ւորք . այլ՝ այլ փառք երկնաւորաց՝ և այլ
փառք երկրաւորաց ։ * Այլ փառք արեգա֊ 41
կան , և այլ փառք լուսնի , և այլ փառք աս֊
տեղաց . և աստղ քան զաստղ առաւել է փա֊
ռօք ։ * Նոյնպէս և յարութիւն մեռելոց . 42
սերմանի ապականուբ՟՝ և յառնէ առանց ա֊
պականու՟ն . * սերմանի անարգուբ՟՝ և յառնէ 43
փառօք . սերմանի տկարուբ՟՝ և յառնէ զօ֊
րուբ՟ . * սերմանի մարմին շնչաւոր՝ և յառնէ 44
մարմին հոգեւոր . եթէ գոյ մարմին շնչաւոր ,
գոյ և հոգեւոր ։ * Ո՟պ և գրեալ է , եղև մարդն 45
առաջին ադամ ՚ի շունչ կենդանի . երկրորդ
ադամ՚՚ի հոգի կենդանարար ։ * Բայց ոչ նախ 46
հոգեւորն , այլ շնչաւորն . և ապա հոգեւորն ։
* Առաջին մարդն յերկրէ՝ հողեղէն . իսկ երկ֊ 47
րորդ մարդն՝ տէր յերկնից ։ * Ո՟պ հողեղէնն , 48
նոյն՟պ և հողեղէնքս , և ո՟պ երկնաւորն՝ նոյն՟պ
և երկնաւորքն ։ * Եւ ո՟պ զգեցաք զպատկեր հո֊ 49
ղեղինին . զգեցցուք և զպատկեր երկնաւորին ։
ՁԶ * Բայց զայս ասեմ եղբարք՝ եթէ մարմին 50
և արիւն զարքայութիւնն ա՟յ ժառանգել ոչ
կարեն . և ոչ ապականութիւն զանապակա֊

51 նութիւն ժառանգէ. * Արդ՝ խորհուրդ մի
ասեմ ձեզ. ամենեքեան ննջեսցուք, այլ ոչ
52 ամենեքեան նորոգեսցուք. * Յանկարծակի
յական թօթափել՝ 'ի փող յետին. քանզի փող
հարկանի, և մեռեալք յարիցեն առանց ապականուե՟,
53 և մեք նորոգեսցուք. * Զի պարտ
է ապականութն՟ս այսմիկ զգենուլ զանապականութիւն,
և մահկանացուիս այսմիկ զգենուլ
54 զանմահութիւն. * Այլ յորժամ մահկանացուս
այս զգեցցի զանմահութիւն. և ապականութիւնս
զանապականութիւն, յայնժամ
եղիցի բանն՝ որ գրեցաւ. եթէ ընկլաւ մահ
55 'ի յաղթութիւն. * Ո՞ւր է մահ յաղթութիւն
56 քո. ո՞ւր դժոխք խայթոց քո. * Խայթոց մահու
մեղք են, և զօրութիւն մեղաց օրէնք.
57 * Այլ շնորհք այ՟՝ որ ետ մեզ զյաղթութիւն
'ի ձեռն տեառն մերոյ յիսուսի քրիստոսի.
58 * Այսուհետև եղբարք իմ սիրելիք, ԱԴ
հաստատուն եղերուք, անշարժ կացէք, առաւել
լերուք 'ի գործս տեառն յամենայն
ժամ. գիտասջիք՝ զի վաստակքն ձեր ոչ են
ընդունայն առաջի տեառն.

ԳԼ. ԺԶ.

1 Այլ վ՟ն հաշուին, որ 'ի սուրբսն է, որ՟պ
պատուէր ետու եկեղեցեացն գաղատացւոց,
2 նոյն՟պ և դուք առնիջիք. * Ըստ իւրաքան-

չիւր միաշաբաթուցն իւրաքանչիւրոք 'ի ձէնջ
անձին իւրում գանձեսցէ՝ որ ինչ և յաջողեսցի ։
* Զի մի՛ յորժամ գայցեմ, յայնժամ հաչուք 3
լինիցին ։ այլ յորժամ եկից՝ զոր միանգամ
ընտրեսցէք թղթովք, զն̃ա առաքեցից
տանել զշնորհսն ձեր յեէմ ։ * Ապա թէ արժա՛ն 4
իցէ և ինձ երթալ՝ ընդ իս երթիցեն ։
* Այլ եկից առ ձեզ՝ յորժամ 'ի մակեդոնիա 5
անցանիցեմ ։ բայց իբրև շրջեցայց 'ի մակեդոնիա,
* թէ դէպ լիցի, առ ձեզ մնացից՝ 6
և կամ ձմեռեցից ․ զի և դուք յուղարկիցէք
զիս՝ ուր և երթալոցն եմ ։ * Զի ոչ կամիմ ըզ 7
ձեզ այժմ 'ի հարևանցի տեսանել ․ այլ ունիմ
ժամանակ ինչ առնել առ ձեզ, եթէ տէր
հրամայեսցէ ։ * Բայց այժմ լինիմ յեփեսոս 8
մինչև ցպենտեկոստէ ․ * զի դուռն բացեալ 9
է ինձ մեծ և կարևոր, և հակառակորդք բազում
են ։ * Արդ՝ եթէ եկեսցէ տիմոթէոս՝ 10
տեսջիք զի աներկիւղ լինիցի առ ձեզ ․
զի զգործ տեառն գործէ՝ որպէս և ես ․ * մի՛ 11
ո՛ք զնա անգոսնեսցէ ։ և յուղարկեսջիք զնա
խաղաղութեամբ՝ զի եկեսցէ առ իս ․ քանզի
ակն ունիմ նմա եղբարբք հանդերձ ։

ԱՋ * Այլ վասն ապօղոսի եղբօր՝ յոյժ աղաչեցի 12
զնա՝ զի եկեսցէ առ ձեզ եղբարբք հանդերձ ․
և արդեօք ոչ էին կամք՝ զի այժմ
եկեսցէ ․ այլ եկեսցէ յորժամ և պարապեսցէ ։
* Հսկեցէք՝ հաստատուն կացէք 'ի հաւատս, 13

14 ժրացարուք զօրացարուք. *Ամենայն ինչ
15 ձեր սիրով լինիցի. *Աղաչեմ զձեզ եղբարք՝
գիտէք զտունն ստեփանեայ և փորտունատ-
եայ՝ որ են պտուղ աքայեցւոց, և 'ի պաշտօն
16 սրբոցն կարգեցին զանձինս. *զի և դուք
հնազանդ լինիջիք այնպիսեացն. և ա̃մի՝ որ
17 գործակից իցէ և վաստակակից. *Ուրախ
եմ 'ի գալ ստեփանեայ և փորտունատեայ և
աքայիկոսի, զի զձեր պակասութիւնդ նոքա
18 լցին. *քանզի հանգուցին զոգի իմ՝ և զձեր.
19 արդ՝ ծանիջիք զայնպիսիսն. *Ողջոյն տան
ձեզ եկեղեցիքն ասիացւոց. ողջոյն շատ տան
ձեզ 'ի տէր՝ ակուիղաս, և պրիսկիղա՝ հան-
20 դերձ առանին եկեղեցեաւն իւրեանց. *Ող-
ջոյն տան ձեզ եղբարք ամենեքեան. Ողջոյն
21 տուք միմեանց 'ի համբոյր սրբութեան. *Ող-
22 ջոյնդ այդ՝ իմով ձեռօքն պօղոսի է. *Եթէ ոք
ոչ սիրէ զտէր յիսուս, եղիցի նզովեալ՝ մա-
23 րանաթայ. *Շնորհք տեառն մերոյ յիսուսի
24 քրիստոսի ընդ ձեզ. *Եւ սէրն իմ ընդ ա-
մենեսին ձեզ 'ի քրիստոս յիսուս. ամէն.

Առ կորնթացիս առաջին թուղթն՝ գրեցաւ 'ի փիլիպեայ, 'ի ձեռն ստեփանեայ և փորտունատեայ և աքայիկոսի:

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼ. Ա.

Բկ ՊՕՂՈՍ առաքեալ յս̃ի քս̃ի կամօքն 1
ա̃յ, և տիմոթէոս եղբայր · եկեղեց-
ւոյդ ա̃յ՝ որ է 'ի կորնթոս՝ սրբովքդ ամենե-
քումբք՝ որ են յա̃մ կողմանս աքայեցւոց ։
* Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յա̃յ հօրէ 2
մերմէ՝ և 'ի տեառնէ յս̃է քս̃է ։ * Օրհնեալ է ա̃ծ 3
և հայր տն̃ մերոյ յս̃ի քս̃ի · հայր գթուե̃ց, և
ա̃ծ ա̃մ մխիթարութե̃ · * որ մխիթարէն զմեզ 4
յա̃մ նեղութիւնս մեր · առ 'ի կարող լինելոյ
մեզ մխիթարել զայնոսիկ՝ որ յա̃մ նեղութիւնս
իցեն, մխիթարութ̃ն՝ որով մեք մխիթարիմք
յա̃յ ։ * Զի ո̃պ առաւելուն չարչարանքն քս̃ի 5
'ի մեզ · նոյնպէս և 'ի ձեռն քս̃ի առաւել լիցի
և մխիթարութիւնն մեր ։ * Զի եթէ նեղիմք, 6

վ̄ն ձերոյ մխիթարութեան և փրկութեան, և եթէ
մխիթարիմք, վ̄ն ձերոյ մխիթարութեան և փրկութեան,
որ յաջողեալն է համբերութ̄բ նոցին
7 չարչարանաց, զոր և մեք չարչարիմք. * և
յոյսն մեր հաստատուն է վ̄ն ձեր. քանզի գիտեմք՝
եթէ ո̄պ կցորդ եմք չարչարանացն՝
8 նոյնպէս և մխիթարութեանն. * Քանզի ոչ կամիմ
տգէտ լինել ձեզ եղբարք՝ վ̄ն նեղութեանն մերոյ
եղելոյ յԱսիա. զի առաւել քան զկար մեր ծանրացաք,
մինչև անյոյս լինելոյ մեզ և 'ի կենաց.
9 * Այլ անձամբ յանձինս զվճիռ մահու ընկալաք.
զի մի յանձինս ապաստանիցիմք՝ այլ
10 յա̄ծ՝ որ յարուցանէ զմեռեալս. * որ յայնպիսի
մահուանէ փրկեաց զմեզ՝ և փրկեսցէ.
11 * քանզի յուսացեալ եմք, եթէ տակաւին փրկեսցէ
օգնականութ̄բ աղօթից ձերոց վ̄ն մեր.
Զի 'ի բազմադէմ շնորհա [illegible]
մօք յաճախեսցեն գոհո [illegible]
12 * Քանզի պարծանք [illegible]
թիւն մտաց մերոց. զի սրբու [illegible]
ա̄յ, և ոչ մարմնեղէն իմաստութ̄բ, այլ [illegible]
հօքն ա̄յ շրջեցաք յաշխարհի. բայց առաւել
13 ևս առ ձեզ. * Քանզի ոչ եթէ այլազգ ինչ
գրեմք առ ձեզ, այլ զոր ընթեռնուցուքն՝ և
գիտակ լինիցիք. քանզի յուսամ եթէ մինչև
14 'ի վախճան գիտիցէք. * ո̄պ և խելամուտ եղէք
մեզ փոքր 'ի շատէ. զի պարծանք ձեր
եմք, ո̄պ և դուք մեր յաւուրն տ̄ն մերոյ յ̄սի

քի՟ ։ *Եւ յայս ապաստան կամէի նախ առ 15
ձեզ գալ, զի դուք կրկին շնորհս ընդունիցիք·
*և 'ի ձէնջ երթալ 'ի մակեդովնիա · և դարձ- 16
եալ 'ի մակեդովնիայ գալ առ ձեզ · և 'ի ձէնջ
յուղարկել 'ի հրէաստան։ *Իսկ եթէ զայս խոր- 17
հեցայ՝ միթէ թեթեւութբ՟ ինչ գնացի · և կամ
զոր խորհիմն՝ ըստ մարմնո՞յ ինչ խորհիցիմ, այլ
զի եղիցի յինէն կողմանէ, այոն՝ այո, և ոչն՝ ոչ։
*Հաւատարիմ է ա՟ծ՝ զի բանն մեր որ առ ձեզ 18
եհաս՝ ոչ է այո և ոչ։ *Քանզի որդին ա՟յ յս՟ քս՟, 19
որ 'ի ձեզ մեօք քարոզեցաւ, ինեւ և սիղուա-
նոսիւ և տիմոթէիւ · ոչ եղեւ այո և ոչ · այլ
այոն 'ի նմին եղեւ։ *Զի որչափ աւետիքն ա՟յ 20
են՝ 'ի նմա այոն · վս՟ որոյ և նովին ամէնն մեօք
'ի փառս ա՟յ։ *Այլ որ հաստատեացն զմեզ 21
ձեօք հանդերձ 'ի քս՟, և որ օծ զմեզ, ա՟ծ է ·
[illegible] եաց զմեզ, և ետ զառհաւատչեայ 22
[illegible] մեր ։
[illegible] զա՟ծ կոչեմ անձին իմոյ · 23
[illegible] ձեզ՝ ոչ ևս եկի 'ի կորնթոս·
զի ոչ եթէ տէր[illegible]ք ձեզ հաւատովքս՝ այլ գոր-
ծակից եմք շնորհացդ ձերոց · քանզի հաւա-
տովք հաստատեալ կայք ։

ԳԼ․ Բ․

Բայց զայս և եթ ընտրեցի՝ զի մի՛ միւս- 1
անգամ տրտմութբ՟ եկից առ ձեզ · *Զի եթէ 2

ես տրտմեցուցանեմ զձեզ. և ո՞վ է՝ որ ուրախ
առնիցէ զիս, եթէ ոչ՝ որ տրտմիցին յինէն.
3 *Եւ զայս զի գրեցի՝ զի մի՛ յորժամ գայցեմ
տրտմութիւն ինչ կրիցեմ. ուստի արժան
իցէ ինձ ուրախ լինել. յուսացեալ եմ 'ի ձեզ
ամենեսին, զի իմ ուրախութիւնս՝ ձեր ամե-
4 նեցուն է. *Զի 'ի բազում վշտաց՝ և 'ի նեղուէ՟
սրտի գրեցի առ ձեզ բազում արտասուօք.
ոչ զի տրտմեսջիք. այլ զի զսէրն իմ գիտաս-
5 ջիք, զոր ունիմ առաւելապէս առ ձեզ. *Ապա
եթէ ոք տրտմեցոյց՝ ոչ եթէ զիս տրտմեցոյց՝
այլ փոքր 'ի շատէ, զի մի՛ ծանրացայց ամենե-
6 ցուն ձեզ. *Շատ է այնպիսւոյն պատուհասն
7 այն՝ որ 'ի բազմաց անտի է. *Այսուհետեւ
նմին հակառակ՝ մանաւանդ շնորհել ձեզ նմա՝
և մխիթարել. զի մի՛ յառաւել տրտմութենէն
8 ընկղմեսցի այնպիսին. *Վասն որոյ աղաչեմ
9 զձեզ հաստատել 'ի նա զսէրն. *Վ՟ այնորիկ
իսկ և գրեցի. զի զչափ առից զձեր՝ եթէ յա՟մի
10 հպատակ իցէք. *Զի եթէ ումեք շնորհիցէք՝
և ես. քանզի և ես եթէ շնորհիցեմ, զոր ինչ
շնորհիցեմն՝ վասն ձեր 'ի դէմս քրիստոսի.
11 *զի մի՛ զրկիցիմք 'ի սատանայէ. քանզի
չեմք ինչ անտեղեակ խորհրդոցն նորա.
12 *Այլ իբրև հասի ես 'ի տրովադա յաւե- Գ Կ
տարանն ք՟ի, և դուռն բաց էր ինձ 'ի տէր,
13 *ոչ ետու հանգիստ հոգւոյ իմում. քանզի
ոչ գտի ես անդ զտիտոս զեղբայր իմ. այլ

հրաժարեալ ՚ի ն̃ցնէ՝ գնացի ՚ի Մակեդոնիա ։
* Այլ ա̃յ շնորհք՝ որ յամենայնի հաշակ հար- 14
կանէ զմեզ ՚ի ք̃ս յ̃ս , և զհոտ գիտութեանն
իւրոյ յայտնի առնէ մեօք յա̃մ տեղիս . * զի 15
հոտ անոյշ եմք ք̃սի առ ա̃ծ՝ ՚ի մէջ փրկելոցն՝
և ՚ի մէջ կորուսելոցն . * ոմանց հոտ մահուա- 16
նէ ՚ի մահ, և ոմանց հոտ կենդանուե̃ ՚ի կեանս.
և առ այս ո՞ բաւական իցէ . * Քանզի ոչ 17
եմք իբրև զայլսն , որ վաճառականն լինին
բանին ա̃յ . այլ իբրև ՚ի հաստատութ̃է , այլ
իբրև յա̃յ՝ առաջի ա̃յ ՚ի քրիստոս խօսիմք ։

Գ.Լ. Գ.

Սկսանիմք այսուհետև վերստին զան- 1
ձինս ընծայեցուցանել . թէպէտ և ոչ պիտոյ
իցեն մեզ , ոպ̃ ոմանց՝ թուղթք ընծայուե̃ առ
ձեզ , կամ ՚ի ձէնջ . * Այլ թուղթք մեր դուք 2
էք . գրեալ ՚ի սիրտս մեր , ծանուցեալ և ըն-
թերցեալ յա̃մ մարդկանէ . * յայտնեալք՝ զի 3
էք թուղթք քրիստոսի , պաշտեցեալ ՚ի մէնջ .
և գրեալ՝ ոչ մրով , այլ հոգւովն աստուծոյ
կենդանւոյ . ոչ ՚ի տախտակս քարեղէնս , այլ
՚ի տախտակս սրտի մարմ̃նեղէնս .
Գ.է. * Յոյս մի այսպիսի ունիմք ՚ի ձեռն ք̃սի 4
առ ա̃ծ . * իբր ոչ եթէ անձամբ բաւական 5
եմք խորհել ինչ իբրև ՚ի մէնջ . այլ բաւակա-
նութիւնն մեր յա̃յ է . * որ և բաւականս ա- 6

րար զմեզ՝ պաշտօնեայս նորոց կտակարանաց՝
ոչ գրով, այլ հոգւով. զի գիրն սպանանէ,
7 այլ հոգին կեցուցանէ. * Զի եթէ պաշտօնն
մահու գրով դրոշմեալ 'ի տախտակին քարեղէնս՝
եղեւ փառօք, զի մի՛ կարասցեն հայել
որդիքն իսրայէլի յերեսն մովսէսի՝ վ̃ փառաց
8 երեսաց ն̃ր, որ խափանելոցն էր. * ո՞րչափ
եւս առաւել պաշտօն հոգւոյն եղիցի փառօք.
9 * Զի եթէ պաշտօն դատապարտութե̃ն փառօք
էր, ո՞րչափ եւս առաւել պաշտօն արդարութե̃ն
10 փառօք. * Քանզի ոչ եթէ փառաւորի
փառաւորեալն յայսմ մասին, վ̃ առաւելու̃ե
11 փառացն. * Զի եթէ որ խափանելոցն էր՝ այն
փառօք էր, ո՞րչափ եւս առաւել՝ որ կալոցն
12 է՝ փառօք լիցի. * Եւ արդ՝ զի ունիմք այսպիսի
յոյս, բազում համարձակութ̃բ վարեսցուք.
13 * Եւ ոչ ո̃պ մովսէս արկանէր քող 'ի վ̃ր
երեսաց իւրոց, վ̃ չհայելոյ որդւոցն իէլի
14 'ի վախճան խափանելոցն. * Այլ կուրացան
միտք ն̃ց. քանզի մինչեւ ցայսօր ժամանակի՝
նոյն քող ձգեալ կայ 'ի վ̃ր ընթերցուածոց հին
կտակարանացն. եւ ոչ վերանայ, զի ք̃իւ խափանելոց
15 է. * Այլ մինչեւ ցայսօր՝ յորժամ
ընթեռնուն զմովսէս, նոյն առագաստ կայ
16 'ի վերայ սրտից նոցա. * Այլ յորժամ դարձցին
առ տէր՝ ապա վերասցի առագաստն.
17 * Զի տէր հոգին է. ուր հոգի տեառն է,
անդ ազատութիւն է.

* Բայց մեր ամենեցուն բացաւ երեսօք 18
զփառսն տեառն իբրեւ ընդ հայելի տեսեալ՝
'ի նոյն պատկեր նորոգիմք փառաց 'ի փառս.
որպէս և 'ի տեառն հոգւոյն.

ԳԼ. Դ.

Վասն այսորիկ ունիմք զպաշտօնս զայս՝ 1
ոպ̃ և գտաք զողորմութիւն, և ոչ ձանձրա-
նամք. * այլ հրաժարեցաք 'ի գաղտնեաց ա- 2
մօթոյն. զի մի՛ գնասցուք խորամանկութբ̃,
և մի՛ նենգեսցուք զբանն ա̃յ, այլ յայտնութբ̃
ճշմարտութե̃ն ընծայեցուսցուք զանձինս մեր
առ ա̃մ միտս մարդկան առաջի ա̃յ. * Ապա 3
թէ իցէ եւս ծածկեալ աւետարանն մեր, 'ի
մէջ կորուսելոյն է ծածկեալ. * որոց ա̃ծ աշ- 4
խարհիս այսորիկ կուրացոյց զմիտս անհա-
ւատիցն, զի մի՛ ծագեսցէ 'ի նոսա լուսաւո-
րութիւն աւետարանի փառացն ք̃ի. որ է
պատկեր աներեւութին ա̃յ. * Զի ոչ եթէ 5
զանձինս քարոզեմք, այլ զյ̃ս ք̃ս զտէր. և
զմեզ ծառայս ձեզ վասն ք̃ի. * Զի ա̃ծ որ 6
ասաց 'ի խաւարէ լոյս ծագել. որ և ծագ-
եաց իսկ 'ի սիրտս մեր 'ի լուսաւորութիւն
գիտութեան փառացն աստուծոյ 'ի դէմս
յ̃ի ք̃ի. * Այսուհետեւ ունիմք զգանձս 7
զայս յամանս խեցեղէնս զի առաւելութիւն
զօրութեանն իցէ յաստուծոյ, և ոչ 'ի մէնջ.

8 *Յամենայնի նեղեալք՝ այլ ոչ նուաղեալք ·
9 կարօտեալք՝ այլ ոչ տարակուսեալք · *Հա-
լածեալք՝ այլ ոչ լքեալք · չարչարեալք՝ այլ
10 ոչ սատակեալք · *յամ ժամ զմահն յս̃ի 'ի մար-
մինս մեր կրեսցուք՝ զի և կեանքն յս̃ի 'ի մար-
11 մինս մեր յայտնեսցին ։ *Քանզի միշտ մեք՝
որ կենդանիքս եմք, 'ի մահ մատնիմք վասն
յս̃ի · զի և կեանքն յս̃ի յայտնի լիցին 'ի մահ-
12 կանացու մարմինս մեր ։ *Այսուհետև մահ
13 'ի մեզ զօրանայ, և կեանք 'ի ձեզ · *Արդ՝
ունիմք զնոյն հոգի հաւատոյ · որպէս և գը-
րեալ է · հաւատացի՝ վասն որոյ և խօսեցայ ·
և մեք հաւատամք՝ վասն որոյ և խօսիմք իսկ ։
14 *Գիտեմք՝ եթէ որ յարոյցն զյիսուս,
և զմեզ ընդ յիսուսի յարուսցէ՝ և յանդիման
15 կացուսցէ ձեօք հանդերձ ։ *Քանզի ամե-
նայն ինչ վասն ձեր է · զի շնորհքն յաճախ-
եալք 'ի բազմաց 'ի գոհութենէ առատ՝ ա-
16 ռաւելասցին 'ի փառս աստուծոյ ։ *Վասն
որոյ և ոչ ձանձրանամք · այլ թէպէտ և ար-
տաքին մարդս մեր ապականի, այլ ներքին
17 մարդն մեր նորոգի օրըստօրէ ։ *Զի առժա-
մեայն յաճախութիւն թեթև նեղութեանս մե-
րում՝ 'ի յաւիտենականն առաւելութիւն, ըղ
18 մեծութիւն փառացն գործէ 'ի մեզ ։ *Քան-
զի ոչ դիտեմք զերևելիսս՝ այլ զաներևոյթսն ·
զի երևելիքս առ ժամանակ մի են, և ա-
ներևոյթքն յաւիտենականք ։

ԳԼ. Ե.

Քանզի գիտեմք՝ եթէ երկրաւոր տա֊ 1
ճար շինուածոյս մերոյ քակտեսցի, շինած
յա̃յ ունիմք՝ տաճար առանց ձեռագործի, յա֊
ւիտենական յերկինս։ * Եւ ընդ այս տաղտ֊ 2
կամք. քանզի զբնակութիւն երկնից փափա֊
քեմք զգենուլ. * միայն թէ յորժամ զգենու֊ 3
ցումքն՝ ոչ մերկ գտանիցիմք։ * Քանզի որ 4
եմք ընդ յարկաւս ընդ այսուիկ՝ տաղտկամք
ծանրացեալք. զի ոչ կամիմք մերկանալ, այլ
զայն ՚ի վր̃ այսր զգենուլ. զի ընկղմեսցի մահ֊
կանացուս ՚ի կենաց անտի։ * Այլ որ յաջողէն 5
մեզ ՚ի սոյն՝ աստուած է. որ ետ մեզ զառ֊
հաւատչեայ հոգւոյն։

Գ.Ջ * Արդ՝ համարձակիմք յա̃մ ժամ, եւ գի֊ 6
տեմք՝ եթէ որչափ յամեմք ՚ի մարմնի աստ՝
օտարանամք ՚ի տ̃նէ։ * Զի հաւատովք գը֊ 7
նամք՝ եւ ո՛չ կարծեօք։ * Այլ համարձակիմք՝ 8
եւ առաւել եւս հաճեալ եմք ելանել ՚ի մարմ֊
նոյ աստի՝ եւ մտանել առ ա̃ծ։ * Վասն որոյ 9
եւ առաստանամք. զի եթէ յամիցեմք՝ եւ եթէ
ելանիցեմք՝ հաճոյ եւ եթ լիցեմք նմա։ * Քանզի 10
ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի
ատենին ք̃ի՝ զի ընկալցի իւրաքանչիւր իւ֊
րով մարմնով զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ
բարի, եւ եթէ չար։ * Իսկ արդ՝ զահն տ̃ն գի֊ 11

տելով չափ, զմարդկան ինչ միտս հաճեմք.
սակայն առաջի ա̃յ յայտնելոց եմք. բայց և
12 յուսամ և 'ի ձեր միտս յայտնի լինել. *Իբր
ոչ եթէ միւսանգամ զանձինս ինչ ընծայեցու-
ցանեմք ձեզ, այլ պատճառս տամք ձեզ պար-
ծանաց վ̃ն մեր. զի ունիցիք առ այնոսիկ՝ որ
13 առ աչան պարծիցին, և ո՛չ սրտիւք. *Զի եթէ
առանցաք ինչ՝ այն ա̃յ է. և եթէ զգաստա-
14 նամք՝ այն ձեր է. *Զի սէրն քի̃ ստիպէ
զմեզ քննել զայս. զի եթէ մին փոխանակ
ամենեցուն մեռաւ, ապա ուրեմն ամենե-
15 քեան մեռեալ էին. *և 'ի վ̃ր ամենեցուն մե-
ռաւ, զի որ կենդանիքն իցեն՝ մի՛ անձանց
իցեն կենդանիք, այլ այնմ՝ որ 'ի վ̃ր նոցայն
16 մեռաւ, և յարեաւ. *Այսուհետև մեք ոչ
զոք գիտեմք մարմնով. զի թէպէտ և գիտէաք
մարմնով զքս̃՝ այլ արդ ոչ ևս նոյնպէս գիտեմք.
17 *Բայց եթէ ինչ 'ի քս̃ նոր արարած իցէ. զի
18 հինն անց, և արդ նոր եղև ա̃մ. *Այլ ա̃մ
ինչ յա̃յ՝ որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր 'ի ձեռն
քի̃. և ետ մեզ զպաշտօնն հաշտութեան. Վ.Զ
19 *Եւ քանզի ա̃ծ էր՝ քի̃ւ զաշխարհս հաշ-
տեցուցանել ընդ իւր, և չհամարել ն̃ց զմեղս
իւրեանց, և եդ 'ի մեզ զբանն հաշտութեան.
20 *Արդ՝ վասն քի̃ պատգամաւորիմք՝ ա̃ղ և ա̃յ
բարեխօսութ̃ մեօք. աղաչեմք վ̃ն քի̃ հաշտե-
21 ցարուք ընդ ա̃յ. *Զի զայն՝ որ ոչն գիտէր
զմեղս, վ̃ն մեր մեղս արար. զի մեք եղիցուք
նովաւ արդարութիւն ա̃յ.

ԳԼ. Զ.

Գործակից եմք ձեր՝ և աղաչեմք. մի 1
ընդ ունայն զշնորհսն ա̃յ ընդունել ձեզ. *Զի 2
՚ի ժամանակի ընդունելութ՝ ասէ, լուայ քեզ,
և յաւուր փրկութ օգնեցի քեզ. Ահաւասիկ
ժամանակ ընդունելի. ահա օր փրկութ. *Մի 3
և մի իւիք տայցէք պատճառս, զի մի արատա֊
ցի պաշտօնն. *այլ յա̃մի ընծայեցուցէք զան֊ 4
ձինս ձեր իբրև զպաշտօնեայս ա̃յ՝ համբերու֊
թեամբ բազմաւ՝ ՚ի նեղութիւնս ՚ի վիշտս ՚ի
չարչարանս, *՚ի գանս ՚ի բանտս ՚ի խռովու֊ 5
թիւնս յաշխատութիւնս ՚ի հսկմունս ՚ի պահս,
*՚ի սրբութ ՚ի գիտութ յերկայնմտութ ՚ի քաղց֊ 6
րութ՝ ՚ի հոգի ս̃ր. ՚ի սէր՝ առանց կեղծաւո֊
րութ, *՚ի բանս ճշմարտութ, ՚ի զօրութ ա̃յ. 7
վ̃ա զինուն արդարութ որ ընդ աջմէն և ընդ ա֊
հեկէն է. *փառօք և անարգութ̃, գովութ̃ 8
և պարսաւանօք, իբրև մոլարք՝ և ճշմարիտք.
*իբրև անծանօթք՝ և ծանուցեալք. իբրև 9
մահկանացուք՝ և ահաւասիկ կենդանի եմք.
իբրև խրատեալք՝ և ոչ մահապարտեալք. *իբ֊ 10
րև տրտմեալք, և հանապազ ուրախ եմք. իբ֊
րև անանկք՝ և զբազումս մեծացուցանեմք.
իբրև ոչինչ ունիցիմք, և զա̃մ ինչ ունիմք.
*Բերանք մեր բացեալ են առ ձեզ՝ Կորնթա֊ 11
ցիք. և սիրտք մեր ընդարձակեալք. *Ոչ ինչ 12

նեղիք 'ի մէնջ՝ բայց եթէ 'ի գութս ձեր նեղիք.
13 * արդ՝ զնոյն հատուցումն իբրեւ ընդ
որդեակս ունիմ. ընդարձակեցարուք և դուք,
14 * և մի՛ լինիք լծակիցք անհաւատից. քանզի
զի՞նչ հաղորդութիւն է արդարութեան ընդ անօրէնութեան. և կամ զի՞նչ հաւասարութիւն
15 է լուսոյ ընդ խաւարի. * և կամ զի՞նչ միաբանութիւն է քրի ընդ բելիարայ. կամ զի՞նչ
բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին.
կամ զի՞նչ նմանութիւն է տաճարի այ մեհենաց.
16 * Ապաքէն դուք տաճար այ կենդանւոյ
էք. ոպ և ասաց ած, թէ բնակեցայց 'ի նս,
և գնացից 'ի նս. և եղէց նց ած, և նք եղիցին
17 իմ ժողովուրդ. * Վն որոյ ելէք՝ 'ի միջոյ նց
և մեկնեցարուք, ասէ տէր. և 'ի պիղծս մի՛
18 մերձենայք. * և ես ընկալայց զձեզ. և ես
եղէց ձեզ 'ի հայր, և դուք եղիջիք ինձ յուստերս և 'ի դստերս, ասէ տէր ամենակալ։

ԳԼ. Է.

1 Իսկ որովհետև զայս աւետիս ունիմք սիրելիք՝ սրբեսցուք զանձինս մեր յամ պղծուէ
մարմնոյ և հոգւոյ, կատարեսցուք զսրբութիւն
2 ահիւն այ. * Տարայք մեզ, զի ոչ ումեք մեղաք, և ոչ զոք եղծաք, և ոչ զոք զրկեցաք.
3 * Ոչ եթէ 'ի դատապարտութիւն ինչ ասեմ.
քանզի յառաջ իսկ ասացի, եթէ 'ի սրտի մե-

րում կայք՝ ՚ի կեալ և ՚ի մեռանել ընդ ձեզ։
Դ.Կ *Բազում համարձակութիւն է ինձ առ 4
ձեզ․ բազում պարծանք են ինձ վ՟ ձեր․ լի
եմ մխիթարութ՟․ առաւելեալ եմ ուրախութ՟
յա՟մ նեղութիւնս մեր։ *Քանզի յորժամ հասաք 5
մեք ՚ի Մակեդոնիա, և ոչ միով իւիք
հանգիստ գտաւ մարմնոյ մերում, այլ յա՟մի
նեղեալք՝ քանզի արտաքոյ մարտք՝ և ՚ի ներքոյ
արհաւիրք։ *Այլ որ մխիթարէն զխոնարհս, 6
մխիթարեաց զմեզ ա՟ծ ՚ի գալստեանն
տիտոսի։ *Ոչ միայն ՚ի գալստեան նր՟, այլև 7
՚ի մխիթարութ՟ն՝ զոր մխիթարեցաւ նա ՚ի ձեզ,
՚ի պատմել մեզ զանձուկն ձեր՝ զողբումն ձեր՝
զնախանձն ձեր վ՟ իմ, մինչ առաւել ուրախ
լինել ինձ։ *Զի թէ և տրտմեցուցի զձեզ 8
թղթովն՝ ոչ զղջանամ, թէպէտ և զղջացեալ
էի․ քանզի տեսանեմ՝ զի թուղթն այն թէ
և առ ժամանակ մի տրտմեցոյց զձեզ․ *արդ՝ 9
ուրախ եմ, ոչ զի տրտմիցիք՝ այլ զի յապաշխարութիւն տրտմեցարուք․ քանզի տրտմեցայք դուք ըստ ա՟յ․ զի մի իւիք զրկիցիք ՚ի
մէնջ։ *Զի որ ըստ ա՟յն տրտմութիւն է, ապաշխարութիւն ՚ի փրկութիւն առանց զղջանալոյ գործէ․ իսկ աշխարհի տրտմութիւն՝ մահ
գործէ։ *Արդ նոյն իսկ որ ըստ ա՟յն տրտմեցարուք, որչափ ինչ փոյթ գործեաց ՚ի ձեզ, 11
կամ աղերս կամ սաստ կամ երկիւղ կամ անձուկ կամ նախանձ կամ վրէժխնդրութիւն․

քանզի յա՟մի ընծայեցուցիք զանձինս ձեր՝ ս՟բս
12 լինել յիրիդ յայդմիկ . * Ապա ուրեմն՝ թէ և
գրեցի ես առ ձեզ, ոչ վ՟ն այնորիկ որ զրկեացն ,
և ոչ վ՟ն այնորիկ՝ որ զրկեցաւն . այլ վ՟ն յայտնի
լինելոյ փութոյն ձերոյ որ վ՟ն մեր՝ առ ձեզ
13 առաջի ա՟յ . * Վասն այնորիկ մխիթարեալ եմք
'ի վ՟ր մխիթարութե՟ն մերոյ . առաւել ևս խնդացաք 'ի վ՟ր խնդութե՟ն տիտոսի . քանզի հանգուցեալ էր հոգի ն՟ր 'ի ձէնջ ամենեցունց .
14 * Զի զինչ և պարծեցայ առ նմա վ՟ն ձեր՝ ոչ
ամաչեցի . այլ ո՟պ զա՟մ ճշմարտութ՟բ խօսեցաք
ընդ ձեզ, նոյնպէս և պարծանքն մեր առ տիտոսի ճշմարիտ եղեն . * Նաև գութք ն՟ր առաւել ևս են 'ի ձեզ . քանզի յիշեցուցանէր մեզ
15
զամենեցուն զձեր հնազանդութիւն, թէ ո՟պ
16 ահիւ և դողութ՟բ ընկալարուք զնա . * Եւ արդ՝
ուրախ եմ . զի յա՟մի համարձակ եմ առ ձեզ .

ԳԼ. Ը.

1 Ցուցանեմ ձեզ եղբարք զշնորհսն ա՟յ՝ որ ԴԲ
տուեալ են եկեղեցեացն մակեդոնիացւոց .
2 * զի մեծաւ հանդիսիւ նեղութե՟ն՝ առաւելութիւն խնդութե՟ն ն՟ց , և ծանր աղքատութիւն
ն՟ց , առաւել եղև 'ի մեծութիւն առատութե՟
3 ն՟ց . * զի ըստ կարի ն՟ց վկայեմ, և աւելի քան
4 զկար . * ինքնակամ բազում աղաչանօք աղաչէին զշնորհսն, և զհաղորդութիւն պաշտա-

մանն, որ 'ի սր̃սն՝ տալ ցմեզ․ * Ոչ որչափ 5
ակն ունէաք, այլ և զանձինս ևս ետուն, նախ
տ̃ն՝ և ապա մեզ կամօքն ա̃յ․ * աղաչել զտիտոս՝ 6
զի ոպ̃ սկսաւն յառաջագոյն, նոյնպէս և
կատարեսցէ 'ի ձեզ և զայդ ևս շնորհ․ * Այլ 7
ոպ̃ յա̃մի առաւել էք հաւատովք՝ և բանիւ և
գիտութ̃բ և ա̃մ փութով, և որ 'ի մէնջ 'ի ձեզ
սէրն է, զի և յայդմ ևս շնորհի առաւել լինիցիք․ * Ոչ ոպ̃ հրամանաւ տալով ասեմ․ այլ վասն 8
այլոց փութոյ, և վ̃ն ձերոյ սիրոյ՝ զմտերմութիւնդ փորձեմ․ * Քանզի գիտէք զշնորհսն 9
տ̃ն մերոյ յ̃սի ք̃սի․ զի վ̃ն ձեր աղքատացաւ՝
որ մեծատունն էր, զի դուք ն̃ր աղքատութեամբն մեծասջիք․ * Եւ խրատ մի յայսմիկ 10
տամ․ զի այն իսկ օգուտ ձեզ է․ որք ոչ միայն
զառնելն՝ այլ և զկամելն յառաջագոյն սկսայք
'ի հերուն հետէ․ * Բայց արդ և զառնելն իսկ 11
կատարեցէք․ զի ոպ̃ յօժարութիւնն 'ի կամելոյ
է, նոյնպէս և առնելն ըստ գոյին․ * Զի եթէ 12
յօժարութիւնն առաջի կայ, ըստ գոյին ընդունելի է՝ և ոչ եթէ ըստ չգոյին․ * Զի ոչ եթէ 13
այլոց հանգիստ կամիցիմ, և ձեզ նեղութիւն․ * Այլ հաւասարութ̃բ յայժմու ժամանակիս, 14
ձեր առաւելութիւնդ 'ի ն̃ց պակասութեանն․ զի և ն̃ց առաւելութիւնն եղիցի 'ի
ձերում պակասութեանդ․ զի եղիցի հաւասարութիւն՝ ո̃պ և գրեալ է․ * Թէ որ բազումն առ՝ 15
ոչ առաւելաւ, և որ սակաւն՝ ոչ նուազեցաւ․

16 *Բայց շնորհք այ՟՝ որ արկ զնոյն փոյթ վն՟ Դ.Գ.
ձեր 'ի սիրտ տիտոսի. *զի զաղաչանսն ըն-
կալաւ՝ և փութացաւ յօժարագոյնս դիմեաց
18 գալ առ ձեզ. *Եւ առաքեցաք ընդ նմա
զեղբայրն՝ որոյ գովութիւնն յաւետարանի
19 անդ է ընդ ամ՟ եկեղեցիս. *Եւ ոչ այսչափ
միայն, այլ և ձեռնադրեալ յեկեղեցեաց ան-
տի, նշդեհակից մեր եղև 'ի շնորհս յայսմիկ՝
որ պաշտին 'ի մէնջ, 'ի փառս տն՟՝ և 'ի մեր յօ-
20 ժարութիւն. *Բայց զայս խորշեաք իսկ՝ թէ
գուցէ արատ ոք ինչ դնիցէ 'ի հաստատու-
21 թեան յայսմիկ՝ որ պաշտեցաւ 'ի մէնջ. *Քան-
զի խորհիմք զբարիս՝ ոչ միայն առաջի տն՟,
22 այլ և առաջի մարդկան. *Եւ առաքեցաք
ընդ նս՟ զեղբայրն մեր՝ զոր ընտրեցաք 'ի բա-
զում իրս բազում անգամ պինդ գտեալ. և
առաւել ևս այժմ պնդագոյն՝ յուսով մեծաւ
23 'ի ձեզ. *Բայց եթէ վն՟ տիտոսի ինչ բանք
են, իմ հաւասար է՝ և ձեր գործակից. և ե-
թէ եղբարք մեր, առաքեալքն եկեղեցեաց՝
24 և փառք քի՟. *Եւ արդ՝ զհանդէս սիրոյ ձե-
րոյ՝ և զմերոյ պարծանացն վն՟ ձեր, և 'ի դէ-
մս ցուցջիք յանդիմանն ամ՟ եկեղեցեաց.

ԳԼ. Թ.

1 Այլ վն՟ պաշտամանն՝ որ 'ի սբս՟ է, ա- Դ.Դ.
2 ւելի է ինձ և գրել առ ձեզ. *Զի գիտեմ ըզ

յօժարութիւն ձեր, զոր վ՟ս ձեր պարծեցեալ եմ ՚ի մէջ Մակեդովնացւոցն, թէ Աքայեցիքն ՚ի հերուն հետէ պատրաստ են. և ձեր նախանձն զբազումս յորդորեաց. *Եւ առաքեցաք զեղբարսն՝ զի մի՛ պարծանքն մեր որ վ՟ս ձեր՝ ընդունայն լինիցին ՚ի մասինդ յայդմիկ. այլ որ՟պ ասէի իսկ, պատրաստագոյնք գտանիջիք. *գուցէ յորժամ գայցեն ընդ մեզ. Մակեդովնացիքն՝ և գտանիցեն զձեզ անպատրաստս, և ամաչեսցուք մեք. զի մի՛ ասասցուք՝ թէ դուք, ՚ի մասինդ յայդմիկ պարծանաց. *Արդ՝ կարեւոր համարեցայ աղաչել զեղբարս, զի յառաջագոյն իսկ եկեսցեն առ ձեզ, և յառաջագոյն պատրաստեսցեն զյառաջագոյն խոստացեալ օրհնութիւնն ձեր ՚ի պատրաստի ունել. այնպէս իբրև զօրհնութիւն, և մի՛ իբրև զագահութիւն. *Քանզի որ սերմանէ ճշդելով՝ ճշդելով և հնձեսցէ. և որ սերմանէ առատութ՟՝ առատութ՟ և հնձեսցէ. *Իւրաքանչիւր որ՟պ և յօժարեսցի ոք սրտիւ, մի՛ առ հարկի և տրտմու՟ն. քանզի ըզ տուրս զուարթառատս սիրէ Ա՟ծ. *Այլ կարող է Ա՟ծ զա՟մ շնորհս առաւելուլ ՚ի ձեզ. զի յա՟մի յա՟մ ժամ զա՟մ բաւականութիւն ընկալեալ՝ առաւելուցուք յա՟մ գործս բարու՟ն, *որ՟պ և գրեալ է. սփռեաց և ետ տնանկաց. արդարութիւն նորա մնայ յաւիտեան.

3 4 5 6 7 8 9

Ժե *Այլ ո՛յն որ պարգեւէ սերմն սերմանա- 10

հանաց՝ և հաց 'ի կերակուր , պարգեւեսցէ և
բազմացուսցէ զսերմանիս ձեր , և աճեցուսցէ
11 զարդիւնս արդարուե̃ ձերոյ · * յա̃մ մեծացեալք
ա̃մ առատու̃բ՝ որ յօրինէն մեօք գոհութիւն
12 ա̃յ · * Զի պաշտօն հարկիս այսորիկ՝
ոչ միայն առ 'ի լնուլ զպակասութիւն ս̃րցն է ,
այլ և առաւելուլ բազմօք գոհութիւնս ա̃յ ·
13 * Հանդիպեալ պաշտամանս այսորիկ փառաւորել
զա̃ծ 'ի վ̃ր հնազանդուե̃ խոստովանուե̃
ձերոյ յաւետարանն ք̃սի · և առատու̃բ հաղորդուե̃ն
'ի նա̃՝ և յամենեսին · և նց̃ աղօթք
վ̃ր ձեր · քանզի անձկացեալ են առ ձեզ վ̃ս առաւել
14 շնորհացն ա̃յ՝ որ 'ի ձեզ · * Այլ շնորհք
աստուծոյ 'ի վ̃ր անպատում պարգեւացն նր̃ ·

ԳԼ· Ժ·

1 Այլ ես ինք պօղոս աղաչեմ զձեզ հեզութբ̃ն
և հանդարտութբ̃ն ք̃սի , որ յանդիման
ձեզ՝ իբրև տառապեալ մի եմ 'ի միջի
ձերում · բայց 'ի հեռուստ համարձակիմ առ
2 ձեզ · * Աղաչեմ , զի մի 'ի մօտոյ և եթ համարձակիցիմ
վստահութբ̃ · կամ համարիցիմ
յանդգնել 'ի վ̃ր ոմանց՝ որ կարծեն զմէնջ՝ եթէ
3 ըստ մարմնոյ գնայցեմք · * Զի թէպէտ և
մարմնով գնամք՝ այլ ոչ եթէ ըստ մարմնոյ զինուորիմք
4 · * Զի զէն զինուորութե̃ մերոյ ոչ է
մարմնաւոր , այլ զօրաւոր յա̃յ , առ 'ի քակելոյ

զամուրս , զխորհուրդս քակեմք , * և զա՟մ 5
բարձրութիւն հպարտացեալ 'ի վ՟ր գիտութե՟ն
այ՟ . և գերեմք զա՟մ միտս 'ի հնազանդութիւնն
քի՟ . * և 'ի պատրաստի ունիմք խնդրել զվրէժ 6
ա՟մ անհնազանդութե՟ն` յորժամ ձեր եւ
հնազանդութիւնդ կատարեսցի .

Դ.Զ * Ըստ իւրաքանչիւր երեսաց դիտեջիք . 7
եթէ ոք վստահ յանձն իցէ քի՟ լինել , զայս
խորհեսցի դարձեալ 'ի միտս իւր . թէ ո՟պ նոյն
քի՟ է` նոյնպէս և մեք . * Զի թէ առաւել եւս 8
պարծեցայց վ՟ն իշխանութե՟ս մերոյ` զոր ետ
մեզ տ՟ր 'ի շինել` և ոչ 'ի քակել զձեզ , ոչինչ
ամաչեցից . * Զի մի՛ թուեցայց իբրև ահ ինչ 9
արկանել ձեզ թղթովքս . * Ասիցէք , թուղթքս 10
ծանունք են և սաստիկք . բայց տեսիլ մարմ-
նոյ տկար` և բանն արհամարհեալ . * զայս 11
խորհեսցի այնպիսին , զի որպիսիք եմք բան-
իւք թղթոցդ 'ի հեռուստ , նոյնպիսիք և 'ի
մօտոյ արդեամբք . * Քանզի ոչ իշխեմք կշռ- 12
ել և հաւասարել զանձինս մեր ումանց , որ
զանձինս իւրեանց ձեզ ընծայեցուցանեն . այլ
անձամբ անձինս` զանձինս չափեն , և 'ի կշռ-
ել անձամբ յանձինս` ոչ առնուն 'ի միտ .
* Այլ մեք ոչ եթէ յանչափս ինչ պարծեսցուք . 13
այլ ըստ չափոյ կանոնին , զոր բաժանեաց մեզ
ա՟ծ չափով` հասանել մինչև առ ձեզ . * Իբր 14
ոչ եթէ հասու ինչ չիցեմք 'ի ձեզ , և ձգտե-
ցուցանեմք զանձինս . քանզի մինչև առ ձեզ

15 հասաք աւետարանաւն քսի. * Եւ ոչ յան-
չափս ինչ պարծիմք օտար վաստակօք. Բայց
յոյս մի ունիմք զաճմանն հաւատոց ձերոց՝
այդրէն 'ի ձեզ մեծանալոյ՝ ըստ կանոնիս մե-
16 րոյ յառաւելութիւն. * 'ի վեր ևս քան զձեզ
աւետարանել՝ ոչ օտար կանոնաւ 'ի պատրաս-
17 տականս ինչ պարծել. * Զի որ պարծին՝ 'ի
տէր պարծեսցի.
18 * Զի ոչ եթէ որ զանձն իւր ընծայեցու- ԲԿ
ցանէ՝ նա է ընտրեալ. այլ զոր տէրն ընծա-
յեցուցանէ.

ԳԼ. ԺԱ.

1 Լաւ էր եթէ ներէիք փոքր մի և իմում
2 անզգամութենս. այլև անսացէք իսկ. * Նա-
խանձեցուցանեմ զձեզ 'ի նախանձն այ. զի
խօսեցայց զձեզ առն միում, իբրև զկոյս մի
3 սրբ յանդիման կացուցանել քսի. * Բայց եր-
կնչիմ գուցէ ոպ օձն խաբեաց զեւայ խորա-
մանկութբ իւրով՝ ապականեսցին միտք ձեր
4 'ի միամտութենէն՝ որ 'ի քս. * Զի եթէ որ
գալոցն իցէ՝ այլ քս քարոզիցէ՝ զոր մեքն ոչ
քարոզեցաք, կամ ոգի օտար առնուցուք՝
զոր ոչ առէք, կամ աւետարան օտար՝ զոր
5 ոչ ընկալարուք, բարւոք անսայիք նմ. * Բայց
ես այսպէս համարիմ, թէ ոչինչ իւիք պա-
6 կաս իցեմ քան զլաւ առաքեալսն. * Թէպէտ

*և տգէտ ես իցեմ բանիւ, այլ ոչ եթէ գիտութ̃բ. սակայն յա̃մի յայտնեցաք զանձինս ամենեւին առ ձեզ. * Եւ եթէ մեղս ինչ* 7 *գործեցի՝ զի զանձն խոնարհեցուցի. և այն՝ զի դուք բարձրասջիք. զի ձրի զաւետարանն ա̃յ աւետարանեցի ձեզ. * Զայլ եկեղեցիս կո-* 8 *ղոպտեցի առեալ թոշակ 'ի ձեր սպասաւորութիւն. * Եւ յորժամ եկի առ ձեզ. թէ-* 9 *պէտ և պակասեաց ինչ, ոչ զոք 'ի ձէնջ ձանձրացուցի, զի զպակասութիւնն իմ լցին եղբարքն եկեալք 'ի Մակեդոնացւոց, և յա̃մի առանց ծանրանալոյ ձեզ զանձն իմ պահեցի՝ և պահեցից. * Քանզի դոյ յիս ճշմարտութիւնն* 10 *Քրիստոսի.*

ԲԺ *Զի պարծանքս այս ոչ արգելցին յինէն 'ի կողմանս Աքայեցւոց. * Ընդէ՞ր, իբրու թէ* 11 *ո՞չ սիրիցեմ զձեզ. զայն ա̃ծ գիտէ. * զոր առ-* 12 *նեմս՝ և արարից. զի հատից զպատճառս այնոցիկ՝ որ զպատճառսն կամիցին. զի որով պարծիցինն, և նոքա իբրև զմեզ գտանիցին. * Զի այնպիսիքն սուտ առաքեալք, մշակք* 13 *նենգաւորք, կերպարանին 'ի կերպարանս առաքելոց Քի̃. * Եւ չէն ինչ զարմանք. քան-* 14 *զի և ինքն սատանայ կերպարանի 'ի հրեշտակ լուսոյ. * Եւ ոչինչ է մեծ՝ թէ և պաշտօնեայք* 15 *նորա կերպարանին իբրև պաշտօնեայք արդարութ̃ն. որոց կատարածն եղիցի ըստ գործոց իւրեանց. * Դարձեալ ասեմ. մի՛ ոք* 16

համարեսցի զիս անզգամ. ապա թէ ոչ՝ գոնէ
իբրեւ զանզգամ ընկալարուք զիս. զի եւ ես
17 փոքր մի ինչ պարծեցայց. * Եւ զոր խօսիմս՝
ոչ եթէ ըստ տ̃ն խօսիմ, այլ իբրեւ անզգամութ̃ք՝
18 ըստ կարգի այդց պարծանաց. * Եւ քանզի
բազումք պարծին ըստ մարմնոյ՝ եւ ես պարծեցայց.
19 * Մտադիւր իմն անսայք անմտացն
20 ձերովդ իմաստութ̃ք. * Քանզի անսայք, եթէ
ոք խածէ զձեզ, եթէ ոք ծառայեցուցանէ,
եթէ ոք ուտէ զձեր, եթէ ոք առնու ինչ, եթէ
ոք հպարտանայ, եթէ ոք զձեզ յանդիման
21 հարկանէ. * Ըստ անարգանացդ ասեմ,
իբրեւ թէ մեք տկարացա՞ք արդեօք. յոր
ինչ ոք համարձակիցի, անզգամութ̃ք ասեմ,
22 համարձակիցիմ եւ ես. * Եբրայեցի՞ք իցեն,
եւ ես. իսրայէլացի՞ք իցեն, եւ ես. զաւակ աբրահամո՞ւ
23 իցեն, եւ ես. * պաշտօնեա՞յք ք̃սի
իցեն, յանդգնագոյնս ասացից՝ թէ առաւել
եւս ես. եթէ վաստակօք՝ առաւել, եթէ
գանիւք՝ եւս առաւել. եթէ բանտիւ՝ աւելի
քան զն̃ա, եթէ մահուամբք՝ բազում անգամ.
24 * 'ի հրէից հնգիցս՝ քառասուն միով պակաս
25 արբի. * երիցս ձաղկեցայ. միանգամ քարկոծ
եղէ. երիցս նաւաբեկ եղէ. զտիւ եւ ըզգիշեր
26 յանդունդս տառապեցայ. * 'ի ճանապարհս
բազում անգամ. վիշտս 'ի գետոց,
վիշտս յաւազակաց, վիշտս յազգէ, վիշտս 'ի
հեթանոսաց, վիշտս 'ի քաղաքի, վիշտս յա-

*'նապատի, վիշտս 'ի ծովու, վիշտս 'ի սուտ
եղբարց. * Ի ջանս՝ եւ 'ի վաստակս. 'ի տքնու- 27
թիւնս բազում անգամ, 'ի քաղց եւ 'ի ծա-
րաւ. 'ի պահս բազում անգամ. 'ի ցուրտ եւ
մերկութե. * Թող զայլ նեղութիւնսն. եւ զի 28
համապազ խուժանն 'ի վերայ իմ կուտէր՝ եւ
հոգք ա̃մ եկեղեցեացն. * Ո՞ հիւանդանայր՝ եւ 29
ոչ ես հիւանդանամ. ո՞ գայթակղէր՝ եւ ոչ ես
տապանամ.*

ԲՁ **Եթէ պարծել ինչ պարտ իցէ, զտկարու- 30
թեանն պարծեցայց. * Աստուած եւ հայր տ̃ն 31
մերոյ յի̃ի քի̃ի գիտէ՝ որ է օրհնեալ յաւի-
տեանս, զի ոչ ստեմ. * Ի դամասկոս ազգա- 32
պետն արետայ արքայի պահէր զքաղաքն դա-
մասկացւոց ունել զիս. * եւ ընդ պատուհանն 33
վանդակաւ կախեցայ ընդ պարիսպն, եւ փա-
խեայ 'ի ձեռաց նորա.*

ԳԼ. ԺԲ.

*Արդ՝ պարծել ինչ պարտ իցէ. այլ օգ- 1
նէ ինչ ոչ. Բայց եկից 'ի տեսիլս եւ 'ի յայտ-
նութիւնս տ̃ն. * Գիտեմ այր մի 'ի քս̃ յառաջ 2
քան զչորեքտասան ամ, եթէ մարմնով՝ ոչ գի-
տեմ, եւ եթէ առանց մարմնոյ՝ ոչ գիտեմ, ա̃ծ
գիտէ. յափշտակեալ զայնպիսին մինչեւ յեր-
րորդ երկինս. * Եւ գիտեմ զայնպիսի այր. 3
եթէ մարմնով՝ եւ եթէ առանց մարմնոյ՝ ոչ գի-*

4 տեմ. ա̃ծ գիտէ, * զի յափշտակեցաւ 'ի դրախտն. և լուաւ բանս անճառս, զոր ոչ է
5 պարտ մարդոյ խօսել. * Վ̃ն այնպիսւոյն պարծեցայց. այլ վ̃ն անձին ինչ ոչ պարծեցայց,
6 բայց եթէ 'ի տկարութիւնս. * Զի եթէ և կամիցիմ պարծել՝ ոչ եղէց անզգամ, քանզի
զարդարն ասեմ. այլ խնայեմ, գուցէ ոք
համարիցի ինչ յիս աւելի՝ քան զոր տեսա-
7 նիցէ յիս՝ կամ լսիցէ յինէն. * Եւ զի մի՛ առաւելութեամբ յայտնութեանցն հպարտացայց,
տուաւ ինձ խայթ մարմնոյ հրեշտակ սատանի՝
8 կռփել զիս. զի մի՛ հպարտացայց. * Եւ վ̃ն
այնորիկ երիցս անգամ աղաչեցի զտէր՝ զի 'ի
9 բաց արասցէ յինէն. * Եւ ասէ ցիս. շատ են
քեզ շնորհք իմ, զի զօրութիւն իմ 'ի տկարութեն կատարի. և արդ՝ լաւ ևս լիցի ինձ
պարծել 'ի տկարութիւնս, զի բնակեսցէ յիս
զօրութիւնն քրիստոսի.

10 * Վ̃ն որոյ հաճեալ եմ ընդ տկարութիւնս, Գ̃Դ
ընդ թշնամանս, ընդ վիշտս, ընդ հալածանս,
և ընդ նեղութիւնս վ̃ն ք̃ի. զի յորժամ տկա-
11 րանամ, յայնժամ զօրանամ. * Եղէ անզգամ,
քանզի դուք ստիպեցիք զիս. զի ինձ պարտ
էր 'ի ձէնջ վկայութիւն առնուլ՝ թէ ոչինչ
պակաս գտայ քան զլաւ առաքեալսն. զի
12 թէպէտ և ես ոչինչ եմ. * սակայն նշանք ա-
ռաքելոյ գործեցան 'ի ձեզ՝ ա̃մ համբերութ̃,
13 նշանօք և արուեստիւք՝ և զօրութ̃ք. * Եւ

արդ զի՞նչ իցէ , որով պակաս գտայք քան
զայլ եկեղեցիս . բայց եթէ այնու՝ զի ես զձեզ
ոչ ծանրացուցի . շնորհեցէ՛ք ինձ զզրկանդ
զայդ . *Ահաւասիկ այս երիցս անգամ պատ- 14
րաստեալ եմ գալ առ ձեզ . և ձեզ բեռն ինչ
ոչ եղէց . զի ոչ խնդրեմ ինչ զձեր՝ այլ զձեզ .
քանզի ոչ պարտին որդիք հարց գանձել՝ այլ
հարք որդւոց . *Բայց ես մտադիւրութե̃ ծա- 15
խեցից , և ծախեցայց վ̃ն անձանց ձերոց . զի
թէպէտ և յառաւել սիրոյն զձեզ սակաւ սի-
րիցեմ . *Այլ դրեթէ ես ոչ ինչ ծանրացայ ձեզ . 16
այլ քանզի խորագէտ էի , խեղօք կալայ զձեզ .
*Միթէ որովք առաքեցին առ ձեզ՝ նոքօք 17
ինչ ագահեցի՞ 'ի ձէնջ . *Աղաչեցի զտիտոս՝ 18
և առաքեցի ընդ նմա զեղբայրն , միթէ ա-
գահեա՞ց ինչ զձեր տիտոս . ո՞չ նովին ոգւով
գնացաք . ո՞չ նովին շաւղօք շրջեցաք .

ԳԶ *Դարձեալ համարիցիք՝ եթէ յողօք ան- 19
կեալ ինչ ձեզ աղերսիցեմք . առաջի այ̃ 'ի քս̃
խօսիմք , զի ա̃մ ինչ սիրելիք վ̃ն ձերոյ շինու-
թն է . *Այլ երկնչիմ , գուցէ եկեալ՝ ոչ ոպ̃ 20
ես կամիմն գտանիցեմ զձեզ . և ես գտանի-
ցիմ ձեզ՝ ոպ̃ և դուք ոչ կամիցիք . գուցէ
դարձեալ՝ հեռ , նախանձ , սրտմտութիւնք ,
դրդռութիւնք , չարախօսութիւնք , քսու-
թիւնք , հպարտութիւնք , ամբարտաւանու-
թիւնք , խռովութիւնք . *Գուցէ դարձեալ 21
յորժամ գայցեմ՝ նկուն ինչ առնիցէ զիս ա̃ծ

իմ առ ձեզ. և սուգ առնուցում վասն բազմաց
յառաջագոյն մեղուցելոց, և ոչ ապաշխարելոց՝
'ի վերայ պղծութեան և պոռնկութեան
և գիջութեան՝ զոր գործեցին։

ԳԼ. ԺԳ.

1 Այս երիցս անգամ գամ առ ձեզ. զի 'ի
բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի
2 ամ̃ բան։ *Յառաջ ասացի և դարձեալ կանխաւ
ասեմ յանդիման երկիցս անգամ. և
այժմ 'ի բացուստ գրեմ յառաջագոյն յանցուցելոցն՝
և այլոցն ամենեցուն. զի եթէ եկից
3 դարձեալ՝ ոչ խնայեցից։ *Եթէ զփո՞րձ ինչ
խնդրէք զքս̃ի, որ ինեւս ընդ ձեզ խօսի.
որ հզօրացեալն է 'ի ձեզ, և ոչ տկարացեալ։
4 *Զի թէպէտ և խաչեցաւ 'ի մերմէ տկարութենէ,
այլ կենդանի է զօրութ̃ն այ̃. և մեք
թէպէտ և տկարանայցեմք վն̃ նր̃, այլ կենդանի
լիցուք ընդ նմա զօրութ̃ն այ̃։
5 *Փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայք 'ի ԳԿ
նոյն հաւատս. քննեցէք զանձինս, եթէ ո՞չ
գիտէք զանձինս՝ զի քս̃ յս̃ 'ի ձեզ է. բայց
6 եթէ անպիտան ինչ իցէք։ *Այլ ակն ունիմ
թէ գիտիցէք. զի մեք ոչ եմք անպիտանք։
7 *Այլ խնդրեմք յայ̃՝ զի մի՛ ինչ արասցէ
ձեզ չար. ոչ զի մեք ընտիրք երեւեցուք,
այլ զի դուք զբարիս գործիցէք՝ և մեք ան֊

պիտանք լիցուք · *Զի ոչ կարեմք ինչ հակա֊ 8
ռակ կալ ճշմարտութե՟ն · այլ վերակացու եմք
ճշմարտութե՟ն · *Խնդամ եմք՝ յորժամ մեք տը֊ 9
կարանայցեմք՝ և դուք զօրաւոր լիցէք · զդոյն
իսկ և աղօթս առնեմք զձեր հաստատութիւ֊
նըդ · *Վ՟ այնորիկ զայս ՚ի հեռուստ գրեմ · 10
զի մի՛ յորժամ եկից՝ սաստկութ՟բ վարեցայց՝
ըստ իշխանութե՟ս, զոր ետ ինձ տէր ՚ի շինել՝ և
ոչ ՚ի քակել · *Այսուհետև եղբարք, ողջ 11
լերուք՝ հաստատուն կացէք՝ մխիթարեցա֊
րուք՝ միաբան լերուք՝ խաղաղութիւն արա֊
րէք · Եւ աստուած խաղաղութեան և սիրոյ՝
եղիցի ընդ ձեզ · *Ողջո՛յն տուք միմեանց ՚ի 12
համբոյր սրբութե՟ · ողջոյն տան ձեզ սուրբք
ամենայն · *Շնորհք տեառն մերոյ յիսուսի 13
քրիստոսի, և սէրն աստուծոյ, և հաղորդու֊
թիւն հոգւոյն սրբոյ ընդ ձեզ ամենեսին, ա֊
մէն ։

Առ Կորնթացիս երկրորդ՝ գրեցաւ ՚ի Փիլիպպեայ,
՚ի ձեռն Տիտոսի և Ղուկասու ։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍՆ

ԳԼ· Ա·

1 ՊՕՂՈՍ *առաքեալ ոչ 'ի մարդկանէ և* ԴԿ
ոչ 'ի ձեռն մարդոյ, այլ 'ի ձեռն յի՟ի
2 *քի՟ի և ա՟յ հօր՝ որ յարոյց զնա 'ի մեռելոց. * և*
որ ընդ իս են եղբարք ամենեքին, եկեղեցեացդ
3 *գաղատացւոց. * Շնորհք ընդ ձեզ և*
խաղաղութիւն յա՟յ 'ի հօրէ և 'ի տ՟նէ մերմէ
4 *յի՟է քի՟է. * որ ետ զանձն իւր վասն մեղաց*
մերոց, զի զմեզ փրկեսցէ յաշխարհէ չարէ՝
5 *ըստ կամացն ա՟յ և հօր մերոյ. * որում փառք*
6 *յաւիտեանս յաւիտենից՝ ամէն. * Զարմանամ՝*
զի այդպէս վաղվաղակի փոխիք յայնմանէ
որ կոչեացն զձեզ 'ի շնորհսն քի՟ի՝ յայլ աւետարան.
7 ** որ ոչ գոյ այլ. բայց եթէ իցեն ոմանք*
որ խռովեցուցանիցեն զձեզ, և կամի-

ցին շրջել զաւետարանն ք͞ի ։ *Այլ թէ մեք, 8
կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ
աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ, նզո-
վեալ լիցի ։ *Որպէս յառաջագոյնն ասացաք՝ 9
և արդ դարձեալ ասեմ, եթէ ոք աւետարա-
նեսցէ ձեզ աւելի քան զոր առիքն, նզովեալ
լիցի ։ *Արդ՝ մարդկա՞ն հաճոյ լինիցիմ, թէ 10
աստուծոյ ։ կամ խնդրիցեմ մարդկա՞ն հաճոյ
լինել, եթէ տակաւին մարդկան հաճոյ լի-
նէի, ապա քրիստոսի ծառայ ոչ էի ։

Դ.Զ *Ցուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն, 11
որ աւետարանեցաւ յինէն ։ զի ոչ է ըստ մար-
դոյ ։ *քանզի և ոչ ես 'ի մարդոյ առի, և ոչ 12
ուսայ յուսմեքէ ։ այլ 'ի յայտնութենէն յ͞ի ք͞ի ։
*Քանզի լուեալ իսկ է ձեր զիմ գնացսն, որ 13
երբեմն 'ի հրէութեան անդ ։ զի այնչափ հա-
լածէի զեկեղեցին ա͞յ, և աւեր հարկանէի զնա ։
*Եւ յառաջադէմ էի 'ի հրէութեանն՝ քան 14
զբազում հասակակիցս իմ, որ յազգին իմում
էին ։ առաւել նախանձախնդիր էի իմոյ հայ-
րենի աւանդութեանցն ։ *Այլ յորժամ կա- 15
մեցաւ ա͞ծ՝ որոշեաց զիս յորովայնէ մօր իմոյ,
և կոչեաց 'ի ձեռն շնորհաց իւրոց, *յայտնել 16
զորդին իւր ինև զի աւետարանեցից զնա 'ի
հեթանոսս ։ անդէն վաղվաղակի ոչինչ զգա-
ցուցի մարմնոյ և արեան ։ *և ոչ ելի յե͞մ, առ 17
որ յառաջագոյն քան զիս առաքեալքն էին ։
այլ չոգայ յարաբիա, և դարձեալ դարձայ 'ի

18 դամասկոս . * Ապա յետ երից ամաց ելի յԵ͞ղմ
տեսանել զպետրոս . և եղէ առ նմա աւուրս
19 հնգետասան . * Զայլ ոք յառաքելոց անտի ոչ
տեսի , բայց միայն զյակոբոս զեղբայրն տ͞ն .
20 Այլ զոր գրեմս առ ձեզ , ահաւասիկ առաջի
21 ա͞յ՝ զի ոչ ստեմ . * Ապա եկի 'ի կողմանս ա-
22 սորւոց և կիլիկեցւոց . * Եւ յանծանօթս էի
երեսօք եկեղեցեացն՝ որ 'ի Թլփատութենէ
23 անտի էին 'ի ք͞ս . * Բայց զի լսելով լսեալ
էր , թէ որ հալածէրն զմեզ յայնժամ, ա՛րդ
աւետարանէ զհաւատսն՝ զոր երբեմն խախ-
24 տէր . * և փառաւոր առնէին ինեւ զա͞ծ .

ԳԼ. Բ.

1 Ապա յետ ամաց չորեքտասանից միւս- Ե͞Կ
անգամ ելի յԵ͞ղմ ընդ բառնաբայ . առեալ
2 ընդ իս և զտիտոս . * Եւ ելի ըստ յայտնութեն .
և զգացուցի ն͞ց զաւետարանն՝ զոր քարոզէի
'ի հեթանոսս , առանձինն այնոցիկ՝ որ կարծ-
եալքն էին , գուցէ ընդունայն ինչ ընթացեալ
3 իցեմ, կամ ընթանայցեմ . * Այլև ոչ տիտոս՝
որ ընդ իս 'ի հեթանոսաց էր , բռնադատեցաւ
4 թլփատիլ . * այլ վ͞ս սպրդողաց սուտ եղբարցն,
որք սպրդեցին մտանել դիտել զազատութիւնն
մեր՝ զոր ունիմք 'ի ք͞ս յ͞ս . զի զմեզ ծառայե-
4 ցուսցեն . * Որոց և ոչ առ ժամանակ մի անսա-
ցաք հնազանդութեն . զի ճշմարտութիւն ա-

ւետարանին հաստատեսցի առ ձեզ ։ * Բայց 6
զկարծեցոյն եթէ իցեն ինչ, որպիսի ոք երբեմն էին, չէ՛ ինչ ինձ փոյթ. քանզի ա̃ծ ակն
մարդկան ոչ առնու. զի ինձ կարծեալքն այնպիսի ինչ ոչ զգացուցին ։ * Այլ զնորին հա- 7
կառակն՝ իբրև տեսին թէ հաւատացեալ է
ինձ աւետարանն անթլփատութե̃ն ո̃պ պետրոսի 'ի թլփատութե̃ն . * զի որ յաջողեաց պետ- 8
րոսի յառաքելութիւն թլփատութե̃ն, յաջողեաց և ինձ 'ի հեթանոսս . * իբրև գիտացին 9
զշնորհսն որ տուեալ էին ինձ, յակովբոս՝ և
կեփաս՝ և յովհաննէս, որ կարծեալք սիւնքն
էին, ձեռն ետուն հաւանութե̃ն ինձ և բառնաբայ . զի մեք 'ի հեթանոսս, և ն̃ք 'ի թլփատութե̃ն, * բայց միայն զի զաղքատսն յիշես- 10
ցուք . զոր և ես փութացայ զնոյն առնել ։

ԻԴ

* Այլ յորժամ եկն կեփաս յանտիոք, ընդ- 11
դէմ դարձայ նմ̃ . քանզի դոդ իբրև ստգտեալ
իմն էր ։ * Քանզի մինչչև եկեալ էին ոմանք 12
առ 'ի յակովբայ, ընդ հեթանոսս ուտէր անխտիր . իսկ իբրև եկին, զատանէր և որոշէր
զանձն, երկուցեալ յայնցանէ՝ որ 'ի թլփատուէ̃
անտի էին ։ * Եւ կեղծաւորեցան ընդ նմա և 13
այլ հրէայքն . մինչև բառնաբաս անդամ խոնարհեցաւ 'ի նց̃ կեղծաւորութիւնն ։ * Այլ 14
իբրև տեսի թէ ոչ ուղիղ գնան 'ի ճշմարտութիւն աւետարանին, ասեմ ցկեփաս առաջի
ա̃մցուն, եթէ դու որ հրէայդ ես՝ հեթանո-

սաբար՝ և ոչ հրէաբար կեաս, զիա՞րդ ստիպես
15 հեթանոսաց լինել հրէարէն · *Զի մեք բուն
հրէայք եմք, և ոչ 'ի հեթանոսաց մեղաւորք ·
16 *Զայս գիտեմք՝ եթէ ոչ արդարանայ մարդ
'ի գործոց օրինաց, եթէ ոչ՝ 'ի հաւատոցն յ̃ի
ք̃ի · և մեք 'ի ք̃ս յ̃ս հաւատացաք, զի արդարասցուք 'ի հաւատոցն ք̃ի, և ոչ 'ի գործոց օրինաց · զի 'ի գործոց օրինաց ոչ ար-
17 դարասցի ամենայն մարմին · *Իսկ եթէ մինչ
խնդրիցեմք արդարանալ 'ի ք̃ս, և գտանիցիմք մեղաւորք · ապա ուրեմն՝ ք̃ս մեղա՞ց
18 պաշտօնեայ եղեւ · քաւ լիցի · *Զի եթէ զոր
քակեցին՝ զնոյն միւսանգամ շինիցեմ · ապա
յանցաւոր զանձն իմ ես ինձէն երեւեցուցա-
19 նեմ · *Զի ես օրինօք, օրինացն մեռայ, զի
աստուծոյ կեցից, և ընդ քրիստոսի 'ի խաչ
20 ելից · *Եւ կենդանի եմ այսուհետև, ոչ ես՝
այլ կենդանի է յիս քրիստոս ·

Այլ որ այժմն կեամ մարմնով, հաւատովք՝ որդւոյն ա̃յ կեամ · որ սիրեացն զիս, ԽԶ
21 և մատնեաց զանձն վ̃ս իմ · *Եւ ես ոչ անարգեմ զշնորհսն ա̃յ · զի եթէ յօրինաց անտի
էր արդարութիւն, ապա ք̃ս զուր մեռաւ ·

ԳԼ· Գ·

1 Ո՜ անմիտ գաղատացիք, ո՞ նախանձ աբար զձեզ (ոչ հնազանդել ճշմարտուե̃) · որոց

գրեթէ առաջի աչաց քս̃ յս̃ գրեցաւ 'ի խաչ
ելեալ։ *Զայս միայն կամիմ ուսանել 'ի ձէնջ. 2
'ի գործո՞ց օրինաց զհոգին ընկալարուք՝ եթէ
'ի լրոյ հաւատոց։ *Այսչափ անմիտ էք. ըս- 3
կըսեալ հոգւով՝ և արդ մարմնո՞վ վախճանիք։
*Եւ այնչափ անցք անցին ընդ ձեզ զուր՝ ե- 4
թէ իցէ զուր։ *Իսկ արդ՝ որ բաշխեաց 'ի 5
ձեզ զհոգին՝ և յաջողեաց 'ի ձեզ զզօրութիւնս.
'ի գործո՞ց օրինաց է՝ եթէ 'ի լրոյ հաւատոց։
*Որպէս Աբրահամ հաւատաց յա̃ծ՝ և համարե- 6
ցաւ նմա յարդարութիւն։ *Գիտիցէք ար- 7
դեօք. զի որք 'ի հաւատոց անտի են, նք̃ա են
որդիք Աբրահամու։ *Յառաջագոյն գիտէր 8
գիր, եթէ 'ի հաւատոց անտի արդարացու-
ցանէ ա̃ծ զհեթանոսս, յառաջագոյն խոստա-
ցաւ Աբրահամու, թէ 'ի քեզ օրհնեսցին ա̃մ
ազգք։ *Այսուհետեւ որք 'ի հաւատոց ան- 9
տի են՝ օրհնին ընդ հաւատացելոյն Աբրահա-
մու։ *Զի որ միանգամ 'ի գործոց օրինացն 10
են, ընդ անիծիւք են. քանզի գրեալ է. թէ
անիծեալ ա̃մ մարդ՝ որ ոչ կացցէ յա̃մ գրեալսն
'ի գիրս օրինաց՝ առնել զա̃մ։ *Զի օրինօքն 11
ոչ ոք արդարանայ առաջի ա̃յ, այն յայտ իսկ
Գ.Ջ է. զի արդարն՝ ասէ, 'ի հաւատոց կեցցէ։
*Բայց օրէնքն չե՛ն 'ի հաւատոց, այլ որ 12
արասցէ զայն՝ կեցցէ 'ի նոսին։ *Ք̃ս գնեաց 13
զմեզ յանիծից օրինացն, եղեալ վ̃ն մեր անէծք.
զի գրեալ է, թէ անիծեալ ա̃մ, որ կախեալ

14 *կայցէ զփայտէ . *զի ՚ի հեթանոսս օրհնու-
թիւն աբրահամու եղիցի ՚ի քս̃ յս̃ . զի մեք
զաւետիսն հոգւոյն սրբոյ առցուք հաւատովք .
15 *Ըստ մարդկութեան ասեմ, եղբարք . ապա-
քէն զմարդկան հաստատեալ կտակ ոչ ոք
կարէ անարգել . եւ ոչ այլ հրաման ՚ի վր̃ այնր
16 տալ . *Իսկ աբրահամու խոստացան աւե-
տիքն , և զաւակի նր̃ . և ոչ ասէ զաւակաց՝
իբրև զբազմաց , այլ իբրև զմիոյ , թէ՝ և զա-
17 ւակի քում, որ է քս̃ . *Բայց զայս ասեմ,
զկտակն յառաջագոյն հաստատեալ յայ̃ ՚ի քս̃ .
օրէնքն որ յետ չորեքհարիւր և երեսուն ամի
եղան , ոչ կարեն խախտել առ ՚ի խափանելոյ
18 զաւետիսն . *Եթէ յօրինաց անտի է ժառան-
գութիւնն , ապա ոչ ևս յաւետեաց . բայց
19 աբրահամու աւետեօք շնորհեաց ա̃ծ . *Իսկ
զի՞նչ իցեն օրէնք . յանցուածոց վս̃ յաւելան ,
մինչև եկեսցէ զաւակն , որում խոստացեալն
էր՝ կարգեալ հրեշտակօք ՚ի ձեռն միջնորդի .
20 *Իսկ միջնորդ միոյ ուրուք ոչ է՝ բայց ա̃ծ
21 մի է . *Իսկ արդ՝ օրէնքն հակառակ ի՞նչ ի-
ցեն աւետեացն ա̃յ . քաւ լիցի . զի եթէ
տուեալ էին օրէնքն՝ որ կարող էին կեն-
դանի առնել , ապա հաստատ յօրինաց անտի
22 էր արդարութիւն . *Այլ փակեցին գիրք
զամենեսեան ընդ մեղօք , զի աւետիքն ՚ի հա-
ւատոց անտի յի̃ի քի̃ի տացին հաւատացելոց .
23 *Մինչև հաւատքն եկեալ էին՝ ընդ օրի-

նօքն փակեալ պահէաք 'ի հանդերձեալ հաւատսն, որ յայտնելոց էին 'ի մեզ. * Ապա օ- 24
րէնքն դաստիարակ եղեն մեզ 'ի քս̃ յս̃, զի
'ի հաւատոյն արդարասցուք. * Այլ իբրեւ 25
եկին հաւատքն, ոչ եւս ընդ դաստիարակաւ
եմք. * Քանզի ամենեքին որդիք ա̃յ էք հա- 26
ւատովք 'ի յս̃ քս̃. * Որք միանգամ 'ի քս̃ մկ- 27
րտեցարուք, զքս̃ զգեցեալ էք. չիք խտիր,
* ոչ հրէի՝ եւ ոչ հեթանոսի, ոչ ծառայի՝ եւ ոչ 28
ազատի. ոչ արուի՝ եւ ոչ իգի. զի ամենեքեան
դուք մի էք 'ի քս̃ յս̃. * Ապա եթէ դուք քս̃ի 29
էք, ուրեմն աբրահամու զաւակ էք՝ ըստ
աւետեացն ժառանգ.

ԳԼ. Դ.

կջ Զայս ասեմ. ցորքան ժամանակս ժա- 1
ռանգն տղայ է՝ չէ ինչ առաւել քան զծա-
ռայն. թէպէտ եւ տէր իցէ ամ̃ցուն. * այլ ընդ 2
հազարապետօք է, եւ ընդ դաւառապետօք՝
մինչեւ 'ի ժամանակակէտ հօրն. * Նոյնպ̃ եւ մեք 3
մինչ տղայքն էաք՝ ընդ տարերբք աշխարհիս
'ի ծառայութ̃ն կայաք. * Այլ իբրեւ եկն լրումն 4
ժամանակին, առաքեաց ա̃ծ զորդին իւր՝ որ
եղեւ 'ի կնոջէ, եւ եմուտ ընդ օրինօք. * զի զնս̃ 5
որ ընդ օրինօքն իցեն, գնեսցէ. զի մեք զոր-
դեգրութիւն ընկալցուք. * Եւ զի էք դուք 6
որդիք, առաքեաց ա̃ծ զհոգի որդւոյն իւրոյ

7 ՚ի սիրտս մեր՝ որ աղաղակէ աբբա՝ Հայր։ *Այսուհետև
չես ծառայ, այլ որդի. եթէ որդի՝ և
8 ժառանգ ա̃յ։ *Այլ յայնժամ մինչ ոչն գիտէիք
զա̃ծ՝ ծառայէիք այնոցիկ՝ որ ոչն էին ՚ի բնէ
9 ա̃ծք։ *Այլ այժմիկ ծանեաք զա̃ծ, մանաւանդ
թէ ծանուցայք իսկ յա̃յ, զիարդ դառնայք միւսանգամ
անդրէն ՚ի տարերսն՝ ՚ի տկարս և
յաղքատս, որոց միւսանգամ զանձինս ծառայեցուցանել
10 կամիք։ *Զաւուրս խտրէք՝ և զամիս՝
11 և զժամանակս՝ և զտարիս։ *Երկնչիմ
՚ի ձէնջ, գուցէ թէ ՚ի զուր ինչ վաստակեցի ՚ի
12 ձեզ։ *Եղերուք իբրև զիս, քանզի և ես իբրև
զձեզ էի։ Եղբարք՝ աղաչեմ զձեզ, չիք ինչ
13 ձեր մեղուցեալ առ իս։ *Գիտէք դուք՝ զի
տկարութ̃բ մարմնոյ աւետարանեցի ձեզ զառաջինն.
և զփորձանսն որ ՚ի մարմնի իմում
14 էին, *ոչ անարգեցիք՝ և ոչ անդոսնեցիք. այլ
իբրև զհրեշտակ ա̃յ ընկալայք զիս՝ իբրև զք̃ս յս̃։
15 *Իսկ արդ ո՞ւր է երանութիւնն ձեր, վկայեմ
ձեզ՝ եթէ հնար ինչ էր՝ զաչս ձեր հանէիք և
16 տայիք ինձ։ *Արդ՝ զի՞ թշնամի իմն եղէ ձեզ,
17 զի զստոյգն խօսեցայ։ *Այլ նախանձեցուցանեն
զձեզ ոչ ՚ի բարի. և արգելուլ կամին զձեզ՝ զի
18 նց̃ նախանձաւորք լինիցիք։ *Բայց լաւ է նախանձաւոր
լինել ՚ի բարիս յա̃մ ժամ, և ոչ միայն
յորժամ ՚ի ձերում միջի իցեմ։
19 *Որդեակք իմ, զորս դարձեալ վերստին ՁԴ
20 երկնեմ, մինչև նկարեսցի ք̃ս ՚ի ձեզ։ *Կա-

մէի այժմ գալ առ ձեզ՝ և փոխել զբարբառ
իմ. զի տարակուսեալ եմ ես վն̃ ձեր. *Ասէ՛ք 21
ինչ ինձ՝ որ ընդ օրինօքն կամիք լինել, չիցէ՞
ընթերցեալ ձեր զօրէնս. *Զի գրեալ է՝ թէ 22
աբրահամու երկու որդիք էին, մի յաղախնոյ
անտի, և մի յազատէն. *Այլ որ յաղախնոյն 23
էր՝ ըստ մարմնոյ ծնեալ էր, և որ յազատէն՝
ըստ աւետեաց. *որ է առակ օրինակի. *Զի 24
այս ինքն են երկու կտակարանք, մի 'ի լեռնէ
սինայ 'ի ծառայութիւն ծնեալ՝ որ է հագար.
*Քանզի հագարն՝ լեառն սինա է յարաբիա, 25
հաւասար է այսմ եէմի, զի ծառայէ որդւովք
իւրովք հանդերձ. *Այլ վերինն եէմ ազատ 26
է՝ որ է մայր մեր ամ̃ցուն. *Զի գրեալ է. 27
ուրախ լեր ամուլ՝ որ ոչ ծնանէիր, գոչեա և
աղաղակեա՝ որ ոչդ երկնէիր. զի բազում են
որդիք սնդկին առաւել քան զայրամբւոյն.
*Այլ մեք եղբարք՝ ըստ սահակայ աւետեացն 28
որդիք եմք. *Այլ ո̃պ յայնժամ, որ ըստ մարմնոյն 29
ծնեալ էր՝ հալածէր զայն որ ըստ հոգւոյն,
նոյնպ̃ և այժմ. *Այլ զի՞նչ ասէ գիր. 30
'ի բաց հան զաղախինդ և զորդի դորա. զի
մի՛ ժառանգեսցէ որդի աղախնոյն՝ ընդ որդւոյն
ազատի. *Վ̃ որոյ եղբարք՝ չեմք որդիք 31
աղախնոյն, այլ ազատին. ազատութ̃ն,
որով քրիստոս զմեզ ազատեաց.

ԳԼ. Ե.

1 Պինդ կացէք այսուհետև. և մի՛ միւսանգամ ընդ լծով ծառայութեան մտանէք.
2 *Ահաւասիկ ես պօղոս ասեմ ձեզ, զի ե- ԶԶ
3 թէ թլփատիք, քս̃ ինչ ձեզ ոչ օգնէ. *Վկայեմ ա̃մ մարդոյ՝ որ թլփատիցի, թէ պարտա-
4 կան է զա̃մ օրէնսն կատարել. *Խափանեալ էք ՚ի քս̃է՝ որ օրինօքն արդարանայք. և ան-
5 կեալ էք ՚ի շնորհաց անտի. *Զի մեք հոգւոյն՝ ՚ի հաւատոց յուսոյն արդարութե̃ն ակն
6 ունիմք. *Զի ՚ի քս̃ յս̃՝ ոչ թլփատութիւն ինչ կարող է՝ և ոչ անթլփատութիւն. այլ
7 հաւատք սիրով յաջողեալք. *Բարւոք ընթանայիք, ո՞ կասեցոյց զձեզ ճշմարտութե̃ն
8 չհաւանել. *Զի այն հրապոյրք՝ ոչ յայնմանէ
9 են՝ որ կոչեաց զձեզ. *Փոքր մի խմոր զա-
10 մենայն զանգուածն խմորէ. *Այլ ես յուսացեալ եմ ՚ի ձեզ տէրամբ՝ թէ ոչ այլազգ ինչ խորհիցիք. և որ խռովեցուցանէ զձեզ՝
11 կրեսցէ դատաստան՝ ո՛ ոք և իցէ. *Այլ ես եղբարք՝ եթէ թլփատութիւն քարոզէի, ընդէ՞ր տակաւին հալածիմ. ապա ուրեմն խա-
12 փանեալ իցէ գայթակղութիւն խաչին. *Երանի թէ մօտակտուր իսկ լինէին՝ որ զձեզն
13 խռովեցուցանեն. *Զի դուք յազատութիւն կոչեցեալ էք՝ եղբարք, միայն զի ազատու-

թիւն ձեր ոչ լինիցի 'ի պատճառս մարմնոյ.
այլ սիրով ծառայեցէք միմեանց. * Զի ամենայն 14
օրէնք 'ի մի բան կատարին. 'ի սիրեսցեսն
զընկեր քո իբրեւ զանձն քո. * Ապա եթէ 15
զմիմեանս խածատիցէք՝ եւ ուտիցէք.
զգոյշ լերուք՝ գուցէ 'ի միմեանց սատակիցիք.
ԷԴ * Բայց զայս ասեմ. Հոգւով գնացէք, եւ 16
զցանկութիւն մարմնոյ մի՛ կատարէք. * Զի 17
մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, եւ հոգի
հակառակ մարմնոյ. եւ զի սոքա միմեանց հակառակ
են. մի՛ զոր կամիցիքն՝ զայն առնիցէք.
* Իսկ եթէ հոգւով վարիք, ապա չէք 18
ընդ օրինօք. * Զի յայտնի են գործք մարմնոյ. 19
այսինքն են շնութիւն, պոռնկութիւն,
պղծութիւն, գիջութիւն, * կռապաշտութիւն, 20
կախարդութիւն, թշնամութիւն, հեռ,
նախանձ, բարկութիւն, հակառակութիւնք,
երկպառակութիւնք, հերձուածք, * չարակնութիւնք, 21
սպանութիւնք, արբեցութիւնք,
անառակութիւնք, եւ որ ինչ սոյին նման են.
զոր յառաջագոյն իսկ ասեմ ձեզ, որպէս կանխաւն
ասէի, թէ որ զայսպիսի ինչ գործեն՝
զարքայութիւն այ՟ ոչ ժառանգեն. * Իսկ
պտուղ հոգւոյն այս է. սէր խնդութիւն 22
խաղաղութիւն երկայնմտութիւն, * քաղցրութիւն, 23
բարութիւն, հաւատք, հեզութիւն,
ժուժկալութիւն. զայսպիսեաց աստի օրէնքն
չեն հակառակ. * Իսկ որ Քրիստոսեանքն են, 24

զմարմինս իւրեանց 'ի խաչ հանին կարեօքն
25 և ցանկութեամբք հանդերձ ։ *Եթէ կեամք
հոգւով՝ ընդ հոգւոյն և միաբանեսցուք ։
26 *Եւ մի՛ լիցուք սնապարծք՝ միմեանց ձայն
տալոյ, և ընդ միմեանս նախանձելոյ ։

ԳԼ. Զ.

1 Եղբարք՝ եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք ԼԶ
'ի ձէնջ յինչ և իցէ յանցանս, դուք որ հո-
գեւորքդ էք՝ հաստատեցէք զայնպիսին հոգ-
ւով հեզութեան ․ զգոյշ լինիցիք անձանց՝ զի մի՛
2 և դուք փորձիցիք ։ *Զմիմեանց բեռն բար-
ձէք, և այնպէս կատարեցէք զօրէնսն ք͞ի ։
3 *Եթէ համարիցի ոք լինել ինչ՝ և չիցէ,
4 զանձն իւր խաբէ ։ *Զգործ իւր կշռեսցէ
իւրաքանչիւրոք, և ապա անձին իւրում մի-
այն պարծանս տացէ, և մի՛ առ ընկերաւն ։
5 *Զի իւրաքանչիւրոք զիւր բեռն բառնալոց
6 է ։ *Հաղորդութիւն արասցէ աշակերտն
7 վարդապետին՝ յա͞մ բարութիւնս ։ *Մի՛ խա-
8 բիք ․ ա͞ծ ոչ արհամարհի ։ *Զի զոր ինչ սեր-
մանէ մարդ՝ զնոյն և հնձեսցէ ․ որ սերմանէ
'ի մարմին իւր, 'ի մարմնոյ անտի հնձեսցէ
զապականութիւն ․ և որ սերմանէ 'ի հոգին՝
'ի հոգւոյ անտի հնձեսցէ զկեանսն յաւիտե-
9 նից ։ *Այլ զբարիս գործել մի՛ ձանձրաս-
ցուք, զի 'ի ժամանակի իւրում հնձեսցուք

*առանց լքանելոյ. * Այսուհետեւ մինչդեռ 10
ժամանակս 'ի ձեռս է՝ գործեսցուք զբարիս
առ ամենեսեան, մանաւանդ առ ընտանիսն
հաւատոյ. * Տեսէք՝ որպիսի գրով գրեցի 11
առ ձեզ իմով ձեռամբ. * Զի որ միանգամ 12
կամին բարեմարդիկ լինել մարմնով, նոքա
ստիպեն զձեզ թլփատել. միայն զի մի՛ զխաչին քս̃ի զհետ երթայցեն. * Քանզի որ թլ- 13
փատեալքն իսկ են, նք̃ զօրէնսն ոչ պահեն.
այլ կամին՝ զի դուք թլփատեսջիք, զի ձե-
Վ.Զ րով մարմնովդ պարծեսցին.*

** Այլ ինձ քաւ լիցի պարծել՝ բայց միայն 14
'ի խաչն տեառն մերոյ յս̃ի քս̃ի, որով ինձ աշ-
խարհ 'ի խաչ ելեալ է՝ և ես աշխարհի. * Զի 15
('ի քս̃ յս̃), ոչ թլփատութիւն ինչ է՝ և ոչ ան-
թլփատութիւն. այլ նոր արարած. * Եւ որ 16
միանգամ այսմ կանոնի միաբան լինին, խա-
ղաղութիւն 'ի վերայ նոցա և ողորմութիւն՝
և 'ի վերայ իսրայէլին աստուծոյ. * Այսու- 17
հետեւ աշխատ ոք զիս մի՛ արասցէ. զի ես
զչարչարանսն քրիստոսի 'ի մարմնի իմում կը-
րեմ. * Շնորհք տեառն մերոյ յիսուսի քրիս- 18
տոսի ընդ ոգւոյդ ձերում եղբարք. ամէն.*

Առ գաղատացիս՝ գրեցաւ 'ի հռոմէ:

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

Գլ․ Ա․

1 ՊՕՂՈՍ *առաքեալ յս՟ի քս՟ի կամօքն այ՟՝* ըն՟
սր՟բց որ են յեփեսոս, և հաւատացելոց
2 *'ի քս՟ յս՟ ․ * Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յայ՟ հօրէ մերմէ՝ և 'ի տն՟է յս՟է քս՟է ․*
3 * *Օրհնեալ է ած՟ և հայր տն՟ մերոյ յս՟ի քս՟ի,*
որ օրհնեաց զմեզ ամ՟ հոգևոր օրհնութեամբ
4 *յերկնաւորս 'ի քս՟ ․ * որպ՟ ընտրեաց զմեզ նովաւ յառաջ քան զլինելն աշխարհի, լինել մեզ*
5 *սր՟բս և անարատս առաջի նր՟ սիրով ․ * Յառաջագոյն սահմանեաց զմեզ յորդեգրութիւն 'ի*
ձեռն յս՟ի քս՟ի 'ի նոյն՝ ըստ հաճութե՟ կամաց
6 *իւրոց, * 'ի գովեստ փառաց շնորհաց իւրոց ․*
7 *որով զուարճացոյց զմեզ սիրելեաւն ․ * Որով*
ունիմք զփրկութիւն 'ի ձեռն արեան նր՟, ըզ

թողութիւն մեղաց՝ ըստ մեծութ՟ե շնորհաց
իւրոց. *որ առաւելաւ ՚ի մեզ ամ՟ իմաստութ՟բ 8
և գիտութ՟բ. *Ցոյց մեզ զխորհուրդս կա֊ 9
մաց իւրոց՝ ըստ հաճութ՟ե իւրում. զոր յա֊
ռաջագոյն եդ նովաւ, *՚ի տնտեսութիւն լր֊ 10
ման ժամանակաց, բովանդակել զամ՟ ք՟սի,
որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի՝ ՚ի նոյն. *Ո֊ 11
րով և վիճակեցաք յառաջագոյն հրաւիրեալք՝
ըստ յառաջադրութ՟են ա՟յ. որ զամ՟ յաջողէ
ըստ խորհրդոց կամաց իւրոց. *լինել մեզ 12
՚ի գովեստ փառաց ն՟ր յառաջագոյն յուսացե֊
լոցս ՚ի ք՟ս. *Որով և դուք իբրև լուարուք 13
զբանն ճշմարտութ՟ե, զաւետարանն փրկութ՟ե
ձերոյ, որով և հաւատացեալ կնքեցայք հոգ֊
ւոյն սրբոյ աւետեաց. *որ է առհաւատչեայ 14
ժառանգութեան մերոյ, ՚ի փրկութիւն նուա֊
ճութեան, ՚ի գովեստ փառաց նորա.

ԲԴ *Վ՟ս այնորիկ և ես իբրև լուայ զհաւատսն 15
ձեր՝ որ ՚ի տէր յ՟ս, և զսէրն որ ընդ ամ՟ ս՟բս,
*ոչ դադարեմ ՚ի գոհանալոյ վ՟ս ձեր՝ յիշել 16
զձեզ յաղօթս. *զի ա՟ծ տ՟ն մերոյ յ՟սի ք՟սի հայրն 17
փառաց՝ տացէ ձեզ զհոգին իմաստութեան և
յայտնութ՟ե՝ գիտութ՟բն իւրով. *լուսաւոր 18
առնել զաչս սրտից՝ առ ՚ի գիտելոյ մեզ՝ զինչ
է յոյս կոչման ն՟ր, և զինչ մեծութիւն փառաց
ժառանգութ՟ե ն՟ր ՚ի ս՟բս. *և զինչ է առա֊ 19
ւելութիւն մեծութ՟ե զօրութ՟ե ն՟ր ՚ի մեզ հա֊
ւատացեալս. ըստ յաջողութ՟ե կարողութ՟ե զօ֊

20 րութ՟ն իւրոյ, *զոր յաջողեաց 'ի քս՟ . զի յարոյց զնա 'ի մեռելոց . եւ նստոյց ընդ աջմէ
21 իւրմէ յերկնաւորս, *'ի վր՟ ամ՟ իշխանութ՟ն՝ եւ պետութ՟ն եւ զօրութ՟ն եւ տէրութ՟ն՝ եւ ամ՟ անուան անուանելոյ, ոչ միայն յաշխարհիս
22 յայսմիկ՝ այլ եւ 'ի հանդերձելումն . *Եւ զամ՟ ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից նր՟ . եւ զնա
23 ետ գլուխ 'ի վր՟ ամ՟ իրիք եկեղեցւոյ, *որ է մարմին նր՟, լրումն՝ որ զամ՟ յամ՟ի լնու .

ԳԼ. Բ.

1 Եւ դուք՝ որ մեռեալն էիք 'ի մեղս ձեր
2 եւ յանցանս, *յորս երբեմն գնայիք ըստ յաւիտենի աշխարհիս այսորիկ՝ ըստ իշխանին իշխանութ՟ն օդոյս այսոյ, որ այժմ ընդմիմակալ է
3 յորդիսն ապստամբութ՟ն . *յորս եւ մեք ամ՟քեան շրջէաք երբեմն 'ի ցանկութիւնս մարմնոյ մերոյ, եւ առնէաք զկամս մարմնոյ՝ եւ զմտաց, եւ էաք արդարեւ որդիք բարկութ՟ն իբրեւ այլքն .
4 *Այլ ած՟ որ մեծն է ողորմութ՟բ՝ վս՟ բա- ՃՁ
5 զում սիրոյն իւրոյ՝ զոր սիրեաց զմեզ . *մինչդեռ մեռեալն էաք 'ի մեղս մեր, կենդանիս արար զմեզ 'ի քս՟ . քանզի շնորհօք ապրե-
6 ցաք . *ընդ նմին յարոյց, եւ ընդ նմին նստու-
7 ցոյց յերկնաւորս 'ի քս՟ յս՟ . *Զի ցուցցէ 'ի յաւիտեանսն որ գալոցն են զառաւել մեծութիւն շնորհացն իւրոյ՝ քաղցրութ՟բ 'ի մեզ

'ի քս՟ յս՟ ։ *Զի շնորհօք նորա էք փրկեալք 'ի 8
ձեռն հաւատոյն ։ և այս ոչ 'ի ձէնջ, այլ այ՟
պարգև է ․ *ոչ 'ի գործոց , զի մի՛ ոք պարծեսցի ։ 9
*Զի նր՟ արարածք եմք՝ հաստատեալք 10
քս՟իւ յս՟իւ 'ի գործս բարութ՟ն , յորս յառաջագոյն
պատրաստեաց ա՟ծ , զի 'ի նոյնս
գնասցուք ։ *Վ՟ որոյ և դուք յիշեցէք՝ զի 11
երբեմն հեթանոսք էիք մարմնով ․ որ կոչեցեալն
են անթլփատութիւն՝ յանուանեալ թլփատութ՟է
անտի մարմնաւոր ձեռագործին ․
*զի էիք 'ի ժամանակին յայնմիկ առանց քս՟ի, 12
(և օտարացեալ էիք յառաքինութ՟էն իսրայէլի),
և տարագիրք յուխտից աւետեացն , և յոյս
ինչ ոչ ունէիք՝ և անաստուածք էիք յաշխարհի ։
*Իսկ այժմիկ 'ի ձեռն յս՟ի քս՟ի , դուք՝ 13
որ երբեմն հեռաւորքն էիք՝ մերձաւորք եղերուք
արեամբն քս՟ի ։ *Զի նա է խաղաղութիւն 14
մեր՝ որ արար զերկոսեան մի ․ և զմիջնորմն
ցանկոյն քակեաց՝ զթշնամութիւն 'ի
մարմնի իւրում ․ *և զօրէնս պատուիրանացն 15
հրամանօքն խափանեաց ․ զի զերկոսին հաստատեսցէ
ինքեամբ 'ի մի նոր մարդ , և արասցէ
խաղաղութիւն ․ *և հաշտեցուսցէ զերկոսին 16
միով մարմնով ընդ այ՟՝ խաչիւն իւրով,
քանզի սպան զթշնամութիւն յանձին իւրում ։
*Եւ եկն աւետարանեաց խաղաղութիւն ձեզ 17
հեռաւորաց՝ և խաղաղութիւն մերձաւորաց ․
*զի նովաւ ունիմք զնուաճութիւն երկոքին՝ 18

19 միով հոգւով առ հայր ․ *Ապա այսուհետև
ոչ էք օտարք և պանդուխտք , այլ քաղաքակիցք
20 սրբոց և ընտանիք ա̃յ ․ *շինեալք 'ի վերայ
հիման առաքելոց և մարգարէից ․ որոյ է
21 գլուխ անկեանն քի̃ յի̃ ․ *յորում ամենայն շինուածն
յօդեալ և պատշաճեալ՝ աճէ 'ի տաճար
22 սուրբ տերամբ ․ *Յորում և դուք ընդնմին
շինիք 'ի բնակութիւն ա̃յ հոգւով ․ Վ․Ջ

ԳԼ․ Գ․

1 Վասն այսորիկ ես Պօղոս կապեալ յի̃ի
2 քի̃ի վասն ձեր հեթանոսաց ․ *Թերևս լուեալ
իցէ ձեր զտնտեսութիւն շնորհացն ա̃յ ,
3 որ տուեալ են ինձ 'ի ձեզ ․ Զի ըստ յայտնութե̃ն
ցուցաւ ինձ խորհուրդն ․ որպէս յառաջագոյն
4 գրեցի առ ձեզ սակաւուք ․ *առ
'ի կարող լինելոյ ընթեռնուլ՝ և 'ի միտ առնուլ
զիմաստութիւնն զիմ 'ի խորհրդեանն
5 քի̃ի ․ *Զի այլոց ազգաց ոչ ցուցաւ որդւոց
մարդկան ․ ո̃պ այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց
6 առաքելոց և մարգարէից՝ հոգւովն ․ *լինել
հեթանոսաց ժառանգակիցս՝ և մարմնակիցս ,
և հաղորդս աւետեացն 'ի քի̃ յի̃՝ աւետարանաւն
7 , *որոյ եղէ ես սպասաւոր ըստ պարգևաց
շնորհացն աստուծոյ՝ որ տուան ինձ
8 ըստ յաջողութե̃ն զօրութե̃ն նորա ․ *Ինձ , որ
տրուպս եմ ա̃մ սրբոց՝ տուան շնորհքս այս ,

'ի հեթանոսս աւետարանել զանքննին մեծութիւնն
քր՟ի . * և լուսաւոր առնել զամենեսին , 9
թէ զի՞նչ է տնտեսութիւն խորհրդոյն , որ ծածկեալ
էր յա՟մ յաւիտենից առ ա՟յ՝ որ զամենայն
ինչ արար . * Զի յայտնեսցի արդ իշխանութեանց 10
և պետութեանց՝ որ յերկինս են 'ի
ձեռն եկեղեցւոյ՝ բազմապատիկ իմաստութիւնն
ա՟յ . * ըստ յառաջադրութեան յաւիտենիցն՝ 11
զոր արար 'ի ձեռն տեառն մերոյ յ՟սի
քր՟ի . * Որով ունիմք զհամարձակութիւն և 12
զնուաճութիւն յուսով 'ի ձեռն հաւատոյ նորա
. * Վասն որոյ աղաչեմ մի՛ ձանձրանալ 'ի 13
նեղութեանս մերում , որ վասն ձեր է . որ է
փառք ձեր . * Վասն այսորիկ դնեմ ծունր 14
առ հայր տեառն մերոյ յ՟սի քր՟ի . * ուստի ա՟մ 15
նահապետութիւն յերկինս և յերկրի անուանի
. * զի տացէ ձեզ ըստ մեծութեան փառաց 16
իւրոց , հաստատել զօրութ՟բ 'ի ձեռն հոգւոյն
իւրոյ 'ի ներքին մարդն . * բնակել քր՟ի հաւատովք 17
'ի սիրտս ձեր . սիրով արմատացեալք
և հաստատեալք . * զի կարող լինիջիք հասանել 18
ընդ ա՟մ սուրբս , զի՞նչ է լայնութիւն
և երկայնութիւն և բարձրութիւն , և խորութիւն
. * ճանաչել զառաւելութիւն գիտութեան 19
սիրոյն քր՟ի . զի լցջիք ա՟մ լրութ՟բն
ա՟յ . * Այլ այնմ որ կարողն է առաւել քան 20
զա՟մ ինչ առնել յաճախութ՟բ քան զոր խնդրեմքն
և իմանամք . ըստ զօրութեանն՝ որ յա-

21 ջողեալն է 'ի մեզ · *Նմա փառք յեկեղեցւոջ,
եւ 'ի ք՟ն յ՟ն, յամենայն ազգս յաւիտենից
յաւիտեանս · ամէն ·

ԳԼ· Դ·

1 Արդ՝ աղաչեմ զձեզ ես՝ որ կապեալս
եմ 'ի տէր, արժանի գնալ կոչմանն՝ յոր կոչեցարուք ·
2 *Ամենայն խոնարհութեամբ՝ և
հեզութ՟ե և երկայնմտութ՟ե՝ անսալ միմեանց
3 սիրով · *Փութալ պահել զմիաբանութիւն
4 հոգւոյն յօդիւ խաղաղութե՟ · *Մի մարմին՝
և մի հոգի · որպէս և կոչեցարուք, 'ի մի յոյս
5 կոչման ձերոյ · *Մի է տէր, մի հաւատք՝
6 մի մկրտութիւն · *Մի ա՟ծ, և հայր ամենեցուն՝
որ 'ի վերայ ա՟մի և ընդ ամենեսին՝
7 և յամենեսին 'ի մեզ · *Այլ իւրաքանչիւր
ումեք 'ի մէնջ տուեալ են շնորհք ըստ չափոյ
8 պարգեւացն ք՟ի · *Վասն որոյ և ասէ · ել
'ի բարձունս՝ գերեաց զգերութիւն · և ետ
9 պարգեւս մարդկան · *Որ ելն զի՞նչ է, եթէ
ոչ՝ զի էջ նախ 'ի ստորին կողմն երկրի ·
10 Որ էջն, նոյն է՝ և որ ելն 'ի վերոյ քան զա՟մ
11 երկինս · զի լցցէ զա՟մ · *Եւ նա ետ զոմանս
առաքեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս,
զոմանս հովիւս և վարդապետս ·
12 *առ 'ի հաստատութիւն սր՟ց, 'ի գործ
13 պաշտաման, 'ի շինուած մարմնոյն ք՟ի · *մին-

չեւ հասցուք ամենեքեան 'ի մի միաբանութիւն
հաւատոյ և գիտութեան որդւոյն ա̃յ .
յայր կատարեալ 'ի չափ հասակի կատարմանն
քի̃ . * Զի մի՛ յայսմհետէ լիցեմք տղայք խռովեալք 14
և տատանեալք յա̃մ հողմոց վարդապետութեան
, խաբէութ̃բ մարդկան . խորամանկութ̃բ
'ի խաբէութիւն մոլորութեան ,
* Այլ ճշմարտեալք սիրով՝ աճեսցուք 'ի նա 15
զամենայն , որ է գլուխ քս̃ . * ուստի ա̃մ մարմինն 16
յօդեալ և պատշաճեալ ա̃մ խաղալեօք
տուրևառութն̃՝ ըստ ազդեցութն̃՝ չափով ըստ
իւրաքանչիւր մասին՝ զաճումն մարմնոյ գործէ՝
'ի շինուած անձին իւրոյ սիրով . * Արդ՝ 17
զայս ասեմ , և ուխտեմ 'ի տէր . մի՛ ևս ձեզ
զնոյն օրինակ գնալ՝ որպէս և այլ հեթանոսք
գնան՝ ունայնութ̃բ մտաց իւրեանց . * որոց 18
խաւարեալ են սիրտք իւրեանց , և օտարացեալ
են 'ի կենաց անտի ա̃յ՝ վասն տգիտութեանն՝
որ է 'ի նոսա , վասն կուրութն̃ սրտից
իւրեանց . * Որք զանձանց իւրեանց դյոյն 19
հատին , և մատնեցին զանձինս գիջութեան ,
'ի գործս ա̃մ պղծութն̃ ագահութ̃բ . * Այլ 20
դուք ոչ այսպէս ուսարուք զքս̃ . * թէպէտ և 21
լուարուք զնմանէ , և նովաւ ուսայք՝ որպէս
է ճշմարտութիւնն յիսուսի . * 'ի բաց մերկանալ 22
'ի ձէնջ ըստ առաջին գնացիցն զմարդն
հին՝ զապականեալն ցանկութեամբք խաբէութեանն
. * Եւ նորոգել հոգւովն մտաց ձե- 23

24 րոյ . *և զգենուլ զնոր մարդն՝ որ ըստ աստուծոյն
հաստատեալ է՝ արդարութեամբ և
25 սրբութ՟ք ճշմարտութեանն , *Վասն որոյ 'ի
բաց ընկեցէք զստութիւն . խօսեցարուք ըզ
ճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի
26 իւրում . զի եմք միմեանց անդամք . *Բարկանայք՝
և մի՛ մեղանչէք . արեգակն 'ի վերայ
27 բարկութեան ձերոյ մի՛ մտցէ . *Եւ մի՛
28 տայք տեղի սատանայի . *Որ գողանայրն՝
մի՛ ևս գողասցի , այլ մանաւանդ վաստակեսցէ
գործել ձեռօք իւրովք զբարիս , զի
29 բաւական իցէ տալ՝ ում պիտոյ իցէ . *Ամենայն
բան տգեղ 'ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ .
այլ որ ինչ բարին է 'ի շինած պիտոյից , զի
30 տացէ շնորհս այնոցիկ , որ լսենն . *Եւ մի՛
տրտմեցուցանէք զհոգին սուրբ աստուծոյ ,
որով կնքեցարուք յաւուրն փրկութեան .
31 *Ամենայն դառնութիւն՝ և բարկութիւն , և
սրտմտութիւն և աղաղակ՝ և հայհոյութիւն
բարձցի 'ի ձէնջ ամենայն չարութեամբն հանդերձ .
32 *Լերուք ընդ միմեանս քաղցունք՝
գթածք . շնորհել միմեանց , որպէս և աստուած
քրիստոսիւ շնորհեաց մեզ .

ԳԼ. Ե.

1 Եղերուք նմանողք ա՟յ , իբրև որդիք սիրելիք .
2 *և գնացէք սիրով ո՟պ և ք՟ս սիրեաց

զմեզ, և մատնեաց զանձն իւր վ՟ մեր՝ պատարագ և զենումն ա՟յ 'ի հոտ անուշից ։ *Այլ 3
պոռնկութիւն և ա՟մ պղծութիւն, կամ ագահութիւն՝ և անուանեսցի մի՛ 'ի միջի ձերում,
ոպ՟ և վայել է սր՟ց ։ *և զազրութիւն՝ կամ խօսք 4
յիմարութ՟ն կամ խեղկատակութիւն՝ որ ոչ վայել է ։ այլ մանաւանդ գոհութիւն ։ *Զայս 5
տեղեկացեալ գիտասջիք ։ թէ ա՟մ պոռնիկ՝ կամ պիղծ կամ ագահ, որ է կռապաշտ՝
ոչ ունի ժառանգութիւն յարքայութ՟ն ք՟ի
և ա՟յ ։ *Մի՛ ոք զձեզ խաբեսցէ բանիւք սնոտեօք ։ 6
զի վասն այսորիկ իսկ գայ բարկութիւն ա՟յ 'ի վերայ որդւոցն անհաւանութ՟ն ։
*Մի՛ այսուհետև լինիք բաժանորդք նոցա ։ 7
*Զի թէպէտ և երբեմն էիք խաւար, արդ 8
լոյս էք 'ի տէր, իբրև զորդիս լուսոյ գնացէք·
*զի պտուղ լուսոյ ա՟մ բարութ՟բ է՝ և արդա- 9
րութ՟բ և ճշմարտութ՟բ ։ *Փորձեցէ՛ք զինչ է 10
հաճոյ տեառն ։ *և մի՛ կցորդ լինիք անպտու- 11
ղութեան գործոցն խաւարի, այլ մանաւանդ
յանդիմանեցէք ։ *Զի որ 'ի ծածուկ ինչ գոր- 12
ծի 'ի նոսա՝ զայն և խօսել աղտեղի է ։ *Այլ 13
ա՟մ ինչ յանդիմանեալ 'ի լուսոյ՝ յայտնի լինի ։
զի ա՟մ ինչ որ յայտնի է՝ լոյս է ։ *Վասն որոյ 14
և ասէ ։ արի որ ննջեսդ, և կանգնեաց 'ի մեռելոց, և լուսատու լիցի քեզ քրիստոս ։

բ·կ *Տեսջիք՝ որպէս ճշմարտիւ գնայցէք ։ մի՛ 15
իբրև անիմաստք, *այլ իբրև իմաստունք ։ 16

գնեցէք զժամանակս՝ զի աւուրքս չարուն են ։
17 *Վասն այնորիկ մի՛ լինիք անմիտք , այլ իմացարուք
18 զինչ կամք են տեառն ։ *Եւ մի
արբենայք գինւով , յորում գեղխութիւն է ։
19 այլ մանաւանդ լցարուք հոգւով ։ *խօսել 'ի
սիրտս ձեր սաղմոսիւք , և օրհնութեամբք՝
և երգովք հոգևորօք ։ երգել և սաղմոսասել
20 'ի սիրտս ձեր տեառն ։ *Գոհացարուք
յա̃մ ժամ 'ի վերայ ա̃մի , յանուն տեառն մերոյ
21 յի̃ քի̃՝ հօրն և ա̃յ ։ *Հնազանդ լերուք
22 միմեանց երկիւղիւն քի̃ ։ *Կանայք իւրեանց
23 արանց հնազանդ լիցին իբրև տեառն ։ *զի
այր է գլուխ կնոջ՝ որպէս և քս̃ գլուխ է եկեղեցւոյ
24 ։ և ինքն է փրկիչ մարմնոյ ։ *Այլ
որպէս եկեղեցին հնազանդ լինի քի̃ , նոյնպէս
25 և կանայք իւրեանց արանց յա̃մի ։ *Արք՝
սիրեցէք զկանայս ձեր ։ որպէս և քս̃ սիրեաց
զեկեղեցի , և զանձն իւր մատնեաց վասն նր̃ ։
26 *զի զնա սրբեսցէ սրբութեամբ աւազանին
27 բանիւ ։ *զի կացուսցէ ինքն իւր յանդիման
փառաւոր զեկեղեցի , զի մի՛ ունիցի ինչ արատ՝
կամ աղտեղութիւն , կամ այլ ինչ յայնպիսեաց
28 ։ այլ զի իցէ ս̃բ և անարատ ։ *Նոյնպէս
պարտին արք սիրել զիւրեանց կանայս՝
իբրև զիւրեանց մարմինս ։ որ սիրէ զկին իւր՝
29 զանձն իւր սիրէ ։ *Զի ոչ ոք երբէք ատեաց
զանձն իւր , այլ սնուցանէ և դարմանէ զնա ։
30 որպէս և քս̃ զեկեղեցի ։ *զի անդամք եմք

մարմնոյ նորա , 'ի մարմնոյ նորա և յոսկերաց
նորա ։ *Վասն այսորիկ թողցէ այր զհայր և 31
զմայր իւր , և երթիցէ զհետ կնոջ իւրոյ , և
եղիցին երկոքին 'ի մարմին մի ․ *Խորհուրդս 32
այս մեծ է՝ բայց ես ասեմ 'ի ք՟ս և յեկեղեցի ։
*Այլ և դուք նոյնպէս մի ըստ միոջէ ․ զի իւրաքանչիւրոք 33
զիւր կին այնպ՟ սիրեսցէ՝ իբրև
զիւր անձն ․ և կին երկնչիցի յառնէ իւրմէ ։

ԳԼ․ Զ․

Թ․Դ․ Որդիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց 1
'ի Տէր ․ զի այն է արժանն ։ *Պատուեա 2
զհայր քո և զմայր ․ որ է առաջին պատուիրան
յաւետեան ․ *զի քեզ բարի եղիցի , և 3
երկայնակեաց լինիցիս 'ի վ՟ր երկրի ․ *Հարք՝ 4
մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր , այլ սնուցանիջիք
զնոսա խրատու և ուսմամբ տեառն ։
*Ծառայք՝ հնազանդ լերուք տերանց ձերոց 5
մարմնաւորաց ․ ահիւ և դողութեամբ և միամտութեամբ
սրտից ձերոց՝ որպէս և ք՟ի ։
*Մի՛ առ ականէ ծառայել իբրև մարդահաճոյք ․ 6
այլ իբրև ծառայք ք՟ի առնել զկամս
ա՟յ ․ *սրտի մտօք ծառայել՝ իբրև տեառն , 7
և մի՛ իբրև մարդկան ։ *Գիտասջիք՝ թէ իւրաքանչիւրոք 8
որ զինչ առնէ զբարին , զնոյն
ընդունի և 'ի տեառնէ՝ եթէ ծառայ և եթէ
ազատ ։ *Եւ դուք տեարք՝ զնոյն առնիջիք 9

առ նս̃ · ներելով առնել զպատուհասն · գիտասջիք թէ և նոցա և ձեր տէր գոյ յերկինս · և ակնառութիւն ոչ գոյ առաջի նորա · Կ.Զ

10 * Այսուհետև զօրացարուք տէրամբ, և
11 կարողութեամբ զօրութեան նր̃ · * Եւ զգեցարուք զսպառազինութիւնն այ̃ · զի կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի ·
12 * Զի ոչ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ և ընդ արեան · այլ ընդ իշխանութիւնս, և ընդ պետութիւնս, և ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ՝ ընդ այսս չարութեան՝ որ 'ի ներքոյ երկնից ·
13 * Վասն այսորիկ առէք զսպառազինութիւնն այ̃ · զի կարող լինիջիք 'ի դիմի հար- ԹԶ
14 կանել չարին՝ յաւուրն չարութեան · * Եւ իբրև զամենայն ինչ կատարիցէք, հաստատուն կացէք · զտեղի կալջիք պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, և զգեցեալ ըզ
15 զրահն արդարութեան, * և ագուցեալ զոտս պատրաստութեամբ աւետարանին խաղաղու-
16 թեան · * Եւ 'ի վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոյ · որով կարող լինիջիք զա-
17 մենայն նետս մուխս չարին շիջուցանել · * Եւ առէ՛ք զսաղաւարտն փրկութեան, և զսուսեր
18 հոգւոյն՝ որ է բանն աստուծոյ · * ամենայն աղօթիւք և խնդրուածովք՝ աղօթս առնել յամենայն ժամանակի հոգւով · և 'ի նոյն տքնիջիք ամենայն ժուժկալութեամբ՝ և խընդ-

*բուածովք՝ վասն ամենայն սրբոց, և վասն
իմ. զի ինձ տացի բան 'ի բանալ բերանոյ ի- 19
մոյ, համարձակութեամբ ցուցանել զխոր-
հուրդ աւետարանին. * վասն որոյ պատգա- 20
մաւորիմ կապանօքս. զի նովին համարձակե-
ցայց, որպէս և պարտ իցէ ինձ խօսել. * Բայց 21
զի գիտիցէք և դուք զինէն, զինչ գործի-
ցեմ. զամենայն ինչ ցուցցէ ձեզ Տիւքիկոս
սիրելի եղբայր՝ և հաւատարիմ պաշտօնեայ
'ի Տէր, * զոր առաքեցի առ ձեզ դմին իրի. 22
զի գիտասջիք դուք զմէնջ, և մխիթարեսցէ
զսիրտս ձեր. * Խաղաղութիւն ընդ եղբարս. 23
և սէր հաւատովք հանդերձ յԱստուծոյ 'ի
Հօրէ՝ և 'ի Տեառնէ յիսուսէ քրիստոսէ.
* Շնորհք ընդ ամենեսին՝ որք սիրեն զՏէր 24
մեր յիսուս քրիստոս անեղծութեամբ. ամէն.*

Առ Եփեսացիս՝ գրեցաւ 'ի Հռովմէ
'ի ձեռն Տիւքիկեայ:



ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍՆ

ԳԼ. Ա.

1 ՊՕՂՈՍ և տիմոթէոս ծառայք յ՟ի ժ՟կ
ք՟ի՝ ա՟մ սրբոց 'ի ք՟ս յ՟ս , որ են 'ի
կողմանս փիլիպեցւոց , եպիսկոպոսակցօք և
2 սարկաւագօք ։ *Շնորհք ընդ ձեզ և խաղա-
ղութիւն յ՟այ հօրէ մերմէ՝ և 'ի տ՟նէ յ՟սէ ք՟սէ ։
3 *Գոհանամ զ՟այ իմոյ 'ի վերայ ա՟մ յիշատակաց
4 ձերոց , *յա՟մ ժամ յա՟մ խնդրուածս իմ վասն
ձեր ամենեցուն առնել աղօթս խնդութեամբ ։
5 *վասն հաղորդու՟ե ձերոյ ընդ աւետարանին ։
6 յօրէ յառաջնմէ մինչև ցայժմ ։ *Վստահ եմ
յայդ , թէ որ սկսաւն 'ի ձեզ զգործս բարեաց՝
7 կատարեսցէ մինչև յօրն յ՟ի ք՟ի ։ *որպէս ի-
րաւ իսկ թուի ինձ խորհել զայս վասն ձեր
ամենեցուն ։ վասն ունելոյ ինձ զձեզ 'ի սրտի

’ի կապանս իմում, և ’ի պատասխանատուութեան
իմում. և ’ի հաստատութեան աւետարանին, կը֊
ցորդս ինձ շնորհաց զձեզ ամենեսին լինել։
*Վկայ է ինձ ա̃ծ, ո՛րպէս անձկացեալ եմ 8
առ ձեզ ամենեսին գթովքն յ̃ի ք̃ի։ *Եւ 9
զայն աղօթս առնեմ. զի սէրն ձեր եւս քան
զեւս առաւել լիցի ’ի գիտութեան և յա̃մ ի֊
մաստութեան. *ընտրել ձեզ զլաւն՝ զի ի֊ 10
ցէք հաստատունք՝ և առանց գայթակղու֊
թեան ’ի յաւուրն ք̃ի. *լցեալ պտղովք ար֊ 11
դարութեան ’ի ձեռն յ̃ի ք̃ի ’ի փառս և ’ի
գովեստ աստուծոյ։

ԺԲ *Կամիմ թէ գիտիցէք եղբարք. զի որ 12
ինչ վասն իմ էր, եւս քան զեւս ’ի յառաջա֊
դիմութիւն աւետարանին եղեն. *մինչեւ կա֊ 13
պանաց իմոց յայտնի լինել ’ի ք̃ս յա̃մ հրապա֊
րակս, և առ այլս ամենեսին. *և առ բա֊ 14
զում եղբարս ’ի տէր, որ վստահ են կապա֊
նօքս իմովք՝ առաւել եւս համարձակել ա֊
ռանց երկիւղի զբանն ա̃յ խօսել. *Ոմանք 15
առ նախանձու եւ հակառակութեան, և ո֊
մանք մտադիւրութեամբ իսկ զք̃ս քարոզեն.
*և ոմանք ’ի սիրոյ. քանզի գիտեն՝ եթէ ’ի 16
պատասխանատուութիւն աւետարանին կամ.
*և ոմանք առ հեստութեան զք̃ս պատմեն. 17
այլ ոչ սրբութեամբ. քանզի համարին նեղու֊
թիւնս յարուցանել ’ի վերայ կապանաց իմոց.
*Բայց այս զինչ է. որով օրինակաւ և իցէ, 18

եթէ պատճառանօք՝ և եթէ ճշմարտութբ՟ ,
քս՟ պատմի . և ընդ այս խնդամ, այլև ուրախ
19 ևս եղէց . * Զի գիտեմ, եթէ այս պահի ինձ
'ի փրկութիւն՝ 'ի ձերոց խնդրուածոց , և 'ի
20 պարգևաց հոգւոյն յս՟ի քս՟ի . * ըստ ակնկալութե
և յուսոյն իմոյ . զի մի՛ իւիք յամօթ եղէց ,
այլ ամենայն համարձակութեամբ՝ որպ՟
և յամ՟ ժամ, և այժմ մեծասցի քս՟ 'ի մարմնի
21 իմում, եթէ կենօք՝ և եթէ մահու . * Զի ինձ
22 կեանք քս՟ է , և մեռանել շահ . * Ապա եթէ
կեանքս մարմնոյ՝ այս ինձ պտուղ գործոյ է .
23 և զինչ ընտրեցից՝ զայն ոչ գիտեմ . * Նեղեալ
եմ յերկոցունց՝ զցանկալն, ելանել և ընդ
24 քս՟ի լինել՝ առաւել լաւ համարիմ . * և կալ
մնալ աստէն 'ի մարմնի , կարևոր ևս վս՟ ձեր .
25 * Եւ զայս յուսացեալ գիտեմ, եթէ կացից՝
և մնացից ամենեցուն ձեզ , 'ի ձեր զարգանալ
26 և խրախ լինել 'ի հաւատս . * զի պարծանք
ձեր առաւել լիցին 'ի քս՟ յիսուս ինև 'ի
միւսանգամ գալստեան իմում առ ձեզ . Վ.Զ
27 * Միայն թէ արժանի աւետարանին քրիստոսի
գնայցէք . զի եթէ գայցեմ, և տեսանիցեմ
զձեզ . և եթէ հեռի իցեմ, և լսիցեմ
զձէնջ . զի հաստատուն կայցէք 'ի մի հոգի .
և միով շնչով նահատակիցիք 'ի հաւատս աւետարանին
28 . * և մի՛ զանգիտիցէք՝ և մի՛ իւիք
'ի հակառակորդաց անտի . որ է նոցա հանդէս
29 կորստեան , և ձերոց փրկութեան . * Եւ

այդ՝ յա՟յ է, որ ձեզ շնորհեցաւ վ՟ քս՟ի, ոչ միայն
՚ի նա հաւատալ՝ այլ և վ՟ նորա չարչարել.
* զնոյն պատերազմ ունել՝ զոր յիսն տեսէք, 30
և այժմ լսէք յինէն.

ԳԼ. Բ.

Արդ՝ եթէ մխիթարութիւն ինչ իցէ ՚ի 1
քրիստոս, եթէ սփոփութիւն սիրոյ՝ եթէ հաղորդութիւն
հոգւոյ, եթէ գթութիւն և ողորմութիւն.
* լցէք զխնդութիւնս իմ, զնոյն 2
խորհիջիք, զնոյն սէր յանձին ունիջիք. համաշունչք՝
միախորհուրդք. * մի՛ ինչ ըստ գրգռութեան, 3
և մի՛ ինչ ըստ սնապարծութեան.
այլ խոնարհութեամբ զմիմեանս լաւ համարել
առաւել քան զանձինս. * մի՛ զանձանց և եթ 4
դիտել՝ այլ իւրաքանչիւրոք զընկերին. * Զայն 5
խորհեսցի իւրաքանչիւրոք ՚ի ձէնջ, որ և ՚ի
քս՟ յս՟. * որ ՚ի կերպարանս ա՟յ է, ոչ ինչ յափշտակութիւն 6
համարեցաւ զլինելն հաւասար
ա՟յ. * այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս 7
ծառայի առեալ, ՚ի նմանութիւն մարդկան
եղեալ՝ և կերպարանօք գտեալ իբրև ըզ
մարդ. * Խոնարհեցոյց զանձն, լեալ հնազանդ 8
մահու չափ՝ և մահու խաչի. * Վ՟ որոյ 9
և ա՟ծ զնա առաւել բարձրացոյց. և շնորհեաց
նմա անուն՝ որ ՚ի վեր է քան զա՟մ անուն. * Զի 10
յանուն յս՟ի քս՟ի ա՟մ ծունր կրկնեսցի, երկ-

նաւորաց՝ և երկրաւորաց՝ և սանդարամետականաց ․
11 *և ամ՟ լեզու խոստովան լիցի , թէ
տէր է յիսուս քրիստոս 'ի փառս ա՟յ հօր ․
12 *Այսուհետև սիրելիք իմ, որպէս յա՟մի ժզ
հնազանդեցարուք , մի՛ միայն 'ի գալստեան
իմում, այլ առաւել ևս այժմ՝ յորժամ հեռի
եմ 'ի ձէնջ , ահիւ և դողութ՟բ զանձանց փրկութիւն
13 գործեցէք ․ *Զի ա՟ծ է՝ որ յաջողէ
'ի ձեզ զկամելն և զառնելն վ՟ս հաճութեան ․
14 *Զամենայն ինչ գործեցէք առանց տրտնջելոյ
15 և քրթմնջելոյ ․ *զի եղիջիք անբիծք և անարատք՝
որդիք ա՟յ , անմեղք 'ի մէջ կամակոր
և խեղաթիւր ազգին ․ յորոց միջի երևեցիք
16 իբրև լուսաւորք յաշխարհի ․ *զբանն կենաց
ունել յանձինս՝ 'ի պարծանս ինձ յաւուրն
ք՟ի ․ զի ոչ ընդունայն ինչ ընթացայ՝ և ոչ
17 ընդունայն վաստակեցի ․ *Այլ թէպէտ և
նուիրիմ 'ի վերայ պատարագի և պաշտաման
հաւատոց ձերոց , խնդամ և ուրախակից եմ
18 ամենեցուն ձեր ․ *Նոյնպէս և դուք խնդացէք՝
19 և ուրախակից եղերուք ինձ ․ *Բայց
յուսամ 'ի տէր յ՟ս , զտիմոթէոս վաղվաղակի
առաքել առ ձեզ ․ զի և ինձ սիրտ դիւր լինիցի
20 , յորժամ գիտիցեմ ինչ զձէնջ ․ *Զի ոչ
զոք ունիմ համաշունչ՝ եթէ ընտանեբար հոգայցէ
21 վասն ձեր ․ *Զի ամենեքին զանձանց
22 խնդրեն , և ոչ զյ՟ի ք՟ի ․ *Բայց զփորձ ն՟ր
գիտէք և դուք , զի իբրև որդի հօր ծառայ-

եաց ընդ իս յաւետարանին ։ * Արդ՝ զսա ակն 2
ունիմ առաքել՝ որպէս նոյնհետայն զանձնէ
տեսից ։ * Այլ յուսացեալ եմ 'ի տէր՝ 24
թէ և ես իսկ ընդ հուպ եկից ։ * Բայց լաւ 25
համարեցայ զեպափրոդիտոս զեղբայր՝ և ըղ-
գործակից և զզինուորակից իմ, զձեր առաքեալ,
և զպաշտօնեայ իմոց պիտոյից՝ առաքել
առ ձեզ ։ * Քանզի և ինքն իսկ յոյժ անձկացեալ 26
է տեսանել զամենեսին զձեզ ․ և հոգայր՝
զի ձեր լուեալ էր թէ խօթացաւ ։ * Եւ 27
արդարեւ խօթացաւ մերձ 'ի մահ, այլ ա͞ծ
ողորմեցաւ նմա ․ ոչ նմա միայն, այլեւ ինձ՝
զի մի՛ տրտմութիւն 'ի վ͞ր տրտմութե͞ն կրեցեմ ։
* Արդ փութապէս յղեցի զնա, զի տեսեալ 28
զնա միւսանգամ ուրախ լինիցիք, և ես առանց
տրտմութե͞ն եղէց ։ * Ընկալջիք զնա 'ի 29
տէր ա͞մ խնդութ͞բ, և զայնպիսիսն առ պատուականս
ունիջիք ․ * զի վասն գործոյ տ͞ն 30
մինչեւ 'ի մահ մերձեցաւ, դուն գործեալ ոգւովք
չափ ․ զի լցցէ զձեր պակասութիւն իմոյ
Վ.Զ սպասաւորութեան ։

ԳԼ․ Գ․

Այսուհետեւ եղբարք իմ, ուրախ լերուք 1
'ի տէր ․ զնոյն գրել առ ձեզ՝ ինձ ոչինչ դանդաղելի
է, և ձեզ կարի զգուշալի ․ * Զգուշ 2
եղերուք 'ի շանց անտի ․ զգուշ եղերուք 'ի

չար մշակաց անտի · զգոյշ եղերուք 'ի կրճատութենէ
3 անտի · *Զի թլփատութիւն մեք
եմք, որ հոգւովն աստուծոյ պաշտեմք, և
պարծիմք 'ի ք՟ս յ՟ս, և ոչ 'ի մարմին պանծացեալ
4 եմք · *Թէպէտ և ես իսկ զնոյն վստահութիւն
ունիմ 'ի մարմնի, եթէ ոք համարեսցի
այլ ազգ վստահ լինել 'ի մարմին, առաւել
5 ես ես · *Թլփատութ՟ ութօրեայ, յազգէ
իսրայելի, 'ի ցեղէ բենիամենի · եբրայեցի
6 յեբրայեցւոյ · ըստ օրինացն փարիսեցի · *ըստ
նախանձայոյզն լինելոյ հալածէի զեկեղեցին ·
ըստ արդարութեան օրինացն լեալ անարատ ·
7 *Այլ որ ինչ ինձ շահն էր՝ զայն վնաս համարիմ
8 վ՟ս ք՟սի · *Այլ և համարիմ իսկ զա՟մ
վնաս՝ վասն առաւել գիտութե՟ն յ՟սի ք՟սի տ՟ն
մերոյ · վ՟ս որոյ յամենայնէ զրկեցայ՝ և համարիմ
9 կղկղանս, զի զք՟ս շահեցայց, *և գտայց
'ի նմա, իբրև ոչ եթէ զիմ ինչ արդարութիւն՝
որ յօրինաց անտի է՝ ունիցիմ, այլ զհաւատոցն
10 ք՟սի, որ յ՟այ արդարութիւնն է · *Հաւատովք
ճանաչել զնա՝ և զզօրութիւն յարութեան նորա՝
և զհաղորդութիւն չարչարանաց նորա,
11 կերպարանակից լինել մահու նորա · *Թէ ո՟պ
12 հասից 'ի մեռելոցն յարութիւն · *Իբր ոչ եթէ
արդէն առեալ իցէ, կամ արդէն կատարեալ
իցեմ · զհետ մտեալ եմ թէ հասից, մանաւանդ
թէ ըմբռնեալ իսկ իցեմ 'ի ք՟սէ յ՟սէ ·
13 *Ե՛ղբարք ես ոչ համարիմ զանձն իմ թէ

հասեալ իցեմ. բայց մի ինչ է՝ զի զառ 'ի
յետոյսն մոռացեալ է, և 'ի յառաջադէմսն
նկրտեալ եմ. *ուշ եդեալ՝ ընթանամ 'ի կէտ 14
կոչմանն այ՟ 'ի յս՟ քս՟. *Այսուհետև՝ որ միանգամ 15
կատարեալքդ էք՝ զայս խորհեսցարուք.
և եթէ այլ ազգ ինչ խորհիցիք՝ սակայն և
զայն ած՟ ձեզ յայտնեսցէ. *Բայց յոր ժամանեցաք՝ 16
զայն խորհել՝ և նմին կանոնի միաբան
լինել. *Նմանողք ինձ եղիջիք եղբարք՝ 17
և դիտասջիք զայնպիսին, որ այնպէսն գնայցեն,
որպէս ունիքդ զմեզ ձեզ օրինակ.
*Զի բազումք գնան՝ զորոց բազում անգամ 18
ասէի ձեզ. բայց արդ և լալով իսկ ասեմ, ըզ
թշնամեաց խաչին քսի՟. *որոց կատարածն 19
կորուստ է. որոց ած՟ որովայնն իւրեանց է,
և փառք ամօթն իւրեանց, որք զերկրաւորս
և եթ խորհին. *Այլ մեր առաքինութիւն 20
յերկինս է, ուստի և փրկչին ակն ունիմք՝
տն՟ յսի՟ քսի՟. *որ նորոգեսցէ զմարմին խոնարհութեան 21
մերոյ՝ կերպարանակից լինել մարմնոյ
փառաց իւրոց, ըստ զօրութենն՝ առ 'ի կարող
լինելոյ հնազանդեցուցանել ընդ իւրև զած՟:

ԳԼ. Դ.

Այսուհետև եղբարք իմ սիրելիք և 1
անձկալիք, ուրախութիւն իմ և պսակ. այսպ՟
հաստատուն կացէք 'ի տէր՝ սիրելիք. *Զև- 2

ւոդիա աղաչեմ, եւ զսինտիքէ աղաչեմ, զնոյն
3 խորհել 'ի տէր. * Այո՛ աղաչեմ եւ զքեզ՝ մշտերիմ
իմ եւ լծակից, եւ դու օգնական լինիջիր
նոցա՝ որք աւետարանին նահատակեցան
ընդ իս կղեմաւ հանդերձ՝ եւ այլովք գործակցօք
իմովք. որոց անուանքն են 'ի դպրութեան
4 կենաց. * Ուրախ լերուք 'ի տէր յա՟մ ժամ.
5 դարձեալ ասեմ՝ ուրախ լերուք. * Հեզութիւն
ձեր յայտնի լիցի ա՟մ մարդկան. տէր
6 մերձ է. * Մի ինչ հոգայք. այլ ա՟մ աղօթիւք
եւ խնդրուածովք, գոհութ՟, խնդրուածք ձեր
7 յայտնի լիցին առ ա՟ծ. * Եւ խաղաղութիւնն
ա՟յ՝ որ 'ի վեր է քան զամենայն միտս, պահեսցէ
զսիրտս ձեր եւ զմիտս 'ի քրիստոս յիսուս.
8 * Այսուհետեւ եղբարք՝ որ ինչ ճշմարտութ՟ ԱԿ
է՝ որ ինչ պարկեշտութ՟, որ ինչ արդարութ՟,
որ ինչ սրբութ՟, որ ինչ սիրով, որ ինչ
համբաւ բարեաց, որ ինչ քաջութ՟, որ ինչ
9 գովութ՟՝ զայն խորհիջիք. * Զոր ուսարուքն,
եւ ընկալարուք, եւ լուայք՝ եւ տեսէք յիս, զայն
արարէք. եւ ա՟ծ խաղաղութեան եղիցի ընդ ձեզ.
10 * Ուրախ եղէ ես 'ի տէր յոյժ. զի եւ դուք ընդ
միտ ածիք հոգալ ինչ վասն իմ, որպ՟ եւ հոգայիքն.
11 բայց բարբարէիք իմն է. * Իբր ոչ
առ կարօտութեան ինչ ասեմ. զի ես ուսայ՝ որովք
12 կարեմ բաւական լինել. * Գիտեմ նուաղել,
գիտեմ առաւելուլ, յա՟մի ամենեւին խելամուտ
եմ, եւ յագել՝ եւ քաղցենալ, եւ առաւե-

լուլ՝ և նուաղել․ * Յա̃մի կարող եմ, այնու 13
որ զօրացոյցն զիս ։ * Բայց բարւոք արարէք՝ 14
զի կցորդ եղերուք ինձ 'ի նեղութե̃ս ։ * Գի- 15
տէք և դուք փիլիպպեցիք, զի 'ի սկզբան ա-
ւետարանին իբրև ելի ես 'ի մակեդոնիայ, և
ոչ մի եկեղեցի հաղորդեցաւ ինձ յաղագս տա-
լոյ և առնլոյ, բայց միայն դուք ։ * զի և 'ի 16
թեսաղոնիկ՝ միանգամ և երկիցս զպէտս իմ ե-
տուք բերել․ * Իբր ոչ եթէ խնդրեմ զտուրսն, 17
այլ խնդրեմ զպտուղն որ յաճախէ 'ի բան ձեր ։
* Այլ իմ առեալ զամենայն, և առաւելեալ 18
եմ․ ընկալայ՝ և լի եմ 'ի ձեռն եպափրոդիտ-
եայ, որ է 'ի ձէնջ հոտ անուշից՝ պատարագ
ընդունելի՝ հաճոյ ա̃յ ։ * Եւ ա̃ծ իմ լի արա- 19
ցէ զամենայն պէտս ձեր ըստ իւրում մեծութե̃ն՝
փառօք 'ի ք̃ս յ̃ս ։ * Այլ ա̃յ և հօր մերում 20
փառք յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։ * Ող- 21
ջոյն տաջիք ա̃մ սրբոց՝ 'ի ք̃ս յ̃ս ։ * Ողջոյն 22
տան ձեզ՝ որ ընդ իս են եղբարք ։ * Ողջոյն 23
տան ձեզ ամենայն սուրբք, մանաւանդ որ 'ի
տանէ կայսեր են ։ * Շնորհք տեառն յիսուսի 24
քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում․ ամէն ։

Առ փիլիպպեցիս՝ գրեցաւ 'ի հռովմէ 'ի ձեռն
եպափրոդիտեայ ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍՆ

Գլ· Ա·

1 ՊՕՂՈՍ առաքեալ յ՟սի ք՟սի կամօքն ա՟յ, ԱԲ
2 և տիմոթէոս եղբայր . * առ կողո-
սացիս սուրբս և հաւատացեալս եղբարս 'ի
3 ք՟ս . * Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն
յաստուծոյ հօրէ մերմէ՝ (և 'ի տեառնէ յի-
սուսէ քրիստոսէ)։ Գոհանամք զաստուծոյ
և զհօրէ տեառն մերոյ յ՟սի ք՟սի , յամենայն
4 ժամ վ՟ս ձեր աղօթս առնեմ. * իբրև լուաք
զհաւատսն ձեր՝ որ 'ի ք՟ս յ՟ս տէր մեր , և ըզ
5 սէրն որ ընդ ամենայն սուրբս ունիք . * վասն
յուսոյն՝ որ պահի ձեզ յերկինս . զորմէ լըւարուք
բանիւն ճշմարտութ՟ն աւետարանին ,
6 * որ եհաս առ ձեզ . որպէս ընդ ամենայն աշխարհ
աճէ՝ և պտղաբերէ . որպէս և 'ի ձե-

բում միջի. յօրէ յորմէ լուարուք՝ և ծանեայք
զշնորհսն այ՟ ճշմարտութե՟. * որպէս և 7
ուսարուք յեպափրեայ սիրելւոյ ծառայակցէ
մերմէ, որ է հաւատարիմ վասն ձեր՝ պաշտօնեայ
քի՟. * որ և պատմեաց մեզ զձեր 8
սէրն հոգւով. * Վասն այնորիկ և մեք յօրէ 9
յորմէ լուաք՝ ոչ դադարեմք վասն ձեր աղօթս
առնել՝ և խնդրուածս մատուցանել.
զի լնուցուք զգիտութիւն կամացն նորա, ամենայն
իմաստութեամբ և հոգևոր հանճարով.
* գնալ ձեզ արժանի տեառն յամենայն 10
հաճութեան, յամենայն գործս բարութեան
պտղաբերք և աճեցունք գիտութեամբն աստուծոյ.
* ամենայն զօրութեամբն զօրացեալք 11
ըստ զօրութեան փառաց նորա. յամենայն
համբերութիւն և երկայնմտութիւն.
ԱԿ * Ուրախութեամբ գոհանալ զաստուծոյ 12
հօրէ՝ որ կոչեաց զձեզ 'ի մասն վիճակի սրբոցն
'ի լոյս. * որ փրկեաց զմեզ յիշխանութենէ 13
խաւարի, և փոխեաց զմեզ յարքայութիւն
որդւոյն իւրոյ սիրելւոյ. * որով ունիմք 14
զփրկութիւն արեամբն նորա, և զթողութիւն
մեղաց՝ մարմնովն նորա. * որ է պատկեր աներևութին 15
աստուծոյ, անդրանիկ ամենայն
արարածոց. * Զի նովաւ հաստատեցաւ ամենայն, 16
որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկրի,
որ երևելին՝ և որ ոչն երևելին. եթէ աթոռք,
եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, և-

թէ իշխանութիւնք . ամենայն ինչ նովաւ և
17 'ի նոյն հաստատեցաւ . *Եւ նա է յառաջ
քան զամենայն , և ամենայն ինչ նովաւ եկաց
18 բովանդակ . *Եւ նա է գլուխ մարմնոյ
եկեղեցւոյ . որ է սկիզբն , անդրանիկ 'ի մեռելոց
. զի եղիցի ինքն յամենայնի յառաջադէմ
19 . *զի 'ի նմա հաճեցաւ ամենայն լրումն
20 աստուածութեանն բնակել . *և նովաւ հաշտեցուցանել
զամենայն 'ի նոյն . արար խաղաղութիւն
արեամբ խաչին իւրոյ , որ ինչ
21 յերկրի՝ և որ ինչ յերկինս . *Եւ զձեզ՝ որ
երբեմն օտարացեալն էիք , և թշնամիք խորհրդովք
22 'ի գործս չարութեան . *այժմ աւադիկ
հաշտեցոյց անդամովք մարմնոյ իւրոյ ,
'ի ձեռն մահուն իւրոյ , յանդիման կացուցանել
զձեզ սուրբս՝ և անբիծս՝ և անարատս առաջի
23 նորա . *եթէ կայցէք 'ի հաւատսն արմատացեալք
, և հաստատեալք . և անշարժք
'ի յուսոյ աւետարանին՝ զոր լուարուք քարոզելոյ
ընդ ամենայն արարածս 'ի ներքոյ
երկնից . որոյ եղէ ես պօղոս պաշտօնեայ .
24 *Եւ արդ՝ ուրախ եմ 'ի չարչարանս իմ ԱԴ
վասն ձեր . և լնում զպակասութիւն նեղութեանցն
ք̄ի 'ի մարմնի իմում վասն մարմնոյ
25 նորա՝ որ է եկեղեցի . *որոյ եղէ ես պօղոս
պաշտօնեայ՝ ըստ տնտեսութեանն աստուծոյ
, որ տուեալ է ինձ 'ի ձեզ կատարել
26 զբանն աստուծոյ . *զխորհուրդն՝ որ ծած-

կեալն էր 'ի յաւիտեանցն և յազգաց · որ այժմ
յայտնեցաւ սրբոց իւրոց · * Որոց կամեցաւ 27
աստուած ցուցանել, թէ զի՛նչ է մեծութիւն
փառաց խորհրդոյ նորա 'ի հեթանոսս , որ է
քրիստոս 'ի ձեզ՝ յոյսն փառաց · * զոր մեքն 28
քարոզեմք· և խրատեմք զամենայն մարդ՝ և
ուսուցանեմք զամենայն մարդ ամենայն հոգեւոր
իմաստութեամբ · զի կացուսցուք զամենայն
մարդ կատարեալ 'ի քս՟ յս՟ · * յոր և 29
աշխատիմ պատերազմեալ ըստ յաջողութեան
նորա՝ որ յաջողեալ է յիս զօրութեամբ ·

ԳԼ· Բ·

Կամիմ զի գիտիցէք դուք՝ որպիսի ճգնութիւն 1
ունիմ յանձին վասն ձեր՝ և վասն
լաւոդիկեցւոցն , և որոց չիցէ տեսեալ զերեսս
իմ մարմնով· * Զի մխիթարեսցին սիրտք նոցա 2
տեղեկացեալք սիրով· և յամենայն մեծութիւն
լրութեան իմաստութեան՝ 'ի գիտութիւն
խորհրդոյն աստուծոյ (հօր), 'ի քս՟
յս՟ · * յորում ամենայն գանձք իմաստութեն 3
և գիտութեան ծածկեալ կան · * Այլ զայս 4
ասեմ, զի մի՛ ոք զձեզ զառանցուսցէ պատիր
բանիւք · * Զի թէպէտ և մարմնով հեռի եմ, 5
այլ հոգւով ընդ ձեզ եմ· խնդամ՝ իբրև տեսանեմ
զկարգն ձեր՝ և զհաստատութիւն հաւատոցն
ձերոց որ 'ի քս՟ յս՟ · * Արդ՝ որպէս 6

ընկալարուք զքս յս զտէր , նովին գնասջիք .
*7 * արմատացեալք և շինեալք ՚ի նա , և հաստատեալք ՚ի հաւատս , որպէս ուսարուքն՝*
առաւելեալք ՚ի նմին գոհութեամբ . Վ.Զ

*8 * Զգոյշ լերուք՝ մի ոք լիցի որ զձեզ կողոպտիցէ*
ճարտարմտութեամբ և սնոտի խաբէութեամբ , որք ըստ մարդկան աւանդութեան
և ըստ տարերց աշխարհիս՝ և ոչ ըստ
*9 յսի քսի . * զի ՚ի նմա բնակէ ամենայն լրումն*
*10 աստուածութեանն մարմնապէս . * Եւ էք*
դուք նովաւ լցեալք , որ է գլուխ ամենայն
*11 իշխանութեան և պետութեան . * որով թլփատեցարուք*
հաւատովք զանձեռագործ
թլփատութիւնն՝ ՚ի մերկանալ զանդամս մարմնոյ
*12 թլփատութեամբն քսի . * Թաղեալք ընդ*
նմին ՚ի մկրտութեանն, որով և ընդ նմին յարեայք
հաւատովք՝ աստուծոյ ազդեցութեանն ,
*13 որ յարոյց զնա ՚ի մեռելոց . * Եւ զձեզ՝ որ*
երբեմն մեռեալն էիք ՚ի մեղս և յանթլփատութեան
մարմնոյ ձերոյ , կենդանացոյց
յանձին իւրում . շնորհեաց մեզ զամենայն
*14 յանցանս մեր . * և ջնջեաց զձեռագիր մերոյ*
հակառակութեանն հրամանօքն իւրովք . որ
կայր մեզ հակառակ՝ եբարձ զայն ՚ի միջոյ՝
և բեւեռեաց ընդ խաչափայտին .

*15 * Մերկեաց զիշխանութիւնս և զպետութիւնս*
. յայտ յանդիման խայտառակեաց նըշաւակեալ
զնոսա յանձին իւրում ՚ի յարու-

թեան իւրում. * Մի՛ ոք այսուհետև զձեզ 16
դատեսցի՝ ուտելով կամ ըմպելով, կամ մասամբ
տօնից կամ ամսամտիւք կամ շաբաթուք. * որ են ստուերք հանդերձելոցն. այլ 17
մարմին Քրիստոսի է. * Մի՛ ոք զձեզ խաբեսցէ, 18
որ կամիցի խոնարհութեամբ և կրօնիւք հրեշտակաց,
զոր չիցէ տեսեալ զրահետ վարել՝
տարապարտ հպարտացեալ 'ի մտաց մարմնոյ
իւրոյ. * և ոչ ունիցի զգլուխն ք̃ն, ուստի 19
ամենայն մարմինն յօդիւք և խաղալեօք տարաբերեալ
և խառնեալ՝ աճէ զաճումն ա̃յ.
* Եթէ մեռայք ընդ ք̃ի 'ի տարերց աշխարհիս՝ 20
զի՞ եւս իբրև զկենդանիս աստէն
յաշխարհի կրօնաւորիք. * Մի՛ մերձենար, 21
մի՛ ճաշակեր, մի՛ հուպ լինիր. * որ է ամենայն 22
ինչ 'ի պէտս ապականութ̃ն, ըստ պատուիրանաց
և վարդապետութեան մարդկան.
* որ յիմաստութիւն իմն համարէ, ինքնակամ 23
կրօնիւք և խոնարհութեամբ՝ և անխայութ̃բ
մարմնոյ. և ո՛չ 'ի պատիւ ինչ լրուն մարմնոյ.

ԳԼ. Գ.

Եթէ յարերուք ընդ ք̃ի, ապա զվերինն 1
խնդրեցէ՛ք, ուր ք̃ս նստի ընդ աջմէ ա̃յ. * Ըզվերինն 2
խորհեցարուք, մի՛ զայս՝ որ յերկրի
աստ է. * Քանզի մեռայք՝ և կեանքն ձեր 3
ծածկեալ են ընդ ք̃ի յա̃յ. * Իսկ յորժամ 4

քրիստոս յայտնեսցի՝ կեանքն ձեր , յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառօք .
5 *Սպանէք այսուհետև զանդամս ձեր զերկրաւորս . 'ի բաց ընկեցէք զպոռնկութիւն ըզպղծութիւն զբիծ զցանկութիւն չարեաց և
6 զագահութիւն՝ որ է կռապաշտութիւն . *Վա՛
որոյ գայ բարկութիւն ա՛յ 'ի վերայ որդւոցն
7 անհաւանութեան . *որովք և դուք երբեմն
8 գնայիք մինչ կենդանիքն էիք 'ի նս՛ . *Արդ՝
'ի բաց թօթափեցէք և դուք զայն ամենայն,
զբարկութիւն զսրտմտութիւն զչարութիւն
զհայհոյութիւն , զխեղկատակութիւն՝ 'ի բե-
9 րանոյ ձերոյ . *Մի՛ ստէք միմեանց . մեր-
կացարուք զհին մարդն գործովքն իւրովք .
10 *և զգեցարուք զնորն նորոգեալ 'ի գիտու-
11 թիւն ըստ պատկերի արարչին իւրոյ . *ուր
ոչ է հրեայ՝ և ոչ հեթանոս , թլփատութիւն՝
և անթլփատութիւն , խուժ՝ դուժ՝ սկիւթացի՝
ծառայ՝ ազատ . այլ ամենայն և յամենայնի
12 քրիստոս . *Զգեցարուք այսուհետև իբրև
ընտրեալք աստուծոյ՝ սուրբք և սիրեցեալք՝
զգութ ողորմութիւն զքաղցրութիւն զխո-
նարհութիւն զհեզութիւն զերկայնմտութիւն ,
13 *ներել միմեանց , շնորհել իւրեարց . եթէ
ուրուք զումեքէ տրտունջ ինչ իցէ . որպէս
աստուած քրիստոսիւ շնորհեաց ձեզ՝ նոյն-
14 պէս և դուք . *Եւ 'ի վերայ այսր ամենայնի
15 զսէրն , որ է զօդ կատարմանն . *և խաղա-

ղութիւնն քրիստոսի հաստատեսցի 'ի սիրտս
ձեր, յոր և կոչեցարուքն միով մարմնով։
ԱԵ Եւ գոհացողք լինիջիք· *զի բանն քրի 16
բնակեսցէ 'ի ձեզ առատապէս· ամ̃ իմաս-
տութեամբ ուսուցանել և խրատել զմիմեանս·
սաղմոսիւք և օրհնութեամբ և երգովք հո-
գեւորօք՝ և շնորհօք օրհնել 'ի սիրտս ձեր
զա̃ծ։ *Եւ զա̃մ զոր և առնիցէք բանիւք և 17
արդեամբք, զա̃մ յանուն տեառն յի̃ի արաս-
ջիք· գոհացողք լինիջիք զա̃յ և զհօրէ նո-
վաւ։ *Կանայք՝ հնազանդ լերուք արանց 18
ձերոց, որպէս և վայել է 'ի տէր։ *Արք՝ 19
սիրեցէք զկանայս ձեր, և մի՛ դառնացուցա-
նէք զնոսա։ *Որդիք՝ հնազանդ լերուք ծը- 20
նողաց ձերոց յա̃մի՝ զի այն է հաճոյ առաջի
տեառն։ *Հա՛րք՝ մի՛ զայրացուցանէք զորդիս 21
ձեր, զի մի՛ տրտմեսցին։ *Ծառայք՝ հնա- 22
զանդ լերուք տերանց ձերոց յա̃մի· մի՛ առ
ականէ ծառայութեամբ՝ իբրև մարդահա-
ճոյք, այլ միամտութեամբ սրտի երկնչել 'ի
տեառնէ։ *Զոր ինչ առնիցէք՝ սրտի մտօք 23
գործեսջիք իբրև տեառն, և ոչ իբրև մարդ-
կան։ *Գիտասջիք՝ զի 'ի տեառնէ առնու- 24
ցուք զհատուցումն ժառանգութեան ձերոյ·
քանզի տեառն քրիստոսի ծառայէք· *Իսկ 25
ապիրատն ընկալցի ըստ իւրում ապիրատու-
թեանն· զի չի՛ք ակնառութիւն առաջի ա̃յ։

ԳԼ. Դ.

1 Տեարք՝ զիրաւունս և զհաւասարութիւն
ծառայից ձերոց շնորհեցէք. գիտասջիք՝ զի
2 և ձեր տէր գոյ յերկինս։ *Աղօթից ատէպ
3 կացէք. արթնել 'ի նմին գոհութբ̃. *Աղօթս
արարէք միանգամայն և վ̃ մեր, զի ա̃ծ բացցէ
մեզ դուռն բանին, խօսել զխորհուրդն ք̃սի,
4 վ̃ որոյ և կապեալս կամ. *զի յայտնի արարից
զնա որպէս արժան իցէ ինձ խօսել.
5 *Իմաստութբ̃ գնասջիք առ արտաքինսն, ԱԶ
6 գնոյ առեալ զժամանակս. *Եւ բանն ձեր
յա̃մ ժամ լի շնորհօք ա̃ն իբրև աղիւ համեմեալ
լիցի, գիտել ո̃պ արժան իցէ ձեզ
իւրաքանչիւր ումեք տալ պատասխանի.
7 Այլ որ ինչ զինէն իցէ՝ ցուցցէ ձեզ զա̃մ
տիւքիկոս սիրելի եղբայր՝ և հաւատարիմ
8 պաշտօնեայ՝ և ծառայակից 'ի տէր. *զոր առաքեցի
առ ձեզ դմին իրի, զի գիտասջիք
9 վ̃ մեր. և մխիթարեսցէ զսիրտս ձեր. *Ոնեսիմաւ
հանդերձ եղբարբ հաւատարմաւ և
սիրելեաւ՝ որ է 'ի ձէնջ. զա̃մ ինչ ցուցցեն
10 ձեզ՝ որ ինչ աստ է. *Ողջոյն տայ ձեզ Արիստարքոս
գերեկից իմ, և Մարկոս եղբօրորդի
Բառնաբայ. վ̃ որոյ առէք պատուէր՝
11 եթէ եկեսցէ առ ձեզ ընկալջիք զնա. *և յս̃՝
որ անուանեալն է յուստոս, որք են 'ի թլ-

փատութէ անտի․ զի դոքա միայն գործակից
եղեն ինձ յարքայութնն այ, որք և եղեն
իսկ ինձ մխիթարութիւն։ *Ողջոյն տայ ձեզ 12
եպափրաս՝ որ 'ի ձէնջ ծառայ քսի յսի է․ յամ
ժամ պատերազմեալ վս ձեր յաղօթս, զի կայցէք
կատարեալք և լցեալք յամ կամս այ։
*Վկայեմ նմա, զի բազում աշխատութիւն 13
ունի վս ձեր, և վս լաւոդիկեցւոցն, և վասն
այնոցիկ՝ որ յերապօլիսն են։ *Ողջոյն տայ 14
ձեզ ղուկաս բժիշկ և սիրելի, և դեմաս։ *Ողջոյն 15
տաջիք եղբարց՝ որ են 'ի լաւոդիկեայ
և նիմփայ, և որ առտնին եկեղեցին է նորա։
*Եւ յորժամ ընթեռնուցու առ ձեզ թուղթդ՝ 16
արասջիք զի և 'ի լաւոդիկեցւոց եկեղեցւոջն
ընթերցցի․ և զառ 'ի լաւոդիկեցւոցն՝ զի և
դուք ընթեռնուցուք։ *Եւ ասասջիք ցարքիպպոս․ 17
զգոյշ լեր սպասաւորութեանդ՝
զոր ընկալար 'ի տէր, զի զայդ կատարեսցես։
*Ողջոյնդ ձեռին իմոյ պօղոսի է․ յուշ լիցին 18
ձեզ կապանք իմ։ Շնորհք ընդ ձեզ․ ամէն։

Առ Կողոսացիս՝ գրեցաւ 'ի Հռոմէ
'ի ձեռն Տիւքիկոսի և Ոնեսիմոսի:

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԼ. Ա.

1 ՊՕՂՈՍ եւ սիղուանոս եւ տիմոթէոս՝ Բ՟Կ
եկեղեցւոյդ թեսաղոնիկեցւոց՝ յա՟ծ
2 հայր մեր եւ 'ի տ՟ր յ՟ս ք՟ս ։ *Շնորհք ընդ ձեզ
եւ խաղաղութիւն ։ Գոհանամք զա՟յ յամ ժամ
վ՟ն ձեր ամենեցուն՝ յիշատակ առնել յաղօթս
3 մեր անդադար ․ *յիշել զձեր գործն հաւատոց՝
եւ զվաստակ սիրոյ՝ եւ զհամբերութիւն
յուսոյ տ՟ն մերոյ յ՟սի ք՟սի՝ առաջի ա՟յ եւ հօր
4 մերոյ ։ *Գիտեմք եղբարք սիրեցեալք յա՟յ՝
5 զընտրութիւնն ձեր ․ *զի աւետարանն մեր ոչ
եղեւ առ ձեզ միայն բանիւ , այլ եւ զօրութ՟բ՝
եւ հոգւով սրբով՝ եւ լրութ՟բ բազմաւ ․ ո՟պ եւ

գիտէք իսկ՝ թէ որպիսիք եղեաք ՚ի միջի
ձերում վ՟ս ձեր։ *Եւ դուք նմանեալք մեզ՝ 6
և տ՟ն, ընկալայք զբանն ՚ի բազում նեղութ՟ն՝
խնդութ՟ն հոգւոյն սրբոյ · *լինել ձեզ օրինակ 7
ա՟մ հաւատացելոց, որ են ՚ի մակեդովնիա՝ և
յաքայիա։ *Զի ՚ի ձէնջ հնչեաց բանն տ՟յ · ոչ 8
միայն ՚ի մակեդովնիա և յաքայիա, այլ յա՟մ
տեղիս հաւատքն ձեր՝ որ առ ա՟ծ են, սփ֊
ռեցան · զի այսուհետև ոչինչ է պիտոյ մեզ
և խօսել ինչ։ *Զի նոքին իսկ պատմեն վասն 9
մեր, թէ ո՛՟պ եղև մեզ մուտ առ ձեզ · և ո՛՟պ
դարձայք առ ա՟ծ ՚ի կռոց անտի, ծառայել
ա՟յ կենդանւոյ և ճշմարտի · *և ակն ունել 10
որդւոյն նորա յերկնից, զոր յարոյց ՚ի մե֊
ռելոց զյիսուս՝ որ փրկելոցն է զմեզ ՚ի բար֊
կութենէ անտի՝ որ գալոցն է։

ԳԼ · Բ ·

Դ·Բ Դուք ինքնին գիտէք եղբարք զմուտն 1
մեր առ ձեզ · զի ոչ ընդունայն ինչ եղև ·
*այլ յառաջագոյն չարչարեալք՝ և թշնամա֊ 2
նեալք, ո՟պ և դուք իսկ գիտէք · ՚ի մէջ փի֊
լիպեցւոց համարձակեցաք ա՟վ մերով պատ֊
մել ձեզ զաւետարանն ա՟յ մեծաւ պատերազ֊
մաւ։ *Զի մխիթարութիւնն մեր ոչ ՚ի մոլո֊ 3
րութենէ է՝ և ոչ ՚ի պղծութ՟է՝ և ոչ նենգութ՟բ ·
*այլ ո՟պ ընտրեցաք յա՟յ հաւատարիմ լինել ա֊ 4

ւետարանն, նոյնպէս և խօսիմք. ոչ իբրև
մարդկան հաճոյ լինել՝ այլ այ̃ որ քննէն զսիրտս
5 մեր. *Զի ոչ երբէք բանիւք ողոքանաց ե֊
ղեաք առ ձեզ, ոպ̃ և դուք իսկ գիտէք. և
ոչ 'ի պատճառս ագահութեան, ոպ̃ և ա̃ծ վկայէ.
6 * և ոչ խնդրեաք փառս 'ի մարդկանէ, ոչ 'ի
7 ձէնջ և ոչ յայլոց. * Կարող էաք իբրև քրի̃ ա֊
ռաքեալս ծանրանալ, այլ եղեաք հեզք 'ի
միջի ձերում. ոպ̃ դայեակ մի՝ որ սնուցանիցէ
8 մանկունս. * Նոյնպէս և մեք գթայաք 'ի ձեզ.
հաճոյ թուէր մեզ տալ ձեզ ոչ միայն զաւե֊
տարանն այ̃, այլ և զանձինս մեր. քանզի սի֊
9 րելիք մեր եղերուք. * Յիշէք եղբարք՝ ըզ
վաստակն մեր և զջան. զի զցայգ և զցերեկ
գործէաք մ̃ չծանրանալոյ ումեք 'ի ձէնջ. և
10 քարոզէաք ձեզ զաւետարանն այ̃. * Դուք
ինքնին վկայէք՝ և ա̃ծ, ո՛պ̃ սրբութբ̃ և ար֊
դարութբ̃ և անբծութբ̃՝ ձեզ հաւատացելոցդ
11 եղեաք. * ոպ̃ և գիտէք իսկ. զի զիւրաքան֊
12 չիւր ոք 'ի ձէնջ իբրև հայր զորդիս՝ * մխի֊
թարէաք և սփոփէաք. և դնէաք վկայու֊
թիւն գնալ ձեզ արժանապէս այ̃, որ կոչեացն
զձեզ յիւր արքայութիւնն և 'ի փառս. Վ.Զ
13 * Վ̃ այնորիկ և մեք գոհանամք զայ̃ ան֊
պակաս՝ զի առեալ զլուր բանին այ̃ առ 'ի մէնջ՝
ընկալարուք, ոչ իբրև զբան մարդկան, այլ
ոպ̃ ճշմարտիւ՝ զբան այ̃. որ և յաջողեալ իսկ
14 է 'ի ձեզ հաւատացելոցդ. * Զի դուք նմա֊

նմանօղք եղերուք եղբարք՝ եկեղեցեացն ա̃յ՝ որ
են 'ի Հրէաստանի 'ի ք̃ս յ̃ս · զի զնոյն չարչա-
րանս չարչարեցայք և դուք 'ի ձերոց ազգա-
կանաց, ո̃պ և նոքայն 'ի Հրէից · *որք և ըզ 15
տէրն յ̃ս սպանին՝ և զմարգարէսն, և զմեզ հա-
լածեցին, և ա̃յ յաչաց ելին · և ա̃մ մարդկան
հակառակ եղեն · *և արգելուին զմեզ խօսել 16
հեթանոսաց՝ զի ապրեսցին · զի կատարեսցեն
զմեղս իւրեանց յա̃մ ժամ · քանզի հասեալ է
'ի վերայ նոցա բարկութիւն մինչև իսպառ :

ԲՋ *Այլ մեք եղբարք՝ թէպէտ և որբ մնացաք 17
'ի ձէնջ առ ժամանակ մի, երեսօք՝ և ոչ սըր-
տիւք · առաւել ևս փութացաք տեսանել զե-
րեսս ձեր մեծաւ ցանկութ̃բ · *Վ̃ս այսորիկ 18
կամեցայ գալ առ ձեզ ես պօղոս՝ միանգամ
և երկիցս, և խափանեաց զմեզ սատանայ ·
*Քանզի ո՞վ է մեր յոյս կամ խնդութիւն կամ 19
պսակ պարծանաց մերոց, եթէ ոչ դուք 'ի տ̃ր՝
առաջի տ̃ն մերոյ յ̃ի ք̃ի 'ի ն̃ր գալստեանն ·
*Զի դուք էք փառք մեր և խնդութիւն : 20

ԳԼ · Գ ·

Վ̃ս որոյ ոչ ևս ունիմք ժոյժ, զի բարւոք 1
թուեցաւ մեզ միայն մնալ յաթէնս · *Եւ ա- 2
ռաքեցաք զտիմոթէոս զեղբայր մեր և զգոր-
ծակից աւետարանին՝ ա̃յ և հօրն ք̃ի, հաստա-
Կ.Զ տել զձեզ՝ և մխիթարել վ̃ս հաւատոցն ձերոց ·

3 *Զի մի՛ տաղտկայցէք 'ի նեղութիւնս յայսոսիկ
· քանզի դուք ինքնին իսկ գիտէք, զի
4 'ի սոյն կամք · *Քանզի մինչ առ ձեզն իսկ
էաք՝ յառաջագոյն ասէաք ձեզ, թէ նեղութիւնք
հասանելոց են 'ի վերայ մեր · որպէս
5 և եղեւ իսկ՝ և գիտացիք · *Վասն այնորիկ
և ես զի ոչ ևս ունէի ժոյժ՝ առաքեցի գիտել
զհաւատոն ձեր · գուցէ արդեօք փորձեաց
և զձեզ փորձիչն, և ընդունայն լինիցի
6 ջանն մեր · *Բայց արդ՝ իբրեւ եկն տիմոթէոս
'ի ձէնջ առ մեզ, և ետ մեզ զաւետիս
հաւատոյն ձերոյ և զսիրոյ, զի ունիք 'ի մտի
զյիշատակս մեր բարեաց յա̃մ ժամ · ցանկացեալ
էք տեսանել զմեզ՝ որպէս և մեք ըզ
7 ձեզ · *վասն այնորիկ մխիթարեցաք 'ի ձեզ
եղբարք՝ 'ի վերայ ա̃մ վշտաց և նեղութեանց
8 ձերոց՝ 'ի ձեռն հաւատոյն ձերոյ · *զի այժմ
կենդանի եմք՝ եթէ դուք հաստատուն կայ
9 ցէք 'ի տէր · *Զի՞նչ կարեմք գոհութիւն մատուցանել
ա̃յ վ̃ն ձեր, 'ի վ̃ր ա̃մ խնդութ̃ն,
10 զոր խնդամք վ̃ն ձեր առաջի ա̃յ մերոյ · *զցայգ
և զցերեկ առաւել եւս աղաչեմք՝ տեսանել
զերեսս ձեր, և հաստատել զպակասութիւն
11 հաւատոյն ձերոյ · *Այլ ինքն ա̃ծ և հայր
մեր՝ և տէր մեր յ̃ս ք̃ս՝ ուղղեսցէ զճանապարհս
12 մեր առ ձեզ · *Եւ զձեզ ինքն տէր
բազմապատիկս և առաւելս արասցէ սիրով
ընդ միմեանս և առ ամենեսին՝ ո̃պ և մեք 'ի

ձեզ. *Հաստատել զսիրտս ձեր անարատս ՚ի 13
սրբութիւն առաջի ա՟յ և Հօր մերոյ ՚ի գալստեանն
տեառն մերոյ յ՟ի ք՟ի հանդերձ
ամենայն սրբովք իւրովք.

ԳԼ. Դ.

ԴԿ Այսուհետև եղբարք՝ աղաչեմք զձեզ՝ 1
և մխիթարեմք ՚ի ք՟ս յ՟ս. զի ո՟պ ընկալարուք
՚ի մէնջ, թէ ո՟պ պարտ իցէ ձեզ գնալ՝ և հաճոյ
լինել ա՟յ. ո՟պ և գնայքդ իսկ, զի և ս քան
զևս յաւելուցուք ՚ի նոյն. *Եւ գիտէք՝ թէ 2
որպիսի պատուիրանս տուաք ձեզ ՚ի տէր յ՟ս.
*Զի այս են կամք ա՟յ, սրբութիւն ձեր. ՚ի 3
բաց լինել ձեզ ՚ի պոռնկութ՟է. *գիտել իւրաքանչիւր 4
ումեք ՚ի ձէնջ զիւր աման ստանալ
սրբութ՟բ և պատուով, *մի՛ ՚ի ցաւս ցանկութեան 5
ո՟պ և այլ հեթանոսք՝ որ ոչ գիտեն
զա՟ծ. *Մի՛ զանցանել և զրկել յիրիդ յայդմիկ 6
զեղբայր իւր. քանզի վրէժխնդիր է տէր ՚ի
վ՟ր ա՟մի այդորիկ. ո՟պ յառաջագոյն ասացաք
ձեզ, և եդաք վկայութիւն. *Քանզի ոչ 7
կոչեաց զմեզ ա՟ծ ՚ի պղծութիւն՝ այլ ՚ի սրբութիւն.
*Այսուհետև որ անարգէ, ոչ զմարդ 8
անարգէ, այլ զա՟ծ՝ որ և ետ զհոգին ս՟ր ՚ի ձեզ.
*Այլ վ՟ս եղբայրսիրութ՟ե՝ չէ ինչ պիտոյ գրել 9
առ ձեզ. զի դուք ինքնին իսկ աստուածուսոյցք
էք առ միմեանս սիրելոյ. *Քանզի և 10

առնէք իսկ զդոյն յա՟մ եղբարս որ են յա՟մ կողմանս մակեդոնիացւոց. Աղաչեմք զձեզ եղբարք՝ առաւել եւս առաւելուլ և առատա-
11 նալ. Համդարտել, * և գործել զիւրաքանչիւր. և գործել ձեռօք ձերովք, ո՟պ և պատուիրեցաք ձեզ, զի գնայցէք պարկեշտու՟թ առ արտաքինսն՝ և մի՛ իւիք կարօտեալք իցէք.
12 * Ոչ կամիմ եղբարք՝ եթէ տգէտք իցէք վ՟ ննջեցելոցն. զի մի՛ տրտմիցիք ո՟պ և այլքն՝
13 որոց ոչ գոյ յոյս. * Եթէ հաւատամք՝ եթէ յ՟ս մեռաւ և յարեաւ. նոյնպէս և ա՟ծ ըզ ննջեցեալսն ՚ի ձեռն յ՟սի ածցէ ընդ նմա. Վ.Զ
14 * Բայց զայս ասեմք տ՟ն բանիւ, եթէ մեք՝ որ կենդանիքս եմք մնացեալ՝ ՚ի գալստեանն
15 տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն. * Զի ինքնին տէր հրամանաւ, ՚ի ձայն հրեշտակապետի և ՚ի փող ա՟յ իջանէ յերկնից. և մե-
16 ռեալք ՚ի ք՟ս յարիցեն յառաջագոյն. * Ապա և մեք որ կենդանւոյն մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափշտակեսցուք ամպովք ընդ առաջ տ՟ն յօդս. և այնպէս յա՟մ ժամ ընդ տ՟ն
17 լինիցիմք. * Այսուհետեւ մխիթարեցէք ըզ միմեանս բանիւքս այսոքիւք.

ԳԼ. Ե.

1 Այլ վասն ժամուց և ժամանակաց եղ- Գ.Ե
2 բարք՝ չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ. * Զի

դուք ինքնին իսկ ստոյգ գիտէք, թէ օրն
տեառն իբրեւ զգող գիշերի՝ այնպէս հասանէ.
*Յորժամ՛ ասիցեն թէ խաղաղութիւն և 3
շինութիւն է, յայնժամ յանկարծակի հասցէ
նոցա սատակումն՝ որպէս և երկն յղւոյ,
և մի՛ ապրեսցին. *Այլ դուք եղբարք ոչ 4
էք 'ի խաւարի՝ թէ օրն ձեր իբրեւ զգող 'ի
վերայ հասանիցէ. *զի ամենեքին դուք որդիք 5
լուսոյ էք՝ և որդիք տունջեան. չեմք
գիշերոյ՝ չեմք խաւարի. *Ապա մի՛ դքնով 6
անկանիցիմք՝ որպէս և այլքն, այլ արթունք
և զուարթունք եղիցուք. *Զի 'որ ննջենն՝ 7
գիշերի ննջեն, և որ արբենանն՝ գիշերի արբենան.
*Այլ մեք զի տունջեան եմք, արթո՛ւնք 8
եղիցուք, և զգեցցուք զզրահն հաւատոյ
և զսիրոյ, և դիցուք զսաղաւարտն յուսոյն
փրկութեան. *Զի ոչ եդ զմեզ ա՟ծ 'ի 9
բարկութիւն, այլ 'ի փրկութիւն կենդանութեան
'ի ձեռն տեառն մերոյ յ՟ի ք՟ի. *որ 10
մեռաւն վասն մեր. զի եթէ արթունք իցեմք՝
և եթէ ննջիցեմք, նովաւ հանդերձ կեցցուք.
*Վասն որոյ մխիթարեցէք զմիմեանս, և շինեցէք 11
զիրեարս՝ որպէս և առնէքդ իսկ.

Գ.Ձ *Աղաչեմք զձեզ եղբարք՝ ճանաչել զվաստակաւորս 12
և զվերակացուս ձեր 'ի տէր, և
զխրատիչս ձեր. *Եւ համարեցարուք զնոսա 13
արժանիս առաւել սիրոյ՝ վասն գործոյ
նոցա. խաղաղութիւն արարէք ընդ միմեանս.

14 *Աղաչեմք զձեզ եղբարք՝ խրատեցէք զըստահակս,
մխիթարեցէք զկարճամիտս, պատսպարան
լերուք տկարաց, երկայնամիտ լերուք
15 առ ամենեսեան. *Զգոյշ լերուք՝ գուցէ
ոք չարի չար հատուցանիցէ. այլ յամենայն
ժամ զբարեաց զհետ երթայք առ միմեանս
16 և առ ամենեսեան. *Յամենայն ժամ
17 ուրախ լերուք. *Անդադար աղօթս արարէք.
18 *Յա̃մի գոհացարուք. զի այս են կամք
19 ա̃յ ք̃իւ յ̃իւ 'ի ձեզ. *Զհոգին մի՛ շիջուցանէք.
20 *Զմարգարէութիւնս մի՛ արհամարհէք.
21 *Զամենայն ինչ փորձեցէք, զբարին ընկալարուք.
22 *Յամենայն իրաց չարաց 'ի բաց կացէք.
23 *Եւ ինքն ա̃ծ խաղաղութեան սուրբս
արասցէ զձեզ համօրէնս. և բովանդակ ձեր
ոգի և շունչ և մարմին՝ անարատ 'ի գալուստն
24 տեառն մերոյ յ̃ի պահեսցի. *Հաւատարիմ
է՝ որ կոչեացն զձեզ, որ և արասցէ զնոյն։
25 *Եղբարք՝ աղօթս արարէք և 'ի մեր վերայ.
26 *Ողջոյն տաջիք եղբարց ամենեցուն 'ի համբոյր
27 սրբութեան. *Երդմնեցուցանեմ զձեզ
'ի տէր՝ ընթեռնուլ զթուղթդ առաջի ամենայն
28 եղբարց սրբոց. *Շնորհք տեառն մերոյ
յիսուսի քրիստոսի ընդ ձեզ. ամէն։

Առ Թեսաղոնիկեցիս առաջին թուղթն գրեցաւ
յԱթենայ։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍՆ
ԵՐԿՐՈՐԴ

ԳԼ․ Ա․

Դկ ՊՕՂՈՍ և սիղուանոս և տիմոթէոս՝ ե- 1
կեղեցւոյդ թեսաղոնիկեցւոց՝ յա՟ծ
հայր մեր և 'ի տէր յ՟ս ք՟ս ։ *Շնորհք ընդ ձեզ 2
և խաղաղութիւն յա՟յ հօրէ մերմէ և 'ի տ՟նէ յ՟սէ
ք՟սէ ։ *Գոհանալ պարտիմք զա՟յ յա՟մ ժամ վ՟ս 3
ձեր եղբարք՝ ո՟պ և արժան իսկ է ․ զի ևս քան
զևս աճեն հաւատքն ձեր , և յաճախէ սէր իւ-
րաքանչիւր ա՟մցուն ձեր առ միմեանս ։ *Ո՟պ 4
և մեզ ձեօք պարծել յեկեղեցիսն ա՟յ՝ վ՟ս համ-
բերութե՟ն ձերոյ և հաւատոց՝ յա՟մ հալածանս
ձեր և 'ի նեղութիւնս , որում դուքն համբե-
րէք ․ *յօրինակ արդար դատաստանին ա՟յ ․ 5
արժանի լինել ձեզ արքայութե՟ն ա՟յ , վ՟ս որոյ և

6 *զճգնութիւնդ կրէք. * Եթէ պարտ է առաջի*
այ՟՝ հատուցանել նեղչացն ձերոց նեղութիւն.
7 ** և ձեզ նեղելոցդ հանգիստ ընդ մեզ՝ 'ի յայտ-*
նութեան տ՟ն մերոյ յ՟սի ք՟սի, յերկնից հրեշտակօք
8 *զօրութեան իւրոյ. * 'ի բոց հրոյ առնուլ զվրէժս*
յայնցանէ՝ որք ոչ ճանաչեն զա՟ծ, և որ ոչ հնա-
9 *զանդին աւետարանին տ՟ն մերոյ յ՟սի ք՟սի. *որք*
տայցեն վրէժս 'ի սատակումն յաւիտենից՝ յե-
10 *րեսաց տ՟ն՝ և 'ի փառաց զօրութեան ն՟ր. *յորժամ*
գայցէ փառաւոր լինել 'ի մէջ ս՟րբ իւրոց, և
սքանչելի 'ի մէջ ա՟մ հաւատացելոց. զի հա-
ւատարիմ եղև վկայութիւնն մեր 'ի վ՟ր ձեր յա-
11 *ւուր յայնմիկ. * Յոր և աղօթս առնեմք վ՟ս ձեր*
յա՟մ ժամ, զի զձեզ արժանիս արասցէ կոչմանն
ձերում ա՟ծ մեր՝ մինչև լցցէ զա՟մ հաճութիւն
12 *բարութեան, և զգործս հաւատոցն զօրութ՟բ. * զի*
փառաւոր լիցի անուն տեառն մերոյ յ՟սի ք՟սի
'ի ձեզ՝ և դուք 'ի նմա, ըստ շնորհացն այ՟
մերոյ և տեառն յիսուսի քրիստոսի.

ԳԼ. Բ.

1 Ա*ղաչեմ զձեզ եղբարք՝ վ՟ս գալստեանն* ԴԴ
տ՟ն մերոյ յ՟սի ք՟սի, և մերոյ ժողովոյն առ նա.
2 ** մի՛ վաղվաղակի խռովել ձեզ 'ի մտաց՝ և մի՛*
զարհուրել, մի՛ հոգւով և մի՛ բանիւ և մի՛ թըղ-
թովք՝ իբրև թէ 'ի ձէնջ. ո՟պ թէ եկեալ հա-
3 *սեալ իցէ օրն տ՟ն.* Մ*ի՛ ոք զձեզ խաբեսցէ՝ և*

մի իւիք իրօք․ զի եթէ ոչ նախ եկեսցէ ապստամբութիւնն ,
և յայտնեսցի մարդն անօրէնութե̃՝
որդին կորստեան , *հակառակորդն 4
հպարտացեալ 'ի վր̃ ա̃մի , որ անուանեալ իցէ
ա̃ծ , կամ պաշտօն․ մինչև նստել նմա 'ի տաճարին
ա̃յ , և ցուցանել զանձն՝ թէ ա̃ծ իցէ․
*Ոչ յիշէք՝ զի մինչ առ ձեզն իսկ էի՝ ասէի 5
զայս ։ *Եւ արդ դուք ինքնին գիտէք զայն՝ 6
որ ունիցին յայտնել նմա յիւրում ժամանակի ։
*Զի խորհուրդն անօրէնութե̃ արդէն իսկ զօրանայ․ 7
բայց յայնժամ մինչ 'ի միջոյ բարձցի՝
որ այժմդ ունի ։ *Եւ ապա յայտնեսցի անօրէնն․ 8
զոր տ̃ր յ̃ս սատակեսցէ հոգւով բերանոյ
իւրոյ , և խափանեսցէ յայտնութբ̃ գալստեանն
իւրոյ ։ *Որոյ գալուստն ըստ ազդեցութե̃ սատանայի է , 9
ա̃մ զօրութբ̃ և նշանօք և արուեստիւք
ստովք , *և ա̃մ պատրանօք անիրաւութե̃ 10
'ի վր̃ կորուսելոցն․ փոխանակ զի զսէրն ճշմարտութեան
ոչ ընկալան՝ զի ապրեսցին , և վ̃ն այնորիկ
առաքեսցէ նց̃ ա̃ծ ազդեցութիւն մոլորութեան՝
հաւատալ նց̃ ստութե̃ ։ *Զի դատապարտեսցին 11
ա̃մքեան՝ որ ոչ հաւատացին
ճշմարտութե̃ , այլ հաճեցան ընդ անօրէնութիւնն ։
*Այլ մեք պարտիմք գոհանալ զա̃յ 12
յա̃մ ժամ վ̃ն ձեր եղբարք սիրեցեալք 'ի տ̃նէ․
զի ընտրեաց զձեզ ա̃ծ 'ի սկզբանէ 'ի փրկութիւն՝
սրբութբ̃ հոգւոյն՝ և հաւատովքն ճշմարտութե̃ ․
*յոր և կոչեաց զձեզ աւետարանաւն 13

մերով 'ի փրկութիւն փառացն տ̃ն մերոյ յս̃ի
14 ք̃սի . * Այսուհետև եղբարք հաստատուն
կացէք՝ և պինդ կալարուք զաւանդութիւնսն՝
զոր ուսարուք , եթէ բանիւ և եթէ թղթով
15 մերով ։ * Այլ ինքն տէր մեր յ̃ս ք̃ս և ա̃ծ և
հայր մեր , որ սիրեացն զմեզ՝ և ետ մեզ մխի-
թարութիւն յաւիտենից՝ և յոյս բարեաց շնոր-
16 հօք , * մխիթարեսցէ զսիրտս ձեր՝ և հաստա-
տեսցէ յա̃մ բանս և 'ի գործս բարութեան ։

ԳԼ. Գ.

1 Այսուհետև եղբարք՝ աղօթս արարէք ԶԴ
'ի վ̃ր մեր , զի բանն տ̃ն ընթանայցէ . և փա-
ռաւոր լինիցի յա̃մ տեղիս՝ ո̃պ և առ ձեզ .
2 * զի ապրեսցուք յանօրինաց և յանզգամաց
3 մարդոց . զի ոչ ա̃մցուն են հաւատք . * Այլ
հաւատարիմ է տէր , որ և հաստատեսցէ ըզ
4 ձեզ՝ և պահեսցէ 'ի չարէ անտի . * Վստահ
եմք 'ի ձեզ տերամբ . թէ զոր պատուիրեցաքն
5 ձեզ , և առնէք՝ և առնիցէք . * Այլ տէր ուղ-
ղեսցէ զսիրտս ձեր 'ի սէրն ա̃յ՝ և 'ի համբե-
6 րութիւնն ք̃սի . * Պատուիրեմ ձեզ եղբարք
յանուն տ̃ն մերոյ յ̃սի ք̃սի , խորշել ձեզ յա̃մ
եղբօրէ՝ որ ստահակսն գնայցեն . և ոչ ըստ
7 աւանդութեանն՝ զոր ընկալարուք 'ի մէնջ . * Զի
դուք ինքնին գիտէք՝ թէ ո̃պ պարտ է ձեզ
նմանել մեզ . և ոչ երբէք ստահակեցաք առ

ձեզ. *և ոչ ձրի զուրուք հաց կերաք, այլ 8
ջանիւ և վաստակով զցայգ և զցերեկ գործէաք՝ վ̃ն չծանրանալոյ ումեք ՚ի ձէնջ. *Ոչ 9
եթէ չունէաք իշխանութիւն, այլ զի զանձինս
օրինակ արասցուք ձեզ՝ նմանողս լինել մեզ.
*Քանզի մինչդեռ առ ձեզն իսկ էաք՝ զայս 10
պատուիրէաք ձեզ, թէ որ ոչն կամիցի գործել՝ և կերիցէ մի՛. *Արդ՝ լսեմք զոմանց ՚ի 11
ձէնջ՝ թէ ստահակութ̃բ գնան. գործ ինչ ոչ
գործեն, այլ յուլացեալ՝ հետաքրքիր շրջին.
*Այնպիսեացն պատուէր տամք՝ և աղաչեմք 12
՚ի տէր յ̃ ք̃, զի հանդարտութ̃բ գործեսցեն՝ և զիւրեանց*հաց կերիցեն. *Այլ դուք 13
եղբարք՝ մի՛ ձանձրանայք զբարիս գործել.
*Ապա եթէ ոչ ոք հնազանդեսցի բանիս մերում թղթովդ այդուիկ, դուք նշանակեսջիք 14
զնա, և մի՛ խառնակեսջիք ընդ նմա՝ զի պատկառեսցէ. *Բայց մի՛ իբրև զթշնամի համարիջիք՝ այլ խրատեսջիք՝ իբրև զեղբայր. *Եւ 15 16
ինքն տէր խաղաղութ̃ն՝ տացէ ձեզ խաղաղութիւն յա̃մ ժամ յա̃մ իրս. Տէր ընդ ամենեսին ընդ ձեզ. *Ողջոյնս իմ̃յ ձեռին պօղոսի 17
է, որ է նշանակ. յամենայն թուղթս այսպէս
գրեմ. *Շնորհք տեառն մերոյ յիսուսի քրիստոսի ընդ ձեզ ամենեսին. ամէն. 18

Ա.— Թեսաղոնիկեցւոց երկրորդ՝ գրեցաւ յաթենայ:

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼ. Ա.

1 ՊՕՂՈՍ *առաքեալ յի՟ի քի՟ի՝ ըստ հրամանի* ԱԿ
փրկչին մերոյ այ՟՝ եւ քի՟ի յի՟ի
2 *յուսոյն մերոյ.* * *տիմոթեայ որդւոյ սիրելւոյ*
հաւատովք. շնորհք ողորմութիւն խաղաղութիւն
3 *յայ՟ հօրէ եւ ՚ի տն՟է մերմէ յի՟է քի՟է.* * **Ո**պ՟
աղաչեցի զքեզ կալ յեփեսոս՝ մինչ երթային
՚ի մակեդոնիա. զի պատուէր տացես ոմանց
4 *չլինել օտարուսմունս,* * *եւ չհայել յառասպելս*
եւ ՚ի տոհմաթիւս անչափս. որ մանաւանդ
խնդիրս յուզեն, եւ ոչ զտնտեսութիւն այ՟ հաւատովք.
5 * **Ք**անզի *գլուխ պատուիրանին սէր*
է, ՚ի սբ՟ սրտէ՝ եւ ՚ի մտաց բարեաց՝ եւ յանկեղծաւոր
6 *հաւատոց.* * **Յ**որոց *ոմանք վրիպեցան՝*
7 *խոտորեալք յունայնութիւն բանից.* * **Կ**ամին
լինել վարդապետք օրինաց. ինքեանք ոչ ի-

մանան զինչ խօսին՝ և ոչ վն̃ որոց պնդեալն են.
*Գիտեմք եթէ բարւոք են օրէնք՝ եթէ ոք 8
զնա̃ օրինօքն կրեսցէ. *Բայց զայս գիտասցէ՝ 9
զի 'ի վր̃ արդարոց օրէնք ոչ կան, այլ 'ի վր̃
անօրինաց և անհնազանդից՝ ամբարշտաց և մեղաւորաց՝ անսրբոց և պղծոց, զհայր և զմայր անարգողաց, մարդասպանաց, *պոռնկաց ար- 10
ուագիտաց՝ մարդեղուզաց ստոց ստերդմանց.
և եթէ այլ ինչ իցէ հակառակ ողջամիտ վարդապետութեանս. *որ ըստ աւետարանի փառաց 11
Վ.Զ երանելոյն ա̃յ է, որում եղէ ես հաւատարիմ.

*Շնորհ ունիմ այնմիկ, որ զօրացոյցն զիս 12
'ի քս̃ յս̃ 'ի տէր մեր. զի հաւատարիմ համար[illegible] կարգել 'ի սպասաւորութիւն. *որ յա- 13
ռաջագոյն հայհոյիչն էի և հալածիչ և թշնամանիչ. այլ գտի ողորմութիւն, զի զայն յանգիտութեան և յանհաւատութեան գործէի. *Եւ առա- 14
ւել եղեն շնորհք տն̃ մերոյ հաւատովք և սիրով՝
որ 'ի քս̃ յս̃. *Հաւատարիմ է բանս՝ և ա̃մ ըն- 15
դունելութեան արժանի է. զի քս̃ յս̃ եկն յաշխարհ
փրկել զմեղաւորս, որոց գլուխն ես եմ. *Այլ 16
վն̃ այնորիկ գտի ողորմութիւն, զի նախ յիս
ցուցցէ յս̃ քս̃ զա̃մ երկայնմտութիւն՝ յօրինակ
այնոցիկ՝ որ հաւատալոցն իցեն 'ի նա, 'ի կեանսն
յաւիտենից. *Այլ թագաւորին յաւիտենից՝ 17
անեղծի և աներևութի, միոյ ա̃յ՝ փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն. *Զայս 18
պատուիրան աւանդեմ քեզ՝ որդեակ իմ տիմո-

թէոս, ըստ կանխելոյ 'ի քեզ մարգարէութ̃ցն.
զի դու զինուորիցես նոքօք զգեղեցիկ զինուորութիւնն.
19 * ունիցիս հաւատս սրբովք մտօք,
զոր ոմանց մերժեալ յանձանց իւրեանց՝ նաւակածեցան
20 'ի հաւատս. * որոց սակի են հիմենոս՝
և աղեքսանդրոս, զորս մատնեցի սատանայի.
զի խրատեսցին չհայհոյել.

ԳԼ. Բ.

1 Եւ արդ՝ աղաչեմ նախ քան զա̃մ, առնել
աղօթս՝ խնդրուածս՝ պաղատանս՝ գոհութիւնս
2 վա̃ ա̃մ մարդկան. * մանաւանդ վա̃
թագաւորաց և ա̃մ իշխանաց. զի խաղաղութ̃
և հանդարտութ̃ վարեսցուք զկեանս մեր,
3 ա̃մ ա̃ծ պաշտութ̃ և սրբութ̃. * Զի այն է
բարի և ընդունելի առաջի փրկչին մերոյ ա̃յ.
4 * որ զա̃մ մարդիկ կամի զի կեցցեն՝ և 'ի գիտութիւն
5 ճշմարտութեան եկեսցեն. * Զի մի
է ա̃ծ, և մի միջնորդ ա̃յ և մարդկան՝ մարդ
6 յս̃ քս̃. * որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն՝
7 վկայութիւն ժամանակաց իւրոց. * Յոր
եդայ ես քարոզ և առաքեալ. ճշմարիտ ասեմ
'ի քս̃՝ և ոչ ստեմ, եղէ վարդապետ հեթանոսաց
հաւատովք և ճշմարտութեամբ.
8 * Կամիմ՝ զի արք կայցեն յաղօթս յա̃մ ԱԳ
տեղիս. բառնայցեն զս̃բ ձեռս 'ի վեր առանց
9 բարկութ̃ և երկմտութ̃. * Նոյնպէս և կանայք

'ի զարդ խոնարհուե̃՝ ակնածութ̃ և զգաստութ̃
զարդարել զանձինս. մի՛ 'ի հիւս ոսկեմանս ըն-
դելուզեալս մարգարտով, կամ 'ի հանդերձս
պաճուճեալս. *այլ ո՛րպ̃ վայել է կանանց՝ զած̃- 10
պաշտութիւն յանձնառելոց գործովք բարուե̃.
*Կին մարդ ցածութ̃ ուսցի՝ ամ̃ հնազանդութ̃. 11
*Այլ ուսուցանել կնոջ մարդոյ ոչ հրամայեմ, 12
և ոչ ճոխաբան լինել քան զայր մարդ. այլ 'ի
լռութե̃ կալ. *Զի ադամ նախ ստեղծաւ՝ և 13
ապա եւայ. *Եւ ադամ ոչ պատրեցաւ՝ այլ 14
կինն պատրեցաւ և յանցեաւ. *բայց կեցցէ 15
վ̃ որդեծնութե̃ն՝ եթէ կացցէ 'ի հաւատս և
'ի սէր և 'ի սրբութիւն պարկեշտութեամբ.

ԳԼ Գ.

Հաւատարիմ է բանս. եթէ ոք եպիսկոպո- 1
սուե̃ ցանկայ՝ բարւոյ գործոյ ցանկայ. *Պարտ 2
է եպիսկոպոսին անարատ լինել, միոյ կնոջ այր,
հեզ՝ ցած՝ պարկեշտ՝ հիւրասէր՝ ուսուցիչ. *մի՛ 3
թշնամանող, մի՛ հարկանող, այլ հանդարտ. մի՛
կռուող, մի՛ արծաթասէր. *զի իւրում տանն 4
բարւոք վերակացու լեալ իցէ. որդեակս
ունիցի, որ 'ի հնազանդուե̃ կայցեն ամ̃ պար-
կեշտութ̃. *Ապա եթէ ոք իւրում տանն վերա- 5
կացու չգիտիցէ լինել, զիա՞րդ եկեղեցւոյ այ̃
խնամակալ լինիցի. *Մի՛ մատաղատունկ, զի 6
մի՛ հպարտացեալ 'ի դատաստանս սատանայի

7 անկանիցի ։ *Այլ պարտ է նմա վկայութիւն
բարի և յարտաքնոցն ունել. զի մի՛ 'ի նախատինս
անկանիցի՝ և յորոգայթս սատանայի։
8 *Նոյնպէս և զսարկաւագունս պարկեշտս . մի՛
9 երկբանս , մի՛ գինեսէրս , մի՛ զօշաքաղս . *այլ
ունիցին զխորհուրդ հաւատոյն սուրբ մտօք ։
10 *Եւ նոքա նախ փորձեսցին , և ապա 'ի պաշտօնն
11 մատիցեն , զի անարատք իցեն ։ *Նոյնպ՟
և կանայք ն՟ պարկեշտք . մի՛ չարախօսք, հեզք՝
12 հաւատարիմք յա՟մի ։ *Սարկաւագք լինիցին
միոյ կնոջ արք . որք որդւոց իւրեանց բարւոք
վերակացու լեալ իցեն , և տանց իւրեանց .
13 *զի որ բարւոքն պաշտիցեն , աստիճան բարի
անձանց իւրեանց շահին , և բազում համարձակութիւն 'ի հաւատսն՝ որ 'ի ք՟ս յ՟ս . Վ.Ջ

14 *Զայս գրեմ առ քեզ՝ զի ակն ունիմ 'ի մօտոյ
15 գալ ։ *Ապա թէ յամեցից՝ զի գիտասցես ,
թէ ո՞րպ՟ պարտ իցէ քեզ 'ի տան ա՟յ շրջել . որ
է եկեղեցի ա՟յ կենդանւոյ , սիւն և հաստատութիւն
16 ճշմարտութե՟ . *Եւ յայտնի իսկ մեծ է
խորհուրդն ա՟ծպաշտութե՟ . որ երևեցաւ մարմնով՝
արդարացաւ հոգւով՝ յայտնեցաւ հրեշտակաց՝
քարոզեցաւ 'ի հեթանոսս՝ հաւատարիմ
եղև յաշխարհի՝ և վերացաւ փառօք ։

ԳԼ. Դ.

1 Այլ հոգին ս՟ր յայտնապէս ասէ . թէ 'ի

*ժամանակս յետինս՝ քակեսցին ոմանք 'ի հաւատոցն.
և հայեսցին յայս մոլորութեան, և
վարդապետութիւնս դիւաց, * կեղծաւորուբ̃ 2
ստաբանք, խարեալք իւրեանց խղճիւն մտաց.
* որ արգելուցուն յամուսնանալոյ, և մեկնիցեն 3
'ի կերակրոց՝ զոր ա̃ծ հաստատեաց 'ի վայելել
հաւատացելոց, և ոյք հասեալ իցեն 'ի
ճշմարտութե̃ն վր̃. * Զի ա̃մ արարածք ա̃յ՝ 4
բարի են, և չիք ինչ խոտան, մանաւանդ որ
գոհութբ̃ ընդունիցին. * զի սրբի բանիւն ա̃յ՝ 5
և աղօթիւք. * Զայս խրատ տուեալ եղբարց՝ 6
բարւոք պաշտօնեայ լինիցիս ք̃ի յ̃ի, սնանիցիս
բանիւք հաւատոց, և բարւոք վարդապետութե̃ն՝
զորոյ զհետն իսկ եղեր. * Այլ 'ի 7
պիղծ բանից՝ և յառասպելաց պառաւանց հրաժարեսջիր.
բայց կրթեա զանձն քո յա̃ծպաշտութիւն.
* զի մարմնոյ կրթութիւն առ 8
սակաւ ինչ օգտակար է. իսկ ա̃ծպաշտութիւն
առ ա̃մ ինչ օգտակար է. և զաւետիս կենաց
ունի՝ զարդիս և զհանդերձելոցն. * Հաւատարիմ 9
է բանս՝ և ա̃մ ընդունելութե̃ արժանի
է. * Զի 'ի սոյն իսկ վաստակեմք՝ և նախատինս 10
յանձն առնումք. զի յուսացեալ եմք յա̃ծ
կենդանի, որ է փրկիչ ա̃մ մարդկան, մանաւանդ
հաւատացելոց. * Պատուէր տացիր 11
զայդ՝ և ուսուցանիցիր. * զի մի́ ոք զքո մանկութիւնդ 12
արհամարհիցէ.

բկ Այլ օրինակ լինիջիր հաւատացելոց՝ բա-*

նուք՝ գնացիւք՝ սիրով հաւատովք սրբութ՟բ։
13 *Մինչև գամ ես, միտ դիր ընթերցուածոց
14 մխիթարութ՟ն՝ վարդապետութ՟ն։ *Մի՛ անփոյթ
առներ զշնորհացդ՝ որ 'ի քեզ են, որ
տուաւ քեզ մարգարէութ՟բ 'ի ձեռնադրու՟է
15 երիցութ՟ն։ *Յայդ խորհեաց՝ և 'ի դոյն կանխեսջիր ·
զի քո յառաջադիմութիւնդ ամենեցուն
16 յայտնի լիցի։ *Զգոյշ լինիջիր անձին
և վարդապետու՟եդ՝ և 'ի դմին յամեսջիր։
զայդ եթէ առնիցես՝ և զանձն ապրեցուսցես,
և զայնոսիկ՝ որ քեզն լսիցեն։

ԳԼ. Ե.

1 Զծերն մի՛ պատուհասեսցես, այլ մխիթարեսջիր
իբրև զհայր, զերիտասարդս իբրև
2 զեղբարս, *զպառաւունս իբրև զմարս, ըզմանկամարդս
3 իբրև զքորս՝ ա՟մ սրբութ՟բ։ *Զայրիս
4 պատուեա, որ ստոյգ այրիքն իցեն։ *Ապա
թէ ոք այրի՝ որդիս և թոռունս ունիցի, ուսանիցին
նախ իւրեանց տանց բարի առնել՝
և զփոխարէնս հատուցանել ծնողացն · զի այն
5 է բարի՝ և ընդունելի առաջի ա՟յ։ *Իսկ որ
ճշմարիտ այրին իցէ · և մենացեալ յուսացեալ
յա՟ծ, և կանխեալ յաղօթս և 'ի խնդրուածս
6 զցայգ և զցերեկ։ *Իսկ զիրդ այրին՝
7 կենդանւոյն մեռեալ է։ *Զայս պատուիրեա՝
8 զի անարատք իցեն։ *Իսկ եթէ ոք իւրոց՝

և մանաւանդ ընտանեացն խնամ ոչ տանիցի,
՚ի հաւատոյն ուրացեալ է՝ և չար եւս քան
զանհաւատն է. *Այրի ընդ այրիս անուանեսցի, 9
որ չիցէ պակաս ՚ի վաթսնամենից,
միոյ առն կին լեալ. *և ՚ի գործս բարիս վկայեալ, 10
եթէ մանկունս սնուցեալ իցէ, եթէ
զհիւրս ընկալեալ իցէ, եթէ զսրբոց զոտս լուացեալ
իցէ, եթէ նեղելոց բաւական լեալ
իցէ, եթէ զա՟մ գործոց բարեաց զհետ երթեալ
իցէ: *Այլ ՚ի մանկամարդաց այրեացն 11
հրաժարեա, զի յորժամ խայտան զք՟իւ՝ ամուսնանալ
կամին. *Իսկ զդատաստանս ընդունին, 12
զի զառաջին հաւատսն արհամարհեցին: *Միանգամայն և դատարկանձունք 13
ուսանին՝ շրջողք տանէ ՚ի տուն. և ոչ միայն
դատարկք, այլ և փաքուք և հետաքրքիրք.
և խօսին՝ որ ինչ ոչ է պիտոյ: *Կամիմ 14
զմանկամարդացդ ամուսնանալ, որդիս
ծնանել, տնարարս լինել, և մի՛ ինչ պատճառս
տալ հակառակորդին ՚ի հայհոյութ՟ աղագս:
*Զի արդէն իսկ ոմանք խոտորեցան զկնի սատանայի: 15
*Եթէ ոք հաւատացեալ՝ այրիս ունիցի՝ 16
բաւական լիցի ն՟ց, և մի՛ ծանրասցի եկեղեցւոյն. զի ճշմարիտ այրեացն բաւական լինիցի:

ԲԴ *Որ բարւոք վերակացու լինին երիցունք՝ 17
կրկին պատուոյ արժանի եղիցին. մանաւանդ
որ աշխատիցին բանիւ և վարդապետութ՟բ:
*Քանզի ասէ գիր, մի՛ կապեսցես զցուլ 18

եզին կալոտւոյ · և արժանի է մշակն վարձու
19 իւրոյ ։ *Զերիցուէ չարախօսութիւն մի՛ ըն-
դունիցիս · բայց եթէ երկուք՝ և երիւք վկա-
20 յիւք ։ *Իսկ որ մեղանչենն՝ առաջի ամենե-
ցուն յանդիմանեա , զի և այլքն երկիցեն ։
21 *Վկայութիւն դնեմ առաջի ա̃յ և յս̃ի ք̃սի՝
և ընտրելոց հրեշտակաց , զի զայդ պահեսցես
առանց մտահաճուե̃ · մի՛ ինչ առնել աչառա-
22 նօք ։ *Ձեռս վաղվաղակի յուրուք վր̃ մի՛ դը-
նիցես , և մի՛ կցորդ լինիցիս մեղաց օտարաց ։
23 զանձն քո ս̃ր պահեսջիր ։ *Այսուհետև մի՛
ջուր և եթ ըմպիցես՝ այլ սակաւիկ մի և գինի
խառնեսջիր վասն ստամոքսի և առէպ հիւան-
24 դուե̃ց ։ *Են մարդք՝ որոց մեղքն յայտնի են՝
և յառաջագոյն հասեալ 'ի դատաստան , և են
25 որոց զկնի երթան ։ *Նոյնպ̃ և բարի գործքն
յայտնի են · և որ այլ ազգ եւս ինչ իցեն՝
թաքչել ոչ կարեն ։

ԳԼ · Զ ·

1 Որ միանգամ ընդ լծով ծառայուե̃ իցեն ,
զիւրաքանչիւր տեարս պատուի արժանի հա-
մարեսցին · զի մի՛ անունն ա̃յ և վարդապե-
2 տութիւնն հայհոյեսցի ։ *Իսկ որ հաւատա-
ցեալ տեարս ունիցին՝ մի՛ արհամարհեսցեն ,
զի եղբարք են · այլ առաւել ծառայեսցեն՝ զի
հաւատացեալքն են և սիրունք · որք զբարե-

բարութիւն յանձինս ունիցին․ զայս ուսուցա-
նիջիր՝ և մխիթարեսջիր․ * Իսկ եթէ ոք այլ- 3
ազգ ինչ ուսուցանիցէ, և ոչ անսայցէ ողջ-
մտութեն բանից տ̃ն մերոյ յ̃ի ք̃ի, և ըստ
ա̃ծպաշտութեն վարդապետութեն․ *այնպիսին 4
հպարտացեալ է, և ոչինչ ոչ գիտէ․ այլ տապի
'ի խնդիրս և 'ի բանս հակառակութե․ լինին
նախանձ հեռ հայհոյութիւն՝ կարծիք չարեաց,
*խարդախութիւնք ապականելոց մտաց մարդ- 5
կան՝ և օտարացելոց 'ի ճշմարտութէ անտի,
որ շահավաճառ համարին զա̃ծպաշտութիւնն․
բայց դու մերժեսջիր յայնպիսեաց․

ԲՉ *Այլ շահավաճառ մեծ ա̃ծպաշտութիւն 6
է՝ բաւականութ̃բ հանդերձ․ *Զի ոչ բերաք 7
ինչ յաշխարհ և ոչ տանել ինչ կարասցուք․
*Այլ ունիմք կերակուր և հանդերձս, և 8
այնու շատասցուք․ *Իսկ որք կամին մեծա- 9
նալ անկանին 'ի փորձութիւն և յորոգայթ, և
'ի բազում ցանկութիւնս անմիտս և վնասա-
կարս․ որք ընկղմեն զմարդիկ՝ 'ի սատակումն
և 'ի կորուստ․ *Զի արմատ ա̃մ չարեաց ար- 10
ծաթսիրութիւն է․ որում ոմանց ցանկացեալ՝
մոլորեցան 'ի հաւատոյն, և զանձինս արկին
ընդ բազում ցաւովք․ *Այլ դու ո՛ մարդ ա̃յ՝ 11
փախիր յայնցանէ, և երթ զհետ արդարութեն
զա̃ծպաշտութեն զհաւատոյ զսիրոյ զհամբերութեն
զհեզութեն․ *Եւ մարտիր զբարւոք մարտն հա- 12
ւատոյ, և բուռն հար զկենացն յաւիտենակա-

նաց՝ յոր կոչեցարն, և դաւանեցեր զբարւոք
դաւանութիւնն առաջի բազում վկայից ·
13 *Պատուիրեմ քեզ առաջի ա՟յ՝ որ կենդանի
առնէ զա՟մ, և յ՟սի ք՟սի, որ վկայեաց առաջի
պոնտացւոյ պիղատոսի զբարւոք դաւանութիւնն ·
14 *պահել քեզ զպատուիրանն անբիծ՝
անարատ, մինչև 'ի յայտնութիւն տ՟ն մերոյ յ՟սի
15 ք՟սի · *զոր յիւր ժամանակս ցուցցէ երանելին՝
և միայն հզօր, Թագաւոր թագաւորաց և տէր
16 տէրանց · *որ միայն ունի զանմահութիւն՝ բընակեալ
'ի լոյս անմատոյց · զոր ոչ ոք ետես 'ի
մարդկանէ՝ և ոչ տեսանել կարող է · որում պատիւ
17 և զօրութիւն յաւիտեանս, ամէն ։ *Մեծատանց՝
որ են յայսմ յաշխարհի՝ պատուէր
տացիր՝ մի՛ հպարտանալ և մի՛ յուսալ 'ի մեծութիւն
մնոտի, այլ յա՟ծ՝ որ տայ մեզ զա՟մ առատապէս
18 'ի վայելել, *զբարիս գործել, մեծանալ
գործովք բարուք, առատս սիրովն հաղորդ
19 լինել · *գանձել անձանց հիմն բարի 'ի հանդերձեալն ·
զի բուռն հարկանիցեն ճշմարիտ կենացն ։
20 *Ո՛վ տիմոթէէ՝ պահեա զաւանդն՝ խոտորեալ
'ի պղծոց և 'ի նորաձայն բանից և 'ի
21 հակառակու՟է և 'ի մոլարանուն գիտու՟է · *զոր
ոմանց յանձն առեալ՝ վրիպեցան 'ի հաւատոց
անտի ։ Շնորհք ընդ քեզ · ամէն ։

Առ Տիմոթէոս առաջին թուղթն գրեցաւ 'ի Լաւոդիկէայ, որ է մայր քաղաքաց պակատիանացւոց ։

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼ. Ա.

գկ ՊՕՂՈՍ *առաքեալ յս̃ի քս̃ի կամօքն* 1
ա̃յ, ըստ աւետեաց կենացն՝ որ 'ի քս̃
*յս̃. * Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ՝ շնորհք ո-* 2
ղորմութիւն և խաղաղութիւն յա̃յ հօրէ՝ և 'ի քս̃է
*յս̃է տ̃նէ մերմէ. *Շնորհս ունիմ յա̃յ՝ զոր պաշ-* 3
տեմն 'ի նախնեաց՝ մտօք սրբովք. իբրև զի ան-
պակաս ունիմ զքէն յիշատակ յաղօթս իմ. ընդ
*ցայգ և զցերեկ, *ցանկացեալ եմ տեսանել* 4
զքեզ. յիշատակեալ զարտասուսն քո՝ զի լցայց
*ուրախութ̃. *զմտաւ ածեալ զանխիղճ հա-* 5
ւատոն՝ որ են 'ի քեզ. որ յառաջագոյն բնակե-
ցաւ 'ի հանւոյ քում Լաւոդեայ, և 'ի մօր քում
Եւնիկեայ. հաստատեալ եմ թէ և 'ի քեզ է.
**Վ̃ որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել ըզ* 6
շնորհսն ա̃յ՝ որ են 'ի քեզ 'ի ձեռնադրութէ

7 իմմէ. *Զի ոչ ետ մեզ ա̃ծ հոգի վհատութե̃, այլ
8 զօրութե̃ և սիրոյ՝ և զգաստութե̃. *Մի այսուհետև
ամօթ համարիցիս զվկայութիւն տ̃ն մերոյ՝
և մի զիս զկապեալ նր̃. այլ կցորդ լեր
չարչարանաց աւետարանին՝ ըստ զօրութեն ա̃յ.
9 *Որ փրկեաց զմեզ, և կոչեաց 'ի կոչումն ս̃բ
ոչ ըստ գործոց մերոց՝ այլ ըստ իւրում յառաջադրութենն
և շնորհաց, որ տուաւ մեզ 'ի
ք̃ս յ̃ս յառաջ քան զժամանակն յաւիտենից.
10 *Բայց յայտնեցաւ այժմիկ յերևել փրկչին ԳԴ
մերոյ յ̃ի ք̃ի, որ խափանեաց զմահ՝ և լուսաւոր
արար զկեանս և զանեղծութիւն 'ի ձեռն
11 աւետարանին. *որոյ եդայ ես քարոզ և առաքեալ՝
12 և վարդապետ հեթանոսաց. *Վ̃
որոյ և զայս չարչարանս կրեմ, այլ ոչինչ ամօթ
համարիմ. քանզի գիտեմ՝ յո՛ հաւատացեալ
եմ. և հաստատեալ եմ, թէ կարող է զաւանդն
13 իմ պահել յօրն յայն. *Ունիցիս օրինակ ողջմտութե
բանիցն, զորս յինէն լուար՝ հաւատովք
14 և սիրով որ 'ի ք̃ս յ̃ս. *Զբարւոք աւանդն
պահեսջիր՝ 'ի ձեռն հոգւոյն սրբոյ 'ի մեզ բընակելոյ.
15 *Զայս գիտասջիր՝ զի մեկնեցան 'ի
մէնջ ամենեքեան՝ որ էին յասիա. որոց սակի
16 են փիգեղոս և հերմոգենէս. *Տացէ ա̃ծ ողորմութիւն
տանն ոնեսիփորայ. զի բազում
անգամ հանգոյց զիս, և զկապանս իմ ոչ ամօթ
17 համարեցաւ. *այլ իբրև եկն 'ի հռոմ, պնդագոյնս
18 խնդրեաց զիս՝ և եգիտ. *Տացէ նմա տ̃ր՝

ողորմութիւն գտանել 'ի տ՟նէ յաւուրն յայնմիկ՝
և որչափ ինչ միանգամ յեփեսոս սպաս կալաւ
ինձ, զայն դու ինքնին քաջ գիտես ։

ԳԼ. Բ.

Արդ դու որդեակ իմ, զօրացիր շնորհօքն՝ 1
որ 'ի ք՟ս յ՟ս ։ *Եւ զոր լուար յինէն բազում վկայիւք՝ 2
զայն աւանդեսցես հաւատարիմ մարդոց՝
որք բաւական իցեն և զայլս ուսուցանել ։
Գ.Ձ *Վշտակից լեր իբրև զբարւոք զինուոր յ՟ի 3
ք՟ի ։ *Ոչ ոք զինուորեալ աստէն ընդ կեանս 4
աշխարհիս պատաղի, եթէ զօրավարին հաճոյ
լինիցի ։ *Եւ եթէ մարտիկ ոք իցէ՝ ոչ պսակի՝ 5
եթէ ոչ ըստ օրինին մարտիցէ ։ *Եւ հողագործին 6
աշխատելոյ պարտ է նախ 'ի պտղոյն վայելել ։
*Իմա՛ զինչ ասեմս . տացէ քեզ տ՟ր իմաստութիւն 7
յա՟մի ։ *Յիշեա զք՟ս յ՟ս յարուցեալ 8
'ի մեռելոց 'ի զաւակէ դաւթի՝ ըստ աւետարանիս
իմում ։ *յորում չարչարիմ կապանօք 9
չափ՝ իբրև չարագործ . այլ բանն ա՟յ ոչ եթէ
կապեալ իցէ ։ *Վ՟ այնորիկ յա՟մի համբերեմ 10
վ՟ ընտրելոցն, զի և նք՟ փրկութե՟ն հասանիցեն
որ 'ի ք՟ս յ՟ս երկնաւոր փառօքն հանդերձ ։
*Հաւատարիմ է բանս . զի եթէ ընդ նմա մեռաք՝ 11
ընդ նմին և կեցցուք . *և եթէ համբերեմք, 12
ընդ նմին և թագաւորեսցուք . և եթէ
ուրանամք՝ և նա ուրասցի զմեզ . *և եթէ 13

չհաւատամք, նա հաւատարիմ մնայ, ուրանալ
14 զանձն իւր ոչ կարէ. * Զայս յուշ արասջիր
վկայութիւն եդեալ առաջի այ՟. մի՛ բանակռիւ
լինել յոչինչ պէտս 'ի կործանումն լսողաց.
15 * Փութասջիր զանձն քո ընտիր կացուցա- ԿԻՐ
նել առաջի այ՟, մշակ առանց ամօթոյ. ուղիղ
16 համառօտել զբանն ճշմարտութե՟. * Այլ 'ի
պղծոց և 'ի ունայն խօսից մերժեսջիր. զի ա-
ռաւել յառաջ դիցեն յամբարշտութիւնս.
17 * և բանք նց՟ իբրև գքաղցկեղ ճարակ գտա-
նեն. որոց սակի են հիմենոս՝ և փիղետոս,
18 * որք վրիպեցան 'ի ճշմարտուէ՟, և ասեն՝ եթէ
յարութիւն մեռելոց արդէն իսկ եղեալ է. և
19 կործանեն զհաւատս ոմանց. * Այլ հաստա-
տուն հիմն այ՟ կայ՝ և ունի զկնիքս զայս, եթէ
ծանեաւ տէր զայնոսիկ՝ որ իւրն են. և 'ի բաց
լիցի յանիրաւութէ՟ ամ՟ որ անուանէ զանուն
20 տն՟. * Այլ 'ի տան մեծի ոչ միայն են անօթք
ոսկեղէնք և արծաթեղէնք, այլ և փայտեղէնք
և խեցեղէնք. են՝ որ 'ի պատուի են, և են որ
21 յանարգութե՟. * Եթէ ոք սրբեսցէ զանձն իւր
յայնպիսեաց անտի, եղիցի անօթ պատուա-
կան՝ սրբեալ և պիտանի տեառն իւրում՝ յա՟մ
22 գործս բարութե՟ պատրաստեալ. * Այլ յերի-
տասարդական ցանկութեց՟ փախիր. և երթ
զհետ արդարութե՟՝ զհաւատոց զսիրոյ զխա-
ղաղութե՟ զբարութե՟, ընդ այնոսիկ՝ որ կարդան
23 զանուն տն՟ սր՟բ սրտիւք. * Այլ 'ի յիմար և

յանխրատ խնդրոց հրաժարեա՛ . գիտասջիր՝
թէ անտի ծնանին կռիւք . * Բայց ծառայի տ՟ն 24
ոչ է պարտ կռուել , այլ հեզ լինել առ ամենեսին՝
ուսուցիչ անոխակալ . * Հանդարտութ՟բ 25
խրատել զհակառակողսն , թերեւս տացէ ն՟ց
ա՟ծ ապաշխարութիւն ՚ի գիտութիւն ճշմարտութ՟ն .
* և սթափեսցին յորոգայթից սատանայի , 26
որսացեալ ՚ի նմանէ ՚ի նորա կամս .

ԳԼ . Գ .

ԿԻԲ Զայս գիտասջիք՝ եթէ յաւուրս յետինս 1
եկեսցեն ժամանակք չարք . * զի եղիցին մարդիկ 2
անձնասէրք արծաթասէրք հպարտք ամբարտաւանք
հայհոյիչք՝ անհաւանք ծնողաց,
անշնորհք անսուրբք , * աննուէրք անգութք 3
բանսարկուք անժուժք վէսք անբարեսէրք ,
* մատնիչք յանդգունք ամբարհաւաճք , ցանկասէրք 4
մանաւանդ՝ քան ա՟ծասէրք . * որ ունիցին 5
զկերպարանս ա՟ծպաշտութ՟ն , և ՚ի զօրու՟է
անտի ն՟ր ուրացեալ իցեն . և խորշեսջիր
՚ի նոցանէ . * Քանզի ՚ի նոցանէ են որ մտանեն 6
տանէ ՚ի տուն , և գերեն զկանայս չեղջակոտեալս
մեղօք վարեալք ՚ի պէս պէս ցանկութիւնս .
* որ յա՟մ ժա՟մ ուսանին , և երբէք ՚ի 7
գիտութիւն ճշմարտութ՟ն ոչ հասանեն . * Այլ 8
ո՟պ յանէս և յամբրէս հակառակ կացին մովսեսի ,
նոյն՟պ և ս՟ք հակառակ կան ճշմարտութեն .

մարդք ապականեալք մտօք՝ անպիտանք ՚ի
9 հաւատս. *Այլ ոչ երբէք դայցեն յառաջ ՚ի
լաւ անդր. քանզի անմտութիւն սց̃ յայտնի
լինիցի ամենեցուն, ոպ̃ և նոցայն իսկ եղեւ.
10 *Այլ դու զհետ եկիր՝ վարդապետուե̃ ի-
մոյ՝ առաջնորդուե̃ յօժարուե̃ հաւատոյ՝ եր-
11 կայնմտութե̃ սիրոյ համբերութե̃, *հալածա-
նաց չարչարանաց. որպիսիք եղեն ինձ յան-
տիոք և յիկոնիոն և ՚ի լիւստրիս, որպիսի հա-
լածանաց համբերի. և յա̃մէ փրկեաց զիս տ̃ր.
12 *Եւ ա̃մքին՝ որ կամիցին ա̃ծպաշտութ̃բ կեալ
13 ՚ի ք̃ս յ̃ս, ՚ի հալածանս կայցեն. *Այլ մարդք
չարք և կախարդք յառաջ եկեսցեն ՚ի չար
14 անդր. մոլորեալք և մոլորեցուցանիցեն. *Այլ
դու հաստատուն կաց՝ յոր ուսարդ, հաւա-
15 տարիմ եղեր. գիտես ուստի ուսար. *զի ՚ի
՚ի մանկութէ զգիրս սուրբս գիտես, որ կարող
են իմաստուն առնել զքեզ ՚ի փրկութիւն՝ ՚ի
ձեռն հաւատոյն որ ՚ի քրիստոս յիսուս.
16 *Ամենայն գիրք ա̃ծաշունչք և օգտակարք, Դ̃Ն
՚ի վարդապետութիւն են՝ և յանդիմանութիւն
և յուղղութիւն և ՚ի խրատ արդարութեան.
17 *զի կատարեալ իցէ մարդն աստուծոյ յամե-
նայն գործս բարութեան հաստատեալ.

ԳԼ. Դ.

1 Զայս վկայութիւն դնեմ առաջի ա̃յ՝ և

յս̃ի քս̃ի. որ դատելոց է զկենդանիս և զմեռեալս՝ 'ի յայտնութեան իւրում և յարքայութեան.
*և դու քարոզեա զբանն, հաս 'ի վր̃ ժամու 2
և տարաժամու, յանդիմանեա սաստեա մխիթարեա ա̃մ երկայնմտութ̃ և վարդապետութ̃.
*Քանզի եկեսցէ ժամանակ՝ զի ողջմտութեան 3
վարդապետութեանն ոչ անսայցեն. այլ ըստ իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապետս՝ ըստ մորմոքելոյ լսելեաց իւրեանց.
*և 'ի ճշմարտութենէ անտի դարձուցանիցեն 4
զլսելիս՝ և յառասպելս կործանեսցին. *Այլ 5
դու զուարթ կաց յա̃մի, ճգնեաց, զգործս աւետարանչի գործեա. զպաշտօնդ քո կատարեալ կալ. *Զի ես այսուհետև նուիրեալ եմ, 6
և ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ. *Զբար- 7
ւոք պատերազմ պատերազմեցայ, զընթացսն
կատարեցի, զհաւատսն պահեցի. *Այսու- 8
հետև կայ մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուսցէ ինձ տէր յաւուր յայնմիկ արդարն դատաւոր. ոչ միայն ինձ, այլ և ամենեցուն որ սիրեցին զյայտնութիւն նորա.

ՁԷ Փութասջիր գալ առ իս վաղվաղակի. *զի 9
դեմաս եթող զիս՝ և սիրեաց զաշխարհ, և
գնաց 'ի թեսաղոնիկէ. *կրեսկէս՝ 'ի գաղիլեա. 10
տիտոս 'ի դաղմատիա. *ղուկաս միայն է ընդ 11
իս. Զմարկոս առեալ ընդ քեզ ածիցես՝ զի է
ինձ պիտանի 'ի սպասաւորութիւն. *Զտիւ- 12
քիկոս առաքեցի յեփեսոս. *Զփիլոնն թողի 13

'ի Տրովադա առ Կարպոսի. յորժամ գայցես՝
բերջիր և զգիրսն, մանաւանդ զմագաղաթսն։
14 *Աղէքսանդրոս (դարբին) բազում չարչարանս
եցոյց ինձ. հատուսցէ նմա Տէր ըստ գործս
15 նր̃. *Յորմէ և դու անձնապահ լինիջիր. զի
16 յոյժ հակառակ եկաց բանից մերոց. *Յառաջնում
ատենին ոչ ոք ինձ 'ի թիկունս եկաց,
այլ ամենեքին թողին զիս. մի՛ համարեսցի
17 նց̃ այն. *Այլ Տէր օգնեաց ինձ, և
զօրացոյց զիս, զի ինև քարոզութիւնն հաստատեսցի,
և լուիցեն ամ̃ հեթանոսք. և
18 ապրեցայ ես 'ի բերանոյ առիւծուն. *Փրկեսցէ
զիս Տէր յամ̃ գործոյ չարաց, և զերծուսցէ
զիս յարքայութիւն իւր՝ որ յերկինս
է. որում փառք յաւիտեանս յաւիտենից.
19 ամէն. *Ողջոյն տաջիր Պրիսկեայ և Ակիւղեայ՝
20 և Ոնեսիփորեայ տանն. *Երաստոս մնաց 'ի
Կորնթոս. զՏրոփիմոս թողի 'ի Միլիտոս հիւանդացեալ.
21 *Փութասջիր յառաջ քան զձմեռն գալ. Ողջոյն տան քեզ Եւբուղոս և
Պուդէս և Լինոս և Կղօդիա՝ և եղբարք ամենեքեան.
22 *Տէր Յիսուս Քրիստոս ընդ ոգւոյդ քում. Շնորհք ընդ քեզ. ամէն.

Առ տիմոթէոս երկրորդ թուղթ. որ էր եփեսացւոց
եկեղեցւոյն եպիսկոպոս առաջին ձեռնադրեալ.
գրեցաւ 'ի հռովմէ՝ յորժամ երկրորդ անգամ եկաց
յատենին պօղոս առաջի ներոնի կայսեր հռովմայ։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ՏԻՏՈՍ

Գլ. Ա.

կԻԲ ՊՕՂՈՍ ծառայ և առաքեալ յ̃ի ք̃ի, 1
ըստ հաւատոց ընտրելոցն ա̃յ, և 'ի
գիտութիւն ճշմարտութեն՝ որ ընդ ա̃ծպաշտութեն
է. *յուսով կենացն յաւիտենից, զոր 2
խոստացաւ անսուտն ա̃ծ յառաջ քան զժամանակս
յաւիտենից. *բայց յայտնեաց իւրովք 3
ժամանակօք զբանն իւր քարոզութ̃բ, որոյ եղէ
ես հաւատարիմ ըստ հրամանի փրկչին մերոյ
ա̃յ. *Տիտոսի որդւոյ սիրելւոյ ըստ հասարակաց 4
հաւատոց, շնորհք՝ և խաղաղութիւն
յա̃յ հօրէ՝ և 'ի տ̃նէ յ̃է ք̃է փրկչէ մերմէ. *Վ̃ն 5
այնորիկ իսկ թողի զքեզ 'ի կրետէ, զի որ ինչ
միանգամ անպակաս իցէ՝ ուղղեսցես. և կացուցես
ըստ քաղաքաց երիցունս՝ ո̃պ և ես քեզ
պատուիրեցի. *Եթէ ոք անարատ իցէ, միոյ 6

կնոջ այր, որդեակս ունիցի հաւատացեալս՝
և ոչ յամբաստանութիւն անառակութեան,
7 կամ անհնազանդս. *Զի պարտ է եպ՟սին անարատ
լինել՝ ոպ՟ և այ՟ տնտեսի. մի՛ յանդուգն,
մի՛ բարկացող, մի՛ թշնամանող, մի՛
8 հարկանող, մի՛ զօշաքաղ. *այլ՝ հիւրասէր,
բարեսէր, ցած, արդար, սուրբ, ժուժկալ.
9 *վերակացու լինել հաւատարիմ բանին վարդապետութե,
զի կարող իցէ և մխիթարել
ողջմտութբ՟ վարդապետութեն, և զհակառակորդսն
10 կշտամբել. *Քանզի բազումք են
անհնազանդք՝ զրախօսք և մտախաբք. մանաւանդ
11 որ ՚ի թլփատութէ անտի են. *զորս
պարտ է ըմբերանել. որք զամ՟ տունս կործանեն
և ուսուցանեն զոր չէ արժան՝ վս՟ զօշաքաղութե.
12 *Ասաց ոմն ՚ի նց՟է՝ իւրեանց իսկ մարգարէ, ԴԾ
կրետացիք հանապազասուտք՝ չարաճճիք դատարկապորտք.
13 *Եւ ստոյգ է վկայութիւնս
այս. վս՟ որոյ կշտամբեսցես զն՟ս խստագոյնս,
14 զի առողջասցին ՚ի հաւատս. *և մի՛ հայեսցին
՚ի հրէական առասպելս, և ՚ի պատուէրս
15 մարդկան զառածելոցն ՚ի ճշմարտութէ. *Ամենայն
ինչ սբ՟ է սրբոց, բայց պղծոյն և անհաւատից՝
ոչ ինչ է սբ՟. այլ պղծեալ են միտք
16 և խորհուրդք նց՟. *Խոստանան գիտել զա՟ծ. և
գործովք իւրեանց ուրանան. պիղծք և անհաւանք՝
և յա՟մ գործս բարեաց անպիտանք.

ԳԼ. Բ.

Այլ դու խօսեաց որ ինչ վայել է ողջամիտ 1
վարդապետութեդ. *Ծերոց զգաստ լինել, 2
պարկեշտս՝ ցածունս, ողջամիտս 'ի հաւատս
'ի սէր 'ի համբերութն 'ի ժուժկալութն.
*Պառաւանց նոյնպէս 'ի զգաստութն՝ 'ի ս̃ր 3
վայելչութիւն, մի բանսարկուս՝ մի գինեմոլս,
այլ բարեխրատս. * զի զգաստացուցանիցեն 4
զմանկամարդսն՝ այրասէրս լինել՝ որդեսէրս,
*ցածունս սուրբս տնարարս բարեգործս, հընազանդս 5
իւրեանց արանց. զի մի բանն ա̃յ և
վարդապետութիւնն հայհոյեսցի. *Զերիտասարդս 6
նոյնպէս աղաչեսջիր՝ ցածունս լինել.
*ամենեցուն զանձն օրինակ կացուցանել՝ գործոց 7
բարութն, վարդապետութ̃բ զանեղծութիւն
ունել, զսրբութիւն, զպարկեշտութիւն,
*զբանն ողջմտութն, անպարսաւ լինել. զի որ 8
հակառակորդն իցէ՝ յամօթ լիցի, և մի ինչ
ունիցի ասել զմէնջ չարութիւն.*Ծառայից՝ իւրեանց 9
տերանց հնազանդ լինել՝ և հաճոյս յա̃մի.
մի հակառակս, *մի հատուս. այլ զա̃մ հաւատս 10
ցուցանել բարութ̃բ, զի վարդապետութիւն
Վ.Զ. փրկչին մերոյ ա̃յ զարդարեսցին յա̃մի.

*Քանզի երևեցաւ շնորհն ա̃յ փրկիչ ա̃մ 11
մարդկան. *որ խրատէ զմեզ՝ զի ուրացուք 12
զամբարշտութիւն և զաշխարհական ցանկու-

թիւնս․ զգաստութբ՟ և արդարուբ՟ և ա՟ծպաշ-
13 տութբ՟ կեցցուք յաշխարհի․ *և ակն կալցուք
երանելի յուսոյն՝ և յայտնութե փառաց մեծին
14 ա՟յ՝ և փրկչին մերոյ յ՟սի ք՟սի․ *որ ետ զանձն վ՟ն
մեր, զի փրկեսցէ զմեզ յա՟մ անօրէնութէ, և
սրբեսցէ իւր ժողովուրդ սեպհական՝ նախան-
15 ձաւոր գործոց բարութե․ *Զայդ խօսեաց՝
և մխիթարեա և յանդիմանեա ամենայն սաս-
տիւք․ զի մի՛ ոք լիցէ որ զքեզ արհամարհիցէ․

ԳԼ․ Գ․

1 Եւ յուշ արասջիր նց՟, իշխանութենց և ջե
պետութենց հնազանդ լինել՝ և հպատակ կալ․
և ա՟մ գործոց բարութե պատրաստ գտանել․
2 *մի՛ զոք հայհոյել՝ անկռիւս լինել՝ հեզս, զա՟մ
3 ցածութիւն առ ա՟մ մարդիկ ցուցանել․ *Զի
էաք երբեմն և մեք անմիտք անհաւանք՝
մոլորեալք՝ ծառայէաք ցանկութենց և պէս-
պէս անառակութենց․ չարութբ՟՝ և նախանձու
շրջէաք, ատեցեալք՝ և զմիմեանս ատէաք․
4 *Իսկ յորժամ քաղցրութիւն և մարդասի-
5 րութիւն փրկչին մերոյ ա՟յ յայտնեցաւ, *ոչ
՚ի գործոց արդարութե՝ զոր արարաք մեք․
այլ ըստ իւրում ողորմութենն՝ ապրեցոյց զմեզ
՚ի ձեռն աւազանին միւսանգամ ծննդեանն,
6 և նորոգութբ՟ հոգւոյն ս՟րբ․ *զոր եհեղ ՚ի
մեզ առատուբ՟, ՚ի ձեռն յ՟սի ք՟սի փրկչին մե-

րոյ. *զի արդարացեալք շնորհօքն՝ եղիցուք 7
ժառանգաւորք յուսով կենացն յաւիտենականաց.
*Հաւատարիմ է բանս, և 'ի սոյն կամիմ 8
զքեզ հաստատուն լինել, զի փոյթ արասցեն
գործոց բարեաց վերակացու լինել
հաւատացեալքն յա̃ծ, զի այն է բարի և օգտակար
մարդկան. *Այլ զյիմարութեն խնդիրս՝ 9
և զտոհմաթիւս, և զհեռ՝ և զօրինական
կռիւսն 'ի բաց մերժեսջիր. զի անօգուտք
են՝ և սնոտիք. *Յառնէ հերձուածողէ՝ յետ 10
միանգամ և երկիցս խրատելոյ՝ հրաժարեսջիր.
*գիտասջիր՝ զի թիւրեալ է այնպիսին, և մեղանչէ՝ 11
անձամբ զանձն դատապարտեալ.
*Այլ յորժամ յղեցից առ քեզ զարտեմայ 12
կամ զտիւքիկոս, փութասջիր գալ առ իս
'ի Նիկոպօլիս, զի անդ եդի 'ի մտի ձմերել.
*Եւ զզենոն զօրինական դպիր՝ և զապօղոս՝ 13
փութով արձակեսջիր, զի մի՛ ինչ պակասիցէ
նոցա. *Ուսցին և մերքն ևս՝ բարեաց գործոց 14
վերակացու լինել 'ի պէտս կարեւորս.
զի մի՛ անպտուղք լինիցին. *Ողջոյն տան 15
քեզ՝ որ ընդ իս են ամենեքին. Ողջոյն տուր
սիրելեաց մերոց հաւատովք. Շնորհք ընդ
ձեզ ամենեսին. ամէն.

Առ Տիտոս կրետացւոց եկեղեցւոյն առաջին
ձեռնադրեալ եպիսկոպոս, գրեցաւ 'ի Նիկոպօլսէ
մակեդոնացւոց։

ԹՈՒՂԹ
ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

Գլ· Ա·

1 ՊՕՂՈՍ կապեալ յիսուսի քրիստոսի,
և տիմոթէոս եղբայր․ փիլիմոնի սիրելւոյ՝
2 և գործակցի մերոյ, *և ապփեայ քեռ,
և արքիպպեայ զինուորակցի մերոյ՝ և առ տընին
3 եկեղեցւոյդ․ *Շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն
յաստուծոյ հօրէ մերմէ՝ և 'ի
4 տնէ յիսուսէ քրիստոսէ․ *Գոհանամ զաստուծոյ
իմոյ յամենայն ժամ, յիշատակել
5 յաղօթս իմ վասն քո, *իբրև լսեմ զքո հաւատսն
և զսէր, զոր ունիս առ տէր յիսուս՝
6 և առ ամենայն սուրբս․ *Զի հաղորդութիւն
հաւատոցն քոյ ազդու լինիցի՝ գիտութեամբ
ամենայն բարութեան, որ 'ի ձեզ է 'ի քրիստոս
7 յիսուս․ *Խնդութիւն յոյժ ընկալայ՝ և

մխիթարութիւն 'ի վերայ սիրոյն քո. զի
գութք սրբոց քեւ հանգուցեալ են եղբայր.
** Վասն որոյ բազում համարձակութիւն ունիմ* 8
'ի քրիստոս հրաման տալ քեզ զարժանն.
** Վասն սիրոյ՝ մանաւանդ թէ աղաչեմ իսկ* 9
այնպիսի լինել՝ որպէս և պօղոս ծերացեալ,
*արդ և կապեալ եւ յիսուսի քրիստոսի. * Աղաչեմ* 10
զքեզ վասն որդւոյ իմոյ՝ զոր ծնայ 'ի
*կապանս իմ, զոնեսիմոս. * որ երբեմն անպիտան* 11
էր քեզ. բայց արդ քեզ և ինձ պիտանի.
** զոր յղեցի առ քեզ. Եւ դու զդա ընկալջիր՝* 12
*այսինքն է՝ զիմ աղիս. * Զոր կամէի* 13
առ իս արգելուլ, զի ընդ քո ունիցի ինձ
*սպաս 'ի կապանս աւետարանին. * Բայց առանց* 14
քո կամաց ոչինչ կամեցայ առնել, զի
մի բարիքդ քո 'ի հարկէ լինիցին՝ այլ կամաւ.
** Եւ թերեւս վասն այնորիկ մեկնեցաւ առ* 15
ժամանակ մի, զի յաւիտեան ունիցիս զդա.
** մի եւ իբրեւ զծառայ՝ այլ 'ի վեր քան զծառայ,* 16
իբրեւ զեղբայր սիրելի. եթէ ինձ այսպէս
ո՜րչափ եւս առաւել քեզ մարմնով և
*տերամբ. * Եթէ զիս քեզ հաղորդ համարիցիս,* 17
*ընկալ զդա իբրեւ զիս. * Եւ եթէ* 18
յանցուցեալ ինչ իցէ՝ կամ պարտիցի, զայն
*ինձ համարեաց. * Ես պօղոս գրեցի իմով* 19
ձեռամբ. ես հատուցից, զի մի ասիցեմ քեզ՝
*թէ և դու զանձն քո ինձ պարտիս. * Այո* 20
եղբայր՝ ես քո փոխանակ եղէց 'ի տէր. հան-

21 գո զաղիս իմ 'ի քրիստոս . * Յուսացեալ 'ի
հնազանդութիւնդ քո՝ գրեցի առ քեզ . քանզի
գիտեմ թէ առաւել ևս քան զոր ասեմդ՝
22 առնիցես . * Միանգամայն և պատրաստեսջիր
ինձ վանս . քանզի յուսամ եթէ աղօթիւք
23 ձերովք շնորհեցայց ձեզ . * Ողջոյն տայ ձեզ
եպափրաս գերեկից իմ 'ի քրիստոս յիսուս .
24 * և մարկոս , և արիստարքոս , և դեմաս , և
25 ղուկաս՝ գործակիցք իմ . * Շնորհք տեառն
մերոյ յիսուսի քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում .
ամէն .

Առ փիլիմոն և առ ապփիա տեարս ոնեսիմոսի . և առ արքիպպոս սարկաւագ կողոսացւոց եկեղեցւոյն , գրեցաւ 'ի հռովմէ 'ի ձեռն ոնեսիմոսի ծառայի :

ԹՈՒՂԹ

ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ

ԳԼ. Ա.

ԱԿ Բազում մասամբք և բազում օրինակօք 1
կանխաւ խօսեցաւ ած՟ ընդ հարսն
մեր մարգարէիւք. * 'Ի վախճան աւուրցս այսոցիկ 2
խօսեցաւ ընդ մեզ որդւովն՝ զոր եդ
ժառանգ ամի՟. որով և զյաւիտեանսն արար.
* Որ է լոյս փառաց՝ և նկարագիր էուե՟ նորա. 3
որ կրէ զամ՟ բանիւ զօրուե՟ իւրոյ. սրբութիւն
մեղաց մերոց արարեալ՝ նստաւ ընդ աջմէ մեծուե՟ն
'ի բարձունս. * Այնչափ առաւել եղեալ 4
քան զհրեշտակս, որչափ լաւ ևս քան զնոսա
անուն ժառանգեաց. * Քանզի ո՞ր երբէք 5
ասաց 'ի հրեշտակաց, որդի իմ ես դու՝
ես այսօր ծնայ զքեզ. և դարձեալ՝ թէ ես եղէց
նմա 'ի հայր, և նա եղիցի ինձ յորդի.

6 *Այլ յորժամ միւսանգամ մուծցէ զանդրանիկն
յաշխարհ, ասէ. Երկիրպագցեն նմա ա՟մ
7 հրեշտակք ա՟յ։ *Այլ առ հրեշտակսն ասէ.
ո՛ արար զհրեշտակս իւր հոգիս, և զպաշտօնեայս
8 իւր բոց հրոյ։ *Իսկ ցՈրդին ասէ. Աթոռ
քո ա՟ծ յաւիտեանս յաւիտենից. գաւազան
9 ուղղութեան` գաւազան արքայութեան քո։ *Սիրեցեր
զարդարութիւն և ատեցեր զանօրէնութիւն.
վ՟ն այսորիկ օծ զքեզ ա՟ծ, ա՟ծ քո իւղով ուրախութեան`
10 առաւել քան զընկերս քո։ *Եւ դու
տէր 'ի սկզբանէ զերկիր հաստատեցեր. և
11 գործք ձեռաց քոց երկինք են։ *Նոքա կորնչին`
և դու կաս և մնաս. ա՟մքեան իբրև
12 զձորձս մաշեսցին, *և իբրև զվերարկուս.
գալարեսցես զն՟ա իբրև զհանդերձ, և գալարեսցին.
բայց դու նոյն իսկ ես` և ամք քո ոչ
13 պակասեն։ *Յո՞ երբէք ասաց 'ի հրեշտակաց.
Նիստ ընդ աջմէ իմմէ` մինչև եդից զթշնամիս
14 քո պատուանդան ոտից քոց։ *Ո՞չ ապաքէն
ամենեքեան հոգիք են հարկաւորք` որ առաքին
'ի սպասաւորութիւն վասն այնոցիկ,
որ ժառանգելոց են զփրկութիւն.

ԳԼ. Բ.

1 Վասն այնորիկ պարտ է մեզ առաւել ևս ԵԴ
ունկնդիր լինել բանիցն ասացելոց` զի մի՛
2 երբէք նուաղեսցուք։ *Զի եթէ որ 'ի ձեռն

հրեշտակաց խօսեցաւ բանն՝ հաստատուն եղեւ, և ա̃մ յանցաւորութիւն և անհնազանդութիւն ընկալաւ զպատիժ պատուհասի.
*Մեք զիա՞րդ ապրեսցուք հեղգացեալք յայնպիսի փրկութէ̃, որ սկիզբն առ խօսելոյ ՚ի տ̃նէ. և ՚ի ձեռն այնոցիկ որ լուանն՝ ՚ի մեզ 3
հաստատեցաւ, *վկայեալ յա̃յ նշանօք և արուեստիւք և պէսպէս զօրութ̃ք, և մասամբք 4
հոգւոյն սրբոյ ըստ իւրոյ կամաց. *Զի ոչ եթէ հրեշտակաց հնազանդեցոյց զհանդերձեալ 5
աշխարհն, վ̃ս որոյ մեքս խօսիմք. *Վկայեաց 6
ոք ուրեք՝ և ասէ. զի՞նչ է մարդ՝ եթէ յիշեսցես զնա, կամ որդի մարդոյ՝ թէ այց արասցես նմա. *Փոքր մի խոնարհ արարեր զնա 7
քան զհրեշտակս, փառօք և պատուով պսակեցեր զնա՝ և կացուցեր զնա ՚ի վ̃ր ձեռակերտաց քոց. *Զա̃մ ինչ հնազանդ արարեր ՚ի 8
ներքոյ ոտից նր̃. Արդ՝ ՚ի հնազանդեցուցանելն զա̃մ, ոչինչ եթող անհնազանդ ՚ի նմանէ. բայց այժմ ոչ ևս տեսանեմք հնազանդեալ
նմա զա̃մ. *Այլ զփոքր մի խոնարհեալ քան 9
զհրեշտակս տեսանեմք զյ̃ս վ̃ս չարչարանաց մահուն. փառօք և պատուով պսակեալ. զի շնորհօքն ա̃յ վ̃ս ամենեցուն զմահ ճաշակեսցէ.
*Զի վայելէր իսկ նմա, վ̃ս որոյ ա̃մ՝ և որով ա̃մ, 10
բազում որդիս ՚ի փառս ածել՝ և զառաջնորդ
Վ.Զ փրկութեան նոցա չարչարանօք կատարել.
*Զի որ սրբէն և որ սրբին՝ ՚ի միոջէ են 11

ամենեքին. վ՟ն որոյ ոչ ամօթ համարի եղբարս
12 անուանել զն՟ս, և ասէ. *Պատմեցից զանուն
քո եղբարց իմոց. 'ի մէջ եկեղեցւոյ օրհնե-
13 ցից զքեզ. *Եւ դարձեալ՝ թէ ես եղէց յու-
սացեալ 'ի նա. և դարձեալ. ահաւասիկ ես
14 և մանկունք իմ, զոր ետ ինձ ա՟ծ. *Արդ՝ ո-
րովհետև մանկունք հաղորդեցին արեան և
մարմնոյ, և ինքն իսկ մերձաւորութ՟բ կցորդ-
եղև նոցունց. զի մահուն իւրով խափանեսցէ
զայն, որ զիշխանութիւն մահուն ունէր, այ-
15 սինքն է՝ զսատանայ. *և ապրեցուսցէ զայ-
նոսիկ, որ մահուն երկիւղիւ հանապազ կէին
16 վտարանդեալք 'ի ծառայութիւն. *Քանզի
ոչ երբէք զհրեշտակաց բուռն հարկանէ.
այլ զզաւակէն աբրահամու բուռն հարկանէ.
17 *Ուստի պարտ իսկ էր ըստ ա՟մի եղբարց
նմանել. զի ողորմած լինիցի, և հաւատարիմ
քահանայապետ յա՟ծակոյս կողմանէ անտի,
18 առ 'ի քաւելոյ զմեղս ժողովրդեանն. *Զի
որով ինքն չարչարեցաւ զփորձ առեալ, կա-
րող է և փորձանաւորացն օգնական լինել.

ԳԼ. Գ.

1 Ուստի եղբարք սր՟ք՝ երկնաւոր կոչմանն
բաժանորդք, նայեցարուք ընդ առաքեալն և
ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ ընդ
2 յ՟ն ք՟ն. *որ հաւատարիմ է արարչին իւրոյ՝

ո՟պ և մովսէս յա՟մ 'ի տան ն՟ր · *Զի առաւել 3
ես փառաց քան զմովսէս արժանի եղև · որչափ
առաւել պատիւ ունիցի քան զտունն՝ տանն
առնելի · *Զի ա՟մ տուն կազմի, յումէ կազմի · 4
իսկ որ զա՟մն արար, ա՟ծ է · *Մովսէս հա- 5
ւատարիմ է յա՟մ տան ն՟ր իբրև զծառայ՝ առ 'ի
վկայութե՟ բանիցն ասացելոց · *Այլ ք՟ս իբրև 6
որդի 'ի վ՟ր տան իւրոյ · որոյ տունն մեք իսկ
եմք · միայն թէ զհամարձակութիւն և զպար-
ծանս յուսոյն մինչև 'ի վախճան հաստատուն
ունիցիմք · *Վ՟ս որոյ այսպէս ասէ հոգին ս՟բ · 7
այսօր եթէ ձայնի ն՟ր լուիցէք, *մի՛ խստացու- 8
ցանէք զսիրտս ձեր իբրև 'ի դառնութենն յա-
ւուրն փորձութե՟ յանապատի · *ուր փորձեցին 9
զիս հարքն ձեր, քննեցին զիս՝ և տեսին զգ-
գործս իմ զքառասուն ամ · *վ՟ս որոյ տաղտ- 10
կացայ ազգաւն այնուիկ, և ասացի · միշտ մո-
լորեալ են սրտիւք · և ն՟ք ոչ ծանեան զճա-
նապարհս իմ · *ո՟պ երդուայ 'ի բարկութեան 11
իմում՝ թէ մտցեն 'ի հանգիստ իմ ·

ԵՁ *Տեսէք եղբարք՝ գուցէ երբէք լինիցի 12
յումեք 'ի ձէնջ սիրտ չար անհաւատութե՟՝ ա-
պստամբ լինել յա՟յ կենդանւոյ · *Այլ մխի- 13
թարեցէք զմիմեանս զօրհանապազ՝ մինչդեռ
այսօրդ առաջի կայ · զի մի՛ ոք խստասցի 'ի
ձէնջ խաբէութ՟ մեղաց · *Քանզի բաժանորդք 14
եղեաք ք՟սի · միայն թէ զսկիզբն հաստատութենն
մինչև ցվախճան պինդ կալցուք · *Յասելն, 15

այսօր եթէ ձայնի նորա լուիցէք՝ մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր իբրեւ 'ի դառնութե̃ն ·
16 *Քանզի ոմանք լուան՝ և դառնացուցին, այլ ոչ ամենեքեան՝ որ ելեալ էին յեգիպտոսէ 'ի
17 ձեռն մովսեսի · *Յումմէ՞ տաղտկացաւ զքառասուն ամն · ո՞չ ապաքէն 'ի յանցուցելոցն ·
18 որոց ոսկերքն անկան յանապատի անդ · *Ո՞ւմ երդուաւ չմտանել 'ի հանգիստն իւր, եթէ
19 ոչ անհաւատիցն · *Եւ տեսանեմք՝ զի ոչ կարացին մտանել վասն անհաւատութեանն ·

Գ·Լ· Դ·

1 Երկիցուք այսուհետեւ, գուցէ 'ի թողուլ զաւետիսն՝ 'ի մտանելոյ 'ի հանգիստն նր̃՝ գը-
2 տանիցի ոք 'ի ձէնջ նուազեալ · *Քանզի եմք աւետարանեալք ոպ̃ և նոքայն · այլ նց̃ ոչինչ օգնեաց լուր բանին, չամ̃քելոցն 'ի հնազանդ-
3 ութիւն հաւատոյ · *Այլ մեք մտանեմք 'ի հանգիստն, որք հաւատացաքս · ոպ̃ և ասացն՝ թէ ոպ̃ երդուայ 'ի բարկութե̃ն իմում, թէ մտցեն 'ի հանգիստ իմ · թէպէտ և արդիւնքն 'ի սկզբանէ աշխարհի լեալ էին ·
4 *Քանզի ասէ ուրեք վս̃ աւուրն եօթներորդի այսպ̃ · և հանգեաւ ա̃ծ յաւուրն եօթներորդի
5 յամ̃ գործոց իւրոց · *Եւ աստ դարձեալ ա-
6 սէ՝ թէ մտցեն 'ի հանգիստ իմ · *Եւ արդ՝ քանզի արգելան ոմանք մտանել 'ի նա, և

որք յառաջագոյն աւետարանեալն էին՝ չմտին
վ՟ն անհաւատութ՟են. *Դարձեալ այլ օր սահմանէ՝ 7
զայսօրն ՚ի դաւիթ, և ասէ՝ յետ այնչափ
ժամանակաց, ո՟պ յառաջագոյնն ասաց,
այսօր եթէ ձայնի ն՟ր լուիջէք՝ մի խստացուցանէք
զսիրտս ձեր. *Զի եթէ զն՟ս յեսուայ 8
հանգուցեալ էր, ապա վ՟ն այլոյ աւուր ոչ խօսէր
յետ այնորիկ. *Արդ ուրեմն նուազեալ 9
է շաբաթումն ժողովրդեանն ա՟յ. *Զի որ եմուտ 10
՚ի հանգիստն ն՟ր, և նա հանգեաւ յիւրոց
Վ.Ջ. գործոց անտի. ո՟պ և ա՟ծ յիւրայոցն.
*Փութասցուք այսուհետև մտանել յայն 11
հանգիստ. զի մի ոք ընդ նովին օրինակաւ
անհաւատութ՟են անկանիցի. *Քանզի կենդանի 12
է բանն ա՟յ՝ և ազդող՝ և հատու քան զա՟մ սուր
երկսայրի, և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ՝
և ոգւոյ՝ և յօդից՝ և ուղղոց. և քննիչ է մտաց՝
և խորհրդոց սրտից. *Եւ չիք արարած աներեւոյթ 13
յերեսաց ն՟ր. այլ ա՟մ ինչ մերկապարանոց
կայ առաջի աչաց ն՟ր՝ զորմէ մեր բանքս
են. *Ունիմք այսուհետև քահանայապետ մեծ 14
անցեալ ընդ երկինս, զյ՟ս որդին ա՟յ. պինդ
կալցուք զխոստովանութիւնն. *Քանզի ոչ եթէ 15
ունիմք քահանայապետ՝ որ չիցէ կարող
չարչարակից լինել տկարութ՟ե մերոյ. այլ փորձ՟
է ամենայնիւ ըստ նմանութ՟ե առանց մեղաց.
Զ.Կ *Մատիցուք այսուհետև համարձակութեամբ 16
առաջի աթոռոյ շնորհացն նորա. զի

ընկալցուք ողորմութիւն՝ և գտցուք շնորհս 'ի դէպ ժամանակի օգնականութեան ․

ԳԼ․ Ե․

1 Զի ա̃մ քահանայապետ 'ի մարդկանէ առեալ՝ վասն մարդկան կայ յա̃ծակոյս կողմն անդր ․ զի մատուսցէ պատարագս և զոհս վ̃
2 մեղաց ․ *Զափով չարչարակից կարող է լինել տգիտաց և մոլորելոց ․ քանզի և ինքն իսկ
3 տկարութե̃բ զգածեալ է ․ *Վ̃ այնորիկ հարկ է ո̃պ վ̃ ժողովրդեանն , նոյնպէս և ընդ անձին մատուցանել պատարագս վ̃ մեղաց ․
4 *Եւ ոչ եթէ անձամբ ոք առնու պատիւ ․
5 այլ կոչեցեալն յա̃յ՝ ո̃պ և ահարոն ․ *Նոյն̃պ և ք̃ս ոչ եթէ անձին ինչ շուք եդ լինել քահանայապետ ․ այլ որ խօսեցաւն առ նա՝ թէ
6 որդի իմ ես դու՝ ես այսօր ծնայ զքեզ․ *Ո̃պ և 'ի միւսումն ասէ ․ դու ես քահանայ յա-
7 ւիտեան ըստ կարգին մելքիսեդեկի ․ *Որ յաւուրս մարմնոյ իւրոյ՝ աղօթս և պաղատանս առ այն , որ կարողն էր ապրեցուցանել զնա ('ի մահուանէ) , ուժգին գոչմամբ և արտասուօք մատուցանէր ․ և լսելի լինէր առ
8 լաւութեանն ․ *Թէպէտ և որդի է՝ ուսաւ 'ի
9 չարչարանաց անտի զհնազանդութիւն․ *Եւ իբրև կատարեցաւ՝ եղև ա̃մ հնազանդելոց իւրոց պատճառ փրկութեանն յաւիտենից ․

*և անուանեցաւ յաստուծոյ քահանայապետ 10
յաւիտենից ըստ կարգին մելքիսեդեկի ․
ՋԴ *Վասն որոյ բազումք են մեզ բանք , և 11
դժուարապատում 'ի մեկնել ․ քանզի խօթամիտք
եղերուք լսելեօք ․ *Փոխանակ զի պարտ 12
էր ձեզ լինել վարդապետս վ̃ ժամանակին ․
դարձեալ պիտոյ է ձեզ ուսանել՝ թէ զի՞նչ են
նշանագիրք 'ի սկզբան բանիցն ա̃յ ․ և եղերուք
կարօտք կաթին՝ և ոչ հաստատուն կերակրոյ ․
*Զի ա̃մ որ կաթնկեր է՝ տգէտ է բանին արդարութե , 13
քանզի տղայ է ․ *Այլ կատարելոց 14
է հաստատուն կերակուր ․ որոց վ̃ 'ի չափն
հասանելոյ՝ ճաշակելիքն կիրթ են ընտրութեան
բարւոյ և չարի ․

ԳԼ․ Զ․

Վասն որոյ թողեալ զբան սկզբանն ք̃ի, 1
'ի կատարումն եկեսցուք ․ մի՛ միւսանգամ
արկանել հիմն ապաշխարութեան՝ 'ի մեռելոյ
գործոց անտի , և հաւատոյն որ յա̃ծ ,
*և մկրտութեանց վարդապետութե , և ձեռնադրութեան
ձեռաց , և յարութե մեռելոց , և
դատաստանին յաւիտենից ․ *Եւ արդ՝ արասցուք
զայն , եթէ ա̃ծ հրամայեսցէ ․ *Քանզի
անհնար է միանգամ մկրտելոցն , որ ճաշակեցին
յերկնաւոր պարգևացն , և հաղորդք եղեն
հոգւոյն սրբոյ , *և զգեղեցիկ բանին ա̃յ ճա-

չակս ճաշակեցին, և զզօրութիւնս հանդերձե֊
6 լոյ աշխարհին, *և կործանեցին, միւսանգամ
նորոգել յապաշխարութիւն. և վերստին ՚ի
խաչ հանել անձանց զորդին ա̃յ, և դարձեալ
7 խայտառակել. *Քանզի երկիր՝ որ ըմպիցէ
զանձրև բազում անգամ եկեալ ՚ի վր̃ նորա,
և ծնանիցի արդիւնս շահեկանս նց̃՝ վասն որոց
8 գործեցին, ընդունի զօրհնութիւն յա̃յ. *Իսկ
որ բերէ զփուշ և զտատասկ, անպիտան է՝
և մերձ յանէծս, և վախճան նորա յայրումն.
9 *Բայց հաստատեալ եմ վս̃ ձեր սիրելիք՝ ԶԶ
՚ի լաւ անդր, և որ լին է փրկութ̃. զի թէ֊
10 պէտ և այսպէս խօսիմք. *ոչ եթէ անիրաւ
ինչ է ա̃յ՝ մոռանալ զգործս ձեր և զսէրն՝
զոր ցուցէք յանուն նր̃. զի պաշտէիք զս̃բսն՝
11 և պաշտէք. *Եւ մեք ըղձանամք՝ զի իւրա֊
քանչիւր ոք ՚ի ձէնջ զնոյն փոյթ ցուցանիցէ
՚ի հաստատութիւն յուսոյն՝ մինչև ցվախճան.
12 *զի մի՛ հիւանդամիտք լինիցիք. Նմանողք
եղերուք այնոցիկ՝ որ հաւատովքն և երկայն֊
13 մտութ̃ ժառանգեցին զաւետիսն. *Զի աբ֊
րահամու խոստացեալ զաւետիսն ա̃յ, քանզի
յայլ ոք ՚ի մեծ ոչ գոյր երդնուլ. *յանձն իւր
14 երդուաւ, և ասէ. այո՛, օրհնելով օրհնեցից
զքեզ, և բազմացուցանելով բազմացուցից ըզ֊
15 քեզ. *Եւ այնպէս երկայնամիտ եղեալ՝ եհաս
16 աւետեացն. *Ապաքէն մարդիկ՝ որ ինչ ՚ի
վեր է քան զինքեանս՝ յայն երդնուն. և ա̃մ

հակառակութեն նց՟ վճիռ առ 'ի հաստատութիւն, երդումն է. *Որով առաւել ևս կամեցեալ այ՟՝ ցուցանել ժառանգաւորաց աւետեացն զհաստատութիւն խորհրդոյն իւրոյ, 17
միջնորդեաց երդմամբ. *Զի երկու անփոփոխելի իրօքն՝ որովք անհնարին իցէ ստել այ՟, հաստատուն մխիթարութիւն ունիցիմք. որք ապաստան եղեաք բուռն հարկանել զհանդերձեալ յուսոյն. 18
*զոր իբրև զխարիսխ հաստատուն և անշարժ ունիցիմք անձանց մերոց, որ և մտանիցէ 'ի ներքին կողմն վարագուրին, 19
*ուր կարապետն մեր յիսուս եմուտ վս՟ մեր, ըստ կարգին մելքիսեդեկի՝ եղև քահանայապետ յաւիտենից. 20

Գլ. Է.

1 Քանզի այս մելքիսեդեկ՝ թագաւոր էր սաղիմայ. քահանայ այ՟ բարձրելոյ, որ ել ընդ առաջ աբրահամու՝ յորժամ դարձեալ գայր 'ի կոտորածէ թագաւորացն՝ և օրհնեաց զնա.
2 *որում և տասանորդս յամ՟է ետ աբրահամ. Նախ թարգմանի թագաւոր արդարութեն, ապա թագաւոր սաղիմայ՝ որ է թագաւոր խաղաղութեն.
3 *անհայր՝ անմայր՝ չհամարեալ յազգս, որոյ ոչ սկիզբն աւուրց և ոչ կատարած կենաց. նմանեալ որդւոյ այ՟՝ կայ մնայ քահանայ մշտնջենաւոր.
4 *Արդ՝ տեսէք որպիսի ոք էր

սա, որում և աբրահամ տասանորդս ետ յաւարէ
5 անտի՝ նահապետն։ *Եւ որք յորդւոցն
ղեւեայ զքահանայութիւնն առնուն, պատուէր
ունին տասանորդել զժողովուրդն ըստ օրինացն.
այսինքն է՝ զեղբարս իւրեանց, թէպէտ
և ելեալ իցեն յերանացն աբրահամու։
6 *Իսկ չհամարեալն յազգս 'ի նոցանէ՝ տասանորդեաց
զաբրահամ. և զնա՝ որոյ զաւետիսն
7 ընկալեալ էր, օրհնեաց։ *Զի առանց ա͞մ
հակառակութ͞ե, նուաղն 'ի լաւէ անտի օրհնեսցի։
8 *Եւ աստ մարդք մահկանացուք
տասանորդս առնուն. բայց անդ վկայեցաւ՝
թէ կենդանի է։ և ո͞չ բանից կարգ է ասել.
9 *թէ աբրահամաւ և ղեւի իսկ՝ որ զտասանորդսն
առնոյր, տասանորդեցաւ։ *Զի դեռ
10 եւս յերանս հօր իւրոյ էր՝ յորժամ ընդ առաջ
եղեւ նմա մելքիսեդեկ։
11 *Իսկ արդ՝ եթէ կատարումն 'ի ձեռն ԷԿ
ղեւտացւոց քահանայութ͞են էր, քանզի ժողովուրդն
յայն օրէնս գրեցաւ. զի՞նչ պիտոյ էր
ըստ կարգին մելքիսեդեկի այլում քահանայի
յառնել, և ոչ ասել՝ թէ ըստ կարգին ահարոնի։
12 *Այլ 'ի փոփոխել քահանայութ͞են,
13 հարկ էր և օրինացն փոփոխումն լինել. *Զի
զորմէ այսպէսն ասի՝ յայլմէ ազգէ կալաւ հաղորդութիւն,
յորմէ ոչ ոք երբէք եղեւ հաղորդ
14 սեղանոյն։ *Արդ յայտ իսկ է, թէ
յազգէ յուդայ ծագեաց տէր մեր. յորմէ ազ-

դէ վն̃ քահանայից Մովսէս ինչ ոչ ճառեաց .
*Եւ ևս առաւել յայտ է՝ թէ ըստ նմանութեան 15
Մելքիսեդեկի յառնելոց է այլ քահանայ . *որ 16
ոչ ըստ մարմնաւոր պատուիրանին եղև , այլ
ըստ զօրութեան կենացն անվախճանից . *Քանզի 17
վկայեցաւ , թէ դու ես քահանայ յաւիտեան
ըստ կարգին Մելքիսեդեկի . *Արհամարհութիւն 18
լինէր առաջին պատուիրանին՝ վն̃ նորին
տկարութեան և անշահութեան . *քանզի ոչինչ կատարումն 19
գործեցին օրէնքն , և մուտ աղնուական
յուսոյն՝ որով մերձենամք առ ա̃ծ . *Եւ այնչափ 20
, զի ոչ առանց երդման . զի են ոմանք՝
որ առանց երդման են կացեալ քահանայք .
*Բայց սա երդմամբ 'ի ձեռն այնորիկ՝ որ ասացն 21
'ի նա . երդուաւ տէր՝ և ոչ ևս զղջասցի ,
դու ես քահանայ յաւիտեան . *Եւ այնչափ 22
լաւագոյն ուխտի եղև երաշխաւոր յս̃ . *Եւ 23
բազումք են կացեալ քահանայք՝ վն̃ մահու արգել
լինելոյ 'ի մշտնջենաւորել . *Իսկ սա վն̃ 24
յաւիտեան կալոյ՝ առանց անցանելոյ ունի ըզ
քահանայութիւնն . *Ուստի և կենդանի առնել 25
համօրէն կարող է զմատուցեալս նովաւ առ
ա̃ծ . քանզի միշտ կենդանի է՝ լինել բարեխօս
վասն նոցա .

Ա *Զի այսպիսի իսկ և վայել էր մեզ քահանայապետ 26
, սր̃ անմեղ անարատ՝ զատեալ 'ի մեղաւորաց
, և բարձրացեալ քան զերկինս . *որում 27
ոչ հանապազ հարկ է որպէս այլոց քա֊

հանայապետիցն , նախ վ՟ իւրեանց մեղացն
պատարագս մատուցանել՝ և ապա վ՟ ժողովրդեանն ։
իսկ սա զայն միանգամայն կատարեաց ,
զի զանձն իւր մատոյց պատարագ ։
28 *Օրէնքն զմարդիկ կացուցանեն քահանայապետս
զգածեալս տկարութեամբ ․ իսկ
բանն երդման յետ օրինացն՝ զորդի , որ յաւիտեան
կատարեալ է ։

ԳԼ․ Ը․

1 Եւ բանիցն գլուխ խօսիցս՝ այնպիսի ունիմք
քահանայապետ , որ նստաւ ընդ աջմէ
2 մեծութ՟ն աթոռոյն յերկինս , *սրբութեանցն
պաշտօնեայ՝ և խորանին ճշմարտութ՟ն , զոր
3 տէրն կանգնեաց՝ և ոչ մարդ ։ *Զի ա՟մ քահանայապետ
վ՟ մատուցանելոյ զոհս և զպատարագս
կայ ․ ուստի հարկ է և նմա ունել
4 ինչ՝ զոր մատուցանիցէ ։ *Զի եթէ էր յերկրէ ,
թերևս չէր իսկ քահանայ ․ զի գոյին՝ որ մատուցանէին
5 ըստ օրինացն պատարագ ․ * որք
առակաւ և օրինակաւ պաշտէին երկնաւորացն
․ ո՟պ և հրամայեցաւ մովսեսի՝ յորժամ
գործելոց էր զվրան ժամուն , տեսջիր՝ ասէ ,
արասցես զա՟մ ըստ օրինակին՝ որ ցուցաւ քեզ
6 'ի լերինն ։ *Բայց արդ՝ առատագոյն ևս պաշտաման
եհաս յս՟ , որչափ լաւագոյն ևս ուխտի
է միջնորդ՝ որ յառաւել աւետիսն օրինադ֊

րեցաւ. *Զի եթէ առաջինն անարատ էր, 7
ապա երկրորդին տեղի ոչ խնդրէր. *Նա 8
աւանիկ բամբասէ զնս̃՝ և ասէ. ահաւասիկ
աւուրք եկեսցեն՝ ասէ Տէր, և կատարեցից 'ի
վր̃ տանն Իէլի և 'ի վր̃ տանն Յուդայ ուխտ
նոր. *ոչ ըստ ուխտին՝ զոր եդի ընդ հարս նց̃՝ 9
յաւուր յորում առի 'ի ձեռն՝ հանել զնս̃ յերկրէն
եգիպտացւոց. և զի նք̃ ոչ կացին յուխտին
իմում, և ես անփոյթ արարի զնց̃է, ասէ
Տէր ամենակալ. *Այլ այս է ուխտն՝ զոր եդից 10
տանն Իէլի յետ աւուրցն այնոցիկ՝ ասէ
Տէր. տաց զօրէնս իմ 'ի միտս նց̃՝ և 'ի սիրտս
նց̃ գրեցից զնս̃. և եղէց նց̃ ած̃, և նք̃ եղիցին
ինձ 'ի ժողովուրդ. *Եւ ոչ ևս ուսուցանիցեն 11
իւրաքանչիւր զքաղաքակից իւր և իւրաքանչիւր
զեղբայր իւր, և ասիցեն թէ ծանիր ըզ
Տէր. զի ամենեքին ծանիցեն զիս 'ի փոքրկանց
մինչև 'ի մեծամեծս նց̃. *Զի քաւիչ եղէց 12
անիրաւութեանց նց̃. և զմեղս նց̃՝ և զանօրէնութիւնս
այլ ոչ ևս յիշեցից. *Արդ՝ ասելովն 13
նոր, հնացոյց զառաջինն. և որ հնանայն
Կ.Զ. և ծերանայ՝ մերձ է յապականութիւն.

ԳԼ. Թ.

Ունէր ուրեմն և առաջինն իրաւունս պաշտամանն 1
յայնժամ զաշխարհական սրբութիւնն.
*Զի խորանն առաջին հանդերձեցաւ այսպ̃. 2

յորում աշտանակն և սեղանն և հացն նուիրաց՝
3 որ սրբութիւնն կոչէր · *Եւ յետ երկրորդ վարագուրին
խորանն՝ որ կոչէր սրբութիւն սրբութենց ·
4 *յորում կայր բուրվառն ոսկի , և
արկղն կտակարանաց պատեալ ներքոյ և արտաքոյ
ոսկւով · յորում սափորն ոսկի լի մանանայիւ
, և գաւազանն ահարոնի՝ որ ծաղկեցաւ
5 , և տախտակք կտակարանացն · *և 'ի
վ՟ր ն՟ր քերովբէքն փառաց՝ որ հովանի ունէին
'ի վ՟ր քաւութեն · վ՟ն որոյ ոչ է այժմ ասել
6 մի ըստ միոջէ · *Եւ այն ա՟մ իբրև այնպէս
հանդերձեալ կայր , յառաջին խորանն յա՟մ
ժամ մտանէին քահանայք զպաշտամունսն
7 կատարել · *Բայց յերկրորդն մի անգամ 'ի
տարւոջն քահանայապետն · և զայն ոչ առանց
արեան , զոր մատուցանէր վ՟ն իւր՝ և վ՟ն ժողովրդեանն
8 անգիտութե · *Զայս ցուցեալ
հոգւոյն ս՟րյ՝ մինչչև յայտնեալ էր ճանապարհի
սրբութեցն · քանզի դեռ առաջին խորանն
9 ունէր զհաստատութիւն · *որ է առակ ժամանակին
, որ առաջի կայր · յորում պատարագքն
և զոհքն մատչէին , որք ոչ կարէին ըստ
միտս կատարել զպաշտամունսն · բայց միայն
10 կերակրովք և ըմպելեօք , *և պէսպէս մկրտութ՟ք՝
մարմնոյ արդարութիւնքն · որ մինչև
'ի ժամանակս ուղղութեն 'ի վ՟ր կային ·
11 *Այլ ք՟ս եկեալ քահանայապետ հանդերձելոցն
բարեաց՝ մեծաւն և կատարելովն՝ և

անձեռագործ խորանաւ, այսինքն է՝ որ ոչ
յայսց արարածոց, *և ոչ արեամբ նոխազաց 12
և զուարակաց. այլ իւրով արեամբն եմուտ
միանգամ 'ի սրբութիւնսն՝ յաւիտենական
գտեալ զփրկութիւն։ *Զի եթէ արիւն ցլուցն 13
և նոխազաց՝ և մոխիր երինջոցն ցանեալ՝ զպղծեալսն
սրբէր առ 'ի մարմնոյ սրբութէ. *Որչափ 14
ևս առաւել արիւնն քս՟ի, որ 'ի ձեռն
հոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն անարատ
պատարագ ա՟յ, սրբեսցէ զխիղճ մտաց
ձերոց 'ի մեռելոտի գործոց անտի՝ պաշտել
զա՟ծ կենդանի։ *Եւ վ՟ն այնորիկ նորոյ ուխտիս 15
է միջնորդ. զի յորժամ մահ լինիցի՝ 'ի փրկութիւն
վ՟ն առաջին ուխտին յանցանաց, զաւետիս
առցեն հրաւիրեալքն 'ի ժառանգութիւն
յաւիտենից։ *Քանզի ուր կտակ է, հարկ է 16
զմահ 'ի մէջ բերել զկտակագրին. *Զի կտակ 17
յետ մահու հաստատուն է. ապա թէ ոչ՝
զիա՞րդ իցէ հաստատուն, մինչ կտակագիրն
կենդանի է. *Ուստի և ոչ առաջինն առանց 18
արեան նորոգէր. *Քանզի իբրև պատմեցաւ 19
ա՟մ պատուիրանք օրինացն 'ի մովսէսէ է՝ ժողովրդեանն,
առեալ զարիւն ցլուցն և նոխազացն,
ջրով և բրդով՝ կարմրով և զոպայիւ,
զկտակարանօքն իսկ և զա՟մ ժողովրդեամբն
սրսկեաց, *և ասէ. այս է արիւն կտակին՝ 20
զոր պատուիրեաց ձեզ ա՟ծ. *Եւ զխորանաւն 21
և զա՟մ կահիւ սպասուն նոյնպ՟ սրսկեաց զա֊

22 րիւնն. *Եւ գրեթէ ա՟մ ինչ արեամբն սրբէր
ըստ օրինացն. և առանց հեղման արեան
23 չլինէր թողութիւն. *Ապա հարկ էր օրինաւորացն
այնպիսեօքն սրբել. և բուն իսկ երկնաւորացն՝
առաւել եւս պատարագօք քան
24 զնոյնս. *Զի ոչ եթէ 'ի ձեռագործ սրբութիւնս
եմուտ յս՟ յօրինակս ճշմարտութե՟ն.
այլ 'ի բուն իսկ յերկինս, յանդիման լինել երեսացն
25 այ՟ վս՟ մեր. *Ոչ զի բազում անգամ
մատուցանիցէ զանձն պատարագ՝ ո՟պ քահանայապետն,
որ մտանէր 'ի սրբութիւն սրբութեանցն
26 ամի ամի արեամբն օտարաւ. *ապա
թէ ոչ՝ պարտ էր նմա բազում անգամ չարչարել
'ի սկզբանէ աշխարհի. բայց արդ աւասիկ
միանգամ 'ի կատարած յաւիտեանց՝
յանարգութիւն մեղաց իւրով պատարագաւն
27 յայտնեալ է. *Եւ զորօրինակ կայ մնայ մարդկան
միանգամ մեռանել՝ և յետ այնորիկ
28 դատաստան. *Նոյնպ՟ և քս՟ միանգամ մատուցեալ
պատարագ առ 'ի բառնալոյ զմեղս
բազմաց. իսկ յերկրորդումն առանց մեղաց
յայտնեսցի այնոցիկ, որ ակն ունիցին նմա
հաւատովք 'ի փրկութիւն.

ԳԼ. Ժ.

1 Քանզի ստուեր հանդերձելոց բարեացն Բ
ունէին օրէնքն, և ոչ զնոյն կերպարանս իրացն.

ամի ամի զնոյն պատարագս մատուցանեն
ցանգ , որք ոչ են կարող զմատուցեալսն կատա-
րել . * ապա թէ ոչ՝ դադարէին 'ի մատուցա- 2
նելոյ , վ̃ և ոչ մի ինչ այնուհետև խիղճ մնաց
ունելոյ պաշտօնէիցն միանգամ սրբեցելոցն .
* այլ անդէն 'ի նմին 'ի յիշատակս մեղացն կա- 3
յին ամի ամի ։ * Քանզի ոչ կարէր արիւննո- 4
խազացն և ցլուց բառնալ զմեղս ։ * Վ̃ որոյ 5
'ի մտանել իւրում յաշխարհ՝ ասէ . զզոհս և
զպատարագս ոչ կամեցար , բայց մարմին հաս-
տատեցեր ինձ . * ընդ ողջակէզս և ընդ վ̃ մե- 6
ղացն ոչ հաճեցար ։ * Յայնժամ ասացի թէ ա- 7
հաւասիկ եկի . 'ի ճառս գրոց գրեալ է վ̃ իմ,
առնել զկամս քո ա̃ծ . * Վերագոյնն ասէ , 8
թէ ընդ զոհս՝ և ընդ պատարագս՝ և ընդ ող-
ջակէզս՝ և ընդ վ̃ մեղացն ոչ հաճեցար , և ոչ
կամեցար՝ որք ըստ օրինացն մատչէին ։ * Ապա 9
ասէ՝ ահաւասիկ գամ առնել զկամս քո ա̃ծ ։
մերժէ զառաջինն՝ զի զերկրորդն հաստատես-
ցէ . * որով կամօք և մեք սրբեցաք՝ 'ի ձեռն 10
պատարագի մարմնոյն յ̃սի ք̃սի միանգամ ։
* Եւ ա̃մ քահանայապետ կայ հանապազորդ 11
'ի պաշտաման , և զնոյն պատարագս մատու-
ցանէ բազում անգամ, որք ոչ երբէք կարող
են բառնալ զմեղս . * Իսկ սա զմին վ̃ մեղաց 12
մատոյց պատարագ . և մշանջենաւոր նստաւ
ընդ աջմէ ա̃յ ։ * Եւ այսուհետև ակն ունի՝ 13
մինչև դիցին թշնամիք իւր 'ի ներքոյ ոտից

14 իւրոյ. *Քանզի միով պատարագաւ կատա-
15 րեաց զորբեալսն 'ի մշտնջենաւորս. *Այլ
վկայէ մեզ և Հոգին սր̃՝ յետ ասելոյն յառա-
16 ջագոյն. *Եթէ այս է ուխտն՝ զոր եդից ընդ-
հարս ն̃ց յետ աւուրցն այնոցիկ, ասէ տէր.
տաց զօրէնս իմ 'ի սիրտս ն̃ց, և 'ի խորհուրդս
17 ն̃ց գրեցից զն̃ս. *Ապա ասէ՝ թէ զմեղս ն̃ց
և զանօրէնութիւնս նոցա այլ ոչ ևս յիշեցից.
18 *Իսկ ուր թողութիւն է, ոչ ևս պիտոյ է
վասն մեղաց պատարագ. Կ.Զ.
19 *Ունիմք այսուհետև եղբարք՝ համար-
ձակութիւն 'ի մուտս սրբուե̆ցն արեամբն յս̃ի.
20 *զոր նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ և
կենդանի 'ի ձեռն վարագուրին, այսինքն է՝
21 մարմնոյ իւրոյ. *և քահանայ մեծ 'ի վ̃ր տանն
22 ա̃յ. *մատիցուք ճշմարիտ սրտիւք՝ լրութ̃բ
հաւատոց, լուացեալ զսիրտս 'ի խղճէ չա-
րեաց՝ և մկրտեալ զմարմին 'ի ջուրն սրբուե̆.
23 *Պինդ կալցուք զխոստովանութիւն անշարժ
յուսոյն, զի հաւատարիմ է որ խոստացաւն.
24 *Եւ զգուշասցուք միմեանց յորդորմամբք
25 սիրոյ և գործոց բարեաց. *և մի թողցուք
զժողովս միմեանց, ո̃պ և սովոր են ոմանք.
այլ մխիթարեսցուք, և այնչափ ևս առաւել՝
26 որչափ տեսանիցէք զօրն մերձեալ. *Զի կա-
մակար մեօք եթէ յանցանիցեմք յետ ընդու-
նելութե̆ գիտութե̆ ճշմարտութե̆ն՝ այնուհետև
27 ոչ ևս պիտոյ է վ̃ն մեղաց պատարագ. *այլ

ահեղ ակնկալութիւն դատաստանին, և նախանձ
հրոյն՝ որ ուտիցէ զհակառակորդսն. 28
*Արհամարհեալ ուրուք զօրէնսն Մովսէսի,
առանց ողորմութե̃ց՝ առ երկուք կամ երիւք
վկայիւք մեռանէր. *Իսկ ո՞րչափ սաստիկ 29
պատժոց արժանի համարիցիք զայն, որ զորդին
ա̃յ առ ոտն եհար. և զարիւն նորոյ ուխտին
խառնակ համարեցաւ՝ որով և սրբեցաւն.
և զհոգին շնորհաց թշնամանեաց. *Այլ գիտեմք 30
զայն՝ որ ասացն. իմ են վրէժխնդրութիւնք,
և ես հատուցից՝ ասէ տէր. և դարձեալ
թէ՝ դատի տէր զժողովուրդ իւր. *Ահ 31
մեծ է անկանել 'ի ձեռս ա̃յ կենդանւոյ.

*Արդ՝ յիշեցէք զաւուրսն զառաջինս. 32
յորս լուսաւորեալք բազում ճգանց և չարչարանաց
համբերէք. *մերթ 'ի նախատինս և 33
նեղութիւնս խայտառակեալք, մերթ կցորդք
այնպիսեաց վաստակաւորացն լինել. *Քանզի 34
և ընդ կապեալս չարչարեցարուք, և զյափշտակութիւն
ընչից ձերոց խնդութ̃բ ընկալարուք.
քանզի գիտէիք թէ լաւագոյն եւս
ստացուածս ունիք անձանց յերկինս՝ ուր կան
և մնան. *Արդ՝ մի՛ մերժէք 'ի ձէնջ զհամարձակութիւնն 35
ձեր, յորում կայ մեծ վարձուց
հատուցումն. *Պիտոյ է ձեզ համբերութիւն. 36
զի զկամս ա̃յ արարեալ՝ հասջիք աւետեացն.
*Զի փոքր մի ևս քան որչափ՝ 37
որ գալոցն իցէ՝ եկեսցէ, և ոչ յամեսցէ. *Զի 38

արդարն իմ 'ի հաւատոյ կեցցէ. եւ եթէ յերկ-
միտս ոք լիցի, ոչ հաճեսցի ընդ նա անձն իմ։
39 *Բայց մեք ոչ եթէ երկմտութե̃ն եմք 'ի կո-
րուստ. այլ հաւատովք 'ի փրկութիւն հոգւոց։

ԳԼ. ԺԱ.

1 Զի՞նչ են հաւատք, եթէ ոչ՝ յուսացե-
լոց իրաց հաստատութիւն, եւ յանդիմանու-
2 թիւն՝ որոց ոչն երեւին։ *Զի նովաւ վկայե-
3 ցան առաջինքն։ *Հաւատովք իմանամք հաս-
տատեալ զյաւիտեանսն բանիւ ա̃յ, յաներե-
4 ւութից զերեւելիսս եղեալ։ *Հաւատովք լաւ
պատարագս Աբէլ քան զկայէն մատուցանէր
ա̃յ, որով վկայեցաւ իսկ արդար լինել. զի 'ի
վերայ պատարագացն եղեւ նմա վկայութիւն
ա̃յ. զի թէպէտ եւ մեռաւ 'ի նմին, սակայն
5 տակաւին խօսի։ *Հաւատովք Ենովք փոխե-
ցաւ՝ զի մի՛ զմահ ճաշակեսցէ. եւ ոչ ուրեք
գտանէր, քանզի փոխեաց զնա ա̃ծ. եւ յա-
ռաջ քան զփոխելն նորա՝ վկայեցաւ հաճոյ լի-
6 նել ա̃յ։ *Բայց առանց հաւատոյ անհնար է
հաճոյ լինել. այլ հաւատալ արժան է այնմ
որ մերձենայ առ ա̃ծ՝ թէ է ա̃ծ. եւ որ խնդր-
7 րեն զնա՝ լինի պարգեւատու։ *Հաւատովք
առեալ հրաման Նոյի՝ վ̃ն չեւ եւս երեւելեացն՝
զահի հարեալ կազմէր զտապանն 'ի փրկու-
թիւն տան իւրոյ, որով դատեցաւն զաշխարհ.

և հաւատոյն արդարուէ եղև ժառանգաւոր.
* Հաւատովք՝ որ աբրահամն կոչեցաւ՝ ուն 8
կընդիր եղև ելանել 'ի տեղին, զոր առնլոց էր
'ի ժառանգութիւն . ել գնաց՝ և ոչ գիտէր
յո՞ երթիցէ ։ * Հաւատովք պանդխտեցաւ 9
յերկրին աւետեաց իբրև յօտարութեան .
խորանօք բնակեալ սահակաւ և յակովբաւ
հանդերձ ժառանգակցօք նոցին աւետեաց ։
* Քանզի ակն ունէր հիմամբք հաստատելոյ 10
քաղաքին, որոյ ճարտարապետ և արարիչ ա՟ծ
է ։ * Հաւատովք և ինքն սառա՝ որ ամուլն 11
էր, զօրութիւն առնելոյ զսերմն որդեծնուէ՝
ընդունէր, և 'ի տարաժամ հասակի ծնանէր .
քանզի հաւատարիմ համարեցաւ զայն՝ որ
խոստացաւն ։ * Վ՟ որոյ և 'ի միոջէն ծնանէին . 12
և այն 'ի յանցեալ ժամանակի, իբրև զաստեղս
երկնից բազմութ՟ք, և իբրև զաւազ առ ափն
ծովու անանց թուոյ ։ * Ըստ հաւատոց մեռան 13
ամենեքին սոքա, և չև ևս ընկալեալ զաւետիսն
. այլ 'ի հեռուստ տեսին զնս՟՝ և ցնծացան,
և խոստովան եղեն՝ եթէ օտարք և պանդուխտք
են յերկրի ։ * Զի որք զայնպիսին 14
խօսին, յայտ առնեն՝ եթէ գաւառ իմն խնդրեն
։ * Զի եթէ զայն յիշէին՝ ուստի ելին, 15
գոյր ժամանակ դառնալոյ անդրէն ։ * Նա 16
աւանիկ ազնուականի իմն ցանկացեալ են,
այսինքն է՝ երկնաւորին . վասն որոյ ոչ ամօթ
համարի ա՟ծ՝ կոչել նց՟ ա՟ծ . քանզի պատրաս֊

7 տեաց նց̃ քաղաք․ * Հաւատովք մատոյց աբրահամ
'ի փորձութեն իւրում զիսահակ պատարագ
․ և զմիամօրն մատուցանէր, որոյ զաւետիսն
8 ընկալեալ էր․ * որում ասացաւն, թէ
19 իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ․ * եդ 'ի մտի
իւրում, թէ և 'ի մեռելոց կարող է յարուցանել
ա̃ծ․ ուստի և յառակս ընկալաւ զնա ։
20 * Հաւատովք՝ վ̃ս հանդերձելոց իրաց օրհնեաց
21 իսահակ զյակոբ և զեսաւ ։ * Հաւատովք
յակոբ 'ի մեռանել իւրում, զիւրաքանչիւր
ոք յորդւոցն յովսեփու օրհնեաց,
և երկիր եպագ 'ի ծայր գաւազանի իւրոյ ։
22 * Հաւատովք յովսէփ 'ի վախճանել իւրում
յիշեաց զելս որդւոցն իսրայէլի, և վասն ոսկերաց
23 իւրոց պատուիրեաց ։ * Հաւատովք
զմովսէս իբրև ծնաւ, թաքուցաւ ամիս երիս
'ի հարց իւրոց․ քանզի տեսին կայտառ
զմանուկն, և ոչ զանգիտեցին 'ի հրամանէ
24 թագաւորին ։ * Հաւատովք մովսէս իբրև
աճեաց՝ ուրացաւ կոչել որդի դստերն փարաւոնի
25 ․ * լաւ համարեցաւ չարչարել ընդ
ժողովրդեանն ա̃յ, քան առ ժամանակ մի
26 վայելել 'ի մեղս ։ * Կարեւոր համարեցաւ ըզ
նախատինս ք̃ի, քան զմեծութիւն գանձուցն
եգիպտացւոց․ զի հայեցեալ ակն ունէր
27 վարձուցն հատուցման ։ * Հաւատովք թողոյր
զերկիրն եգիպտացւոց, և ոչ երկնչէր 'ի ցասմանէ
թագաւորին․ զի զաներեւոյթն իբրև

զտեսեալ համբերութ̃ համարեցաւ ։ *Հաւատովք 28
արար զզատիկն և զհեղումն արեանն.
զի մի՛ սատակիչ անդրանկացն մերձեսցէ 'ի
նո̃ ։ *Հաւատովք անցին ընդ ծովն կարմիր՝ 29
իբրև ընդ ցամաք երկիր · զորոյ զփորձ առեալ
եգիպտացւոցն՝ ընկղմեցան ։ *Հաւատովք պարիսպքն 30
երիքովի անկան , շուրջ եկեալ զնոքօք
զեօթն օր ։ *Հաւատովք ռախաբ պոռնիկ 31
ոչ կորեաւ ընդ անհաւատսն , որոյ ընկալեալ
էր զլրտեսսն խաղաղութ̃ ։ *Եւ արդ՝ 32
զինչ եւս ասացից · զի չէ բաւական ժամանակս
պատմելոյ վասն գեդէոնի բարակայ
սամփսոնի յեփթայայ՝ դաւթի և սամուէլի և
այլոց մարգարէիցն · *որք հաւատովք պարտեցին 33
զթագաւորութիւնս · գործեցին զարդարութիւն
· հասին աւետեաց · խցին զբերանս
առիւծուց · *շիջուցին զզօրութիւն հրոյ · 34
ապրեցան 'ի բերանոյ սրոյ · զօրացան 'ի տկարութ̃է
· եղեն զօրաւորք 'ի պատերազմի · առին
զբանակս օտարաց ։ *Ընկալան կանայք 35
'ի յարութ̃է զմեռեալս իւրեանց · կէսք կոշկոճեցան՝
և չեւ եւս ընկալեալ զփրկութիւն ,
զի լաւագոյն յարութեն հասանիցեն ։ *Եւ 36
կէսք զտանջանաց և զգանից զփորձ առին ,
զկապանաց և զբանտից ։ *Քարկոծեցան , սղոցեցան 37
, փորձեցան · սպանմամբ սրոյ մեռան ·
շրջեցան լեաշկ մաշկօք և մորթովք այծենեօք
· կարօտեալք , նեղեալք , չարչարեալք ·

3 * զորս ոչ արժէ աշխարհս։ յանապատի մոլորեալք՝
և 'ի լերինս՝ և յայրս՝ և 'ի փապարս
9 երկրի։ * Եւ սոքա ամենեքին վկայեալք 'ի
հաւատոցն, չեւ եւս ընկալան զաւետիսն։
40 * Աստուծոյ վասն մեր լաւագոյն համարեալ,
զի մի՛ առանց մեր կատարեսցին։

ԳԼ. ԺԲ.

1 Այսուհետև և մեք՝ որ այսչափ շուրջ
զմեօք մածեալ ունիմք զբազմութիւն վկայից,
զհպարտութիւն զա̃մ 'ի բաց ընկեսցուք՝ և զդ
մեղս կարեւորս։ համբերութբ̃ ընթասցուք 'ի
2 պատերազմ՝ որ առաջի կայ մեզ։ * Հայեսցուք
'ի զօրագլուխն հաւատոց՝ և 'ի կատարիչն
յս̃։ որ փոխանակ ուրախութե̃ն՝ որ նմա
առաջի կայր, յանձն առ զխաչն, արհամարհեաց
զամօթ, նստաւ ընդ աջմէ աթոռոյն
3 այ̃։ * Ազէ՝ ածէք զմտաւ, որ զայսպիսի համբերութիւն
'ի մեղաւորաց հակառակութե̃ անձին
կրեաց։ զի մի՛ աշխատ լինիցիք անձամբք
4 ձերովք՝ և լքանիցիք։ * Զի չեւ և արեամբ
չափ պատերազմեալք հակառակ կացէք մեղացն։
5 * Եւ մոռացարուք զմխիթարութիւնն,
որ ընդ ձեզ իբրև ընդ որդեակս խօսի։

Որդեակ իմ՝ մի՛ լքանիր 'ի խրատու տն̃։ Գ
6 և մի՛ վհատիցիս՝ յանդիմանեալ 'ի նմանէ։ * Զի
7 զոր սիրէ տէր՝ խրատէ, տանջէ զա̃մ որդի՝ զոր

ընդունի։ *Ի խրատու համբերուք կայք, իբրև 7
յորդիս մատուցեալ է 'ի ձեզ ա͞ծ · ո՞ր որդի
է՝ զոր ոչ խրատիցէ հայր։ *Զի եթէ առանց 8
խրատու լինիջիք, որով ամենեքին բաժանորդք
եղեն · ապա խորդք իցէք՝ և ոչ որդիք։
*Զի եթէ 'ի մարմնաւոր հարցն մերոց՝ 9
զոր ունիմք խրատիչս՝ պատկառեմք, ո՞րչափ
եւս առաւել հնազանդեսցուք հօրն հոգւոց՝
և կեցցուք։ *Զի նոքա առ սակաւ ժամանակս 10
ըստ կամաց իւրեանց խրատէին · իսկ նա
վ͞ն օգտի, առ 'ի ընդունելոյ զսրբութիւն ն͞ր։
*Ամենայն խրատ առ ժամանակն ոչ ուրախութեան 11
թուի՝ այլ տրտմութեան · բայց յետոյ պտուղ
խաղաղութեան նմա կրթելոցն հատուցանէ
յարդարութիւն։ *Վ͞ն որոյ զձեռս լքեալս՝ և 12
զծունկս կթոտս հաստատեցէք · *և զշաւիղս 13
ուղիղս արարէք ոտից ձերոց · զի մի՛ որ կաղն
իցէ՝ գլորիցի, այլ մանաւանդ բժշկեսցի։
*Զխաղաղութիւն զհետ երթայք ընդ ամենեսին՝ 14
և զսրբութիւն · առանց որոյ ոչ ոք տեսանիցէ
զտէր։ *Զգոյշ լերուք՝ գուցէ ոք յետնեալ 15
գտանիցի 'ի շնորհացն ա͞յ։ Մի՛ ոք արմատ
դառնութեան 'ի վեր երեւեալ նեղիցէ, և նմա
բազումք պղծիցին։ *Մի՛ ոք պոռնիկ և պիղծ 16
իբրև զեսաւ · որ ընդ միոյ կերակրոյ զանդրանկութիւնն
վաճառեաց։ *Գիտէք՝ զի թէպէտ 17
և յետոյ կամեցաւ ժառանգել զօրհնութիւնն,
խոտան գտաւ, զի ապաշխարութեան տեղի ոչ ե-

գիտ . թէպէտ և արտասուօք խնդրեաց զնա։

18 *Զի ոչ էք մատուցեալ առ լեառն շօշափելի, Դ
որ հրովն վառեալ էր՝ և միգով և մառախղով
19 և խաւարաւ և մթով . *ուր փողն
հնչէր և բարբառ պատգամացն . ուստի՝ որք
լուանն՝ հրաժարեցին , զի մի՛ կրկնեսցի առ
20 նոսա բանն։ *Քանզի ոչ հանդարտէին հրամանին .
թէպէտ և գազան մերձենայր 'ի
21 լեառն՝ քարկոծ լինէր . *Եւ այնպէս ահագին
էր տեսիլն , զի և մովսէս ասէր , եթէ
22 զահի հարեալ եմ և դողամ։ *Այլ մատուցեալ
էք 'ի սիովն լեառն և 'ի քաղաք ա͞յ
կենդանւոյ յերուսաղէմ յերկինս , և 'ի բիւրաւոր
23 բանակս հրեշտակաց , *և յեկեղեցիս
անդրանկաց գրելոց յերկինս , և առ դատաւորն
ամենեցուն ա͞ծ , և յոգիս արդարոց կատարելոց .
24 *և 'ի նորոց կտակարանաց միջնորդն
յիսուս , և 'ի հեղումն արեան նորա՝
որ առաւել խօսի քան զհաբելին .

25 *Զգոյշ լերուք գուցէ հրաժարիցէք յայնմանէ՝
որ խօսեցաւն . զի եթէ նոքա ոչ կարացին
զերծանել հրաժարեալք յայնմանէ՝ որ
յերկրին հրաման տայր , ո՞րչափ ևս առաւել
մեք , եթէ յերկնաւորէն թիկունս դարձուցանիցեմք .
26 *Որոյ ձայնն զերկիր շարժեաց
յայնժամ . և այժմ խոստացեալ է՝ և ասէ .
միւսանգամ շարժեցից ոչ միայն զերկիր՝ այլ և
27 զերկինս . *Այլ միւսանգամն յայտ առնէ ըզ

*շարժելոցն. իբրև զեղելոց փոփոխումն, զի
հաստատունն կացցեն անշարժքն. *Վ՟ որոյ 28
թագաւորութիւն անշարժ ընկալեալ, պինդ
կալցուք զշնորհսն, որով պաշտեմք զաստուած
հաճութեամբ՝ ահիւ և դողութեամբ. *քանզի 29
աստուած մեր հուր ծախիչ է.*

ԳԼ. ԺԳ.

*Եղբայրսիրութիւն հաստատեսցի առ 1
ձեզ. *Զօտարասիրութիւն մի՛ մոռանայք. զի 2
այնու ոմանք յանդէտս ընկալան զհրեշտակս.
*Յուշ լիցին ձեզ կապեալքն՝ ո՟պ թէ դուք 3
ընդ նոսա կապեալ իցէք. և չարչարեալքն,
ո՟պ և դուք իսկ մարմնաւոր էք. *Պատուական 4
է ամուսնութիւն ամենեւին՝ և սուրբ անկողինք.
բայց զշունս և զպոռնիկս դատի ա՟ծ.
*Բարք անարծաթասէրք լինիցին, բաւական 5
համարել որչափ ինչ 'ի ձեռս իցէ. քանզի
ինքն իսկ ասաց. ոչ թողից զքեզ՝ և ոչ ընդվայր
հարից. *որպէս համարձակ լիցուք ասել. 6
տէր է իմ օգնական, և ես ոչ երկեայց,
զի՞ արասցէ ինձ մարդ. *Յիշեցէք զառաջնորդս 7
ձեր որ խօսեցան ձեզ զբանն ա՟յ. հայեցեալք
յելս գնացից նոցա՝ նմանողք եղերուք
հաւատոցն. *Յ՟ ք՟ երէկ և այսօր, 8
նոյն և յաւիտեանս. *Յուսմունս պէսպէս և 9
յօտարաձայնս մի՛ դանդաչէք. զի լաւ է շնոր֊*

հօք հաստատել զսիրտս՝ և ոչ կերակրովք․ որովք ոչինչ օգտեցան՝ որ այնպէսն գնացին․ Ե

10 * Ունիմք մեք սեղան, ուստի ոչ ունին իշխանութիւն ճաշակել, որք պաշտեն զպաշտօն խորանին․
11 * Զի որոց անասնոց մատչէր արիւնն 'ի սրբութիւնս վասն մեղաց 'ի ձեռն քահանայապետին, նոցուն մարմինքն այրէին
12 արտաքոյ բանակին․ * Վասն որոյ և յս՟՝ զի սրբեսցէ իւրով արեամբն զժողովուրդն, ար-
13 տաքոյ դրանն չարչարեցաւ․ * Արդ՝ ելցուք ելցուք առ նա արտաքոյ բանակին, առեալ
14 յանձն զնախատինս նր՟․ * Քանզի ոչ եթէ ունիմք քաղաք՝ որ աստէն մնալոց իցէ, այլ
15 զհանդերձեալն խնդրեմք․ * Արդ՝ 'ի ձեռն նորա մատուսցուք պատարագ օրհնութեան յա՟մ ժա՟մ ա՟յ․ այսինքն է՝ զպտուղ շրթանց
16 խոստովանելոց յանուն նորա․ * Զբարերարութիւն և զհաղորդութիւն մի՛ մոռանայք, զի ընդ այնպիսի պատարագս հաճի ա՟ծ․
17 * Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, և հպատակ կացէք նոցա․ զի նոքա տքնին վ՟ս ոգւոց ձերոց՝ որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր․ զի խնդութ՟բ արասցեն զայն՝ և մի՛ հոգւոց հանելով․ զի այն ոչ յօգուտ ձեր է․

18 * Աղօթս արարէք վասն մեր․ զի հաստատեալ գիտեմք եթէ բարւոք միտս ունիմք․ յա՟մի կամիմք բարւոք գնալս ցուցա- ԿԻԳ

նել. * Եւ առաւել աղաչեմ՝ զի զայն առնիցէք, զի վաղագոյն պատսպարեցայց ձեզ. 19
* Եւ աստուած խաղաղութեան՝ որ եհան ՚ի 20
մեռելոց զհովիւն հօտից զմեծն արեամբ յաւիտենական ուխտին զտէր մեր յս՟, * Հաս- 21
տատեսցէ զձեզ ՚ի գործս բարութեան՝ առնել զկամս նորա. և արասցէ ՚ի մեզ զհաճոյն առաջի իւր ՚ի ձեռն յիսուսի քրիստոսի. որում փառք յաւիտեանս. ամէն. * Աղաչեմ 22
զձեզ եղբարք՝ անսալ բանիս մխիթարութեն. քանզի սակաւուք գրեցի ձեզ. * Եւ ճանա- 23
չէք զեղբայրն մեր զտիմոթէոս զարձակեալն առ ձեզ. ընդ որում, եթէ վաղագոյն դայցէ՝ տեսից զձեզ. * Ողջոյն տաջիք ամենայն ա- 24
ռաջնորդաց ձերոց, և ամ՟ սրբոց. Ողջոյն տան ձեզ՝ որ ՚ի կողմանս իտալացւոց են.
* Շնորհք ընդ ամենեսին ձեզ. ամէն. 25

Առ եբրայեցիս՝ գրեցաւ յիտալիոյ ՚ի ձեռն
տիմոթէոսի:

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

ՅԱԿՈՎԲՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԳԼ. Ա.

1 ՅԱԿՈՎԲՈՍ ա՟յ և տ՟ն յ՟սի ք՟սի ծառայ. ԱԴ
երկոտասան ազգացդ որ 'ի սփիւռս
2 էք՝ ողջոյն. *Ամենայն ուրախութեան ար-
ժանի համարիջիք եղբարք, յորժամ 'ի պէս
3 պէս փորձութեան 'ի մէջ անկանիցիք. *Գի-
տասջիք զի հանդէս ձերոյ հաւատոյն յօ-
4 րինեալ գործէ զհամբերութիւն. *Իսկ համ-
բերութիւնն գործ կատարեալ ունիցի, զի
իցէք ողջանդամք և կատարեալք, և ոչ իւիք
5 նուազեալք. *Ապա թէ ոք 'ի ձէնջ իցէ նը-
ւազեալ յիմաստութենէ, խնդրեսցէ յա՟յ, որ
տայն ա՟մի առատապէս՝ և ոչ նախատէ. և
6 տացի նմա. *Բայց խնդրեսցէ հաւատովք՝
և մի՛ երկմտեսցէ, զի որ երկմիտն է՝ նման է

հողմակոծեալ և տատանեալ ալեաց ծովու.
* Մի՛ ակնկալցի մարդն այն առնուլ ինչ յա՟յ· 7
* զի այր երկմիտ՝ առանց հաստատութե՟ն է 8
յա՟մ ճանապարհս իւր. * Պարծեսցի եղբայր 9
խոնարհ ՚ի բարձրութիւն իւր, * և որ մեծատունն 10
իցէ ՚ի խոնարհութիւն իւր. քանզի իբրև
զծաղիկ խոտոյ անցցէ. * զի ծագեաց 11
արև հանդերձ խորշակաւ՝ և ցամաքեցոյց
զխոտն, և թօթափեցաւ ծաղիկն նորա, և
կորեաւ վայելչութիւն երեսաց նորա. Նոյնպ՟
և մեծատունն հանդերձ շահիւքն իւրովք
թարշամեսցի. * Երանեալ է այր որ համբերիցէ 12
փորձանաց. զի եթէ ընտիր եւս գըտանիցի,
առցէ զպսակն կենաց՝ զոր խոստացաւ
սիրելեաց իւրոց.

ԱԵ * Մի՛ ոք որ ՚ի փորձութեան իցէ, ասիցէ՝ 13
թէ յա՟յ փորձիմ. զի ա՟ծ անփորձ է չարեաց.
փորձէ նա և ոչ զոք. * իւրաքանչիւր ոք փորձի 14
առ յիւրոյն ցանկութեանց ձգեալ և պատրեալ.
* Ապա այնուհետև ցանկութիւնն յըղացեալ՝ 15
զմեղս ծնանի. և մեղքն կատարեալ՝
զմահ ծնանին. * Մի՛ խաբիք եղբարք իմ սիրելիք. 16
* զի ա՟մ տուրք բարիք՝ և ա՟մ պարգևք 17
կատարեալք ՚ի վերուստ են իջեալ առ
՚ի հօրէն լուսոյ. յորում չիք փոփոխում՟ն՝ և
կամ շրջելոյ ստուեր. * Կամեցեալ ծնաւ ըզ 18
մեզ բանիւ ճշմարտութե՟ն՝ լինել մեզ պտուղ
ինչ ստացուածոց նորա. * Գիտասջիք եղ- 19

բարք իմ սիրելիք․ Եղիցի ա̄մ մարդ արագ
առ ՚ի լսել, և ծանր առ ՚ի խօսել, և ծանր
20 առ ՚ի բարկանալ․ * Զի բարկութիւն մարդոյ
21 զարդարութիւն ա̄յ ոչ գործէ․ * Որով ՚ի բաց
թօթափեալ զա̄մ աղտեղութիւնս և զյաւելուածս չարեաց, հեզութեամբ ընդունիջիք
զբանն ընդաբոյս․ որ կարողն է կեցուցանել
22 զոգիս ձեր․ * Լինիջիք առնելիք բանին, և
23 մի լսելիք միայն համարեսջիք զանձինս․ * Զի
թէ ոք լսող միայն իցէ բանին՝ և ոչ առնելի,
նման է նա մարդոյ՝ որ պշուցեալ հայիցի ընդ
24 երեսս իւր՝ որ ծնանիցին ՚ի հայելւոջ․ * զի
հայեցեալ եռես զինքն՝ և զանց արար, և
25 անդէն մոռացաւ թէ որպիսի ոք էր․ * Իսկ
որ յառեալ ՚ի կատարեալ օրէնս ազատութեն
հայիցի՝ և ՚ի նմին կայցէ, ոչ եղեւ նա լսող
մոռացութեն՝ այլ առնելի գործոյն․ նա՝ յառնելն
26 իւրում լիցի երանելի․ * Եթէ ոք կամիցի կրօնաւոր լինել՝ և ոչ սանձահարիցէ զլեզու իւր՝ այլ զբաղեցուցանիցէ զսիրտ իւր,
այնպիսւոյն փայրապար է կրօնաւորութիւնն․
27 * Կրօնաւորութիւն սուրբ և անարատ՝ առ
՚ի յա̄յ և ՚ի Հօրէ՝ այս է, այցելու լինել որբոց
և այրեաց ՚ի նեղութեան իւրեանց անարատ
պահել զանձն յաշխարհէ․

ԳԼ. Բ.

ԱՋ Եղբարք իմ, մի՛ աչառութեամբ ունիցիք 1
զհաւատս տեառն մերոյ յս̃ի քս̃ի, որ տէրն է
փառաց. * Եթէ մտանիցէ 'ի ժողովուրդ ձեր 2
այր՝ որ ունիցի մատանի ոսկի և հանդերձս
պայծառս, մտանիցէ անդր և աղքատ ոք՝ 'ի
հանդերձս աղտեղիս, * հայիցիք ընդ այն՝ որ 3
ունիցի զհանդերձն պայծառս, և ասիցէք՝
եթէ դու նիստ աստ պատուով. և ցաղքատն
ասիցէք՝ եթէ յոտն կաց դու այդր, կամ թէ
եկ նիստ առ պատուանդանիս իմում. * Ո՞չ 4
խղճիցէք յանձինս՝ և լինիցիք դատաւորք
չարեաց խորհրդոց. * Լուարուք ինձ եղ- 5
բարք իմ սիրելիք, ո՞չ ապաքէն ա̃ծ ընտրեաց
զաղքատս աշխարհիս, որ են մեծատունք
հաւատովք. և ժառանգաւորք արքայութե̃ն՝
զոր խոստացաւ սիրելեաց իւրոց. * Եւ դուք 6
անարգէք զաղքատս. Ո՞չ մեծատունքն յաղ-
թահարեն զձեզ՝ և նոքա քարշեն զձեզ 'ի
դատաստան. * Ո՞չ նոքա հայհոյեն զբարւոք 7
անունն՝ որ կոչեցեալ է 'ի վերայ ձեր. * Ա- 8
պա թէ զօրէնսն կատարիցէք զարքունականս
ըստ գրոց, եթէ սիրեսցես զընկեր քո իբրեւ
զանձն քո, բարւոք առնէք. * Իսկ եթէ ա- 9
չառիցէք, մեղս գործէք՝ յանդիմանեալք յօ-
րինացն իբրեւ օրինազանցք. * Որ ոք զա̃մ 10

օրէնսն պահիցէ, և միով իւիք ինչ գթիցէ,
11 եղեւ ամ̃ օրինացն պարտական. * Զի որ ասացն՝
թէ մի՛ սպանանիցես, ասաց թէ և մի՛
շնայցես. զի եթէ սպանանիցես ոչ՝ բայց շնայցես,
12 եղեր յանցաւոր օրինացն. * Այնպ̃
խօսեցարուք՝ և այնպ̃ արարէք, ոպ̃ զի ազատութե
13 օրինօքն իցէք դատելոց. * Զի անողորմ
դատաստան լինելոց է այնմ, որ ոչ առնիցէ
ողորմութիւն. քանզի բարձրագլուխ պարծի
ողորմութիւն առ դատաստանաւն.
14 * Զի՞նչ օգուտ իցէ եղբարք իմ, եթէ ասիցէ ԱԷ
ոք հաւատս ունել՝ և գործս ոչ ունիցի.
միթէ կարիցէ՞ն հաւատքն ապրեցուցանել
15 զնա. * Եթէ եղբայր ոք կամ քոյր՝ իցեն
16 մերկ կամ կարօտեալ աւուրն կերակրոյ, * ասիցէ
ոք ՚ի ձէնջ ցնոսա. երթայք խաղաղութբ̃,
ջեռարուք և յագեցարուք. և տայցէք
ոչ նոցա զպէտս մարմնոյն, զի՞նչ օգուտ
17 իցէ. * Այնպէս և հաւատք եթէ գործս ոչ
18 ունիցին, մեռեալ են առանձինն. * Այլ թերեւս
ասիցէ ոք. եթէ դու հաւատս ունիս՝
և ես գործս ունիմ, ցոյց ինձ զհաւատսն քո
առանց գործոց, և ես ցուցից քեզ ՚ի գործոյն
19 իմոց զհաւատս. * Դու հաւատաս՝ զի
մի է ա̃ծ, բարւոք առնես. և դեւք հաւատան՝
20 և սարսեն. * Կամի՞ս գիտել ո՞վ մարդ
մնոտի, զի հաւատք առանց գործոց դատարկ
21 են. * Աբրահամ հայր մեր ո՞չ ապա֊

քէն 'ի գործոց արդարացաւ՝ հանեալ 'ի սեղան զորդին իւր զԻսահակ պատարագ. *Տեսանե՞ս՝ զի հաւատքն եղեն գործակից գործոց նորա. եւ 'ի գործոց անտի հաւատքն կատարեցան. *Եւ կատարեցաւ գիրն՝ որ ասէ. Հաւատաց աբրահամ յա̃ծ, եւ համարեցաւ նմա յարդարութիւն. եւ կոչեցաւ բարեկամ ա̃յ. *Տեսանէ՞ք՝ զի 'ի գործոց արդարանայ մարդ՝ եւ ոչ 'ի հաւատոց միայն. *Սոյնպէս եւ ռախաբ պոռնիկ՝ ո՞չ ապաքէն 'ի գործոց արդարացաւ, ընկալեալ զլրտեսսն՝ եւ ընդ այլ ճանապարհ արձակեաց. *Զոր օրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է, սոյնպէս եւ հաւատք առանց գործոց մեռեալ են. 22 23 24 25 26

ԳԼ. Գ.

ԲԿ Մի՛ բազում վարդապետք լինիք եղբարք իմ, գիտասջիք՝ զի մեծ դատաստան ընդունելոց եմք. *քանզի բազում ինչ յանցանեմք ամենեքեան. Եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ՝ նա է մարդ կատարեալ, որ կարողն է սանձահարել զա̃մ մարմին իւր. *Տե՛ս զի ձիոց սանձս 'ի բերան դնեմք՝ առ անսալոյ ն̃ց մեզ, եւ զա̃մ մարմինս նոցա նուաճեմք. *Ահաւասիկ եւ նաւք որպիսի՛ ինչ են, եւ 'ի սաստիկ հողմոց վարին. եւ փոքր թեւոմբ շրջին՝ յոր կոյս եւ միտք ուղղչին կամիցին. *Սոյնպէս եւ 1 2 3 4 5

լեզու փոքր լինի անդամ է՝ և մեծամեծս բարբառի ։
Ահա և սակաւ լինի հուր զո՞րպիսի
6 անտառս հրդեհէ ։ *Եւ լեզու հուր՝ զարդանիրաւութեան,
լեզու հաստատեալ է յանդամս մեր,
որ զա̃մ մարմինն ապականէ, և
վառէ հրով զանիւ ծննդեան, և բորբոքեալ
7 տոչորի 'ի գեհենի ։ *Ամենայն բնութիւն
գազանաց՝ և թռչնոց և սողնոց՝ և որ 'ի ծովու
են, հնազանդեալ է՝ և հնազանդի մարդկեղէն
8 բնութեան ։ *Բայց զլեզու մարդկան
ոչ ոք կարէ հնազանդել՝ զչարն և զանկարգ՝
9 և լի թունոք մահաբերիւ ։ *Նովաւ օրհնեմք
զտէրն և զհայր, և նովաւ անիծանեմք
զմարդիկ՝ որ ըստ նմանութեան ա̃յ արարան ։
10 *Ի նմին բերանոյ ելանեն օրհնութիւնք և անէծք ։
ոչ է պարտ եղբարք իմ այդմ այդպէս
11 լինել ։ *Միթէ աղբիւր անդստին 'ի միոյ ականէն
12 բղխիցէ՞ քաղցր և դառն ։ *Միթէ
մարթ ի՞նչ իցէ եղբարք իմ՝ թզենւոյ ձէթ
բերել, կամ որթոյ՝ թուզ, և ոչ աղտաղտին
տեղւոյ ջուր քաղցր առնել ։

13 *Ո՞վ իցէ իմաստուն և հանճարեղ 'ի ձեզ, **ԲԺ**
ցուցէ 'ի բարւոք գնացից զգործս իւր հեզութ̃բ
14 իմաստութ̃ն ։ *Ապա եթէ նախանձ՝
և դառնութիւն և հակառակութիւն ունիցիք
'ի սիրտս ձեր, մի՛ պարծիք սուտ առնել ըզճշմարտութիւնն ։
*Ոչ է իմաստութիւնս այս
15 իջեալ 'ի վերուստ, այլ երկրաւոր՝ շնչաւոր՝

և դիւական. *Զի ուր հեռ և նախանձ, անդ 16
է անկարգութիւն և ա՟մ իրք չարք. *Իսկ 17
վերին իմաստութիւնն, նախ զի սուրբ է՝ ապա
խաղաղարար, հեզ՝ դիւրահաւան՝ լի ողորմութ՟բ
և պտղովք բարեաց, անխիղճ, առանց
կեղծաւորութեան. *Պտուղ արդարութե՟ն 18
խաղաղութեամբ սերմանի այնոցիկ՝
որ առնեն զխաղաղութիւն.

ԳԼ· Դ·

Ուստի՞ պատերազմունք՝ և ուստի՞ կռիւք 1
՚ի ձեզ. ո՞չ յայնպիսի ցանկութ՟նց ձերոց՝ որ
զօրացեալ են յանդամս ձեր. *Ցանկանայք՝ 2
և ոչ ունիք. սպանանէք և նախանձիք՝ և ոչ
կարէք հասանել. պատերազմիք կռուիք՝ և
ոչ ունիք. վասն զի ոչ խնդրէք. *Խնդրէք՝ 3
և ոչ առնուք, վասն զի չարաչար խնդրէք.
զի արդէն ՚ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք.
*Շնացողք՝ ո՞չ գիտէք՝ զի սէր աշխարհիս 4
այսորիկ թշնամութիւն է առ ա՟ծ. զի որ ոք
կամիցի սիրել զաշխարհ՝ թշնամի առնէ զանձն
իւր ա՟յ. *Կամ թէ վայրապա՞ր համարիցիք՝ 5
զոր ասէ գիրն. առ նախանձ ինչ՝ որում փափաքէ
հոգին՝ որ բնակեաց ՚ի մեզ, *տալ զառաւել 6
շնորհսն. վասն որոյ ասէ. տէր ամբարտաւանից
հակառակ կայ, տայ շնորհս
խոնարհաց.

7 *Հնազանդեցարուք այսուհետև այ, և կացէք ԲԳ.
հակառակ չարախօսին. և լիցի փախըստական
8 առ 'ի ձէնջ. *Մերձեցարուք առ ած՝
և մերձեսցի առ ձեզ. Սրբեցէք զձեռս մեղաւորք,
և ուղիղ արարէք զսիրտս՝ երկմիտք.
9 *Տառապեցարուք՝ սգացարուք և լացէք.
ծաղր ձեր 'ի սուգ դարձցի, և ուրախութիւն
10 ձեր 'ի տրտմութիւն. *Խոնարհեցարուք առաջի
11 տեառն՝ և բարձրացուսցէ զձեզ. *Մի՛
բամբասէք զմիմեանս եղբարք. որ բամբասէ
զեղբայր՝ կամ դատի զեղբայր իւր, զօրէնսն
բամբասէ՝ և զօրէնսն դատի. իսկ եթէ զօրէնսն
դատիցիս՝ ոչ առնելի օրինացն ես՝ այլ
12 դատաւոր. *Մի է օրէնսդիր և դատաւոր՝
13 որ կարողն է փրկել և կորուսանել. *դու ո՞
ես որ դատիս զընկերն. Ահաւասիկ են, որ
ասեն. այսօր՝ և վաղիւ երթիցուք յայս անուն
քաղաք, եղիցուք անդ տարի մի, վաճառեսցուք՝
14 և շահեսցուք. *որք ոչ գիտէք
15 զվաղիւն, *ո՞րպիսի ինչ են կեանք ձեր. զի
իբրև զմրրիկ էք, որ առ սակաւ մի երևեալ՝
և ապա ապականեալ. փոխանակ զի ասէիք
եթէ տէր կամեսցի՝ և կեցցուք, արասցուք
16 զայս ինչ՝ կամ զայն. *Եւ արդ՝ պարծիք
յամբարտաւանութեան ձերում. ամ ինչ այսպիսի
17 պարծանք չարութեան են. *Որ ոք գիտիցէ
զբարին՝ և ոչ առնիցէ, մեղք են նմա.

ԳԼ. Ե.

ԲԴ

Արդ՝ այսուհետև մեծատունք լացէք և 1
ողբացէք 'ի վ̃ր թշուառութեանցն, որ գալոց են
'ի վ̃ր ձեր։ *Զի մեծութիւնդ ձեր յոչինչ է, 2
և հանդերձք ձեր կերակուր ցեցոյ։ *Արծաթ 3
ձեր և ոսկի ժանգահար, և ժանգ նց̃ լիցի ձեզ
'ի վկայութիւն, և կերիցէ զմարմինս ձեր։ իբ-
րև զհուր գանձեցէք աւուրն յետնոյ։ *Ա- 4
հաւասիկ վարձք մշակաց՝ որ գործեն զանդս
ձեր առ ձեզ են. զրկեալն 'ի ձէնջ աղաղակէ,
և բողոք հնձողացն եհաս յականջս տ̃ն զօ-
րութեանց։ *Փափկացայք 'ի վերայ երկրի՝ և 5
զբօսայք. սնուցէք զսիրտս ձեր իբրև աւուր
սպանման։ *Զրկեցիք սպանիք զարդարն, որ 6
ոչ կայր ձեզ հակառակ։ *Երկայնամիտ լե- 7
րուք եղբարք իմ՛ մինչև 'ի գալուստն տ̃ն. ա-
հա մշակ երկայնամտեալ սպասէ պատուական
պտղոյն երկրի, մինչև առցէ զկանուխ և զա-
նագան։ *Երկայնամտեցէք և դուք, և հաս- 8
տատեցէք զսիրտս ձեր. զի գալուստն տ̃ն
մերձեալ է։ *Մի՛ տրտմեցուցանէք զմիմեանս 9
եղբարք, զի մի՛ դատիցէք. ահաւասիկ դա-
տաւորն առ դուրս կայ։ *Օրինակ առէք եղ- 10
բարք՝ չարչարանաց և երկայնմտութեան զմարգա-
րէսն, որ խօսեցան յանուն տ̃ն։ *Ահաւասիկ 11
երանեմք համբերողաց. զհամբերութիւն յով-

բայ լուարուք՝ և զկատարումն տեառն տեսէք·
զի բազմագութ է և ողորմած.
12 *Յառաջ քան զա̃մ ինչ եղբարք իմ, մի ԲԵ
երդնուցուք՝ մի յերկինս՝ մի յերկիր՝ մի յայլ
ինչ երդումն, այլ եղիցի ձեր այոն այո, և
ոչն՝ ոչ· զի մի ՚ի կեղծաւորութիւն ինչ անկանիցիք.
13 *Վշտանայցէ ոք ՚ի ձէնջ, յաղօթս
կացցէ· բերկրեսցի ոք, սաղմոս ասասցէ.
14 *Հիւանդանայցէ ոք ՚ի ձէնջ՝ կոչեսցէ
զերիցունս եկեղեցւոյն՝ և արասցեն ՚ի
վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն
15 տեառն. *և աղօթքն հաւատովք փրկեսցեն
զաշխատեալն, և յարուսցէ զնա տէր. և եթէ
16 մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցի նմա. *Խոստովան
եղերուք միմեանց զմեղս, և աղօթս
արարէք ՚ի վր̃ միմեանց՝ ոպ̃ զի բժշկեսջիք·
քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոց
17 յօգնականութիւն. *Եղիա մարդ էր իբրև
զմեզ չարչարելի. և յաղօթս եկաց՝ և ոչ տեղաց
18 յերկիր զերիս ամս և զվեց ամիս. *Եւ
դարձեալ եկաց յաղօթս՝ և ետուն երկինք
զանձրև՝ և բուսոյց երկիր զպտուղ իւր.
19 *Եղբարք իմ, եթէ ոք ՚ի ձէնջ մոլորիցի ՚ի
20 ճշմարտութեան ճանապարհէն՝ և դարձուսցէ
ոք զնա. *գիտասցէ, զի որ դարձուսցէ ըզ
մեղաւորն ՚ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ,
փրկեսցէ զոգի իւր ՚ի մահուանէ՝ և ծածկեսցէ
զբազմութիւն մեղաց.

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌԱՋԻՆ

ԳԼ. Ա.

ԲԶ ՊԵՏՐՈՍ առաքեալ յ՟ի ք՟ի, ընտրելոց 1
նժդեհից, որ 'ի սփիւռս պոնտացւոց
գաղատացւոց և կապադովկեցւոց և
ասիացւոց և բիւթանացւոց. *ըստ կանխագիտու՟ն 2
ա՟յ հօր. սրբու՟թ հոգւոյն, 'ի հնազանդութիւն
և 'ի հեղումն արեանն յ՟ի ք՟ի. շնորհք
ընդ ձեզ և խաղաղութիւն բազմասցի.
*Օրհնեալ է ա՟ծ և հայր տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի, որ 3
ըստ բազում ողորմու՟ն իւրում ծնաւ զմեզ վերստին
'ի յոյսն կենդանի. 'ի ձեռն յարու՟ն յ՟ի
ք՟ի 'ի մեռելոց, *յանեղծ և յանարատ և յանթառամ 4
ժառանգութիւնն որ պահեալ է յեր-

5 կինս 'ի ձեզ. *որ զօրութբ̃ն այ̃ պահեալ էիք
հաւատովք 'ի պատրաստեալ փրկութիւնն ,
6 յայտնեալ 'ի յետին ժամանակս. *Որով ուրախ
լինիջիք՝ որ այժմ սակաւիկ ինչ ըստ պատշաճի
իրաց տրտմեալ էք 'ի պէսպէս փորձութիւնս .
7 *Զի հանդէս ձերոյ հաւատոյն
առաւել քան զոսկի կորստական պատուական
է. որ հրով փորձեալ՝ գտաւ 'ի գովութիւն և
'ի փառս, և 'ի պատիւ 'ի յայտնութ̃ն յ̃սի ք̃սի.
8 *Զոր ոչն տեսիք՝ և սիրեցիք. ընդ որ այժմ
ոչ հայեցեալք՝ բայց հաւատայիք. և ուրախ
9 էք անճառ և փառաւորեալ խնդութբ̃ն. *ընկալեալ
զկատարումն հաւատոյն ձերոյ զոգւոյն
10 փրկութիւն. *Վասն որոյ փրկութեան
խնդրեցին և քննեցին մարգարէքն. որք վ̃
որոյ 'ի ձեզ լինելոյ էին շնորհքն՝ մարգարէանային.
11 *քննէին յորում և յորպիսի ժամանակի
դուշակէր 'ի նոսա հոգին ք̃սի. որ նախ ըզ
չարչարանացն ք̃սի վկայէր՝ և յետ այնորիկ ըզ
12 փառացն. *Որոց և յայտնեցաւ իսկ. զի ոչ եթէ
անձանց , այլ մեզ մատակարարք լինէին
նոցին. որք այժմ պատմեցան այնոքիւք , որ
աւետարանեցինն ձեզ հոգւովն սրբով, որ առաքէրն
յերկնից. զոր ցանկային տեսանել
գանեայ ընդ աղօտ հրեշտակք.

13 *Որով պնդեալ զմէջս մտաց ձերոց՝ զուարթացեալք ԲԷ
բովանդակ սպասեցէք հասելոյն
14 ձեզ շնորհաց 'ի յայտնութ̃ն յ̃սի ք̃սի, *իբրև

զորդիս հնազանդութեան. մի՛ կերպարանեալք ա-
ռաջին ձերովք անգիտութեան ցանկութ̃ք. *այլ 15
ըստ սրբոյն որ կոչեաց զձեզ՝ եւ դուք ս̃րք յա̃մ
գնացս ձեր լինիջիք. *Վ̃ս որոյ գրեալ է, ե- 16
թէ եղերուք ս̃ր զի ես ս̃ր եմ. *Եւ եթէ Հայր 17
կոչիցէք զայն, որ առանց ակնառութեան դատի
ըստ իւրաքանչիւր գործոց. ապա երկիւղիւ
զձերոյն պանդխտութեան ժամանակս գնաս-
ջիք. *Գիտասջիք, զի ոչ ապականացու ար- 18
ծաթեղինօք՝ եւ ոսկեղինօքն փրկեցարուք 'ի
ձերոց ունայնութեան հայրենաւոր գնացիցն.
*այլ պատուական արեամբն ք̃ի, իբրեւ ան- 19
բիծ եւ անարատ գառինն. *Որ յառաջ ծանօթն 20
էր՝ նախ քան զիսկզբանէ աշխարհի. եւ երե-
ւեցաւ 'ի վախճան ժամանակաց վ̃ս ձեր. *որք 21
նովաւ հաւատացիք յա̃ծ՝ որ յարոյց զնա 'ի մե-
ռելոց, եւ ետ նմա փառս. զի հաւատքն ձեր
եւ յոյս լիցին յա̃ծ. *Զանձինս ձեր սրբել հնա- 22
զանդութ̃ ճշմարտութեան, յեղբայրսիրութիւն ա-
ռանց կեղծաւորութեան, 'ի ս̃ր սրտէ սիրել սըր-
տիւ զմիմեանս. *Ծնեալք վերստին ոչ յապա- 23
կանութեան սերմանէն. այլ յանապականացուէն,
կենդանւոյ եւ մշտնջենական բանիւն ա̃յ. *Քանզի 24
ա̃մ մարմին իբրեւ զխոտ է. եւ ա̃մ փառք մար-
դոյ իբրեւ զծաղիկ խոտոյ. խոտն ցամաքեցաւ՝
եւ ծաղիկն թօթափեցաւ. *եւ բան տ̃ն մնայ 25
յաւիտեան. այսինքն է բանն, որ 'ի ձեզ ա-
ւետարանեցաւ.

ԳԼ. Բ.

1 Ի բաց թօթափեալ այսուհետև զա՟մ չարութիւն՝ Դ Կ
և զա՟մ նենգութիւն և զկեղծաւորութիւնս
և զնախանձ, և զամենայն չարախօսութիւն.
2 * իբրև զարդի ծնեալ մանկունս
խօսունս. և անխարդախ կաթինն փափաքիցէք,
3 զի նովաւ աճիցէք 'ի փրկութիւն. * Եթէ
4 ճաշակիցէք՝ զի քաղցր է տէր. * Առ որ մատուցեալ
'ի վէմն կենդանի, որ թէպէտ 'ի
մարդկանէ անարգեալ. այլ առ 'ի յա՟յ ընտրեալ
5 և պատուական է. * և դուք իբրև ըզ
վէմս կենդանիս շինիք տաճար հոգևոր յանարատ
քահանայութիւն, մատուցանել զհոգևորն
պատարագս՝ հաճոյս ա՟յ, 'ի ձեռն յի՟ի
6 քի՟ի. * Քանզի կայ իսկ 'ի գրի, թէ ահաւասիկ
դնեմ 'ի սիո՟ն վէմ ընտիր՝ գլուխ անկեան
պատուական, և որ 'ի նա հաւատասցէ՝ մի՛
7 ամաչեսցէ. * Ձեզ այսուհետև հաւատացելոց
է վէմ պատուական. իսկ անհաւատից, վէմ
զոր անարգեցին շինողքն, նա եղև գլուխ անկեան.
8 * և վէմ գլորման և վէմ գայթակղու՟ն,
որ գայթակղին ապստամբեալք 'ի բանէն՝ յոր
9 և եդանն. * Այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն,
քահանայութիւն, ազգ ս՟ր,
ժողովուրդ սեպհական. ո՟պ զի զձեր առաքինութիւնս
նուիրիցէք այնմ, որ զձեզ 'ի խա-

ւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն. *Որք երբեմն 10
չժողովուրդ՝ բայց արդ ժողովուրդ ա̃յ.
որք չողորմեալք՝ այժմ ողորմութիւն գտիք:
*Սիրելիք՝ աղաչեմ, իբրեւ զպանդուխտս և 11
զնժդեհս 'ի բաց մերժել 'ի մարմնաւոր ցանկու̃եցն,
որ զինուորին ընդդէմ ոգւոց. *զկարս 12
ձեր 'ի մէջ հեթանոսաց պարկեշտս ցուցանել.
զի որով բամբասիցեն զձեզ իբրեւ զչարագործս՝
'ի բարւոք գործոցն ձերոց դիտեալ՝
փառաւոր առնիցեն զա̃ծ յաւուրն այցելու̃ե.
ԳԲ *Հնազանդ լերուք ա̃մ մարդկեղէն ստեղծուածոյ 13
վ̃ն տ̃ն. եթէ թագաւորի՝ իբրեւ առաւել
ումեք, *եթէ դատաւորաց՝ իբրեւ 'ի 14
նմանէ առաքելոց 'ի վրէժխնդրութիւն չարագործաց՝
և 'ի գովութիւն բարեգործացն. *Զի 15
այսպ̃ են կամք ա̃յ, բարեգործացն պապանձեցուցանել
զանզգամ մարդոյ զանգիտութիւն.
*Իբրեւ զազատս լինել՝ և մի՛ իբրեւ 16
պատրուակ չարութե̃ ունել զազատութիւնն.
այլ իբրեւ ա̃յ ծառայք. *Զամենեսեան պատուեցէք. 17
զեղբայրութիւն սիրեցէք. յա̃յ
երկերուք. զթագաւորս պատուեցէք. *Ծառայք 18
հնազանդ լինել յա̃մ երկիւղիւ տերանց,
ոչ միայն բարերարացն և հեզոց, այլ և կամակորացն.
*Զի այս շնորհք յա̃յ են, եթէ բարւոք 19
ինչ մտօք տանիցի ոք վշտաց յանիրաւի.
*Քանզի զի՞նչ երախտիք իցեն, եթէ յորժամ 20
մեղանչիցէք՝ տանջիցիք, և համբերիցէք. այլ

թէ բարիս գործիցէք՝ չարչարիցիք՝ և համբերիցէք,
21 այն շնորհք յայ՟ են. *Քանզի 'ի դոյն իսկ
կոչեցարուք. զի և քս՟ վս՟ ձեր մեռաւ, և ձեզ
եթող օրինակ՝ զի զհետ երթայցէք հետոց նր՟.
22 *որ ոչն արար մեղս, և ոչ գտաւ նենգութիւն
23 'ի բերան նր՟. *որ բամբասեալ՝ և ոչ փոխարէն
բամբասէր. չարչարեալ՝ և ոչ պահէր սպառնալիս.
բայց իրաւամբք մատնէր դատաւորին.
24 *որ զմեր մեղս իւրով մարմնովն վերացոյց 'ի
խաչափայտն. զի լիցուք զերծեալք 'ի մեղաց
անտի, և իցեմք արդարութեան կենակիցք. որոյ
25 վիրօքն բժշկեցայք. *Քանզի էիք իբրև
զոչխարս մոլորեալս. այլ այժմ դարձարուք
առ հովիւն և տեսուչ ոգւոց ձերոց.

ԳԼ. Գ.

1 Սոյնպէս և կանայք հնազանդ լինել արանց գդ
իւրեանց. զի եթէ իցեն ոք՟ ապստամբք 'ի բանէ
անտի յաղագս կանանց գնացից, և առանց
2 բանին իսկ շահեսցին, *դիտել երկիւղիւ զձեր
3 պարկեշտ գնացս. *Որոց լինիցի ոչ արտաքուստ
հիւսիւք և ոսկեհուռ ծամակալօք կամ
4 պաճուճեալ զգեստուք զարդ. *այլ ծածուկ
սրտին մարդն. անեղծութբ՟ հեզուն՝ և հանդարտուն
5 հոգւոյն, որ է առաջի այ՟ բազմապատիկ.
*Քանզի այնպէս երբեմն և կանայք՝ որ
յուսացեալ էին յած՟՝ զարդարէին զանձինս հն-

նազանդել իւրեանց արանց · *Ո՟պ և սառայ՝ 6
զի հնազանդ էր աբրահամու , և տ՟ր իւր կոչէր
զնա · որոյ եղերուք դուք որդիք · բարեգործք
էին , և ոչ կասկածէին՝ և ոչ 'ի միոջէ ինչ երկիւղէ ·
*Այնպ՟ և արք իմաստութ՟ բնակեսցեն 7
ընդ նս՟ · իբրև տկար անօթոյ առնիցեն պատիւ
կանանց՝ իբրև ժառանգակցաց շնորհացն կենաց ·
զի մի՛ խափան լինիցին աղօթիցն ձերոց ·
*Եւ գլուխ ա՟մի , զի համամիտք լիցէք՝ համակարիք 8
եղբայրասէրք՝ աղնուագութք խոնարհք ·
*Մի՛ չար փոխանակ չարի հատուցանել , 9
կամ բամբասանս ընդ բամբասանաց · այլ
զարին հակառակն՝ օրհնել , զի յայս իսկ կոչեցարուք՝
զի զօրհնութիւն ժառանգիցէք ·

Գ·Ի *Զի որ կամիցի զկեանս սիրել՝ և տեսանել 10
զաւուրս բարութ՟ , լռեցուսցէ զլեզու իւր 'ի չարուէ ,
և զշրթունս իւր 'ի չխօսելոյ զնենգութիւն ·
*Խոտորեսցի 'ի չարէ , և արասցէ ըզ 11
բարի · խնդրեսցէ զխաղաղութիւն , և երթիցէ
զհետ նր՟ · *Զի աչք տ՟ն 'ի վ՟ր արդարոց , և ականջք 12
նր՟ յաղօթս նց՟ · երեսք տ՟ն 'ի վ՟ր չարագործաց ·
*Եւ [illegible] իցէ որ չարչարիցէ զձեզ , եթէ 13
դուք բարւոյն նախանձաւորք լինիցիք · *Այլ 14
թէ և չարչարիցիք ևս յաղագս արդարութ՟ , երանելի
էք · բայց յերկիւղէ նց՟ մի՛ երկնչիցիք
և մի՛ խռովեսջիք · *Այլ զտ՟ր զնոյն զք՟ս՝ տ՟ր 15
առնիջիք 'ի սիրտս ձեր · Պատրաստիցէք տալ
պատասխանի ա՟մի որ խնդրիցէ զբանն · որ է

16 վս՟ յուսոյն ձերոյ. *Այլ հեզութ՟ և երկիւղիւ
ունիցիք բարս քաղցունս. զի որով չարախօ֊
սիցեն զձէնջ՝ յամօթ լիցին՝ որք բամբասեն ըզ
17 ձեր բարւոք գնացս ՚ի քս՟. *Զի լաւ է բարե֊
գործաց, եթէ կամիցին ըստ այ՟ կամացն չար֊
18 չարել՝ քան չարագործացն. *զի և քս՟ մի ան֊
գամ վս՟ մեղաց ՚ի վր՟ ձեր մեռաւ, արդարն ՚ի
վր՟ անարդարոց. զի զձեզ մերձեցուսցէ առ
այ՟. թէպէտ և մեռաւ մարմնով, այլ կենդանի
19 է հոգւով. *Որով և ոգւոցն՝ որ էին ՚ի բան֊
20 տին, երթեալ քարոզեաց՝ *երբեմն ապստամ֊
բելոցն, յորժամ՝ ներէր նց՟ այ՟ երկայնմտու֊
թիւնն յաւուրս Նոյի, յորս տապանն կազմէր.
յոր նուազունք՝ այսինքն ոգիք իբրև ութ ապ֊
21 րեցան ՚ի ջրոյն. *Որ և զձեզ ըստ նմին օրի֊
նակի կեցուսցէ մկրտութիւնն. ոչ զմարմնոյ
աղտն ՚ի բաց ընկենլով՝ այլ զբարւոք միտացն
22 հանդէս առ այ՟ ՚ի ձեռն յարութեանն յսի՟ քսի՟. *որ
է ընդ աջմէ այ՟՝ երթեալ յերկինս, ՚ի հնազան֊
դեալ նմա հրեշտակաց և իշխանութեանց և զօրութեանց.

ԳԼ. Դ.

1 Քսի՟ չարչարելն մարմնով վս՟ մեր, և դուք Գե
՚ի նոյն միտս վառեցարուք. զի որ չարչարի
2 մարմնով՝ դադարէ ՚ի մեղաց. *զի մի՛ ևս ըստ
մարդկան ցանկութեանց՝ այլ ըստ կամացն այ՟ կեց֊
3 ցէ զայլ ևս ժամանակն. *Քանզի բաւական է

անցեալ ժամանակն լինելոյ կամացն հեթանոսաց, որք գնային գիջութ̃ք՝ ցանկութ̃ք՝ գինեհարութ̃ք՝ անառակութ̃ք՝ արբեցութ̃ք՝ անօրէն կռապաշտութ̃ք. *Որում օտարացեալք՝ ոչ ընդ 4
ձեզ վարին 'ի նոյն անկարգուե̃ զեղխութիւն, և հայհոյեն. *Որ տայցեն պատասխանի այնմ, 5
որ 'ի պատրաստին ունի դատել զկենդանիս և զմեռեալս. *Զի 'ի այն իսկ և մեռելոց խոստա- 6
ցեալ է, զի դատեսցին ըստ մարդկան մարմնով՝ և կենդանի լինիցին ըստ ա̃յ հոգւով. *Ամենե- 7
ցուն վախճան մերձեալ է. զգաստացարուք այսուհետև՝ և լերուք զուարթունք յաղօթս.
*Նախ քան զա̃մ սէր սերտ ունել ընդ միմ- 8
եանս, զի սէր ծածկէ զբազմութիւն մեղաց.
*Օտարասէրք լինել ընդ միմեանս առանց 9
տրտնջելոյ. *Իւրաքանչիւր ոք ո̃պ և ընկալաւ 10
շնորհս ինչ՝ 'ի միմեանս զնոյն մատակարարել, իբրև զբարւոք հազարապետս պէսպէս շնորհացն աստուծոյ. *Եթէ ոք խօսեսցի՝ իբրև 11
զա̃յ պատգամս. եթէ ոք մատակարարիցէ՝ իբրև 'ի զօրութ̃է՝ զոր շնորհէ ա̃ծ. զի յա̃մ փառաւորեսցի ա̃ծ 'ի ձեռն յ̃սի ք̃սի, որում փառք և զօրութիւն յաւիտեանս ամէն.

Կ.Զ. *Սիրելիք՝ մի՛ օտարոտի համարել զեռանդն 12
ինչ՝ որ 'ի փորձութիւն ձեզ լինիցի, ո̃պ թէ օտար ինչ իրք ձեզ դիպիցին. *այլ իբրև հա- 13
ղորդեալք ք̃սի չարչարանացն՝ ուրախ լինիջիք, զի և 'ի յայտնուե̃ փառաց ն̃ր ցնծացեալք բերկ-

14 բեռջիք ։ *Իսկ եթէ նախատիցիք ես վ̃ն ան-
ուանն ք̃ի , երանելի էք ․ զի փառացն՝ և զօ-
րուե̄ անունն է , և ա̃յ հոգին 'ի վ̃ր ձեր հան-
15 գուցեալ է ։ *Մի՛ ոք 'ի ձէնջ չարչարեսցի իբրև
զսպանող , կամ՛ իբրև զգող , կամ՛ իբրև զչարա-
16 գործ , կամ՛ իբրև զօտարատեսուչ ։ *Այլ եթէ
իբրև զքրիստոնեայ՝ մի՛ ինչ ամաչեսցէ ․ այլ
փառաւոր առնիցէ զա̃ծ անուամբս այսուիկ ․
17 *Զի ժամանակ է սկիզբն լինելոյ դատաստա-
նին 'ի տանէն ա̃յ ․ զի եթէ նախ 'ի մէնջ , իսկ
զի՞նչ կատարած այնոցիկ իցէ՝ որ ոչ հաւանե-
18 ցան ա̃յ աւետարանին ․ *Եւ եթէ արդարն հա-
զիւ կեցցէ , իսկ ամբարիշտն և մեղաւորն ու՞ր
19 գտանիցի ․ *Ո̃ղ զի որ չարչարիցին ըստ ա̃յ
կամացն , հաւատարիմ՛ հաստչին աւանդես-
ցեն զիւրեանց ոգիս բարերարութեամբք ․

ԳԼ․ Ե․

1 Զերիցունս այսուհետև աղաչեմ՝ իբրև Գ̃Ե
երիցակից՝ և վկայ չարչարանացն ք̃ի , որ և
հանդերձեալ փառացն յայտնելոյ հաղորդ ․
2 *արածեցէք՝ որ 'ի ձեզ հօտդ է ա̃յ ․ վերակացու
լինել՝ մի՛ իբրև ակամայ՝ այլ կամաւ ըստ ա̃յ ․
3 մի՛ զօշաքաղութ̃բ , այլ յօժարութ̃բ ․ *մի՛ իբրև
տիրելով վիճակացն , այլ լինել օրինակ հօ-
4 տին ․ *Զի յերևել հովուապետին՝ ընդունի-
5 ջիք զանթառամ փառացն պսակ ․ *Սոյնպէս

և երիտասարդք հնազանդ լերուք ծերոց.
Ամենեքեան ընդ միմեանս զխոնարհութիւն
ունիցիք. զի ած ամբարտաւանից հակառակ
կայ, տայ շնորհս խոնարհաց. *Խոնարհեցարուք 6
ընդ հզօր ձեռամբն այ. զի զձեզ բարձրացուսցէ
'ի ժամանակի. *Զամ հոգս ձեր 7
ընկեցէք 'ի նա, զի նա է՝ որ հոգայ վս ձեր.
ԴԿ *Արթուն լերուք՝ հսկեցէք, զի ոսոխն 8
ձեր սատանայ իբրև զառիւծ գոչէ, շրջի և
խնդրէ՝ թէ զո՛ կլանիցէ. *Որում 'ի դիմի 9
հարկանիցիք հաստատեալք հաւատովք գիտասջիք
զնոյն անցս չարչարանաց եղբայրութեան
ձերոյ՝ յաշխարհի յանձինս կատարել.
*Եւ ած ամ շնորհաց՝ որ կոչեաց զձեզ յիւր 10
'ի յաւիտենական փառսն քի յի, որում
փոքր մի եղերուք չարչարակիցք, նա կազդուրեսցէ
կարողացուսցէ հաստատահիմն
արասցէ. *Նմա իշխանութիւն և փառք յաւիտեանս. 11
ամէն. *Ի ձեռն սիղուանոսի հաւատարիմ 12
եղբօր, որպէս կարծեմ՝ փոքր 'ի
շատէ գրեցի առ ձեզ մխիթարել. և 'ի վերայ
սորին վկայել. զի և այս ճշմարիտ շնորհք
այ են՝ յոր հաստատեալ կայցէք. *Ողջոյն 13
տայ ձեզ՝ որ 'ի բաբելոն ընտրելակից եկեղեցին
է. և մարկոս որդին իմ. *Ողջոյն տայջիք 14
միմեանց 'ի համբոյր սրբութեան. Խաղաղութիւն
ընդ ձեզ ամենեսին, որ էք 'ի քրիստոս
յիսուս. ամէն.

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ
ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
ԵՐԿՐՈՐԴ

ԳԼ. Ա.

1 ՇՄԱՒՈՆ պետրոս ծառայ և առա- Դ̃Բ
քեալ յիսուսի քրիստոսի, որոց հան-
գիտապատիւ մեզ հասէքդ հաւատոց յար-
դարութիւն աստուծոյ մերոյ և փրկչին յ̃ի
2 քրիստոսի։ *Շնորհք ընդ ձեզ՝ և խաղաղու-
թիւն բազմասցի գիտութեամբն աստուծոյ՝
3 և յիսուսի քրիստոսի տեառն մերոյ։ *Որպէս
ամենայն ինչ մեզ՝ իւրոյ աստուածեղէն զօ-
րութեանն առ 'ի կեանս և յա̃ծպաշտութիւն
շնորհեալ· 'ի ձեռն գիտութեան այնորիկ,
ո̃ կոչեացն զմեզ յիւր 'ի փառսն և 'ի վայել-
4 չութիւն։ *Որով մեծամեծքն և պատուա-

կան աւետիք պարգեւեալ են մեզ. զի նոքիմբք աստուածեղէն բնութեանն լինիցիմք հաղորդակիցք, փախուցեալք 'ի ցանկութեանց աշխարհիս և յապականութեանց. *Եւ սմին 5 այսմիկ զամենայն փոյթ 'ի մէջ առեալ՝ ձեռովք հաւատովքն մատակարարեսջիք զառաքինութիւն, և առաքինութեամբն զգիտութիւն, *և գիտութեամբն զժուժկալութիւն, 6 և ժուժկալութբ̃ն զհամբերութիւն, և համբերութեամբն զաստուածպաշտութիւն, *և 7 աստուածպաշտութբ̃ն զեղբայրսիրութիւն, և եղբայրսիրութեամբն զսէր. *Զայսոսիկ ձեր 8 յանձին կալեալ՝ և 'ի սոյն յաճախեալ, ոչ դատարկս և անպտուղս զձեզ հաստատիցեն 'ի տեառն մերոյ յ̃սի ք̃սի գիտութիւնն. *Իսկ 9 յոր ոչ իցեն սոքա մերձ, կոյր է և զաչացու. 'ի մոռացօնս դարձուցեալ զսրբութիւն առաջնոց իւրոյն յանցանաց. *Վասն որոյ 10 եղբարք՝ առաւել փութասջիք՝ զի բարեացն գործովք հաստատուն զձեր կոչումն, և զընտրութիւն պահիցէք. Զայս արարեալ՝ ոչ երբէք յանցանիցէք. *զի այսպէս առատապէս շնորհեսցի ձեզ մուտ 'ի յաւիտենական 11 արքայութիւն տեառն մերոյ և փրկչին յիսուսի քրիստոսի.

ԳԳ *Որով պատրաստիցեմ միշտ ձեզ յիշեցուցանել վ̃ն սոցին առաւել եւ գիտակացն՝ 12 և հաստատելոցն՝ եկեալ հասեալ ճշմարտու-

3 թեանն . *Քանզի իրաւունս համարիմ մինչդեռ
եմ 'ի մարմնի աստ՝ զարթուցանել զձեզ
14 յիշատակօք . *Գիտեմ թէ վաղվաղակի է
լինելոց մերկանալ յինէն մարմնոյս . որպէս և
15 տէր մեր յիսուս քրիստոս եցոյց ինձ . *Եւ
փութամ ճեպիմ միշտ զձեզ յորդորել . զի և
յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս՝ առնիցէք ըզ
16 յիշատակս այսոցիկ . *Քանզի ոչ եթէ պաճուճեալ
ինչ առասպելաց զհետ երթեալ ցուցաք
ձեզ զտեառն մերոյ յիսուսի քրիստոսի
զզօրութիւնն և զգալուստն . այլ մեզէն եղեալ
17 ակնատեսք նորա մեծութեան . *Քանզի
առեալ յաստուծոյ և 'ի հօրէ զփառս և
զպատիւ . եկեալ յայնպիսի բարբառոյ՝ 'ի մեծ
վայելչութեան փառաց անտի . եթէ դա է
18 որդի իմ սիրելի՝ ընդ որ ես հաճեցայ . *Եւ
զայս բարբառ մեք իսկ լուաք եկեալ յերկնից՝
որ ընդ նմա իսկ էաք 'ի սուրբ լերինն .
19 *Եւ ունիմք հաստատագոյն զբանն մարգարէական .
որում եթէ անսայցէք՝ բարւոք առնէք .
իբրև ճրագի՝ որ տայցէ լոյս 'ի խաւարչտին
տեղւոջ , մինչև տիւն լուսաւորեսցէ ,
և արուսեակն ծագեսցէ 'ի սիրտս ձեր .
20 *Բայց նախ այսմ գիտակ լինիջիք . զի ԴԴ
ա̃մ մարգարէութիւն իւրոց գրոց լուծումն ոչ
21 ունի . *Քանզի ոչ եթէ ըստ կամաց մարդկան
տուաւ մարգարէութիւն երբէք , այլ 'ի
հոգւոյն ս̃բյ կրեալք՝ խօսեցան մարդիկ յա̃յ .

ԳԼ. Բ.

Լինէին և սուտ մարգարէք 'ի ժողովրդե՟ն՝ 1
ո՟ր և այժմ 'ի ձեզ լինիցին սուտ վարդապետք. որք սպրդեալ մուծանեն հերձուածս կորստեան, և զօրս տէրն գնեաց ըզնոսա ուրացեալ՝ ածեն 'ի վերայ անձանց զարագահաս կորուստ։ *Եւ բազումք անկեալ 2
երթիցեն զհետ ն՟ց անառակութեանցն. վ՟
որոյ ճշմարտութեանն ճանապարհ հայհոյեսցի։
*Եւ ագահութեամբ մտացածին բանիւք առնիցեն 3
զձեզ վաճառանդի. որոց դատաստանն
'ի բնէ ոչ դատարկանայ, և կորուստն ն՟ց ոչ
նիրհեսցէ. *Զի եթէ 'ի հրեշտակսն յանցուցեալս 4
աստուած ոչ խնայեաց, այլ խաւարին
կապանօք արկեալ 'ի տարտարոսն՝ ետ պահել
'ի դատաստան։ *Նա և ոչ 'ի սկզբանն աշխարհի 5
խնայեաց. բայց զութերորդն զնոյ՝ զարդարութե՟ն
քարոզ պահեաց 'ի ջրհեղեղէ աշխարհի՝
ամբարշտելոցն ածեալ։ *Եւ զքաղաքս սոդոմացւոցն 6
և գոմորացւոց դարձուցեալ յաճիւն՝
դատեցաւ, օրինակ առ յապայ ամբարշտելոցն
կացուցանէր. *Եւ զարդարն զղովտ ձանձրացեալ 7
յանկարգ գիջութե՟ն գնացից փըրկեաց. *քանզի ականատես և ականջալուր 8
արդարն բնակեալ 'ի մէջ ն՟ց, օր ըստ օրէ զիւր
ս՟բ հոգին նոցա անօրէն գնացիւքն տանջէր։

9 *Գիտէ տէր զաստուածապաշտս փրկել 'ի Դե
փորձութենէ, և զանիրաւս պահել 'ի տանջանս
10 աւուրն դատաստանի. *մանաւանդ որ
զհետ մարմնոյ պղծալից ցանկութեանց իցեն
երթեալ. արհամարհողք տէրութեան՝ ժպիրհք
յանդգունք՝ չզանգիտեն զփառս հայհոյել.
11 *Ուր հրեշտակք զօրութեամբ և կարողութբ̃
քան զնոսա մեծամեծք՝ չածեն զնոքօք 'ի
12 տեառնէ զհայհոյութեն դատաստան. *Այլ
սոքա իբրև զանխօս անասունս ըստ բնածին
բարուցն յեղծումն և յապականութիւն՝ որոց
չեն գիտակ, հայհոյեն յապականութեն իւրեանց,
13 և ապականեսցին՝ *տանջեալք 'ի
վարձուց անիրաւութե. որ ցանկութիւն զաւուրն
փափկութիւն համարին. բծկանք աղարտաւորք՝ փափկացեալք 'ի պատիրս իւրեանց
14 լեալ ձեզ խրախճանակիցք. *Աչս
ունին հանդոյնս պոռնկաց՝ անդադարս 'ի
մեղաց, պատրեն զանձինս յողդողդաց. որ
ունին սիրտ հարեալ զագահութե. մանկունք
15 անիծից. *Թողեալ զուղղորդ ճանապարհն՝
մոլորեցան. զհետ երթեալ ճանապարհին
Բաղաամայ Բէովրեան՝ զվարձս անիրաւութե
16 սիրեցին. *որ կշտամբանս իւրոյ անօրէնութեն
ստացաւ զէշն անխօսուն, մարդկեղէն բարբառովն բարբառեալ՝ արգել զմարգարէին
17 զանօրէնութիւն. *Այսպիսիքն են աղբիւրք
անջրդիք՝ և մէգք վարեալք 'ի մրրկէ. որոց

*աղջամուղջք խաւարին յաւիտեան պահեալ
կան . *Քանզի մեծաբանս սնոտեաց բար- 18
բառեալ պատրեն գիջութեամբք ցանկու-
թեամբք մարմնոյ զայնոսիկ՝ որ ստոյգն փախ-
չիցին յայնցանէ՝ որ 'ի մոլորութեանն շրջէ-
ցին . *Նոցա ազատութիւն խոստանան , և 19
ինքեանք ապականութեանն ծառայք են .
զի որով իւիք յաղթիցի ոք , նորին և ծառայ
է . *Զի եթէ փախուցեալք 'ի պղծութեանց 20
աշխարհի գիտութեամբ տեառն մերոյ և
փրկչին յիսուսի քրիստոսի , և դարձեալ ընդ
նոյնս շաղեալք պատիցին՝ եղև նոցա վախճանն
չար քան զառաջինն . *Զի լաւ էր նոցա՝ և- 21
թէ բնաւ իսկ չէր ծանուցեալ զարդարութեն
ճանապարհ , քանզի ծանեան՝ և յետս կացին
'ի սուրբ պատուիրանէն՝ որ նոցա աւանդե-
ցաւ . *Եկեալ 'ի դէպ նոցա ճշմարիտ առա- 22
կին զգօնութեան , եթէ շուն դառնայ անդ-
րէն 'ի փսխած իւր , և խոզ լուացեալ՝ ընդ
տիղմ թաւալեալ .*

ԳԼ. Գ.

Դ.Զ. *Զայս ձեզ սիրելիք՝ երկրորդ թուղթ 1
գրեմ . որով զարթուցից 'ի յիշատակ զհաստա-
տուն միտս ձեր . *յիշել զյառաջագոյն ա- 2
սացեալ պատգամս 'ի սրբոց մարգարէից և
յառաքելոցն ձերոց , զպատուէրս տեառն և*

3 փրկչին . *Բայց զայս նախ գիտասջիք, զի
յաւուրս յետինս եկեսցեն արհամարհողք՝
այպանողք, որ ըստ իւրեանց ցանկութեանց
4 գնասցեն . *և ասիցեն՝ ո՞ւր են աւետիք գալստեան
նորա . զի յորմէ հետէ հարքն ննջեցին՝
ամենայն ինչ նոյնպէս կայ մնայ ՚ի սկզբանէ
5 արարածոց . *Եւ զայն մոռացեալ լիցէ
նոցա՝ որ զայն կամին . եթէ երկինք եղեն
՚ի սկզբանէ՝ և երկիր ՚ի ջրոց, և ջուրք հաստատեալ
6 բանիւն աստուծոյ . *վասն որոյ
երբեմն աշխարհ ջրհեղեղաւ ապականեալ
7 կորեաւ . *Եւ այժմ երկինք և երկիր նովին
բանիւ գանձեալ են, հրոյ պահեալք յօրն
դատաստանի՝ և կորստեան ամբարիշտ մարդկան
8 . *Եւ այս և մի՛ լիցի ՚ի ձէնջ ծածկեալ
սիրելիք, զի մի օր տեառն իբրև հազար
9 ամ է, և հազար ամ իբրև զմի օր . *Ոչ յամեցուցէ
տէր զաւետիսն՝ որպէս ոմանք յամըր
համարին, այլ երկայնամիտ լինի առ
ձեզ, քանզի ոչ կամի՝ եթէ ոք կորիցէ, այլ
զամենեցուն հասանել յապաշխարութիւն .

10 *Այլ եկեսցէ օր տեառն իբրև գող . Դէ
յորում երկինք տագնապաւ անցցեն, և բնութիւնք
հրով կիզեալ լուծցին, և երկիր՝
11 և որ նմա գործք գտանիցին . *Եւ ՚ի լուծանել
այսպէս այսր ամենայնի, ո՞րպիսի ինչ
պարտ իցէ ձեզ գտանել . այլ սուրբ և աստուածապաշտ
12 կարգաւ ակն ունել, *և փու-

*թալ հասանել գալստեան աւուրն տեառն․ յորում
երկինք հրայրեացք լուծանիցին , և բընութիւնք
հրդեհեալ հալիցին․ *Նորոյ երկնից՝ 13
և նորոյ երկրի ըստ աւետեացն հայեցեալ
ապաւիցեմք , յորս արդարութիւնն բընակէ․
*Վասն որոյ սիրելիք՝ այսոցիկ ըսպասեալ , 14
փոյթ յանձին ունիջիք՝ անբիծք և
անարատք գտանել նմա 'ի խաղաղութիւն .
*և զտեառն երկայնմտութիւնն՝ փրկութիւն 15
համարիջիք․ Զոր օրինակ և սիրելի եղբայրն
մեր պօղոս՝ ըստ շնորհելոյ իմաստութեանն
նմա յաստուծոյ՝ գրեաց ձեզ․ *որպէս և յամենայն 16
իսկ թուղթսն խօսի վասն այսոցիկ․
յորս գտանի ինչ ինչ դժուարիմաց , զոր անուսմունքն
և յողդողդքն կամակորեն․ որպէս
և զա՟մ իսկ գիրս առ իւրեանց անձանցն կորուստ․
*Դուք այսուհետև սիրելիք՝ իբրև 17
զկանխագէտս զգուշասջիք , զի մի՛ անառակ
մոլութեամբն զգածեալք՝ անկանիջիք յաստեաց
հաստատութեանն․ *Աճեցէք շնորհօք 18
և գիտութեամբն տեառն մերոյ և փրկչին
յիսուսի քրիստոսի․ Նմա փառք՝ և այժմ,
և յօրն յաւիտենից . ամէն .*

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՒՂԻԿԵԱՑ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՑ
ԱՌԱՋԻՆ

ԳԼ. Ա.

1 Որ էրն 'ի սկզբանէ, զորմէ լուաքն՝ ո֊ ԽԿ
րում ականատեսն իսկ եղեաք. ընդ
որ հայեցաքն, և ձեռք մեր շօշափեցին 'ի
2 վերայ բանին կենաց. *Եւ կեանքն յայտ֊
նեցան, և տեսաք՝ և վկայեմք և պատմեմք
ձեզ զյաւիտենական կենացն. որ էր առ
3 հօր՝ և երևեցաւ մեզ. *Զոր տեսաքն և
լուաք՝ պատմեմք և ձեզ, զի և դուք հա֊
ղորդութիւն ունիցիք ընդ մեզ. և մեր հա֊
ղորդութիւնն իցէ ընդ հօր՝ և ընդ որդւոյ
4 իւրում յիսուսի քրիստոսի. *Եւ այս գրեմք
ձեզ, զի ձեր ուրախութիւնն կատարեալ լի֊

ցի . * Եւ այս են աւետիքն՝ զոր լուաք առ 5
'ի նմանէ՝ եւ պատմեմք ձեզ . զի աստուած
լոյս է , եւ խաւար 'ի նմա չիք եւ ոչ մի . * Եթէ 6
ասիցեմք՝ եթէ հաղորդութիւն ունիմք
ընդ նմա՝ եւ 'ի խաւարի շրջիցիմք , ստեմք՝
եւ ոչ առնեմք զճշմարտութիւնն . * Իսկ եթէ 7
ընդ լոյս գնայցեմք՝ որպէս եւ նա լոյս է ,
հաղորդութիւն ունիմք ընդ միմեանս . եւ արիւնն
յիսուսի որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն
մեղաց . * Եթէ ասիցեմք՝ եթէ մեղս 8
ինչ մեք ոչ ունիմք , զանձինս խաբեմք . եւ
ճշմարտութիւն 'ի մեզ ոչ գոյ . * Այլ եթէ 9
խոստովան լինիցիմք զմեղս մեր , հաւատարիմ
է նա՝ եւ արդար առ 'ի թողուլ զմեղս
մեր եւ սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ
. * Եւ եթէ ասիցեմք՝ եթէ ոչինչ մեղաք , 10
սուտ առնեմք զնա , եւ բան նորա ոչ է 'ի մեզ .

ԳԼ . Բ .

ԽԲ Որդեակք իմ , զայս գրեմ ձեզ՝ զի մի՛ 1
մեղիջիք . եւ եթէ մեղիցէ ոք , ունիմք բարեխօս
առ աստուած զյիսուս քրիստոս՝ զարդարն՝
եւ զանարատ . * Եւ նա է քաւութիւն 2
մեղաց մերոց . եւ ոչ եթէ մերոյն միայն՝ այլ
եւ ամենայն աշխարհի . * Եւ յայսմիկ գիտեմք՝ 3
եթէ ծանեաք զնա , եթէ զպատուիրանս նորա
պահիցեմք . * Որ ասիցէ՝ եթէ ծանեայ 4

զնա, և զպատուիրանս նորա ոչ պահիցէ,
սուտ է՝ և ճշմարտութիւն ՚ի նմա ոչ գոյ.
5 * Իսկ որ պահիցէ զբան նորա, արդարև ՚ի
նմա կատարեալ է սէրն Աստուծոյ. այսուիկ
6 ճանաչեմք՝ եթէ ՚ի նմա եմք. * Որ ասիցէ ՚ի
նմա բնակել, այնպէս պարտի գնալ՝ որպէս
և նայն գնաց.

7 * Սիրելիք՝ ոչ եթէ նոր ինչ պատուիրան՝ ԽԴ
գրեմ ձեզ, այլ զհին պատուիրանն՝ զոր ՚ի
սկզբանէ ունէիք. և հին պատուիրան բանն
8 է զոր լուարուք. * Դարձեալ նոր պատուիրան
գրեմ ձեզ՝ որ է ճշմարիտ ՚ի նմին՝ և
՚ի ձեզ. զի խաւարն անցանէ, և լոյսն ճշմարիտ
9 արդէն իսկ երևի. * Որ ասէ եթէ ՚ի
լոյսն իցէ՝ և զեղբայր իւր ատիցէ, սուտ է՝
10 և ՚ի խաւարի է տակաւին. * Որ սիրէ զեղբայր
իւր, ՚ի լոյս բնակէ՝ և գայթագղութիւն
11 ՚ի նմա չիք. * Իսկ որ ատեայ զեղբայր իւր՝
՚ի խաւարի է, և ընդ խաւար շրջի. և ոչ
գիտէ յո՛ երթայ, զի խաւարն կուրացոյց
12 զաչս նորա. * Գրեմ ձեզ որդեակք՝ զի թողեալ
են ձեզ մեղքն ձեր վասն անուան նորա.
13 * Գրեմ ձեզ հարք՝ զի ծանեայք դուք
զայն՝ որ ՚ի սկզբանէն է. Գրեմ ձեզ երիտասարդք՝
զի յաղթեցիք դուք չարին.
14 * Գրեցի ձեզ մանկունք՝ զի ծանեայք դուք
զՀայրն. Գրեցի ձեզ հարք՝ զի ծանեայք դուք
զայն որ ՚ի սկզբանէն է. Գրեցի ձեզ երի-

տասարդք՝ զի էք դուք հզօրացեալք՝ և
բանն աստուծոյ 'ի ձեզ բնակէ, և յաղթեցիք
դուք չարին. *Մի՛ սիրէք զաշխարհ՝ և մի՛ 15
որ ինչ յաշխարհի է. *Եթէ ոք սիրէ զաշխարհ, 16
ոչ է 'ի նմա սէր հօր. զի ամենայն
որ ինչ յաշխարհի է՝ ցանկութիւն է մարմնոյ,
և ցանկութիւն է աչաց, և ամբարտաւանութիւն
աստի կենացս. որ ոչ է առ 'ի հօրէ՝
այլ յաշխարհէ աստի է. *Եւ աշխարհս 17
անցանէ՝ և ցանկութիւն նորա. իսկ որ առնէ
զկամս աստուծոյ՝ մնայ յաւիտեան.

ԵԴ *Որդեակք յետին ժամանակ է, և որպէս 18
լուարուք՝ եթէ նեռն գալոց է, և արդէն
իսկ նեռինք բազումք եկեալ են, որով
մարթեմք իմանալ՝ եթէ յետին ժամանակ է.
*Առ 'ի մէնջ ելին, այլ ոչ էին 'ի մէնջ. զի 19
եթէ 'ի մէնջ էին՝ ապա առ մեզ մնային. այլ
զի յայտնի լինիցին՝ եթէ ոչ էին ամենեքին
նոքա 'ի մէնջ. *Եւ դուք օծութիւն 20
ունիք առ 'ի սրբոյն, և գիտէք ամենեքին.
*Ոչ գրեցի ձեզ՝ եթէ ոչ գիտէք զճշմարտութիւնն, 21
այլ թէ գիտէք զնա. և թէ՝ զի ամենայն
ստութիւն ոչ է 'ի ճշմարտութենէ
անտի. *Իսկ ո՞ իցէ սուտ, եթէ ոչ որ ուրանայ 22
եթէ յիսուս չէ քրիստոսն. նա իսկ է
նեռն, որ ուրանայ զհայր և զորդի. *Ամենայն 23
որ ուրանայ զորդի, և ոչ զհայր ընդունի.
իսկ որ խոստովանի զորդի, նա և զհայր

24 ընդունի ։ *Դուք՝ զոր լուարուքն 'ի սկզբանէ՝
'ի ձեզ բնակեսցէ · զի եթէ 'ի ձեզ բնակեսցէ՝
զոր 'ի սկզբանէն լուարուք, և դուք
25 յորդի և 'ի հայր բնակեսջիք ։ *Եւ այս են
աւետիքն՝ զոր աւետարանեաց նա մեզ՝ ըզ
կեանս յաւիտենականս ։

26 *Զայս գրեցի ձեզ, զի մի՛ ոք զձեզ մոլորեցուցանիցէ ։ ԵԵ
27 *Եւ դուք օծութիւնն՝ զոր
ընկալարուք 'ի նմանէ՝ բնակեսցէ 'ի ձեզ · և
չէ ինչ պիտոյ՝ թէ ոք զձեզ ուսուսցէ, այլ
որպէս զի նորա օծութիւնն ուսուցանիցէ ըզ
ձեզ վասն ամենայնի · և ճշմարիտ է՝ և չէ
սուտ · և որպէս ուսոյցն զձեզ, կայք 'ի նմա ։
28 *Եւ այժմ որդեակք՝ կացէք 'ի նմին · զի եթէ
յայտնեսցի, ունիցիմք համարձակութիւն,
և մի՛ ամաչեսցուք 'ի նմանէ 'ի գալստեանն
29 նորա ։ *Զի եթէ գիտիցէք՝ եթէ արդար է
նա, իմասջիք՝ եթէ ամենայն որ առնէ զարդարութիւն՝
առ 'ի նմանէ է ծնեալ ։

ԳԼ. Գ.

1 Տեսէք՝ ո՞րպիսի սէր շնորհեաց մեզ հայր,
զի որդիք աստուծոյ կոչեսցուք և եմք · վասն
այսորիկ աշխարհ ոչ ճանաչէ զմեզ՝ քանզի
ոչ ծանեաւ զնա ։
2 *Սիրելիք՝ այժմ որդիք աստուծոյ եմք, ԵԶ
և չեւ ևս է յայտ՝ եթէ զի՛նչ լինելոց իցեմք ·

գիտեմք՝ զի յորժամ նա յայտնեսցի՝ նման
նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա՝
որպէս և էն. *Եւ ամենայն որ ունի զայս 3
յոյս յանձին՝ սրբէ զանձն իւր՝ որպէս և նայն
սուրբ է. *Ամենայն որ զմեղս գործէ, նաև 4
զանօրէնութիւն առնէ, և ինքն իսկ մեղքն
անօրէնութիւն է. *Եւ գիտեմք՝ զի նա յայն 5
սակս յայտնեցաւ՝ զի զմեղս բարձցէ, և 'ի
նմա մեղք ոչ են. *Ամենայն որ 'ի նմա է 6
հաստատեալ՝ ոչ մեղանչէ. և ամենայն որ
մեղանչէ, ոչ եսես զնա՝ և ոչ ծանեաւ զնա.
*Մանկունք՝ մի՛ ոք զձեզ խաբեսցէ. որ առնէ 7
զարդարութիւն, արդար է՝ որպէս և նայն
արդար է. *Եւ որ առնէ զմեղս՝ 'ի սատանայէ է, 8
զի 'ի սկզբանէ սատանայ մեղանչէ.
վասն այսորիկ յայտնեցաւ որդին աստուծոյ՝
զի լուծցէ զգործս սատանայի. *Ամենայն 9
որ յաստուծոյ է ծնեալ՝ մեղս ոչ առնէ, զի
սերմն նորա 'ի նմա մնայ. և ոչ կարէ մեղանչել,
զի յաստուծոյ է ծնեալ. *Այսուիկ 10
յայտնի են 'ի միմեանց որդիք աստուծոյ՝ և
որդիք սատանայի.

ԽԵ. Ամենայն որ ոչ առնէ զարդարութիւն՝
չէ նա յաստուծոյ, և որ ոչ սիրէ զեղբայր
իւր. *զի այս է պատուիրանն՝ զոր լուարուք 11
'ի սկզբանէ՝ զի սիրեսցուք զմիմեանս. *Ոչ 12
որպէս կայէնն 'ի չարէ անտի էր՝ և սպան
զեղբայր իւր, և յո՞ր սակս սպան զնա. զի

իւր գործքն չար էին, և եղբօրն բարիք·
13 *Եւ մի՛ ինչ զարմանայք եղբարք եթէ աշխարհ
14 զձեզ ատեայ· *Մեք գիտեմք զի
փոխեցաք ՚ի մահուանէ ՚ի կեանս, քանզի
սիրեմք զեղբարս· իսկ որ ոչն սիրէ, անդէն
15 ՚ի մահուն մնայ· *Ամենայն որ ատեայ զեղբայր
իւր՝ մարդասպան է· և գիտէք՝ զի ամենայն
մարդասպան ոչ ունի կեանս յաւիտենականս
16 յանձին հաստատեալ· *Այսուիկ
գիտացաք զսէրն (աստուծոյ)· զի նա զանձն
իւր եդ վասն մեր· և մեք վասն եղբարց մերոց
17 պարտիմք դնել զանձինս· *Որ ունիցի
զկեանս ինչ զաշխարհիս՝ և տեսանիցէ զեղբայր
իւր կարօտեալ իւիք՝ և փակիցէ ընդ
գութս իւր առ ՚ի նմանէ, զիա՞րդ սէրն աստուծոյ
՚ի նմա իցէ բնակեալ·

18 *Որդեակք՝ մի՛ բանիւք և լեզուօք սիրեսցուք, ԶԿ
այլ արդեամբք և ճշմարտութբ՟·
19 *Եւ այսուիկ լիցուք ծանուցեալք՝ եթէ ՚ի
ճշմարտութենէ անտի իցեմք· և առաջի
նորա արասցուք հանդէս սրտից մերոց·
20 *Եթէ ստգտանիցեն զմեզ սիրտք մեր՝ այլ
աստուած մեծ է քան զսիրտս մեր՝ և գիտէ
21 զամենայն· *Սիրելիք՝ եթէ սիրտք մեր ընդ
մեզ ոչ ստգտանիցեն, համարձակութիւն ունիմք
22 առ աստուած· *և զոր ինչ հայցեմք,
առնումք ՚ի նմանէ· զի զպատուիրանս նորա
պահեմք, և զհաճոյս առաջի նորա առնեմք·

* Եւ այս է պատուիրան նորա, զի հաւատասցուք 23
յանուն որդւոյ նորա յիսուսի քրիստոսի,
և սիրեսցուք զմիմեանս, որպէս և ետ
մեզ պատուէր. * Եւ որ պահէ զպատուիրանս 24
նորա, ՚ի նմա է հաստատեալ՝ և նա ՚ի
նմա. և յայսմանէ գիտեմք եթէ բնակէ ՚ի
մեզ ՚ի հոգւոյ անտի՝ զոր ետ մեզ.

ԳԼ. Դ.

ՁԲ Սիրելիք՝ մի՛ ամենայն հոգւոյ հաւատայք, 1
այլ ընտրեցէք զհոգիսն՝ եթէ յաստուծոյ
իցեն. զի բազում սուտ մարգարէք
ելեալ են յաշխարհ. * Եւ մեք այսուիկ ճանաչեմք 2
զհոգին աստուծոյ. Ամենայն հոգի՝
որ խոստովանի զյիսուս քրիստոս մարմնով եկեալ,
յաստուծոյ է նա. * և ամենայն հոգի 3
որ ոչ խոստովանի զյիսուս մարմնով եկեալ,
չէ նա յաստուծոյ. և այս նեռինն է, զորմէ
լուարուք՝ եթէ գալոց է, և արդէն իսկ յաշխարհի
է. * Դուք յաստուծոյ էք որդեակք, 4
և յաղթեցիք նոցա. զի մեծ է որ ՚ի ձեզդ է՝
քան զայն որ յաշխարհին է. * Նոքա յաշխարհէ 5
են, վասն այնորիկ յաշխարհէ խօսին,
և աշխարհ լսէ նոցա. * Մեք ա͞յ եմք, որ 6
զաստուած ճանաչէ՝ լսէ մեզ, և որ չէ յաստուծոյ՝
ոչ լսէ մեզ. այսուիկ ճանաչեմք զհոգին
ճշմարտութեան և զհոգին խաբէութեան.

7 *Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս, զի սէր ՋԳ
յաստուծոյ է. եւ ամենայն որ սիրէ՝ յաստու֊
8 ծոյ է ծնեալ՝ եւ ճանաչէ զաստուած. *Եւ
որ ոչն սիրէ՝ ոչ ճանաչէ զաստուած, զի ա̃ծ
9 սէր է. *Եւ զի յայտ երեւեցաւ սէրն աս֊
տուծոյ 'ի մեզ, զի զորդին իւր միածին ա֊
ռաքեաց յաշխարհ, զի եղիցուք նովաւ
10 կենդանիք. *Յայս է սէրն. ոչ զի մեք սի֊
րեցաք զաստուած՝ այլ զի նա սիրեաց զմեզ,
եւ առաքեաց զորդին իւր 'ի քաւութիւն մե֊
11 ղաց մերոց. *Սիրելիք՝ եթէ աստուած այն֊
պէս սիրեաց զմեզ, ապա եւ մեք պարտիմք
զմիմեանս սիրել.

12 *Զաստուած ուրուք երբէք չէ տեսեալ. ՋԴ
եթէ սիրեսցուք զմիմեանս՝ աստուած 'ի մեզ
բնակէ, եւ սէր նորա 'ի մեզ կատարեալ է.
13 *Այսուիկ գիտեմք, եթէ մեք 'ի նմա բնա֊
կեալ եմք՝ եւ նա 'ի մեզ, զի 'ի հոգւոյն իւր֊
14 մէ ետ մեզ. *Եւ մեք տեսաք՝ եւ վկայեմք
զի հայր առաքեաց զորդին իւր փրկիչ աշ֊
15 խարհի. *Որ ոք խոստովանեսցի՝ եթէ յի֊
սուս է որդի աստուծոյ, աստուած 'ի նմա
16 բնակէ՝ եւ նա յաստուած. *Եւ մեք հաւա֊
տացաք, եւ ծանեաք զսէրն աստուծոյ՝ զոր
ունի առ մեզ. Աստուած սէր է, եւ որ կայ
'ի սէրն՝ բնակեալ է յաստուած, եւ աստուած
17 'ի նմա բնակէ. *Յայսմիկ կատարեալ է սէրն
նորա 'ի մեզ. զի համարձակութիւն ունի֊

ցիմք յաւուրն դատաստանի։ զի որպէս և
նայն է՝ նոյնպէս և մեք եմք յաշխարհի յայսմիկ։
*Երկիւղ ոչ գոյ 'ի սէր, այլ սէրն կատարեալ 18
'ի բաց մերժէ զերկիւղն․ զի երկիւղ
ընդ տանջանօք է․ իսկ որ երկնչին,
չէ կատարեալ 'ի սէրն։ *Մեք սիրեսցուք 19
զաստուած, վասն զի նախ սիրեաց զմեզ։
*Եթէ ոք ասիցէ՝ եթէ սիրեմ՛ զաստուած, 20
և զեղբայր իւր ատիցէ, սուտ է․ որ ոչ սիրէ
զեղբայր իւր՝ զոր տեսանէ, զաստուած զոր
ոչն տեսեալ՝ զի՞արդ կարիցէ սիրել։ *Եւ զայս 21
պատուէր ունիմք առ 'ի նմանէ, զի որ սիրէ
զաստուած՝ սիրէ նա և զեղբայր իւր։

ԳԼ․ Ե․

ՁԶ Ամենայն որ հաւատայ՝ եթէ յիսուս է 1
քրիստոսն, յաստուծոյ ծնեալ է․ և ամենայն
որ սիրէ զծնողն, սիրէ և զծնեալն 'ի նմանէ։
*Այսուիկ ճանաչեմք՝ եթէ սիրեմք զորդին 2
աստուծոյ, յորժամ՛ զաստուած սիրեսցուք՝
և զպատուիրանս նորա արասցուք։ *Քանզի 3
այս է սէրն աստուծոյ, եթէ զպատուիրանս
նորա պահեսցուք․ և պատուիրանք նորա
չեն ինչ ծանունք։ *Զի ամենայն որ յաստուծոյ 4
ծնեալ է՝ յաղթէ աշխարհի․ և այս
է յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի, հաւատքն
մեր։ *Եւ ո՞ իցէ՝ որ յաղթիցէ աշ- 5

խարհի. եթէ ոչ՝ որ հաւատայցէ՝ եթէ յի-
6 սուս է որդի աստուծոյ. *Սա է՝ որ եկն
ջրով և հոգւով և արեամբ, յիսուս քրիստոս.
ոչ ջրով միայն, այլ և արեամբ և ջրով. և հո-
գին է՝ որ վկայէ, զի հոգին իսկ է ճշմար-
7 տութիւն. (*Զի երեք են որ վկայեն յեր-
կինս. հայր, բանն, և հոգին սուրբ. և երե-
8 քեան մի են. *Եւ երեք են որ վկայեն
յերկրի. հոգի, ջուր, և արիւն. և երեքեան
9 մի են). *Եթէ զմարդկան ինչ վկայութիւն
ընդունիմք՝ ապաքէն աստուծոյ վկայութիւնն
մեծ իցէ. Այս է վկայութիւնն աստուծոյ,
10 զի վկայեաց ՚ի վերայ որդւոյն իւրոյ. *Որ
հաւատայ յորդին աստուծոյ, ունի յանձին
զվկայութիւնս զայս. որ ոչ հաւատայ որդւոյ
աստուծոյ, սուտ առնէ զնա. քանզի ոչ հա-
ւատայ վկայութեան՝ զոր վկայեաց աստուած ՚ի
11 վերայ որդւոյն իւրոյ. *Եւ այս իսկ է վկայու-
թիւնն, զի կեանս յաւիտենականս ետ մեզ
աստուած. և այս են կեանք՝ որ յորդին նո-
12 րա են. *Որ ընդունի զորդին, ընդունի և
զկեանս. և որ ոչ ընդունի զորդին աստուծոյ,
և ոչ զկեանս ընդունի.

13 *Զայս գրեցի ձեզ՝ զի գիտասջիք եթէ ՁԵ
կեանս յաւիտենականս ունիք. և զի հաւա-
14 տայցէք յանուն որդւոյն աստուծոյ. *Եւ
զայս է համարձակութիւնն զոր ունիմք մեք
առ նա, զի զոր ինչ հայցեսցուք ըստ կամաց

*նորա , լսէ մեզ ․ *Զի եթէ գիտիցեմք՝ եթէ 15*
լսէ հայցուածոյն մերոյ ․ ապա գիտեմք՝ եթէ
առնումք զհայցուածն՝ զոր հայցեմք առ
*’ի նմանէ ․ *Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր 16*
մեղուցեալ մեղս՝ որ ոչ առ ’ի մահ , խնդրեսցէ՝
և տացէ նմա կեանս՝ մեղուցելոյն ոչ առ
’ի մահ ․ են մեղք՝ որ մահու չափ են , ոչ վ՟ն
*այնորիկ ասեմ եթէ խնդրեսցես ․ *Ամենայն 17*
անիրաւութիւն՝ մեղք են ․ և են մեղք՝ որ
*մահուչափ են ․ *Գիտեմք եթէ ամենայն որ 18*
յաստուծոյ է ծնեալ ոչ մեղանչէ ․ այլ որ
յաստուծոյն է ծնեալ՝ պահէ զանձն , և չարն
*առ նա ոչ մերձենայ ․ *Գիտեմք եթէ յաստուծոյ 19*
եմք , և աշխարհ ամենայն ’ի չարի
*կայ ․ *Եւ գիտեմք՝ եթէ որդին աստուծոյ 20*
եկն , և ետ մեզ միտս ․ զի ծանիցուք զճշմարիտն ․
և եմք ’ի ճշմարտին որդւոյ նորա յիսուսի
քրիստոսի ․ զի նա է ճշմարիտ աստուած՝
*և կեանքյաւիտենական ․ *Որդեակք՝ 21*
պահեցէք զանձինս ’ի կռապաշտութենէ ․

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
ԵՐԿՐՈՐԴ

1 ՅԵՐԻՑՈՒԷ *առ ընտրեալ կիւրիա, և* ԷԿ
առ որդեակս իւր զոր ես սիրեմ
ճշմարտութբ̃. և ոչ եթէ ես միայն, այլ եւ
ամենեքեան ոյք գիտակ են ճշմարտութե̃ն.
2 **վասն որոյ ճշմարտութե̃ն՝ որ ՚ի մեզ հաս֊*
տատեալ է, զի և ընդ ձեզ իցէ. և դուք
3 *յաւիտենից ընդ մեզ իցէք. *Շնորհք՝ ո֊*
ղորմութիւն խաղաղութիւն յա̃յ ՚ի Հօրէ, և ՚ի
տ̃նէ յ̃սէ ք̃սէ որդւոյն Հօր՝ ճշմարտութբ̃ և
4 *սիրով եղիցին ընդ ձեզ. *Ուրախ եղէ յոյժ,*
զի գտի յորդեկացդ քոց՝ որ գնան ճշմար֊
տութբ̃, ըստ պատուիրանին զոր առաք ՚ի

Հօրէ . * Եւ այժմ աղաչեմ զքեզ կիւրիա . 5
իբրեւ ոչ եթէ նոր ինչ պատուիրան գրեմ
քեզ , այլ զոր ՚ի սկզբանէն ունէաք , զի սիրեսցուք
զմիմեանս . * Եւ այս է սէրն , զի 6
գնասցուք ըստ պատուիրանաց նորա . և այս է
պատուիրանն , զի որպէս լուարուքն ՚ի սկզբանէ՝
ըստ նմին գնասջիք . * Զի բազում մոլորեցուցիչք 7
ելին յաշխարհ . որ ոչ խոստովանին
զՅիսուս Քրիստոս եկեալ մարմնով ,
նա մոլորեցուցիչ է՝ և նեռն .

ԵԲ * Զգոյշ լինիջիք անձանց՝ զի մի կորուսանիցէք՝ 8
զոր վաստակեցէքն , այլ զի առնուցուք
բովանդակ զվարձս . * Ամենայն որ 9
յանցանէ՝ և ոչ կայ ՚ի վարդապետութեանն
Քրիստոսի , զԱստուած ոչ ճանաչէ . որ կայ ՚ի
վարդապետութեանն , նա՝ և զորդի և զՀայր
ընդունի . * Եթէ ոք գայցէ առ ձեզ՝ և զվարդապետութիւնս 10
զայս ոչ ունիցի , մի ընդունիցիք
զնա ՚ի տուն , և մի ողջոյն տայցէք նմա .
* Եւ որ տասցէ նմա ողջոյն՝ կցորդ լինի չարեաց 11
գործոց նորա . * Բազում ինչ ունէի 12
գրել առ ձեզ՝ այլ ոչ կամեցայ քարտիսիւ և
դեղով գրել . զի ակն ունիմ ինձէն իսկ գալ
առ ձեզ , և բերան ՚ի բերան խօսել . զի ուրախութիւնն
մեր լիցի կատարեալ . * Ողջոյն 13
տան քեզ որդիք քեռ քո ընտրելոյ . Շնորհք
ընդ ձեզ .

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
ԵՐՐՈՐԴ

1 ՅԵՐԻՑՈՒՆՍ առ գայիոս սիրելի․ զոր ԷԳ
2 ես սիրեմ ճշմարտութբ̃․ * Սիրելի՝
վասն ամենայն իրաց քոց յաջողութեան և առողջութեան
աղօթս առնեմ․ որպէս է իսկ
3 յաջողութիւն անձինդ քո․ * Յոյժ ուրախ
եղէ 'ի գալ եղբարց՝ և լինել վկայ քոյդ ճըշմարտութեանդ,
որպէս գնաս դու ճշմարտութեամբ․
4 * Մեծ ևս ինչ ուրախութիւն
քան զայս ոչ ունիմ․ զի լսեմ եթէ իմ որդեակքն
5 ճշմարտութեամբ գնան․ * Սիրելի՝
հաւատարիմ գործես զայդ, զոր եթէ առնիցես
6 առ եղբարս՝ զդոյն և առ օտարս․ * որք

վկայեցին զքո սիրոյդ առաջի եկեղեցւոյ. որոց
բարիս արարեալ յուղարկես արժանիս այ̃.
*Զի վասն անուանն ելին, և ոչինչ յումեքէ 7
առնուն զհեթանոսականացն. *Մեք այսուհետև 8
պարտիմք ընդունել զայնպիսիսն. զի
գործակիցք լիցուք ճշմարտութեանն.
ԷԴ *Գրեցի ինչ եկեղեցւոյն. այլ որ յառաջադէմն 9
'ի նոցանէ է՝ դիոտրեփէս, ոչ ընդունի
զմեզ. *Վասն այսորիկ եթէ եկից՝ յիշեցուցից 10
զգործս նորա՝ զոր առնէ, բանիւք չարեօք
շատախօսութեամբ առնէ զմեզ աշխատ.
և ոչ այսոքիւք շատացեալ, ոչ ինքն ընդունի
զեղբարս, և զայնոսիկ որ ընդունինն, արգելու.
նաև յեկեղեցւոյ ևս հանէ. *Սիրելի՝ 11
մի՛ լինիցիս նմանող չարի՝ այլ բարւոյ. զի որ
զբարիս առնէ՝ յաստուծոյ է. և որ զչարիս
գործէ՝ նա ոչ ետես երբէք զաստուած.
*Զդեմետրեայ վկայեալ է յամենեցունց, և 12
յեկեղեցւոյն՝ և 'ի ճշմարտութենէ, և մեք
վկայեմք. և դու գիտես՝ զի ճշմարիտ է մեր
վկայութիւնն. *Բազում ինչ ունէի գրել 13
քեզ. այլ ոչ կամիմ քարտիսիւ և դեղով գրել.
*զի ակն ունիմ 'ի մօտոյ իսկ տեսանել 14
զքեզ, և բերան 'ի բերան խօսել. *Խաղաղութիւն 15
ընդ քեզ. Ողջոյն տան քեզ սիրելիք.
Ողջոյն տուր սիրելեաց մերոց իւրաքանչիւր
յանուանէ.

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՂԻԿԵԱՅ
ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ

1 ՅՈՒԴԱՅ յիսուսի քրիստոսի ծառայ, ԷԵ
եւ եղբայր յակոբայ։ հեթանոսաց՝
որ յաստուծոյ հօրէ էք սիրեցեալք, եւ յ՟ի
2 քրիստոսի պահեալք եւ ընտրեալք։ *Ողորմութիւն
ձեզ՝ եւ խաղաղութիւն եւ սէր բազմասցի։
3 *Սիրելիք՝ զամենայն փոյթ յանձին
կալեալ գրել ձեզ վասն մերոյ հասարակաց
փրկութեան, հարկ յանձին կալայ գրել ձեզ
եւ աղաչել՝ զի ճգնիցիք ՚ի վերայ հաւատոյն,
4 որ միանգամ աւանդեցաւ սրբոց։ *Քանզի
սպրդեցին մտին ոմանք, որ յառաջագոյն
իսկ կատարեալ էին ՚ի սոյն դատաստան։
ամբարիշտք, որ զաստուծոյ մերոյ շնորհսն
դարձուցին յանկարգութիւն։ եւ զմիմիայն իշ֊

խանն՝ և զտէր մեր յիսուս քրիստոս ուրացեալք ·
*Յիշեցուցանել ձեզ այսուհետև կամ 5
է ինձ՝ որ գիտէք զամենայն · զի աստուած
միանգամ զժողովուրդն փրկեաց յեգիպտոսէ ·
երկրորդ անգամ զանհաւատսն կորոյս · *Եւ 6
զհրեշտակս՝ որ ոչ պահեցին զիւրեանց իշխանութիւնն,
այլ թողին զիւրեանց բնակութիւնն,
'ի դատաստանս մեծի աւուրն՝ մըշտնջենաւոր
կապանօք պահեաց 'ի խաւարի ·
*Որպէս սոդոմ և գոմոր, և որ շուրջ զնոքօք 7
քաղաքքն, որ ըստ նմին օրինակի պոռնկեցան
զհետ ընկերացն մարմնոց, կան առաջի
օրինակ՝ զյաւիտենական հրոյն ընկալեալ ըզ
դատաստան · *Ըստ նմին օրինակի և սոքա 8
իբրև քնով դանդաչեալք՝ զմարմին պղծեն,
զտէրութիւնս քամահեն՝ զփառս հայհոյեն ·
*Ուր միքայէլ հրեշտակապետ՝ յորժամ բանսարկուն 9
սատանայի վիճեալ տայր պատասխանի
վասն մովսիսեան մարմնոյն, ոչ ժպըրհեցաւ
հայհոյութեան դատաստանին հանդուրժել · այլ ասէ, սաստեսցէ 'ի քեզ տէր ·
*Իսկ սոքա զոր ինչ ոչն իմանան՝ հայհոյեն · 10
և զայլն ևս՝ զոր բնութեամբ իբրև զանխօս
անասունս գիտեն, 'ի նոսին ապականեսցին ·
*Վայ է նոցա, զի ըստ ճանապարհին կայենի 11
գնացին, և ըստ մոլորութեանն բաղաամայ
զեղխեցան զհետ վարձուց, և ըստ հակառակութեանն
կորխայ կորեան ·

12 *Սոքա են առեցեալք շաղփաղք՝ երթ֊ ԷԶ
եալ զհետ ցանկութեանց իւրեանց. 'ի սէրս
իւրեանց խարդախութեամբ, լինին ընդ ձեզ
ուրախակիցք. աներկիւղ զանձինս ճարակեն.
ամպք անջրդիք հողմակոծեալք, ծառք պտո֊
ղակորոյսք անպտուղք կրկնամեռք՝ խլեալք
13 արմատաքի. *անսաստ ալիք ծովու, որ միշտ
փրփրեն զիւրեանց զանձանց զամօթ. աս֊
տեղք մոլարք, որոց վիհ խաւարին յաւիտե֊
14 նից պահեալ է. *Մարգարէացաւ վասն նո֊
ցա և եօթներորդն յԱդամայ Ենովք՝ և ասէ.
ահաւասիկ եկն Տէր բիւրովք սրբովք հրեշ֊
15 տակօք, *առնել դատաստան ընդ ամե֊
նեսին, և յանդիմանել զամենայն ամբարիշտս
վասն գործոց իւրեանց՝ զոր ամբարշտեցին.
և վասն ամենայն խիստ բանից, զոր խօսե֊
16 ցան զնմանէ մեղաւորք և ամբարիշտք. *Սո֊
քա են տրտնջօղք և շաղփաղք, երթեալք ըստ
իւրեանց անձանց ցանկութեանց. և բերանք
նոցա զամբարտաւանս բարբառին. առնուն
ակն երեսաց վասն օգտի.

17 *Բայց դուք սիրելիք՝ յիշեցէք զկան֊ ԷԷ
խասաց բանս զառաքելոցն տեառն մերոյ
18 յիսուսի քրիստոսի. *զի ասէին ձեզ, եթէ
'ի յետին ժամանակս եղիցին մարդք արհա֊
մարհողք, երթեալք ըստ իւրեանց ամբա֊
19 րշտութեանցն ցանկութեանց. *Սոքա են
նշաւակեալք շնչաւորք, որ զոգին ոչ ունի֊

ցէն. *Այլ մեք սիրելիք՝ եղիջիք շինել 20
զանձինս սրբութեամբն հաւատոց 'ի հոգին
սուրբ. կացջիք յաղօթս, *պահել զանձինս 21
սիրովն աստուծոյ. ակն ունել ողորմութեանն
տեառն մերոյ յիսուսի քրիստոսի 'ի կեանսն
յաւիտենականս. *Եւ ոմանց դատապարտելոց 22
լինիջիք՝ կշտամբիչք, *և զոմանս ապրեցուցանիջիք՝ 23
յափշտակեալ 'ի հրոյ. և ոմանց
ողորմեսջիք երկիւղիւ դատել, և զպատմուճանն
որ 'ի մարմնոյն իցէ ատելեալ. *Եւ 24
այնմ, որ կարողն է պահել զձեզ անսայթաք
և անբիծս, հաստատել առաջի իւրոյ փառացն
անբիծս ցնծութեամբ. *միոյն աստուծոյ 25
փրկչին մերոյ յսի քսի տեառն մերոյ՝
փառք մեծութիւն զօրութիւն և իշխանութիւն՝
յառաջ քան զամենայն յաւիտեանս, և
այժմ և յամենայն յաւիտեանս. ամէն.

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
ԵՒ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ

ԳԼ․ Ա․

1 ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ յս̃ի ք̃սի, 'ի ձեռն
որոյ ետ ա̃ծ ցուցանել ծառայից իւրոց՝
որ ինչ լինելոց է վաղվաղակի․ և նշանա-
կեաց առաքելով 'ի ձեռն հրեշտակի իւրոյ,
2 առ ծառայ իւր յովհաննէս․ *Որ վկայեաց
զվկայութիւն բանին ա̃յ, և զվկայութիւն յս̃ի
ք̃սի՝ զոր ետես․ և որ էր՝ և որ լինելոցն էր
3 յետ այնորիկ․ *Երանի՝ որ կարդասցէ կամ
լուիցէ զբանս մարգարէութեանս, և պահեսցէ զոր
'ի սմա գրեալ է․ զի ժամանակս մերձեալ է։
4 *Ի յովհաննէ առ եօթն եկեղեցիսն՝ որ են
յասիայ, շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յա̃յ՝
յէէն՝ և որ էն՝ և որ գալոցն է, և յեօթն

զօրութեանց Հոգւոյն՝ որ է առաջի աթոռոյն
իւրոյ. *և 'ի յ̃սէ ք̃սէ հաւատարիմ վկայէն, 5
որ է անդրանիկ 'ի մեռելոց, և իշխան թագաւորութեանց
երկրի. որ սիրեաց զմեզ, և ելոյծ
զկապանս մեղաց մերոց արեամբն իւրով.
*և արար զմեզ թագաւորս և քահանայս ա̃յ 6
և հօր իւրոյ. որում փառք և զօրութիւն՝ այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն. *Ահաւասիկ 7
գալոց է ընդ ամպս. և տեսցեն զնա
ա̃մ աչք, և տեսցեն զնա ծագք երկրի, և
որք խոցեցին զնա ա̃մքեան յերկրի, և կոծեսցին
'ի վերայ նորա. այո՝ ամէն. *Ես եմ այբ 8
և ես եմ քէ, ասէ տէր ա̃ծ, որ էն և որ է՝
և որ գալոցն է՝ ամենակալ. *Ես յովհաննէս 9
եղբայր ձեր և հաւասարակից նեղութե̃՝ և
արքայութե̃՝ և համբերութե̃ որ 'ի ք̃ս յ̃ս: եղէ,
ես 'ի կղզւոջն որ անուանեալ կոչի պատմոս՝
վասն բանին և վասն վկայութեանն յիսուսի
քրիստոսի. *Եւ եղեւ յիս հոգի 'ի կիւրակէի 10
աւուր. և լուայ զձայն զհետ իմ զմեծ իբրև
զձայն փողոյ, որ ասէր ցիս. Ես եմ ալփա՝
և ով առաջինն և վերջինն. *զոր տեսանես՝ 11
գրեա 'ի գիրս, և տուր տանել յեօթն եկեղեցիս՝
որ յեփեսոս, և զմիւռնիա՝ 'ի պերգամոն,
'ի թիւատիրա, և 'ի սարդիկէ, և
'ի փիղադելփիա, և 'ի լաւոդիկեա. *Եւ 12
դարձայ տեսանել զձայնն՝ որ խօսէր ցիս. և
'ի դառնալն իմում տեսի եօթն ճրագարան

13 ոսկի. *Եւ ՚ի մէջ եօթն ճրագարանացն նման
որդւոյ մարդոյ, զգեցեալ պատմուճան պճղնաւոր,
եւ գօտեւորեալ առ ստեամբքն գօտի
14 ոսկեղէն. *Եւ գլուխ նորա եւ հերքն իբրեւ զասր
սպիտակ՝ եւ ոպ̄ զձիւն. եւ աչք նորա ոպ̄ բոց
15 հրոյ. *Եւ ոտք նորա նմանեալ պղնձոյ ծխելոյ ՚ի
մէջ հնոցի հրաշէկ. եւ ձայն նր̄ իբրեւ զձայն
16 ջուրց բազմաց. *Եւ ունէր յաջոյ ձեռինն իւրում
աստեղս եօթն, եւ ՚ի բերանոյ նր̄ ելանէր
սուր երկբերանեան. եւ երեսք նր̄ իբրեւ զարեգակն
17 ճառագայթեալ երեւէին. *Եւ իբրեւ
տեսի զնա՝ անկայ առ ոտս նր̄ իբրեւ զմեռեալ.
եւ եդ ՚ի վր̄ իմ զաջ իւր՝ եւ ասէ ցիս. մի՛ երկնչիր,
18 ես եմ առաջին, եւ ես եմ յետին. *Եւ ես եմ
կեանք՝ եւ ես նոյն որ մեռայ, եւ իմ կենդանի
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն.
19 եւ ունիմ զփականս մահու եւ դժոխոց. *Գրեա
զոր տեսանես՝ որ են, եւ որ յապա՝ եւ որ հանդերձեալ
20 է լինել այս. *զխորհուրդ եօթն
աստեղացդ՝ զոր տեսերդ յաջու իմ, եւ զեօթն
ճրագարանս ոսկիս. եօթն աստեղքն՝ հրեշտակք
եօթն եկեղեցեացն են, եւ ճրագարանքն
եօթն՝ եօթն եկեղեցիքն են.

ԳԼ. Բ.

1 Առ հրեշտակ եփեսացւոց եկեղեցւոյն
գրեա. այսպէս ասէ կալողն՝ որ ունի զաս-

աստղս եօթն յաջու ձեռին իւրում, և շրջի 'ի
մէջ եօթն աշտանակի ոսկւոյ. *Գիտեմ 2
զգործս քո և զվաստակս քո և զհամբերութիւն
քո. և զի ոչ բառնաս զչարս, և փորձեցեր՝
որ ասեն զինքեանս առաքեալս՝ և ոչ են, և
հեբրայեցիս՝ և ստեն. *Եւ համբերեցեր 3
և վշտացար վասն անուան իմոյ՝ և աշխատե-
ցար. *Այլ ասեմ առ քեզ, զի զսէրն քո զա- 4
ռաջին թողեր. *Յիշեա այժմ ուստի անկարն 5
և ապաշաւեա, և զառաջին գործսն քո արա.
ապա թէ ոչ՝ գամ ես վաղվաղակի, և շարժե-
ցից զաշտանակս քո 'ի տեղւոջէ իւրմէ՝ եթէ
ոչ ապաշխարեսցես. *Արդ զայս արա՝ զի ա- 6
տեսցես զգործսն Նիկողայոսի, զոր ես ատ-
եամ. *Որ ունի ականջս լսելոյ, լուիցէ զինչ 7
ասէ Հոգին սուրբ առ եկեղեցիս. որ յաղթէն,
տաց նմա ուտել 'ի փայտէն կենաց՝ որ է 'ի
մէջ դրախտին ա̃յ. *Եւ առ հրեշտակ զմիւռ- 8
նացւոց եկեղեցւոյն գրեա. այսպէս ասէ անըս-
կիզբնն և անվախճանն. որ եղև մեռեալ՝ և կեն-
դանացաւ. *Տեսի զգործս քո՝ և զնեղու- 9
թիւն և զաղքատութիւն, այլ աղքատութիւն
քո մեծութիւն եղիցի. և զհայհոյութիւնն՝ որ
ասէին զինքեանս հրէայս գոլ՝ և չէին ինչ, այլ
ժողով սատանայի. *Մի երկնչիր՝ վ̃ն որոյ կա- 10
միս չարչարիլ. ահա հանդերձէ բանսարկուն
արկանել 'ի ձէնջ 'ի բանտ, զի փորձիցիք, և
ունիցիք նեղութիւն աւուրս տասն. լեր հաւա-

տարիմ մինչև 'ի մահ. և տաց քեզ զպսակն
11 կենաց. *Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ
զինչ հոգին սբ̃ ասէ առ եկեղեցիս. որ յաղթէ,
12 ոչ անիրաւի յերկրորդ մահուանէն. *Եւ
առ հրեշտակն՝ որ 'ի պերգամոյ եկեղեցին,
գրեա. այսպէս ասէ՝ որ ունի զսուրն երկսայրի
13 սրեալ. *Տեսի զգործս քո՝ և զի բնակեալ
ես ուր աթոռն է սատանայի. և ունիս զանուն
իմ, և ոչ ուրացար զհաւատս իմ յաւուր յորում
անթիպաս վկայն իմ հաւատարիմ եղև.
զի վկայ է իմ հաւատարիմ ամ̃ հաւատացեալ՝
որ սպանաւ 'ի ձէնջ. ուր կայք՝ ուր սատանայ
14 է բնակեալ. *Այլ ունիմ առ քեզ սակաւ.
զի կայ առ քեզ վարդապետութիւնն բաղաամու՝
որ ուսոյց զբաղակ դնել գայթագղութիւն
առաջի որդւոցն իէլի, ուտել նոցա
15 զոհեալ՝ և պոռնկել. *Այսպէս և դու ունիս
զվարդապետութիւն նիկողայեցեաց՝ զոր ես
16 ատեամ. *Արդ՝ ապաշխարեա, ապա թէ ոչ՝
գամ վաղվաղակի. և պատերազմեցայց ընդ նս̃
17 սրով բերանոյ իմոյ. *Որ ունիցի ականջս լսելոյ՝
լուիցէ զինչ հոգին ասէ առ եկեղեցիս.
որ յաղթէ՝ տաց նմա ուտել 'ի մանանայէն
թագուցելոյ, և տաց նմա զգիրն սրբութեան.
և գրեալ անուն նոր 'ի գիրն, զոր ոչ ոք գիտէ՝
18 բայց միայն որ առնուն. *Եւ առ հրեշտակն
որ 'ի թիւատրայ եկեղեցին՝ գրեա. այսպէս
ասէ որդին այ̃, որոյ աչք իւր են իբրև

զբոց հրոյ , և ոտք նր՟ նման պղնձի ծխելոյ ։
* Տեսի զգործս քո՝ և զսէր և զհաւատ՝ և 19
զպաշտօն քո համբերութ՟ ․ զի բազումէ վաստակ
քո վերջինն քան զառաջինն ։ * Այլ ասեմ 20
առ քեզ բազում ․ զի թողեր զկինն զյեզաբէլ
․ որ ասէր զինքն մարգարէ , և ուսուցանէր
մոլորութիւն՝ զծառայս իմ՝ պոռնկել
և ուտել զզոհեալ ։ * Եւ ետու նմ՟ ժամանակ 21
ապաշխարել զպոռնկութիւնն իւրեանց՝ և ոչ
ապաշխարեցին ։ * Ահաւասիկ ես արկանեմ 22
զնա 'ի հնոց , և զգործակիցս իւր ընդ որս շնացաւ՝
'ի նեղութիւնս մեծամեծս , եթէ ոչ ապաշխարեսցեն
'ի գործոց իւրեանց ։ * Եւ զորդիս 23
նր՟ սպանից մահուամբ ․ և ծանիցեն ամ՟
եկեղեցիք՝ թէ ես եմ որ յանդիմանեմ զերիկամունս
և զսիրտս ․ և տամ ձեզ իւրաքանչիւր
ըստ գործոց իւրեանց ։ * Այլ ձեզ ասեմ որք 24
'ի Թիւատիր էք , և ոչ ունիք զվարդապետութիւնս
զայս ․ որ ոչ ծանեայք զխորս սատանայի՝
զոր խօսին ․ ոչ արկից զձեօք ծանրութիւն
։ * Այլ զոր ունիք , պահեցէք՝ մինչև ես 25
գամ ։ * Եւ որ յաղթէ՝ և պահէ զգործս իմ մինչև 26
ցվախճան ․ տաց նմա իշխանութիւն 'ի վր՟ ազգաց
։ * Եւ հովուեսցէ զնս՟ գաւազանաւ երկաթեաւ 27
․ և իբրև զանօթ բրտի փշրեսցէ զնս՟ ։
* Ոպ՟ և ես ընկալայ 'ի հօրէ իմմէ , և տաց նմ՟ 28
զաստղն առաւօտուն ։ * Որ ունի ականջս լսելոյ՝ 29
լուիցէ զինչ հոգին ասէ առ եկեղեցիս ։

ԳԼ. Գ.

1 Եւ առ հրեշտակ սարդիացւոց եկեղեցւոյն
գրեա. այսպէս ասէ՝ որ ունի զեօթն հոգին
ա՟յ՝ և զեօթն աստեղս. տեսի զգործս
քո՝ զի անուն կենդանւոյ ունիս՝ և մեռեալ
2 ես. *Լեր արթուն՝ և հաստատեա այսուհետեւ՝
զի հանդերձեալ ես մեռանել. քանզի
ոչ գտի զգործս քո կատարեալ առաջի ա՟յ.
3 *Արդեօք յիշեա թէ ոպ՟ լուարն, և պահեա
և ապաշխարեա. ապա թէ ոչ զուարթանաս՝
գամ ոպ՟ գող. և ոչ ոք իմանայ զգալուստ իմ
4 առ քեզ. *Ունիս սակաւ մի զանուն սարդիացւոցն,
որք ոչ աղտեղացուցին զհանդերձս
իւրեանց. և շրջին 'ի սպիտակս՝ որում արժանի
5 եղեն. *Որ յաղթէ՝ այսպէս զգեցցի
սպիտակս, և ոչ ջնջեսցի անուն նր՟ 'ի դպրութենէն
կենաց. և խոստովանեցայց զանուն նորա
6 առաջի հօր իմոյ՝ և առաջի հրեշտակաց. *Որ
ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ ասէ հոգին
7 առ եկեղեցիս. *Եւ առ հրեշտակն փիղադեղփեաց
եկեղեցւոյն գրեա. այսպ՟ ասէ սր՟ն
ճշմարիտն, որ ունի զփականս դաւթի. բանայ՝
և ոչ ոք է որ փակէ, և փակէ՝ և ոչ ոք է
8 որ բանայ. *Տեսի զգործս քո. ահա ետու
առաջի քո դուռն բացեալ, զոր ոչ ոք կարէ
փակել. զի սակաւիկ ունիս զօրութիւն, և

պահեցեր զբանս իմ, և ոչ ուրացար զանուն
իմ. *Ահաւասիկ ես տամ քեզ զժողովն սա- 9
տանայի, որք ասեն զինքեանս Հրեայս գոլ՝
և ոչ են, այլ ստեն. արարից զնա̃՝ զի եկեսցեն՝
և երկիրպագցեն առաջի ոտից քոց, և ծանի-
ցեն զի ես սիրեցի զքեզ. *Զի պահեցեր ըզ 10
բան համբերութեան իմոյ, և ես պահեցից զքեզ
'ի ժամ փորձութեան քո. որ հանդերձեալ է գալ
յա̃մ տիեզերս փորձել զա̃մ բնակեալս յերեսս
երկրի։ *Ահա գամ վաղվաղակի, կալ զոր ու- 11
նիս՝ զի մի՛ ոք առցէ զպսակ քո. *Որ յաղ- 12
թէ՝ արարից զնա սիւն տաճարի ա̃յ իմոյ, և
արտաքս այլ մի՛ ևս ելցէ. և գրեցից 'ի վր̃ նր̃
զանուն ա̃յ իմոյ, և զանուն քաղաքի ա̃յ իմոյ՝
զնորն երուսաղեմի, որ իջանելոց է յերկնից ա̃յ
իմոյ. և անուն նորա նոր. *Որ ունի ականջս 13
լուիցէ զինչ ասէ հոգին առ եկեղեցիս. *Եւ 14
առ հրեշտակն լաւոդիկեայ եկեղեցւոյն գը-
րեա. այսպ̃ ասէ ամէնն՝ վկայն հաւատարիմ
և ճշմարիտ, սկիզբն սկզբան արարածոց ա̃յ.
*Գիտեմ զգործս քո՝ զի ոչ ցուրտ ես՝ և ոչ 15
ջերմ. պարտ էր քեզ ցուրտ լինել՝ և կամ
ջերմ։ *Այլ դու գաղջ ես՝ և ոչ ջերմ և ոչ 16
ցուրտ, հանդերձեալ ես փսխել 'ի բերանոյ
իմմէ. *Զի ասես. մեծատուն էի՝ և մեծացայ, 17
և ոչ ինչ կարօտ եմ. և ոչ գիտես՝ եթէ դու
ես ողորմելի և հեղգ և աղքատ՝ մերկ և կոյր.
*Արդ՝ ես խորհրդակից եղէց քեզ, ա՛ռ գնեա 18

յինէն ոսկի փորձեալ 'ի հրոյ՝ զի մեծասցիս, և
հանդերձս սպիտակս՝ զի զգեցցիս, մի՛ զի ե-
րևեսցի անվայելչութիւն մերկութեան քո. և դիր
19 դեղ յաչս քո՝ զի տեսցես. * Ես՝ զոր սիրեմ,
յանդիմանեմ և խրատեմ. նախանձեա այժմ, և
20 ապաշխարեա. * Ահաւասիկ կամես առ դուրս
և բախեմ. եթէ ոք լուիցէ ձայնի իմում՝ և
բանայցէ զդրունս, մտից առ նա՝ և ընթրիս
21 արարից առ նա, և նա ընդ իս. * Որ յաղթէ տաց
նմա նստել ընդ իս յաթոռ իմ, որպէս և ես յաղ-
22 թեցի՝ և նստայ յաթոռ հօր իմոյ. * Որ ունիցի
ականջս՝ լուիցէ զինչ ասէ հոգին առ եկեղեցիս.

ԳԼ. Դ.

1 Եւ յետ այսր ա̃մի տեսի՝ և ահա դրունք
երկնից բացեալ էին, և ձայն փողոյն առաջնոյ
զոր լուայ՝ խօսէր ընդ իս և ասէր. ել այսր՝ և
ցուցից քեզ՝ զինչ լինելոց է յապա ժամանակս.
2 Եւ ժամանեալ յիս հոգի, և տեսի աթոռ մի՝
3 զի կայր յերկինս. * Եւ 'ի մ̃ջ աթոռոյն նստէր
նման տեսլեան ականց յասպիւոյ և սարդիոնի.
4 * Եւ քահանայք շուրջ զաթոռովն նմանք տես-
լեան զմրխտի. և շուրջ զաթոռովն աթոռք
քսան և չորք, և 'ի մ̃ջ աթոռոցն նստէին քսան
և չորք երիցունք՝ զգեցեալ հանդերձս ս-
պիտակս, և 'ի գլուխս իւրեանց պսակս ոսկիս.
5 * Եւ յաթոռոյ անտի ելանէին փայլատակմունք

և ձայնք և որոտմունք. և եօթն ղամբարք հրոյ
բորբոքելոյ առաջի աթոռոյն, որ են եօթն
հոգիքն ա̃յ. *Եւ էր առաջի աթոռոյն ծով 6
ապակեղէն՝ նման սպիտակութե սառին, և 'ի
մէջ աթոռոյն չորք կենդանիք՝ և լի էին աչօք
առաջոյ և յետոյ. *Եւ էր կենդանին առաջին 7
նման առիւծու, և երկրորդ կենդանին նման
զուարակի, և երրորդ կենդանին ունէր երեսս
մարդոյ, և չորրորդ կենդանին նման արծուոյ
թռուցելոյ. *Եւ չորից կենդանեացն էին միոյ 8
միոյ 'ի նոցանէ վեց թեւք, շուրջանակի և 'ի
ներքոյ լի էին աչօք, ոչ հանգչէին՝ ոչ զտիւ
և ոչ զգիշեր՝ ասելով. ս̃բ ս̃բ ս̃բ տէր ա̃ծ ամենակալ՝
որ էն և ես, և որ գալոց ես. *Եւ 9
յորժամ տային կենդանիքն փառս և պատիւ
և գոհութիւն նստելոյն 'ի վ̃ր աթոռոյն՝ կենդանւոյն
յաւիտեանս յաւիտենից, (*անկանէին 10
քսան և չորք երիցունքն առաջի նստելոյն
յաթոռ, և երկիրպագանէին կենդանւոյն յաւիտեանս
յաւիտենից.) և դնէին զպսակս իւրեանց
առաջի աթոռոյն ասելով, *արժանի 11
ես տէր ա̃ծ մեր ս̃բ՝ առնուլ փառս և պատիւ
և զօրութիւն, զի դու ստեղծեր զա̃մ. և 'ի
կամըն քո ստեղծան՝ և կան հաստատուն.

ԳԼ. Ե.

Եւ տեսի 'ի ձեռս աջոյ՝ որ նստէր 'ի վ̃ր 1

աթոռոյն՝ գիրք գրեալ ներքոյ և արտաքոյ ,
2 և կնքեալ եօթն կնքով· *Եւ տեսի հրեշտակ
մի զօրաւոր՝ զի քարոզէր 'ի ձայն մեծ . ո՞ է
արժանի բանալ զգիրքս՝ և լուծանել զկնիք
3 նր̃ · *Եւ ոչ ոք կարէր՝ ոչ 'ի յերկինս և ոչ
յերկիր և ոչ 'ի ներքոյ երկրի՝ բանալ զգիրքն,
4 զի ոչ տեսին զնա · *Եւ ես լայի ուժգին՝ զի
ո՛չ ոք գտաւ արժանի բանալ զգիրքն և հայել
5 'ի նա ։ *Եւ մի յերիցանցն ասէ ցիս . մի՛
լար , ահաւասիկ յաղթեաց առիւծն յազգէն
յուդայ յարմատոյն դաւթի՝ բանալ զգիրքն՝
6 և լուծանել զեօթն կնիքսն նր̃ · *Եւ տեսի 'ի
մէջ աթոռոյն և 'ի մէջ չորից կենդանեացն՝
և 'ի մէջ երիցանցն գառն կայր զենեալ , որ
ունէր եօթն եղջիւրս՝ և աչս եօթն , որ են
եօթն հոգիք ա̃յ՝ որ են առաքեալ ընդ ա̃մ
7 երկիր · *Եւ եկն ընկալաւ յաջոյ ձեռանէ նր̃՝
8 որ նստէր 'ի վր̃ աթոռոյն · *Եւ յորժամ առ
զգիրն , չորք կենդանիքն և քսան և չորք երիցունքն
անկանէին առաջի գառինն . և ունէին
իւրաքանչիւր քնար՝ և բուրվառ ոսկի
9 լի խնկով , որ է աղօթք սրբոցն · *Եւ օրհնէին
երգս նորս և ասէին . արժանի ես առնուլ
զգիրդ՝ և բանալ զկնիքս դորա , զի զենար՝ և
գնեցեր զմեզ ա̃յ արեամբդ քով՝ յա̃մ ազգաց
10 և 'ի լեզուաց և 'ի ժողովրդոց հեթանոսաց · *Եւ
արարեր զսոսա ա̃յ մերոյ թագաւորս և քահանայս՝
11 թագաւորել 'ի վր̃ երկրի · *Եւ տեսի ,

և լուայ զձայն հրեշտակաց բազմաց որք կային
շուրջ զաթոռովն և զչորիւք կենդանեօքն և
զքահանայիւքն . և էր թիւն նց՟ բիւրք բիւ-
րուց և հազարք հազարաց . * Ասէին ձայնիւ 12
մեծաւ . արժան է գառնդ զենեալ առնուլ
զմեծութիւն և զիմաստութիւն և զզօրութիւն
և զպատիւ և զփառս և զօրհնութիւն . * Եւ 13
ամ՟ արարածք՝ որ են յերկինս և յերկրի և 'ի
ծովու և որ 'ի նոսա՝ լուայ զի ասէին . որ նստի
յաթոռն՝ և գառնն օրհնեալ բարձրացեալ և
փառաւորեալ յաւիտեանս յաւիտենից . * Եւ 14
չորք կենդանիքն ասէին, ամէն . և երիցունքն
անկանէին առաջի նր՟ և երկիրպագանէին .

ԳԼ. Զ.

Եւ տեսի զի եբաց զմին 'ի կնքոցն, և 1
լուայ 'ի միոյ 'ի չորից կենդանեացն իբրև ըզ
ձայն որոտման՝ զի ասէր՝ թէ գամ։ * Եւ տե- 2
սի՝ և ահա ձի սպիտակ, և որ հեծեալն էր 'ի
նմա՝ ունէր աղեղն . և տուաւ նմա պսակ, և
եկն յաղթողն՝ զի յաղթեսցէ . * Եւ յորժամ 3
եբաց զկնիքն երկրորդ, լուայ յերկրորդ կեն-
դանւոյն՝ զի ասէր, գամ։ * Եւ ել այլ ձի կար- 4
միր . և որ հեծեալն էր 'ի վր՟ նր՟՝ տուաւ նմա
առնուլ զխաղաղութիւն յերկրէ, զի զմիմեանս
զենցեն . և տուաւ նմա սուր մի մեծ . * Եւ 5
յորժամ եբաց զկնիքն երրորդ՝ լուայ յերրորդ

կենդանւոյն՝ զի ասէր՝ թէ գամ. և տեսի՝ և
ահա ձի սեաւ, և որ նստեալն էր 'ի վ՟ր ն՟ր՝
6 ունէր կշիռս 'ի ձեռին իւրում. * Եւ լուայ
ձայն 'ի միջոյ չորից կենդանեացն. կապիճ մի
ցորեան՝ դենարի միոջ. և երեք կապիճ գարի՝
դենարի միոջ, և ձէթ և գինի մի՛ վնասեսցես.
7 * Եւ յորժամ եբաց զկնիքն չորրորդ, լուայ
ձայն 'ի չորրորդ կենդանւոյն՝ զի ասէր՝ թէ
8 գամ. * Եւ տեսի՝ և ահա ձի չլուս, և որ
նստէրն 'ի վ՟ր՝ ունէր զմահ, և դժոխք երթային
զհետ ն՟ր. և տուաւ նմա իշխանութիւն
չորրորդ մասին աշխարհի՝ սատակել սրով և
9 սովով և մահուամբ՝ և գազանօք երկրի. * Եւ
յորժամ եբաց զկնիքն հինգերորդ՝ տեսի 'ի
ներքոյ սեղանոյն զհոգիս ա՟մ մարդկան զենեալ
վ՟ս բանին ա՟յ՝ և վ՟ս վկայութե՟ ն՟ր զոր ունէին.
10 * Որք ասէին 'ի ձայն մեծ. մինչև յե՞րբ
տէր ս՟ր և ճշմարիտ՝ ոչ դատիս, և խնդրես
11 զվրէժ արեան մերոյ 'ի բնակչաց երկրի. * Եւ
տուաւ ն՟ց արկանելիս սպիտակս, և ասացաւ
ն՟ց զի հանգիցեն փոքր մի ժամանակ, մինչև
լցցին ծառայակիցք ն՟ց և եղբարք ն՟ց՝ որք
12 հանդերձեալ են կատարիլ իբրև զն՟ս. * Եւ
տեսի յորժամ եբաց զկնիքն վեցերորդ՝ եղեւ
շարժումն մեծ, և արեգակն եղև սեաւ իբրև
զկապերտ այծեայ, և լուսինն բոլորովին եղև
13 արիւն. * Եւ աստեղք երկնից թօթափեցան
'ի յերկիր, որպէս տերև թզենւոյ զի ուժգին

շարժիցի 'ի հողմոյ . *Եւ երկին իբրեւ զմագաղաթեայ 14
գիրս գալարէր . եւ ա՟մ լերինք
եւ կղզիք 'ի տեղւոյ իւրեանց շարժեցան . *Եւ 15
թագաւորք երկրի եւ իշխանք՝ հազարապետք
եւ մեծամեծք եւ զօրաւորք՝ եւ ա՟մ ծառայք եւ
ա՟մ ազատք թագուցին զինքեանս յայրս եւ 'ի
ծերպս վիմաց . *Եւ ասէին լերանց՝ թէ անկերուք 16
'ի վերայ մեր , եւ ցբլուրս՝ թէ ծածկեցէք
զմեզ . *Զի եկն օր մեծ բարկութե՟ն 17
նորա . եւ ո՞վ կարէ կալ առաջի նորա .

ԳԼ . Է .

Եւ յետ այնորիկ տեսի չորս հրեշտակս՝ 1
զի կային 'ի չորս անկիւնս երկրի . եւ ունէին
զչորս հողմս երկրի՝ զի մի՛ շնչեսցէ հողմ 'ի
վերայ երկրի , եւ մի՛ 'ի ծովու՝ եւ մի՛ 'ի ծառս .
*Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի ել յարեւելից , 2
եւ ունէր զկնիք ա՟յ կենդանւոյ , եւ աղաղակեաց
ձայնիւ մեծաւ առ չորս հրեշտակսն՝ որոց առեալ
էր իշխանութիւն ապականել զերկիր
եւ զծով . *Եւ ասէր . մի՛ վնասէք երկրի՝ մի՛ 3
ծովու՝ մի՛ ծառոց , դադարեցէք մինչեւ կնքեցից
զծառայս ա՟յ իմոյ 'ի ճակատս նոցա .
*Եւ լուայ զթիւ կնքելոցն՝ հարիւր քառասուն 4
եւ չորք հազարք կնքեալք յազգէ որդւոցն
իսրայելի . *Յազգէն յուդայ՝ երկոտասան 5
հազար կնքեալ . Յազգէն ռուբենի՝

երկոտասան հազար կնքեալ։ Յազգէն գադայ՝
6 երկոտասան հազար կնքեալ։ *Յազգէն
ասերայ՝ երկոտասան հազար կնքեալ։ Յազգէն
նեփթաղիմայ՝ երկոտասան հազար կընքեալ։
Յազգէն մանասէի՝ երկոտասան հազար
7 կնքեալ։ *Յազգէն շմաւոնի՝ երկոտասան
հազար կնքեալ։ Յազգէն ղեւեայ՝ երկոտասան
հազար կնքեալ։ Յազգէն իսաքարայ՝
8 երկոտասան հազար կնքեալ։ *Յազգէն
զաբուղոնի՝ երկոտասան հազար կնքեալ։
Յազգէն յովսեփայ՝ երկոտասան հազար կընքեալ։
Յազգէն բենիամենի՝ երկոտասան հազար
9 կնքեալ։ *Եւ յետ այսորիկ տեսի՝ և ահա
ժողովուրդ բազում որոց ոչ գոյր թիւ ,
յա՟մ հեթանոսաց և յա՟մ ազգաց և յա՟մ լեզուաց
և յա՟մ ժողովրդոց, որք կային առաջի
աթոռոյն և առաջի գառինն՝ արկեալ զիւրեամբ
հանդերձս սպիտակս , և արմաւենիս
10 ՚ի ձեռս իւրեանց։ *Աղաղակէին ՚ի ձայն մեծ՝
և ասէին . փրկութիւն ա՟յ մերոյ՝ որ նստի ՚ի
11 վ՟ր աթոռոյն, և գառինն։ *Եւ ա՟մ հրեշտակք
կային շուրջ զաթոռովն և զերիցամբքն և ըզ
չորիւք կենդանեօքն , և անկանէին յերեսս
առաջի աթոռոյն՝ և երկիրպագանէին ա՟յ ,
12 *ասելով . ամէն . օրհնութիւն և փառք և իմաստութիւն
և գոհութիւն և պատիւ և զօրութիւն
և շնորհք ա՟ն ա՟յ մերոյ՝ յաւիտեանս
13 յաւիտենից . ամէն . *Եւ ասէ ցիս մի յերի-

ցա՛նց ա՛նտի . սոքա որ զգեցեալս են զհան-
դերձս սպիտակս՝ ո՞յք են՝ եւ կա՛մ ուստի՞ գան.
*Եւ ասացի ցնա. տէր՝ դու գիտես. եւ ասէ 14
ցիս . սոքա են՝ որ գան 'ի վշտաց մեծաց , եւ
լուացին զարկանելիս իւրեանց՝ եւ սպիտակա-
ցուցին արեամբ գառինն . *Վ՟ այնորիկ են 15
առաջի աթոռոյն ա՟յ՝ եւ պաշտեն զնա զտիւ
եւ զգիշեր 'ի տաճարի նր՟ . եւ որ նստի 'ի վր՟ ա-
թոռոյն՝ բնակեալ է 'ի նոսա. *Ո՛չ քաղցիցեն 16
եւ ոչ ծարաւիցեն, եւ ոչ ոք մեղիցէ նց՟՝ ոչ ա-
րեգակն եւ ոչ տօթ . *Եւ գառնն 'ի միջոյ ա- 17
թոռոյն հովուեսցէ զնս՟ , եւ առաջնոր-
դեսցէ նց՟ 'ի կենաց աղբիւր ջրոյ կենդանւոյ.
քանզի եհատ ա՟ծ զա՟մ արտօսր յերեսաց նց՟.

ԳԼ. Ը.

Եւ յորժամ եբաց զկնիքն եօթներորդ՝ 1
եղեւ լռութիւն յերկինս՝ ո՟ր կէս ժամու. *Եւ 2
տեսի հրեշտակս եօթն, որ առաջի ա՟յ կային,
եւ տուաւ նց՟ եօթն փողս . *Եւ այլ հրեշտակ 3
եկն եկաց առ սեղանն . եւ ունէր խնկանոց ոս-
կի . եւ տուաւ նմա խունկ բազում, զի մա-
տուսցէ զաղօթս ամենայն սրբոց 'ի վր՟ ոսկե-
ղէն սեղանոյ առաջի աթոռոյն. *Եւ ել ծուխ 4
խնկոյն աղօթք սրբոցն 'ի ձեռաց հրեշտա-
կացն առաջի ա՟յ . *Եւ ելից հրեշտակն զխըն- 5
կանոցն 'ի հրոյ սեղանոյն՝ եւ արկ զնա յերկիր .

և եղև որոտումն և ձայնք և փայլատակումն և
6 շարժումն մեծ։ *Եւ եօթն հրեշտակքն որ
ունէին եօթն փողս՝ պատրաստեցին զինքեանս
7 առ 'ի հարկանել։ *Եւ առաջին հրեշտակն եհար
զփողն, և եղև կարկուտ և հուր և արեան
խառնեալ՝ և անկաւ յերկիր, և զերրորդ մասն
երկրի այրեաց, և զերրորդ մասն ծառոց
այրեաց, և զամենայն դալար խոտոյ այրեաց։
8 *Եւ երկրորդ հրեշտակն փողեաց, և
իբրև զլեառն մի մեծ հրդեհեալ անկաւ 'ի
9 ծով, և եղև երրորդ մասն ծովու արիւն։ *և
սատակեցաւ երրորդ մասն լուղակաց, և որ
ունէր շունչ կենդանի՝ ապականեցաւ։ (և երրորդ
10 մասն նաւուց ընկղմեցաւ։) *Եւ երրորդ
հրեշտակն փողեաց, և անկաւ յերկնից աստղ
մի մեծ՝ բորբոքեալ իբրև զլամբար, և անկաւ
11 յերրորդ մասն գետոց և աղբերաց։ *և էր
անուն աստեղն դառնութիւն։ և բազումք մեռան
12 'ի դառնութենէ ջուրցն։ *Եւ չորրորդ
հրեշտակն փողեաց, և վիրաւորէր երրորդ
մասն արեգական՝ և երրորդ մասն լուսնի՝ և
երրորդ մասն աստեղաց։ և խաւարէր երրորդ
մասն նջ̃, և երրորդ մասն գիշերոյ նոյնպէս։
13 *Եւ տեսի՝ և լուայ ձայն հրեշտակի թռուցելոյ
'ի մէջ երկնից՝ զի ասէր 'ի ձայն մեծ,
վա՜յ վա՜յ վա՜յ՝ որ բնակեալ են յերկրի։ յորժամ
լինիցի ձայն երիցն ևս փողոց, զոր կամիցին
հրեշտակքն հարկանել։

ԳԼ. Թ.

Եւ հինգերորդ հրեշտակն փողէր. և 1
տեսի զի աստղ մի անկաւ յերկնից, և տուաւ
նմա բանալի գբոյն անդնդոց. *և ելանէր 2
ծուխ 'ի գբոյն որպէս զծուխ հնոցի մեծի. և
խաւարեցաւ արեգակն և օդք. *Եւ 'ի գբոյն 3
ելանէր մարախ 'ի յերկիր. և տուաւ նոցա իշխանութիւն
իբրև զխայթոցս կարճի. *և ասացաւ 4
նոցա՝ զի մի՛ մեղիցեն խոտոյ երկրի և
մի՛ ա՟մ ծառոց, բայց միայն մարդոյ երկրանոյ,
որ ոչ ունիցին զկնիք 'ի վերայ ճակատու
իւրեանց. *Եւ տուաւ նոցա հրաման՝ զի մի՛ 5
սպանանիցեն զնոսա, այլ չարչարեսցեն զնոսա
ամիս հինգ. և չարչարանք նոցա իբրև ըզ
խայթոցս կարճի՝ որ հարկանիցէ զմարդ. *Եւ 6
յաւուրսն յայնոսիկ խնդրեսցեն մարդիկ զմահ՝
և մի՛ գտցեն. և ցանկան մեռանել՝ և փախիցէ
'ի նոցանէ մահ. *Եւ նմանութիւն մարախոյն, 7
նմանութիւն ձիոյ պատրաստելոյ 'ի պատերազմ.
և 'ի վերայ գլխոց նոցա իբրև ըզ
պսակ՝ նմանեալ ոսկւոյ. և երեսք նոցա իբրև
զերեսս մարդոյ. *և հերք նոցա իբրև ըզ 8
հերս կնոջ. և ատամունք նոցա իբրև զառիւծու.
*Եւ ունէին զրահս իբրև զզրահս 9
երկաթի. և ձայն թեւոց նոցա իբրև զձայն
կառավար ձիոց բազմաց՝ որ արշաւեն 'ի պա-

10 տերազմ։ * Եւ ունին ագիս ըստ նմանութեան
կարճի · և խայթոց յագիս նոցա · և ունէին
իշխանութիւն չարչարել զմարդիկ ամիս
11 հինգ ։ * Եւ ունին թագաւոր 'ի վերայ իւրեանց
զհրեշտակն դժոխոց · և անուն նորա
եբրայեցերէն՝ աղբադոն, որ կոչի 'ի հայ բարբառ՝
12 կորուստ ։ * Ահաւասիկ վայ մի էանց,
13 և վայք երկու գալոց են ։ * Եւ վեցերորդ
հրեշտակն հարկանէր զփողն · և լուայ ձայն
'ի չորից կենդանեացն՝ որ էին առաջի սեղանոյն
14 ա͞յ · * զի ասէր ցհրեշտակն վեցերորդ՝ որ
ունէր զփողն · լոյծ զչորս հրեշտակսն զկապեալս
15 'ի վերայ գետոյն եփրատայ ։ * Եւ լուծան
չորս հրեշտակքն՝ պատրաստեալք 'ի ժամ
և յօր և յամիս և 'ի տարի, զի սպանցեն զերրորդ
16 մասն մարդկան ։ * Եւ համարք հեծելոյ
զօրաց նոցա՝ բիւրք բիւրուց՝ և հազարք
17 հազարաց՝ լուայ զթիւ նոցա ։ * Եւ տեսի ձիս
'ի տեսլեանն, և հեծեալս 'ի նոսա՝ որք ունէին
զրահս հրեղէնս, և յակինթս հրդեհեալս
ծծմբով · և գլուխք ձիոցն իբրև զգլուխս
առիւծուց · և 'ի բերանոյ նոցա հուր ելանէր՝
18 և ծուխ և ծծումբ ։ * Եւ 'ի հարուածոյս յայսցանէ
մեռաւ երրորդ մասն մարդկան՝ 'ի հրոյն
և 'ի ծխոյն և 'ի ծծմբոյն, որ ելանէր 'ի բերանոյ
19 նոցա ։ * Զի իշխանութիւն 'ի բերանս
է նոցա՝ և յագիս նոցա, և ագիք նոցա նմանութիւն
օձի · և ունէին գլուխս՝ որով սա֊

տանէին զանիրաւս ։ * Եւ այլք 'ի մարդկանէ 20
որ ոչ մեռան 'ի հարուածոցս յայսցանէ , ոչ
ապաշխարեցին և ոչ դարձան 'ի գործոց ձեռաց
իւրեանց , յերկրպագութենէ դիւաց և
կռոց յոսկեղինաց և յարծաթեղինաց՝ և 'ի
պղնձոյ և 'ի քարէ և 'ի փայտէ , որք ոչ տեսանել
կարեն՝ և ոչ լսել և ոչ գնալ · * և ոչ 21
ապաշխարեցին 'ի մարդասպանութենէ՝ և 'ի
դեղատուութենէ , և 'ի պոռնկութենէ և 'ի
գողութենէ իւրեանց ։

Գլ· Ժ·

Եւ տեսի այլ հրեշտակ զօրաւոր՝ զի իջանէր 1
յերկնից , և զգեցեալ էր ամպ՝ և ծիածան
'ի գլուխ նորա · և երեսք ն̃ր իբրև զարեգակն ,
և ոտք նորա ո̃պ սիւն հրոյ ։ * Եւ 2
ունէր 'ի ձեռին իւրում գրկոյք մի բացեալ · և
եդ զոտն իւր զաջ 'ի վերայ ծովու , և զձախն
'ի վ̃ր երկրի ։ * Եւ աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ 3
գոչեաց իբրև զառիւծ · և յորժամ աղաղակեաց՝
խօսեցան եօթն որոտմունք յիւրեանց
ձայնս ։ * Եւ յորժամ խօսեցան եօթն որոտմունքն՝ 4
կամէի գրել · և լուայ ձայն յերկնից՝
զի ասէր , կնքեա զոր խօսեցան եօթն որոտմունքն՝
և մի՛ գրեր ։ * Եւ հրեշտակն զոր տեսի , 5
որ եդ զոտն իւր 'ի վերայ ծովու և ըզ
միւսն 'ի ցամաքի , համբարձ զձեռն իւր զաջ

6 յերկինս. *Եւ երդուաւ 'ի կենդանին յաւիտենից՝
որ հաստատեաց զերկինս և որ 'ի նմա,
և զերկիր և որ 'ի նմա. զի ոչ ևս կայ այլ ժամանակ.
7 *այլ յաւուրս ձայնի եօթներորդ-
հրեշտակին՝ յորժամ հարցէ զփողն, կատարեսցի
խորհուրդն ա̃յ՝ որ աւետարանեցաւ
8 'ի ձեռն ծառայից իւրոց մարգարէիցն. *Եւ
ձայնն զոր լուայ յերկնից՝ դարձեալ խօսեցաւ
ընդ իս՝ և ասէ. երթ առ զգրքոյն՝ զոր
ունի հրեշտակն բացեալ 'ի ձեռին իւրում,
9 և կայ 'ի վերայ ծովու և ցամաքի. *Եւ ես
երթեալ առ հրեշտակն՝ խնդրեցի 'ի նմանէ.
և ասէ ցիս, առ զսա՝ և կեր զդոյն, և դառնասցի
յորովայն քո. այլ 'ի բերան քո է քաղցր
10 իբրև զմեղր. *Եւ առի զգրքոյն բացեալ 'ի
հրեշտակէն՝ և կլայ զնա. և էր 'ի բերան իմ
ո̃ք մեղր. և յորժամ կերայ, դառնացաւ որովայն
11 իմ. *Եւ ասէ ցիս. հասանէ քեզ դարձեալ
մարգարէանալ 'ի ժողովուրդս՝ և 'ի հեթանոսս
և 'ի լեզուս և 'ի թագաւորս երկրի.

ԳԼ. ԺԱ.

1 Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւազանի.
և կայր հրեշտակն՝ և ասէր ցիս. արի և չափեա
զտաճարն ա̃յ և զսեղանն՝ և զերկրպագողսն
2 որ 'ի նմա. *Եւ զգաւիթն որ արտաքոյ
տաճարին՝ թող զնա՝ և մի՛ չափեր. զի

տուեալ է զնա հեթանոսաց. եւ զքաղաքն ս̃ր
կոխեսցեն ամիսս քառասուն եւ երկուս։ *Եւ 3
տաց երկուց վկայից իմոց՝ եւ մարգարէասցեն
աւուրս հազար երկերիւր եւ վաթսուն՝ զգե-
ցեալ քուրձս։ *Սոքա են երկու ձիթենիքն՝ 4
եւ երկու ճրագք, որ կան առաջի ա̃յ յերկրի։
*Եւ որք կամիցին վնասել նոցա, հուր ելցէ 5
'ի բերանոյ նոցա՝ եւ կերիցէ զթշնամիս նոցա.
եւ որք կամիցին մեղանչել նոցա՝ այսպէս սա-
տակեսցին։ *Սոքա ունին իշխանութիւն փա- 6
կել զերկինս՝ զի մի՛ տեղասցէ զաւուրս մար-
գարէութե̃ն նոցա. եւ ունին իշխանութիւն 'ի
վերայ ջուրց՝ դարձուցանել զնոսա յարիւն, եւ
հարկանել զերկիր յա̃մ հարուածս՝ քանիցս
անգամ եւ կամիցին։ *Եւ յորժամ կատարես- 7
ցեն զա̃մ աւուրս վկայութե̃ն իւրեանց, յայն-
ժամ գազանն որ ելանէ յանդնդոց՝ տացէ ընդ
նոսա պատերազմ, եւ յաղթեսցէ նոցա եւ ըս-
պանցէ զնոսա։ *Եւ դի նոցա անկեալ կայցէ 8
'ի մէջ հրապարակաց քաղաքին նոցա մեծի,
որ անուանեալ կոչի ըստ հոգւոյն՝ սոդոմ եւ
եգիպտոս. ուր եւ տէրն նոցա խաչեցաւ։ *Եւ 9
տեսցեն զնոսա յա̃մ ցեղք եւ ժողովուրդք՝ եւ յա̃մ
լեզուք եւ հեթանոսք, զի դի նոցա անկեալ
կայցէ զերիս աւուրս եւ կէս. եւ ոչ տացեն
թաղել 'ի գերեզմանս զմարմինս նոցա։ *Եւ որ 10
բնակեալ են յերկրի՝ ուրախ լինին եւ խնդան
'ի վերայ նոցա, մինչեւ ընծայս եւ պատարագս

տանել մկմանց. վասն զի սոքա երկոքին
մարգարէքս չարչարեցին զբնակիչս երկրի։
11 *Եւ յետ երից աւուրց և կիսոյ՝ հոգի կենդանի
յա̃յ մտցէ 'ի նոսա. և յարիցեն կացցեն
'ի վերայ ոտից իւրեանց, և ահ և երկիւղ մեծ
անկաւ 'ի վերայ ամենեցուն՝ որ տեսանէին ըզնոսա։
12 *Եւ լուայ զձայն մեծ՝ որ ասէր ցնոսա.
վերացի՛ք ելէ՛ք աստ. և վերացան ելին յերկինս
ամպովք. և տեսին զնոսա թշնամիք
13 իւրեանց։ *Եւ 'ի ժամուն յայնմիկ շարժումն
մեծ եղեւ, և տասներորդ մասն քաղաքին
ընկղմեցաւ, և մեռան 'ի շարժմանէն արք
եօթն հազար. և յետ այնորիկ ահ մեծ եղեւ
յամենեսեան, և փառս տային ա̃յ երկնաւորի։
14 *Ահաւասիկ վայն երկրորդ էանց,
15 և վայն երրորդ գալոց է վաղվաղակի։ *Եւ
յորժամ եօթներորդ հրեշտակն հարկանէր
զփողն, եղեւ ձայն յերկինս՝ և ասէ. եղեւ թագաւորութիւն
ա̃մ տիեզերաց ա̃ն մերոյ՝ և
յ̃ի ք̃ի իւրոյ. և թագաւորեսցէ 'ի վերայ
16 ա̃մի յաւիտեանս յաւիտենից։ *Եւ քսան և
չորս երիցունքն՝ որ նստէին յաթոռս իւրեանց
առաջի ա̃յ, անկանէին 'ի վերայ երեսաց իւրեանց՝
և երկիրպագանէին ա̃ն ա̃յ, և ասէին.
17 *Գոհանամք զքէն տէր ա̃ծ ամենակալ, որ
էն և էս՝ և առեր զզօրութիւն քո մեծ, և
18 թագաւորեցեր։ *Եւ հեթանոսք բարկացան,
և եկն բարկութիւն քո, և ժամանակ մեռե֊

*լոց՝ զի դատեսցին. և տաս վարձս ծառայից
քոց մարգարէից , և սրբոց երկիւղածաց անուան քոյ՝ փոքունց և մեծամեծաց , և ապականես զապականիչս երկրի. *Եւ բացաւ 19
տաճարն ա̃յ որ յերկինս , և երևեցաւ տապանակն աստուծոյ՝ 'ի տաճարն իւր. և եղեն
փայլատակմունք և ձայնք և որոտմունք և
շարժումն , և կարկուտ մեծամեծ .*

ԳԼ· ԺԲ·

*Եւ նշան մեծ երևեցաւ յերկինս. կին 1
մի արկեալ զիւրև զարեգակն , և լուսին 'ի
ներքոյ ոտից նորա. եւ 'ի վերայ գլխոյ նորա
պսակ աստեղաց յերկոտասանից. *Եւ էր յղի. 2
և ճչէր յերկնելն , և բազում վշտօք մերձ էր
'ի ծնանել. *Եւ երևեցաւ այլ նշան յերկինս՝ 3
և ահաւասիկ վիշապ մի մեծ հրեղէն , որոյ
էին գլուխք եօթն և եղջիւրք տասն. և 'ի
վերայ գլխոյ նորա եօթն խոյրք. *Եւ տուտն 4
նորա քարշէր զերրորդ մասն աստեղաց երկնից , և արկ զնոսա յերկիր. և վիշապն կայր
առաջի կնոջն որ հանդերձեալ էր ծնանել,
զի յորժամ ծնցի կինն զորդի իւր՝ կլցէ զնա
վիշապն. *Եւ ծնաւ կինն արու՝ որ հանդերձեալ է հովուել զա̃մ հեթանոսս գաւազանաւ 5
երկաթեաւ. և յափշտակեցաւ որդի նր̃ առ
ա̃ծ , և առ աթոռ նորա. *Եւ կինն փախեաւ 7*

յանապատ՝ ուր էր տեղի նմա պատրաստեալ
յա̃յ , զի կերակրեսցի անդ աւուրս հազար
7 երկերիւր և վաթսուն ։ *Եւ եղեւ պատերազմ
յերկինս , միքայէլ և հրեշտակք իւր
կռուէին ընդ վիշապին ․ և վիշապն պատերազմէր
8 զօրօք իւրովք ։ *Եւ ոչ կարացին կալ
ընդդէմ, և տեղի ոչ գտաւ նոցա յերկինս ։
9 *Եւ անկաւ վիշապն մեծ՝ օձն առաջին , որ
անուանեալ կոչի բէեղզեբուղ և սատանայ ,
որ մոլորեցոյց զա̃մ տիեզերս երկրի ․ և հրեշտակք
10 նորա ընդ նմա անկան ։ *Եւ լուայ
ձայն մեծ յերկնից՝ որ ասէր ․ արդ եղեւ զօրութիւն
և փրկութիւն և արքայութիւն ա̃յ
մերոյ , և իշխանութիւն օծելոյ ն̃ր ․ զի անկաւ
չարախօսն եղբարց մերոց , որ չարախօսէր
զնոցանէ առաջի աստուծոյ զտիւ և զգիշեր
11 ։ *Եւ նոքա յաղթեցին նմա արեամբ
գառինն , և բանիւ վկայութեան նորա ․ և ոչ
12 հաճեցան ընդ վիշապն մինչեւ ՚ի մահ ։ *Վա̃
այսորիկ ուրախ լիցին երկինք՝ և ա̃մ որ բնակեալ
են ՚ի նմա ։ Վայ երկրի և ծովու՝ զի
անկաւ բանսարկուն առ ձեզ , որ ունի զցասումն
բազում ․ և կայցէ առ սակաւ մի ժամանակս
13 ։ *Եւ յորժամ ետես վիշապն թէ
անկաւ յերկիր , զհետ եղեւ կնոջն՝ որ ծնաւ
14 զմանուկն արու ։ *Եւ տուաւ կնոջն երկու
թեւք արծուոյ մեծի՝ զի թռիցէ յանապատ
՚ի տեղի իւր ․ ուր կերակրէր անդ ժամանակս

ժամանակս և կէս ժամանակի՝ յերեսաց օձին.
*Եւ եհեղ օձն 'ի բերանոյ իւրմէ զհետ կընոջն 15
ջուր՝ զի ընկղմեսցէ զնա. *Եւ օգնեաց 16
երկիր կնոջն, և եբաց երկիր զբերան իւր և
եկուլ զջուրն՝ զոր եհեղ վիշապն 'ի բերանոյ
իւրմէ. *Եւ ցասեաւ վիշապն ընդ կնոջն, և 17
գնաց պատերազմել ընդ այլ զաւակս նորա՝
որք պահէին զպատուիրանս աստուծոյ, և ունէին
զվկայութիւնն յիսուսի. *Եւ եկաց 'ի 18
վերայ աւազոյ ծովու.

ԳԼ. ԺԳ.

Եւ տեսի զի ելանէր 'ի ծովէն գազան, 1
և ունէր գլուխս եօթն՝ և եղջիւրս տասն, և
'ի վերայ եղջերաց նորա տասն խոյր, և 'ի վր̃
գլխոց նորա անուն հայհոյութեան. *Եւ 2
գազանն զոր տեսի՝ նման ընձու, և ոտք նորա
իբրև զարջու, և բերան նորա որպէս
զառիւծու. և ետ նմա վիշապն զզօրութիւն
իւր՝ և զաթոռ իւր և զիշխանութիւն մեծ.
*Եւ մի 'ի գլխոց նորա վիրաւորեալ էր 'ի 3
մահ. և վէր մահուան նորա ողջանայր. Եւ
զարմացաւ ա̃մ երկիր ընդ գազանն, զի ետ
նմա վիշապն զթագաւորութիւն իւր. *Եւ 4
երկիրպագին վիշապին՝ որ ետ զիշխանութիւնն
գազանին, և ասէին. ո՞վ իցէ նման
գազանիս. կամ ո՞վ կարիցէ պատերազմել

5 ընդ դա ։ *Եւ տուաւ նմա բերան խօսել ըզ
մեծամեծս, և զհայհոյութիւն ։ և տուաւ նմա
իշխանութիւն զամիս քառասուն և երկու ։
6 *Եւ եբաց զբերան իւր հայհոյութեամբ առ
աստուած, և հայհոյեաց զանուն նորա՝ և ըզ
7 խորանն նորա, և զերկնայինն խորանն ։ *(Եւ
տուաւ նմա իշխանութիւն առնել պատերազմ
ընդ սուրբս՝ և յաղթել նոցա) ։ և տուաւ նմա
իշխանութիւն ՚ի վերայ ա̃մ ազգաց և լեզուաց
8 և ժողովրդոց ։ *Զի երկիրպագեսցեն
նմա ա̃մ որ բնակեալ են ընդ երեսս երկրի ։
որոց ոչ են գրեալ անուանք նոցա ՚ի դպրութիւն
կենաց գառինն զենլոյ ՚ի սկզբանէ աշխարհի
9 ։ *Ոյք ունին ականջս լսելոյ՝ լուիցեն ։
10 *Զի են ոմանք՝ որք ՚ի գերութեան վարեսցին,
և են ոմանք՝ որ սրով մեռցին, և են ոմանք՝
որ անձամբ զանձինս սպանանեն ։ աստ է համբերութիւն
11 և հաւատ սրբոց ։ *Եւ տեսի այլ
գազան՝ զի ելանէր յերկրէ, և ունէր եղջիւրս
երկու նման գառինն ։ և խօսէր իբրև զվիշապն
12 ։ *Եւ զիշխանութիւն զա̃մ զառաջնոյ
գազանին գործէր առաջի նորա ։ և առնէր
զերկիր և զա̃մ բնակիչս նորա՝ զի երկիրպագանիցեն
գազանին առաջնոյ՝ մինչև ողջացի
13 վէր մահու նորա ։ *Եւ առնէր նշանս բազումս,
և տայր հրոյ իջանել յերկնից յերկիր՝
14 առաջի մարդկան ։ *Եւ մոլորեցուցանէր զորս
բնակեալ են յերկիր՝ նշանօքն որ տուեալ են

'ի ձեռս նորա՝ առնել առաջի գազանին. ասեն
ցնա բնակիչք երկրի. արա՛ պատկեր
գազանին, որ 'ի վիրաց սրոյն եկեաց. *Եւ 15
տուաւ նմա իշխանութիւն, զի տացէ հոգի
պատկերի գազանին, և զի խօսեսցի պատկերն.
և երկիրպագցեն նմա ա̃մ բնակիչք
երկրի. և որ ոչ պագցէ երկիր պատկերի գազանին,
սպանցէ զնա. Եւ արասցէ զա̃մ՝ փոքունս
և զմեծամեծս և զմեծատունս և զաղատս
և զաղքատս և զծառայս, զի տացէ
նոցա դրոշմ յաջու ձեռին՝ 'ի վր̃ ճակատու
նց̃. *Եւ ոչ ոք կարասցէ գնել և վաճառել՝ 16
եթէ ոչ ունիցի զդրոշմ գրոյն՝ և զանուն գազանին
և զթիւ անուան նր̃. *Աստ է իմաստութիւն.
որ ունի միտս՝ համարեսցի զթիւ 17
գազանին. թիւ եղեալ մարդոյ, և թիւ անուան
նր̃ է այս. վեց հարիւր վաթսուն և վեց.

ԳԼ. ԺԴ.

Եւ տեսի՝ և ահա գառն կայր 'ի վերայ 1
լերինն սիոնի. և ընդ նմա հարիւր քառասուն
և չորս հազարք, որ ունէին զանուն նր̃
և անուն հօր նր̃ գրեալ 'ի վերայ ճակատուց
նոցա. *Եւ լուայ ձայն յերկնից՝ որպէս զձայն 2
ջուրց բազմաց՝ և ձայն որոտման մեծի. և
լուայ իբրև զձայն զքնարահարաց, զի հարկանէին
զքնարս իւրեանց. *Եւ երգէին զերգս 3

նորա առաջի աթոռոյն՝ և առաջի չորից կենդանեացն՝
և առաջի երիցանցն . և ոչ ոք կարէ
գիտել զերգս նոցա՝ բայց միայն հարիւր
քառասուն և չորս հազարքն, որք ազատեալ
4 են յերկրէ . * Սոքա են՝ որք ընդ կանայս ոչ
խառնակեցան, և են կուսանք . սոքա զկնի
երթան գառինն՝ ուր և երթիցէ . սոքա ընտրեցան
'ի մարդկանէ առաջի ա̃յ և գառինն .
5 * Եւ 'ի բերան նոցա ոչ գտաւ սուտ՝ զի անբիծք
6 են . * Եւ տեսի այլ հրեշտակ թռուցեալ
'ի մէջ երկնից . և ունէր աւետիս յաւիտենական՝
աւետարանել ա̃մ ազգաց և լեզուաց՝
7 որ բնակեալ են յերկրի . * Եւ ասէր 'ի
ձայն մեծ . երկերուք յա̃յ՝ և տուք փառս
նմա, զի եկն ժամ դատաստանի նորա . Եւ
երկիրպագէք արարչին երկնի և երկրի և ծովու
8 և աղբերաց ջուրց . * Եւ այլ հրեշտակ
երկրորդ գայր զհետ նորա և ասէր . անկաւ,
անկաւ բաբելոն մեծն՝ 'ի գինւոյ արբեցուէ՝
'ի ցասմանէ՝ 'ի պոռնկութենէ իւրմէ . որ արբեցոյց
9 զա̃մ հեթանոսս . * Եւ այլ հրեշտակ
երրորդ գայր զհետ նոցա՝ և 'ի ձայն մեծ ասէր
. ով ոք երկրպագեաց գազանին և պատկերի
նորա՝ և կամ զդրոշմ նշանի նորա առ 'ի
ճակատ իւր՝ և կամ 'ի վերայ աջոյ ձեռին
10 իւրոյ, * այնպիսի արբցէ 'ի բաժակէ ցասման
ա̃յ՝ արկելոյ յանապակէ բարկութեան բաժակին
. և տանջեսցի հրով և ծծմբով առաջի ա̃յ

և գառինն ։ *Եւ ծուխ նոցա ելցէ յաւիտեանս 11
յաւիտենից . և ոչ ունին հանգիստ՝ որք
երկիրպագին գազանին 'ի տուէ և 'ի գիշերի .
և որք երկիրպագին պատկերին , և առին ըզդրոշմ
և զանուն նորա ։ *Եւ համբերութիւն 12
սրբոցն աստ է . այս՝ որք պահեն զպատուիրանս
ա̃յ , և զհաւատս յի̃ի ։ *Եւ լուայ ձայն 13
յերկնից՝ որ ասէր ցիս . գրեա , երանի մեռելոցն՝
որք 'ի տէր ննջեցին . այժմիկ վաղվաղակի
զայս ասէ հոգին , քանզի հանգեան
յաշխատութենէ իւրեանց . բայց միայն գործք
իւրեանց չոգան զհետ նոցա ։ *Եւ տեսի և 14
ահա ամպ սպիտակ , և 'ի վ̃ր ամպոյն նստէր
նման որդւոյ մարդոյ , և 'ի գլուխ իւր պսակ
ոսկի , և 'ի ձեռին իւրում ունէր գերանդի
սրեալ ։ *Եւ այլ հրեշտակ ելանէր յերկնից , 15
աղաղակէր 'ի ձայն մեծ՝ և ասէր . որ նստիդ
'ի վերայ ամպոյդ՝ առաքեա զգերանդիդ քո՝
և հնձեա , զի եկն ժամանակ հնձոց , և հասեալ
են հունձք երկրի ։ *(Եւ արկ՝ որ նստէր 16
'ի վերայ ամպոյն՝ զգերանդին իւր յերկիր , և
հնձէր զա̃մ բնակիչս երկրի ։) *Եւ այլ հրեշտակ 17
ելանէր 'ի տաճարէն՝ որ յերկինս , և ունէր
և սա գերանդի սրեալ ։ *Եւ այլ հրեշտակ 18
ելանէր 'ի սեղանոյն՝ որ ունէր իշխանութիւն
'ի վերայ հրոյ , և աղաղակեաց 'ի ձայն
մեծ առ հրեշտակն՝ որ ունէր զգերանդին
սրեալ՝ և ասէր . կթեա զողկոյզս այգւոյ երկ-

19 րէ, զի հասեալ է խաղողդ ՚ի դմա. * Եւ արկ
հրեշտակն զգերանդի իւր յերկիր, և կթէր
զխաղող նորա, և արկանէր ՚ի հնձանն աստու-
20 ծոյ ՚ի մեծ. * Եւ կոխեցաւ հնձանն արտաքոյ
քաղաքին, և ելանէր ՚ի հնձանէն արիւն մին-
չև ՚ի սանձս ձիոյն, և երկայնութիւն նորա
հազար և վեց հարիւր ասպարէզ.

ԳԼ. ԺԵ.

1 Եւ տեսի այլ նշան (յերկինս) մեծ և սքանչելի. հրեշտակս եօթն՝ որք ունէին
եօթն վէրս զկնի. զի նոքօք կատարէր բար-
2 կութիւն ա̃յ. * Եւ տեսի որպէս ծով ապա-
կեղէն խառնեալ հրով. և որք յաղթեցին
գազանին՝ և թուոյ անուան նորա՝ և պատ-
կերի նորա՝ և դրոշմի նորա, նոքա կային ՚ի
վ̃ր ծովուն ապակեղինի. և ունէին զքնարս
3 ա̃յ. * Եւ երգէին զերգս մովսեսի առաջի
ա̃յ, և զերգս գառինն՝ ասելով. թէ մեծա-
մեծ և սքանչելի են գործք քո՝ տէր ա̃ծ ա-
մենակալ, արդար՝ և ճշմարիտ են ճանա-
4 պարհք քո, թագաւոր ա̃մ հեթանոսաց. * Եւ
ո՞վ ոք ոչ երկիցէ՝ և փառաւորեսցէ զուրբ
անուն քո. զի դու միայն սուրբ, և ա̃րժանի
երկրպագելոյ. զի ա̃մ հեթանոսք եկեսցեն
և երկիրպագցեն առաջի քո տէր՝ յորժամ ար-
5 դարութիւն քո յայտնեսցի. * Եւ հետ այ-

սորիկ տեսի՝ և բացաւ տաճարն խորանին վըկայութեան՝
որ էր 'ի յերկինս . *Եւ ելանէին 6
եօթն հրեշտակք որք ունէին եօթն հարուածս ,
և զգեցեալ էին 'ի տաճարին կտաւս մաքուրս՝
և պայծառս . և գօտեւորեալ էին առստեամբք
իւրեանց գօտիս ոսկեղէնս . *Եւ 'ի 7
չորից կենդանեացն տուաւ եօթն հրեշտակացն՝
եօթն սկաւառակս լի ցասմամբն ա͞յ
կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից . *Եւ 8
լցաւ տաճարն ծխով փառացն ա͞յ՝ և զօրութե͞
նորա . և ոչ ոք կարէ մտանել 'ի տաճարն՝
մինչև կատարեսցին եօթն հարուածքն յեօթն
հրեշտակացն .

ԳԼ. ԺԶ.

Եւ լուայ ձայն մեծ 'ի տաճարէն՝ զի ասէր 1
ցեօթն հրեշտակսն , երթայք հեղէք
զեօթն սկաւառակդ ցասմանն ա͞յ յերկիր .
*Եւ գնաց առաջին հրեշտակն՝ և եհեղ զսկաւառակ 2
իւր յերկիր , և եղեւ հարուածք
չարաչար 'ի վ͞ր մարդկան , որ ունէին զդրոշմ
գազանին , և երկիրպագին պատկերի ն͞ր . *Եւ 3
երկրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր 'ի
ծով և դարձան ջուրքն յարիւն մեռելոյ . և
ա͞մ ենայն կենդանի որ էր 'ի ծովու սատակեցաւ
. *Եւ երրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ 4
իւր 'ի գետս՝ և յաղբերս ջուրց , և

5 եղեւ արիւն ։ * Եւ լուայ 'ի հրեշտակէն՝ զի
ասէր ․ արդար է՝ որ էնն և է , և սուրբ 'ի
6 գործս իւր՝ զի այսպէս դատեցաւ ․ * վասն
զի զարիւն սրբոց՝ և զարիւն մարգարէից
հեղին ամբարիշտք ․ վասն այնորիկ արիւն
7 ետ ըմպել նոցա ըստ արժանւոյն ։ * Եւ լուայ
'ի սեղանոյ անտի զի ասէր , այո՝ տէր ա̃ծ ամենակալ ,
արդար և ճշմարիտ են դատաստանք
8 քո ։ * Եւ չորրորդ հրեշտակն եհեղ 'ի
սկաւառակէ իւրմէ 'ի վերայ արեգական ։
9 * Եւ տուաւ նմա խորշակահար առնել ըզ
մարդիկ հրով ․ և տապացան մարդիկ 'ի տապ
մեծ , և հայհոյեցին զա̃ծ՝ որ ունի իշխանութիւն
'ի վերայ հարուածոցս այսոցիկ ․ և
10 ոչ ապաշխարեցին 'ի փառս ա̃յ ։ * Եւ հինգերորդ
հրեշտակն եհեղ 'ի սկաւառակէ
իւրմէ 'ի վերայ աթոռոյ գազանին , և եղեւ
թագաւորութիւն նորա խաւարեալ ․ և ծամէին
11 զլեզուս իւրեանց յախտէ ցաւոցն , * և
հայհոյեցին զա̃ծ երկնից 'ի ցաւոց իւրեանց՝
և յախտէ դառնութեանն , և ոչ ապաշխարեցին
12 'ի գործոց իւրեանց ։ * Եւ վեցերորդ
հրեշտակն եհեղ 'ի սկաւառակէ իւրմէ 'ի վերայ
գետոյն մեծի Եփրատայ , և ցամաքեցան
ջուրք նորա՝ զի պատրաստեսցի ճանապարհ
13 թագաւորի ելիցն արեւու ։ * Եւ տեսի՝ զի
ելանէր 'ի բերանոյ վիշապին՝ և 'ի բերանոյ
գազանին և 'ի բերանոյ սուտ մարգարէին ո֊

գիք երեք անսուրբք իբրեւ զգորտ. *Քանզի 14
նոքա էին ոգիք դիւականք, որք առնէին
զնշանս՝ և երթային առ թագաւորս ամենայն
երկրի՝ ժողովել զնոսա 'ի պատերազմ, յօրն
մեծ տեառն ամենակալի. քանզի այսպէս ասաց
տէր. * ահա գամ իբրեւ զգող, երանի 15
որ լիցեն արթունք, և պահեսցեն զհանդերձս
իւրեանց. զի մի՛ մերկ շրջեսցին, և երեւեսցին
ամօթանք իւրեանց. *Եւ ժողովեցից ըզ 16
նոսա 'ի տեղի մի, որ կոչի եբրայեցերէն՝
արմագեդոն. *Եւ եօթներորդ հրեշտակն եհեղ 17
'ի սկաւառակէ իւրմէ 'ի վերայ օդոյ. և
ել ձայն մեծ յերկնից՝ և յաթոռոյն՝ ասելով.
եղեւ. *Եւ եղեն փայլատակմունք և ձայնք 18
և որոտմունք. և եղեւ շարժումն մեծ՝ որպիսի
չիք եղեալ 'ի սկզբանէ՝ յորմէ հետէ եղեւ
մարդ 'ի վերայ երկրի՝ այնպիսի շարժումն
մեծ. *Եւ եղեւ քաղաքն մեծ յերիս մասն, 19
և քաղաքք ազգաց անկան. և բաբելոն մեծ
յիշեցաւ առաջի ա̃յ, տալ նմա զբաժակն գինւոյ
ցասման բարկութեան նորա. *Եւ ա̃մ 20
կղզիք փախեան, և լերինք 'ի միջոյ բարձան.
*Եւ կարկուտ մեծ իբրեւ կշիռ տաղանդոյ 21
միոյ իջանէր յերկնից 'ի վերայ մարդկան. և
հայհոյեցին մարդիկ զա̃ծ յերկինս՝ վասն հարուածոյ
կարկտին, զի մեծ էր հարուածն և
սաստիկ.

ԳԼ. ԺԷ.

1 Եւ եկն մի ոմն յեօթն հրեշտակաց՝ որք
ունէին զեօթն սկաւառակսն . խօսեցաւ ընդ
իս՝ և ասէ . եկ այսր և ցուցից քեզ զդա-
տաստանս մեծ պոռնկին՝ որ նստի ՚ի վերայ
2 ջուրց բազմաց ։ * Ընդ որում պոռնկեցան թա-
գաւորք երկրի՝ և արբեցան բնակիչք երկրի
՚ի գինւոյ արբեցութեան պոռնկութեան նր̃ ։
3 * Եւ առ տարաւ զիս յանապատ հոգւովն .
և տեսի կին մի՝ զի նստէր ՚ի վերայ կարմիր
գազանի , և լի էր անուամբ հայհոյութեան .
և գազանն զոր տեսի՝ ունէր գլուխս եօթն և
4 եղջիւրս տասն ։ * Եւ կինն զգեցեալ էր ծի-
րանիս և կարմիրս , և զարդարեալ ոսկւով և
մարգարտով և ականբք պատուականօք , ու-
նելով բաժակ ոսկի ՚ի ձեռին իւրում, և լի էր
5 գարշելի և անմաքուր պոռնկութեամբ ։ * Եւ
՚ի ճակատն նորա գրեալ անուն՝ խորհրդով .
մեծն բաբելոն՝ մայր պոռնկաց և գարշելեաց
6 երկրի ։ * Եւ տեսի զկինն արբեցեալ յարենէ
սրբոց՝ և յարենէ ա̃մ վկայիցն . և զարմացայ՝
7 տեսեալ զնա՝ զարմացումն մեծ ։ * Եւ ասէ
ցիս հրեշտակն . ընդէ՞ր զարմացար , ես ասա-
ցից քեզ զխորհուրդս կնոջն , և զգազանին
որ բարձրացեալ ունի զնա . որ ունի զեօթն
8 գլուխսն՝ և զտասն եղջիւր ։ * Եւ գազանդ

զոր տեսեր՝ որ էր, և չէր, և հանդերձեալ է
ելանել 'ի գձոխոց՝ և 'ի կորուստ երթալ. և
զարմասցին ամենեքեան՝ որ բնակեալ են 'ի
վերայ երկրի. որոց ոչ էր գրեալ անուանք
նոցա 'ի գիր կենաց 'ի սկզբանէ աշխարհի.
զոր տեսանէիր զգազանն, զի էր՝ և չէ, և
մերձ է։ *Աստ է իմաստութիւն՝ որ ունի 9
միտս։ և եօթն գլուխն՝ եօթն լերինք են,
ուր կինն նստեալ էր 'ի վերայ նոցա. և նոքին
թագաւորք են եօթն. և թագաւորք եօթն
գոլով, *հինգն անկան, և մին եկաց, և մինն 10
ոչ է եկեալ. և յորժամ գայ՝ սակաւիկ մի ժամանակ
ունի։ *Եւ գազանն՝ որ էր՝ և չէ՝ և 11
նա ութերորդ է. և է յեօթանց անտի, և 'ի
կորուստ երթալոց է։ *Եւ տասն եղջիւրն՝ 12
զոր տեսեր՝ տասն թագաւորք են. որոց չև
ևս է առեալ զթագաւորութիւն, այլ առնուն՝
և կան իշխանք 'ի մի ժամ. և առնուն
նոքա զիշխանութիւն ընդ գազանին։ *Սոքա 13
մի կամս ունին, և զզօրութիւն և զիշխանութիւն
գազանին տան։ *Եւ ընդ գառինն 14
պատերազմին. և գառնն յաղթէ նոցա. զի
տէր է նոցա, և թագաւոր թագաւորաց. և
որք ընդ նմա՝ կոչեցեալք են, ընտրեալք՝ և
հաւատացեալք։ *Եւ ասաց ցիս. և զջուրն 15
զոր տեսեր՝ ուր նստէր պոռնիկն, ժողովուրդք
են, և բազմութիւնք և ազգք և լեզուք.
*Եւ տասն եղջիւրքն՝ զոր տեսեր գազանին, 16

նոքա ատեսցեն զպոռնիկն՝ և աւերեսցեն զնա,
և զմարմին նորա կերիցեն՝ և այրեսցեն զնա
17 հրով. *Քանզի Ա՟ծ եդ 'ի սիրտս նոցա առ
'ի լինել նոցա մի կամս, և տալ զթագաւո-
րութիւն գազանին՝ մինչև կատարեսցի բանն
18 աստուծոյ. *Եւ կինն զոր տեսեր՝ է քաղաքն
մեծ, որ ունի զթագաւորութիւն 'ի վերայ
թագաւորութեանց երկրի.

ԳԼ. ԺԸ.

1 Եւ յետ այսորիկ տեսի այլ հրեշտակ իջ-
եալ յերկնից՝ որ ունէր իշխանութիւն մեծ, և
2 երկիր լուսաւորեցաւ 'ի փառաց նորա. *Եւ
աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ ասելով. անկաւ
բաբելոն մեծն, որ եղեալ էր բնակութիւն
դիւաց՝ և արգել ա՟մ այսոց պղծոց, և բանտ
պահպանութեան ա՟մ ոգւոց անսրբից՝ և ա-
3 տեցելոց. *Վասն զի 'ի բարկութենէ գին-
ւոյ պոռնկութեան նորա արբին ա՟մ ազգք և
թագաւորք երկրի՝ որ ընդ նմա պոռնկեցան.
և վաճառականք երկրի՝ 'ի նորա զօրութեան
4 յօրանալոյ մեծացան. *Եւ լուայ ձայն յերկ-
նից՝ զի ասէր. Ելէք 'ի միջոյ դորա ժողո-
վուրդ իմ, զի մի՛ հաղորդ լինիցիք մեղաց դո-
րա, և մի՛ զհարուածս դորա ընդունիցիք.
5 *զի հասին կցեցան մեղք դոցա մինչև յեր-
կինս. և յիշեաց աստուած զամբարշտութիւնս

դորա ։ *Եւ հատուցանէ դմա՝ որպէս և հատոյցն 6
մեզ, և առցէ դա երկպատիկ ըստ
գործոց իւրոց · և զբաժակն որով խառնեացն՝
խառնեցէք դմա կրկին · *Եւ որչափ փառաւորեաց 7
զինքն և խայտաց, այնչափ հատուցէք
դմա սուգ · զի 'ի սրտի իւրում ասէր՝
թէ յա՟մ ժամ'նստայց ես թագուհի՝ և
այրի ոչ ես եղէց · *Վասն այնորիկ 'ի միում 8
աւուր եկեսցեն 'ի վերայ դորա հարուածք՝
մահ և սուգ և սով, և 'ի հուր այրեսցի · զի
հզօր է տէր ա՟ծ՝ որ դատեցաւն զդա ։ *Եւ 9
լայցեն՝ և կոծեսցին 'ի վերայ դորա թագաւորք
երկրի, որք ընդ դմա պոռնկեցան և
խաղացին · և հեծեսցեն՝ յորժամ տեսցեն զծուխ
կիզման տանջանաց դորա · *Ի հեռաստանէ 10
կայցեն վասն երկիւղի տանջանաց
դորա՝ և ասասցեն · վայ քաղաքիդ մեծի
բաբելոնի · քաղաք հզօր, զի 'ի միում ժամու
եկին հասին դատաստանք քո · *Եւ վաճառականք 11
երկրի ողբասցեն և սգասցեն 'ի
վերայ քո, զի բեռա՛ն 'նոցա ոչ ոք գնէ · *Եւ 12
շահք որ 'ի քէն՝ ոչ ևս իցէ՝ ոսկւոյ և արծաթոյ
և ականց պատուականաց՝ և մարգարտոյ
և բեհեզոյ և ծիրանւոյ և ոսկեթելի և որդան,
և ա՟մ փայտ խնկոյ՝ և ա՟մ անօթ փղոսկրեայ և
ա՟մ անօթ 'ի փայտէ պատուականէ և 'ի պղնձոյ
և յերկաթոյ և 'ի կճոյ · *և կինամոմոն 13
և ա՟մ խունկ և իւղ և կնդրուկ, և գինի

և ձէթ և նաշիհ և ցորեան, և ստացուածք
ա̃մ, արջառ և ոչխար. և երիվարաց և կառաց՝
որ վայել է մարմնոց և ոգւոց մարդկան.
14 *Եւ ա̃մ ցանկութիւն անձին քոյ գնաց
՚ի քէն, և ա̃մ լաւափայլ վայելչութիւնն,
պարարտն և գէրն և սպիտակն գնաց ՚ի քէն,
15 և ոչ ևս գտցես զայդ. *Եւ ա̃մ չահավաճառք
այսոքիւք մեծացեալք՝ ՚ի քէն ՚ի բաց
կացցեն վասն երկիւղի տանջանաց քոց լալով՝
16 և սուգ առնելով. *Եւ ասասցեն. վայ
վայ քաղաք մեծ. որ զգեցեալ էիր բեհեզս
և ծիրանիս և որդան և ոսկեզօծս՝ և քարինս
17 պատուականս՝ և մարգարիտս. *զի ՚ի միում
ժամու պակասեցաւ այսչափ մեծութիւն քո.
և ա̃մ նաւավար՝ և ա̃մ որ ՚ի տեղիս տեղիս
նաւեն, և նաւաղք և որք միանգամ ուռկանաւ
գործեն՝ ՚ի հեռաստանէ կայցեն լալով,
18 *և աղաղակեսցեն՝ տեսանելով զծուխ
կիզման նորա, ասելով. ո՞ նման է քաղաքիս
19 այսմիկ մեծի. *Եւ արկցեն հող ՚ի վերայ
գլխոց իւրեանց՝ և գուժալով ձայնիւ մեծաւ՝
լալով և ողբալով ասասցեն. վայ վայ քաղաք
մեծ, որով ամենեքեան մեծանայաք՝ որք
ունէաք զնաւս ՚ի ծովս՝ վասն պատուականութեան
քո. զի ՚ի միում ժամու ապականեալ
20 կործանեցար. *Ուրախ լերուք ՚ի վերայ
նորա երկինք՝ և սուրբ առաքեալք և մարգարէք.
զի դատեցաւ ա̃ծ զդատաստան

ձեր 'ի դմանէ ։ * Եւ առ հրեշտակն հզօր՝ 21
քար մի իբրեւ զերկան մեծ, և ընկէց 'ի ծով՝
ասելով· այսպէս յարձակմամբ անկցի բաբելոն
քաղաք մեծ, և այլ ոչ եւս գտցի։ * Եւ 22
ձայն քնարերգաց և երաժշտականաց՝ արուեստականաց
և փողահարաց՝ և թմբկի, այլ
ոչ եւս լուիցի 'ի քեզ։ * Եւ լոյս ճրագի և 23
ձայն երկանի՝ այլ ոչ եւս երեւեսցի 'ի քեզ,
և ձայն փեսայի և ձայն հարսին այլ ոչ եւս լուիցի
'ի քեզ· և ոչ վաճառականք քո՝ փառաւորք
և մեծամեծք երկրի, որ զուարճացեալ
էին 'ի քեզ, վասն զի կախարդութեամբ
դեղատուութեան քո մոլորեցան ա̃մ ազգք։
* Եւ 'ի քեզ ա̃մ արիւն մարգարէից և սրբոց 24
գտաւ, և ա̃մ զենելոց յերկրին կենդանեաց։

ԳԼ· ԺԹ·

Եւ յետ այնորիկ լուայ ձայն մեծ բազմութեան 1
յերկինս ասելով· ալէլուիա, փրկութիւն
և փառք և պատիւ և զօրութիւն
ա̃յ մերում· * զի ճշմարիտ և արդար են դատաստանք 2
նորա· զի դատեաց զպոռնիկն
մեծ 'ի պոռնկութեան իւրում, և խնդրեաց
զվրէժ արեան ծառայից իւրոց 'ի ձեռաց նր̃։
* Եւ կրկին անգամ օրհնեցին՝ և ասացին, ալէլուիա· 3
և ծուխ նորա ելանէր յաւիտեանս
յաւիտենից։ * Եւ անկան քսան և չորք երի- 4

ցունքն՝ և չորք կենդանիքն, և երկիրպագին
ա̃յ՝ որ նստէրն յաթոռ փառաց, ասելով, ամէն՝
5 ալէլուիա։ *Եւ ձայն յաթոռոյն ելանէր
ասելով· օրհնեցէք զա̃ծ մեր ա̃մ ծառայք նորա,
և որք երկնչիք 'ի նմանէ՝ փոքունք և
6 մեծամեծք։ *Եւ լուայ ձայն բազմութեան
մեծի՝ իբրև զձայն ջուրց բազմաց, և իբրև
զձայն հզօր որոտման, ասելով դարձեալ· ալէլուիա,
վասն զի թագաւորեաց տէր ա̃ծ
7 մեր ամենակալ։ *Խնդամք՝ (և ցնծամք) և
տամք փառս նմա, զի եկն հարսանիք գառինն,
և կինն հարսն նորա պատրաստեաց
8 զինքն։ *Եւ տուաւ նմա զգենուլ բեհեզս
սպիտակս սուրբս և լուսափայլս· որ է բեհեզն
9 արդարութիւն սրբոցն։ *Եւ մի յերիցանցն
ասէր ցիս· գրեա զայդ· երանելիք
են ամենեքեան՝ որ կոչեցեալ են յընթրիս
10 հարսանեաց գառինն։ *Եւ ես անկեալ առաջի
ոտից նորա, երկիրպագի նմա։ և ասէ
ցիս· անսա՝ մի՛ անկանիր առաջի իմ, քանզի
և ես ծառայակից քո եմ, և եղբարց քոց՝
որք ունին զվկայութիւնն յ̃ի ք̃ի· տեառն
ա̃յ միայն երկրպագեա· քանզի հաստատութեամբ
յ̃ի է տեսիլդ, և հոգի մարգարէութեանդ·
զի վկայութիւն յ̃ի է հոգւոյն
11 սրբոյ, որ 'ի մարգարէսն էր։ *Եւ տեսի
զերկինս բացեալ· և ահա ձի սպիտակ· և
որ հեծեալն էր 'ի նմա՝ հաւատարիմ և ճըշ-

մարիտ, և արդարութեամբ դատի՝ և պատերազմի։
*Եւ աչք նորա բոց հրոյ, և ՚ի վ̃ր 12
գլխոյ նորա պսակս բազումս. և ունէր անուն
գրեալ, զոր ոչ ոք գիտէ՝ բայց միայն ինքն։
*Եւ արկեալ զիւրեաւ հանդերձ ներկեալ 13
արեամբ. և կոչէր անուն նորա՝ բան աստուծոյ։
*Եւ զօրավարք երկնից՝ և զօրք երկնից 14
զհետ երթային նորա ձիովք (սպիտակօք),
զգեցեալ բեհեզս սուրբս և սպիտակս։ *Եւ 15
՚ի բերանոյ նորա ելանէր սուր սրեալ. զի նովաւ
հարցէ զազգս. և նա հովուեսցէ զնոսա
գաւազանաւ երկաթեաւ. և նա կոխեսցէ ըզ
հնձան գինւոյ՝ ցասման բարկութեան ա̃յ ամենակալի։
*Եւ ունէր ՚ի վերայ պատմուճանի 16
իւրոյ, և ՚ի վերայ անդամոց իւրոց գիր
գրեալ. թագաւոր թագաւորաց, և տէր տերանց։
*Եւ տեսի այլ հրեշտակ՝ որ կայր ՚ի վ̃ր 17
արեգական, զի աղաղակեաց ՚ի ձայն մեծ
ա̃մ հաւուց թռուցելոց ընդ մէջ երկնից՝ ասելով.
եկայք ժողովեցարուք յընթրիս մեծին
ա̃յ. *և կերիջիք զմարմինս թագաւորաց, 18
(և զմարմինս հզօրաց), և զմարմինս երիվարաց՝
և ա̃մ հեծելոց ՚ի նոսա, և զմարմինս
ազատաց և ծառայից՝ մեծի և փոքու։
*Եւ տեսի զգազանն՝ և զթագաւորս երկրի՝ 19
և զզօրս նոցա ժողովեալս առնել պատերազմ
ընդ այնմ, որ հեծեալն էր ՚ի ձին սպիտակ՝
և ընդ զօրս նորա։ *Եւ ըմբռնեցաւ գազանն, 20

և որ ընդ նմա սուտ մարգարէն՝ որ առնէր ըզ
նշանսն առաջի նորա, և զորս մոլորեցոյց. և
ետ առնուլ զդրոշմ գազանին՝ և զերկրպագուս պատկերի նորա. և կենդանւոյն արկին
21 զնոսա 'ի լիճ հրոյ այրեցելոյ ծծմբով. *Եւ
այլքն մեռան 'ի սրոյ հեծելոյն 'ի վերայ ձիոյն.
յորոյ բերանոյ ելանէր սուրն. և ամենայն
թռչունք յագեցան 'ի մարմնոց նոցա:

ԳԼ. Ի.

1 Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի իջանէր
յերկնից, և ունէր զփականս դժոխոց, և
2 շղթայս մեծ 'ի ձեռին իւրում. *և ըմբըռնեաց զվիշապն՝ (զօձն) զառաջին, որ է բանսարկուն և սատանայ, և կապեաց զնա հազար ամ,
3 *և արկ զնա յանդունդս դժոխոց,
և փակեաց և կնքեաց զնա՝ զի այլ մի՛ եւս մոլորեցուսցէ զազգս, մինչեւ կատարեսցի հազար ամն. և յետ այնորիկ պարտ է լուծանել
4 նմա սակաւ մի ժամանակ: *Եւ տեսի
աթոռս. և նստան 'ի վերայ նոցա. և դատաւորութիւն տուաւ նոցա, ընտրել զհոգիս
չարչարելոցն վասն վկայութեանն յ՟ի՝ և վասն
բանին ա՟յ. և զորս ոչ երկրպագին գազանին,
և ոչ առին զդրոշմ ն՟ր 'ի ճակատս իւրեանց՝
և ոչ 'ի վերայ աջու ձեռին իւրեանց. և կացին և թագաւորեցին ընդ ք՟ի հազար ամ.

* Եւ յետ այսորիկ 'ի մեռելոց ոչ ոք եկաց, 5
մինչեւ 'ի կատարել հազար ամին։ այս է յարութիւն
առաջին։ * Երանի սրբոցն․ որք 6
ունին բաժին 'ի յարութեանն առաջնում, 'ի
վերայ սոցա երկրորդ մահն ոչ ունի իշխանութիւն․
այլ եղիցին քահանայք այ՟՝ եւ տն՟
յի՟ քի՟․ եւ թագաւորեսցեն ընդ նմա հազար
ամ։ * Եւ յետ հազար ամին լուծցէ ըզ 7
սատանայ՝ եւ հանցէ 'ի բանտէ անտի․ ելցէ
եւ մոլորեցուսցէ զազգս ամ՟ ընդ չորս կողմանս
երկրի․ եւ զգոգ եւ զմագոգ առցէ 'ի ձեռս՝
ժողովել նոքօք զամ՟ զօրս 'ի պատերազմ․ որոց
թիւ նոցա իբրեւ զաւազ ծովու։ * Եւ 8
ելցեն 'ի լայնութիւն երկրի, եւ պատեսցեն
շուրջ զբանակս սրբոցն, եւ զքաղաքն սիրերելւոյ։
* Եւ իջցէ հուր յերկնից առ 'ի յայ՟՝ եւ 9
կերիցէ զնոսա եւ զզօրագլուխն նոցա զսատանայ՝
որ մոլորեցոյց զնոսա․ եւ արկցէ զնոսա 'ի
ծովն հրոյ եւ ծծմբոյ, ուր էր գազանն՝ * եւ 10
սուտ մարգարէն։ եւ չարչարեսցին զտիւ եւ ըզ
գիշեր։ * Եւ տեսի աթոռ սպիտակ մեծ․ եւ 11
'ի վերայ նորա նստեալ՝ յորոյ երեսացն երկնչէին
եւ փախչէին երկինք եւ երկիր, եւ տեղի
ոչ գտաւ նոցա։ * Եւ տեսի զմեռեալս մեծամեծս 12
եւ զփոքունս, որ կային առաջի աթոռոյն․
եւ գրեանք բանային․ եւ այլ գիրք
բացաւ կենաց, եւ դատեցան մեռեալք 'ի
գրելոցն՝ ըստ գործոց իւրեանց։ * Եւ ետ 13

ծով զմեռեալս իւր , և մահ և դժոխք զիւ֊
րեանց մեռեալս . և դատեցան իւրաքանչիւր
14 ըստ գործոց իւրեանց ։ *Մահ՝ և դժոխք
մատնեցան 'ի լիճ հրոյն ։ (այս է մահն երկ֊
15 րորդ)։ *Եւ որ ոչ ոք գտաւ 'ի գիրն կե֊
նաց գրեալ՝ արկաւ 'ի լիճ հրոյն ։

ԳԼ. ԻԱ.

1 Եւ տեսի երկին նոր՝ և երկիր նոր . քանզի
առաջինն երկինք և երկիր էանց . և ծով ոչ դոյր ։
2 *Եւ զքաղաքն սր̃բ զնորն եէ̃մ տեսի՝ զի իջանէր
յա̃յ՝ և յերկնից , զարդարեալ և պատրաստեալ
3 ո̃ր հարսն առն իւրոյ ։ *Եւ լուայ ձայն յերկ֊
նից՝ որ ասէր . ահաւասիկ խորանն ա̃յ 'ի մէջ
մարդկան , և բնակեսցէ ընդ նս̃ . և նք̃ ժո֊
4 ղովուրդ նմա . և սա ա̃ծ նց̃ , *Եւ ջնջեսցէ
զա̃մ արտօսր յաչաց նց̃ . և մահ ոչ ևս դոյ ,
ոչ սուգ՝ և ոչ աղաղակ , ոչ ցաւք՝ և ոչ աշ֊
խատանք ոչ ևս դոյ , զի առաջինն էանց ։
5 *Եւ ասաց ցիս՝ որ նստէր 'ի վր̃ աթոռոյն .
ահաւասիկ առնեմ զա̃մ նոր . և ասէ ցիս ,
գրեա . այս բանք ճշմարիտ և հաւատարիմք ։
6 *Եւ ասէ ցիս . եղէ՝ ես եմ ալփա և ով ,
սկիզբն և կատարած , ես ծարաւելոցն տամ
7 յաղբերէ ջրոյ կենաց ձրի ։ *Որ յաղթէ , ժա֊
ռանգեսցէ զայս ա̃մ . և ես եղէց նց̃ ա̃ծ , և
8 նք̃ եղիցին ինձ որդիք ։ *Եւ ծուլայն և ան֊

հաւատից՝ սպանողաց և պոռնկաց՝ և կախար֊
դաց և կռապաշտից՝ և դեղատուաց, և ա՟մ
ստոց՝ ամբարշտաց. որոց բաժինն իւրեանց 'ի
լճին այրեցելոյ հրով և ծծմբով. որ է մահն
երկրորդ. * Եւ եկն առ իս մի յեօթն հրեշ֊ 9
տակացն, որք ունէին զեօթն սկաւառակսն
լցեալս եօթն վախճանաւ կատարածովք, խօ֊
սեցաւ ընդ իս և ասէ. եկ՝ ցուցից քեզ ըզ
հարսնն և զկին գառինն. * Եւ առ տարաւ 10
զիս 'ի լեառն մի բարձր և մեծ՝ հոգւովն. և
եցոյց ինձ զքաղաքն մեծ և սուրբ՝ եմ՟. զի
իջեալ էր յերկնից առ 'ի յա՟յ, * և ունէր ըզ 11
փառս ա՟յ. և էր 'ի նմա լուսաւորութիւն,
նմանեալ ականց պատուականաց՝ քարյասպիս
սառնատեսակ և կենդանի. * Եւ էին պա֊ 12
րիսպք նորա մեծ և բարձր, և ունէր դրունս
երկոտասան. և յերկոտասան դրունսն երկո֊
տասան հրեշտակս, և անուանք իւրաքանչ֊
իւրոցն 'ի վերայ դրանցն գրեալ էին՝ ըստ եր֊
կոտասան ցեղիցն իսրայէլի. * Յարեւելից 13
կողմանէ դրունք երեք, և 'ի հիւսիսոյ կող֊
մանէ դրունք երեք, և 'ի հարաւոյ կողմանէ
դրունք երեք, և յարեւմտից կողմանէ դը֊
րունք երեք. * Եւ պարիսպ քաղաքին ու֊ 14
նէր հիմունս երկոտասան, և 'ի նոսա երկո֊
տասան անուանք երկոտասան առաքելոց
գառինն. * Եւ որ խօսէրն ընդ իս, ունէր 15
եղէգն ոսկի 'ի ձեռին իւրում. զի չափեսցէ

զքաղաքն՝ և զդրունս նր̃՝ և զպարիսպս նր̃։
16 * Եւ էր քաղաքն քառակուսի. և որչափ երկայնութիւն
նորա՝ նոյնչափ և լայնութիւն՝
և բարձրութիւն՝ հաւասար։ և էր չափ երկայնութեան
նորա երկոտասան հազար ասպարէզս. և լայնութիւն նորա և բարձրութիւն
17 միաչափ՝ կիլօս։ * Եւ չափեաց զպարիսպն
նորա՝ հարիւր և քառասուն և չորս ասպարէզս.
18 չափ մարդոյ՝ որ է հրեշտակի։ * Եւ
էր շինուած պարսպաց քաղաքին յասպիս. և
քաղաքն էր ոսկի մաքուր՝ նման սուրբ և
19 սպիտակ ապակւոյ։ * Եւ հիմունք քաղաքին
յա̃մ ականց պատուականաց. հիմն առաջին
պարսպին յասպիս, երկրորդն շափիղա, երրորդն
20 պղնձադոյն, չորրորդն զմրուխտ, * հինգերորդն
եղեգնաքար, վեցերորդն սարդիոն,
եօթներորդն ոսկեքար, ութերորդն
բիւրեղ, իններորդն տպազիոն, տասներորդն
քրիսոպրասոս, մետասանն յակինթ, երկոտասանն
21 ամեթուս։ * Եւ էին երկոտասան դրունքն
յերկոտասան մարգարտաց՝ միաձեւ։ և
իւրաքանչիւրոցն դրունք՝ էին մի մի դուռն՝
'ի միոյ միոյ մարգարտէ. և ընդարձակութիւն
քաղաքին ոսկի մաքուր՝ ոպ̃ զապակի պայծառ։
22 * Եւ տաճար ոչ տեսի 'ի նմա, քանզի
տ̃ր ա̃ծ ամենակալ տաճար էր 'ի նմա՝ և գառնն։
23 * Եւ քաղաքին չէին պէտք արեգական և լուսնի,
զի լուսաւորեսցեն զնա. քանզի փառքն

ա̃յ լուսաւորէին զնա յա̃մ ժամ․ և ճրագ 'ի
նմա գառ̃նն․ *Եւ գնային հեթանոսք 'ի լոյս 24
նորա․ և թագաւորք երկրի լուսազգեաց լի-
նէին 'ի փառաց նորա․ *Եւ դրունք նորա 25
ոչ փակէին 'ի տուէ և 'ի գիշերի, այլ բաց
կային հանապազորդ․ և գիշեր ոչ ևս լի-
նէր 'ի նմա․ *այլ փառք և պատիւ ազգաց․ 26
*Եւ ոչ մտցէ անդ ա̃մ չարակամ՝ և պիղծ 27
և ստութիւն, բայց միայն որ գրեալ են 'ի
դպրութիւն կենաց գառինն․

ԳԼ․ ԻԲ․

Եւ եցոյց ինձ մաքուր գետ կենդանի 1
ջրոյ՝ սառնատեսակ, որ ելանէր յաթոռոյն
ա̃յ և գառինն․ *Եւ գնայր 'ի մէջ հրապա- 2
րակաց քաղաքին․ և զեղերբ գետոյն աստի
և անտի ծառ կենաց՝ որ բերէր պտուղս եր-
կոտասան․ ըստ միոյ միոյ ամսոյ տային ըզ-
պտուղս իւրեանց․ և տերեւ ծառոյն էր ըն-
ժըշկութիւն հեթանոսաց․ *Եւ նզովք անդ 3
ոչ ևս էին․ և աթոռն ա̃յ և գառինն նո̃ էր 'ի
նմա․ և ծառայք նորա պաշտէին զնա․ *տե- 4
սանէին զերեսս նորա․ և անուն նորա գրեալ
էր 'ի ճակատս նոցա․ *Եւ գիշեր ոչ անդ՝ և 5
չէր ինչ անդ պէտք ճրագի և լուսոյ արեգա-
կան․ վասն զի տէր ա̃ծ լուսաւորէր զնոսա․
և թագաւորեսցեն յաւիտեանս յաւիտենից․

6 *Եւ ասէ ցիս. այս բանք հաւատարիմ է և
ճշմարիտ. և Տէր ա̃ծ մարգարէից սրբոց՝ ա֊
ռաքեաց զհրեշտակ իւր՝ ծառայից իւրում
7 ցուցանել՝ զոր լինելոց է վաղվաղակի։ (*Ահա
գամ վաղվաղակի). երանի՝ որ պահէ զբան
8 մարգարէութեանս զայս։ *Եւ ես յովհաննէս
լուայ՝ և տեսի զայս ա̃մ. և յորժամ լուայ և
տեսի, անկայ՝ և երկիրպագի հրեշտակին՝ որ
9 ցուցանէր ինձ զայս ա̃մ։ *Եւ ասէ ցիս. մի՛
անկանիր առաջի իմ՝ և երկիրպագաներ.
քանզի և ես ծառայակից քո եմ և եղբարց
քոց՝ որ պահեսցեն զբան մարգարէութեան
10 գրոյս այսորիկ. աստուծոյ երկիրպագ. *Եւ
ասէ ցիս դարձեալ. մի՛ կնքեր զբանս մար֊
գարէական գրոցս այսմիկ. քանզի ժամա֊
11 նակս մերձ է։ *Որ ամբարշտելոցն է՝ ամբա֊
րշտեսցի, և որ աղտեղանալոցն է՝ աղտեղաս֊
ցի, և որ արդարանալոցն է՝ արդարասցի, և
12 որ սրբելոցն է՝ սրբեսցի։ *Ահա գամ վաղ֊
վաղակի՝ և վարձք իմ ընդ իս, հատուցանել
13 իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց։ *Ես եմ
ալփայ և ով, սկիզբն և կատարած, առաջին
14 և վերջին։ *Երանելիք են՝ որ պահեն զպա֊
տուիրանս նորա. նոքա ունին իշխանութիւն
ուտել 'ի փայտէն կենաց՝ և մտանել ընդ դը֊
15 րունս քաղաքին։ *Այլ ելցեն արտաքս
շունք՝ և դեղատուք և սպանողք և կռա֊
պաշտք, և ամենեքեան որ սիրեն զստու֊

թիւն ։ *Ես յ՟ս առաքեցի զհրեշտակ իմ վկայել 16
զայս ձեզ եկեղեցեացդ . ես արմատ
և սեռ ՚ի դաւթայ , և աստղ պայծառ առաւօտին ։
*Եւ հոգի , և փեսայն՝ որ գալոցն 17
են . և որ լսէ՝ ասելով թէ եկ , և որ ծարաւի
իցէ՝ եկեսցէ , և որ ոք կամի՝ առնուլ
զջուրն կենաց ձրի . *Վկայեմ և ես ամ՟ի՝ որ 18
լսէ զբանս մարգարէութեան գրոցս այսմիկ .
թէ ոք յաւելցէ ՚ի սա , յաւելցէ ա՟ծ ՚ի վերայ
ն՟ր զեօթն հարուածսն՝ գրեալս ՚ի գիրս յայս ։
*Եւ եթէ ոք պակասեցուսցէ ՚ի բանից մարգարէութեան 19
գրոցս այսմիկ՝ պակասեցուսցէ
և հատցէ ա՟ծ զբաժին նորա ՚ի ծառոյն կենաց՝
և ՚ի քաղաքէն սրբոց՝ որ գրեալ է ՚ի
գիրս յայս ։ *Ասաց՝ որ վկայեացն զայս . 20
գամ ես վաղվաղակի . ամէն ։ Եկն տէր յ՟ս ք՟ս ։
*Շնորհք տեառն մերոյ յիսուսի քրիստոսի 21
՚ի վերայ ամենայն սրբոց ։ Ամէն ։

ՎԱԽՃԱՆ

ՑԱՆԿ

Գործք Առաքելոց 5
Թուղթ Պօղոսի առ Հռովմայեցիսն 105
Թուղթ Պօղոսի առ Կորնթ. առաջին 145
Թուղթ Պօղոսի առ Կորնթ. երկրորդ 184
Թուղթ Պօղոսի առ Գաղատացիսն 211
Թուղթ Պօղոսի առ Եփեսացիսն 225
Թուղթ Պօղոսի առ Փիլիպեցիսն 239
Թուղթ Պօղոսի առ Կողոսացիսն 249
Թուղթ Պօղոսի առ Թեսաղ. առաջին 259
Թուղթ Պօղոսի առ Թեսաղ. երկրորդ 268
Թուղթ Պօղոսի առ Տիմոթէոս առաջին 273
Թուղթ Պօղոսի առ Տիմոթէոս երկրորդ 284
Թուղթ Պօղոսի առ Տիտոս 292
Թուղթ Պօղոսի առ Փիլիմոն 297
Թուղթ Պօղոսի առ Եբրայեցիսն 300
Թուղթ Կաթուղիկեայց Յակոբու 331
Թուղթ Կաթուղիկեայց Պետրոսի առաջին 342
Թուղթ Կաթուղիկեայց Պետրոսի երկրորդ 353
Թուղթ Կաթուղիկեայց Յովհաննու առաջին... 361
Թուղթ Կաթուղիկեայց Յովհաննու երկրորդ ... 373
Թուղթ Կաթուղիկեայց Յովհաննու երրորդ 375
Թուղթ Կաթուղիկեայց Յուդայի առաքելոյ ... 377
Յայտնութիւն Յովհաննու 381

ԳՐԱԴԱՐԱՆ